

ՅԻՍՈՒՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԵՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ

Աշխարհարար



Կողքի նկար՝

Աւետարան, 1610 թ., Ծաղկող՝ Հակոբ Ջուղացեցի - N° 7639

Մատթեոս Ավետարանիչ

Մեսրոպ Մաշտոց Մատենադարան
Երեւան

ՅԻՍՈՒՄԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԵՒ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ

Աշխարհաբար Թարգմանութիւն

Հրատարակուած՝

Հրամանաւ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ



www.armeniancatholic.org

եւ

Օժանդակութեամբ՝

**ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ**



Bible Society

جمعية الكتاب المقدس

www.biblesociety.org.lb

ISBN 978-614-8001-43-7

**ՅԻՍՈՒՄԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԵՒ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ**

Աշխարհաբար Թարգմանություն

**Հրատարակություն՝
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ**

ՊԷՂՐՈՒՔ, 2017

Աւետարանի թարգմանութիւն՝
Հայր ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ
Մխիթարեան Միաբանութենէն

Գ. Տպագրութիւն 1989
Վենետիկ – Ս. Ղազար

Առաջնաւերջնա Գործերուն թարգմանութիւն՝
Հայր ԳԱՐԵԳԻՆ ՎՐՊ. ԳԱՐԱՆՖԻԼԵԱՆԻ
Մխիթարեան Միաբանութենէն

Տպագրութիւն 1950
Գահիրէ

Վերատեսութիւն՝
Հայր ՄԱՆՈՒԷԼ ԵԱԿ. ՊԱԹԱԳԵԱՆԻ
Զմմառեան Միաբանութենէն

ԳԻՐ ՀԱՃՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԷԻ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Սուրբ Գիրքը կամ Աստուածաշունչը աշխարհի ամենէն ծանօթ, ամենէն աւելի տարածուած ու կարդացած գիրքն է, որ թարգմանւած է մարդկութեան գործածած բոլոր լեզուներուն մէջ եւ զոր կարելի է գտնել աշխարհի բոլոր երկիրներուն մէջ: Պատճառը այն է՝ որ այս գիրքը վեր է բոլոր ազգերէն ու լեզուներէն, եւ սեփականութիւնն է համայն մարդկութեան: Զայն կը կարդան թէ՛ քրիստոնեան, թէ՛ անհաւատը, առաջինը՝ իր հաւատքը զարգացնելու եւ զօրացնելու համար, երկրորդը՝ պարզապէս գիտնալու համար թէ ինչո՞ւ այս գիրքը այնքան կը հետաքրքրէ ու կը հրապուրէ մարդիկը:

Ի՞նչ է ուրեմն Սուրբ Գիրքը:

Գիրքերու Գիրքն է, բացարձակ իմաստով ԳԻՐՔԸ, որովհետեւ Սուրբ է. եւ Սուրբ է՝ որովհետեւ Աստուծոյ Խօսքը կը պարունակէ եւ զայն մարդոց կը ծանօթացնէ: Այն մատեանն է՝ որ մարդը սերտօրէն հաղորդակից կը դարձնէ զինքն ստեղծողին մտքին ու կամքին, թէ ինչո՞ւ ստեղծած է զինքն եւ ի՞նչ պէտք է ընէ՝ գտնելու համար կեանքի ուղիղ ճամբան որ զինքն երջանկութեան կրնայ հասցնել:

Սուրբ Գիրքը կը կոչուի նաեւ Կտակարան, որովհետեւ կը պարունակէ Կտակ մը, Ուխտ մը, Դաշինք մը զոր Աստուած ըրած է առաջին մարդուն հետ՝ անոր մեղանշումէն եւ ապա իր Արարչին հետ հաշտութենէն ետք: Այդ ուխտը սակայն ժամանակաւոր էր եւ պէտք էր նորոգուիլ՝ խոստացուած Փրկչին գալուստով: Ասոր համար մենք, քրիստոնեաներս, ունինք Հին եւ Նոր Կտակարաններ:

Ամէն քրիստոնեայ պէտք է մօտէն ծանօթանայ այս հրաշալի մատեանին, մտերմանայ անոր հետ՝ զայն իւրացնելու աստիճան, որովհետեւ ան լոյս կու տայ մեր մտքին եւ ջերմութիւն՝ մեր հոգիին, արծարծելով յոյսն ու արիւթիւնը մեր կեանքին ամէնէն մութ ու դժնդակ պահերուն:

Այս մտադրութեամբ է որ ուզեցինք ձեռնարկել այս նուիրական Գրքին նոր հրատարակութեան, մտքի առջեւ ունենալով արդէն իսկ լոյս տեսած աշխարհաբար թարգմանութիւնները երեք հմուտ հոգեւորականներու կողմէ, պէտք եղած վերատեսութիւնները կատարել տալով. Հ. Սրապիոն Արք. Ուլուռեան, Ընդհանուր Արքեպիսկոպոս Միսիթարեան Միաբանութեան, Հ. Գարեգին Վրդ. Գարանֆիլեան, անդամ սոյն Միաբանութեան, եւ Հ. Մեսրոպ Ծ. Վրդ. Հուրեան, անդամ՝ Զմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան:

Կ'ուզենք հոս մէջբերել ներշնչեալ խօսքերը յոյժ սիրելի եւ մեծարեալ՝ երջանկայիշատակ Կարդինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղանանեան Կաթողիկոս Պատրիարքին Տանն Կիլիկիոյ, որ իր հայրապետական պատգամով կ'ողջունէր Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ օրհնութեամբ կատարուած առաջին աշխարհաբար թարգմանութիւնը՝ Հ. Գարեգին Վրդ. Գարանֆիլեանի կողմէ:

«Յայտնելով Մեր հայրական գոհունակութիւնն ու գնահատանքը կատարուած թարգմանութեան համար, մեծապէս կը ցանկանք որ ան մուտք գործէ ամէն հայ ընտանիքէ ներս եւ դառնայ ամէնօրեայ հոգեւոր ընթերցանութեան եւ մտածութեան առակայ, սնունդ յաւիտեանական կեանքի:

«Երանի անոնց որոնք սրտի մաքրութեամբ եւ հաւատքի լիութեամբ պիտի մաշակեն եւ իւրացնեն այս աստուածային ՄԱՏԵԱՆՆԸ: Իրենք ալ, մարգարէին նման, խորունկ երախտագիտութեամբ եւ հոգեզմայլ յափշտակութեամբ, պիտի բացագանչեն թէ «Կերայ զայն (զմատեան) եւ եղեւ ի բերան իմ իբրեւ զհաղցրութիւն մեղու (Եզեկ 1, 3): Կերայ զայն (մատեանը) եւ բերնիս մէջ դարձաւ հաղցր՝ մեղրի նման»:

Պէյրութ, 23 Յուլիս 2017

Ի Տօնի Պայծառակերպութեան

Տ. Մ. Յիսուսի Քրիստոսի

✠ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի.

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Կաթողիկէ Հայոց

ԱՂՕԹՔ

ԱԽԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԷՆ ԱՌԱՋ

Յիսո՛ւս, ճշմարիտ լոյս, որ աշխարհ եկար լուսաւորելու բոլոր մարդիկը, կ'աղաչեմ, իմ միտքս ալ լուսաւորէ՛ Ս. Աւետարանիդ ընթերցումով, որպէսզի կարենամ ճանչնալ Աստուծոյ արքայութեան խորհուրդները:

Տո՛ւր ինծի այն խոնարհութիւնը եւ հաւատքը, որ հոգիները քու սրտիդ կը մօտեցնեն եւ ատակ կ'ընեն հասկնալու այն ճշմարտութիւնները՝ զորս քու երկնաւոր Հայրդ կը յայտնէ սրտով խոնարհներուն:

ԱԽԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԷՆ ԵՏՔ

Ո՛վ Յիսուս, Որդի Աստուծոյ, դու ես այն դուռը՝ ուրկէ անցնողը կը գտնէ իր յաւիտեանական փրկութիւնը: Տո՛ւր ինծի, կ'աղաչեմ, շնորհքդ՝ որպէսզի սրտիս մէջ դրոշմուած պահեմ այն երկնաւոր պատգամները, զորս Ս. Աւետարանիդ ընթերցումով սորվեցայ: Կը խոստանամ ճշմարիտ քրիստոնէական կեանքով գործադրել զանոնք, որպէսզի օր մը քեզի հետ բաժին ունենամ յաւիտեանական վայելքներուն մէջ, զորս ինծի համար չահեցար խաչին վրայ մեռնելով:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այսօր մարդկության մեծագույն զանգուածը կը հաւատայ միայն անոր՝ զոր աչքով կը տեսնէ ու ձեռքով կը շօշափէ, կորսընցուցած է բարիին ու չարին, օրինաւորին եւ ապօրինիին զգացումը, առաքինութեան ու մեղքի տարբերութիւնը: Նիւթապաշտութիւնը, հանոյքի սէրը եւ փառասիրութիւնը հեռացուցած են մարդս իր ճշմարիտ նպատակէն. լոկ նիւթն ու շահը կը հետաքրքրեն զինքը: Աշխարհս՝ կարծէ՛ք՝ փակեր է իր աչքերը, որպէսզի չտեսնէ հաւատքի լուսաշող գեղեցկութիւնը. խցեր է սկանչները՝ որ չլսէ յաւիտեանական պատգամները:

Եւ սակայն՝ ամէն ժամանակէ աւելի այսօր պահանջ կայ կրօնական զարթօնքի. ու այդ զարթօնքը Աւետարանի վարդապետութիւնը միայն կրնայ ստեղծել: Արդարեւ, կարելի չէ վերականգնել այս աշխարհը եւ վերաշինել մարդկային խիղմը՝ առանց Սուրբ Աւետարանին, որ լոյս է մտքերու, փանապարհ եւ ճշմարտութիւն. ա՛ն միայն կարող է իմաստ մը տալ կեանքին եւ զայն ազնուացնել ու բարձրացնել: Մարդիկ Սուրբ Աւետարանէն պիտի սորվին թէ ի՛նչպէս Աստուծոյ Որդին մարդ եղաւ՝ երկիր բերելու համար սէր եւ լոյս. հիմնեց իր Եկեղեցին՝ շարունակելու համար սիրոյ եւ լոյսի իր առաքելութիւնը, որպէսզի մարդիկ երջանիկ ապրին եւ կենեան փրկութեան հասնին:

Այն հուրը, զոր Քրիստոս բերաւ երկինքէն, Սուրբ Աւետարանի ընթերցումով՝ օրէ օր պիտի ջերմացնէ հաւատացեալներու սրտերը եւ պիտի արծարծէ սէրը Անոր հանդէպ՝ որ մեզի համար իր կեանքը տուաւ: Համոզուած ենք որ երբ Աստուծոյ սերմը իյ-

նայ անկեղծ ու բարի սրտերու մէջ, պիտի ծլի ու պիտի ծաղկի, հարիւրապատիկ պտուղներ տալով՝ յաւիտեանական կեանքի համար:

Այս մտածութիւններով էր որ ձեռք գարկինք Աւետարանի ներկայ աշխարհաբար թարգմանութեան, ու ջանացինք գայն դիւրիմաց եւ սահուն ոճով ներկայացնել, որպէսզի Քրիստոսի խօսքը ամէն հայ ընտանիքի տունէն ներս մտնէ եւ անկեղծ ու հաւատարիմ բարեկամ ըլլայ ամէն հաւատացեալի:

Ով որ կարդայ Աւետարանը՝ հարկ եղած տրամադրութիւններով, եւ ապրի անոր օրէնքներուն համաձայն, արքայութեան որդի պիտի ըլլայ, եւ վերջին դատաստանին օրը՝ Քրիստոսի աջակողմը պիտի բազմի: Իսկ ով որ դժբախտութիւնն ունենայ հետո մնալու Աւետարանէն՝ պիտի վտանգէ իր յաւիտեանական փրկութիւնը:

Ուստի, սիրելի՛ ընթերցող, ա՛ն Աւետարանը եւ բաց սրտով կարդա՛ գայն. դուն ոչ միայն երջանիկ պիտի ըլլաս ու միտքարւած պիտի ապրիս՝ այս աշխարհիս վրայ, այլ նաեւ պիտի ապահովես երկինքի արքայութիւնը, գտնելով փրկութեանդ թանկագին մարգարիտը:

Ներկայ թարգմանութիւնը կատարուած է գրաբարէն, ըստ Բագրատունեան 1860ի ընտիր հրատարակութեան. սակայն բոլորը համար առ համար բաղդատուած ու համեմատուած է յոյն բնագրին արդի քննական հրատարակութիւններուն հետ [...]:

Իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը, տուած ենք պատմական հակիրճ տեղեկութիւններ, ներկայացնելու համար հեղինակ Աւետարանիչին կեանքը, գրութեան ժամանակը, նպատակը, նիւթը եւ բաժանումները: Հետեւելով արդի հրատարակութիւններու, Աւետարանի գլուխներուն մէջ ներմուծած ենք համառօտ խորագիրներ, իսկ բնագրին ստորեւ գետեղած ենք բացատրական ծանօթութիւններ, որոնց բոլորին նպատակն է աւելի եւս հասկնալի

ու ժողովրդական դարձնել Սուրբ Աւետարանը, կեանքի եւ շնորհ-
քի այս ամենագեղեցիկ մատեանը:

Համեմատական բաղդատութիւններու, ներածական տուեալ-
ներու, ծանօթագրութիւններու խմբագրման, ժամանակագրական
եւ այլ ցուցակներու պատրաստութեան, ինչպէս նաեւ լեզուական
յղկումի աշխատանքին մէջ, օգտակար բաժին ունեցած է մեր քա-
րտուղարը Հ. Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան, որուն յանձնարարած
ենք որպէս կտակ՝ խնամքով հսկել մատեան ներկայ եւ յաջորդ
սպագրութիւններու վրայ:

Հ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔՊՍ. ՈՒՎՈՒՀՈՃԵԱՆ

Ընդհ. Արքայ Միխայրեան Միաբանութեան
(Վիսն. 19 Մայիս 1965)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. - Ի՞նչ է ԱԻԵՏԱՐԱՆԸ

Յիսուս, իր առաքելութիւնը սկսելուն՝ աշակերտներ հաւաքեց որպէսզի վկայ ըլլան իր խօսքերուն եւ հրաշքներուն, մասնաւորապէս իր յարութեան: Այս աշակերտներէն տասներկուքը Առաքեալ կոչեց, որոնց յանձնեց իր առաքելութիւնը եւ իշխանութիւնը: Անոնք Յիսուսի մահէն յետոյ ցրուեցան համայն աշխարհ, աստուածային Վարդապետին պատուէին համաձայն, ու ամէն կողմ քարոզեցին նոր վարդապետութիւնը, զոր Քրիստոս իր երկնաւոր Հօրմէն առած եւ իր աշակերտներուն աւանդած էր:

Առաքելական քարոզութիւնը, սկիզբները, միայն բերանացի էր: Հաւատացեալներու խնդրանքին վրայ, ինչպէս նաեւ վարդապետութիւնը անեղծ պահելու մտահոգութեամբ՝ գրի առնուեցաւ Քրիստոսի վարքը եւ քարոզութիւնը իր ընդհանուր եւ հսկան գիծերով:

Այս գիրքը ԱԻԵՏԱՐԱՆ կոչուեցաւ, որովհետեւ կու տար մարդկային ազգի փրկութեան մեծ աւետիսը, իսկ անոր հեղինակները՝ Աւետարանիչ:

Աւետարանը բոլորովին կատարեալ կենսադրական մը չէ, ոչ ալ գիտական համադրութեամբ կ'աւանդէ Յիսուսի բոլոր քարոզածները. սակայն ինչ որ կը պատմէ Յիսուսի մասին՝ ճշմարիտ է ու վաւերական, եւ անկէ ոչինչ կարելի է զեղջել:

2.- ՔԱՆԻ՞ ԵՆ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Մէկ է Քրիստոսի Աւետարանը, ինչպէս մէկ է իր վարդապե-

տուլթիւնը, զոր չորս Աւետարանիչներ չորս տարբեր գրքերով մեզի կը ներկայացնեն:

Սուրբ Եկեղեցին սկիզբէն ի վեր իբրեւ վաւերական եւ Աստուծոյ ներշնչուած նկատած է մի միայն այս չորս Աւետարանները, որոնց հեղինակներէն երկուքը առաքեալներ են. Մատթէոս եւ Յովհաննէս, իսկ միւս երկուքը առաքեալներու աշակերտ՝ Մարկոս եւ Ղուկաս:

Առաջին երեք Աւետարանները իրենց բովանդակութեամբ եւ ձեւով իրարու կը համաձայնին եւ կը կոչուին համաբարբառ, իսկ չորրորդը (Յովհաննէս) կ'ամբողջացնէ անոնց պակասները:

3.- ՃՇՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ ԵՆ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Ս. Մատթէոս եւ Ս. Յովհաննէս իբրեւ առաքեալներ կը պատմեն դէպքեր՝ որոնց ականատես եղած են, եւ վարդապետութիւններ՝ զորս ուղղակի Յիսուսի բերնէն լսած են: Միւս երկուքէն մէկը՝ Ս. Մարկոս, կ'ամփոփէ Պետրոս առաքեալի քարոզութենէն լսածները, իսկ Ղուկաս՝ Պօղոս առաքեալի եւ ուրիշ անձնաւորութիւններու վկայութիւնները, զորս մեծ խնամքով ստուգած եւ հաւաքած է:

Ամէնքն ալ կը պատմեն առարկայական ականատեսի պարզութեամբ, առանց յաւակնութեան, առանց հակաճառելու մտահոգութեան, դէպքերու, սովորութիւններու եւ անձերու մանրամասն ճշգրտութեամբ: Այս բոլորը ցոյց կու տան ճշմարտութիւն եւ անկեղծութիւն:

4.- ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ ՀԱՍԱԾ ԵՆ

Որքան որ Աւետարաններու սկզբնական յուշարէն բնագիրները մեր ձեռքը չեն հասած, սակայն շատ հին ձեռագիրներ կան չորրորդ դարէն սկսեալ, որոնց թիւը 4000էն աւելի է. իսկ հին թարգմանութիւններով միասին՝ աւելի քան 30000: Գտնուած են նոյնիսկ պապիրուսի կտորներ 120-150 թուականներէն, որոնց վրայ Յովհաննէսի Աւետարանէն հատուածներ կան:

Այս բոլոր ձեռագիրներու քննական ու բաղդատական հրատարակութիւնները ցոյց կու տան որ Աւետարանները առանց խաթարուելու հասած են մեր ձեռքը, մանաւանդ եթէ նկատենք թէ նախկին հաւատացեալները ինչպիսի՛ յարգանքով ու երկիւղածութեամբ կը պահէին ու կը պահպանէին Աւետարանները, իբրեւ Աստուծոյ խօսքը եւ փրկութեան առհաւատչեան, բոլորովին վստահ կրնանք ըլլալ որ Աւետարանները մեզի հասած են էապէս անփոփոխ:

5.- Ի՞նչՊԷՍ ՊԵՏՔ Է ԿԱՐԴԱԼ ԱԵՏԱՐԱՆԸ

Աւետարանը, ըլլալով Աստուծոյ խօսքը՝ գրուած Ս. Հոգիին ներշնչմամբ եւ առաջնորդութեամբ, ինչպէս նաեւ պարունակելով աստուածային Վարդապետին քարոզութիւնը՝ գիրքն է ճշմարտութեան, կանոնը կեանքի, ամենամեծ մատեանը սրբութեան եւ աստուածապաշտութեան, ճրագը քրիստոնէական կատարելութեան:

Հետեւեալը զայն պէտք է կարդալ խոնարհութեամբ, վստահութեամբ, անկեղծ պարզամտութեամբ եւ հաւատքով: Առանց այս տրամադրութիւններուն կարելի չէ հասկնալ Աւետարանը, ուր Աստուած ինքզինքը հոգիով խոնարհներուն ու փոքրիկներուն կը յայտնէ:

Ս. ՄԱՏԹԵՈՍ ԱԽԵՏԱՐԱՆԻԶ

ԿԵԱՆՔԸ

Մատթէոս՝ եբրայական լեզուին մէջ կը նշանակէ «Աստուծոյ նուէր»։ Առաքելական կոչումէն առաջ Ղեւի անունը կը կրէր ու պաշտօնով մաքսաւոր էր, այսինքն՝ հարկահաւաք։ Մաքսաւորները առհասարակ ատուած էին հրեայ ժողովուրդէն, որովհետեւ հռոմայեցի տիրող օտար պետութեան ներկայացուցիչները կը նկատուէին։

Յիսուս, օր մը, մաքսատան առջեւէն անցնելով՝ Մատթէոսին կ'ըսէ. «Շտեւէս եկուր»։ Մատթէոս, առանց տատամսելու, ամէն բան թողլով՝ իսկոյն Յիսուսի կը հետեւի։ Նորադարձ առաքեալը իր տան մէջ ճոխ հացկերոյթ մը կու տայ Յիսուսի, որուն կը մասնակցին բազմաթիւ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ։

Այդ օրէն սկսեալ, Մատթէոսի կեանքին պատմութիւնը կը նոյնանայ միւս առաքեալներու կեանքին հետ։ Մօտէն կը հետեւի Յիսուսի, ականատես կ'ըլլայ բազմաթիւ հրաշքներուն, փարիսեցիներու հետ կատարած վիճաբանութիւններուն, կը մասնակցի վերջին ընթրիքին, կ'ընկերանայ Յիսուսի մինչեւ Զիթենեաց պարտէզը, վկայ կ'ըլլայ անոր փառաւոր յարութեան, եւ իշխանութիւն կ'ընդունի Աւետարանը քարոզելու բովանդակ աշխարհի։

Տասնեւհինգ տարի կը քարոզէ Պաղեստինի մէջ եւ յետոյ կ'անցնի ուրիշ աշխարհներ. աւանդութեան համաձայն՝ կը շրջի Արաբիա, Եթովպիա, կը հասնի մինչեւ Պարսկաստան։

Իր մահկանացու կեանքը կը կնքէ մարտիրոսութեամբ։

ԱԽԵՏԱՐԱՆԸ

Առաջին Աւետարանին հեղինակն է Մատթէոս առաքեալ։

Եկեղեցական մատենագիրները (Պապիաս, Երանոս, Որոգինէս, Տերտուղիանոս եւ ուրիշներ) ամենահին ժամանակներէ ի վեր Մատթէոսի կ'ընծայեն առաջին Աւետարանը, որ գրուած է միւս երեքէն առաջ, արամերէն լեզուով՝ որ նոյն ժամանակ Պաղեստինի մէջ կը խօսուէր:

Մատթէոսի Աւետարանը առաջին դարուն յունարէնի թարգմանուած է. ոմանք կը կարծեն թէ նոյն ինքն հեղինակէն թարգմանուած ըլլայ: Արամերէն բնագիրը կորսուած է եւ յունարէն թարգմանութիւնը Ս. Եկեղեցւոյ կողմէն ճանչցուած է իբրեւ կանոնական գիրք, ինչպէս կը հաստատէ Ս. Գրքի Յանձնաժողովը իր 1911 Յունիս 19-ի վճիռով:

Եկեղեցական աւանդութեան եւ մեկնիչներու համաձայն՝ Մատթէոսի Աւետարանը գրուած է 42-50 թուականներուն:

ՆՊԱՏԱԿԸ

Ս. Մատթէոս իր Աւետարանը ուղղած է յատկապէս հրեաներուն, որոնց կ'ուզէ ցոյց տալ՝ թէ Յիսուս խոստացուած Մեսիան է, հիմնադիրը եւ օրէնսդիրը նոր թագաւորութեան մը, որ պիտի տարածուի բոլոր ազգերու մէջ, եւ որմէ դուրս պիտի մնան հրեաները՝ իրենց անհաւատութեան եւ կոյր խստասրտութեան պատճառով: Եւ ճիշտ այս նպատակով՝ յաճախ մարգարէներէն վկայութիւններ կը յիշատակէ, որոնք իրականացած են Քրիստոսի վրայ:

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ս. Մատթէոսի Աւետարանը եօթը մասի կը բաժնուի:

Ա. Մաս - Յիսուսի մանկութիւնը. Ազգաբանութիւն - Կուսական ծնունդ - Մոգերու երկրպագութիւն - Փախուստ դէպի Եգիպտոս եւ վերադարձ (Գլ. 1 - 2):

Բ. Մաս - Պատրաստութիւն քարոզութեան. Յովհաննէս Մկրտիչ - Յիսուսի Մկրտութիւնը եւ փորձութիւնները անապատին մէջ (Գլ. 3 - Գլ. 4, 11):

Գ. Մաս - Քարոզողութիւն Գալիլեայի մէջ. Կափառնառում - Լերան քարոզը - Հրաշքներ - Առականեր - Աշակերտներու առաքումը (Գլ. 4, 12 - Գլ. 18):

Դ. Մաս - Ճամբորդութիւն դէպի Երուսաղէմ. քարոզողութիւններ եւ հրաշքներ (Գլ. 19 - Գլ. 20):

Ե. Մաս - Վերջին շաբաթ Երուսաղէմի մէջ. Յաղթական մուտքը - Հակաճառութիւններ (Գլ. 21 - Գլ. 25):

Զ. Մաս - Չարչարանք եւ մահ Յիսուսի (Գլ. 26 - Գլ. 27):

Է. Մաս - Յարութիւն եւ երեւումներ Յիսուսի (Գլ. 28):

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

1

1 Գիրք ծննդեան
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

որ Դաւիթի որդի էր, Արքահամի սերունդէն:

2 Աբրահամ ծնաւ Իսահակը, Իսահակ ծնաւ Յակոբը, Յակոբ ծնաւ Յուդան եւ անոր եղբայրները. 3 Յուդա ծնաւ Փարէսը եւ Զարան՝ Թամարէն, 4 Փարէս ծնաւ Եզրոնը, Եզրոն ծնաւ Արամը. Արամ ծնաւ Ամինադաբը, Ամինադաբը ծնաւ Նաասոնը, Նաասոն ծնաւ Սաղմոնը. 5 Սաղմոն ծնաւ Բոոսը Հռաքաբէն, Բոոս ծնաւ Ուլբէդը Հռութէն, Ուլբէդ ծնաւ Յեսսէն, Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը:

6 Դաւիթ ծնաւ Սողոմոնը՝ Ուրիայի կնոջմէն. 7 Սողոմոն ծնաւ Րոբովամը, 8 Րոբովամ ծնաւ Աբիան, Աբիա ծնաւ Ասափը. Ասափ ծնաւ Յովսափատը, Յովսափատ ծնաւ Յովրամը, 9 Յովրամ ծնաւ Ոզիան. Ոզիա ծնաւ Յովաթամը, Յովաթամ ծնաւ Աքազը, 10 Աքազ ծնաւ Եզեկիան. Եզեկիա ծնաւ Մանասէն, Մանասէ ծնաւ Ամոնը, Ամոն ծնաւ Յովսիան. 11 Յովսիա ծնաւ Յեքոնիան եւ անոր եղբայրները՝ Բաբելոնի գերութեան ժամանակ:

12 Բաբելոնի գերութենէն վերջ՝ Յեքոնիա ծնաւ Սաղաթիէլը, 13 Սաղաթիէլ ծնաւ Զորոբաբէլը. Զորոբաբէլ ծնաւ Աբիուդը, Աբիուդ ծնաւ Եղիակիմը, Եղիակիմ ծնաւ Ազոպը. 14 Ազոպը ծնաւ

Գլ. 1, 1 – Աստուծոյ խոստումին համաձայն, Քրիստոս Արքահամի սերունդէն էր (Մննդ 12, 3) եւ Դաւիթի տունէն (2 Թագ 7, 12–16) պիտի ծնանէր: Աւետարանիչը Յիսուսի ազգաբանութիւնը յատաչ բերելով, կ'ուզէ ապացուցանել թէ Դաւիթի որդին եւ Արքահամի շառաւիղն էր Յիսուս:

Սաղովկը, Սաղովկ ծնաւ Աքինը, Աքինը ծնաւ Եղիողը: **15** Եղիողը ծնաւ Եղեազարը, Եղեազար ծնաւ Մատթանը, Մատթան ծնաւ Յակոբը: **16** Յակոբ ծնաւ Յովսէփը, Մարիամին ամուսինը, որուն նշանուած էր Մարիամ կոյսը, որմէ ծնաւ ՅԻՍՈՒՍ, որ կոչուեցաւ ՔՐԻՍՏՈՍ:

17 Արդ, բոլորը Աբրահամէն մինչեւ Դաւիթ՝ տասնչորս սերունդ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնի գերութիւնը՝ տասնչորս սերունդ, եւ Բաբելոնի գերութենէն մինչեւ Քրիստոս՝ տասնչորս սերունդ:

Յիսուսի ծնունդը

18 Յիսուս Քրիստոսի ծնունդը այսպէս եղաւ: Մարիամ, անոր մայրը, նշանուած էր Յովսէփի հետ, ու դեռ իրարու հետ չբնակած՝ յղի գտնուեցաւ Սուրբ Հոգիին ազդեցութեամբ: **19** Բայց Յովսէփ, անոր ամուսինը, որ արդար էր եւ չէր ուզեր զայն խայտառակել, խորհեցաւ լուռ կերպով զայն արձակել:

20 Եւ մինչ այսպէս կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը տեսիլքի մէջ երեւցաւ անոր եւ ըսաւ. «Յովսէփ, Դաւիթի որդի, մի՛ վախնար քովդ առնելու կինդ՝ Մարիամը, որովհետեւ անոր յղութիւնը Սուրբ Հոգիէն է: **21** Որդի մը պիտի ծնի, որուն անունը Յիսուս պիտի դնես, որովհետեւ ան է որ պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն»:

22 Ու այս բոլորը եղաւ որպէսզի կատարուի ինչ որ Տէրն ըսած էր մարգարէին բերնով: **23** «Ահա կոյսը պիտի յղանայ, որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի հետ»: **24** Յովսէփ, քունէն արթննալով, ըրաւ ինչպէս որ

16 – χριστός անունը կը համապատասխանէ եբրայեցերէն Մաշիա բառին՝ ուրկէ առնուած է Փրկչին Մեսիա անուանակոչութիւնը եւ որուն իմաստն է՝ Օծեալ: Հետեւաբար՝ Քրիստոս եւ Մեսիա անուններն ըստ իմաստին կը նոյնանան:

20 – Եւ 7, 14:

23 – Աստուած մեզի հետ անունը կը բացատրէ Քրիստոսի կրկին բնութիւնը աստուածային ու մարդկային:

իրեն հրամայած էր Տիրոջ հրեշտակը, ու քովն առաւ իր կինը:
25 Եւ չճանչցաւ զայն մինչեւ որ ծնաւ իր անդրանիկ որդին, եւ
 անոր անունը դրաւ Յիսուս:

Մոգերու երկրպագութիւնը

2 **1** Երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքին մէջ, Հերովդէս թագաւորին օրով, ահա արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ, եւ հարցուցին. **2** «Ո՞ր է Հրեաներու թագաւորը որ ծնաւ, որովհետեւ անոր աստղը տեսանք արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու անոր»:

3 Այս լսելով՝ Հերովդէս թագաւորը խռովեցաւ եւ բոլոր Երուսաղէմն ալ իրեն հետ. **4** եւ ժողովելով բոլոր քահանայապետներն ու ժողովուրդին դպիրները, հարցուց անոնց թէ ո՞ր պիտի ծնէր Քրիստոսը: Անոնք ալ պատասխանեցին. **5** «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը, որովհետեւ այսպէս գրուած է մարգարէին կողմէ. **6** Եւ դո՛ւն, Բեթղեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի փաղափներուն մէջ ամենէն փոքրը չես, որովհետեւ քեզմէ պիտի ելլէ իշխան մը որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը»:

7 Այն ատեն Հերովդէս գաղտնի կանչեց մոգերը եւ ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ժամանակը, **8** եւ զանոնք Բեթղեհէմ ղրկելով, ըսաւ. «Գացէ՛ք տեղեկացէ՛ք մանուկին մասին, եւ երբ գտնէ՛ք՝ իմացուցէ՛ք ինձի, որպէսզի ես ալ գամ ու երկրպագութիւն ընեմ անոր»: **9** Անոնք թագաւորին խօսքը լսելէ վերջ, մեկնեցան.

25 – Յիսուս «անդրանիկն» է, այսինքն՝ անդրանիկի մը բոլոր իրաւունքներն ունի ան, թէպէտեւ իմ քիմիական գաւազն է Ս. Կոյս Մարիամի:

Գլ. 2, 1 – Մոգ կը կոչուէին Արեւելքի այն գիտունները, որոնք քնագիտութեամբ եւ գլխաւորաբար աստեղագիտութեամբ կը զբաղէին: Աւանդութեան մը համաձայն, Բեթղեհէմ եկող մոգերը թագաւորներ էին:

6 – Միփա մարգարէ (5, 2): Եբրայեցերէն քնագրին մէջ կը կարդանք. «Եւ դուն, Բեթղեհէմ քաղաք, փոքրագոյնը Յուդայի գլխաւոր փաղափներուն (քառացի՝ հազարաւորներու, սակայն քեզմէ պիտի ելլէ, եւն.)»: Ս. Մատթէոսի այս յառաջընթացով ազատաբար եղած է, ընդհանուր իմաստը միայն պահելով:

եւ ահա աստղը զոր տեսեր էին արեւելքի մէջ՝ առաջնորդեց իրենց, մինչեւ որ եկաւ կեցաւ այն տեղը՝ ուր կը գտնուէր մանուկը:

10 Երբ աստղը տեսան՝ մեծապէս ուրախացան: **11** Եւ տունը մտնելով, տեսան մանուկը իր մօր՝ Մարիամի հետ, եւ գետին ինկած երկրպագութիւն ըրին անոր, ու բանալով իրենց գանձերը՝ ընծաներ տուին անոր, ոսկի, կնդրուկ եւ զմուռս: **12** Եւ տեսիլքի մէջ հրաման ստանալով չվերադառնալ Հերովդէսի մօտ՝ ուրիշ ճամբով դարձան իրենց աշխարհը:

Փախուստ դէպի Եգիպտոս

13 Երբ անոնք մեկնեցան, ահա Տիրոջ հրեշտակը տեսիլքի մէջ երեւցաւ Յովսէփին եւ ըսաւ. «Ելի՛ր, ա՛ռ մանուկը եւ իր մայրը եւ փախիր Եգիպտոս, ու հոն կեցիր մինչեւ որ քեզի ըսեմ, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը, զայն մեռցնելու համար»: **14** Յովսէփ ելաւ եւ զիշերանց առնելով մանուկը եւ անոր մայրը՝ Եգիպտոս գնաց: **15** Եւ մինչեւ Հերովդէսի մահը հոն մնաց. որպէսզի կատարուի Տիրոջ խօսքը, որ մարգարէին բերնով կ'ըսէ. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»:

Անմեղ մանուկներու կոտորածը

16 Այն ատեն Հերովդէս, տեսնելով որ մոգերէն խաբուեցաւ, սաստիկ բարկացաւ ու մարդ ղրկեց, ջարդել տուաւ Բեթղեհէմի եւ անոր ամբողջ սահմաններուն մէջ գտնուող երկու տարեկան եւ անկէ վար եղող բոլոր մանուկները, մոգերէն ստուգուած ժամանակին համաձայն: **17** Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին բերնով ըսուածը. **18** «Զայն մը գուժեց Հոամայի մէջ, ողբ ու լաց եւ դառն կոծ. Հոաբէլ կ'ողբար իր զաւակները եւ չէր ուզեր միսիքարուիլ, որովհետեւ չկային այլեւս»:

Եզիպտոսէն Վերադարձը

19 Հերովդէսի մահէն ետք, ահա Տիրոջ հրեշտակը տեսիլքով երեւցաւ Յովսէփին Եզիպտոսի մէջ եւ ըսաւ. 20 «Ելի՛ր, ա՛ռ մանուկը եւ իր մայրը եւ գնա Իսրայէլի երկիրը, որովհետեւ մեռան անոնք որ կ'ուզէին սպաննել մանուկը»: 21 Եւ ան ելաւ, առաւ մանուկը եւ անոր մայրը ու եկաւ Իսրայէլի երկիրը: 22 Եւ երբ լսեց թէ Արքեղայոս իր հօրը՝ Հերովդէսի տեղ թագաւորած է Հրէաստանի վրայ, վախցաւ հոն երթալ, եւ տեսիլքի մէջ հրաման ստանալով՝ գնաց Գալիլեայի կողմերը, 23 եւ եկաւ բնակեցաւ Նազարեթ կոչուած քաղաքը, որպէսզի կատարուի մարգարէին խօսքը, թէ Նազովրեցի պիտի կոչուի:

Յովհաննէս Մկրտիչի Բարոգութիւնը

3 1 Այն օրերուն, Յովհաննէս Մկրտիչ եկաւ Հրէաստանի անապատին մէջ քարոզելու՝ ըսելով. 2 «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ մօտեցած է երկինքի արքայութիւնը»: 3 Ա՛յս է այն մարդը որուն համար ըսուած է Շապի մարգարէին բերնով. «Ահա ձայնն անոր՝ որ կը գոչէ անապատին մէջ. պատրաստեցէ՛ք Տիրոջ փառքը եւ հարթեցէ՛ք անոր շաւիղները»: 4 Իսկ ինքը Յովհաննէս՝ հագած էր ուղտի մազէ զգեստ մը, մէջքին կաշիէ գօտի մը եւ կերակուրն ալ մարախ եւ վայրենի մեղր էր: 5 Այն ատեն իրեն կու գային բոլոր Երուսաղէմը, ամբողջ Հրէաստանը եւ Յորդանանի շրջակայ բոլոր բնակիչները, 6 եւ կը մկրտուէին իրմէ Յորդանան գետին մէջ, խոստովանելով իրենց մեղքերը:

7 Տեսնելով սաղուկեցիներէն եւ փարիսեցիներէն շատերը որ եկած էին իրմէ մկրտուելու՝ ըսաւ անոնց. «Իժերու ձագեր, ո՞վ սորվեցուց ձեզի փախչիլ վերահաս բարկութենէն: 8 Ասկէ վերջ, ու-

Գլ. 3, 2 – Երկինքի թագաւորութիւնը բացատրութիւնը Ս. Մատթէոսի անփական է, եւ կը նշանակէ այն՝ ինչ որ միւս Աւետարանիչներն «Աստուծոյ թագաւորութիւնը» կամ «Քրիստոսի թագաւորութիւնը» բացատրութիւններով կ'ուզեն: Մատթէոս կը հետեւի սովորութեանը Հրեաներու, որոնք Աստուծոյ անունը գործածելէ կը զգուշանային:

ըեմն, ապաշխարութեան արժանի պտուղներ բերէք. **9** մի՛ գոհանաք դուք ձեզի խորհելով՝ թէ մեր հայրը Աբրահամ է. կ'ըսեմ ձեզի՝ որ Աստուած կարող է այս քարերէն անգամ Աբրահամի որդիներ հանել: **10** Արդէն իսկ կացինը ծառերու արմատին դրուած է. ամէն ծառ որ բարի պտուղ չի բերեր՝ պիտի կտրուի ու կրակ նետուի:

11 Ես կը մկրտեմ ձեզ ջուրով, որպէսզի ապաշխարէք, բայց այն որ ետեւէս կու գայ՝ ինծմէ աւելի զօրաւոր է, եւ ես արժանի չեմ անոր կօշիկները քակելու. ան պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով ու կրակով: **12** Հեծանոցը ձեռքը բռնած՝ իր կալը պիտի մաքրէ, ցորենը շտեմարանին մէջ պիտի ժողվէ եւ յարդն ալ անշէջ կրակով պիտի այրէ»:

Յիսուսի մկրտութիւնը

13 Այն ատեն Յիսուս Գալիլեայէն Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ, անկէ մկրտուելու: **14** Բայց Յովհաննէս արգիլեց զինք ըսելով. «Ե՛ս պէտք է մկրտուիմ քեզմէ, դո՞ւն կու գաս ինծի»:

15 Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Թո՛ղ տուր հիմա, պատշաճ է մեզի որ այսպէս կատարենք ամէն արդարութիւն»: Այն ատեն Յովհաննէս թոյլ տուաւ:

16 Երբ Յիսուս մկրտուեցաւ եւ իսկոյն ջուրէն դուրս ելաւ, ահա երկինքը բացուեցաւ իրեն, եւ ան տեսաւ Աստուծոյ Հոգին, որ կ'իջնէր աղանձիի նման եւ իր վրայ կու գար: **17** Եւ ահա ձա՛յն մը երկինքէն՝ որ կ'ըսէր. «Ա՛յդ է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»:

11 – Սուրբ Հոգւոյն շնորհիւ մարդոց հոգիներուն վրայ կրակի նման պիտի ազդէ մկրտութեամբ եւ մէկալ խորհուրդներու միջոցաւ, հաւատացեալներուն սրտերը գերբնական կերպով պիտի մաքրէ ու սրբացնէ:

12 – Ինչպէս կացինը՝ նմանապէս նաեւ հոսելին Քրիստոսի դատաւորական իշխանութիւնը կը նշանակեն. ծառը՝ ինչպէս նաեւ կալը Իսրայէլի ժողովուրդը կ'ակնարկեն, իսկ ընդարձակ առումով բոլոր աշխարհը:

Յիսուս կը փորձուի սատանայէն

4 **1** Այն ատեն Յիսուս Հոգիէն առաջնորդուեցաւ անապատ, սատանայէն փորձուելու համար: **2** Եւ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահելէ ետք՝ անօթեցաւ: **3** Փորձիչը, անոր մօտենալով, ըսաւ. «Եթէ դուն Աստուծոյ Որդին ես՝ ըսէ՛ որ այս քարերը հաց ըլլան»: **4** Յիսուս պատասխանեց. «Գրուած է. Միայն հացով չէ որ կ'ապրի մարդ, այլ այն ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

5 Այն ատեն սատանան առաւ ու տարաւ զինքը սուրբ քաղաքը եւ տաճարին աշտարակին վրայ կեցուց. **6** եւ ըսաւ. «Եթէ Աստուծոյ Որդին ես՝ ինքզինքդ ասկէ վար նետէ, որովհետեւ գրուած է՝ թէ իր հրեշտակներուն պատուիրած է քեզի համար որ իրենց ձեռքերուն վրայ բռնեն քեզ, որպէսզի ոտքդ քարի չզարնես երբեք»: **7** Յիսուս ըսաւ անոր. «Գրուած է դարձեալ. Մի՛ փորձեր քու Տէր Աստուծոյ»: **8** Սատանան նորէն առաւ տարաւ զինքը շատ բարձր լեռ մը, եւ ցոյց տուաւ անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ անոնց փառքը, ու ըսաւ. **9** «Այս ամէնը քեզի պիտի տամ՝ եթէ գետին իյնաս ու երկրպագութիւն ընես ինծի»: **10** Այն ատեն Յիսուս պատասխանեց. «Կորսուէ՛, սատանայ, որովհետեւ գրուած է. Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն պիտի ընես եւ անոր միայն պիտի ծառայես»: **11** Այն ատեն սատանան թողուց զինքը, եւ հրեշտակները մօտեցան ու սկսան ծառայել իրեն:

Յիսուսի առաջին ֆարձգութիւնը

12 Երբ Յիսուս լսեց թէ Յովհաննէս մատնուել է՝ մեկնեցաւ Գալիլեա: **13** Ձգելով Նազարէթը՝ եկաւ բնակեցաւ Կափառնառոմ, ծովեզերքը, Զաբուղոնի եւ Նեփթաղէմի սահմաններուն վրայ, **14** որպէսզի կատարուի Եսայի մարգարէին բերնով ըսուած խօս-

Գլ. 4, 4 – Բ. Օր 8, 3

7 – Բ. Օր 6, 13

10 – Աղմ 60-61, 11-12:

քը. **15** «Երկի՛ր Զաբուղոնի՛ եւ երկի՛ր Նեփթաղէմի՛, ծովու ցանապարհ, Անդրյորդանանի մէջ, Գալիլեա հեթանոսներու. **16** խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ եւ մահուան աշխարհին ու ստուերներու մէջ նստողներուն վրայ՝ լոյս ծագեցաւ»:

17 Այդ օրէն ետք, Յիսուս սկսաւ քարոզել ու ըսել. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ մօտեցած է երկինքի արքայութիւնը»:

Առաջին չորս առաքնաւորներու կոչումը

18 Մինչ Յիսուս Գալիլեայի ծովեզերքը կը շրջէր, տեսաւ երկու եղբայրներ, Սիմոնը՝ որ Պետրոս կը կոչուէր եւ անոր եղբայրը՝ Անդրէաս, որոնք ծովը ուռկան կը նետէին, որովհետեւ ձկնորս էին. **19 եւ ըսաւ անոնց. «Ետեւէ՛ս եկէք եւ ձեզ մարդերու որսորդ պիտի ընեմ»:** **20 Անոնք, իսկոյն գործիքները թողլով՝ անոր ետեւէն գացին:** **21 Եւ աւելի առաջ երթալով՝ ուրիշ երկու եղբայրներ ալ տեսաւ, Զեբեդեան Յակոբոսը եւ անոր եղբայրը՝ Յովհաննէս, որ նաւակին մէջ, իրենց Զեբեդէոս հօր հետ, իրենց ուռկանները կը նորոգէին. եւ զանոնք ալ կանչեց:** **22 Անոնք ալ անմիջապէս իրենց նաւակն ու հայրը թողլով՝ անոր ետեւէն գացին:**

Քարոզութիւն եւ հրաշքներ

23 Յիսուս Գալիլիոյ բոլոր կողմերը կը շրջէր, կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ եւ կը քարոզէր արքայութեան աւետարանը, եւ կը բժշկէր ժողովուրդին բոլոր հիւանդութիւններն ու ցաւերը: **24 Անոր համբաւը տարածուեցաւ ամբողջ Ասորիքի մէջ. եւ անոր բերին բոլոր հիւանդները որ պէսպէս ցաւերով եւ տանջանքներով կը տառապէին, դիւահարներ, լուսնոտներ եւ անդամալոյծներ, եւ ան բժշկեց զանոնք:** **25 Բազմաթիւ ժողովուրդներ**

15 – Եւ 8, 23

16 – Եսայեայ մարգարէութեան համաձայն (9, 1), Յիսուս, աշխարհի լոյսը, իր մեսիական գործունէութիւնն ուղղակի պիտի սկսէր Գալիլիայէ, որ հեթանոս ժողովուրդներէ բնակուած էր, ու հոգեպէս՝ մահուան ստուերներուն մէջ կը խարխափէր:

կը հետեւէին անոր՝ Գալիլեայէն, Դեկապոլսէն, Երուսաղէմէն, Հրէաստանէն եւ Յորդանանի միւս կողմէն, եւ ան բժշկեց զանոնք:

Լեւրան քաղաքը եւ երանութիւնները

5 ¹ Յիսուս, տեսնելով բազմութիւնը, լեռը ելաւ. ու երբ նստաւ՝ աչակերտները անոր մօտեցան, ² եւ ան, բերանը բանալով, կ'ուսուցանէր եւ կ'ըսէր.

³ «Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:

⁴ Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի մխիթարուին:

⁵ Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:

⁶ Երանի՛ անոնց որ քաղցն ու ծարաւն ունին արդարութեան, որովհետեւ անոնք պիտի յագենան:

⁷ Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք ողորմութիւն պիտի գտնեն:

⁸ Երանի՛ անոնց որ սուրբ են սրտով, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն:

⁹ Երանի՛ խաղաղարարներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդի պիտի կոչուին:

¹⁰ Երանի՛ անոնց՝ որ արդարութեան համար կը հալածուին, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:

¹¹ Երանի՛ ձեզի՝ երբ իմ պատճառովս նախատեն ձեզ ու հալածեն եւ ստույգեմբ ձեր վրայ ամէն տեսակ չարախօսութիւն ընեն.

¹² ցնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ ձեր վարձքը մեծ է երկինքի մէջ, որովհետեւ այսպէ՛ս հալածեցին մարգարէները որ ձեզ մէջ առաջ էին:

Գլ. 5, 3 – Հոգիով աղքատ եւ անոնք, որ իրենց հոգեկան աղքատութեան ու չփառութեան գիտակից՝ Աստուծոյ առջեւ կը խոնարհին:

5 – Երկիրը՝ Աւետեաց երկիրն է, եւ բարձրագոյն իմաստով՝ երանելիներու աշխարհը:

Երկրի աղը եւ աշխարհի լոյսը

13 Դո՛ւք էք երկրի աղը. եթէ աղը իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի համեմուրի. ուրիշ բանի չի՞ ծառայեր ան եթէ ոչ՝ դուրս նետուելու եւ մարդոցմէ ոտնակոխ ըլլալու: **14** Դո՛ւք էք աշխարհի լոյսը. քաղաք մը որ լերան վրայ չի՞նուած է՝ **15** չի կրնար ծածկուիլ, եւ ոչ ալ ճրագը կը վառեն ու գրուանին տակը կը դնեն, այլ աշտանակի վրայ՝ որպէսզի լոյս տայ բոլոր անոնց որ կը բնակին տան մէջ: **16** Ձեր լո՛յսն ալ թող այնպէս փայլի մարդոց առջեւ, որպէսզի անոնք, տեսնելով ձեր բարի գործերը, փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է:

Օրէնքը եւ Մարգարէները

17 Մի՛ կարծէք թէ Օրէնքը կամ Մարգարէները ջնջելու եկած եմ. չե՛մ եկած ջնջելու, այլ՝ լրացնելու: **18** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն կամ Մարգարէներէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչեւ որ բոլորն ալ կատարուին: **19** Ո՛վ որ, ուրեմն, այս պատուիրաններէն բան մը ջնջէ, նոյն իսկ փոքրիկ, եւ այնպէս սորվեցնէ մարդոց՝ ինքն ալ փոքրիկ պիտի կոչուի երկինքի արքայութեան մէջ: Իսկ ով որ կատարէ եւ սորվեցնէ՝ անիկա մեծ պիտի կոչուի երկինքի արքայութեան մէջ:

20 Բայց կ'ըսեմ ձեզի, եթէ ձեր արդարութիւնը չզերազանցէ դպիրներունը եւ փարիսեցիներունը՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

13 – Աղը պահպանող ու համեմող ոյժ ունի: Այսպէս պէտք է առաքելներն ալ հոգեկան փոութեմէ պահպանեն մարդկութիւնը եւ բարոյականութեան համը տան անոր: Եթէ անհաւատարիմ գտնուին անոնք այս կոչման, անհնար է այլեւս օգնել անոնց, ինչպէս անգոր ու անհամ աղին կարելի չէ դարձնել տալ իր ոյժն ու համը:

15 – Գրուան. արմտիքի չափ:

17 – Օրէնքներն ու մարգարէները բացատրութիւնը կը նշանակեն Հին Կտակարանը: Յիսուս այս խօսքով կը յայտարարէ թէ իր կոչումը քանդել, ջնջել չէ՛ այն՝ ինչ որ Աստուած Հին Կտակարանին մէջ հրամայած էր, այլ գերազայն կատարելութեան բարձրացնել զայն: Եւ ասոր ապացոյցը կը գտնենք հետեւեալ վեց օրինակներու մէջ (5, 21-48):

Հիմ Օրենքը եւ Նորը

21 Լսած էք որ ըսուած է հիներուն. Մի՛ սպաննեք: Որովհետեւ ո՛վ որ սպաննէ՝ դատաստանի պիտի ենթարկուի: **22** Բայց ես կ'ըսեմ ձեզի. ով որ բարկանայ իր եղբոր դէմ առանց պատճառի, պարտաւոր պիտի ըլլայ դատաստանի. եւ ով որ իր եղբորը յիմար ըսէ, պարտաւոր պիտի ըլլայ ատեանի, եւ ով որ իր եղբորը անմիտ ըսէ՝ պարտաւոր պիտի ըլլայ գեհենի կրակին, **23** Եթէ սեղանի վրայ ընծադ նուիրելու ատեն, յիշեալ որ եղբայրդ քեզի դէմ ոխ ունի, **24** Թո՛ղ ընծադ սեղանին առջեւ եւ գնա՛ նախ հաշտուէ եղբորդ հետ եւ յետոյ եկուր ընծադ նուիրէ:

25 Շուտով հաշտուէ թշնամիիդ հետ՝ քանի ճամբան ես անոր հետ. գուցէ թշնամիդ քեզ դատաւորին մատնէ եւ դատաւորն ալ դահիճին ու բանտ նետուիս: **26** Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, անկէ պիտի չկարենաս ելլել՝ մինչեւ որ վերջին նաքարակիտը չվճարես:

Վեցերորդ եւ Իններորդ պատուիրանները

27 Լսած էք որ ըսուած է. Մի՛ շնար: **28** Բայց ես կ'ըսեմ ձեզի. ո՛վ որ նայի կին մարդու՝ անոր ցանկալով, արդէն իսկ շնացած է անոր հետ իր սրտին մէջ: **29** Եթէ աչքդ կը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու հեռու նետէ, որովհետեւ աւելի լաւ է քեզի համար որ անդամներէդ մէկը կորսուի՝ քան բոլոր մարմինդ գեհեն իյնայ: **30** Եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ՝ կտրէ՛ զայն ու հեռու նետէ, որովհետեւ աւելի լաւ է քեզի համար որ անդամներէդ մէկը կորսուի՝ քան բոլոր մարմինդ գեհեն իյնայ: **31** Ըսուած է նաեւ.

22 – Աստուծոյ թագաւորութեան մէջ, բարկութեան տրամադրութիւնն իսկ, պատճառ սպանութեան, պատիժի արժանի է այնպէս՝ ինչպէս սպանութիւնն ինքնին:

29 – Աչք աչքը, աչք ձեռքը կը նշանակեն մարդուն ունեցած ամենասիրելի ու ամենաթանկագին բանը: Մարդս պարտաւոր է նոյն իսկ անկէ բաժնուիլ, եթէ մեղանչելու պատճառ կ'ըլլայ ան:

31 – Բ. Օր 24, 1 Հիմ Օրենքին մէջ թոյլ տրուած է Հրեաներուն՝ անհաւատարմութեան պարագային, արձակման թուղթ, այսինքն ապահարգան տալ կնոջ ձեռքին ու արձակել զայն: Քրիստոս ամուսնութեան անլուծանելիութիւնը շեշտե-

Ո՛վ որ կիմը արձակե՛, թող ամուսնալուծման թուղթ տայ անոր:
32 *Բայց ես կ'ըսեմ ձեզի, ով որ իր կինը արձակե, բացի պոռնկու-
 թեան պարագայէն, անոր շնութիւն ընել կու տայ, եւ ո՛վ որ ար-
 ձակուածը առնէ՝ կը շնայ:*

Երդումը

33 *Դարձեալ լսած էք որ ըսուած է հիներուն. Սուտ երդում մի՛
 ընեք, այլ Տիրոջ ըրած երդումներդ կատարե՛:*

34 *Բայց ես կ'ըսեմ ձեզի. ամենեւին երդում մի ընէք, ո՛չ երկին-
 քի վրայ՝ որովհետեւ Աստուծոյ աթոռն է ան, **35** ո՛չ երկրի վրայ՝
 որովհետեւ անոր ոտքերուն պատուանդանն է ան, ո՛չ ալ Երուսա-
 ղէմի վրայ՝ որովհետեւ փաղափն է մեծ թագաւորին.*

36 *եւ ոչ իսկ գլխուդ վրայ, որովհետեւ չես կրնար մազ մը ան-
 գամ ձերմակ կամ սեւ ընել: **37** Այլ ձեր խօսքը թող ըլլայ՝ այոն այո՛
 եւ ոչը՝ ո՛չ, որովհետեւ ատկէ աւելին չարէն է:*

Քրիստոնէական Ներողամտութիւն

38 *Լսած էք որ ըսուած է. Աչք՝ աչքի դէմ եւ ակոյայ՝ ակոյայի դէմ:*
39 *Բայց ես կ'ըսեմ ձեզի. չարին հակառակ մի՛ կենաք. այլ եթէ մէ-
 կը ապտակ մը զարնէ աջ ալոյիդ՝ մի՛ւսն ալ դարձուր անոր: **40** Եթէ
 մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բաճկո՛նդ
 ալ տուր անոր: **41** Եւ եթէ մէկը ստիպէ քեզ մղոն մը ճամբայ կտրել*

լէ ետք, Նոր Օրէնքին մէջ կ'արգիլէ այդպիսի արձակում մը: Աստուածային Օրէնսդիրը՝ պոռնկութեան մեղապարտ կը յայտարարէ ա՛յն այրը, որ իր կիմն արձակելով՝ ատոր կրկին ամուսնութեանը պատճառ եղած կ'ըլլայ: Սակայն այդ-
 պիսի յանցանքի մը պարտաւոր չ'ընեք զայն եթէ, կնոջ անհատատարմութեանը պատճառաւ, կը բաժնուի անկէ, առանց սակայն ամուսնամալու ուրիշի մը հետ, ցորչափ կ'ապրի իր օրինաւոր կիմը:

33 – Ելից 20, 7

38 – Այս օրինակներուն նպատակը չէ՛, կեանքի մէն մի դէպքերու համար, բառացի իմաստով հետեւելիք պատուէրներ տալ մեզի: Քրիստոս այդ օրինակ-
 ներով մեր առջեւ կը դնէ, թէ կամայականութեան եւ անիրաւութեան մը փոխա-
 րէն գգուշանամք՝ յիսակալութիւն ու վրէժխնդրութիւն ցոյց տալէ. այլ
 ներողամիտ ու համբերող ըլլանք, եւ չարի փոխարէն սէր հատուցանեմք:

իրեն հետ՝ դուռն երկո՛ւ մղոն ալ ըրէ: **42** Քեզմէ խնդրողին՝ տուր, եւ փոխ ուզողին՝ երես մի՛ դարձըներ:

Սիրոյ պատուիրանը

43 Լսած էք անշուշտ որ ըստւած է. Սիրէ՛ քու ընկերդ եւ ասէ՛ քու քոյնամիտդ: **44** Բայց ես կ'ըսե՛մ ձեզի. Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք ձեզ ատողներուն, աղօթեցէ՛ք անոնց համար որ ձեզ կը հարչարեն ու կը հալածեն, **45** որպէսզի որդիներն ըլլաք ձեր Հօր՝ որ երկինքն է եւ իր արեգակը կը ծագեցնէ հարերուն ու բարիներուն վրայ, եւ անձրեւը կը տեղացնէ արդարներուն ու մեղաւորներուն վրայ: **46** Որովհետեւ եթէ մի՛այն ձեզ սիրողները սիրէք՝ ի՞նչ է ձեր վարձքը, մաքսաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ. **47** եւ եթէ ձեր եղբայրները միայն ողջունէք, ի՞նչ աւելի կ'ընէք քան մաքսաւորներն ու մեղաւորները. անոնք ալ նոյնը չե՞ն ըներ: **48** Ուստի, դուք կատարեալ եղէք ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

Ողորմութիւնը Ծածուկ

6 **1** Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջեւ չընէք՝ անոնցմէ տեսնուելու համար. գոնցէ՛ չվարձատրուիք ձեր Հօրմէն որ երկինքն է: **2** Ուստի երբ դուռն ողորմութիւն կ'ընես, փող մի՛ զարներ քու առջեւդ, ինչպէս կ'ընեն կեղծաւորները ժողովարաններուն մէջ եւ հրապարակներու վրայ, որպէսզի մարդոցմէ փառաւորուին: Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի. ա՛յդ իսկ է իրենց վարձքը: **3** Բայց դուռն՝ երբ ողորմութիւն կու տաս, թող ձախ ձեռքդ չզբխտայ ինչ որ աջդ կ'ընէ, **4** որպէսզի ողորմութիւնդ ծածուկ ըլլայ եւ քու Հայրդ, որ կը տեսնէ ինչ որ ծածուկ է՝ վարձատրէ քեզ յայտնապէս:

46 – Մաքսաւորներն ասելի էին Հրեաներուն իրենց պաշտօնավարութեանը միջոցին ստէպ գործած խարդախութիւններուն եւ անիրաւութիւններուն համար (հմմտ. Ղկ 3, 12), ինչպէս նաեւ հռոմէական կառավարութեան հետ իրենց յարաբերութեանը պատճառաւ:

Աղօթքը Մածուկ

5 Եւ երբ աղօթելու ելլես՝ մի՛ նմանիր կեղծաւորներուն, որ կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել՝ մարդոցմէ տեսնուելու համար: Զշմարիտ կ'ըսեմ ձեզի, ա՛յդ իսկ է իրենց վարձքը: **6** Բայց դուն, երբ ուզես աղօթել՝ մտի՛ր սենեակդ, փակէ՛ դուռդ եւ աղօթէ՝ Հօրդ ծածուկ, եւ քու Հայրդ, որ կը տեսնէ ինչ որ ծածուկ է՝ պիտի վարձատրէ քեզ յայտնապէս:

Զշմարիտ Աղօթքը. Հայր Մեր

7 Երբ աղօթելու ելլէք՝ շատախօս մի՛ ըլլաք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն թէ շատ խօսելով է որ պիտի լսուին: **8** Ուստի դուք անոնց մի՛ նմանիք, որովհետեւ ձեր Հայրը գիտէ թէ ի՛նչ հարկաւոր է ձեզի՝ ձեր խնդրելէն առաջ: **9** Ուստի այսպէս աղօթեցէք.

Հայր մեր, որ երկինքն ես,
սո՛ւրբ ըլլայ քու անունդ,

10 Թող զայ թագաւորութիւնդ, թող ըլլայ կամքդ,
ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս երկրի վրայ:

11 Մեր ամենօրեայ հացը տո՛ւր մեզի այսօր.

12 Եւ թո՛ղ մեզի մեր պարտքերը,
ինչպէս մենք ալ կը թողունք մեր պարտապաններուն:

13 Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան,
այլ փրկէ՛ մեզ հարէն.
որովհետեւ քուկդ է արքայութիւնը եւ զօրութիւնը
եւ փառքը՝ յաւիտեանս, ամէն:

Գլ. 6, 5 – Փրկիչը կը դատապարտէ կեղծաւոր արտաքինը, ինչպէս նաեւ մտացի բրկայնաբանութիւնը, բայց ո՛չ հրապարակային կամ յարատեւական աղօթքը, որու ինք իսկ կը յորդորէ մեզ իր խօսքովն ու օրինակովը: Փրկչին մեզմէ պահանջան է մտքի ամփոփում աղօթքի ատեն ու ջերմեռանդութիւն: Կեղծաւոր կ'ըսուի այն ցուցամոլ մարդը, որ երեսնալ կ'ուզէ:

14 Որովհետեւ, եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները՝ ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: 15 Իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները՝ ոչ ալ ձեր Հայրը պիտի ներէ ձեզի ձեր յանցանքները:

Ծոմապահութիւն

16 Երբ ծոմ պահէք՝ տխուր մի՛ երեւնաք կեղծաւորներուն նման, որ իրենց երեսը կը տգեղցնեն, որպէսզի ցոյց տան մարդոց թէ ծոմ կը պահեն: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ա՛յդ իսկ է իրենց վարձքը: 17 Բայց դուն, երբ ծոմ պահես, օծէ՛ գլուխդ եւ լուա՛ երեսդ, 18 որպէսզի իբր ծոմ պահող չերեւնաս մարդոց առջեւ այլ քու Հօրդ՝ ծածուկ կերպով: Եւ Հայրդ, որ կը տեսնէ ինչ որ ծածուկ է՝ պիտի հատուցանէ քեզի:

Երկինքի գանձերը

19 Գանձեր մի՛ դիզէք ձեզի երկրի վրայ, ուր ցեցը եւ ուտիճը կը փճացնեն եւ ուր գողերը պատը կը ծակեն ու կը գողնան: 20 Այլ գանձեր դիզեցէք ձեզի երկինքի մէջ, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ուտիճը կը փճացնեն եւ ոչ ալ գողերը պատը կը ծակեն ու կը գողնան: 21 Որովհետեւ ուր որ է ձեր գանձը՝ հոն է նաեւ ձեր սիրտը:

Մաքուր աչք եւ մաքուր սիրտ

22 Աչքը մարմինին ճրագն է. եթէ աչքդ մաքուր է՝ բոլոր մարմինդ լուսաւոր պիտի ըլլայ: 23 Իսկ եթէ աչքդ չար է՝ բոլոր մարմինդ խաւարի մէջ պիտի ըլլայ: Իսկ հիմա, եթէ լոյսը որ քու մէջդ է, խաւար է՝ հապա ո՛րքան աւելի՝ խաւարը:

Աւելորդ մտահոգութիւններ

24 Ո՛չ ոք կրնայ երկու տէրերու ծառայել. կամ մէկը պիտի ատէ

23 – Ինչ որ է աչքը մարմինին համար, նոյնն է սրտի յօժարութիւնը հոգւոյն համար, որ կա՛մ Աստուծոյ եւ կա՛մ երկրաւոր բաներու կը ձգտի:

եւ միւսը սիրէ, կամ մէկը պիտի յարգէ եւ միւսը արհամարհէ. չէ՛ք կրնար ծառայել Աստուծոյ եւ Մամոնային:

Յանձնուիլ Նախախնամութեան

25 Ուստի կ'ըսեմ ձեզի. մի՛ մտահոգուիք ձեր կեանքին համար թէ ի՞նչ պիտի ուտէք կամ ի՞նչ պիտի խմէք, ո՛չ ալ ձեր մարմնին համար թէ ի՞նչ պիտի հագուիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի կ'արժէ եւ մարմինը՝ հագուստէն: **26** Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, որ ո՛չ կը ցանեն, ո՛չ կը հնձեն եւ ո՛չ շտեմարաններու մէջ կը ժողվեն, եւ ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. միթէ դուք անոնցմէ աւելի չէ՞ք արժեք: **27** Իսկ արդ, ձեզմէ ո՞վ կրնայ, ճիշդ ներով՝ հասակին վրայ կանգուն մը աւելցնել: **28** Ինչո՞ւ հոգ կ'ընէք զգեստի համար. տեսէ՛ք վայրի շուշանը, ինչպէ՛ս կ'աճի ան. ո՛չ կ'աշխատի եւ ո՛չ կը հիւսէ: **29** Կ'ըսեմ ձեզի. եւ ոչ իսկ Սողոմոն՝ իր բոլոր փառքին մէջ, կրցաւ անոնցմէ մէկուն պէս հագուիլ: **30** Իսկ եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ ու վաղը հնոց կը նետուի, Աստուած ա՛յնպէս կը զգեստաւորէ, ո՛րչափ աւելի՝ ձեզ, թերահաւատներ:

31 Ուստի մի՛ մտահոգուիք, ըսելով թէ ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագուինք, **32** որովհետեւ այդ բոլորը հեթանոսները կը փնտռեն. քանի որ ձեր երկնաւոր Հայրը զիտէ՝ թէ այդ բոլորը հարկաւոր է ձեզի: **33** Փնտռեցէ՛ք նախ Աստուծոյ արքայութիւնը եւ արդարութիւնը, եւ այդ բոլորը աւելիով պիտի տրուի ձեզի: **34** Ուստի մի՛ հոգաք վաղուան համար, որովհետեւ վաղուան օրը իրեն համար կը հոգայ: Ամէն օրուան չարիքը կը բաւէ իրեն:

24 – Ակնարկութիւնը երկու տէրերու մասին է, որոնք իրարու ներհակ շահերու կը ձգտին:

27 – Այս խօսքը ո՛չ թէ մարդու մարմինն՝ այլ նիւթական կեանքը պահպանելու նպատակով՝ անոր վրայ չափազանց հոգ տանելու նկատմամբ ըսուած է: Ոչ ոք կարող է իր կեանքը երկնցնել, եւ ո՛չ իսկ ամենադոյզն չափով՝ որովհետեւ Աստուած իւրաքանչիւր մարդու կեանքին օրերը չափած ու կշռած է (Սիր 17, 3 – Յովհ 14, 5 – Սղմ 38, 6):

Քննադատութեան հոգին

7 **1** Մի՛ դատէ՛ք՝ որ չդատուիք. **2** որովհետեւ ի՛նչ դատաստանով որ դատէ՛ք՝ նոյնով պիտի դատուիք, եւ ի՛նչ չափով որ չափէ՛ք՝ նոյն չափով ալ պիտի չափուիք: **3** Ինչո՞ւ կը տեսնես եղբօրդ աչքին շիւղը եւ չես նշմարեր քու աչքիդ գերանը. **4** կամ ինչպէ՞ս կրնաս ըսել եղբօրդ. Թո՛ղ որ շիւղը հանեմ աչքէ՛դ՝ երբ քու աչքիդ մէջ գերան կայ: **5** Կեղծաւո՛ր, նախ գերանը աչքէ՛դ հանէ եւ ապա՛ եղբօրդ աչքին շիւղը հանելու նայէ:

6 Սուրբ բանը շուներուն մի՛ տաք, եւ ձեր մարգարիտները խողերուն առջեւ մի՛ նետէք, որպէսզի չըլլայ թէ ոտնակոխ ընեն զանոնք եւ դառնան ձեզ ալ բզբտեն:

Աղօթքի գորութիւնը

7 Խնդրեցէ՛ք եւ պիտի տրուի ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բխեցէ՛ք ու պիտի բացուի ձեզի: **8** Որովհետեւ ով որ խնդրէ՝ կ'ընդունի, ով որ փնտռէ՝ կը գտնէ, ով որ բախէ՝ կը բացուի անոր: **9** Ո՞վ է ձեզմէ այն մարդը՝ որ քար կու տայ իր զաւակին, երբ ան հաց կը խնդրէ իրմէ, **10** կամ օձ կու տայ անոր՝ երբ ան ձուկ կը խնդրէ: **11** Արդ, դուք որ չար էք՝ գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներուն, ո՛րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է՝ բարի բաներ պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ: **12** Ուստի ինչ որ կ'ուզէք որ մարդիկը ընեն ձեզի՝ դուք ալ այնպէ՛ս ըրէք անոնց, որովհետեւ ա՛յս են Օրէնքն ու Մարգարէները:

Գլ. 7, 5 – Եթէ նախանձախնդիր ես առաքիլութեան, սկսե՛ նախ քու անձիդ ուղղութեամբ, փոխանակ ուրիշի գործերը քննադատելու:

6 – Աշակերտները պարտաւոր են իրենց ամենօրեայ հաւատքի նշմարութիւններն ու շնորհի միջոցները իմաստութեամբ ու խոհեմութեամբ տնտեսել, եւ հոգ տանիլ որ անոնք ծաղրածութեան ու յանցապարտ սրբապղծութեան առարկայ չըլլան:

12 – Օրէնքն ու մարգարէները իրենց մէջ կը բովանդակեն Աստուծոյ համդէպ, մեր անձին հանդէպ ու մեր ընկերներուն հանդէպ մեր ունեցած պարտականութիւնները: Քրիստոս կը հաստատէ թէ ինք եկած չէ՝ օրէնքն ու մարգարէները ջնջելու:

Երկու ճամբաները

13 Նեղ դռնէ՛ն մտէք, որովհետեւ լայն է դուռը եւ ընդարձակ է այն ճանապարհը որ կը տանի դէպի կորուստ, եւ շատեր են որ անկէ կը մտնեն: **14** Որքա՛ն անձուկ է այն դուռը եւ նեղ է ճանապարհը՝ որ կը տանի դէպի կեանք, եւ քիչեր են որ կը գտնեն զայն:

Սուտ Մարգարէները

15 Զգուշացէ՛ք սուտ մարգարէներէն, որ ոչխարի զգեստով կու գան ձեր մօտ, բայց ներսէն յափշտակիչ գայլեր են: **16** Իրենց պտուղներէն պիտի ճանչնաք զիրենք: Միթէ կարելի՞ է փուշերէն խաղող քաղել, կամ տատասկէն՝ թուզ: **17** Այսպէս, ամէն բարի ծառ բարի պտուղ կու տայ, եւ ամէն չար ծառ՝ չար պտուղ: **18** Բարի ծառ մը չի կրնար չար պտուղ տալ, եւ ոչ չար ծառ մը՝ բարի պտուղ: **19** Ամէն ծառ որ բարի պտուղ չի տար՝ կը կտրուի ու կրակ կը նետուի: **20** Ուրեմն անոնց պտուղներէն պիտի ճանչնաք զիրենք:

Ճշմարիտ Աշակերտները

21 Ո՛չ անպայման ամէն ոք որ ինծի Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ՝ երկինքի արքայութիւնը պիտի մտնէ, այլ՝ ով որ երկնաւոր Հօրս կամքը կատարէ: **22** Շատերը, այն օրը, ինծի պիտի ըսեն. Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քու անունովդ մարգարէացանք, եւ քու անունովդ դեւեր հանեցինք եւ քու անունովդ հրաշքներ գործեցինք: **23** Բայց այն

13 – Յիսուսի այս խօսքը ուղղուած էր նոյն ատենուան մարդոց, այսինքն փարիսեցիներու, սադուկեցիներու եւ ժողովուրդին: Միթէ սակայն այսօրուան մարդիկը աւելի՞ լաւ են անոնցմէ:

21 – Ընդհանուր կանոն ամէնուն համար: «Տէր» անունին կրկնութիւնը պէտք է միացած ըլլայ ներքին ջերմեռանդութեան հետ: Առանց գործի հաւատքը անբաւական է:

23 – Քրիստոս՝ հրապարակաւ, ամբողջ աշխարհի առջեւ պիտի յայտարարէ անոնց. եւ ձեզ իբր իմիներս նկատած չէի նրբեմ: Քրիստոս այստեղ ինքզինքը կը յայտնէ իբր Աստուած, որ դատաւորական իշխանութեամբ պիտի գայ դատելու աշխարհը:

ատեն, ես պիտի ըսեմ անոնց. **Ձեզ ամենեւին չեմ ճանչնար**, հեռացէ՛ք ինծմէ, դուք ամէնքդ որ անօրէնութիւն կը գործէիք:

Եզրակացութիւն

24 Ուրեմն ո՛վ որ կը լսէ իմ այս խօսքերս ու կը գործադրէ, պիտի նմանի այն իմաստուն մարդուն՝ որ իր տունը կը շինէ ժայռի վրայ. **25** անձրեւները կ'իջնեն, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը հարուածեն այդ տունը, բայց ան չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հիմնուած է: **26** Իսկ ով որ կը լսէ իմ այս խօսքերս եւ չի գործադրեր՝ պիտի նմանի այն յիմար մարդուն՝ որ իր տունը կը շինէ ավազի վրայ. **27** անձրեւները կ'իջնեն, գետերը կը յորդին, հովերը կը փչեն, կը զարնեն տան, եւ ան կ'իյնայ. ու մեծ կ'ըլլայ անոր կործանումը:

28 Երբ Յիսուս աւարտեց իր այս խօսքերը, ժողովուրդը զարմացած էր անոր վարդապետութեան վրայ, որովհետեւ իբր իշխանութիւն ունեցող կը սորվեցնէր եւ ոչ թէ դպիրներուն պէս:

Բորոտին քննութիւնը

Մրկ 1, 40-45. Ղկ 5, 12-16

8 **1** Երբ Յիսուս լեռնէն իջաւ, խուռն բազմութիւն մը անոր ետեւէն գնաց. **2** եւ ահա բորոտ մը, մօտենալով երկրպագութիւն կ'ընէր եւ կ'ըսէր. «Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել»: **3** Յիսուս ձեռքը երկարեց եւ անոր դպչելով ըսաւ. «Կ'ուզեմ, մաքրուէ՛ր»: Եւ իսկոյն մաքրուեցաւ անոր բորոտութիւնը: **4** Յիսուս ըսաւ անոր. «**Ձգո՛յշ եղիր, մարդու բան չըսես, այլ գնա, ինքզինքդ փահանալին ցոյց տուր եւ Մովսէսի պատուիրած նուէրը տուր իբրեւ իրենց վկայութիւն»:**

Գլ. 8, 4 – Բորոտութենէ քննուած (սրբուած) մարդու ընծան՝ զոր կը նուիրէ ֆահանային, ապացոյց կամ վկայութիւն էր ժողովուրդին համար, թէ բորոտը իրապէս սրբուած կամ քննուած էր իր բորոտութենէն: Քահանաները միայն, ըստ մովսիսական օրէնքին (Ղեւտ 14, 2). իրաւասութիւն ունէին բորոտներու քննուած ըլլալը հաստատելու:

Հարիւրապետին գաւակին բժշկութիւնը

Ղկ 7,1-10. Յովհ 4,46-53

5 Երբ Կափառնաուժ կը մտնէր՝ հարիւրապետ մը մօտեցաւ անոր եւ աղաչելով ըսաւ. **6** «Տէ՛ր, ծառաս տունը անդամալոյծ պառկած է եւ չարաչար կը տանջուի»: **7** Յիսուս ըսաւ անոր. «Ես կու գամ ու կը բժշկեմ զինքը»: **8** Հարիւրապետը պատասխանեց. «Տէ՛ր, արժանի չեմ որ դուն յարկիս տակ մտնես, այլ խօսք մը միայն ըսէ ու ծառաս պիտի բժշկուի. **9** որովհետեւ ե՛ս ալ իշխանութեան ենթակայ մարդ մըն եմ, ձեռքիս տակ զինուորներ ունիմ, ասոր կ'ըսեմ գնա՝ եւ կ'երթայ, անոր կ'ըսեմ եկուր՝ եւ կու գայ, եւ ծառայիս՝ թէ այս բանն ըրէ, եւ կ'ընէ»: **10** Յիսուս, երբ լսեց՝ զարմացաւ, եւ ըսաւ իրեն հետ գացողներուն. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ այսպիսի հաւատք չգտայ երբեք: **11** Բայց կ'ըսեմ ձեզի թէ շատեր պիտի գան Արեւելքէն ու Արեւմուտքէն եւ երկինքի արքայութեան մէջ պիտի բազմին Աբրահամի, Սահակի եւ Յակոբի հետ. **12** Իսկ արքայութեան որդիները դուրս պիտի նետուին արտաքին խաւարին մէջ. հոն պիտի ըլլայ լաց եւ ակռաներու կրճատում»: **13** Եւ Յիսուս ըսաւ հարիւրապետին. «Գնա՛, եւ ինչպէս հաւատացիր՝ այնպէս թող ըլլայ». եւ նոյն ժամուն առողջացաւ անոր ծառան:

8 – Ինչպիսի՜ խոնարհութիւն եւ որպիսի՜ մեծարանք: Ինչպիսի՜ հակադրութիւն փարիսեցիներու եւ դաւիթներու ամբարտաւանութեան: Այս խոնարհութիւնը ո՛չ միայն արժանի կ'ըլլայ Քրիստոսէ լսելու, այլ եւ կ'արժանանայ այն մեծ պատույն, որով Եկեղեցին՝ հարիւրապետին խօսքը, իր հաւատացեալներուն բերանը կը դնէ, երբ Փրկիչը՝ Գոհութեան ամենասուրբ խորհրդոյն մէջ անոնց հոգւոյն տունը մտնել կ'ուզէ:

9 – Ինչպէս որ ես, որ իշխանաւոր մըն եմ, իմ ստորադասներուս կրնամ հրամայել, այսպէս ալ դուն, որ գերագոյն կարգի հրամանատար մըն ես, կարող ես հիւանդներու հրամայել:

12 – Թագաւորութեան որդիներն են ա՛յն Հրեաները որոնք մնախ կոչուած էին Մեսիայի թագաւորութեան: Արտաքին խաւարը, այսինքն՝ արքայութեան ուրախութենէն դուրս:

Բուժումը Պետրոսի Զոֆանչին

14 Յիսուս, Պետրոսի տունը գալով՝ տեսաւ որ անոր զոքանչը ջերմով պառկած էր. **15** անոր ձեռքէն բռնեց ու ջերմը անցաւ. եւ ան՝ ոտքի ելլելով, սկսաւ ծառայել անոնց:

Բազմաթիւ Բուժումներ

16 Երբ իրիկուն եղաւ, շատ դիւահարներ բերին անոր եւ ան, մէկ խօսքով հանեց դեւերը եւ բոլոր հիւանդները բժշկեց, **17** որպէսզի կատարուի Շապի մարգարէին բերնով ըստած խօսքը. «Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց եւ մեր ցաւերը ջնջեց»:

Քրիստոսի հետեւելու պայմանները

18 Յիսուս, իր շուրջը շատ ժողովուրդ տեսնելով՝ հրամայեց որ միւս ափը անցնին: **19** Դպիր մը, մօտենալով, ըսաւ անոր. «Վարդապէ՛տ, ետեւէ՛դ պիտի գամ ուր որ ալ երթամ»: **20** Յիսուս պատասխանեց. «Աղուէսները իրենց որջերն ունին եւ երկիրքի թռչունները՝ իրենց բոյները. բայց Մարդու Որդին չունի տեղ մը ուր գլուխը դնէ»:

21 Աշակերտներէն ուրիշ մը ըսաւ անոր. «Տէ՛ր, թոյլ տուր ինծի որ նախ երթամ հայրս թաղեմ»: **22** Յիսուս պատասխանեց. «Ետեւէ՛ս եկուր եւ թո՛ղ որ մեռելները իրենց մեռելները թաղեն»:

18 – Այսինքն՝ Գեներալ Բարթոլոմէոս լեւոնեացի:

20 – Յիսուս խոնարհաբար Որդի մարդոյ (մարդու որդի) կը կոչէ ինքզինքը, եւ այս անունով կ'ակնկալէ Աստուծոյ Որդիին մարդեղութեան խորհուրդը:

22 – Այն պարագային, երբ ընտանիքը քշմամբար վերաբերուի Աստուծոյ թագաւորութեան հանդէպ եւ հակառակի անոր, պարտական է մարդ մէկդի թողուլ ընտանեկան ամէն ակնածանք, եւ ամէն ինչ զոհել Աստուծոյ թագաւորութեան համար: Կ'երեւի թէ Քրիստոսի այն աշակերտին պարագաները երկնաւոր նկատումներէ տարուած մարդիկ եղած ըլլալու էին, որ Փրկիչը մեռելներ կ'անլանէ զանոնք:

Յիսուս Փռթորիկը կը հանդարտեցնէ

Մրկ 4, 35-41. Ղկ 8, 22-25

23 Երբ նաւակ մտաւ, աշակերտներն ալ իրեն հետեւեցան. **24** եւ ահա մեծ փոթորիկ մը փրթաւ ծովուն վրայ, այնպէս որ նաւակը ալիքներէն կը ծածկուէր, իսկ Յիսուս կը քնանար: **25** Աշակերտները մօտեցան անոր, արթնցուցին զինքը եւ ըսին. «Տէ՛ր, փրկէ՛ մեզ, որովհետեւ կը կորսուի՛նք»: **26** «Թերահաւատներ, ինչո՞ւ կը վախնաք», պատասխանեց Յիսուս: Այն ատեն ելաւ, սաստեց հովերուն եւ ծովուն ու մեծ խաղաղութիւն տիրեց: **27** Ու մարդիկ զարմացած կ'ըսէին. «Ինչպիսի՛ մէկն է ասիկա՝ որ հովերն ու ծովը կը հնազանդին իրեն»:

Գերգեսացի դիւախարները

Մրկ 5, 1-20. Ղկ 8, 26-39

28 Երբ անցան դիմացի եզերքը, Գերգեսացիներու երկիրը, իրեն հանդիպեցան երկու դիւահարներ, գերեզմաններէն ելած, սաստիկ կատղած, այն աստիճան որ մարդ չէր կրնար այդ ճամբէն անցնիլ: **29** Եւ ահա անոնք աղաղակեցին եւ ըսին. «Ի՞նչ կայ մեր եւ քու միջեւ, Յիսուս, Որդի՛ Աստուծոյ, ժամանակէն առաջ մեզ տանջելո՞ւ եկար»: **30** Անոնցմէ քիչ հեռու, արօտական խոզերու մեծ երամակ մը կար: **31** Դեւերը կ'աղաչէին եւ կ'ըսէին իրեն. «Եթէ մեզ ասկէ հանես՝ հրաման տուր որ երթանք խոզերու երամակին մէջ մտնենք»: **32** «Գացէ՛ք», ըսաւ անոնց: Եւ անոնք ելան գացին, խոզերու մէջ մտան, եւ ամբողջ երամակը բարձունքէն դիմեց դէպի ծով ու ջուրերու մէջ խեղդուեցաւ: **33** Իսկ խոզարածները փախան, ու քաղաք երթալով, ամէն ինչ պատմեցին, նաեւ դիւահարներուն

29 – Գրաբար Աւետարանին՝ «Զի՞ կայ մեր եւ քո» խօսքը, բառացի կերպով՝ «Ի՞նչ կայ մեզի եւ քեզի» կը նշանակէ: Հին եւ նոր Կտակարաններուն մէջ ստեպ գործածուած եբրայական այս բացատրութեան իմաստն է՝ հանգի՛ստ թող մեզ: Մենք իմաստին համաձայն թարգմանեցինք՝ «Ի՞նչ գործ ունիս դուն մեզի հետ», կամ որ նոյնն է «Քեզի հետ մենք ի՞նչ գործ ունինք»:

պատահածը: **34** Եւ ահա բոլոր քաղաքը ընդառաջ ելաւ Յիսուսի, եւ երբ տեսան զինքը՝ աղաչեցին որ հեռանայ իրենց սահմաններէն:

Անդամալոյծին բուժումը

Մրկ 2, 1-12. Ղկ 5, 17-26

9 **1** Յիսուս, նաւակ մտնելով, դիմացի կողմն անցաւ եւ եկաւ իր քաղաքը: **2** Եւ ահա իրեն ներկայացուցին՝ անկողին ինկած անդամալոյծ մը: Յիսուս, տեսնելով անոնց հաւատքը, ըսաւ անդամալոյծին. «Քաջալերուէ՛, որդեա՛կ, ներուած են քու մեղքերդ»: **3** Եւ ահա դպիրներէն ոմանք ըսին իրենց մտքէն. «Կը հայհոյէ՛ ասիկա»: **4** Յիսուս, հասկնալով անոնց մտածութիւնը՝ ըսաւ. «Ինչո՞ւ ձեր սրտին մէջ չար բաներ կը խորհիք: **5** Ո՞րը աւելի դիւրին է: Մեղքերդ թողուած են ըսե՞լք թէ՛ Ելի՛ր ու քալէ՛ ըսելը: **6** Բայց որպէսզի գիտնաք թէ Մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, Ելի՛ր, ըսաւ անդամալոյծին, **7** ա՛ռ անկողինդ եւ տունդ գնաց»: **8** Երբ ամբոխը տեսաւ՝ զարմացաւ եւ փառք տուաւ Աստուծոյ որ այդպիսի իշխանութիւն տուած էր մարդոց:

Մատթէոսի կոչումը

Մրկ 2, 13-17. Ղկ 5, 27-32

9 Յիսուս, մեկնելով անկէ՝ Մատթէոս անունով մարդ մը տեսաւ, որ մաքսատան առջեւ նստած էր, եւ ըսաւ անոր. «Ետեւէ՛ս եկուր»: Եւ ան՝ ելլելով, ետեւէն գնաց:

Ճաշ Մեղաւորներուն հետ

10 Երբ անոր տունը սեղանի նստած էր, ահա շատ մը մաքսա-

Գլ. 9, 5 – Երկուքն ալ հաւասարապէս դժուարին բաներ են, եւ կը պահանջեն աստածային ամենակարող գորութիւն:

10 – Մաքսաւորները, որոնք հրէական երկրին մէջ, Հռոմայեցիներուն քով

ւորներ եւ մեղաւորներ եկան ու նստան Յիսուսի եւ անոր աշակերտներուն հետ: **11** Փարիսեցիները, երբ տեսան՝ ըսին անոր աշակերտներուն. «Ինչո՞ւ ձեր վարդապետը մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ կ'ուտէ»: **12** Իսկ Յիսուս, երբ լսեց՝ պատասխանեց. «Առողջներուն բժիշկ հարկաւոր չէ, այլ հիւանդներուն: **13** Գացէ՛ք սորվեցէ՛ք թէ ինչ կը նշանակէ՝ Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ, որովհետեւ ես չեկայ արդարները կանչելու համար, այլ՝ մեղաւորները»:

ՎԷՐ՝ ԺՈՒՄԱՅԱԽՈՒԹԻԱՆ ՄԱՍԻՆ

Մրկ 2, 18–22. Ղկ 5, 33–39

14 Այն ատեն Յովհաննէսի աշակերտները մօտեցան անոր եւ ըսին. «Ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները յաճախ ծոմ կը պահենք եւ քու աշակերտներդ չեն պահեր»: **15** Յիսուս պատասխանեց անոնց.

կը պաշտօնավարէին, իբր հաւատուրաց՝ անարգուած էին Հրեաներէ: Փարիսեցիները մեղաւոր կը նկատէին այն ամէնքը, որ ճշդիւ չէին պահեր հրեական սովորութիւնները: Հեթանոսներու հետ յարաբերութեան մէջ գտնուողներն ալ ատոնց կարգէն էին: Այսպիսիներէն կը խորշէին դպիրներն ա՛յնպէս՝ ինչպէս բոքոսներէ:

13 – «Ողորմութիւն կ'ուզեմ» (Ովսէէ 6, 6) խօսքը ըստ եբրայական լեզուի բացատրութեան, կը նշանակէ՝ Ողորմութիւնը լաւագոյն կը համարիմ՝ քան զոհը:

15 – «Հարսնելորը» համագօր բառն է գրաբար թարգմանութեան «մանկունք առագաստի» (հարսնասնեակի որդիներ) եբրայական բացատրութեան: Անոնց պաշտօնն էր հարսանիքի հանդիսական օրը, իբր փեսաւէր, ընկերանալ փեսային եւ ծառայել անոր: (Մարկ 2, 29) կ'անուանէ զանոնք «որդիք առագաստի», իսկ (Յովի 3, 29) «բարեկամ փեսայի»: Հարսանիքը Հրեաներու քով, շարաթ մը կը տնէր, որու միջոցին, հարսանիքի կոչնականները ազատ էին, ռաբունական օրէնքին համաձայն, ծոմ պահելու պարտաւորութենէն: Ինչպէս Սինայի լեռան Ուխտը՝ նմանապէս նաեւ Մոսիայի թագաւորութիւնը նմանցուած է յաճախ Հարսանիքի մը: Նոր Ուխտը՝ նոր հոգեւոր ամուսնութիւն մըն է, զոր Աստուած կնքած է մարդկութեան հետ. հարսանեական հանդէսը՝ Քրիստոսի մարդկեղէն կեանքին շրջանն է: Այս պատճառաւ ալ, այս հարսանիքին մասնակցող հարսնելորները, այսինքն՝ աշակերտները, չեն կրնար առ այժմ ծոմ պահել: Յետոյ սակայն անոնք ալ ծոմապաշտութիւն պիտի ընեն, երբ իրենց ներկայի ուրախութիւնը՝ Յիսուսի վերցուելովն իրենց մէջէն, տրտմութեան փոխուի:

«Միթէ կարելի՞ է որ հարսնեւորները սուգ պահեն՝ երբ փեսան իրենց հետ է. բայց պիտի գան օրեր՝ երբ փեսան իրենցմէ պիտի առնուի եւ ա՛յն ատեն ծոմ պիտի պահեն:

16 Ո՛չ ոք նոր կարկտան մը կը դնէ հին զգեստին վրայ, որովհետեւ այդ կտորը հին զգեստին ամբողջութիւնը կ'առնէ կը տանի, եւ պատռուածքը աւելի գէշ կ'ըլլայ: **17** Եւ ոչ ալ նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնեն, ապա թէ ոչ՝ տիկերը կը պայթին եւ գինին կը թափուի ու տիկերն ալ կը փճանան. այլ նոր գինին՝ նոր տիկերու մէջ կը լեցնեն եւ երկուքն ալ կը պահուին»:

Յայրօսի աղջկան եւ Տնտատես կնոջ քուժումը եւ քարութիւն

Մրկ 5, 21-43. Ղկ 8, 40-56

18 Մինչ այսպէս կը խօսէր անոնց՝ ահա իշխան մը, մօտենալով, երկրպագութիւն կ'ընէր անոր եւ կ'ըսէր. «Աղջիկս նոր մեռաւ, բայց եկուր ձեռքդ վրան դիր եւ պիտի ողջանայ»: **19** Յիսուս ելաւ եւ աշակերտներուն հետ միասին անոր ետեւէն գնաց:

20 Եւ ահա կին մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնահոսու-թեամբ կը տառապէր, ետեւէն մօտենալով, դպաւ անոր զգեստին քղանցքին, **21** որովհետեւ մտքէն կ'ըսէր. Եթէ անոր զգեստին միայն դպչիմ՝ կը փրկուիմ: **22** Յիսուս ետ դարձաւ, տեսաւ զայն եւ ըսաւ. «Քաջալերուէ՛, դուստրս, հաւատքդ փրկեց քեզ»: Եւ կի-նը նոյն վայրկեանին բժշկուեցաւ: **23** Երբ Յիսուս իշխանին տու-նը եկաւ, եւ տեսաւ փողահարները եւ մեծ ամբօխը՝ ըսաւ անոնց. **24** «Դո՛ւրս ելէք, որովհետեւ աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Եւ անոնք կը ծաղրէին զինքը: **25** Երբ ամբօխը դուրս ելաւ, ինքը

17 – Նոր կապերս ու նոր գինին՝ Աւետարանը կը նշանակեն: Իսկ հին զգեստ ու հին տիկը՝ իսրայէլեան աստուածաշաղտութեան հիմցած ձեւերը: Մեսիական նոր ժամանակը՝ կը պահանջէ նոր ձեւ մը եւ նոր եղանակ մըն ալ աստուածաշաղտութեան:

18 – Իշխան մը, այսինքն՝ ժողովրդանոցի վերակացուն կամ գլխաւորը:

ներս մտաւ, բռնեց աղջկան ձեռքէն, եւ աղջիկը ոտքի ելաւ: **26** Այս լուրը տարածուեցաւ բոլոր երկրին մէջ:

Նրկու կոյրերուն եւ համբին բուժումը

27 Երբ Յիսուս կը մեկնէր անկէ՝ երկու կոյրեր ետեւէն երթալով կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Ողորմէ՛ մեզի, Դաւիթի որդի»:
28 Երբ տուն եկաւ, կոյրերը անոր մօտեցան, եւ Յիսուս հարցուց անոնց. «Կը հաւատա՞ք որ ես կարող եմ այդ բանը ընել ձեզի»:
 «Այո՛, Տէր», պատասխանեցին անոնք: **29** Այն ատեն Յիսուս անոնց աչքերուն դպաւ եւ ըսաւ. «Ձեր հաւատքին համեմատ թող ըլլայ ձեզի»: Եւ անոնց աչքերը բացուեցան: **30** Յիսուս խստիւ պատուիրեց անոնց եւ ըսաւ. «Ձգոյ՛ջ եղէք, մարդ չիմանայ»: **31** Սակայն անոնք ելան ու բոլոր երկրին մէջ տարածեցին անոր համբաւը:

Համբ Դիւահարին Բուժումը

32 Անոնց դուրս ելլելէն ետք՝ ահա բերին անոր առջեւ համբ դիւահար մը: **33** Երբ դեւը ելաւ՝ համբը խօսեցաւ. Ժողովուրդը զարմացած կ'ըսէր. «Այսպիսի բան երբեք տեսնուած չէ Իսրայէլի մէջ»: **34** Իսկ փարիսեցիները կ'ըսէին. «Դեւերու իշխանին զօրութեամբ կը հանէ սատանաները»:

Յիսուս Գալիլեայի մէջ

35 Յիսուս կը շրջէր բոլոր քաղաքներն ու գիւղերը, անոնց Ժողովարաններուն մէջ կ'ուսուցաներ եւ կը քարոզէր արքայութեան աւետարանը, բժշկելով բոլոր ախտերն ու հիւանդութիւնները Ժողովուրդին մէջ: **36** Եւ տեսնելով բազմութիւնը, խղճաց անոնց վրայ, որովհետեւ յոգնած ու ցրուած էին անհովիւ ոչխարներու նման: **37** Այն ատեն ըսաւ իր աշակերտներուն. «Հունձքը առատ

28 – Պետրոսի տունը:

31 – Քրիստոս լոյս պատուիրելով կոյրերուն՝ ցոյց կու տայ թէ ո՛րքան անհաճոյ է իրեն սնապարծութիւնը:

է, բայց մշակները քիչ. **38** ուստի աղաչեցէք հոռնձքի Տիրոջ որ մշակներ զրկէ իր հոռնձքին համար»:

Տասներկու առաքնականքը

10 **1** Իր մօտ կանչելով տասներկու աշակերտները, իշխանութիւն տուաւ անոնց՝ պիղծ դեւերը հանելու եւ բժշկելու ամէն ցաւ ու ամէն հիւանդութիւն: **2** Տասներկու առաքնականքն ունէր անոնները ասոնք էին. առաջինը՝ Սիմոն, որ Պետրոս կոչուեցաւ, եւ անոր եղբայրը՝ Անդրէաս: **3** Յակոբոս Զեբեդեան եւ անոր եղբայրը՝ Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթողիմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեան եւ Ղերէոս՝ որ կոչուեցաւ Թադէոս, **4** Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի՝ որ մատնեց Յիսուսը:

Առաքնականքուն առաջին փարզութիւնը

5 Յիսուս այս տասներկուքը զրկեց եւ պատուիրեց անոնց ըսելով. «Հեթանոսներու ճամբէն մի՛ անցնիք, եւ Սամարացիներու քաղաքը մի՛ մտնէք. **6** այլ աւելի գացէք Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն: **7** Եւ երբ երթալու ըլլաք, քարոզեցէք ու ըսէք՝ թէ մօտեցած է երկինքի արքայութիւնը: **8** Հիւանդները բժշկեցէք, մեռեալներուն յարութիւն տուէք, բորոտները մաքրեցէք ու դեւերը հանեցէք: Զրի՛ առիք, ճրի՛ տուէք: **9** Ձեր գօտիներուն մէջ ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ ալ պղինձ պահեցէք, **10** ո՛չ պարկ՝ ճամբորդութեան համար, ո՛չ երկու գգեստ, ո՛չ կօշիկ եւ ո՛չ գաւազան:

Գլ. 10, 2 – Բոլոր Աւետարանիչները, երբ առաքնականքու անուանացանկը կը գրեն, միշտ կը յիշատակեն նախ Ս. Պետրոսի անունը. եւ ա՛յն ինչ որ մտադրութեան արժանի է մասնաւոր կերպով շեշտելով «առաջին»ը, գոր Ս. Ոսկերբան «առաջնորդ» բառով կը մեկնաբանէ: Աւետարանիչներու կիրարկած այս բացատրութիւնը պատահական չէ՝ բնաւ: Ան ակնյայտնի կերպով կը մատնանշէ մեզի Ս. Պետրոսի նախապատուութիւնն ու անոր գլխաւորութիւնը միւս բոլոր առաքնականքուն վրայ, իր նոխութեամբն ու իր իշխանութեամբը: Զայս այլապէս մեկնել ուզելու փորձը՝ բռնագրօսիկ է եւ սխալ:

որովհետեւ մշակը արժանի է իր կերակուրին: **11** Ո՛ր քաղաքը կամ գիւղը մտնէ՞՝ հարցուցէ՞ թէ արժանաւոր ո՛վ կայ հոն. անոր քով կեցէ՞ք մինչեւ որ անկէ մեկնիք: **12** Երբ տուն մը մտնէ՞ք՝ ողջոյն տուէ՞ք անոր, եւ ըսէ՞ք՝ խաղաղութիւն այս տան: **13** Եթէ այդ տունը արժանի է՝ ձեր խաղաղութիւնը թող անոր վրայ հանգչի, իսկ եթէ արժանի չէ՝ ձեր խաղաղութիւնը թող ձեզի վերադառնայ: **14** Եւ եթէ մէկը ձեզ չընդունի եւ մտիկ չընէ ձեր խօսքերուն՝ այդ տունէն կամ քաղաքէն ելլելու ատեն՝ թօթուեցէ՛ք ձեր ոտքերուն փոշին: **15** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. դատաստանին օրը, Սողոմի եւ Գոմորի բնակիչներուն վիճակը աւելի թեթեւ պիտի ըլլայ քան այն քաղաքինը: **16** Ահաւաստիկ ես կը դրկեմ ձեզ իբրեւ ոչխարներ դայլերու մէջ. ուստի խորագէտ եղէ՞ք օձերու նման եւ միամիտ՝ աղաւնիներու պէս:

Քարոզութեան հրահանգներ

Առաքեալները Պիտի Հալածուիմ

Մրկ 13, 9-13. Ղկ 21, 12-19

17 Զգուշացէ՛ք մարդերէն, որովհետեւ ձեզ պիտի մատնեն ատենանի եւ իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի տանջեն, **18** եւ իմ պատճառովս ձեզ դատաւորներու եւ թագաւորներու առջեւ պիտի տանին՝ որպէսզի անոնց եւ հեթանոսներուն առջեւ վկայութիւն տաք: **19** Բայց երբ մատնեն ձեզ՝ մի՛ հոգաք թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պիտի խօսիք, որովհետեւ այն ժամուն ձեզի պիտի տրուի ձեր խօսելիքը: **20** որովհետեւ դուք չէ՛ք որ պիտի խօսիք, այլ ձեր Հօրը հոգին պիտի խօսի ձեր ներսը:

21 Եղբայրն իր եղբայրը պիտի մատնէ մահուան, եւ հայրը՝ իր որդին, եւ որդիները իրենց հայրերուն դէմ պիտի ելլեն ու պիտի սպաննեն զանոնք, **22** եւ իմ անուանիս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց ո՛վ որ մինչեւ վերջ համբերէ՝ ան պիտի փրկուի:

14 – Ուտքերէն փոշին թօթափել քացատրութիւնը՝ մէկու մը հետ ամէն յարաբերութիւն խցել կը նշանակէ:

23 Եւ երբ այս քաղաքին մէջ հալածեն ձեզ՝ ուրիշ քաղաք մը փախէք, եւ եթէ հոն ալ հալածեն՝ միւսը փախէք՝ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝ թէ պիտի չկարենաք սպառել Իսրայէլի քաղաքները, մինչեւ որ գայ Մարդու Որդին:

Քաջալերական յորդոր

24 Աշակերտը իր վարդապետէն վեր չէ, եւ ոչ ալ ծառան՝ իր տիրոջմէն: **25** Բաւական է աշակերտին համար՝ որ իր վարդապետին նման ըլլայ, եւ ծառային՝ իր տիրոջ պէս: Եթէ տանտէրը Բէեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ աւելի՝ անոր ընտանիքին անդամները:

Անկեղծ Խօսիլ եւ Ձվախնալ

26 Ուստի մի՛ վախնաք անոնցմէ, որովհետեւ չկայ ծածուկ բան որ չյայտնուի, ոչ ալ գաղտնիք՝ որ չզբաղեցուի: **27** Ինչ որ խաւարին մէջ կ'ըսեմ ձեզի՝ դուք լոյսին մէջ ըսէք, եւ ինչ որ ձեր ականջին փսփսալով ըսուի՝ դուք տանիքներու վրայ քարոզեցէք:

28 Մի՛ վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, բայց չեն կրնար հոգին սպաննել: Այլ վախցէք անկէ՝ որ կրնայ հոգին ու մարմինը կորուստի մատնել գեհենի մէջ: **29** Չէ՞ որ երկու ճնճղուկներ մէկ դանկի կը ծախուին, սակայն անոնցմէ ո՛չ մէկը գետին կ'իյնայ առանց ձեր Հօր: **30** Բայց ձեր գլխուն մագէրն անգամ համրուած են: **31** մի՛ վախնաք ուրեմն, դուք շատ ճնճղուկներէ աւելի յարգի էք:

32 Ով որ զիս դաւանի մարդոց առջեւ՝ ես ալ զի՛նքը պիտի դաւանիմ Հօրս առջեւ որ երկինքն է: **33** Եւ ով որ ուրանայ զիս մարդոց առջեւ՝ ես ալ զի՛նքը պիտի ուրանամ Հօրս առջեւ որ երկինքն է:

23 – Առաքելներու պարտքն է բոլոր աշխարհին փարփել Աւետարանի վարդապետութիւնը մինչեւ գալուստը Քրիստոսի՝ վերջին դատաստանի օրը: Այն որ պաշտօնն ունի Քրիստոսի հօտին մէկ մասը հովուելու, պարտաւոր է մնալ անոր մօտ, երբ հարկը ստիպէ, որպէս զի չվտանգուի հաւատացեալներու հոգւոյն փրկութեան (հոգ հոգուցի) գործը:

25 – Բէեղզեբուղ, այսինքն սատանաներու իշխան:

Սուր, Խաչ, Նեղուֆին

34 Մի՛ կարծէք թէ ես եկած եմ խաղաղութիւն բերելու երկրի վրայ. խաղաղութիւն բերելու չե՛մ եկած, այլ՝ սուր: **35** Որովհետեւ եկայ տղան իր հօրմէն, աղջիկը իր մօրմէն եւ հարսը իր կեսուրէն բաժնելու. **36** եւ մարդուն թշնամին՝ իր ընտանիքն է:

Հրաժարիլ Անձէն. Հետեւիլ Յիսուսի

37 Ո՛վ որ իր հայրը կամ մայրը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի. ո՛վ որ իր տղան կամ աղջիկը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի: **38** Եւ ո՛վ որ չ'առնէր իր խաչն ու ետեւէս չի գար՝ արժանի չէ ինծի: **39** Ո՛վ որ կը գտնէ իր անձը, պիտի կորսնցնէ զայն, եւ ո՛վ որ ինծի համար իր անձը կը կորսնցնէ՝ պիտի գտնէ զայն: **40** Ով որ ձեզ կ'ընդունի՝ զի՛ս կ'ընդունի, եւ ով որ զի՛ս կ'ընդունի՝ կ'ընդունի զայն՝ որ զիս ղրկած է: **41** Ով որ մարգարէ մը կ'ընդունի իբրեւ մարգարէ՝ մարգարէի վարձք կ'առնէ, եւ ով որ արդար մը կ'ընդունի իբրեւ արդար՝ արդարի վարձք կը ստանայ: **42** Եւ ով որ այս փոքրիկներէն մէկուն բաժա՛կ մը միայն պաղ ջուր կը խմցնէ աշակերտի անունով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝ պիտի չկորսնցնէ իր վարձքը»:

Յիսուսը Կը Վկայէ Յովհաննէս Մկրտիչին Մասին

11 **1** Երբ Յիսուս աւարտեց տասներկու աշակերտներուն ուղղուած պատուէրները, մեկնեցաւ այն տեղէն՝ անոնց քաղաքներուն մէջ քարոզելու եւ սորվեցնելու համար: **2** Իսկ Յովհաննէս, բանտին մէջ լսելով Յիսուսի գործերը, իր աշակերտներուն միջոցաւ հարցնելու ղրկեց. **3** «Դու անիկա՞ ես որ պիտի գար՝ թէ ուրիշ մը սպասենք»: **4** Յիսուս պատասխանեց անոնց լսելով. «Գացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննէսին ինչ որ լսեցիք

39 – Այն որ, Քրիստոսէ հրաժարելով, պահել կ'ուզէ իր ժամանակաւոր կեանքը՝ պիտի կորսնցնէ իր յաւիտեական կեանքը. իսկ այն որ Քրիստոսի սիրոյն համար կը կորսնցնէ իր երկրաւոր կեանքը՝ պիտի ստանայ յաւիտեական կեանքը:

Գոպեստ Յոպհաննէս Մկրտիչի

11 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. կնոջմէ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծ մէկը չէ եղած. բայց երկինքի արքայու-
թեան մէջ՝ ամէնէն փոքրը անկէ աւելի մեծ է: **12** Եւ Յովհաննէս
Մկրտիչի օրերէն մինչեւ այսօր, երկինքի արքայութիւնը կը բռնա-
բարուի, եւ զօրաւորները կը յափշտակեն զայն: **13** Որովհետեւ բո-
լոր Մարգարէներն ու Օրէնքը մինչեւ Յովհաննէս մարգարէացան:
14 Եւ եթէ կ'ուզէք ընդունիլ՝ ա՛ն է Եղիան որ պիտի գար: **15** Ո՛վ
որ ականջ ունի յսելու՝ թող յէ:

12 – Խմաստը սա՛ է. երկինքի արքայութիւնը պատերազմով ու բռնութեամբ միայն կարելի է ձեռք բերել: Եւ կամ, ինչպէս կը մեկնէ Ս. Ոսկեբերան, երկինքի արքայութիւնը անոնց միայն կը տրուի, որոնք կը փնտռեն զայն եռանդազին:

Սպառնալիք կարծրասիրտներուն

Ղկ. 7, 34-35

16 Որո՞ւն նմանցնեմ այս սերունդը: Կը նմանի այն մանուկներուն որ հրապարակներու վրայ կը նստին, իրենց ընկերները կը կանչեն եւ կ'ըսեն. **17** «Մենք փող զարկինք ձեզի համար եւ դուք չպարեցիք, մենք ողբացինք եւ դուք չլացիք»:

18 Յովհաննէս եկաւ, որ ո՛չ կ'ուտէր եւ ո՛չ կը խմէր, եւ ըսին՝ դիւահաւը է: **19** Եկաւ Մարգու Որդին, որ կ'ուտէ եւ կը խմէ. եւ կ'ըսեն. «Ահա կերող եւ խմող մարդ մը, մաքսաւորներու եւ մեղաւորներու բարեկամ: Եւ արդարացաւ իմաստութիւնը՝ իր որդիներէն»:

Վայ Անհաւատարիմ Քաղաքներուն

Ղկ 10, 13-15

20 Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները որոնց մէջ կատարուեցան իր հրաշքներէն չատերը, եւ անոնք չապաշխարեցին:

21 «Վա՛յ քեզի, Քորազին, վա՛յ քեզի, Բեղսայիդա, որովհետեւ եթէ Տիւրոսի եւ Սիդոնի մէջ կատարուած ըլլային այն հրաշքները որ ձեր մէջ կատարուեցան՝ անոնք շատոնց արդէն քուրձով եւ մոխիրով ապաշխարած կ'ըլլային: **22** Բայց կ'ըսե՛մ ձեզի. դատաստանի օրը աւելի դիւրին պիտի ըլլայ Տիւրոսի եւ Սիդոնի՝ քան ձեզի համար: **23** Եւ դո՛ւն, Կափառնաու՛մ, մինչեւ երկինք պիտի չբարձրանաս, այլ մինչեւ դժոխք պիտի իջնես. որովհետեւ եթէ Սոդոմի մէջ գործուած ըլլային այն հրաշքները որ քու մէջդ գործուեցան՝ գուցէ ան մինչեւ այսօր կանգուն մնար: **24** Բայց կ'ըսե՛մ ձեզի, Սոդոմացիներու երկրին համար աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան քեզի»:

19 – Յիսուս սովորական մարդոց նման կ'ապրի: Հրեայ ժողովուրդը յամառ ու փմահամ տղոց կը նմանի, որ ներհակը կը գործէ այն բանին՝ ինչ որ պէտք է ընէր (16, 17): Չկայ սրբակեաց ու աստուածահաճոյ անձ մը, որ կարող ըլլայ գոհացնել այդ ժողովուրդը: Եւ սակայն Քրիստոսի քաղցրութեան եւ Յովհաննէս Մկրտիչի խստակրօնութեան վրայ կայացած է նշմարիտ իմաստութիւնը:

**Գոհութիւն երկնաւոր Հօր
(Ղկ 10, 21-22)**

25 Այն ժամանակ Յիսուս սկսաւ ըսել. «Շնորհակալ եմ քեզի, Հայր, Տէր երկիրքի եւ երկրի, որ այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ գիտուններէն եւ յայտնեցիր մանուկներուն:

26 Այո՛, Հայր, որովհետեւ այսպէս հաճոյ եղաւ քեզի: **27** Ամէն ինչ տրուեցաւ ինծի Հօրմէս: Եւ ոչ ոք կը ճանչնայ Որդին՝ եթէ ոչ Հայրը, ոչ ոք կը ճանչնայ Հայրը եթէ ոչ Որդին եւ նա՝ որուն ուզէ Որդին յայտնել:

28 Եկէ՛ք ինծի, դուք բոլոր՝ որ յոգնած ու բեռնաւորուած էք, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: **29** Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ, եւ սորվեցէ՛ք ինծմէ՝ որ հեզ եմ եւ սրտով խոնարհ, ու հանգիստը պիտի գտնէք ձեր հոգիներուն: **30** Որովհետեւ իմ լուծս քաղցր է եւ բեռս՝ թեթեւ»:

Շարաքը եւ փարիսեցիները

Մրկ 2, 23-29. Ղկ 6, 1-5

12 **1** Շաբաթ օր մը, Յիսուս արտերու մէջէն կ'անցնէր. աշակերտները անօթեցած ըլլալով՝ սկսան հասկ փրցնել եւ ուտել: **2** Փարիսեցիները, այս տեսնելով, ըսին անոր. «Նայէ ի՛նչ կ'ընեն աշակերտներդ. բան մը՝ որ թոյլ տրուած չէ շաբաթ օրը ընել»: **3** Յիսուս պատասխանեց. «**Չէ՞ք** կարդացած դուք թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ երբ անօթեցաւ, ինքը եւ իր հետ եղողները: **4** ինչպէ՛ս մտաւ Աստուծոյ տունը եւ կերաւ առաջաւորութեան

25 – Անոնք որ իրենց գիտութեամբ կը գերազանցէին ուրիշները, ինչպէս հրեայ օրէնագէտները, ոչինչ կարողացան հասկնալ Քրիստոսի փարոգութենէն. մինչդեռ ամէն գիտութենէ գուրկ գալիլիացի ձկնորսները պայծառ կերպով կարող եղան ըմբռնել զայն: Այս իրողութիւնը, տարակոյս չկայ թէ եղած է երկնաւոր Հօր մէկ մասնաւոր կարգադրութեամբ:

Գլ. 12, 1 – Աստուածային օրէնքը կը թոյլատրէր նման արարք մը (Բ. Օր 23, 25). իսկ մարդկայինը կամ փարիսեցիականը կ'արգիլէր:

4 – Առաջաւորութեան հացը տասներկու անխմոր հացերն են, որոնք Սրբու-

Հացը, որ թոյլ տրուած չէր ուտել ո՛չ իրեն եւ ո՛չ ալ իր հետեւորդներուն, այլ մի՛այն քահանաներուն: **5** Կամ չէ՞ ք կարդացած Օրէնքին մէջ՝ թէ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ կը պղծեն շաբաթը եւ անմեղ են: **6** Բայց ես կ'ըսեմ ձեզի՝ թէ հոս տաճարէն աւելի մեծ մէկը կայ: **7** Եթէ գիտնայիք թէ ի՛նչ ըսել է «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ո՛չ գոհ», այն ատեն անմեղները չէիք դատապարտեր: **8** Որովհետեւ Մարդու Որդին շաբաթին ալ տէրն է»:

Գօսացած ձեռքը

Մրկ 3, 1-6. Այ 6, 6-11

9 Յիսուս, անկէ մեկնելով՝ եկաւ անոնց ժողովարանը: **10** Հոն մարդ մը կար, որուն ձեռքը դօսացած էր. հարցուցին Յիսուսին թէ օրինաւո՞ր է շաբաթ օրը մէկը բժշկել, որպէսզի չարախօսութիւն ընեն անոր դէմ: **11** Եւ ան պատասխանեց. «Ո՞վ է այն մարդը ձեր մէջ, որ ոչխար մը ունի, որ շաբաթ օրը փոսը կ'իյնայ. զայն պիտի չբռնէ՞ ու դուրս պիտի չհանէ՞»: **12** Արդ, ո՛րչափ աւելի կ'արժէ մարդը քան ոչխարը. ուստի օրինաւոր է շաբաթ օրը բարիք ընել»: **13** Ապա ըսաւ մարդուն. «Երկարէ՛ ձեռքդ». եւ ան երկարեց, եւ ձեռքը առողջ դարձաւ միւսին պէս: **14** Իսկ փարիսեցիները, դուրս ելլելով, անոր դէմ խորհուրդ ըրին թէ ի՛նչպէս մէջտեղէն վերցնեն զինքը:

Յիսուս Տիրոջ Ծառան է

15 Երբ Յիսուս իմացաւ, մեկնեցաւ անկէ. շատ ժողովուրդ

թիւն Սրբութեանցի առջեւ, սեղանի մը վրայ կը կենային, եւ շաբաթն անգամ մը կը նորոգուէին: Այդ հացերը, փահանաները միայն կրնային մաշակել տաճարին մէջ: Արդ, Ս. Գիրքը չի պարսաւեր ո՛չ Դաւիթը, ո՛չ ալ փահանան, կարօտութենէ ստիպուած՝ այդպիսի գործ մը ըրած ըլլալուն համար: Հետեւաբար այս գործն ալ, որ շատ աւելի անմշակալ բան մըն է, միեւնոյն պատճառաւ թոյլ տրուած է:

5 – Փահանաներն ինքնին, սուրբ տեղւոյն մէջ, նոյն իսկ շաբաթ օրերը գոհիք կը գնուն եւ կը պատրաստեն զանոնք: Հետեւաբար շաբաթի օրէնքին խստութիւնն ալ իր բացառութիւնն ունի:

անոր հետեւէն գնաց եւ ամէնքն ալ բժշկեց: **16** Եւ խստիւ պատուիրեց անոնց որ մարդու չյայտնեն ինչ որ ըրած էր, **17** որպէսզի կատարուի Յսայի մարգարէին բերնով ըսուած խօսքը. **18** «Ահա՛ իմ ծառաս զոր ընտրեցի եւ իմ սիրելիս՝ որուն ես հաճեցայ. իմ հոգիս անոր վրայ պիտի դնեմ՝ եւ ան արդարութիւն պիտի փարզէ հեթանոսներուն. **19** ո՛չ պիտի վիճի, ո՛չ պիտի աղաղակէ, եւ անոր ձայնը ո՛չ ոք պիտի լսէ հրապարակներու վրայ: **20** Ձախջախուած եղէգը պիտի չփշրէ, առկայծ պատրոյգը պիտի չմարէ, մինչեւ որ յաղթանակել տայ արդարութեան. **21** եւ հեթանոսները անոր անունի՛ն վրայ պիտի դնեն իրենց յոյսը»:

Կոյր ու համր դիւանաբը

22 Այն ատեն Յիսուսի բերին կոյր ու համր դիւահար մը, եւ ան բժշկեց զայն, այնպէս որ համր ու կոյրը կը խօսէր ու կը տեսնէր: **23** Բոլոր ժողովուրդը զարմացած կ'ըսէր. «Միթէ ա՞յս է Քրիստոսը, Դաւիթի որդին»: **24** Իսկ երբ փարիսեցիները այս լսեցին, ըսին. «Ասիկա դեւերը ուրիշ միջոցով չի հաներ, բայց եթէ Բէեղզեբոուզով՝ դեւերու իշխանին զօրութեամբ»:

25 Յիսուս, իմանալով անոնց միտքը՝ ըսաւ. «Ամէն թագաւորութիւն որ ինքնիր մէջ բաժնուած է՝ կը կործանի, եւ ամէն քաղաք կամ տուն, որ ինքնիր մէջ բաժնուած է՝ կանգուն չի մնար: **26** Եւ եթէ սատանան սատանայ կը հանէ, ինքնիր անձին մէջ բաժնուած է. ուրեմն ի՞նչպէս կրնայ տեւել անոր թագաւորութիւնը: **27** Եւ եթէ ես Բէեղզեբոուզով կը հանեմ, ձեր որդիները ինչպէ՞ս պիտի հանեն զանոնք. անոր համար՝ անո՛նք պիտի ըլլան ձեր դատաւորները: **28** Իսկ եթէ ես Աստուծոյ հոգիով կը հանեմ դեւերը, ուրեմն հասած է ձեր վրայ Աստուծոյ արքայութիւնը:

29 Կամ ի՞նչպէս կրնայ մէկը զօրաւոր մարդու մը տունը մտնել եւ անոր կարասիները յափշտակել՝ եթէ նախ չկապէ զօրաւոր մարդը եւ յետոյ անոր տունը կողոպտէ: **30** Ո՛վ որ ինծի հետ չէ՝ հակառակ է ինծի, ո՛վ որ ինծի հետ չի ժողվեր՝ կը ցրուէ:

Սուրբ Հոգիին դեմ գործուող մեղքը

31 Ասոր համար կ'ըսեմ ձեզի. ամէն մեղք եւ հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի: **32** Եւ ով որ Մարդու Որդիին դէմ խօսք մը ըսէ՝ պիտի ներուի անոր. բայց եթէ Սուրբ Հոգիին դէմ խօսի՝ պիտի չներուի անոր, ո՛չ այս աշխարհիս մէջ ո՛չ ալ հանդերձեալին:

33 Կա՛մ բարի կը համարիք ծառը եւ անոր պտուղը՝ բարի, կա՛մ ծառը չար կը համարիք եւ անոր պտուղն ալ՝ չար. որովհետեւ ծառը իր պտուղէն կը ճանչցուի: **34** Իժերո՛ւ ձագեր, ի՞նչպէս կրնաք բարի խօսիլ, դուք՝ որ չար էք. որովհետեւ սրտի առատութենէ՛ն կը խօսի բերանը: **35** Բարի մարդը բարի բաներ կը հանէ իր սրտին բարի գանձերէն. չար մարդը իր սրտին չար գանձերէն՝ չար բաներ կը հանէ: **36** Բայց կ'ըսեմ ձեզի՝ թէ ամէն դատարկ խօսքի համար զոր կը խօսին մարդիկ, հաշիւ պիտի տան դատաստանին օրը: **37** Որովհետեւ քու խօսքերէ՛դ պիտի արդարանաս եւ քու խօսքերէ՛դ պիտի դատապարտուիս»:

Յովնան մարգարէին նշանը

Մրկ 8, 11-12. Ղկ 11, 29-32

38 Այն ատեն, դպիրներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին. «Վարդապե՛տ, կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել»: **39** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Չար եւ շնացող ազգը նշան կ'ուզէ եւ ուրիշ նշան պիտի չտրուի անոր՝ բայց միայն Յովնան մարգարէին նշա-

31 – Կուրուքիւնն ու Յիսուսի անձին դեմ անհաշտ ատելութիւնը մինչեւ իսկ Ս. Հոգիին դեմ մեղանշելու առաջնորդեց փարիսեցիները: Այս մեղքը կը կայանայ յամառօրէն Աստուծոյ ընդդիմանալու վրայ: Այս վիճակին մէջ յարատեւող՝ չի կրնար ընդունիլ մեղքերու թողութիւն: Սակայն Աստուած ամենաբարի չի զլանար այլուստ բաւականաչափ շնորհի տալ այնպիսիին, որպէս զի դարձի գայ եւ ապաշխարէ: Մարդ ցորչափ կ'ապրի, իրաւունք չունի բնաւ յուսահատելու, որովհետեւ Աստուծոյ անսահման ողորմութիւնը չ'ուզեր մահը մեղաւորին, այլ անոր դարձն ու փրկութիւնը:

32 – Այս տեղիքէն կը հետեւի քաւարանի գոյութիւնը, բայց նաեւ դժոխքի պատիժներուն յաւիտեականութիւնը:

նը. **40** որովհետեւ, ինչպէս Յովնան կէտին փորը մնաց երեք օր եւ երեք գիշեր, այնպէս ալ Մարդու Որդին պիտի մնայ երկրին սիրտը՝ երեք օր եւ երեք գիշեր: **41** Նինուէացիները դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն զայն, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին, եւ սակայն Յովնանէն աւելի մեծը կայ հոս: **42** Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլէ եւ պիտի դատապարտէ զայն, որովհետեւ երկրի ծայրերէն եկաւ ան՝ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. եւ սակայն Սողոմոնէն աւելի մեծը կայ հոս:

Պիղծ ոգիները

43 Բայց երբ պիղծ ոգին մարդէ մը ելլէ՝ անջրդի տեղեր կը շրջի, հանգիստ կը փնտռէ ու չի գտներ. **44** այն ատեն կ'ըսէ. Դառնամ իմ տունս ուրկէ ելայ, եւ կուգայ կը գտնէ զայն պարապ, աւլուած եւ զարդարուած: **45** Այն ատեն կ'երթայ եւ իր հետ կ'առնէ ուրիշ եօթը դեւեր, իրմէ աւելի չար, եւ մտնելով՝ կը բնակի հոն. ու այն մարդուն վերջին վիճակը առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ: Այսպէս ալ պիտի ըլլայ այս չար ազգին համար:

Յիսուսի շշմախտ Ազգականները

46 Մինչդեռ ժողովուրդին կը խօսէր, ահա մայրն ու եղբայրները, դուրսը կեցած՝ կ'ուզէին իրեն հետ խօսիլ: **47** Մէկը ըսաւ անոր. «Ահա մայրդ ու եղբայրներդ դուրսը կեցած են եւ կ'ուզեն քեզի հետ խօսիլ»: **48** Յիսուս պատասխանեց իրեն հետ խօսողին եւ ըսաւ. «Ո՞վ է իմ մայրս կամ որո՞նք են իմ եղբայրներս»: **49** Եւ ձեռ-

46 – Յիսուսի «եղբայրները» իր հարազատ եղբայրները չէին, այլ՝ հօրեղբոր որդիները: Հին Կտակարանին մէջ արդէն մեքսիկական ազգական մը եղբայր կը կոչուէր: Հրեաները ընտանիքի բոլոր անդամները ընդարձակ առումով եղբայր ու քույր կ'անուանէին: Յիսուսի եղբայր կոչուածներու անուններն են՝ Յակոբոս, Սիմոն (Մտք 13, 55. Մրկ 6, 3): Իբր հայր Յակոբոսի եւ իր երեք եղբայրներուն, Նոր Կտակարանի մէջ կը յիշատակուի Ալփէոս անուն անձ մը (Մտք 10, 3. Մրկ 3, 18. Դուկ 6, 15), եւ իբր մայր՝ Մարիամ, Աստուածամօր մէկ «քոյրը» (ազգականը), (Հմմտ Մտք 27, 56. Մրկ 15, 40, 47. Յովհ 19, 25):

քը աշակերտներուն երկարելով, ըսաւ. «Ահա՛ւասիկ իմ մայրս եւ եղբայրներս»։ **50** որովհետեւ ով որ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ, ա՛ն է իմ եղբայրս, քոյրս եւ մայրս»։

Սերմնացանին առակը

Մրկ 4, 3-9. Ղկ 8, 5-8

13 **1** Այդ օրը, Յիսուս, տունէն ելլելով՝ ծովեզերքը նստաւ. **2** եւ չուրջը ա՛յնքան ժողովուրդ հաւաքուեցաւ՝ որ նաւակ մտաւ ու նստաւ, մինչ ամբողջ ժողովուրդը ծովեզերք կեցած էր։ **3** Շատ բաներ առականերով խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ահա սերմնացանը ելաւ սերմանելու համար, **4** եւ ցանելու ատեն, մաս մը ինկաւ ճամբուն վրայ, եւ երկինքի թռչունները եկան ու կերան։ **5** Ուրիշ մաս մը ինկաւ ժայռոտ տեղ մը, ուր շատ հող չկար, **6** եւ չուտով բուսաւ, բայց երբ արեւը ծագեցաւ՝ սաստիկ տաքէն այրեցաւ, եւ քանի արմատ չունէր՝ չորցաւ։ **7** Ուրիշ մաս մըն ալ փուշերու մէջ ինկաւ, եւ փուշերը ելան ու խեղդեցին զայն։ **8** Իսկ ուրիշ մըն ալ՝ լաւ հողի մէջ ինկաւ ու պտուղ տուաւ. մէկի տեղ՝ հարիւրաւոր, մէկի տեղ՝ վաթսուսաւոր եւ մէկի տեղ՝ երեսնաւոր։ **9** Ով որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»։

Ինչու Յիսուս Առանցքով Կը Խօսի

10 Աշակերտները, մօտենալով անոր՝ ըսին. «Ինչո՞ւ առականերով կը խօսիս անոնց հետ»։ **11** Յիսուս պատասխանեց. «Որովհետեւ ձեզի՛ տրուած է գիտնալ երկինքի արքայութեան խորհուրդները, իսկ անոնց՝ չէ՛ տրուած։ **12** Որովհետեւ ունեցողին պիտի

Գլ. 13, 1 – Առակը պատկերաւոր պատմութիւն մըն է, որուն նպատակն է՝ սովորական կեանքէ վերցուած դէպքէ մը, բարձրագոյն կարգի բան մը դիւրահասկնալի կերպով բացատրել։ Այս կերպ սորվեցնելու եղանակը շատ սովորական էր Արեւելի մէջ։

11 – Այն վարդապետութիւնները, զորս մարդը իր մտքին բնական լոյսովը չի կրնար գիտնալ, այլ Աստուծոյ յայտնութենէն իմացած է գտնուի, եւ որոնց հաւատալ անհնար է առանց Աստուծոյ օգնութեան։

12 – Բարի կամք ունեցողը դիւրաւ կը ստանայ Աստուծով շնորհքներու առա-

տրուհի առատորէն, իսկ չուներցողէն՝ ունեցածն ալ պիտի առնուի: **13** Անոր համար առականերով կը խօսիմ անոնց հետ, որովհետեւ անոնք, տեսներով հանդերձ՝ չեն տեսներ, եւ լսելով հանդերձ՝ չեն լսեր եւ չեն հասկնար: **14** Եւ անոնց մէջ կը կատարուի Եսայիի մարգարէութիւնը, որ կ'ըսէ. Լսելով պիտի լսէք եւ պիտի չիմանաք, եւ տեսներով պիտի տեսնէք ու պիտի չտեսնէք: **15** որովհետեւ այս ժողովուրդին սիրտը քանձաքցած է եւ իրենց ականջները ծանր կը լսեն եւ աչքերը փակուած են, որպէսզի երբեք չտեսնեն իրենց աչքով եւ չլսեն իրենց ականջով եւ չիմանան իրենց սրտով ու դարձի գան եւս բժշկեմ գանոնք:

16 Բայց երանի՜ ձեր աչքերուն՝ որ կը տեսնեն, եւ ականջներուն՝ որ կը լսեն: **17** Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի. չա՛տ մը մարգարէներ եւ արդարներ փափաքեցան տեսնել ինչ որ դուք կը տեսնէք, եւ չտեսան, **18** եւ լսել ինչ որ դուք կը լսէք, եւ չլսեցին:

Սեբմանդին Առակին քացատրութիւնը

Մրկ 4, 13-20. Ղկ 8, 11-15

Եւ հիմա, լսեցէք սերմնացանին առակը. **19** երբ մէկը արքայու-թեան խօսքը կը լսէ առանց հասկնալու՝ կու գայ չարը եւ կը յափըշտակէ անոր սրտին մէջ ցանուածը. ա՛յս է ճամբուն վրայ ինկածը: **20** Իսկ քարոտ տեղը ինկածը ա՛ն է՝ որ երբ կը լսէ խօսքը, իսկոյն ուրախութեամբ կ'ընդունի. **21** բայց որովհետեւ արմատ չունի իր մէջը, քիչ ժամանակ կը տեւէ. երբ նեղութիւն եւ հալածանքներ ըլլան խօսքին համար՝ իսկոյն կը գայթակղի: **22** Իսկ փուշերուն մէջ ինկածը ա՛ն է՝ որ երբ կը լսէ խօսքը, աշխարհի հոգերը եւ հարըստութեան պատրանքները կը խեղդեն խօսքը եւ ան անպտուղ կը մնայ: **23** Իսկ լաւ հողի մէջ ցանուածը ա՛ն է՝ որ երբ կը լսէ խօսքը, կը հասկնայ եւ պտուղ կու տայ, մէկի տեղ հարիւր, մէկի տեղ վաթսուոն, մէկի տեղ երեսուն»:

տութիւն ու մտքի լուսաւորութիւն՝ երկնային խորհուրդներու աւելի եւս խելամուտ ըլլալու: Ասոր հակառակ, բարի կամք չունեցողը՝ բարձրագոյն բաներու վրայ իր ունեցած քիչ մը ծանօթութիւնն ալ դիրքաւ կը կորսնցնէ:

Որոմներու առակը

24 Ուրիշ առակ մըն ալ պատմեց անոնց եւ ըսաւ. «Երկինքի արքայութիւնը նման է մարդու մը, որ լաւ սերմ ցանեց իր արտին մէջ: **25** Եւ մարդոց քնացած ատեն՝ թշնամին եկաւ, ցորենին վրայ որոմ ցանեց ու գնաց: **26** Երբ խոտը բուսաւ եւ պտուղ տուաւ, այն ատեն որոմն ալ երեւցաւ: **27** Տանտիրոջ ծառաները, մօտենալով իրեն, ըսին. Տէ՛ր, դուն լաւ սերմ ցցանեցի՞ր արտիդ մէջ. ուրեմն ուրկէ՞ բուսաւ այս որոմը: **28** Տէ՛րը ըսաւ անոնց. Թշնամի մը ըրած է ատիկա: Ծառաները հարցուցին. Կ'ուզե՞ս որ երթանք քաղենք: **29** Ո՛չ, պատասխանեց տէրը, գուցէ որոմը քաղելու ատեն՝ ցորենն ալ հետը հանէք: **30** Թողէ՛ք որ երկուքը միասին աճին մինչեւ հունձք, եւ հունձքի ժամանակ հնձողներուն կ'ըսեմ. Նախ որոմը քաղեցէք եւ խուրձեր կապեցէք այրելու համար, իսկ ցորենը շտեմարանիս մէջ ժողվեցէք»:

Մանանիսի հատիկը եւ խմորը

(Մրկ 4, 30-32. Ղկ 13, 18-19)

31 Ուրիշ առակ մըն ալ պատմեց անոնց եւ ըսաւ. «Երկինքի արքայութիւնը կը նմանի մանանիսի հատիկին, զոր մարդ մը առաւ եւ իր արտին մէջ ցանեց. **32** անիկա բոլոր սերմերէն փոքր է, եւ երբ աճի՝ բոլոր տունկերէն աւելի մեծ է ու ծառ կը դառնայ, այնպէս որ երկինքի թռչունները կուգան կը թառին անոր ճիւղերուն վրայ»:

Ղկ 13, 20-21

33 Ուրիշ առակ մըն ալ պատմեց անոնց եւ ըսաւ. «Երկինքի արքայութիւնը կը նմանի թթխմորի՝ զոր կ'ին մը, առնելով, երեք գրիւ ալիւրի մէջ խառնեց մինչեւ որ ամբողջը խմորուեցաւ»:

31 – Մանանիսի հատիկին մամուռութեամբը Քրիստոս մեր առջեւ կը պատկերացնէ Աստուծոյ թագաւորութեան ծաւալումը երկրի վրայ, անոր աննշմարելի ծագումէն սկսելով, մինչեւ անոր համապարփակ մեծութիւնը:

33 – Թթխմորի մամուռութեամբը, Քրիստոս կ'ուզէ բացատրել մեզի Աստուծոյ թագաւորութեան յատուկ այն ներքին գորութիւնը, որ կարող է աշխարհը կերպարամափոխել:

34 Յիսուս այս բոլորը առականերով խօսեցաւ ժողովուրդին, եւ առանց առակի բան մը չէր խօսէր անոնց. 35 որպէսզի կատարուի մարգարէին բերնով ըստած խօսքը. «Առականերով պիտի բանամ բերանս, եւ աշխարհի սկիզբէն ծածկուածները պիտի յայտնեմ»:

Մեկնութիւն որոմներու առակին

36 Այն ատեն Յիսուս, ժողովուրդը արձակելով, տուն դարձաւ. աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին. «Քացատրէ՛ մեզի արտի որոմներուն առակը»: 37 Յիսուս պատասխանեց անոնց եւ ըսաւ. «Լաւ սերմ ցանողը՝ Մարգու Որդին է. 38 արտը՝ աշխարհս է, եւ լաւ սերմերը՝ արքայութեան որդիներն են, իսկ որոմն ալ չարին որդիներն են. 39 թշնամին որ ցանեց որոմը՝ սատանան է, եւ հունձքը՝ աշխարհիս վերջն է, հնձողներն ալ հրեշտակներն են:

40 Ուստի, ինչպէս որոմը կը ժողվեն ու կրակի մէջ կ'այրեն, ա'յնպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը. 41 Մարգու Որդին պիտի դրկէ իր հրեշտակները, որ իր թագաւորութեան մէջէն պիտի ժողվեն բոլոր գայթակղութիւնները եւ անօրէնութիւն գործողները, 42 ու պիտի նետեն զանոնք կրակի հնոցին մէջ, ուր պիտի ըլլայ լաց եւ ակռաներու կրճտում: 43 Այն ատեն, արդարները պիտի փայլին արեգակի նման իրենց Հօր արքայութեան մէջ. ո՛վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ:

Գանձը, մարգարիտը եւ ուռկանը

44 Դարձեալ երկինքի արքայութիւնը նման է ագարակին մէջ թաղուած գանձին՝ զոր մարդ մը, գտնելով՝ կը ծածկէ եւ ուրախութենէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ եւ կը գնէ այդ ագարակը:

36 – Որոմներուն առակը կը սորվեցնէ թէ Եկեղեցւոյ ծոցին մէջ թէ՛ բարիներ եւ թէ՛ չարեր կը գտնուին, եւ թէ աշխարհի կատարածին է որ տեղի պիտի ունենայ վերջնական բաժանումը:

41 – Իրենց չար օրինակով՝ ուրիշներու մեղանչելուն պատճառ եղողները:

43 – Նոյնը՝ Հօր թագաւորութեան մէջ:

44, 45 – Արտի մէջ թաղուած գանձին, ինչպէս նաեւ ստորեւ՝ մարգարիտի

45 Դարձեալ երկինքի արքայութիւնը նման է վաճառականին որ գեղեցիկ մարդարիտներ կը փնտռէ. **46** եւ գտնելով թանկագին մարդարիտ մը՝ կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ եւ կը գնէ այդ մարդարիտը:

47 Դարձեալ երկինքի արքայութիւնը նման է ծով ձգուած ուռկանին, որ ամէն տեսակ ձուկեր կը բռնէ. **48** ու երբ ատրկա լեցւի՝ ցամաք կը հանեն զայն, եւ նստած՝ լաւերը ամանի մէջ կը դնեն եւ գէշերը դուրս կը նետեն: **49** Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը: Հրեշտակները պիտի ելլեն ու հարերը արդարներէն պիտի զատեն, **50** եւ զանոնք կրակի հնոցին մէջ պիտի նետեն, ուր պիտի ըլլայ լաց եւ ակռաներու կրճտում»:

51 Յիսուս հարցուց անոնց. «Հասկցա՞ք այս բոլորը»: «Այո՛, Տէր», պատասխանեցին: **52** Յիսուս ակեցուց. «Այս պատճառով, ամէն դպիր որ երկինքի արքայութեան կ'աշակերտի՝ կը նմանի այն տանտիրոջ որ իր գանձէն կը հանէ նորն ու հինը»:

Յիսուս Նագաբէթի մէջ

Մրկ 6, 1-6. Ղկ 4, 16-24

53 Երբ Յիսուս վերջացուց այս առակները, մեկնեցաւ անկէ: **54** Եւ գալով իր հայրենիքը, կը սորվեցնէր անոնց ժողովարանին մէջ, այնպէս որ անոնք զարմացած կ'ըսէին. «Ուսկի՞ց է ասոր այս իմաստութիւնը եւ կարողութիւնը: **55** Ասիկա հիւսնին որդին չէ՞. ասոր մօր անունը Մարիամ չէ՞, եւ ասոր եղբայրները չե՞ն Յակոբոսը, Յովսէփը, Սիմոնը եւ Յուդան. **56** ասոր բոլոր քոյրերը մեր

առակները կը մատնանշեն երկինքի թագաւորութեան անգին գանձերն ու բարիքները, զորս ստանալու համար ի՛նչ որ ալ տանք քիչ է:

47 – Զուկներու որսին առակը կը սորվեցնէ մեզի թէ արդարներու եւ մեղաւորներու վերջնական անջատումը տեղի պիտի ունենայ աշխարհի կատարածին:

52 – Այսինքն՝ երկինքի թագաւորութեան հայոց իրերն ու հմուտ է ու տեղեկ:

55 – Յոյն ձեռագիրներէն ումանք Յովսէս անունը Յովսէփի կը կարդան: Այստեղ յիշատակուած Քրիստոսի ազգականներու մասին տե՛ս Մտք 12, 46 ծանոթութիւնը:

քով չե՞ն. ուրեմն ուրկէ՞ անիկա ստացեր է այս բոլորը»: **57** Եւ կը գայլթակղէին անոր վրան: Յիսուս ըսաւ անոնց. «Մարգարէ մը չ'անարգուիր եթէ ոչ՝ իր հայրենիքին եւ իր տան մէջ»: **58** Եւ շատ հրաշքներ չկատարեց հոն՝ անոնց անհաւատութեան պատճառով:

Յովհաննէս Մկրտիչին գլխատումը

Մրկ 6, 17-29. Ղկ 3, 18-20

14 **1** Այն ատեն Հերովդէս չորրորդապետը, լսելով Յիսուսի համբաւը՝ իր ծառաներուն ըսաւ. **2** «Յովհաննէս Մկրտիչն է ասիկա, մեռելներէն յարութիւն առած է ու անոր համար հրաշքներ կ'ըլլան իր ձեռքով»:

3 Որովհետեւ Հերովդէս ձերբակալած էր Յովհաննէսը, կապած եւ բանտ դրած էր զայն՝ Հերովդիայի պատճառով, որ իր եղբօր՝ Փիլիպպոսի կինն էր: **4** Որովհետեւ Յովհաննէս Հերովդէսին կ'ըսէր. «Օրինաւոր չէ՝ որ քեզի կին առնես զայն»: **5** Եւ Հերովդէս կ'ուզէր սպաննել Յովհաննէսը, բայց կը վախնար ժողովուրդէն, որովհետեւ մարգարէ կը նկատէին զանիկա: **6** Ու երբ Հերովդէսի ծննդեան տարելիցը եղաւ, Հերովդիայի աղջիկը պարեց հանդիսականներուն առջեւ. եւ հաճելի անցաւ Հերովդէսին. **7** ուստի երդումով խոստացաւ տալ անոր՝ ինչ որ ինդրէր. **8** իսկ աղջիկը, նախապէս խրատուած մօրմէն՝ ըսաւ. «Տո՛ւր ինծի, հո՛ս, ամսէի մը վրայ, Յովհաննէս Մկրտիչին գլուխը»: **9** Թագաւորը տխրեցաւ. սակայն ըրած երդումին եւ սեղանակիցներուն պատճառով՝ հրամայեց որ տրուի: **10** Եւ զրկեց գլխատել տուաւ Յովհաննէսը բանտին մէջ. **11** եւ գլուխը ամսէով բերուեցաւ ու տրուեցաւ աղջկան. ան ալ իր մօրը տարաւ: **12** Յովհաննէսի աշակերտները գացին վերցուցին մարմինը եւ թաղեցին, եւ եկան պատմեցին Յիսուսի:

Հարցերու առաջին քաղմացումը

Մրկ 6, 31-44. Ղկ 9, 10-17

13 Երբ Յիսուս լսեց՝ մեկնեցաւ անկէ նաւակով դէպի ամայի տեղ մը, առանձին: Երբ ժողովուրդը իմացաւ, քաղաքներէն հետի-

ոտն անոր ետեւէն գնաց: **14** Երբ ան նաւակէն դուրս ելաւ, տեսաւ ժողովուրդին բազմութիւնը, զթաց անոնց վրայ եւ բժշկեց անոնց հիւանդները: **15** Իրիկուան դէմ, աշակերտները մօտեցան եւ ըսին. «Այս տեղը անապատ է, ժամն ալ յառաջացած. արձակէ՛ ժողովուրդը, որպէս զի չըջակայ գիւղերը երթան ու իրենց կերակուր գնեն»: **16** Յիսուս ըսաւ. «Հարկ չկայ որ անոնք երթան, դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: **17** Անոնք պատասխանեցին. «Մեր քով ուրիշ բան չունինք բաց միայն հինգ հաց եւ երկու ձուկ»: **18** Յիսուս ըսաւ. «Հո՛ւս ինծի բերէք զանոնք»: **19** Եւ հրամայեց որ ժողովուրդը խոտին վրայ բազմեցնեն. եւ առնելով հինգ հացերը եւ երկու ձուկերը՝ երկինք նայեցաւ, օրհնեց եւ հացերը աշակերտներուն տուաւ, աշակերտներն ալ ժողովուրդին: **20** Ամէնքը կերան ու կշտացան, եւ աւելցած կտորներով տասներկու սակառ լեցուն տարին: **21** Եւ կերողները չուրջ հինգ հազար հոգի էին, առանց հաշուելու կիներն ու մանուկները:

Յիսուս ծովուն վրայ կը քալէ

Մրկ 6, 45-52. Յովհ 6, 16-21

22 Եւ իսկոյն ստիպեց աշակերտները որ նաւակ մտնեն եւ իրմէ առաջ դիմացի կողմն անցնին, մինչեւ որ ինքը ժողովուրդը արձակէ: **23** Ժողովուրդը արձակելէ ետք՝ լեռ ելաւ առանձին, աղօթելու համար: Եւ երբ իրիկուն եղաւ՝ ինքը հոն էր մինակը: **24** Իսկ նաւակը, ցամաքէն մղոններով հեռացած՝ ալեկոծութեան բռնուած էր, որովհետեւ հովը հակառակ էր: **25** Գիշերուան չորրորդ պահուն, Յիսուս ծովուն վրայէն քայելով, անոնց քով եկաւ: **26** Աշակերտները, տեսնելով որ ծովուն վրայէն կը քայլէ՝ սարսափեցան եւ ըսին թէ ուրուական մըն է, ու վախէ տարուած, աղաղակ բարձրացուցին: **27** Իսկ Յիսուս անմիջապէս խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Քա՛ջ եղէք, ե՛ս եմ, մի՛ վախնաք»: **28** Պետրոս պատաս-

Գլ. 14, 23 – Քրիստոս միշտ միացած էր իր երկնաւոր Հօր հետ, եւ սակայն շատ յաճախ կը տեսնեմք, որ ան որոշ ժամեր կ'ընտրէր աղօթքի նուիրուելու, որպէս զի սորվեցնէ մեզի թէ աղօթքը քրիստոնեայիմ առաջին ու գլխաւոր պարտքն է: Քրիստոս կ'աղօթէր նմանապէս ամէն կարեւոր գործէ առաջ:

խանեց. «Տէ՛ր, եթէ դուն ես՝ հրաման տուր ինծի որ ջուրերու վրայէն քեզի գամ»։ **29** «Եկո՛ւր», պատասխանեց Յիսուս։ Պետրոս, նաւակէն իջնելով՝ ջուրերու վրայէն քալեց դէպի Յիսուս։ **30** Բայց տեսնելով սաստիկ հովը, վախցաւ, ու երբ սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեց եւ ըսաւ. «Տէ՛ր, փրկէ՛ զիս»։ **31** Յիսուս իսկոյն ձեռքը երկարելով, բռնեց եւ ըսաւ. «Թերահաւատ, ինչո՞ւ տարակուսեցար»։ **32** Եւ երբ նաւակ ելան՝ հովը դադրեցաւ։ **33** Նաւակին մէջ եղողները մօտեցան, երկրպագութիւն ըրին անոր եւ ըսին. «Արդարեւ դուն Աստուծոյ Որդի՛ն ես»։

Յիսուս Գալիլեա կը դառնայ

34 Եւ ծովն անցնելով ցամաք ելան Գեննեսարեթ։ **35** այն տեղի բնակիչները գինքը ճանչնալով՝ մարդ զրկեցին ամբողջ գաւառին մէջ եւ բոլոր հիւանդները անոր բերին։ **36** Եւ կ'աղաչէին որ գոնէ զգեստին քղանցքին միայն դպչին. եւ անոնք որ դպան՝ բժշկուեցան։

Մոլեռանդ աւանդութիւնը

15 **1** Այն ատեն, Յիսուսի մօտեցան Երուսաղէմէն եկած փարիսեցիներ ու դպիրներ. եւ ըսին. **2** «Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերու աւանդութիւնը չեն պահեր, քանի որ առանց իրենց ձեռքերը լուալու հաց կ'ուտեն»։ **3** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Իսկ դուք, ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանը չէք պահեր ձեր աւանդութեան պատճառով։ **4** Որովհետեւ Աստուած ըսած է. Հայրդ ու մայրդ պատուէ, եւ ով որ հայրը կամ մայրը բամբասէ՝ մահով թող պատժուի։ **5** Իսկ դուք կ'ըսէք՝ Թէ՛ ո՛վ որ իր հօրը կամ մօրը ըսէ - Այն բանը որով կրնայի քեզի օգնել՝ ընծայ եղած է - այնպիսին հօրն ու մօրը օգնելու պարտքէն ազատ է։

6 Եւ այսպէս կ'արհամարհէք Աստուծոյ խօսքը, ձեր աւանդու-

Գլ. 15, 6 – Քրիստոս՝ փարիսեցիներու կեղծ բարեպաշտութիւնը խայտառակելու համար, անոնց երեսը կը զարնէ ծնողասիրութեան աստուածային պատւիրանին մասին իրենց մոլոր վարդապետութիւնը, որու համաձայն՝ չորրորդ

թիւնը պահելու համար: **7** Կեղծաւորներ, լա՛ւ մարգարէացաւ ձեր մասին Նասայի՛ ըսելով: **8** «Այս ժողովուրդը շրթունքով կը պատուէ զիս եւ իրենց սիրտը բոլորովին հեռու է ինծմէ: **9** Գուր տեղ կը պաշտեն զիս, մարդոցմէ պատուիրուած վարդապետութիւններ ստրկեցնելով»:

Մարդուն սրտէն կը ծնին չար խորհուրդները

10 Եւ ժողովուրդը իր մօտ կանչելով՝ ըսաւ անոնց. «Լսեցէ՛ք եւ իմացէ՛ք. բերնէն մտածը չէ՛ որ կը պղծէ մարդը, **11** այլ ինչ որ բերնէն կ'ելլէ՝ անիկա՛ կը պղծէ մարդը»: **12** Այն ատեն աշակերտները մօտենալով ըսին անոր. «Գիտե՞ս որ փարիսեցիները գայթակղեցան՝ երբ լսեցին այս խօսքը»: **13** Յիսուս պատասխանեց. «Այն ամէն տունկ զոր երկնաւոր Հայրս չէ տնկած՝ արմատախիլ պիտի ըլլայ: **14** Թողէ՛ք զանոնք. երբ կոյրը կ'առաջնորդէ՝ կը սխալի, եւ երկուքն ալ խորխորատ կ'իյնան»:

15 Պետրոս, խօսք առնելով, ըսաւ. «Բացատրէ՛ մեզի այս առակը»: **16** Յիսուս պատասխանեց. «Դո՛ւք ալ տակաւին անմիտ էք: **17** չէ՞ք հասկնար թէ ինչ որ կը մտնէ բերանը՝ փորը կ'երթայ եւ դուրս կ'ելլէ: **18** Իսկ ինչ որ բերնէն կ'ելլէ՝ սրտէն կու գայ, եւ ա՛յդ է որ կը պղծէ մարդը: **19** Որովհետեւ սրտէն կ'ելլեն չար խորհուրդները, սպանութիւնները, չնութիւնները, պոռնկութիւնները, գողութիւնները, սուտ վկայութիւնները, հայհոյութիւնները: **20** ասո՛նք են որ կը պղծեն մարդը, բայց անլուայ ձեռքերով ուտելը չի պղծեր մարդը»:

պատուիրանին պարտաւորութենէն ազատ կ'ըլլայ այն անձը, որ իր ծնողքին պարտական եղած նիւթական օգնութիւնը իբր պատարագ (կորբան) նուիրած կ'ըլլայ. հոգ չէ թէ անով իր ծնողը իյնան թշուառութեան մէջ: Որովհետեւ կ'ըսէին անոնք, թէ ուխտը աւելի խստիւ կը պարտաւորէ մէկը՝ քան Աստուծոյ չորրորդ պատուիրանը: Մինչդեռ օրէնքը մահուան պատիժով կը հրամայէր օգնել ծնողքին եւ անոնց ապրուստը հոգալ:

11 – Կերականը չէ՛ որ կը պղծէ մարդը, այլ անհնազանդութիւնը օրէնքի դէմ: Այս է ահա որ սիրտէն յառաջ կու գայ: Սակայն մարդ կերակրով ալ կրնայ ինքզինքն պղծել, եթէ ուտելու խմելու անկարգ փափաքով, կամ օրէնքը արհամարհելով եւ ռտնակոյի ընելով՝ արգիլուած կերակուրէն ուտէ:

20 – Աստուծոյ առջեւ մարդը անմաքուր ընողը՝ մեղքն է, որ մարդուս սրտին մէջ է, եւ հիմնուած է ծանօթութեան ու կամքի վրայ:

Քանանացի կինը

Մրկ 7, 24-30

21 Յիսուս, այդ տեղէն ելլելով, գնաց Տիւրոսի եւ Սիդոնի կողմերը: **22** Եւ ահա քանանացի կին մը, այն սահմաններէն եկած, կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, Դաւիթի Որդի, աղջիկս չարաչար կը տանջուի դեւէն»: **23** Յիսուս չպատասխանեց անոր: Աշակերտները, մօտենալով անոր, կ'աղաչէին ու կ'ըսէին. «Ճամբէ՛ ատիկա, որովհետեւ մեր ետեւէն կը պոռայ»: **24** Յիսուս պատասխանեց. «Ես Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն համար միայն զրկուած եմ»: **25** Բայց կինը, մօտենալով երկրպագութիւն կ'ընէ ու կ'ըսէ. «Տէ՛ր, օգնէ՛ ինծի»: **26** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Լաւ չէ տղաներուն հացն առնել եւ շուններուն նետել»: **27** «Այո՛, Տէր, ըսաւ կինը, սակայն շուններն ալ իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքները կ'ուտեն»: **28** Այն ատեն Յիսուս պատասխանեց անոր եւ ըսաւ. «Ո՛վ կին, մե՛ծ է հաւատքդ, ուզածիդ պէս թող ըլլայ»: Եւ նոյն ժամուն բժշկուեցաւ անոր աղջիկը:

29 Յիսուս, մեկնելով այն տեղէն, Գալիլեայի ծովեզերքը եկաւ. եւ լեռ ելլելով՝ նստաւ հոն: **30** Իրեն մօտեցաւ ամբողջը, որ հետն ունէր կաղեր, կոյրեր, համբեր, հաշմանդամներ եւ ուրիշ շատեր. Յիսուսի ոտքին առջեւ ձգեցին զանոնք եւ ան բժշկեց զանոնք: **31** Այնպէս որ ժողովուրդը զարմացած մնաց, տեսնելով որ համբեր կը խօսին, կաղերը կը քալեն, հաշմանդամները կը բժշկուին, կոյրերը կը տեսնեն. ու կը փառաւորէր Իսրայէլի Աստուածը:

26 – Փրկիչը իր այս խօսքովը կ'արտայայտուի Հրեաներու բացատրութեան համաձայն: Հրեաները իրենք գիրքեմք Աստուծոյ գաւակ կ'անուանէին, իսկ հեթանոսներու՝ անարգական շուն անունը կու տային: Այս խօսքը կարծուածին չափ ալ խիստ չէ՛ ըստ իմեան, նկատի առնելով, որ կինը գիտէր քէ ինք հեթանոս էր: Արդ, զայդ շեշտելու համար անոր, Յիսուս կը կիրարկէ, նոյն ատեն շատ սովորական ու առակի կարգն անցած՝ զրոյց մը. սակայն այնպիսի քաղցր ձայնով ու դէմքով, որ անիկ սրտին բարութիւնն էր որ ի յայտ կու գար՝ քան ո՛րեւէ յանդիմանութիւն, ինչպէս հետագայ տողերէն ալ կը տեսնուի:

Հացերու երկրորդ հրաշքը

Մրկ 8, 1-10

32 Յիսուս, իր մօտ կանչելով աշակերտները, ըսաւ. «Կը գլթամ այս ժողովուրդին վրայ, որովհետեւ երեք օր է որ մօտս են եւ ուտելիք չունին, եւ չեմ ուզեր զանոնք անօթի արձակել, գուցէ ճամբան ուժասպառ ըլլան»։ **33** Աշակերտները ըսին. «Բայց այս անապատին մէջ ուրկէ՞ պիտի գտնենք այնչափ հաց որ կարենանք այդքան բազմութիւն կշտացնել»։ **34** Յիսուս հարցուց. «Քանի՞ հաց ունիք»։ **35** «Եօթը, պատասխանեցին, եւ քանի մը ձուկ»։ **36** Եւ հրամայեց ժողովուրդին որ գետին նստին. եւ առնելով եօթը հացերը եւ ձուկերը՝ գոհուցնելու տուաւ, մանրեց եւ տուաւ աշակերտներուն. անոնք ալ ժողովուրդին։ **37** Ամէնքը կերան եւ կշտացան. եւ աւելցած կտորներով եօթը զամբիւղ լեցուն տարին։ **38** Իսկ կերողները շուրջ չորս հազար հոգի էին, առանց հաշուելու կիներն ու մանուկները։ **39** Յիսուս, ժողովուրդը արձակելով, նաւակ մտաւ եւ Մագդաղիայի սահմանները եկաւ։

Փարիսեցիները նշան կը խնդրեն

Մրկ 8, 11-13 – Ղկ 11, 16-29

16 **1** Փարիսեցիները եւ սադուկեցիները մօտեցան Յիսուսին, եւ զայն փորձելով, խնդրեցին որ երկինքէն նշան մը ցուցնէ իրենց։ **2** Ան պատասխանեց անոնց. «Իրիկունը՝ կ'ըսէք թէ լաւ օդ պիտի ըլլայ, որովհետեւ երկինքը կարմրած է. **3** իսկ առտուն՝ այսօր փոթորիկ պիտի ըլլայ, որովհետեւ երկինքը մութ ու շառագունած է։ Արդ, դուք որ երկինքի երեսը գիտէք քննել, ժամանակիս նշանները չէ՞ք կրնար գիտնալ։ **4** Չար եւ շնացող ազգը նշան կ'ուզէ, եւ ուրիշ նշան պիտի չտրուի անոր՝ բացի Յովնան մարգարէի նշանէն»։ Եւ զանոնք թողուց ու գնաց։

Պ. 16,3 – Արտաքին երեւոյթներէ կարող էի հետեւցնել օդին ինչպէս ըլլալի-
 ք. իսկ իմ գործած հրաշքներս ի գուր կը մատնանշեն ձեզի իմ այցելութեանս
 ժամանակը, թէպէտ եւ անոնց իմաստը կանխապէս ծանուցուած էր արդէն մար-
 ցարէներու բերնով։

Սաղուկեցի եւ փարիսեցի աղանդները

Մրկ 8, 14-21

5 Աչակերտներն ալ լճակին միւս կողմը անցան, բայց մոռցան հաց առնել: **6** Յիսուս ըսաւ անոնց. «Տեսէ՛ք եւ զգուշացէ՛ք սաղուկեցիներու եւ փարիսեցիներու խմորէն»: **7** Իսկ անոնք՝ իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին՝ թէ հաց չենք առած: **8** Յիսուս գիտցաւ, եւ ըսաւ. «Թերահաւատներ, ի՞նչ կը խորհիք ձեր մտքին մէջ թէ հաց չէք առած: **9** Ձէ՞ք հասկնար դեռ եւ չէ՞ք յիշեր հինգ հազար հոգիին հինգ հացերը, եւ քանի՞ սակառ ժողովեցիք, **10** եւ չորս հազարին եօթը հացերը եւ քանի՞ զամբիւղ լեցուցիք: **11** Ի՞նչպէս ուրեմն չէք հասկնար թէ ես հացի համար չէ որ ըսի ձեզի՝ զգուշացէ՛ք փարիսեցիներու եւ սաղուկեցիներու խմորէն»: **12** Այն ատեն հասկցան թէ Յիսուս իրենց չէր ըսած՝ որ խմորէն զգուշանան, այլ փարիսեցիներու եւ սաղուկեցիներու աղանդէն:

Պետրոսի դաւանութիւնը եւ գլխաւորութիւնը

Մրկ 8, 27-30. Ղկ 9, 18-21

13 Յիսուս, Փրիպպեան Կեսարիոյ կողմերը երթալով, հարցուց աչակերտներուն. «Ժողովուրդը ո՞վ կը կարծէ թէ ըլլայ Մարդու Որդին»: **14** Անոնք պատասխանեցին. «Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչը, ուրիշներ՝ Եղիան, եւ ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: **15** Յիսուս ըսաւ անոնց. «Իսկ դուք՝ ո՞վ կը կարծէք թէ ըլլամ»: **16** Սիմոն Պետրոս պատասխանեց եւ ըսաւ. «Դո՛ւ ես քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին»: **17** Յիսուս պատասխանեց անոր. «Երանի՛ քեզի, Սիմոն, որդի Յովնանի, որովհետեւ մարմինն ու արիւնը չյայտնեցին քեզի, այլ իմ Հայրս որ երկինքն է: **18** Եւ ես կ'ըսեմ քեզի. Դուռն վէ՛մ ես, ու այդ վէ՛մին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, եւ զժողովի դռները պիտի չյաղթահա-

18 – Պետրոս անունը՝ Վեմ (Ժայռ) բառի յունարէնն է, որ կը համապատասխանէ արամեերէն Կեփաս (վեմ) անունին, զոր Փրկիչը տուած էր Յովնանի որդի՝ Սիմոնի, երբ առաջին անգամ հանդիպած էր անոր:

րեն զայն: **19** Եւ ես քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»: **20** Այն ատեն պատուիրեց աշակերտներուն որ մարդու չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

Կանխասացութիւն չարչարանքներուն

Մրկ 8, 31-33

21 Անկէ ետք Յիսուս սկսաւ աշակերտներուն ցուցնել թէ պէտք է որ ինքը Երուսաղէմ երթայ եւ շատ չարչարանքներ կրէ եւ անարգուի քահանայապետներէն, դպիրներէն եւ ժողովուրդին ծերերէն, եւ սպաննուի եւ երրորդ օրը յարուլթիւն առնէ: **22** Պետրոս, մէկ կողմ տանելով զինքը՝ սկսաւ վիճիլ անոր հետ եւ ըսել. «Քա՛ւ լիցի, Տէ՛ր, այդ բանը չպատահի՛ քեզի»: **23** Յիսուս, դառնալով Պետրոսին, ըսաւ. «Հեռացի՛ր ինծմէ, սատանայ՝ դուն գայթակղուլթիւն ես ինծի, որովհետեւ Աստուծոյ համեմատ չե՛ս խորհիր, այլ մարդոց»:

Քրիստոսի խաչը կրել

24 Այն ատեն, Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Եթէ մէկը ուզէ իմ ետեւէս գալ, թող ինքզինքը ուրանայ եւ իր խաչն առած իմ ետեւէս գայ: **25** Որովհետեւ ով որ կ'ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինծի համար իր անձը կորսնցնէ՝ պիտի

19 – Այս խօսքերով Ս. Պետրոսի շնորհուած կ'ըլլայ գերագոյն իշխանութիւն եւ գլխաւորութիւն միւս բոլոր առաքելներուն վրայ: Ան կը յայտարարուի Եկեղեցւոյ հիմը, եւ անոր կը յանձնուի բանալիներու՝ այսինքն մեղքերը կապելու եւ արձակելու եկեղեցական լիազօր իշխանութիւնը: Հետեւաբար, ուր Պետրոս է՝ հոն միայն եւ ո՛չ այլ ուր կրնայ ըլլալ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին: Ծէմք մը որպէս զի հաստատուն մնայ՝ պէտք է անբաժան ըլլայ իր հիմէն, այլապէս՝ կը փլի, կը կործանի:

23 – Պետրոս իր չափազանց եռանդով կ'ուզէ Քրիստոսը ետ կեցնել իր կոչումէն. որով եւ կը յանդիմանուի Քրիստոսէն իբր սատանայ, այսինքն հակառակորդ ու թշնամի Աստուծոյ ծրագիրներուն:

գտնէ զայն: **26** Ի՞նչ օգուտ է մարդուս՝ եթէ բոլոր աշխարհը չահի եւ իր հոգին կորսնցնէ, կամ ի՞նչ փրկանք պիտի տայ մարդ իր անձին փոխարէն: **27** Որովհետեւ Մարդու Որդին պիտի գայ իր Հօրը փառքով եւ իր հրեշտակներուն հետ եւ այն ատեն պիտի հատուցանէ իւրաքանչիւրին իր գործերուն համեմատ: **28** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս եղողներուն մէջ կ'ան ոմանք որ պիտի չմեռնին, մինչեւ տեսնեն Մարդու Որդին իր թագաւորութեամբ եկած»:

Այլակերպութիւնը

Մրկ 9, 2-8. Ղկ 9, 28-36

17 **1** Վեց օր ետք, Յիսուս իր հետն առաւ Պետրոսը, Յակոբոսը եւ անոր եղբայրը՝ Յովհաննէսը, եւ զանոնք առանձին բարձր լեռ մը հանեց. **2** եւ անոնց առջեւ կերպարանափոխուեցաւ. երեսը արեգակի նման լուսաւորուեցաւ, զգեստները լոյսի նման սպիտակ եղան. **3** եւ ահա անոնց տեսնուեցան Մովսէսն ու Եղիան, որ անոր հետ կը խօսէին: **4** Պետրոս, խօսքը Յիսուսին ուղղելով, ըսաւ. «Տէ՛ր, մեզի համար լաւ է որ հոս մնանք. եթէ կ'ուզես՝ երեք տաղաւար շինենք. մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսն ալ Եղիային համար»: **5** Եւ մինչդեռ կը խօսէր՝ ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զանոնք. ամպէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. «Ա՛յս է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ, անո՛ր մտիկ ըրէք»: **6** Աչակերտները, երբ ասիկա լսեցին՝ երեսի վրայ ինկան եւ սաստիկ վախցան: **7** Յիսուս, մօտենալով, դպաւ անոնց եւ ըսաւ. «Ուրի՛ ելէք ու մի՛ վախնաք»: **8** Անոնք իրենց աչքերը վերցուցին եւ Յիսուսէն զատ ոչ մէկը տեսան:

9 Եւ մինչդեռ լեռնէն կ'իջնէին՝ Յիսուս պատուիրեց անոնց եւ ըսաւ. «Մարդու մի՛ պատմէք այս տեսիլքը մինչեւ որ Մարդու Որդին մեռեալներէն յարուլթիւն առնէ»:

Գլ. 17, 2 – Քրիստոսի այս այլակերպութիւնը նախապատկերն է այն պայծառութեան, զոր Աստուծոյ հետ միացած հոգին, օր մը, երկինքի մէջ պիտի հաղորդէ մարմինին:

Եղիայիմ գալուստը

10 Աշակերտները հարցուցին իրեն. «Ինչո՞ւ դպիրները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»: **11** Յիսուս պատասխանեց անոնց. «Եղիան պիտի գայ եւ ամէն բան պիտի կարգադրէ. **12** բայց, կ'ըսեմ ձեզի որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն չճանչցան զինքը եւ իրենց ուզածը ըրին անոր. նոյնպէս, Մարդու Որդին ալ անոնցմէ պիտի չարհարուի»: **13** Այն ատեն աշակերտները հասկըցան՝ թէ Յովհաննէս Մկրտիչին համար էր ըսածը:

Լուսնոտը

Մրկ 9, 14-29. Ղկ 9, 37-42

14 Երբ ժողովուրդին մէջ եկաւ, մարդ մը մօտեցաւ անոր, ծնրադրեց ու ըսաւ. **15** «Տէ՛ր, ողորմէ՛՛ զաւակիս, որովհետեւ լուսնոտ դարձած է եւ չարաչար կը տանջուի, շատ անգամ կրակը կ'իյնայ եւ յաճախ ջուրը. աշակերտներուդ բերի, բայց չկրցան բժշկելը»: **16** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Ո՛վ անհաւատ եւ մոլար սերունդ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՞րբ պիտի համբերեմ ձեզի. ինծի՛ բեր զանիկա»: **17** Յիսուս սաստեց դեւին, եւ ան դուրս ելաւ, ու մանուկը նոյն վայրկեանին բժշկուեցաւ: **18** Այն ատեն աշակերտները մօտեցան Յիսուսին եւ առանձին ըսին. «Ինչո՞ւ մենք չկրցանք հանել դեւը»: **19** Յիսուս պատասխանեց. «Ձեր թերահաւատութեա՛ն համար. որովհետեւ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մանանեխի հատին չափ հաւատք ունենաք, եւ այս լերան ըսէք՝ ասկէ հո՛ն տեղափոխուէ՛, պիտի տեղափոխուի. եւ ո՛չ մէկ բան անհրճարին պիտի ըլլայ ձեզի: **20** Բայց այս տեսակ դեւը ուրիշ բանով չ'եղեր եթէ ոչ՝ աղօթքով եւ պահքով»:

Երկրորդ կանխասացութիւն չարչարանքներու

Մրկ 9, 30-32. Ղկ 9, 44-45

21 Մինչդեռ Գալիլեայի մէջ կը շրջէին՝ Յիսուս ըսաւ անոնց. «Մարդու Որդին պիտի **22** մատնուի մարդոց ձեռքը եւ պիտի սպաննեն զինքը, եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ»: Եւ շատ տրամեցան անոնք:

Տաճարի տուրքը

23 Երբ Կափառնաուժ եկան՝ երկդրամեանը պահանջողները Պետրոսին մօտեցան եւ ըսին. «Ձեր վարդապետը երկդրամեանը չի՞ տար»: «Այո՛», պատասխանեց Պետրոս: **24** Եւ երբ տուն մտան՝ Յիսուս կանխեց զայն եւ ըսաւ. «Ի՞նչպէս կ'երեւի քեզի, Սիմոն. երկրի թագաւորները որմէ՞ կ'առնեն իրենց հարկը կամ տուրքը. իրենց որդիներէ՞ն թէ օտարներէն»: **25** Եւ երբ Պետրոս պատասխանեց՝ «Օտարներէն», Յիսուս ըսաւ անոր. «Ուրեմն ազատ են որդիները: **26** Բայց որպէսզի չգայթակղեցնենք՝ գնա՛ ծով եւ կարթընետէ եւ առաջին ձուկը որ ելլէ՝ ա՛ռ, բա՛ց անոր բերանը եւ սատեր մը պիտի գտնես. ա՛ռ զայն եւ անոնց տուր, իմ եւ քու տեղը»:

Փոքրիկ մանուկին նման ըլլալ

Մրկ 9, 33–36. Ղկ 9, 46–47

18 **1** Նոյն ժամուան, աշակերտները Յիսուսի մօտենալով ըսին. «Ո՞վ է մեզմէ ամէնէն մեծը երկինքի արքայու-թեան մէջ»: **2** Յիսուս իր քով կանչեց մանուկ մը, անոնց մէջտեղը կեցուց զայն եւ ըսաւ. **3** «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չփոխուիք եւ մանուկներու նման չըլլաք՝ երկինքի արքայութիւնը պիտի չմտնէք: **4** Ուրեմն ո՛վ որ ինքզինքը փոքր կը դարձնէ այս մանուկին նման, ա՛ն է մեծը երկինքի արքայութեան մէջ: **5** Եւ ո՛վ որ կ'ընդունի այսպիսի մանուկ մը իմ անունովս՝ զիս կ'ընդունի»:

Գայթակղութիւնը

6 Եւ ով որ գայթակղեցնէ մէկը այս փոքրիկներէն որ ինծի կը հաւատան, աւելի լաւ է որ այնպիսին վիզէն իշու երկանաքար մը կախէ ու ծովուն խորը ընկզմի: **7** Վա՛յ աշխարհին՝ գայթակղութիւններուն պատճառով. գայթակղութիւնները պիտի գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով կու գայ գայթակղութիւնը:

Գլ. 18, 7 – Գայթակղութիւնները հարկադրաբար պիտի գան մարդոց չարու-թեան եւ անօրէնութեան պատճառաւ:

8 Եթէ ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ՛ զայն եւ քեզմէ հեռո՛ւ նետէ. լաւ է քեզի համար մէկ ձեռքով կամ կաղ մտնել կեանքին մէջ՝ քան երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ եւ յաւիտենական կրակին մէջ իյնալ: **9** Եթէ աչքդ կը գայթակղեցնէ քեզ՝ հանէ՛ զայն եւ մէկդի նետէ. լա՛ւ է քեզի համար միականի մտնել կեանքին մէջ՝ քան երկու աչք ունենալ եւ գեհէնի կրակին մէջ իյնալ:

10 Զգո՛յշ եղէք, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. կ'ըսեմ ձեզի թէ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն երկնաւոր Հօրս երեսը: **11** Որովհետեւ Մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու:

Մոլորած ոչխարը

Ղկ 15, 3-7

12 Ի՞նչպէս կը թուի ձեզի. եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մէկը կորսուի, չի՞ թողուր իննսունինը ոչխարները լեռներուն վրայ եւ մոլորածը փնտռելու չ'ե՞րթար: **13** Եւ եթէ յաջողի գտնել զայն, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, աւելի՛ կ'ուրախանայ ասոր վրայ՝ քան իննսունեւինին վրայ որ մոլորած չեն: **14** Այսպէս ալ երկնաւոր Հայրս չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

Նորայրական ազդարարութիւն

15 Եթէ եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զինքը երբ դու եւ ինքը մինակ էք. եթէ մտիկ ընէ քեզի՝ շահած կ'ըլլաս եղբայրդ: **16** Եթէ մտիկ չընէ՝ հետդ առ մէկ կամ երկու հոգի, որպէսզի ամէն բան հաստատուի երկու կամ երեք վկաներու բերնով: **17** Իսկ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝ Եկեղեցիին ըսէ՝ Եթէ Եկեղեցիին ալ մտիկ չընէ՝ հեթանոս եւ մաքսաւոր նկատէ զինքը:

17 – Այսիմֆն՝ Եկեղեցւոյ մեծին: Հեթանոսներն ու մաքսաւորները, հրէական աւանդութեան համաձայն, պիղծ կը համարուէին: Այս պատճառաւ ալ Հրեաները կը խորշէին անոնցմէ:

18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ինչ որ կապէք երկրի վրայ՝ կապւած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակէք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ:

Հասարակաց աղօթք

19 Դարձեալ կ'ըսեմ ձեզի. եթէ ձեզմէ երկու հոգի միաբանին երկրի վրայ, ինչ որ ալ խնդրեն՝ պիտի շնորհուի անոնց Հօրմէս որ երկինքն է: **20** Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքւած ըլլան իմ անունովս՝ ես հոն, անոնց մէջն եմ»:

Առակը պարտապանին

21 Այն ատեն, Պետրոս մօտեցաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս ինծի դէմ մեղանչէ, պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօթն անգամ»: **22** Յիսուս պատասխանեց. «Չեմ ըսեր քեզի մինչեւ եօթն անգամ, այլ եօթանասուն անգամ եօթը: **23** Ասոր համար երկինքի արքայութիւնը նման է թագաւորի մը որ ուզեց իր ծառաներուն հաշիւը կարգի դնել: **24** Երբ սկսաւ՝ առջեւը բերին մէկը որ տասը հազար քանքարի պարտք ունէր: **25** Եւ որովհետեւ ասիկա չէր կրնար վճարել՝ տէրը հրամայեց որ ծախսեն զինքը, կիներ, զաւակները եւ բոլոր ունեցածները, ու պարտքը վճարուի: **26** Ծառան, անոր ոտքը իյնալով՝ երկրպագութիւն կ'ընէր եւ կ'ըսէր. Տէ՛ր, համբերութիւն ունեցիր, ես ամբողջը կը վճարեմ քեզի: **27** Եւ ծառային տէրը, վրան գլխով, արձակեց զինքը եւ պարտքն ալ չնորհեց:

18 – Ինչպէս Պետրոս՝ Եկեղեցւոյ գլուխը (16, 18), ստացած էր աստուածային լիազօրութիւն, նմանապէս ալ ինքն՝ միւս առաքեալները: Առաքեալներուն տրուած այս իշխանութեամբ սակայն ետ առնուած չէր ըլլար Ս. Պետրոսի եղած խոստումը: Անոր խոստացուած էր Եկեղեցւոյ վերին վարչութիւնն ու գերագոյն իշխանութիւնը, որով միւս առաքեալներուն տրուած իշխանութիւնը ստորակարգեալ կը մնար Պետրոսի գերիշխանութեան: Եւ որովհետեւ Քրիստոսի Եկեղեցին բովանդակ երկրի վրայ պիտի տարածուէր, հետեւաբար պէտք էր որ Պետրոս ունենար գործակիցներ իր պաշտօնին:

22 – Այսինքն առանց չափի ու կշիռի:

28 Ծառան, դուրս ելլելով՝ գտաւ իր ծառայակիցներէն մէկը որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր: Կոկորդէն բռնելով, սկսաւ զայն խեղդել ու ըսել. Պարտքդ վճարէ՛ ինծի: **29** Արդ ծառայակիցը, անոր ոտքն իյնալով՝ կ'աղաչէր ու կ'ըսէր. Համբերու՛ թի՛ւն ունեցիր, եւ ես կը վճարեմ քեզի: **30** Բայց ան չուզեց. մանաւանդ թէ գնաց, բանտ դնել տուաւ զայն՝ մինչեւ որ պարտքը վճարէ: **31** Միւս ծառայակիցները, տեսնելով եղածը՝ շատ տխրեցան ու եկան բոլոր պատահածը պատմեցին իրենց տիրոջ:

32 Այն ատեն տէրը կանչեց զանիկա եւ ըսաւ. Չա՛ր ծառայ, ես բոլո՛ր պարտքերդ ներեցի քեզի, որովհետեւ աղաչեցիր ինծի: **33** Իսկ հիմա, պէտք չէ՞ր դուն ալ ծառայակիցիդ ողորմիլ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ: **34** Եւ տէրը, բարկանալով՝ դահիճներուն յանձնեց զայն, մինչեւ որ բոլոր պարտքերը վճարէ: **35** Այսպէս ալ պիտի ընէ ձեզի երկնաւոր Հայրս՝ եթէ ձեզմէ իւրաքանչիւրը բոլոր սրտով չներէ իր եղբօր՝ անոր յանցանքները:

Ամուսնութիւնը չի լուծուիր

Մրկ 10, 1-12

19 **1** Երբ Յիսուս աւարտեց այս խօսքերը՝ մեկնեցաւ Գալիլեայէն եւ եկաւ Հրէաստանի սահմանները, Յորդանանի միւս կողմը: **2** Իր ետեւէն բազմաթիւ ժողովուրդ գնաց եւ հոն բժշկեց զանոնք: **3** Փարիսեցիները, մօտենալով անոր, կը փորձէին զինք ու կ'ըսէին. «Օրինաւո՞ր է մարդուն ո՛րեւէ պատճառով իր կինը արձակել»: **4** Յիսուս պատասխանեց. «**2**՛ք կարդացած որ Արարիչը սկիզբէն արու եւ էգ ստեղծեց զանոնք եւ ըսաւ. **5** Ասոր համար մարդը իր հայրն ու մայրը պիտի թողու եւ իր

Գլ. 19, 3 – Յոյն բնագրին κατὰ πᾶσαν αἰτίαν (որեւէ պատճառ) նախադասութիւնը հայ թարգմանութեան մէջ «ըստ ամենայն վնասու» (ո՛րեւէ յանցանքով) թարգմանուած է: Այս դոյզն տարբերութիւնը շատ հաւանական է որ առաջ եկած ըլլայ αἰτία (պատճառ) բառին αἰτίωμα (յանցանք) սխալ ընթերցումէն: Վտւգատան եւ եւրոպական լեզուներով թարգմանութիւնք համաձայն են յոյն բնագրին:

կնոջ պիտի հետեւի, եւ երկուքը՝ պիտի ըլլան մէկ մարմին: **6** Ուրեմն այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի, ինչ որ Աստուած միացուց, մարդը թող չբաժնէ»: **7** Անոր ըսին. «Հապա ինչո՞ւ Մովսէս պատուիրեց մեզի ամուսնալուծման թուղթ տալ եւ արձակել»: **8** Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով թոյլ տուաւ որ արձակէք ձեր կիները, սակայն սկիզբէն այնպէս չէր: **9** Բայց ես կ'ըսեմ ձեզի. ով որ իր կինը արձակէ առանց պոռնկութեան պատճառի, եւ ուրիշ մը առնէ՝ կը շնայ, եւ ով որ արձակուածը առնէ՝ կը շնայ:

10 Աշակերտները ըսին իրեն. «Եթէ այդպէս է մարդուն եւ կնոջ վիճակը, լաւ է չամուսնանալ»: **11** Յիսուս պատասխանեց. «Ամէն մարդ կարող չէ այդ խօսքը հասկնալ, այլ միայն անոնք՝ որոնց տրուած է: **12** Որովհետեւ կան ներքինիներ, որ իրենց մօր որովայնէն այնպէս ծնած են, եւ կան ներքինիներ՝ որ մարդոց ձեռքով եղած են ներքինի, եւ ներքինիներ ալ կան՝ որ իրենց գիրենք ըրած են ներքինի, երկինքի արքայութեան համար. ո՛վ որ կրնայ հասկընալ՝ թող հասկնայ»:

Յիսուս կ'օրհնէ մանուկները

Մրկ 10, 13-16. Ղկ 18, 15-17

13 Այն ատեն մանուկներ ներկայացուցին Յիսուսի, որպէսզի ձեռքը դնէ անոնց վրայ եւ աղօթէ. բայց աշակերտները կը սաս-

8 – Մովսէս, գիտնալով ձեր խստասրտութիւնը, մեծագոյն չարիքի մը առջեւն առնելու համար թոյլ տուաւ ձեզի բաժնուելու, պատուիրելով սակայն, որ ապահարգանի կամ արձակման գիրը տրուի արձակուած կնոջ ձեռքը:

9 – Աստուծոյ արարչական կամքին համաձայն անխզելի է ամուսնութիւնը: Ծնութեան բացառիկ պարագային միայն ներքալ է բաժանումը: Այս բաժանումը սակայն պարգապէս հրաժարիլ մըն է իրարու հետ կենակցելի, եւ չի թոյլատրեր երբեք կնքել նոր ամուսնութիւն ուրիշի հետ, քանի դեռ կենդանի է ամուսիններէն մին կամ միւսը (Հմմտ. 5, 32):

12 – Ումանք կը հրաժարին ամուսնութենէ ինչ ինչ պարագաներու հարկէն ստիպուած, իսկ ուրիշներ՝ Աստուծոյ սէրէն դրդուած: Այս ինքնակամ հրաժարումը Աստուծոյ մէկ մասնաւոր շնորհքն է:

տէին զանոնք: **14** Յիսուս ըսաւ. «Թո՛ղ տուէ՛ք մօտեակներուն եւ մի՛ արգիլէ՛ք անոնց որ ինծի գան, որովհետեւ այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը»: **15** Եւ ձեռքը դրաւ անոնց վրայ ու մեկնեցաւ այն տեղէն:

Հարուստ երիտասարդը

Մրկ 10, 17–22. Ղկ 18, 18–23

16 Եւ ահա մէկը, Յիսուսին մօտենալով, ըսաւ. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարի գործ ընելու եմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: **17** Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ բարիի մասին կը հարցնես ինծի. բարին մէկ է. եթէ կ'ուզես յաւիտենական կեանքը մտնել՝ պատուիրանները պահէ»: **18** «Որո՞նք», հարցոց ան: Յիսուս պատասխանեց. «Մի՛ սպաննիր, մի՛ շնար, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայիր. **19** հայրդ ու մայրդ պատուէ եւ ընկերդ սիրէ անձիդ պէս»: **20** Պատանին ըսաւ. «Այդ բոլորը ես մանկութենէս ի վեր պահած եմ, դեռ ի՞նչ կը պակսի ինծի»: **21** «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, ըսաւ Յիսուս, գնա ծախէ՛ ինչ որ ունիս, աղքատներուն տուր, եւ երկնքի մէջ գանձ պիտի ունենաս. եւ ետեւէս եկուր»: **22** Պատանին, երբ այս խօսքերը լսեց, տխրած գնաց, որովհետեւ շատ ստացուածքներ ունէր:

23 Յիսուս, իր աշակերտներուն դառնալով, ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. հարուստը դժուարութեամբ պիտի մտնէ երկինքի արքայութիւնը: **24** Դա՛րձեալ կ'ըսեմ ձեզի. դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի՝ քան հարուստը Աստուծոյ արքայութիւնը մտնէ»: **25** Երբ աշակերտները լսեցին՝ շատ զարմացան եւ ըսին. «Այն ատեն ո՞վ կ'ընայ փրկուիլ»: **26** Յիսուս անոնց նայեցաւ ու ըսաւ. «Մարդոց կողմէ անկարելի է ատրիկա, բայց Աստուծոյ համար ամէն բան հնարաւոր է»:

24 – Ասեղի ծակ բացատրութեամբ Փրկիչը իբր օրինակ առաջ կը բերէ Երուսաղէմի մէջ գտնուող պատի մը նեղ ու ցած մուտքը, ուրկէ ուղտ մը հազիւ կրնար անցնիլ: Ուղտի ու ասեղի ծակին այս գուտ երբայական առածը կը մատնանէ դրամի անձնատուր հարուստ անձի մը յաւիտեանական փրկութեան հասնելու մեծ դժուարութիւնը:

Յիսուսի հետևողներուն վարձքը

27 Այն ատեն Պետրոս, խօսք առնելով, ըսաւ. «Ահաւասիկ մենք ամէն բան թողուցինք ու եկանք քու ետեւէդ. ի՞նչ պիտի ըլլայ հիմա մեզի»: **28** Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք որ իմ ետեւէս եկաք, երկրորդ դալստեանս, երբ Մարդու Որդին նստի իր փառքի աթոռին վրայ՝ դուք ալ պիտի նստիք տասներկու աթոռներու վրայ, դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը: **29** Եւ ով որ թողուց տուն կամ եղբայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ կին կամ զաւակներ կամ ազարակներ, իմ անուռնիս համար՝ հարիւրապատիկը պիտի առնէ եւ յաւիտեանական կեանքը պիտի ժառագանջէ: **30** Շատեր որ առաջին էին՝ վերջին պիտի ըլլան, եւ շատեր որ վերջին էին՝ առաջին պիտի ըլլան:

Մշակներու առակը

20 **1** Որովհետեւ երկինքի արքայութիւնը կը նմանի տանուտէր մարդու մը, որ առտու կանուխ ելաւ մշակներ վարձելու իր այգիին համար: **2** Եւ մշակներուն օրավարձը մէկ դահեկանի սակարկելով՝ դրկեց զանոնք իր այգին: **3** Երրորդ ժամուն ելլելով՝ տեսաւ ուրիշներ որ հրապարակին վրայ անգործ կեցեր էին: **4** Անոնց ալ ըսաւ. «Դուք ալ իմ այգիս գացէք եւ ինչ որ պէտք է՝ կու տամ ձեզի»: **5** Անոնք ալ գացին: Վեցերորդ եւ իններորդ ժամուն, դարձեալ ելաւ եւ նոյնպէս ըրաւ: **6** Տասնմէկերորդ ժամուն ելլելով՝ ուրիշներ ալ գտաւ որ առանց գործի կեցեր էին. եւ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ ամբողջ օրը հոս անգործ կեցեր էք»: **7** Պատասխանեցին. «Որովհետեւ ոչ ոք մեզ վարձեց»: «Դո՛ւք ալ գացէք իմ այգիս, ըսաւ անոնց, եւ ինչ որ պէտք է պիտի ստանաք»: **8** Երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը ըսաւ տնտեսին. «Կանչէ մշակները եւ իրենց վարձքը տուր, վերջիններէն սկսելով մինչեւ առաջինները»: **9** Եկան տասնմէկերորդ ժամուն գացողները եւ առին մէկա-

28 – Իսրայէլի տասներկու ցեղերը փոխաբերական իմաստով կը ներկայացնեն բովանդակ մարդկութիւնը:

կան դահեկան. **10** յետոյ եկան առաջինները. եւ մինչ կը կարծէին թէ աւելի պիտի առնեն՝ իրենք ալ մէկական դահեկան ստացան: **11** Առնելու ատեն, սկսան տրտնջել տանտիրոջ դէմ՝ ըսելով. **12** «Վերջինները միայն մէկ ժամ աշխատեցան եւ անոնց հաւասար վարձատրեցիր մեզ՝ որ օրուան բեռը եւ տաքը կրեցինք»: **13** Ան ալ պատասխանեց անոնցմէ մէկուն եւ ըսաւ. «Ընկե՛ր, ես քեզ չեմ գրկեր. մէկ դահեկանի սակարկութիւն չըրի՞ր ինծի հետ. **14** ա՛ռ քուկդ եւ գնա. եթէ ես կ'ուզեմ այս վերջինին քեզի հաւասար տալ, **15** միթէ իշխանութիւն չունի՞մ ունեցածներս գործածելու ինչպէս որ կ'ուզեմ. եւ կամ քու աչքդ չար է՝ որովհետեւ ես բարի եմ»: **16** Այսպէս՝ յետինները առաջին պիտի ըլլան եւ առաջինները յետին. որովհետեւ շատերը կանչուած են եւ քիչերը ընտրուած»:

Երրորդ կանխասացութիւն չարչարանքներու

Մրկ 10, 32–34. Ղկ 18, 31–33

17 Երբ Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր, մէկ կողմ առնելով տասներկու աշակերտները, ճամբուն վրայ ըսաւ անոնց. **18** «Ահաւասիկ կ'ելլենք Երուսաղէմ, եւ Մարդու Որդին պիտի մատնուի քահանայապետներուն եւ դպիրներուն, եւ զայն մահուան պիտի դատապարտեն, **19** եւ պիտի մատնեն հեթանոսներուն՝ որպէսզի զայն ծաղրեն, ծեծեն ու խաչ հանեն. եւ ան, երրորդ օրը յարուածիւն պիտի առնէ»:

Գլ. 20, 15 – Այս առակին մէջ, տանտէր մարդը Աստուած է, իսկ այգին՝ Աստուծոյ քաղաքութիւնը: Այլեւայլ ժամերը կը պատկերացնեն մարդկային այս կամ այն տարիքը, որուն մէջ իւրաքանչիւր ոք Աստուծմէ կը կանչուի իր գործերու հաշիւը տալու: Ոչ մէկ մեղաւոր իրաւունք ունի իր փրկութենէն յուսահատելու: Բարի աւագակը վերջին վայրկեանին շահեցաւ արժայութիւնը: Դահեկանը յաւիտեանական կեանքն է. իսկ երեկոն՝ վերջակէտն է մեր կեանքին: Ժամ մը միայն գործողները՝ յաւիտեանական կեանքին մէջ նոյնքան վարձ կը ստանան, որքան անոնք՝ որ օրուան ծանրութիւնն ու տաճարութիւնը կրել էին. որովհետեւ տեւողութիւնը չէ՝ որ աշխատութեան արժէքը կը սահմանէ, այլ՝ Աստուծմէ մեզի տրուած մեծ կամ փոքր չափով շնորհքին մեր կողմէ գործակցութիւնը:

Զեքեդէոսի որդիները

Մրկ 10, 35-40

20 Այն ատեն Յիսուսին մօտեցաւ Զեքեդէոսի որդիներուն մայրը, զաւակներուն հետ միասին. երկրպագութիւն ընելով՝ բան մը խնդրեց անկէ: **21** «Ի՞նչ կ'ուզես», հարցուց անոր Յիսուս: Անիկա պատասխանեց. «Ըսէ՛ որ այս երկու զաւակներս, մէկը քու աջ՝ միւսը ձախ կողմդ նստին արքայութեանդ մէջ»: **22** Յիսուս պատասխանեց. «**Չէք** գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք խմել բաժակը զոր ես պիտի խմեմ, կամ կրնա՞ք մկրտուիլ այն մկրտութեամբ որով ես պիտի մկրտուիմ: «Կրնա՛նք», պատասխանեցին: **23** Յիսուս ըսաւ անոնց. «Բաժակս պիտի խմէք եւ պիտի մկրտուիք այն մկրտութեամբ որով ես պիտի մկրտուիմ, բայց աջ ու ձախ կողմս նստեցնելը ինծի չ'իյնար, այլ անոնց համար է՝ որոնց սահմանուած է Հօրս կողմէն»:

Մեծը պարտի ծառայել

Մրկ 10, 41-45. Ղկ 22, 24-27

24 Միւս տասը աշակերտները, լսելով՝ բարկացան երկու եղբայրներուն դէմ: **25** Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք եւ ըսաւ. «Գիտէ՞ք որ հեթանոսներու մէջ իշխանները կը տիրապետեն եւ մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ. **26** բայց այնպէս պիտի չըլլայ ձեր մէջ. այլ ով որ ձեր մէջ կ'ուզէ մեծ ըլլալ՝ ձեր սպասաւորը թող ըլլայ. **27** եւ ով որ կ'ուզէ ձեր մէջ առաջինը ըլլալ՝ ձեր ծառան թող ըլլայ: **28** Ինչպէս որ Մարգու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու՝ այլ ծառայելու եւ իր անձը փրկանք տալու շատերու փոխարէն»:

23 – Յոյնը՝ որոնց պատրաստուած է իմ Հօրմէս: Իշխանութեան ու նախախնամութեան գործերը: Հօր Աստուծոյ կը վկայագրուին: Այստեղ Քրիստոս իր մասին կը խօսի, որ իբր մարդ կը կատարէ այն գոծերը, զոր Հայր Աստուած յանձնարարած է իրեն:

Երիֆովի երկու կոյրերը

Մրկ 10, 46-52. Ղկ 18, 35-43

29 Երիֆովէն ելլելու ատեն՝ շատ ժողովուրդ գնաց անոր ետեւէն: **30** Եւ ահա ճամբուն վրայ երկու կոյրեր նստած էին. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել, ըսելով. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի Որդի»: **31** Բայց ամբոխը սաստեց զանոնք որ լռեն. անոնք աւելի ուժգին կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Տէ՛ր, ողորմէ՛ մեզի, Դաւիթի Որդի»: **32** Յիսուս կանգ առաւ, կանչեց զանոնք ու հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»: **33** Պատասխանեցին. «Տէ՛ր, մեր աչքերը թող բացուին»: **34** Յիսուս, գլխով, դպաւ անոնց աչքերուն եւ իսկոյն տեսան ու անոր ետեւէն գացին:

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ

Մրկ 11, 1-11. Ղկ 18, 28-38. Յովհ 12, 12-16

21 **1** Երբ Երուսաղէմի մօտեցան եւ եկան Բեթփազէ, **2** Իթենեաց լերան մօտ, Յիսուս աշակերտներէն երկուքը զրկեց եւ ըսաւ անոնց. **2** «Գացէ՛ք ձեր դիմացի գիւղը եւ իսկոյն հոն կապուած պիտի գտնէք էշ մը եւ իր քուռակը. քակեցէք եւ ինծի բերէք: **3** Իսկ եթէ մէկը ձեզի բան մը ըսէ՝ ըսէք թէ իրենց տիրոջը պէտք են եւ իսկոյն պիտի զրկէ զանոնք: **4** Արդ այս ամէնը եղաւ որպէսզի կատարուի մարգարէին խօսքը. **5** «Ըսէ՛ք Սիոնի աղջկան, ահա՛ քագաւորդ քեզի կու գայ՝ հեզ, եւ հեծած իշու եւ անոր աւանակին վրայ»:

6 Աշակերտները գացին եւ Յիսուսի հրամայածին համաձայն ըրին, **7** եւ բերին էշն ու քուռակը, անոնց վրայ դրին իրենց զգեստները եւ Յիսուս նստաւ անոնց վրայ: **8** Եւ ժողովուրդէն շատեր իրենց զգեստը կը փռէին ճամբուն վրայ եւ ուրիշներ ծառերու ոստեր կը կտրէին ու կը տարածէին ճամբուն վրայ: **9** Եւ ժողովուրդը, որ առջեւէն ու ետեւէն կ'երթար, կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Օրհնութիւն Դաւիթի որդիին, օրհնեալ է այն՝ որ Տիրոջ անունով կու գայ, ովսանմա՛ բարձունքներու մէջ»:

10 Երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ. եւ

կ'ըսէին. «Ո՞վ է ասիկա»: **11** Ժողովուրդը պատասխանեց. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն»:

Յիսուս կը մաքրագործէ տաճարը

Մրկ 11, 15-17. Ղկ 18, 45-46

12 Յիսուս տաճարը մտաւ եւ դուրս հանեց բոլոր անոնք որ տաճարին մէջ առեւտուր կ'ընէին. կործանեց լուծայափոխներու սեղանները եւ աղանի վաճառողներուն աթոռները. եւ ըսաւ անոնց. **13** «Գրուած է. Իմ տունս՝ աղօթքի տուն պիտի կոչուի. իսկ դուք՝ աւագակներու որջ դարձուցիք զայն»:

14 Տաճարին մէջ կոյրեր ու կաղեր մօտեցան իրեն եւ բռնեց զանոնք: **15** Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան հրաշքները զորս գործեց եւ մանուկները որ տաճարին մէջ կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Ովսաննա՛ Դաւիթի որդիին», բարկացան. **16** եւ ըսին անոր. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ասոնք»: Յիսուս պատասխանեց անոնց. «Այո՛, չէ՞ք կարդացած՝ թէ տղոց եւ կաթնկեր մանուկներու բերանէն գովեստ ստացար»: **17** Եւ զանոնք թողլով՝ քաղաքէն դուրս ելաւ, գնաց Բեթանիա եւ հոն իջեւանեցաւ:

Անիծուած քօքնիմ

Մրկ 11, 20-24

18 Առաւօտեան դէմ, երբ նորէն քաղաքը կը դառնար՝ անօթեցաւ. **19** ճամբուն վրայ թզենի մը տեսնելով՝ քովը գնաց, բայց անոր վրայ տերեւէ զատ ուրիշ բան չգտնելով, ըսաւ. «Ասկէ ետք յաւիտեա՛ն պտուղ չունենաս». թզենին իսկոյն չորցաւ: **20** Աչակերտները, երբ տեսան, զարմացան եւ ըսին. ի՛նչպէս չուտ չորցաւ թզենին: **21** Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ հաւատք ունենաք եւ չտարակուսիք՝ ո՛չ միայն պիտի ընէք ինչ որ ես թզենիին ըրի, այլ նոյնիսկ եթէ այս լեռան ըսէք՝ ելի՛ր, ծովը ին-

Գլ. 21, 20 – Այս հրաշագործութեան իմաստը այլաբանական է: Քրիստոս ասով ցոյց կու տայ անգղջութիւնն ու դատապարտութիւնը Իսրայէլի ժողովուրդին, որ դարձի պտուղ չբերաւ ամենեւին:

կիր, պիտի կատարուի: **22** Եւ ինչ որ հաւատքով աղօթքի մէջ խնդրէ՝ պիտի ընդունիք»:

Յիսուսի իշխանութիւնը

Մրկ 11, 27-33. Ղկ 20, 1-8

23 Երբ Յիսուս տաճար եկաւ եւ հոն կը սորվեցնէր՝ քահանայապետները եւ ժողովուրդին ծերերը մօտեցան անոր եւ ըսին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: **24** Յիսուս պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի՛ բան մը պիտի հարցնեմ. եթէ պատասխանէք, ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները: **25** Յովհաննէսի մկրտութիւնը ուրկէ՞ էր. երկինքէ՞ն թէ մարդերէն»: **26** Անոնք, իրարու մէջ խորհելով, կ'ըսէին. «Եթէ ըսենք որ երկինքէն է, մեզի պիտի ըսէ՝ ուրեմն ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք որ մարդոցմէ է՝ ժողովուրդէն կը վախնանք: Որովհետեւ ամէնքը Յովհաննէսը իբրեւ մարգարէ կ'ընդունէին»: **27** Պատասխանեցին Յիսուսին. «Չե՛նք գիտեր»: «Ես ալ չեմ ըսեր ձեզի, պատասխանեց Յիսուս, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

Երկու որդիներուն առակը

28 «Ի՞նչպէս կը թուի ձեզի. մարդ մը երկու որդի ունէր. առաջինին ուղղուելով, ըսաւ. Որդեա՛կ, գնա՛ այսօր այգին աշխատէ: **29** Ան պատասխանեց. Կ'երթամ, տէր, ու չգնաց: **30** Միւսին ալ մօտեցաւ եւ նոյնը ըսաւ: Ան պատասխանեց՝ չե՛մ երթար. բայց յետոյ գղջաց ու գնաց այգին: **31** Արդ, երկուքէն ո՞ր մէկը կատարեց իր հօր կամքը»: «Վերջինը» պատասխանեցին: Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ մաքսաւորներն ու պոռնիկները ձեզմէ առաջ պիտի մտնեն երկինքի արքայութիւնը: **32** Որովհետեւ Յովհաննէս ձեզի եկաւ արդարութեան ճամբով, եւ դուք չհաւա-

22 – Վստահութեամբ եղած ամէն աղօթք կը գտնէ ունկնդրութիւն Աստուծոյ կողմէ, պայմանով սակայն, որ ան՝ աստուածային իմաստութեան նպատակներուն եւ աղօթողին հոգիին փրկութեան համապատասխան ըլլայ:

տացիք անոր, բայց մաքսաւորները եւ պոռնիկները հաւատացին անոր. դո՛ւք ալ տեսաք, բայց յետոյ չզղջացիք եւ հաւատացիք»:

Առակը ռեքագործ մշակներուն

Մրկ 12, 1-12. Ղկ 20, 9-19

33 Լսեցէք սա ուրիշ մէկ առակը. «Տանուտէր մը կար որ այգի տնկեց ու ցանգով պատեց եւ անոր մէջ հնձան փորեց, աշտարակ չինեց ու մշակներու տալով՝ ինքը հեռու աշխարհ գնաց: **34** Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ, ծառաներ ղրկեց մշակներուն՝ որպէսզի անոր պտուղները առնեն: **35** Եւ մշակները, բռնելով անոր ծառաները՝ մէկը տանջեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մըն ալ քարկոծեցին: **36** Դարձեալ ուրիշ ծառաներ ղրկեց, առաջիներէն աւելի բազմաթիւ. անոնց ալ նոյնը ըրին: **37** Ամէնէն ետք, իր որդին ղրկեց անոնց, ըսելով. «Թերեւս որդիէս պատկառին: **38** Իսկ մշակները, երբ տեսան որդին՝ իրարու ըսին. Ա՛յս է ժառանգորդը. եկէք սպաննենք զայն եւ իր ժառանգութիւնը մենք առնենք: **39** Եւ բռնելով զանիկա՝ այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին: **40** Արդ, երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ մշակներուն»: **41** Ըսին անոր. «Չարերը չարաչար պիտի սպաննէ, եւ այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք, երբ ժամանակը ըլլայ, պտուղները պիտի տան իրեն»: **42** Յիսուս ըսաւ անոնց. «Բնաւ չէ՞ք կարդացած Գիրքին մէջ. Վէմը գոր անարգեցիմ շինողները՝ անկիւնաքար եղաւ. Տիրոջ գործն է այս եւ սքանչելի է մեր աչքերուն:

43 Ասոր համար կ'ըսեմ ձեզի թէ Աստուծոյ արքայութիւնը պիտի վերցուի ձեզմէ եւ պիտի տրուի այն ազգին՝ որ անոր պտուղ-

42 – (Սղմ. 117, 22, 23) Այսինքն այն վէմը կամ քարը, որ երկու պատեր իրարու կապելով, շինուածքը կ'ամրացնէ: Անկիւնաքարը Քրիստոս է, որ բոլոր ժողովուրդները հաւատքի միութեան մէջ կը պահէ, հակառակ հաւատքի թշնամիներու բռնի յարձակումներուն, որոնցմէ ոչ մէկը կարող է գինքը խորտակել ու ջախջախել: Ուրեմն շինողները (ժողովրդամեցի մեծերը) զայն արհամարհելով ու անարգելով հանդերձ՝ ան դարձեալ իր դիրքին վրայ մնաց անխախտ, եւ այս արդէն իսկ ապացոյց մըն է, թէ Աստուած ինքնին հոն հաստատած է զայն:

ները պիտի բերէ: **44** Եւ ով որ այս վէժին վրայ իյնայ՝ պիտի փշրուի. եւ որո՛ւն վրայ որ վէժը իյնայ՝ զայն պիտի ջախջախէ»:

45 Երբ քահանայապետները, դպիրներն ու փարիսեցիները լսեցին այս առակները՝ հասկացան որ իրենց համար ըսաւ: **46** Եւ կ'ուզէին բռնել զինքը, բայց վախցան ժողովուրդէն, որովհետեւ մարգարէ կը համարէին զինքը:

Թագաւորին տղուն հարսանիքը

Ղկ 14, 16-24

22 **1** Յիսուս դարձեալ սկսաւ խօսիլ անոնց առակներով եւ ըսաւ. **2** «Երկինքի արքայութիւնը նման է թագաւորի մը, որ իր որդիին հարսանիք ըրաւ: **3** Ծառաներ զրկեց հարսանիքի կանչելու հրաւիրեալները, բայց անոնք չուզեցին գալ: **4** Դարձեալ ուրիշ ծառաներ զրկեց՝ պատուիրելով. Ըսէ՛ք հրաւիրեալներուն՝ թէ աւահասիկ պատրաստ է իմ ճաշ. զուարակներս ու պարարտ կենդանիներս մորթուած են եւ ամէն ինչ պատրաստ է. եկէ՛ք հարսանիքի: **5** Բայց անոնք, կարեւորութիւն չտալով՝ մէկը ազարակը գնաց, միւսը իր առուտուրին, **6** եւ ուրիշներ, բռնելով անոր ծառաները՝ նախատեցին ու սպաննեցին: **7** Իսկ թագաւորը, երբ լսեց՝ բարկացաւ. իր զօրքը զրկեց եւ մեռցնել տուաւ այդ մարդասպանները եւ կրակի տուաւ անոնց քաղաքը: **8** Այն ատեն, ըսաւ ծառաներուն. Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրեալները արժանի չէին. **9** գացէ՛ք, ուրեմն, ճամբաներու գլուխները, եւ ով որ գտնէք՝ կանչեցէ՛ք հարսանիքի: **10** Ծառաները, ճամբաներու վրայ ելլելով, հաւաքեցին ո՛վ որ գտան, չարեր եւ բարիներ, ու հարսանիքի սրահը լեցուեցաւ կոչնականներով: **11** Երբ թագաւորը մտաւ բազմականները տեսնելու՝ հոն նշմարեց մարդ մը որ հարսանիքի զգեստ չէր հագած. եւ ըսաւ անոր. **12** Ըն-

44 – Քրիստոսի թշնամիները, որոնց համար գայթակղութիւն է Քրիստոս: Վէժին իյնալը՝ Քրիստոսի, վերջին դատաստանի օրը, իբր դատաւոր գալը կ'ակնարկէ: Քրիստոս, այն օրը, իր թշնամիներուն վրայ պիտի իյնայ եւ պիտի փշրէ գանոնք:

կեր, ի՞նչպէս հոս մտար առանց հարսանիքի զգեստ ունենալու. մարդը պապանձեցաւ: **13** Այն ատեն թագաւորը սպասաւորներուն ըսաւ. **Կապեցէ՛ք** ասոր ոտքերն ու ձեռքերը եւ դո՛ւրս հանեցէ՛ք, արտաքին խաւարին մէջ. հոն թող լայ ու ակռաները կրճատէ: **14** Որովհետեւ չատերն են կանչուած եւ քիչերը՝ ընտրուած»:

Կեսարիւն տուրքը

Մրկ 11, 13-174. Ղկ 20, 20-26

15 Այն ատեն փարիսեցիները գացին խորհրդակցեցան անոր մասին, թէ ինչպէս ծուղակի մէջ ձգեն զայն իր խօսքերուն վրայէն: **16** Իրենց աշակերտները ղրկեցին անոր՝ Հերովդէանոսներուն հետ միասին, եւ ըսին. «Վարդապե՛տ, մենք գիտենք որ դուն ճշմարտախօս ես եւ Աստուծոյ ճանապարհը կը սորվեցնես ուղիղ կերպով, մարդու կարեւորութիւն չես տար եւ մարդոց երեսին չես նայիր. **17** հիմա ըսէ մեզի, ի՞նչպէս կը թուի քեզի. պէ՞տք է տուրք վճարել Կեսարին թէ ոչ»: **18** Յիսուս հասկեցաւ անոնց խորամանկութիւնը, եւ հարցուց. «Ինչո՞ւ կը փորձէք զիս, կեղծաւորներ: **19** Յո՛րց տուէք ինծի տուրքին դահեկանը»: Անոնք ներկայացուցին դահեկան մը: **20** Եւ ըսաւ անոնց. «Որո՞ւն է այս պատկերը կամ գրութիւնը»: «Կեսարինն է», պատասխանեցին: **21** Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Գացէ՛ք եւ Կեսարին տուէ՛ք ինչ որ Կեսարին կը պատկանի եւ Աստուծոյ՝ ինչ որ Աստուծոյ կը պատկանի»: **22** Այս լսելով՝ զարմացան ու թողուցին գացին:

Մոռեալներու յարութիւնը

Մրկ 12, 18-27. Ղկ 20, 27-40

23 Նոյն օրը, Յիսուսի մօտեցան սաղուկեցիներ՝ որ կ'ըսէին թէ

Գլ. 22, 17 – Նոյն ատենները շատ վիճաբանուած խնդիր մըն էր Հրեաներու մէջ, թէ ընտրեալ ժողովուրդը պէ՞տք էր տուրք տալ հեթանոսներու թէ ոչ: Քրիստոսի համար, հետեւաբար, հաւասարապէս վտանգաւոր էր իրեն ուղղուած հարցումին այո՛ կամ ո՛չ պատասխանելը:

յարուլթիւն չկայ. հարցուցին անոր եւ ըսին. **24** «Վարդապէ՛տ, Մովսէս ըսաւ որ եթէ մէկը մեռնի առանց զաւակ ունենալու, մեռնողին եղբայրը առնէ անոր կինը եւ զաւակ հասցնէ իր եղբօրը: **25** Արդ, մեր քով եօթը եղբայրներ կային. առաջինը ամուսնացաւ ու մեռաւ, եւ որովհետեւ զաւակ չունէր՝ իր կինը եղբօրը թողուց: **26** Նոյնպէս երկրորդը եւ երրորդը, մինչեւ եօթներորդը. **27** եւ ամէնէն վերջը՝ կինն ալ մեռաւ: **28** Արդ, յարուլթեան օրը՝ անիկա եօթը եղբայրներէն որո՞ւն կինը պիտի ըլլայ, քանի որ ամէնքն ալ անոր հետ ամուսնացան»: **29** Յիսուս պատասխանեց. «Մոլորածնե՛ր, ո՛չ Գիրքը կը հասկնաք եւ ոչ ալ Աստուծոյ զօրութիւնը. **30** որովհետեւ յարուլթեան օրը ո՛չ կին կ'առնեն եւ ո՛չ ալ հարս կ'երթան, այլ երկինքի հրեշտակներու նման կ'ըլլան: **31** Բայց մեռեալներու յարուլթեան մասին չէ՞ք կարդացած՝ թէ Աստուած ինչ ըսած է ձեզի. **32** Ե՛ս եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը: Եւ Աստուած՝ մեռեալներու Աստուածը չէ՛, այլ ողջերու»: **33** Իսկ ժողովուրդը՝ լսելով կը զարմանար անոր վարդապետութեան վրայ:

Գլխաւոր պատուիրանը

Դկ 10, 25–28. Յովհ 13, 34–35

34 Իսկ փարիսեցիները, երբ լսեցին թէ պապանձեցուց սաղուկեցիները, միասին հաւաքուեցան: **35** Անոնցմէ մէկը, որ Օրէնքի վարդապետ էր, փորձելով հարցուց. **36** «Վարդապէ՛տ, ո՞րն է Օրէնքի ամենամեծ պատուիրանը»: **37** Յիսուս պատասխանեց. «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ եւ բոլոր մտքովդ. **38** այս է մեծ եւ առաջին պատուիրանը: **39** Իսկ երկրորդը՝ ասոր նման է: Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս: **40** Այս երկու պատուիրաններուն վրայ հիմնուած են ամբողջ Օրէնքն ու Մարգարէները»:

24 – Այստեղ հարցը կը վերաբերի այն օրէնքին, որ կը պարտաւորէր որ այրի կինը ամուսնանայ իր տագրին հետ, եթէ իր այրը անգաւակ մեռնի: Այս ամուսնութենէն ծնած զաւակը օրինաւոր ժառանգը կը համարուէր մեռած ամուսնոյն:

Քրիստոս՝ Դաւիթի Որդի

Դկ 20, 41-44

41 Երբ փարիսեցիները հաւաքուեցան՝ Յիսուս հարցուց անոնց.
42 «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի մասին, որո՞ւ զորդին է?»: «Դաւիթի», պատասխանեցին: **43** Յիսուս աւելցուց. «Իսկ ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զինքը Տէր կը կոչէ եւ կ'ըսէ: **44** Տէրը ըսաւ իր տիրոջս. Նստե՛ աջ կողմս, մինչեւ որ քնամիւսներդ ոտքերուդ պատուանդան դնեմ:

45 Իսկ եթէ Դաւիթ զինքը Տէր կը կոչէ, ի՞նչպէս կրնայ անոր որդին ըլլալ»: **46** Ոչ ոք կրնար անոր պատասխան տալ. եւ այդօրէն ետք՝ ո՛չ ոք կը համարձակէր իրեն բան մը հարցնել:

Մի մամնիք փարիսեցիներուն

23 **1** Այն ատեն Յիսուս խօսեցաւ ժողովուրդին եւ աշակերտներուն՝ ըսելով. **2** «Մովսէսի աթոռը նստան դպիրներն ու փարիսեցիները. **3** ինչ որ ըսեն անոնք ձեզի՛, ըրէ՛ք ու պահեցէ՛ք, բայց իրենց գործերուն համեմատ մի՛ գործէ՛ք. որովհետեւ կ'ըսեն բայց չեն ըներ: **4** Ծանր եւ դժուարակիր բեռներ կը կապեն ու մարդոց ուսերուն վրայ կը դնեն, եւ իրենք՝ մատո՛վ անգամ չեն ուզեր շարժել զանոնք: **5** Իրենց բոլոր գործերը կը կատարեն մարդոց երեսնալու համար. կը լայնցնեն իրենց գրապանակները եւ կ'երկնցնեն զգեստներու քղանցքները. **6** կը սիրեն խնճոյքներու

Գլ. 23, 4 – Անոնք տարապայման ու արտառոց մեկնութիւններով կը ծանրաբեռնեն օրեմքը, եւ յետոյ կը դնեն ուրիշներու վրայ անտանելի բեռ մը, զոր չեն ուզեր շարժել իրենց մատովն անգամ. այսինքն՝ իրենց տուած խիստ պատւերները իրենք չեն կատարեր բնաւ:

5 – Գրապանակները մագաղաթէ երիզներ էին, որոնց վրայ գրուած էին օրինագիրքէ ինչ ինչ տեղիքներ: Այս երիզները կաշիէ փոփրիկ տուփերու մէջ պահած՝ իրենց ճակտին ու ձախ թելին կը կապէին: Փարիսեցիները իրենց վրայ կրած այսպիսի գրապանակները աչքի գարնելու աստիճան կը լայնցնէին. ցոյց տալու համար ժողովուրդին իրենց եռանդն ու նախանձախնդրութիւնը օրինապահութեամբ:

մէջ առաջին տեղերը գրաւել եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները, **7** հրապարակներու վրայ ողջոյն ընդունիլ եւ մարդեքէն կոչուիլ «Ռաբբի՛, Ռաբբի՛»:

8 Բայց դուք ո՛չ մէկը վարդապետ կոչեցէք, որովհետեւ մէ՛կ է ձեր ուսուցիչը եւ դուք ամէնքդ եղբայրներ էք: **9** Երկրի վրայ ո՛չ մէկը ձեզի հայր մի՛ կոչէք, որովհետեւ մէ՛կ է ձեր Հայրը՝ որ երկինքն է: **10** Մի՛ կոչուիք ուսուցիչ, որովհետեւ ձեր ուսուցիչը Քրիստոսն է: **11** Եւ ձեր մէջէն մեծը՝ թող ձեր սպասաւորն ըլլայ: **12** Ո՛վ որ իր անձը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ո՛վ որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

ԱՆԷԾԲ՝ փարիսեցիներուն

13 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ կը փակէք երկինքի արքայութիւնը մարդոց առջեւ. դուք չէ՛ք մտներ, եւ անոնց որ պիտի մտնեն՝ կ'արգիլէք որ մտնեն:

14 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ այրիներուն տունները կ'ուտէք՝ երկար աղօթքներ կեղծելով. ասոր համար խիստ դատաստանի պիտի ենթարկուիք:

15 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը շրջիք նորադարձ մը փնտռելու, եւ երբ գտնէք՝ ձեզմէ կրկնապատիկ աւելի գէհնի որդի կ'ընէք զայն:

16 Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ ո՛վ որ տաճարին վրայ երդում ընէ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ տաճարի ոսկիին վրայ երդում ընէ՝ պարտաւոր կ'ըլլայ: **17** Յիմարներ եւ կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն՝ թէ տաճարը որ կը սրբացնէ ոսկին: **18** Եւ ո՛վ որ սեղանին վրայ երդում ընէ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում ընէ ընծային վրայ որ սեղանին վրայ է՝ պարտաւոր կ'ըլլայ: **19** Յիմարներ եւ կոյրեր, ո՞րը մեծ է, ընծա՞ն թէ սեղանը որ ընծան կը նուր-

15 – Նորահաւատ (եկամուտ) կը կոչուէին անոնք, որ հեթանոսութենէ դառնալով՝ մոսիսական կրօնը կ'ընդունէին. իսկ գեհեմի որդի բացատրութիւնը եբրայաբանութիւն է եւ կը նշանակէ «դժոխքի արժանի»:

րադոքսէ: **20** Ուրեմն ով որ սեղանին վրայ երդում ընէ՝ երդում կ'ընէ թէ՛ սեղանին թէ՛ անոր վրայ գտնուող բոլոր բաներուն վրայ: **21** Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ՝ կ'երդնու անոր մէջ բնակողին վրայ, **22** եւ ով որ երկինքին վրայ երդում ընէ՝ երդում րրած կ'ըլլայ Աստուծոյ լթոռին եւ այնտեղ նստողին վրայ:

23 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ անա-նուխին, սամիթին եւ չամանին տասանորդը կու տաք, եւ զանց կ'ընէք Օրէնքին ծանր պարտադրութիւնները, արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը. պէ՛տք էր այս ընել եւ միւ-սը զանց չընէ՛լ: **24** Կո՛յր առաջնորդներ, որ մօղուկները կը քամէք եւ ուղտերը կը կլլէք:

25 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ բաժա-կին եւ պնակին արտաքին մասը կը մաքրէք, մինչ ներսը լեցուն է յափշտակութեամբ եւ աղտեղութեամբ: **26** Կո՛յր փարիսեցի, նախ բաժակին եւ պնակին նե՛րսը մաքրէ, որպէսզի անոնց արտաքինն ալ մաքուր ըլլայ:

27 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ կը նմա-նիք ճերմկցած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երե-ւին, իսկ ներսը մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակ պղծութեամբ լեցուն է: **28** Նոյնպէս դուք ալ, արտաքինով արդար կ'երեւիք մարդոց, եւ ներսէն լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէ-նութեամբ:

24 – Ոչինչ ու աննշանակ բաներու կարեւորութիւն տալով՝ թեթեւ յանցանք-ներէ կը զգուշանաք. սակայն անդին կարեւորագոյններն անտես ընելով՝ առանց խիղի ընելու ահաւոր մեղքեր կը գործէք: Մօղուկը կամ մօեղը անսուրբ կենդա-նի համարուած ըլլալով՝ գինի խմելէ առաջ կը քամէք զայն, որպէս զի չըլլայ որ պատահմամբ մօղուկ մը կլլած ըլլաք եւ պղծուիք. մինչդեռ ահագին ուղտը (որուն միւսը ուտելը նմանապէս արգիւտած է), կու կու տաք առանց վարանելու:

27 – Զատկական տօնէն չորս շաբաթ առաջ հրեաները սովորութիւն ունէին իրենց գերեզմանները կիրով ծեփելու, որպէս զի ուխտաւորները հեռուէն նշմա-րելով այս անսուրբ համարուած տեղերը՝ զգուշանային անոնցմէ եւ չմօտենային անոնց:

29 Վա՛յ ձեզի, դպիրներ եւ կեղծաւոր փարիսեցիներ, որ մարգարէներու չի՛րիմները կը կառուցանէք եւ արդարներու գերեզմանները կը զարդարէք, ու կ'ըսէք. **30** Եթէ մեր հայրերուն օրերը ապրած ըլլայինք՝ մասնակից չէինք ըլլար մարգարէներու արիւնին: **31** Ուրեմն դո՛ւք իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց՝ որ կը կոտորէին մարգարէները. **32** եւ դուք ձեր հայրերուն չափը լրացուցիք:

Մօտայուտ պատուիասները

Ղկ 11, 48–51

33 Օձեր', ի՞ժերո՛ւ ձագեր, ի՞նչպէս պիտի փախչիք գեհեներն դատապարտութենէն: **34** Ասոր համար ահաւասիկ ես ձեզի կը ղրկեմ՝ մարգարէներ, իմաստուններ եւ դպիրներ, եւ անոնցմէ ոմանք պիտի սպաննէք եւ խաչ հանէք, ուրիշներ ձեր ժողովարաններուն մէջ պիտի տանջէք ու պիտի հալածէք քաղաքէ քաղաք, **35** որպէսզի ձեր վրան գայ ամբողջ արիւնը որ երկիր թափուեցաւ՝ արդար Աբէլի արիւնէն սկսեալ մինչեւ արիւնը Ջաքարիայի, Բարաքիայի որդիին, զոր սպաննեցիք տաճարին եւ սեղանին միջեւ: **36** Զճմարի՛տ կ'ըսեմ ձեզի, այս բոլորը պիտի գայ այս ազգին վրայ:

Սաստ Երուսաղէմի

Ղկ 13, 34–35

37 Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր քեզի ղրկուածները, քանի՛ անգամ ուզեցի ժողովել որդիներդ՝ ինչպէս հաւը իր ձագերը կը ժողվէ թեւերուն տակ, եւ չուզեցիք: **38** Ահա թող աւերակ մնայ ձեր տունը: **39** Բայց կ'ըսեմ ձեզի՝ թէ այսուհետեւ պիտի չտեսնէք զիս մինչեւ որ ըսէք. Օրհնեա՛լ ըլլայ այն որ կու գայ Տիրոջ անունով»:

32 – Ձեր հայրերուն գործած ոնիրներէն անհամեմատօրէն աւելի ծանր է ձեր մէկ ոնիրն առանձին, զոր պիտի գործէ՛մ մեղացնելով զիս:

Աշխարհի վախճանը

Մրկ 13, 1-4 – Ղկ 21, 5-7

24 ¹ Մինչ Յիսուս տաճարէն կ'ելլէր ու կ'երթար, աշակերտները մօտեցան անոր՝ ցոյց տալու համար տաճարին կառուցուածքը: ² Յիսուս, խօսք առնելով, ըսաւ. «Կը տեսնէ՞ք այդ ամէնը. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քար քարի վրայ պիտի չմնայ հոն որ չքանդուի»: ³ Եւ մինչ Յիսուս Զիթենեաց լեռը նստած էր, աշակերտները առանձին մօտեցան անոր եւ ըսին. «Ըսէ՛ մեզի, ե՞րբ պիտի պատահին այդ բաները եւ կամ ո՞րն է նշանը քու գալուստիդ եւ աշխարհի վախճանին»:

Սկիզբը երկու միջոցով

Մրկ 13, 5-13. Ղկ 21, 8-19

⁴ Յիսուս պատասխանեց անոնց. «Զգոյ՛ջ եղէ՛ք որ մարդ ձեզ չխաբէ. ⁵ որովհետեւ շատեր պիտի գան իմ անունովս եւ պիտի ըսեն՝ ե՛ս եմ Քրիստոսը, եւ շատերը պիտի մոլորեցնեն: ⁶ Պիտի լսէք պատերազմներ եւ պատերազմներու աղմուկներ. զգո՛յ՛ջ եղէ՛ք, չխուզվի՛ք, որովհետեւ պէտք է որ այդ բոլորը պատահի. բայց դեռ վախճանը չէ՛ այդ. ⁷ որովհետեւ ազգ ազգի դէմ պիտի ելլէ եւ թագաւորութիւն թագաւորութեան դէմ, սով ու համաճարակ պիտի ըլլայ եւ շատ մը տեղեր՝ երկրաշարժներ. ⁸ եւ սակայն այս ամէնը երկունքին սկիզբն է:

⁹ Այն ատեն, ձեզ նեղութիւններու պիտի մատնեն ու սպաննեն, եւ իմ անունիս համար պիտի ատուիք բոլոր ազգերէն: ¹⁰ Այն ատեն շատեր պիտի գայթակղին, զիրար պիտի մատնեն եւ ատեն, ¹¹ շատ մը սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ շատերը պիտի մոլո-

Գլ. 24, 10 – Պիտի ուրաման իրենց հաւատքը եւ կամ պիտի թերաման իրենց կրօնական պարտականութիւններուն մէջ. որովհետեւ պիտի չըմբռնեն թէ ինչո՛ւ Աստուած այսքան մեղութիւն ու տառապանք կրել թոյլ կու տայ իր հաւատացեալներուն, ո՛չ ալ պիտի յիշեն Քրիստոսի փաշայերիչ խրատները ու անոր կանխասացութիւնները:

ըեցնեն: **12** Եւ անօրէնութեան բազմանալէն՝ շատերուն սէրը պիտի ցամաքի: **13** Բայց ո՛վ որ մինչեւ վերջ համբերէ՝ ան պիտի փրկուի:

14 Եւ արքայութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ աշխարհին վկայութիւն ըլլալու համար բոլոր ազգերուն, եւ յետոյ պիտի գայ վախճանը:

Երուսաղէմի կործանումը

Մրկ 1, 14–23. Ղկ 21, 20–24

15 Ուստի, երբ տեսնէք աւերին պղծութիւնը որ տեղի պիտի ունենայ սուրբ տեղւոյն մէջ, ինչպէս ըսուած է Դանիէլ մարգարէին բերնով (կարդացողը թող հասկնայ), **16** այն ատեն, անոնք որ Հրէաստանի մէջ են՝ լեռները թող փախչին, **17** եւ ով որ տանիքի վրայ է՝ թող վար չիջնէ տունէն բան մը առնելու համար. **18** եւ ով որ դաշտ կը գտնուի՝ թող ետ չդառնայ իր զգեստը առնելու: **19** Բայց վա՛յ յղիններուն եւ ստնտուններուն՝ այդ օրերուն: **20** Աղօթեցէք որ ձեր փախուստը չպատահի ձմեռը եւ ոչ ալ շաբաթ օրը: **21** Որովհետեւ այն ատեն պիտի ըլլայ մեծ մեղուքիւն մը՝ որուն նմանը չէ եղած աշխարհի սկիզբէն մինչեւ այսօր եւ ոչ ալ պիտի ըլլայ: **22** Եւ եթէ այն օրերը չկրճատուէին, ո՛չ ոք պիտի ազատուէր. բայց, ընտրեալներուն պատճառով, այդ օրերը պիտի կրճատուին:

23 Այն ատեն, եթէ մէկը ձեզի ըսէ, ահաւասիկ հո՛ս է Քրիստոսը կամ հո՛ն՝ մի՛ հաւատաք: **24** Որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ մեծամեծ նշաններ ու հրաշքներ պիտի ընեն, մոլորեցնելու համար, եթէ կարելի է՝ նոյնիսկ ընտրեալները: **25** Ահա նախապէս ըսի ձեզի:

26 Ուստի, եթէ ըսեն ձեզի. Ահաւասիկ անապատին մէջ է՝ մի՛ ելլէք, եւ կամ ահա շտեմարանին մէջ է՝ մի՛ հաւատաք:

15 – «Սուրբ տեղւոյն վրայ կանգնած ակրածին պղծութիւնը» խօսքով Քրիստոս հասկցնել կ'ուզէ՝ Երուսաղէմի պաշարումի միջոցին տաճարին պղծուիլը հեթանոսներու կողմէ:

Քրիստոսի երկրորդ գալուստը

(Ղկ 17, 23-24)

27 Որովհետեւ, ինչպէս փայլակը որ արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կը տեսնուի՝ այնպէս պիտի ըլլայ Մարդու Որդիին գալուստը: **28** Որովհետեւ ուր որ դիակ կայ՝ հոն կը հաւաքուին արծիւները:

29 Այդ օրերուն, նեղութենէն անմիջապէս վերջ՝ արեգակը պիտի խաւարի, լուսինը լոյս պիտի չտայ, աստղերը երկինքէն պիտի իյնան եւ երկինքի զօրութիւնները պիտի շարժին: **30** Անկէ վերջ երկինքի վրայ պիտի տեսնուի Մարդու Որդիին նշանը. եւ այն ատեն երկրիս բոլոր ազգերը պիտի լան ու պիտի տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայէն, զօրութեամբ եւ չքեղ փառքով: **31** Ան պիտի զրկէ իր հրեշտակները մեծածայն փողով, որ պիտի ժողվեն իր ընտրեալները չորս ծագերէն՝ երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը:

Թգեմիին առակը

Ղկ 21, 29-33

32 Թգեմիէն օրինակ առէք. երբ ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ դիտէք թէ մօտ է ամառը: **33** Նոյնպէս դուք ալ, երբ այս բոլորը տեսնէք՝ դիտցէք որ ան դռներուն մօտ է: **34** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս սերունդը պիտի չանցնի՝ մինչեւ որ այս բոլորը կատարուի: **35** Երկինքն ու երկիրը պիտի անցնին՝ բայց իմ խօսքերս պիտի չանցնին: **36** Սակայն այդ օրուան եւ ժամուն մա-

28 – Երբ աշխարհ այլեւս հասունցած ըլլայ դատաստանի օրուան, տիեզերքի դատաւորը պիտի գայ այնպէս արագ ու յանկարծակի, ինչպէս գիշակեր թռչուններ՝ արծիւները, անգղները կը խոյանան, երբ անոնք դիակի (գէշի) մը հոտը կ'առնեն հեռուէն:

36 – Աստուածային երեք անձերը հաւասարապէս ունին ամէն բան, ինչ որ աստուածային իմաստութեան յատուկ է. ապա ուրեմն նաեւ աստուածային կանխագիտութիւն: Աստուծոյ միայն ծանօթ է այդ օրը: Հետեւաբար Որդին եւ Սուրբ Հոգին անմասն չեն այդ գիտութեան: Քրիստոս՝ նաեւ իբր մարդ, գիտէր զայն, սակայն այդ գիտութիւնն իր անձին համար էր, ո՛չ թէ այն պաշտօնին՝ որով զրկուած էր մարդկութեան:

սին՝ ո՛չ ոք գիտէ, ո՛չ երկինքի հրեշտակները ո՛չ ալ Որդին, այլ՝ Հայրը միայն:

Հսկեցե՛ք եւ արթուն կեցե՛ք

Ղկ 17, 34–35

37 Բայց, ինչպէս պատահեցաւ Նոյի օրերուն, այնպէս ալ պիտի ըլլայ Մարդու Որդիին գալուստը: **38** Որովհետեւ, ինչպէս ջրհեղեղի նախորդ օրերուն կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին եւ հարս կ'երթային, մինչեւ այն օրը երբ Նոյ տապանը մտաւ, **39** եւ բան մը չգիտցան մինչեւ որ ջրհեղեղը եկաւ եւ ամէնքը տարաւ. ա՛յնպէս պիտի ըլլայ Մարդու Որդիին գալուստը: **40** Այն ատեն, եթէ արտին մէջ երկու հոգի ըլլան՝ մէկը պիտի առնուի, միւսը պիտի թողուի, **41** եւ երբ երկու հոգի մէկ ջաղացքի մէջ աղան՝ մէկը պիտի առնուի եւ միւսը թողուի:

42 Ուստի արթուն կեցէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր թէ ո՛ր ժամուն կու գայ ձեր Տէրը: **43** Բայց ա՛յս գիտցէ՛ք. եթէ տանտէրը գիտնար թէ ո՛ր պահուն գող պիտի գայ, կը հսկէր եւ չէր թողուր որ տան պատը ծակեն: **44** Ասոր համար, դո՛ւք ալ պատրաստ եղէ՛ք, որովհետեւ ձեր չսպասած ժամուն կու գայ Մարդու Որդին:

Գործակալին առակը

Ղկ 12, 42–46

45 Իսկ ո՞վ է այն հաւատարիմ եւ իմաստուն ծառան, զոր տէրը դրած է տնեցիներուն վրայ որպէսզի ատենին կերակուր տայ անոնց: **46** Երանի՛ այն ծառային զոր տէրը իր դարձին այնպէս ըրած կը գտնէ. **47** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ զայն իր բոլոր ունեցածներուն վրայ պիտի կարգէ: **48** Բայց եթէ չար է այդ ծառան իր սրտին մէջ ըսէ՛՝ **49** Տէրս կ'ուշանայ գալու, եւ սկսի իր ծառայակիցները ծեծել եւ գինովներու հետ ուտել ու խմել, **50** այդ ծառային տէրը վրան պիտի հասնի չսպասած օրը եւ չկարծած ժամուն, **51** եւ զինքը մէջքէն երկուքի պիտի բաժնէ եւ կեղծաւորներու հետ պիտի դնէ անոր բաժինը. հոն պիտի ըլլայ լաց ու աղաւանդու կրճատում:

Տասը կոյսերու առակը

Ղկ 12, 35-38

25 **1** Այն ատեն երկինքի արքայութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերներն առած՝ փեսան ու հարսը դիմաւորելու գացին:

2 Անոնցմէ հինգը յիմար էին եւ հինգը իմաստուն: **3** Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ ձէթ չառին: **4** Իսկ իմաստունները իրենց լապտերներուն հետ՝ ամաններով ձէթ առին: **5** Երբ փեսան ուշացաւ, ամէնքն ալ նիդհեցին եւ քնացան: **6** Կէս գիշերին ձայն մը լսուեցաւ. «Հա՛, փեսան կու գայ, ելէ՛ք դիմաւորելու գայն»: **7** Այն ատեն բոլոր կոյսերն ալ ելան եւ պատրաստեցին իրենց լապտերները: **8** Յիմարները ըսին իմաստուններուն. «Ձեր իւղէն մեզի՛ տուէ՛ք, որովհետեւ ահա մեր լապտերները պիտի մարին»: **9** Բայց իմաստունները պատասխանեցին. «Գուցէ մեզի եւ ձեզի չբաւէ, ուստի վաճառականներուն գացէ՛ք եւ գնեցէ՛ք ձեզի համար: **10** Երբ անոնք գնելու գացին՝ եկաւ փեսան, եւ պատրաստ եղողները անոր հետ հարսանիքի մտան, եւ դուռը փակուեցաւ: **11** Յետոյ միւս կոյսերը եկան եւ ըսին. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզի: **12** Բայց անիկա պատասխանեց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ չեմ ճանչնար ձեզ: **13** Արթուն կեցէ՛ք ուրեմն, որովհետեւ ո՛չ օրը եւ ո՛չ ժամը գիտէ՛ք:

Գլ. 25, 1 – Բոլոր հաւատացեալները մկրտութեամբ ու ապաշխարութեամբ սրբարար շնորհիւ կը ստանան, որպէս զի անոր լոյսովը լուսաւորուած ու զարդարուած Փրկիչը դիմաւորելու ելլեն եւ սպասեն անոր գալուստին: Անոնք որ իրենց հոգիին մէջ կը կրեն երկնային այս լոյսը՝ պիտի մտնեն Գառնուկին հարսանիքը: Բայց եթէ վերջին ժամուն այդ լոյսը իրենց հոգիին մէջ մարած ըլլայ՝ ստիպուած պիտի ըլլան լսել Տիրոջ բերնէն՝ «Ձեմ ճանչնար ձեզ» ահաւոր խօսքը:

9 – Այն օրը ոչ ոք կարող է օգնել ուրիշի. որովհետեւ այլեւս անհնար է քարի գործ ընել, այլ պէտք է հաշիւը տալ անցեալ կեանքի մէջ գործուած գործերու:

12 – Աստուած զանոնք միայն կը ճանչնայ, (եւ անոնց միայն կը հաճի), որոնք սրբարար շնորհիւ մէջ գտնուելով՝ նմանող են եւ բարեկամներ Քրիստոսի:

Քանգարներու առակը

14 Ինչպէս որ մարդ մը, օտար աշխարհ մեկնելու ատեն, կը կանչէ իր ծառաները եւ անոնց կը յանձնէ իր ինչքերը: 15 մէկուն կու տայ հինգ քանքար, միւսին՝ երկու, իսկ ուրիշի մը՝ մէկ, իւրաքանչիւրին իր կարողութեան չափով, եւ կ'երթայ: 16 Հինգ քանքարները առնողը՝ իսկոյն կ'երթայ եւ կը շահագործէ զանոնք, եւ ուրիշ հինգ քանքարներ ալ կը շահի: 17 Նոյնպէս երկու հատ առնողը՝ ուրիշ երկու հատ ալ կը շահի: 18 Իսկ մէկ հատ առնողը՝ կ'երթայ գետինը կը փորէ եւ տիրոջ դրամը կը թաղէ: 19 Երկար ժամանակ ետք, ծառաներուն տէրը կու գայ եւ հաշիւ կը պահանջէ անոնցմէ: 20 Հինգ քանքարներ առնողը կը ներկայանայ ուրիշ հինգ քանքարներ ալ բերելով, եւ կ'ըսէ. Տէ՛ր, ինծի հինգ քանքարներ տուիր, ահաւասիկ ուրիշ հինգ քանքարներ ալ անոնց վրայ շահեցայ: 21 Տէրը կ'ըսէ անոր. Ապրի՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ, քանի որ քիչին մէջ հաւատարիմ ես, շատին վրայ պիտի դնեմ քեզ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ: 22 Կու գայ նաեւ երկու քանքարներ առնողը եւ կ'ըսէ. Տէ՛ր, ինծի երկու քանքարներ յանձնեցիր, ահաւասիկ ուրիշ երկու քանքարներ ալ շահեցայ անոնց վրայ: 23 Տէրը կը պատասխանէ. Ապրի՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ, քանի որ քիչին մէջ հաւատարիմ ես, շատին վրայ պիտի դնեմ քեզ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ: 24 Մէկ քանքար առնողն ալ մօտենալով, կ'ըսէ. Տէ՛ր, գիտէի որ խիստ մարդ ես դուն, կը հնձես ուր չես սերմանած եւ կը ժողվես ուր չես սփռած: 25 Վախցայ, գացի եւ քանքարդ պահեցի հողին տակ. ահաւասիկ քուկդ քեզի: 26 Տէրը կը պատասխանէ. Չար եւ ծոյլ ծառայ, եթէ գիտէիր որ ես չսերմանած տեղէս կը հնձեմ եւ չսփռած տեղէս կը հաւաքեմ,

15 – Քանգար (տաղանթ), մերձաւորապէս 5000 ֆր.: Քանգարներով կը բացատրուին հոս հոգոյ զօրութիւնները, երկրաւոր բարիքները, եւն: Քանգարներու զանազան քանակութիւնը կը նշանակէ մարդուն ազատութիւնը: Իսկ բացակայութեան տեղադրութիւնը այն ժամանակամիջոցն է, զոր Աստուած կը շնորհէ մեզի այս երկրաւոր կեանքին համար: Հեռաւոր երկիր մեկնող մարդը կը ներկայացնէ Քրիստոսը, որ իր Հօր բով գնաց, ուրկէ սակայն դարձեալ պիտի գայ աշխարհի վախճանին, մարդիկը դատելու:

27 պէտք էր դրամս սեղանաւորներուն տալիր, եւ ես կու գայի տոկոսով կը պահանջէի իմս: 28 Ուստի առէ՛ք ատկէ՛ այդ քանքարը եւ տուէ՛ք անոր՝ որ տասը քանքար ունի: 29 Որովհետեւ ունեցողին պիտի տրուի եւ այդ՝ աւելիով: Իսկ չունեցողէն՝ ունեցածն ալ պիտի առնուի: 30 Եւ այս անպիտան ծառան նետեցէ՛ք արտաքին խաւարին մէջ, ուր պիտի ըլլայ լաց եւ ակուաներու կրճատում:

Վերջին դատաստանը

31 Արդ, երբ Մարդու Որդին գայ իր փառքով եւ բոլոր հրեշտակներով, այն ատեն պիտի նստի իր փառքի աթոռին վրայ, 32 եւ իր առջեւ պիտի հաւաքուին բոլոր ազգերը: զանոնք պիտի գատէ իրարմէ՝ ինչպէս հովիւր կը գատէ ոչխարները այծերէն: 33 ոչխարները իր աջ կողմը պիտի կեցնէ, իսկ այծերը՝ ձախ կողմը: 34 Այն ատեն թագաւորը պիտի ըսէ իր աջ կողմը եղողներուն. Եկէ՛ք, իմ Հօրս օրհնեալները, ժառանգեցէ՛ք արքայութիւնը որ ձեզի համար պատրաստուած է աշխարհիս սկիզբէն: 35 Որովհետեւ ես անօթեցայ եւ ինծի ուտելիք տուիք, ծարաւցայ եւ ինծի ջուր տուիք, օտար էի եւ զիս հիւրընկալեցիք, 36 մերկ էի եւ հագուստ տուիք ինծի, հիւանդ էի եւ այցելութեան եկաք ինծի, բանտն էի եւ եկաք տեսնելու զիս: 37 Այն ատեն արդարները պիտի պատասխանեն անոր եւ ըսեն. 38 Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ անօթի եւ կերակրեցինք, կամ ծարաւի՝ եւ ջուր տուինք. 39 ե՞րբ տեսանք քեզ օտար՝ եւ հիւրընկալեցինք, կամ մերկ՝ եւ զգեստ տուինք. ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտը եւ այցելութեան եկանք քեզի: 40 Եւ թագաւորը պիտի պատասխանէ անոնց եւ ըսէ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քանի որ այս ամէնը փոքրիկ եղբայրներէս մէկուն ըրիք՝ ինծի ըրիք: 41 Այն ատեն պիտի ըսէ ձախ կողմը եղողներուն. Հեռացէ՛ք ինծմէ, անիծ-

29 – Այն որ Աստուծմէ իրեն շնորհուած քանքարը հաւատարմութեամբ կը գործածէ, այնպիսին աւելին կ'ընդունի. իսկ այն որ իր ընդունած քիչ քանքարը կամ շնորհքը չի գործածած, այնպիսին իր ունեցածն ալ կը կորսնցնէ:

36 – Փրկիչը հոս յառաջ կը բերէ կարգ մը բարի գործեր, ընտրելով զանոնք սիրոյ գործերուն մէջէն. որովհետեւ իր նշմարիտ աշակերտներն այդ առաքիլ-նութիւններով է որ կը նանչցուին:

եալներ, գացէ՛ք յաւիտենական կրակին մէջ, որ պատրաստուած է սատանային եւ անոր հրեշտակներուն: **42** Որովհետեւ ես անօթեցայ եւ ինծի ուտելիք չտուիք, ծարաւցայ եւ ջուր չտուիք, **43** պանդուխտ էի եւ զիս ներս չառիք, մերկ էի եւ հագուստ չտուիք ինծի, հիւանդ էի եւ բանտին մէջ՝ եւ զիս տեսնելու չեկաք: **44** Այն ատեն անոնք ալ պիտի պատասխանեն ու ըսեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ անօթի կամ ծարաւի կամ պանդուխտ կամ մերկ կամ հիւանդ կամ բանտը եւ քեզ չհոգացիրք: **45** Այն ատեն պիտի պատասխանէ անոնց եւ ըսէ. **Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քանի որ այս բաները չըրիք այս փոքրիկներէն մէկուն՝ եւ ոչ ալ ինծի ըրիք: 46** Եւ անոնք պիտի երթան յաւիտենական տանջանքներուն մէջ, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքին մէջ»:

Քահանայապետներուն դաւադրութիւնը

Մրկ 14, 1-2. Դկ 22, 1-2

26 **1** Երբ Յիսուս վերջացուց բոլոր այս խօսքերը՝ աշակերտներուն ըսաւ. **2** «Գիտէ՞ք, երկու օրէն **Ձատիկ** է եւ **Մարդու Որդին** պիտի մատնուի՝ խաչուելու համար»: **3** Այն ատեն քահանայապետները, դպիրները եւ ժողովուրդին ծերերը հաւաքուեցան **Կայիափա** կոչուած քահանայապետին սրահին մէջ. **4** եւ համաձայն գտնուեցան որ նենգութեամբ բռնեն **Յիսուսը** եւ սպաննեն զայն: **5** Բայց կ'ըսէին՝ ո՛չ այս տօնին ատեն, որպէսզի ժողովուրդին մէջ խռովութիւն չելլէ:

Բեթանիայի ընթրիքը

Մրկ 14, 3-9. Յովհ 12, 1-8

6 Երբ Յիսուս Բեթանիա կը գտնուէր, բորոտ Սիմոնն տունը, **7** անոր մօտեցաւ կին մը որ թանկագին իւղի շիշ մը ունէր. իւղը անոր գլխուն վրայ թափեց, մինչ ան սեղանի նստած էր: **8** Երբ աշակերտները տեսան՝ բարկացան եւ ըսին. «Ի՞նչ բանի համար է

այդ իւղին վատնուամբ. **9** որովհետեւ կարելի էր ատիկա սուղ գնով ծախել եւ աղքատներուն տալ»: **10** Յիսուս իմացաւ եւ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ կը նեղէք այդ կինը, բարի գործ մը կատարեց ան ինծի համար. **11** որովհետեւ աղքատները ամէն ատեն ձեր հետն ունիք, բայց զիս միշտ ձեր հետը պիտի չուենաք: **12** Որովհետեւ այդ իւղը մարմինիս վրայ թափելով՝ ան թաղումս նշանակեց: **13** Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ բոլոր աշխարի մէջ, ուր ալ քարոզուի այս Աւետարանը՝ անոր ըրածն ալ պիտի պատմուի իր յիշատակին համար»:

Մատնութեան գինը

Մրկ 14, 10-11. Ղկ 22, 3-6

14 Այն ատեն տասներկուքէն մէկը, Յուդա Իսկարիովտացի կոչուած, գնաց քահանայապետներուն եւ ըսաւ. «Ի՞նչ կ'ուզէք տալ ինծի որ զինքը ձեզի մատնեմ»: **15** Անոնք երեսուն արծաթ համբեցին անոր: **16** Եւ անկէ ետք՝ յարմար առիթ կը փնտռէր, որ պէսզի Յիսուսը անոնց մատնէ:

Վերջին ընթրիքը

Մրկ 14, 12-16. Ղկ 22, 7-13

17 Բաղարջակերքի առաջին օրը՝ աշակերտները Յիսուսի մօտեցան եւ հարցուցին. «Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք քեզի զատկական ընթրիքը»: **18** Յիսուս պատասխանեց. «Գացէ՛ք քաղաք, այս անունով մարդուն, եւ ըսէք անոր. Վարդապետը կ'ըսէ թէ ժա-

15 – Նրեսուն արծաթը հաւասար էր 30 սիկլի: Սիկլը կ'արժէր չորս դահեկան: Գերիի մը գինն էր այս (Ելք 21, 32): Յովսէփ նոյն գնով ծախուած էր Իսմայելացի վաճառականներուն:

17 – Բաղարջակերքը Հրեաներուն անխմոր հաց ուտելու ժամանակն է, որ Նիսան ամսոյն 14-էն՝ Զատիկի նախօրեակէն սկսելով, մինչեւ նոյն ամսոյն 21-ը կը տեւէ: – Գրաբար Աւետարանի «ուտել զգատիկ» բացատրութիւնը՝ «զատկական գառնուկը ուտել» կը նշանակէ:

18 – Տանտէրը Յիսուսի աշակերտներէն մէկն էր:

մանակս մօտեցեր է, քու տանդ մէջ պիտի կատարեմ զատիկը աշակերտներուս հետ»։ **19** Աշակերտները կատարեցին ինչպէս որ հրամայած էր իրենց Յիսուս, եւ պատրաստեցին զատիկը։

20 Երբ իրիկուն եղաւ, տասներկու աշակերտներուն հետ սեղանի նստաւ։ **21** Եւ մինչ անոնք կ'ուտէին, ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»։ **22** Շատ տրտմեցան, եւ անոնցմէ իւրաքանչիւրը սկսաւ հարցնել Յիսուսին. Միթէ ե՞ս եմ, Տէր։ **23** Յիսուս պատասխանեց. «Ով որ ձեռքը ինծի հետ պնակին մէջ մխեց՝ ան է որ պիտի մատնէ զիս»։ **24** Մարդու Որդին կ'երթայ, ինչպէս որ գրուած է իր մասին. բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով Մարդու Որդին պիտի մատնուի. լա՛ւ էր այն մարդուն համար որ ծնած չըլլար»։ **25** Յուդա, որ զինքը պիտի մատնէր՝ հարցուց. «Միթէ ե՞ս եմ, Վարդապետ»։ «Դուն ըսիր», պատասխանեց Յիսուս։

Ս. Հաղորդութեան հաստատութիւնը

Մրկ 14, 22-25. Ղկ 22, 18-20

26 Եւ մինչ կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց, բեկանեց եւ աշակերտներուն տուաւ՝ ըսելով. «Առէ՛ք, կերէ՛ք. ա՛յս է իմ մարմինս»։ **27** Եւ բաժակն առնելով՝ գոհուիլուն յայտնեց եւ անոնց տուաւ, ըսելով. «Խմեցէ՛ք ասկէ ամէնքդ. **28** որովհետեւ ա՛յս է նոր ուխտի իմ արիւնս, որ շատերու համար կը հեղու, մեղքերու թողութեան համար։ **29** Բայց կ'ըսեմ ձեզի, ասկէ վերջ պիտի չխմեմ որթատունկի բերքէն, մինչեւ այն օրը ուր նորը պիտի խմեմ ձեզի հետ Հօրս արքայութեան մէջ»։

30 Եւ օրհնեցին ու ելան Ձիթենեաց լեռը։

29 – Յիսուս իր աշակերտներուն հետ որթատունկի բերքէն դարձեալ պիտի խմէ երկինքը, իր Հօր թագաւորութեան մէջ։ Հոն սակայն նոր գինի պիտի բաշխուի, այսինքն՝ երկնաւոր երանութիւնը։

30 – Զատկական ընթրիքը սաղմոսերգութեամբ կը վերջանար միշտ։

Աշակերտները կը լքեն Յիսուսը

Մրկ 14, 26-31. Ղկ 22, 31-34

31 Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Դուք ամէնքդ այս գիշեր իմ պատճառովս պիտի գայթակղիք, որովհետեւ գրուած է. Պիտի հարուածեմ հովիւը եւ հօտին ոչխարները պիտի ցրուին: **32** Բայց յարութիւն առնելէս վերջ՝ ձեզմէ առաջ պիտի երթամ Գալիլեա»:

33 Պետրոս պատասխանեց եւ ըսաւ. «Եթէ նոյնիսկ ամէնքդ գայթակղին՝ սակայն ես երբեք պիտի չգայթակղիմ»:

34 Յիսուս ըսաւ անոր. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, այս գիշեր իսկ, աքաղաղը չերգած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»:

35 «Նոյնիսկ եթէ հարկ ըլլայ քեզի համար մեռնիլ՝ պիտի չուրանամ քեզ», պատասխանեց Պետրոս: Նոյնպէս կ'ըսէին բոլոր աշակերտները:

Յիսուս Գեթսեմանիի մէջ

Մրկ 14, 32-42. Ղկ 22, 40-46

36 Այն ատեն Յիսուս անոնց հետ եկաւ տեղ մը որու անունն էր Գեթսեմանի. եւ ըսաւ աշակերտներուն. «Դուք հո'ս նստեցէք, մինչեւ որ ես երթամ ու աղօթեմ»:

37 Եւ հետն առնելով Պետրոսը եւ Զեբեդէոսի երկու որդիները, սկսաւ տրտմիլ ու տագնապիլ:

38 Այն ատեն ըսաւ անոնց. «Տրտում է հոգիս մեռնելու աստիճան. հոս կեցէք եւ հսկեցէք ինծի հետ»:

39 Եւ քիչ մը յառաջ երթալով՝ երեսի վրայ ինկաւ, աղօթեց եւ ըսաւ. «Հայր, եթէ կարելի է՝ այս բաժակը թող ինծմէ հեռանայ. բայց ո'չ ինչպէս ե'ս կ'ուզեմ, այլ ինչպէս դուն»:

40 Աշակերտներուն քով եկաւ եւ զանոնք քունի մէջ գտաւ. եւ ըսաւ Պետրոսին. «Այսպէս, ժա'մ մը իսկ չկրցա՞ք ինծի հետ արթուն մնալ. **41** արթո՛ւն կեցէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք. հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»:

42 Դարձեալ երկրորդ անգամ զնաց Յիսուս, աղօթեց ու ըսաւ. «Հայր իմ, եթէ անկարելի է որ այս բաժակը հեռանայ ինծմէ առանց որ խմեմ զայն՝ քոն կա'մքդ թող ըլլայ»:

43 Եկաւ, դարձեալ քունի մէջ գտաւ զանոնք, որովհետեւ անոնց աչքերը ծանրացած էին: **44** Թողուց զանոնք եւ զնաց երրորդ անգամ աղօթելու, դարձեալ միեւնոյն խօսքը ըսելով: **45** Յետոյ աշակերտներուն քով

գալով՝ ըսաւ անոնց. «Քնացէ՛ք ասկէ ետք եւ հանգչեցէ՛ք, որովհետեւ հասած է ահա ժամը եւ Մարդու Որդին կը մատնուի մեղաւորներուն ձեռքը: **46** Ելէ՛ք, երթա՛նք ասկէ, որովհետեւ զիս մատնողը հասաւ ահա»:

Յիսուսի ձերբակալութիւնը

Մրկ 14, 43-52. Ղկ 22, 47-52

47 Եւ մինչ այս խօսքերը կ'ըսէր, ահա Յուդա, տասներկուքէն մէկը, եկաւ, եւ իրեն հետ մեծ ամբոխ մը, սուրերով եւ գաւազաններով՝ քահանայապետներէն ու ժողովուրդին ծերերէն ղրկուած: **48** Իսկ մատնիչը անոնց նշան տուած էր եւ ըսած. «Որուն հետ որ համբուրուիմ՝ ա՛ն է, անիկա բռնեցէ՛ք»: **49** Եւ իսկոյն Յիսուսին մօտենալով, ըսաւ. «Ողջո՛յն, Վարդապետ». եւ համբուրեց զանիկա: **50** Յիսուս ըսաւ անոր. «Ընկե՛ր, ինչո՞ւ համար եկար»: Այն ատեն, մօտեցան անոնք եւ յարձակեցան Յիսուսի վրայ եւ ձերբակալեցին զայն: **51** Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկարեց եւ սուրը հանելով զարկաւ քահանայապետին ծառային ու կտրեց անոր աւանջը: **52** Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Սուրդ տե՛ղը դիր, որովհետեւ անոնք որ սուր կ'առնեն սուրով կ'իյնան: **53** Կը կարծես թէ ես չե՞մ կրնար Հօրս աղաչել որ հիմա հոս ինծի ղրկէ աւելի քան տասներկու գունդ հրեշտակներ: **54** Բայց ինչպէ՞ս պիտի կատարուի Գիրքը եթէ այս այսպէս չըլլայ»: **55** Այն ատեն Յիսուս, ամբոխին դառնալով, ըսաւ. «Ի՛նչ, աւագակի՞ վրայ ելած էք սուրերով ու բիրերով բռնելու զիս: Ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի եւ կը սորվեցնէի եւ չբռնեցիք զիս»: **56** Բայց այս ամէնը եղաւ որպէսզի մարգարէներուն գրածները կատարուին: Այն ատեն բոլոր աշակերտները թողուցին զինքը եւ փախան:

Յիսուս Կայիափայի առջեւ

Մրկ 14, 33-65. Ղկ 22, 54-55, 66-71

57 Իսկ անոնք, Յիսուսը բռնելով, տարին Կայիափա քահանայապետին մօտ, ուր դպիրներն ու ծերերը հաւաքուած էին: **58** Իսկ Պետրոս հեռուէն կը հետեւէր անոր, մինչեւ քահանայապետին գա-

ւիթը, ու ներս մտնելով, սպասաւորներուն հետ նստաւ, տեսնելու համար թէ ինչ պիտի ըլլար ասոր վերջը:

59 Իսկ քահանայապետները եւ բոլոր ատեանը Յիսուսի դէմ սուտ վկայութիւններ կը փնտռէին, որպէսզի սպաննեն զանիկա. **60** բայց չէին գտներ, թէ եւ շատ մը սուտ վկաներ ներկայացան: **61** Յետոյ երկու սուտ վկաներ եկան եւ ըսին. ասիկա կ'ըսէր թէ կրնամ Աստուծոյ տաճարը քակել եւ երեք օրէն շինել: **62** Քահանայապետը, ոտքի ելլելով, ըսաւ անոր. «Պատասխան չե՞ս տար, ի՞նչ ամբաստանութիւններ կ'ընեն ասոնք քեզի դէմ»: Եւ Յիսուս լուռ կը կենար: **63** Քահանայապետը ըսաւ. «Կենդանի Աստուծոյ անունով կ'երգուընցնեմ քեզ, ըսէ՛ մեզի թէ դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին»: **64** Յիսուս պատասխանեց, «Դո՛ւն ըսիր. բայց կ'ըսեմ ձեզի՝ ասկէ վերջ դուք պիտի տեսնէք Մարդու Որդին, նստած Ամենագործին աջ կողմը, որ պիտի գայ երկինքի ամպերուն վրայ»: **65** Այն ատեն, քահանայապետը պատուեց իր զգեստները եւ ըսաւ. «Հայհոյե՛ց. ալ ի՞նչ հարկ վկաներու. ահա հի՛մա լսեցիք ասոր հայհոյութիւնը: **66** Ի՞նչ կը թուի ձեզի»: «Մահապա՛րտ է», պատասխանեցին անոնք:

67 Այն ատեն թքին անոր երեսը եւ բռունցքով հարուածեցին եւ ոմանք, ապտակելով կ'ըսէին: **68** «Մարգարէացի՛ր մեզի, Քրիստո՛ս, ո՞վ է քեզի զարնողը»:

Պետրոսի ուրացութիւնը

69 Իսկ Պետրոս, դուրսը գաւիթին մէջ նստած էր. աղախին մը մօտեցաւ եւ ըսաւ անոր. «Դո՛ւն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր»: **70** Անիկա ամէնուն առջեւ ուրացաւ եւ ըսաւ. «Ձեմ գիտեր ի՛նչ կ'ըսես դուն»: **71** Եւ երբ Պետրոս դռնէն դուրս ելաւ՝ ուրիշ աղախին մը տեսաւ զինքը եւ հոն կեցողներուն ըսաւ. «Ա՛ս ալ Նազովրեցի Յիսուսին հետ էր»: **72** Պետրոս դարձեալ երգումով ուրացաւ,

64 – Յիսուս՝ նստած Հօր Աստուծոյ աջակողմը, պիտի գայ աշխարհի կատարածին, իբր դատաւոր՝ դատելու իր թշնամիները:

ըսելով. «Ես չե՛մ ճանչնար այդ մարդը»: **73** Քիչ ետք, հոն եղողները, մօտենալով Պետրոսին՝ ըսին. «Ստուգիւ դո՛ւն ալ անոնցմէ ես, որովհետեւ խօսուածքէդ յայտնի է ով ըլլալդ»: **74** Այն ատեն ան սկսաւ նզովել ու երդում ընել՝ թէ այդ մարդը չե՛մ ճանչնար. եւ իսկոյն աքաղաղը խօսեցաւ: **75** Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը՝ թէ հազի՛ւ աքաղաղը խօսի, դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս: Ու դուրս ելլելով՝ դառնապէս լացաւ:

Յուդա անձնասպան կ'ըլլայ

27 **1** Երբ առաւօտ եղաւ, բոլոր քահանայապետները եւ ժողովուրդին ծերերը խորհուրդ ըրին Յիսուսի դէմ՝ որ սպաննեն զինքը: **2** Կապեցին զայն ու առին տարին, Պոնտացի Պիղատոս կուսակալին ձեռքը յանձնեցին:

3 Այն ատեն Յուդա, որ Յիսուսը մատնեց, տեսնելով թէ Յիսուս դատապարտուեցաւ, զղջաց եւ երեսուն արծաթը քահանայապետներուն ու ժողովուրդի ծերերուն դարձուց եւ ըսաւ. **4** «Մեղանչեցի, որովհետեւ արդար արիւնը մատնեցի»: Բայց անոնք ըսին. **5** «Մեր հոգը չէ, այդ քու գիտնալիքդ է»: Եւ ան, արծաթը տաճարին մէջ նետելով, ելաւ գնաց ու ինքզինքը կախեց: **6** Իսկ քահանայապետները, արծաթը առնելով, ըսին. «Ներելի չէ որ գանձարանին մէջ պահենք ասիկա, որովհետեւ արիւնի զին է»: **7** Եւ խորհրդակցելով՝ բրուտի ագարակը գնեցին անով, օտարներու գերեզման շինելու համար: **8** Ասոր համար, այդ ագարակը Արիւնի Ագարակ կը կոչուի մինչեւ այսօր: **9** Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին բերնով ըսուածը. «Եւ առին երեսուն արծաթ դրամը, գինը անոր՝ որ ծախեցաւ, Իսրայէլի որդիներուն գնահատումին համաձայն, **10** եւ տուին բրուտի ագարակին, ինչպէս որ Տէրը հրամայեց ինծի»:

Յիսուս Պիղատոսին առջեւ

Մրկ 15, 2-15. Ղկ 23, 13-25

11 Յիսուս դատաւորին առջեւ ելաւ. դատաւորը հարցուց անոր.

«Դո՞ւն ես Հրեաներուն թագաւորը»: Յիսուս պատասխանեց. «Դո՞ւն կ'ըսես»: **12** Իսկ քահանայապետներու եւ ծերերու ամբաստանութիւններուն դիմաց՝ ոչ մէկ պատասխան չտուաւ: **13** Այն ատեն Պիղատոս ըսաւ. «Չե՞ս լսեր որ ասոնք ո'րչափ քեզի դէմ կը վկայեն»: **14** Յիսուս չպատասխանեց եւ ոչ ալ խօսք մը ըսաւ, այն աստիճան՝ որ դատաւորը շատ զարմացաւ:

15 Բայց տօնին առիթով, դատաւորը սովոր էր ժողովուրդին ուզած բանտարկեալը արձակել: **16** Այն ժամանակ նշանաւոր բանտարկեալ մը ունէին, որուն անունն էր Յեսու Բարաբբա: **17** Երբ անոնք հաւաքուեցան, Պիղատոս հարցուց անոնց. «Այս երկուքէն ո՞ր մէկը կ'ուզէք որ արձակեմ ձեզի, Յեսու Բարաբբա՞ն՝ թէ Յիսուսը, զոր Քրիստոս կը կոչեն»: **18** Որովհետեւ գիտէր թէ նախանձ է դրդուած մատնած էին զանիկա:

19 Եւ մինչ ան ատեանը նստած էր, իր կինը մարդ զրկեց եւ ըսաւ. «Այդ արդարին հետ գործ մի՛ ունենար, որովհետեւ անոր պատճառով ես այսօր երազիս մէջ շատ տառապեցայ»:

20 Իսկ քահանայապետները եւ ծերերը համոզեցին ժողովուրդը որ Բարաբբան խնդրեն եւ Յիսուսը մեղցնել տան: **21** Դատաւորը հարցում ուղղելով ըսաւ. «Այս երկուքէն ո՞ր մէկը կ'ուզէք որ արձակեմ ձեզի»: «Բարաբբա՛ն», պատասխանեցին անոնք: **22** «Իսկ ի՞նչ ընեմ Յիսուսը, որ Քրիստոս կը կոչուի», հարցուց Պիղատոս: «Թող խաչուի», պատասխանեցին ամէնքը: **23** «Ի՞նչ չար գործ ըրած է», հարցուց դատաւորը: Անոնք աւելի՛ եւս կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Թող խաչուի»: **24** Պիղատոս, տեսնելով որ օգուտ չունի, այլ՝ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առնելով՝ ձեռքերը լուաց ժողովուրդին առջեւ, եւ ըսաւ. Ես անպարտ եմ այդ արդարին արիւնէն, ձեր գիտնալիքն է»: **25** Բոլոր ժողովուրդը պատասխանեց եւ ըսաւ. «Անոր արիւնը մեր եւ մեր որդիներուն վրայ»: **26** Այն ատեն Պիղատոս արձակեց անոնց Բարաբբան եւ Յիսուսը ձաղկել տալէ ետք՝ անոնց ձեռքը յանձնեց որպէսզի խաչուի:

Յիսուս գիմուորներէն կը ծաղրուի

Մրկ 15, 16–20. Յովհ 19, 2–3

27 Այն ատեն դատաւորին զինուորները Յիսուսը ապարանք տարին եւ բոլոր գունդը անոր վրան հաւաքեցին. 28 զայն մերկացուցին եւ անոր վրան կարմիր քղամիդ մը նետեցին, 29 եւ փուշէ պսակ մը հիւսելով՝ անոր գլխուն դրին եւ աջ ձեռքն ալ եղէգ մը տուին. անոր առջեւը կը ծնրադրէին եւ ծաղրելով կ'ըսէին. «Ողջո՛յն քեզի, Հրեաներո՛ւ թագաւոր»: **30 Եւ թքնելով անոր երեսին՝ եղէգը կ'առնէին եւ գլուխը կը հարուածէին:** **31 Եւ ծաղրելէ ետք՝ քղամիդը վրայէն հանեցին, իր զգեստները հագցուցին ու տարին խաչ հանելու:**

Խաչին անապարհը

Մրկ 15, 21–27. Ղկ 23, 26–34

32 Երբ դուրս ելան՝ Սիմոն անունով Կիւրենացի մարդ մը գտան եւ ստիպեցին որ Յիսուսի խաչը տանի: **33 Երբ հասան այն տեղը որ Գողգոթա կը կոչուէր, որ կը նշանակէ գանկի տեղ, 34 լեղիով խառն գինի տուին Յիսուսի որ խմէ. բայց ան, երբ ճաշակեց՝ չուզեց խմել:**

Յիսուսի խաչելութիւնը

Մրկ 15, 21–27. Ղկ 23, 26–34

35 Երբ խաչեցին զինքը, վիճակ ձգելով բաժնեցին զգեստները,

Գլ. 27, 27 – Հռոմայեցի կուսակալը, Երուսաղէմ գտնուած միջոցին, դատաստանական ապարանքը (praetorium) կը բնակէր, ուր նաեւ կը վարէր իր դատաւորի իշխանութիւնը:

33 – Գողգոթան, իր անին մամուլութեամբ՝ կառավարատեղի (գանկի տեղ) կը նշանակէ:

34 – «Լեղի» յատուկ իմաստով լեղի չի նշանակեր, այլ դառնահամ հեղուկ մը, գոր կու տային խաչի մահուան դատապարտուածներուն՝ անոնց զգացած ահոնիլի ցաւերը մեղմացնելու եւ գանձնէ գգայագիրի ընելու նպատակով: Փրկիչը իր շրթունքներովը միայն դաչելէ ետք անոր, մերժեց խմել զայն, որովհետեւ ան կ'ուզէր կատարեալ գիտակցութեամբ մեզի համար չարչարուիլ ու մեռնիլ:

որպէսզի կատարուի մարգարէին խօսքը. **2** գեստներս իրարու մէջ բաժնեցին եւ պատմութեան լրաց վիճակ ձգեցին: **36** Եւ նստած, պահպանութիւն կ'ընէին անոր վրայ:

37 Անոր գլխուն վերեւ դրին իր դատապարտութեան գիրը, այսպէս գրուած. Այս է Յիսուս, Հրեաներու թագաւորը: **38** Նոյն ատեն անոր հետ խաչեցին երկու աւագակներ, մէկը աջ, միւսը ձախ կողմը:

39 Անցնողները կը հայհոյէին անոր, իրենց գլուխը կը շարժէին ու կ'ըսէին. **40** «Վա՛յ, դուն որ տաճարը կը քակէիր ու երեք օր-ւան մէջ կը շինէիր, ազատէ՛ ինքզինքդ. եթէ Աստուծոյ որդի ես՝ խաչէ՛ր վար իջիր»: **41** Նոյնպէս քահանայապետներն ալ կը ծաղրէին դպիրներուն եւ ծերերուն հետ ու կ'ըսէին. **42** «Ուրիշները փրկեց եւ ինքզինքը չի կրնար փրկել. եթէ Իսրայէլի թագաւորն է, թող հիմա իջնէ խաչէն եւ մենք կը հաւատանք իրեն: **43** Եթէ իր յօյսը Աստուծոյ վրայ դրած է՝ թող Աստուած ազատէ՛ զինքը հիմա, եթէ այդպէս կ'ուզէ, քանի որ ըսած է՝ Ես Աստուծոյ Որդին եմ»: **44** Իրեն հետ խաչուած աւագակներն ալ նոյնպէս կը նախա-տէին զինքը:

Յիսուսի մահը

Մրկ 15, 33-41. Ղկ 23, 44-49

45 Եւ վեցերորդ ժամէն մինչեւ իններորդ ժամը խաւարը պա-տեց բոլոր երկիրը: **46** Իններորդ ժամու ատենները, Յիսուս բարձր ձայնով գոչեց եւ ըսաւ. «Ելի՛, Ելի՛, լա՛մա սաբաֆթանի», ո՛չ «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր զիս»: **47** Հոն կեցողներէն ոմանք, երբ լսեցին, ըսին՝ «Եղիան կը կանչէ»: **48** Եւ անոնցմէ մէկը իսկոյն վազեց, սպունգ մը առաւ, քացախի մէջ թաթխեց եւ եղէգի մը ծայրը անցընելով, անոր երկարեց՝ որպէսզի խմէ: **49** Միւսները կ'ըսէին. «Թողէ՛ք, տեսնենք Եղիան կու գա՞յ զինքը փրկելու»: **50** Յիսուս դարձեալ բարձր ձայնով աղաղակեց եւ աւանդեց հոգին: **51** Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն վար երկու մասի բաժնւեցաւ, երկիրը շարժեցաւ, ժայռերը ճեղքուեցան. **52** գերեզմանները բացուեցան եւ բազմաթիւ սուրբ ննջեցեալներ

ը ու մարմիններ յարուժիւն առին. **53** եւ Յիսուսի յարուժենէն ետք՝ գերեզմաններէն ելլելով, սուրբ քաղաքը մտան եւ շատերուն երեւցան: **54** Իսկ հարիւրապետը եւ անոնք որ անոր հետ Յիսուսի պահպանութիւն կ'ընէին, երբ տեսան երկրաշարժն ու պատահածները՝ սաստիկ վախցան եւ ըսին. «Ի՛սկապէս Աստուծոյ Որդին էր ասիկա»:

55 Շատ մը կիներ ալ կային հոն, որ հեռուն կեցած կը դիտէին, եւ Յիսուսի ետեւէն եկած էին Գալիլեայէն՝ իրեն ծառայելու համար, **56** որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացին, Յակոբի եւ Յովսէփի մայրը՝ Մարիամը, եւ Ջեբեղէոսի որդիներուն մայրը:

Յիսուսի քաղումը

Մրկ 15, 42-47. Ղկ 23, 50-55

57 Երբ իրիկուն եղաւ, Արեմաթացի հարուստ մարդ մը, Յովսէփ անունով, որ Յիսուսի աշակերտած էր, **58** Պիղատոսին ներկայացաւ ու Յիսուսի մարմինը խնդրեց. այն ատեն Պիղատոս հրամայեց որ տրուի մարմինը: **59** Յովսէփ մարմինը առաւ, մաքուր կտաւներով պատեց, **60** եւ դրաւ նոր գերեզմանի մը մէջ զոր ժայռին մէջ փորել տուած էր, եւ գերեզմանին դրան առջեւ մեծ քար մը գլորելով իբր կափարիչ՝ գնաց: **61** Հոն էր Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը, գերեզմանին դիմաց նստած:

Յիսուսի գերեզմանը հսկողութեան տակ

62 Իսկ ուրբաթին յաջորդ օրը, քահանայապետներն ու փարիսեցիները հաւաքուեցան Պիղատոսին մօտ եւ ըսին. **63** «Տէ՛ր, յիշեցինք որ այդ մոլորեցնող մարդը, ողջ եղած ատեն կ'ըսէր թէ երեք օրէն յարուժիւն պիտի առնեմ: **64** Ուստի հրամայէ՛ որ մինչեւ երեք օր գերեզմանին պահպանութիւն ընեն. մի՛ գուցէ աշակերտները գիշերը գան, գողնան եւ ժողովուրդին ըսեն թէ մեռելներէն

61 – Միւս Մարիամը՝ Մարիամ Կղեովպան է, Յիսուսի մէկ մեքսաւոր ագգականը:

յարուլթիւն առաւ. եւ այս վերջին մոլորութիւնը առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ»: **65** Պիղատոս պատասխանեց. «Զինուորներ ունիք, գացէ՛ք ձեր գիտցածին պէս զգուշութիւն ըրէ՛ք»: **66** Անոնք գացին, ու գերեզմանին հսկողութիւն ընելու համար՝ քարը կնքեցին եւ զինուորականները դրին:

Թափուր գերեզմանը. հրեշտակին պատգամը

Մրկ 16, 1-8. Ղկ 24, 1-10

28 **1** Շաբաթ գիշեր, երբ շաբթուայ առաջին օրը կը լուսնար՝ Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: **2** Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, որովհետեւ Տիրոջ Հրեշտակը երկինքէն իջնելով՝ մօտեցաւ եւ քարը մէկ կողմ գլորեց դրան առջեւէն ու վրան նստաւ:

3 Անոր տեսքը փայլակի նման էր եւ զգեստը՝ ձիւնի պէս սպիտակ: **4** Անոր վախէն՝ պահապանները խռովեցան եւ մեռեալի պէս եղան: **5** Հրեշտակը խօսեցաւ ու ըսաւ կիներուն. «Մի՛ վախնաք, գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք: **6** Հոս չէ՛, որովհետեւ յարուլթիւն առաւ, ինչպէս որ ըսած էր. եկէ՛ք տեսէք տեղը՝ ուր դրուած էր: **7** Անմիջապէս գացէ՛ք ըսէ՛ք իր աշակերտներուն թէ մեռեալներէն յարուլթիւն առաւ, եւ ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հո՛ն պիտի տեսնէք զինքը. ահա ըսի՛ ձեզի»: **8** Եւ անոնք իսկոյն վախով ու մեծ ուրախութեամբ գերեզմանէն մեկնեցան եւ վազեցին աշակերտներուն աւետելու:

9 Եւ ահա Յիսուս անոնց դիմացը ելաւ եւ ըսաւ. «Ողջո՛յն ձեզի»: Իսկ անոնք, մօտենալով, անոր ոտքն ինկան ու երկրպագութիւն ըրին: **10** Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, գացէ՛ք ըսէ՛ք իմ եղբայրներուս որ Գալիլեա երթան. հո՛ն պիտի տեսնեն զիս»:

Նենգամտութիւնը հրեայ մեծերուն

11 Երբ անոնք գացին, ահա պահապաններէն ոմանք քաղաք եկան եւ ինչ որ պատահած էր՝ պատմեցին քահանայապետներուն: **12** Անոնք ալ, ծերերուն հետ ժողով ընելով, խորհրդակցեցան եւ շատ դրամ տուին զինուորներուն, պատուիրելով անոնց. **13** «Ըսէ՛ք թէ Յիսուսի աշակերտները եկան զիշերով ու գողցան զինքը, երբ մենք քունի մէջ էինք: **14** Եթէ այդ լուրը դատաւորին ականջը հասնի՝ մենք զինքը կը հանդարտեցնենք եւ ձեզ ալ ամէն հոգէ գերծ կը պահենք»: **15** Անոնք ալ, դրամը առնելով, ըրին ինչպէս որ ըսուած էր իրենց. եւ այդ լուրը Հրեաներուն մէջ տարածւած է մինչեւ այսօր:

Գալիլեայի երեսումը

16 Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլեա, ա՛յն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ. **17** երբ զինքը տեսան՝ երկըրպագութիւն ըրին անոր, եւ ոմանք տարակուսեցան: **18** Յիսուս, մօտենալով՝ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ամէն իշխանութիւն տրուած է ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ. ինչպէս որ Հայրը զրկեց զիս՝ ես ալ ձե՛զ կը զրկեմ: **19** Գացէ՛ք ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն անունով: **20** Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ պատւիրեցի ձեզի: Եւ ահաւասիկ ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի կատարածը:

15 – Յոյն թարգմանութիւնը՝ «եւ այս գրոյցը տարածուեցաւ Հրեաներու մէջ մինչեւ այսօր»: Այսինքն՝ մինչեւ Ս. Մատթէոսի իր այս Աւետարանը գրելուն ժամանակը:

18 – Յոյն բնագիրը չունի՝ «ինչպէս Հայրը զիս զրկեց՝ ես ալ ձեզ կը զրկեմ» պարբերութիւնը:

20 – Յիսուս կը պատուիրէ առաքելներուն իր այս խօսքերովը ուսուցանել բոլոր մարդոց, այսինքն աշակերտել ու ֆրիստոնայ ընել զանոնք: Այս կ'ըլլայ Մկրտութեան Խորհուրդին մատակարարութեամբ, ինչպէս նաեւ ֆարպոքութեամբ ու հոգիներու առաջնորդութեամբ:

Ս. ՄԱՐԿՈՍ ԱԽԵՏԱՐԱՆԻՉ

ԿԵԱՆՔԸ

«Գործք Առաքելոց»-ն եւ Առաքելական Թուղթերն բազմաթիւ ծանօթութիւններ ունինք Մարկոսի մասին: Մարկոս, որ կոչւած է նաեւ Յովհաննէս, ունեւոր ընտանիքի զաւակ էր: Իր մայրը՝ Մարիամ, Երուսաղէմի մէջ բաւական մեծ տուն մը ունէր, որ ծառայած է իբրեւ հաւաքատեղի նորածին Եկեղեցւոյ գումարումներուն. հաւանորէն հոն մկրտուած է Մարկոս՝ Պետրոսի ձեռքով:

Մարկոս Քրիստոսի աշակերտ եղած չէ: Իր հօրեղբօր՝ Բառնաբասի ձեռքով կը կոչուի առաքելներու գործակցութեան: Կ'ընկերանայ Պօղոսի եւ Բառնաբասի (44-ին)՝ Անտիոքի Եկեղեցւոյն նուէրները Երուսաղէմ տանելու, առաքելական առաջին ուղեւորութեան միջոցին: Անոնց հետ կ'երթայ Կիպրոս եւ Պամփիլիա, եւ Պերգէ հասնելուն՝ կը թողու Առաքելները եւ Երուսաղէմ կը դառնայ: Երկրորդ առաքելութեան՝ (50-52) հակառակ Բառնաբասի պնդումներուն, Պօղոս չ'ուզեր Մարկոսը միասին տանիլ. ու Բառնաբաս Մարկոսի հետ Կիպրոս կ'երթայ:

Անկէ վերջ, չուրջ տասը տարի Մարկոսի հետքը կը կորսուի: Այս շրջանին է որ կ'աշակերտի Պետրոսի՝ իբր քարտուղար եւ թարգման, ու սերտօրէն կը կապուի անոր, այնքան որ՝ Պետրոս զինքը որդի կը կոչէ. այս ժամանակ է որ կը գրէ իր Աւետարանը:

Պօղոս առաքելի առաջին բանտարկութեան ատեն (61-63) Մարկոս Հռոմ կը գտնուի, անոր մօտ. երկրորդ բանտարկութեան (66), Պօղոս առաքել Տիմոթէոսէն կը խնդրէ որ Ասիայէն գալու ատեն՝ Մարկոսն ալ միասին բերէ, որովհետեւ չատ օգտակար է իրեն (2 Տիմ 4, 11):

Եկեղեցական աւանդութեան համաձայն, Պետրոս եւ Պօղոս առաքելներու մահէն ետք՝ Մարկոս Աւետարանը քարոզած է

Եզրիպտոսի մէջ եւ հիմնած է Աղեքսանդրիոյ Աթոռը, որուն առաջին եպիսկոպոսը եղած է: Մահուան եւ մարտիրոսութեան թուականը անյայտ է: Մարմինը կը գտնուի Վենետիկ, Ս. Մարկոսի մայր տաճարին մէջ:

ԱԵՏԱՐԱՆԸ

Երկրորդ Աւետարանին հեղինակն է Մարկոս, Պետրոսի եւ Պողոսի աշակերտը: Այսպէս կը վկայեն միաձայնութեամբ բոլոր Եկեղեցական հին մատենագիրները եւ Ս. Հայրերը: Մարկոս իր Աւետարանը գրած է Հռոմ, յունարէն լեզուով, պարունակութիւնը արձագանգն է Պետրոսի քարոզութեան, ուղղուած հռոմայեցի քրիստոնեաներու: Ոմանք կը կարծեն թէ Պետրոս առաքեալ տեսած է Մարկոսի Աւետարանը եւ հաստատած: Գրութեան թուականը անորոշ է. այսչափը միայն յայտնի է որ Ղուկասի Աւետարանէն առաջ գրուած է, որ է ըսել 63-էն առաջ: Ս. Գրքի յանձնախումբը իր 1912 Յունիս 20-ի վճիռով կը հաստատէ թէ Ս. Մարկոս իր աչքին առջեւ ունեցած է, բացի Պետրոսի քարոզներէն, նաեւ ուրիշ աղբիւրներ, եւ թէ իր աւանդածին մէջ կատարելապէս արժանահաւատ է:

ՆՊԱՏԱԿԸ

Մարկոսի Աւետարանին հիմնական նպատակն է ցոյց տալ՝ թէ Քրիստոս Աստուծոյ Որդի է եւ Տէր ամէն բանի: Աւետարանին առաջին համարով իսկ Աստուծոյ որդի կ'անուանէ Յիսուսը. նոյնը կը հաստատէ երկնաւոր Հօր ձայնը մկրտութեան ատեն, նոյնը սատանաները կը խոստովանին. փարիսեցիներու հետ վիճաբանութեան ատեն Յիսուս նոյնպէս կը գործածէ աստուածային իշխանութիւնը՝ թողութիւն տալով մեղքերու, լուծելով շաբաթը, բժշկելով հիւանդները, հրամայելով բնութեան տարրերուն:

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ս. Մարկոսի Աւետարանը կը բաժնուի վեց մասերու.

Ա. Մաս - Պատրաստութիւն քարոզութեան. - Յովհաննէս

Մկրտիչ - Մկրտուկիւն Յիսուսի եւ փորձուիւն անապատին մէջ (1, 1-13):

Բ. Մաս - Քարոզուիւն Գալիլեայի մէջ - Դպիրներու եւ փարիսեցիներու հետ հակաճառուիւն - Առակներ - Հրաշքներ - Առաքեալները քարոզուիւն ի՛նչպէս (1, 14 - 7, 23):

Գ. Մաս - Ուղեւորուիւն Գալիլեայէն դուրս - Տիւրոս, Սիդոն, Դեկապոլիս եւ Փիլիպպեան Կեսարեա (7, 24 - 10):

Դ. Մաս - Վերջին շաբաթ Երուսաղէմի մէջ - Յաղթական մուտքը - Հակաճառուիւններ (11 - 13):

Ե. Մաս - Յիսուսի չարչարանքները եւ մահը (13 - 15):

Զ. Մաս - Յիսուսի յարուիւնը (16):

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը

Մտք 3, 1-12. Դկ 3, 3-18

1 **1** Սկիզբ Աւետարանին Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Որդիին, **2** ինչպէս Շաալի մարգարէին մէջ գրուած է.

«Ահա ես կը ղրկեմ իմ պատգամաւորս քու առջեւ՝ որպէսզի պատրաստէ քու ճանապարհը: **3** Ձայն մը կը գոչէ անապատին մէջ. Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը եւ հարթեցէ՛ք անոր շաւիղները»:

4 Յովհաննէս կը մկրտէր անապատին մէջ եւ կը քարոզէր ապաշխարութեան մկրտութիւնը մեղքերու թողութեան համար:

5 Ամբողջ Հրէաստան աշխարհը եւ բոլոր Երուսաղէմացիները անոր կը դիմէին ու կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ խոստովանելով իրենց մեղքերը:

6 Յովհաննէս հազած էր ուղտի մազէ զգեստ մը եւ մէջքին կաշիէ գօտի մը. կերակուրն ալ մարախ ու վայրենի մեղր էր: **7** Կը քարոզէր ու կ'ըսէր «Իմ ետեւէս կու գայ ինծմէ աւելի զօրաւորը, որուն առջեւ խոնարհած՝ կ'օշիկներուն կապերը քակելու արժանի չեմ: **8** Ես մկրտեցի ձեզ ջուրով, բայց անիկա պիտի մկրտէ ձեզի Սուրբ Հոգիով»:

Գլ. 1, 4 – Յովհաննէսի մկրտութիւնը՝ կը միտեր մկրտուողներուն սիրտն ու մէջ գոչում ու սէր արթնցնել, եւ այս կերպով առաջնորդել զանոնք մեղքերու թողութեան:

7 – Կօշիկի կապերը քակելը ստորնագոյն ծառանքու գործը կը համարուէր:

Յիսուսի մկրտութիւնը

9 Այն օրերուն Յիսուս Գալիլեայի Նազարեթ քաղաքէն եկաւ եւ Յովհաննէսէն մկրտուեցաւ Յորդանանի մէջ: **10** Եւ ջուրէն դուրս ելլելու պահուն՝ տեսաւ երկինքը ճեղքուած եւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի նման կ'իջնէր իր վրայ: **11** Երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Դու ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ»:

Յիսուսի փորձութիւնը

12 Եւ անմիջապէս Հոգին տարաւ զինքը անապատ, **13** ուր մնաց քառասուն օր, փորձուելով սատանայէն. զազաններու հետ էր եւ հրեշտակները կը ծառայէին անոր:

Առաջին առաքելներուն կոչումը

Մտք. 4, 18-22. Ղկ 5, 1-1

14 Յովհաննէսի մատնուելէն ետք՝ Յիսուս Գալիլիեա եկաւ եւ, Աստուծոյ Աւետարանը քարոզելով, կ'ըսէր. **15** «Ժամանակը լրացած է եւ Աստուծոյ արքայութիւնը հասած. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»:

Սկիզբ Յիսուսի քարոզութեան

Մտք. 4, 18-22 – Ղկ 5, 1-11

16 Գալիլեայի ծովեզերքէն անցնելու ատեն, տեսաւ Սիմոնը եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանները ծով ձգեր էին, որովհետեւ ձկնորս էին. **17** եւ ըսաւ անոնց. «Ետեւէ՛ս եկէք եւ ձեզ մարդոց որսորդ պիտի ընեմ»: **18** Եւ անոնք իսկոյն ուռկանները թողլով՝ անոր ետեւէն գացին: **19** Եւ անկէ քիչ մը առաջ երթալով՝ տեսաւ Զեբեդեան Յակոբոսը եւ անոր եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք նաւակին մէջ ուռկանները կը կարկատէին. իսկոյն զանոնք

17 – Գրիստոս անուս ձկնորսներ կ'ընտրէ , եւ կը խոստանայ օժտել զանոնք այն ամէն բանով, որու պէտք պիտի ունենային անոնք իրենց այս կոչումին համար:

ալ կանչեց: **20** Եւ անոնք նաւակին մէջ թողլով իրենց հայրը՝ **21** բեդէոսը վարձկաններուն հետ, անոր ետեւէն գացին:

Դիւահարիւն բժշկութիւնը

(Ղկ 4, 31-37)

21 Մտան Կափառնաում եւ Յիսուս շաբաթ օրը իսկոյն ժողովարան երթալով՝ սկսաւ քարոզել անոնց: **22** Կը զարմանային անոր վարդապետութեան վրայ, որովհետեւ հեղինակութեամբ կը սորվեցնէր եւ ո՛չ թէ դպիրներուն պէս:

23 Անոնց ժողովարանին մէջ պիղծ դեւ ունեցող մարդ մը կար, որ աղաղակեց եւ ըսաւ. **24** «Թո՛ղ տուր, ի՞նչ ունիս մեզի հետ, Նազովրեցի Յիսուս, եկար մեզ կորսնցնելու, գիտենք թէ ո՛վ ես դուն. Աստուծոյ սուրբն ես»: **25** Յիսուս սաստեց անոր եւ ըսաւ. «Լռէ՛ եւ ելի՛ր անոր մէջէն»: **26** Եւ պիղծ դեւը, ուժգին ցնցելով զանիկա, բարձրաձայն աղաղակեց ու ելաւ: **27** Եւ ամէնքը զարմացան, այնպէս որ իրարու կը փսփսային ըսելով. «Ի՞նչ է այս նոր վարդապետութիւնը, որովհետեւ իշխանութեամբ կը հրամայէ պիղծ դեւերուն ու կը հնազանդին իրեն»: **28** Եւ Յիսուսի համբաւը շուտով տարածուեցաւ Գալիլեայի ամէն կողմը:

Պետրոսի գոգմանչիւն բուժումը

29 Հագիւ ժողովարանէն ելած՝ Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ գնաց Սիմոնի եւ Անդրէասի տունը, **30** ուր ջերմով պառկած էր Սիմոնի գոքանչը. իսկոյն անոր մասին խօսեցան Յիսուսի: **31** Մօ-

23 – Թո՛ղ տուր (թուլացո) բայը համագոր իմաստն է գուտ եբրայական «իմ-ծի ի՛նչ, քեզի ի՛նչ» բացատրութեան:

25 – Պիղծ ոգին կը կոսէր թէ Յիսուս սովորական մարդէ մը վեր մէկն ըլլալու էր. ասոր համար «Աստուծոյ սուրբը» կ'անուանէ գայն. այսինքն՝ մասնաւոր կերպով Աստուծոյ նուիրուած անձ մը՝ Քրիստոսը:

30 – Յիսուս նախապէս կը բժշկէ այսահարը առանց մէկէ մը խնդրուած ըլլալու: Հոս սակայն կը սպասէ որ իրմէ խնդրեն: Որչափ որ ալ Փրկիչը կ'ուզէ ու կը փափաքի որ ամէնքը փրկութեան հասնին, սակայն մեր կողմէ եւս գործակցութիւն կը պահանջէ:

տենալով հիւանդին՝ ձեռքէն բռնեց եւ ոտքի հանեց զայն. ջերմը անցաւ եւ սկսաւ անոնց սպասարկել:

Բուժումներ

32 Երբ իրիկուն եղաւ, արեւը մարը մտնելու ատեն, անոր բերին բոլոր հիւանդներն ու դիւահարները, **33** եւ բոլոր քաղաքը խռնուեցաւ դրան առջեւ: **34** Շատ մը հիւանդներ բժշկեց զանազան հիւանդութիւններէ ու դեւեր հանեց, եւ թոյլ չէր տար որ դեւերը խօսէին, որովհետեւ կը ճանչնային զինքը թէ՛ Քրիստոսն է:

Յիսուս կը մեկնի Կափառնաումէն

35 Առաւօտ կանուխ ելլելով՝ ամայի տեղ մը գնաց եւ հոն կ'աղօթէր: **36** Սիմոն եւ հետը եղողները անոր ետեւէն գացին: **37** Երբ զայն գտան՝ ըսին անոր. «Ամէնքը քե՛զ կը փնտռեն»: **38** Յիսուս պատասխանեց. «Եկէ՛ք երթանք միւս մօտաւոր գիւղաքաղաքներն ալ, որպէսզի հոն ալ քարոզեմ, որովհետեւ անոր համա՛ր եկած եմ»: **39** Ու կը քարոզէր ամբողջ Գալիլեայի ժողովարաններուն մէջ եւ դեւեր կը հանէր:

Բորտին քժշկութիւնը

40 Բորտոս մը ներկայացաւ անոր, որ ծունը դնելով կ'աղաչէր ու կ'ըսէր. «Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել»: **41** Իսկ Յիսուս, գլխով, ձեռքը երկարեց, դպաւ անոր եւ ըսաւ. «Կ'ուզե՛մ, մաքրուէ՛»: **42** Այս խօսքին վրայ անմիջապէս բորտութիւնը վրայէն գնաց ու մաքրուեցաւ: **43** Յետոյ փութով դուրս հանեց զայն եւ խստիւ պատուիրելով ըսաւ. **44** «Զգո՛յ՛ չ եղիր, մարդու չըսես, այլ գնա՛, ինքզինքդ քահանային ցոյց տուր, եւ մաքրուելուդ փոխարէն նուիրէ՛ ինչ որ Մովսէս պատուիրած է, իբրեւ անոնց վկայութիւն: **45** Բայց ան, դուրս ելլելով՝ սկսաւ բարձրաձայն քարոզել եւ եղածը հռչակել. այնքան որ Յիսուս այլեւս չէր կրնար յայտնի կերպով քաղաք մտնել, այլ՝ դուրսը ամայի տեղերը կը կենար, եւ ամէն կողմէ իրեն կը դիմէին:

Կափառնաուլի անդամալոյծին բուժումը

Մտք 9, 1-8. Ղկ 5, 17-26

2 **1** Քանի մը օր ետք, դարձեալ Կափառնաուլ մտաւ. **2** եւ երբ իմացան որ տունն է՝ չատեր հաւաքուեցան, այնպէս որ այլեւս տեղ չմնաց եւ ոչ իսկ դրան առջեւ. իսկ Յիսուս անոնց կը քարոզէր Աստուծոյ խօսքը: **3** Այդ պահուն, չորս հոգի անդամալոյծ մը վերցուցած կը բերէին: **4** Երբ բազմութեան պատճառով չկրցան անոր մօտենալ, Յիսուսի կեցած կողմի տանիքը քակեցին եւ առաստաղը բանալով՝ վար իջեցուցին անկողինը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը: **5** Յիսուս, տեսնելով անոնց հաւատքը, ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, ներուած են քու մեղքերդ»: **6** Քանի մը դպիրներ, որ հոն նստած էին, կը խորհէին իրենց մտքին մէջ. **7** «Ինչո՞ւ այս մարդը այսպէս կը խօսի. կը հայհոյէ՞. ո՞վ կրնայ մեղքերը ներել եթէ ոչ՝ Աստուած միայն»: **8** Յիսուս, իսկոյն իմանալով իր հոգիով՝ թէ այնպէս կը խորհին իրենց սրտէն, ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս կը խորհիք ձեր սրտին մէջ: **9** Ո՞րը աւելի դիւրին է. ըսել անդամալոյծին՝ Ներուած են քու մեղքերդ, թէ ըսել՝ Ելի՛ր, ա՛ռ քու մահիճդ եւ գնա՛ տունդ: **10** Բայց որպէսզի գիտնաք թէ Մարդու Որդին երկրիս վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու, ըսաւ անդամալոյծին. **11** Քեզի՛ կ'ըսեմ. Ելի՛ր, ա՛ռ մահիճդ եւ տունդ գնա»: **12** Եւ ան, իսկոյն ոտքի ելաւ ու ամէնուն առջեւ մահիճն առնելով դուրս գնաց. այնպէս որ ամէնքը զարմացան եւ փառք տուին Աստուծոյ, ըսելով՝ Թէ այդպիսի բան երբեք չէ՛նք տեսած:

Մատթէոսի կոչումը

Մտք 9, 10-13. Ղկ 5, 29-32

13 Յիսուս դարձեալ ծովեզերք գնաց. բոլոր ժողովուրդը իրեն կը դիմէր, եւ ինք կը սորվեցնէր անոնց: **14** Մինչ կ'անցնէր, տեսաւ Աւփէոսի որդին՝ Ղեւին, որ մաքսատան մէջ նստած էր. եւ ըսաւ անոր. «Ետեւէ՛ս եկուր»: Եւ ան ելաւ ու Յիսուսի ետեւէն գնաց:

Ճաշ մեղաւորներուն հետ

15 Եւ երբ անոր տունը սեղանի բազմած էր, շատ մը մաքսաւորներ ու մեղաւորներ ալ Յիսուսի եւ աշակերտներուն հետ բազմած էին, որովհետեւ անոր ետեւէն գացողները շատ էին: **16** Դպիրները եւ փարիսեցիները, երբ տեսան թէ մեղաւորներուն եւ մաքսաւորներուն հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն. «Ինչո՞ւ մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ կ'ուտէ ու կը խմէ ձեր վարդապետը»: **17** Յիսուս, երբ լսեց, ըսաւ անոնց. «Առողջները բժիշկի պէտք չունին, այլ՝ հիւանդները. եւ ես չեմ եկած արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները»:

Վէճ՝ ծովապահուօթան մասին

Մտք 9, 14-17. Ղկ 5, 33-38

18 Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները պահքի մէջ էին. եկան եւ ըսին Յիսուսի. «Ինչո՞ւ Յովհաննէսին աշակերտները եւ փարիսեցիները ծոմ կը պահեն, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»: **19** Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ կարելի՞ է որ հարսնեւորները ծոմ պահեն երբ փեսան իրենց հետ է. քանի փեսան իրենց հետ է՝ չեն կրնար ծոմ պահել. **20** բայց պիտի գան օրեր՝ երբ փեսան իրենցմէ պիտի վերցուի. այն ատեն պիտի պահեն: **21** Ո՛չ ոք կը կարէ նոր կտաւ մը հին զգեստի մը վրայ, ապա թէ ոչ՝ նոր կտորը հին զգեստէն բան մը կ'առնէ կը տանի, եւ պատռուածքը աւելի գէշ կ'ըլլայ: **22** Եւ ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնէ, ապա թէ ոչ՝ գինին կը պայթեցնէ տիկերը, գինին կը թափուի ու տիկերն ալ կը փճանան. այլ նոր գինին՝ նոր տիկերու մէջ կը լեցուի»:

Գլ. 2, 20 – Ինչպէս որ հարսնեւորները հարսանիքի ատեն ծոմ չեն պահեր, նմանապէս նաեւ Յիսուսի աշակերտները չեն կրնար ծոմ պահել անոր երկրաւոր կեանքին հրեուայի օրերու միջոցին, ուր ան բովանդակ մարդկութիւնը իրեն հարսնութեան կը հրաւիրէ: Սակայն իր խաչի մահուանէն ետք, անո՛նք եւս պիտի սկսին ծոմ պահել: Իրաւամբ ուրեմն Եկեղեցին, Փրկչին չարչարանքին ու մահուան յիշատակին համար սահմանած է պահքի օրեր, յիշեցնելու համար մեզի, թէ մենք, այս երկրի վրայ, տակաւին հեռու Յիսուսէն, բազմատեսակ վտանգներու մէջ կը գտնուինք մեղքի մէջ իյնալու:

Յորենի հասկերը եւ շաքաթը

Մտք 10, 1-8. Ղկ 6, 1-5

23 Շաքաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր՝ երթալու ատեն աշակերտները սկսան հասկ փրցնել եւ ուտել: **24** Փարիսեցիները ըսին անոր. «Տէ՛ս, ի՛նչ կ'ընեն աշակերտներդ շաքաթ օրով, ինչ որ թոյլ տրուած չէ»: **25** Յիսուս պատասխանեց. «Բնաւ չէ՞ք կարդացած Դաւիթին ըրածը, երբ պէտքը զգաց եւ անօթեցաւ, ինքը եւ իրեն հետ եղողները: **26** Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրով, եւ առաջաւորութեան հացերը կերաւ ու հետը եղողներուն ալ տուաւ. ինչ որ ոչ ոք կրնար ուտել բացի քահանաներէն»: **27** Եւ աւելցուց. «Շաքաթը մարդուն համար եղած է, եւ ոչ թէ մարդը շաքաթին համար: **28** Ուրեմն Մարդու Որդին շաքաթին ալ տէրն է»:

Գօսացած ձեռքով մարդուն բուժումը

Մտք 12, 9-14. Ղկ 6, 6-11

3 **1** Յիսուս դարձեալ ժողովարան մտաւ, ուր մարդ մը կար գօսացած ձեռքով: **2** Ուշադրութեամբ կը դիտէին թէ արդեօք պիտի բժշկէ՞ շաքաթ օրով, որպէսզի ամբաստանէին զինքը: **3** Յիսուս գօսացած ձեռքով մարդուն ըսաւ. «Ելիր մէջտեղ եկուր»: Եւ հարցուց միւսներուն: **4** «Ի՞նչ բան ներելի է շաքաթ օրով. բարի՞ գործ մը ընել թէ չար. կեա՞նք մը փրկել թէ կորսնցընել»: Անոնք լռեցին: **5** Յիսուս, զայրացած, անոնց նայելով եւ տխրելով անոնց սրտին կուրուրթեան վրայ՝ ըսաւ մարդուն. «Երկարէ՛ ձեռքդ»: Ան երկարեց ձեռքը եւ առողջացաւ: **6** Փարիսեցիները Հերովդիանոսներու հետ իսկոյն դուրս ելլելով, ժողով ըրին անոր դէմ, թէ ի՛նչպէս մեռցնեն զինքը:

Գլ. 3, 2 – Հրեաները «կը լրտեսէին Յիսուսը, տեսնելու համար թէ շաքաթ օրով պիտի բժշկէ՞ր»:

Քարոզուքիւն՝ նաւակիւն մէջէն

Մտք 12, 15-16. Ղկ 6, 17-19

7 Իսկ Յիսուս, աշակերտներուն հետ միասին, ծովեզերք գնաց: Շատ ժողովուրդ ալ անոր ետեւէն կ'երթար Գալիլեայէն եւ Հրէաստանէն. **8** բազմութիւն մըն ալ Երուսաղէմէն, Եղովնէն, Անդըր-Յորդանանէն, Տիւրոսի եւ Սիդոնի շրջաններէն, լսելով Յիսուսի ըրածները՝ անոր կու գային: **9** Յիսուս յանձնարարեց աշակերտներուն որ նաւակ մը պատրաստ ըլլայ իրեն համար՝ ամբոխին պատճառով, որպէսզի չնեղեն զինքը. **10** որովհետեւ չատեր բոլորէր ըլլալով՝ ամէն հիւանդութիւն ունեցող կու գար անոր շուրջը կը խռնուէր, որպէսզի կարենար անոր դպչիլ: **11** Եւ պիղծ դեւերը, երբ կը տեսնէին զինքը, առջեւը կ'իյնային, կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Դո՛ւն ես Աստուծոյ Որդին»: **12** Իսկ Յիսուս խստիւ կը պատուիրէր անոնց՝ որ չյայտնեն զինքը:

Առաքեալներու ընտրութիւնը

Մտք 10, 1-4. Ղկ 6, 12-16

13 Յիսուս, լեռը ելլելով, իր մօտ կանչեց անոնք որ ինքը կ'ուզէր. եւ անոնք քովը գացին: **14** Տասներկու հոգի ընտրեց, որպէսզի իրեն հետ մնան եւ զանոնք քարոզելու ղրկէ, **15** եւ անոնք իշխանութիւն ունենան ցաւերը դարմանելու եւ դեւերը հանելու: **16** Եւ Սիմոնին անունը դրաւ՝ Պետրոս. **17** Ջեբեղեան Յակոբոսին եւ անոր եղբօր՝ Յովհաննէսին անուններն ալ դրաւ Բաներեզէս, որ ըսել է Որոտման Որդիներ. **18** եւ Անդրէաս, Փիլիպպոս, Բարթոլիմէոս, Մատթէոս մաքսաւոր, Թովմաս, Յակոբոս Ալփեան, Թադէոս, Սիմոն Կանանացի. **19** եւ Յուդա Իսկարիոտացի, որ նաեւ մատնեց զինքը:

Յիսուսի ազգականները

20 Երբ տուն դարձան՝ ժողովուրդը դարձեալ իրենց հետ եկաւ, այնպէս որ հաց անգամ չկրցան ուտել: **21** Երբ իրենները լսեցին՝ եկան զինքը բռնելու, կարծելով թէ մոլեգնած է:

Դպիրներուն գրադարտութիւնը

Մտք 12, 24–32. Ղկ 11, 15–23

22 Իսկ դպիրները՝ որ Երուսաղէմէն իջեր էին, կ'ըսէին թէ Բէ-եղզերուղ կայ անոր մէջ եւ դեւերու իշխանին ձեռքով կը հանէ դեւերը: **23** Յիսուս, զանոնք իր մօտը կանչելով, առականերով կ'ըսէր անոնց. «Ի՞նչպէս սատանան կրնայ սատանայ հանել: **24** Եթէ թագաւորութիւն մը ինք իր մէջ պառակտի՝ այն թագաւորութիւնը չի կրնար կանգուն մնալ: **25** Եւ եթէ տուն մը ինք իր մէջ բաժնուի՝ այդ տունը չի կրնար կանգուն մնալ: **26** Արդ, եթէ սատանան ինք իր դէմ ելած է եւ պառակտուած՝ ան չի կրնար տեւել, այլ հասած է անոր վախճանը: **27** Ո՛չ ոք կրնայ հզօրին տունը մտնել ու կարասիները յափշտակել, եթէ նախ չկապէ հզօրը եւ յետոյ կողոպտէ անոր տունը:

Մեղք Ս. Հոգիին դէմ

28 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն, մեղք եւ հայհոյութիւն՝ ո'րչափ ալ հայհոյեն. **29** բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյէ՝ անիկա յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, այլ պարտապան պիտի ըլլայ յաւիտեանական մեղքին»: **30** Որովհետեւ կ'ըսէին թէ պիղծ դեւ կայ անոր մէջ:

29 – Սուրբ Հոգիին դէմ հայհոյել է՝ երբ մէկը չարամտութեամբ կը մերժէ այն ճշմարտութիւնը, որ Քրիստոս իր աստուածային գործերով անհերքելիօրէն ապացուցած է թէ ինքն է Մեսիական թագաւորութեան հիմնադիրը եւ մարդկութիւնը սատանայի իշխանութենէն ազատողը. եւ կամ երբ մէկը յամառութեամբ կ'ընդդիմանայ շնորհիւ ձայնին: Այս մեղքին պարտապան են ուրեմն փարիսեցիները, որոնք իրենց սատանայական չարամտութեամբ յանդգնեցան Յիսուսի հրաշագործ կարողութիւնը – ինչպիսի էր սատանաներ հանելու իշխանութիւնը – սատանային հետ համաձայնութեան մը վերագրել: Սուրբ Հոգիին դէմ մեղանշած կ'ըլլան նոյնպէս անոնք, որ Աստուծոյ գործերն ու անոր ընձեռած շնորհները արհամարհելով՝ յամառութեամբ կը մերժեն զանոնք: Ցորչափ ուրեմն մէկը այս վիճակին մէջ կը յամառի մնալ, այնպիսիին դարձի գալը – սրտի խստութեան ու կամքի յամառութեան պատճառով – եթէ ո'չ անկարելի, գոնէ արտաքին կարգի դժուարին է ու հազուադէպ:

Յիսուսի նշմարիտ ընտանիքը

Մտք 12, 46-50. Ղկ 8, 19-21

31 Եղբայրները եւ մայրը եկան ու դուրսը կեցած՝ մարդ զրկեցին որ կանչեն զինքը:

32 Ժողովուրդը որ չուրջը նստած էր, ըսաւ անոր. «Ահա՛ մայրդ ու եղբայրներդ դուրսը կեցած՝ քեզ կ'ուզեն»: **33** Յիսուս պատասխանեց անոնց. «Ո՞վ է իմ մայրս եւ եղբայրներս»: **34** Եւ չուրջը նստող աշակերտներուն նայելով, ըսաւ. «Ահա՛ Լասիկ իմ մայրս ու եղբայրներս. **35** որովհետեւ ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ՝ ա՛ն է իմ եղբայրս, քոյրս եւ մայրս»:

Սերմնացանին առակը

Մտք 13, 1-9. Ղկ 8, 4-8

4 **1** Յիսուս դարձեալ սկսաւ սորվեցնել ծովուն եզերքը. չուրջը շատ ժողովուրդ խոնուեցաւ, այնպէս որ նաւակ մտաւ եւ հոն, ծովուն վրայ նստաւ, մինչ բոլոր ժողովուրդը ծովափի երկայնքին՝ ցամաքի վրայ կեցած էր: **2** Շատ բաներ կը սորվեցնէր անոնց առականերով, եւ իր վարդապետութեամբը կ'ըսէր. **3** «Լսեցէ՛ք, ահա սերմանողը ելաւ սերմանելու. **4** սերմանելու ատեն, մաս մը ճամբուն վրայ ինկաւ. եւ թռչունները եկան ու կերան զանոնք: **5** Ուրիշ մաս մը ինկաւ քարոտ տեղ մը, ուր շատ հող չկար. եւ չուտով բուսաւ, որովհետեւ հողը շատ խորունկ չէր. **6** ու երբ արեւը ծագեցաւ՝ այրեցաւ, եւ որովհետեւ արմատ չունէր՝ չորցաւ: **7** Ուրիշ մաս մըն ալ փուշերու մէջ ինկաւ. փուշերը ելան ու խեղդեցին զայն, եւ պտուղ չտուաւ: **8** Իսկ ուրիշ մաս մը՝ ինկաւ լաւ հողի վրայ եւ բարձրացաւ, աճեցաւ, պտուղ տուաւ, մէկի տեղ՝ երեսուն, մէկի տեղ՝ վաթսուն եւ մէկի տեղ՝ հարիւր»: **9** Եւ կ'ըսէր. «Ո՞վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

10 Երբ առանձին մնաց՝ իր չուրջիները, տասներկուքին հետ միասին, հարցուցին առակին մասին: **11** Պատասխանեց անոնց.

«**Ձեզի տրուած է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտնալ, բայց անոնց որ դուրսէն են՝ ամէն ինչ առականերով կ'ըլլայ, 12** քանի որ տեսնելով հանդերձ՝ չեն տեսներ, լսելով հանդերձ՝ չեն ըմբռներ, որպէսզի երբեք չդառնան ու թողութիւն չստանան»:

Առակին բացատրութիւնը

Մտք 13, 18–23. Ղկ 8, 11–15

13 Եւ աւելցուց. Այս առակը չէ՞ք հասկնար. ուրեմն ի՞նչպէս պիտի հասկնաք բոլոր առակաները: **14** Այն որ կը սերմանէ՝ խօսքը կը սերմանէ: **15** Ճամբուն երկայնքին եղողները, ուր խօսքը ցանաւ է, անոնք են՝ որ հազիւ թէ լսեն, իսկոյն սատանան կու գայ եւ անոնց սրտին մէջ ցանուած խօսքերը կը հանէ: **16** Նմանապէս, քարոտ տեղ ցանուածները անոնք են, որ երբ խօսքը լսեն՝ իսկոյն ուրախութեամբ կ'ընդունին զայն. **17** եւ որովհետեւ իրենց մէջ արմատ չունին եւ քիչ ատենուայ համար են, երբ խօսքին պատճառով իրենց վրայ նեղութիւն կամ հալածանք հասնի՝ իսկոյն կը գայթակղին: **18** Իսկ փուշերու մէջ ինկածները անոնք են՝ որ կը լսեն խօսքը, **19** բայց աշխարհի հոգերը, հարստութեան հրապոյրը եւ ուրիշ ցանկութիւններ կը մտնեն ու կը խեղդեն խօսքը եւ զայն անպտուղ կը դարձնեն: **20** Իսկ լաւ հողի մէջ ցանուածները անոնք են՝ որ կը լսեն խօսքը եւ կ'ընդունին զայն, եւ պտուղ կու տան, մէկի տեղ՝ երեսուն, կամ վաթսուն կամ հարիւր»:

Ընդունիլ եւ փոխանցել խօսքը

21 Դարձեալ ըսաւ անոնց. «Միթէ ճրագը կը բերե՞ն գրուանին

հուրդը, այսինքն Աստուծոյ քաջաւորութեան բարձրագոյն նշմարտութիւնները, կը հասկնան առակով, անընդունակներու համար սակայն, իրենց իսկ յանգամանակով, այդ նշմարտութիւնները կը մնան լուրջ բանք, զորս չեն կրնար հասկնալ:

17 – Անյաջողութեան առաջին պատճառն է սատանան (հ. 15), երկրորդը՝ աշխարհի իր հալածանքներովը (հ. 17) եւ երրորդը՝ մարմինը (հ. 19):

19 – Յոյնը՝ «հարստամալու հրապոյրը եւ ուրիշ իրերու ցանկութիւնները կը մտնեն:

21 – Առաքելները պարտաւոր են հաւատքի նշմարտութեան լոյսը բովանդակ աշխարհի ծանօթացնել:

կամ մահիճին տակ դնելու համար. չէ՞ որ աշտանակի վրայ կը դրուի ան: **22** Որովհետեւ չկայ ծածուկ բան որ չյայտնուի եւ ոչ ալ գաղտնիք՝ որ երեւան չելլէ: **23** Ո՛վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

24 Եւ յարեց. «Ուշ դրէք ձեր լսածներուն. ինչ չափով որ չափէք՝ անով պիտի չափուի ձեզի, եւ աւելին ալ պիտի տրուի ձեզի՝ որ կը լսէք: **25** Որովհետեւ ունեցողին պիտի տրուի, եւ չունեցողէն՝ ունեցածն ալ պիտի առնուի»:

Անոյ սերմանիք

26 Եւ կ'ըսէր. «Աստուծոյ արքայութիւնը կը նմանի մարդու մը որ սերմեր կը ցանէ հողին մէջ. **27** եւ մինչ ինքը կ'երթայ կը քնանայ ու կ'ելլէ գիշեր ցերեկ, սերմերը կը բուսնին ու կ'աճին, **28** եւ ինքը չի գիտեր՝ թէ ի՛նչպէս երկիրը ինքնիրմէ պտուղ կը բերէ, նախ խոտը, յետոյ հասկը եւ հոսկ ցորենը՝ լեցուն հասկի մէջ: **29** Եւ երբ պտուղը հասուննայ, շուտով մանգաղը կը դրկուի, որովհետեւ հունձքի ժամանակը հասած է»:

Մանանիսի հատիկ

30 Դարձեալ կ'ըսէր. «Ի՞նչ բանի նմանցնենք Աստուծոյ արքայութիւնը, կամ ո՞ր առակով պատկերացնենք զայն: **31** Նման է մանանիսի հատիկին, որ երբ հողին մէջ կը ցանուի՝ երկրի վրայ եղած սերմերէն ամէնէն փոքրն է. **32** ցանուելէն ետք՝ կը բուսնի, բոլոր տունկերէն մեծ կ'ըլլայ ու մեծամեծ ոստեր կ'արձակէ, այնպէս որ անոր հովանիին տակ՝ երկիրքի թռչունները կրնան բնակիլ»: **33** Այսպէս, բազմաթիւ առակներով անոնց կը բացատրէր խօսքը, որպէս-

29 – Ինչպէս որ անգամ մը ցանուած սերմը առանց մարդկային գործակցութեան, բայց Արարչէն հաստատուած բնական օրէնքով կ'աճի ու կը զարգանայ, եւ կամաց կամաց հունձքի համար կը հասուննայ, այսպէս նաեւ Աստուծոյ թագաւորութիւնը կ'աճի ու կը զարգանայ իր մէջ գտնուող աստուածային կարողութեան զօրութեամբը, եւ աստիճանաբար կը հասուննայ ու կը հասնի կատարելութեան:

զի կարենային հասկնալ. **34** առանց առակի բան մը չէր խօսէր անոնց. բայց առանձին իր աշակերտներուն ամէն բան կը բացատրէր:

Փոթորիկին անդորրացումը

Մտք 8, 23-27. Ղկ 8, 22-25

35 Նոյն օրը, իրիկուան դէմ, ըսաւ անոնց. «Եկէ՛ք, միւս կողմն անցնինք»: **36** Եւ կ'արձակեն ժողովուրդը, կ'առնեն զինքը, ինչպէս որ էր, նաւակին մէջ, իսկ միւս նաւակներն ալ իրեն կ'ընկերանան: **37** Յանկարծ, հովի մեծ մըրիկ մը կը փրթի, եւ ալիքները նաւակին մէջ կը խուժեն, այնպէս որ նաւակը կը լեցուի. **38** մինչ Յիսուս նաւակին ետեւի կողմը, բարձի վրայ կը քնանար: Կ'արթնցնեն զինքը եւ կ'ըսեն. «Վարդապէ՛տ, հոգդ չէ՞ որ մենք կը կորսուինք ահա»:

39 Յիսուս, արթննալով, սաստեց հովին եւ ըսաւ ծովուն. «Հանդարտէ՛, լռէ՛». եւ հովը դադրեցաւ ու մեծ հանդարտութիւն տիրեց: **40** Եւ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս կը վախնաք, հաւատք չունի՞ք տակաւին»:

41 Անոնք սաստիկ վախցած էին եւ իրարու կ'ըսէին. «Արդեօք ո՞վ է ասիկա, որ հովն ու ծովը կը հնազանդին իրեն»:

Գերգեսացի դիւահարը

Մտք 8, 28-34. Ղկ 8, 26-39

5 **1** Հասաւ ծովուն միւս ափը՝ Գերգեսացիներու երկիրը: **2** Հագիւ նաւակէն դուրս ելաւ՝ իրեն հանդիպեցաւ գերեզմաններէն ելած մարդ մը, որուն մէջ պիղծ դեւ մը մտած էր, **3** եւ կը բնակէր գերեզմաններուն մէջ. ո՛չ ոք կրնար կապել զինքը, նոյնիսկ շղթաներով, **4** որովհետեւ շատ անգամ ոտնակապերով եւ շղթաներով կապուած էր, բայց շղթաները փշրած եւ ոտնակապերը խորտակած էր, եւ ոչ ոք կրնար զինքը զսպել:

Գլ. 5, 2 – Մատթէոսի տեղեկագրութեան մէջ երկու անգ և յիշատակուի, իսկ Մարկոս ու Դուկաս միայն մէկին խօսքը կ'ընեն որուն բժշկուիլը այնքան զարմանք պատճառած էր ամէնուն:

5 որովհետեւ միշտ, գիշեր ցերեկ գերեզմաններու եւ լեռներու մէջ կը պոռար ու ինզինքը քարերով կը ծեծէր: 6 Երբ հեռուէն տեսաւ Յիսուսը՝ վազեց, երկրպագութիւն ըրաւ, բարձր ձայնով աղաղակեց ու ըսաւ. 7 «Ի՞նչ ունիս ինծի հետ, Յիսուս, բարձրեալ Աստուծոյ Որդի. կ'երգմանցուցնեմ քեզ Աստուծոյ անունով, մի՛ տանջեր զիս»: 8 Որովհետեւ Յիսուս կ'ըսէր անոր. «Ելի՛ր այդ մարդէն, պի՛ղծ դեւ»: 9 Յիսուս հարցուց անոր. «Ի՞նչ է անունդ»: «Լեզէոն է իմ անունս, պատասխանեց, որովհետեւ շատ ենք»: 10 Եւ շատ կ'աղաչէին որ զիրենք երկրէն դուրս չղրկէ: 11 Հոն, լերան ստորոտը, արածող խոզերու մեծ երամակ մը կար. 12 դեւերը աղաչեցին անոր եւ ըսին. «Մեզ խոզերուն ղրկէ, որ անոնց մէջ մտնենք»: Հրաման տուաւ անոնց, 13 եւ պիղծ դեւերը ելան ու խոզերուն մէջ մտան, եւ երամակը, որ երկու հազարի չափ կար, բարձունքէն դէպի ծով վազեց եւ ծովուն մէջ խեղդուեցաւ:

14 Իսկ խոզարածները փախան եւ քաղաքին ու ագարակներուն մէջ պատմեցին. եւ մարդիկ ելան տեսնելու թէ ի՞նչ էր պատահածը: 15 Եւ Յիսուսի մօտ գալով՝ տեսան դիւահարը որ լեզէոնն ունէր, նստած, հագուած եւ զգաստացած, եւ վախցան: 16 Անոնք որ տեսած էին, պատմեցին անոնց՝ թէ ի՞նչ պատահած էր դիւահարին եւ ինչ եղած էին խոզերը: 17 Այն ատեն սկսան աղաչել Յիսուսի որ հեռանայ իրենց սահմաններէն:

18 Երբ Յիսուս նաւակ կը մտնէր՝ դիւահարը կը խնդրէր որ հետը երթայ. 19 բայց Յիսուս թոյլ չտուաւ, այլ ըսաւ անոր. «Գնա՛ք ու տուե՛ր, ընտանիքիդ մօտ, եւ պատմէ՛ անոնց ինչ որ Տէրը ըրաւ քեզի, քու վրադ ողորմելով»: 20 Ան ալ գնաց ու սկսաւ հռչակել Դեկապոլիսի մէջ թէ ի՞նչ ըրած էր իրեն Յիսուս. եւ ամէնքը կը զարմանային:

9 – Պիղծ ոգիներու ստուարաթիւ բանակ մը կը բնակէր մարդուն մէջ, այն-
 քան բազմութեամբ՝ որքան հռոմէական լեգէոն մը, որ կը բաղկանար 6000 զին-
 ւորէ:

13 – Յիսուս թոյլ տուաւ պիղծ ոգիներուն մտնել խոզերու մէջ, որպէս զի
 ցուցնէ դաժան կերպամբը դիւային իշխանութեան եւ հաւատքի բերէ այդ երկ-
 րին բնակիչները:

Արիւնաեռութեամբ տառապող կիներ եւ Յայրոսի աղջնակը

Մտք 8, 18-20. Ղկ 40-56

21 Երբ Յիսուս դարձեալ նաւակով միւս կողմը անցաւ, մեծ բազմութիւն մը շուրջը հաւաքուեցաւ. եւ մինչ ծովեզերքն էր՝ **22** ժողովարանի պետերէն մէկը եկաւ յանկարծ, որուն անունն էր Յայրոս, եւ երբ զինքը տեսաւ՝ ոտքը ինկաւ, **23** եւ թախանձելով ըսաւ. «Աղջիկս մահամերձ է, եկո՛ւր, ձեռքդ վրան դիր որպէսզի առողջանայ եւ ապրի»: **24** Յիսուս գնաց անոր հետ. խուռն բազմութիւն մը ետեւէն կ'երթար ու կը նեղէր զինքը:

25 Կին մը կար որ տասներկու տարիէ ի վեր արիւնահոսութիւն ունէր, **26** եւ շատ տառապած էր շատ մը բժիշկներու ձեռքը իյնալով. իր բոլոր ունեցածը ծախսած էր առանց օգուտ մը քաղելու, մանաւանդ թէ՛ աւելի եւս վատթարացած էր հիւանդութիւնը: **27** Լսած ըլլալով Յիսուսի մասին, բազմութեան մէջ մտաւ ետեւէն եւ անոր զգեստին դպաւ. **28** որովհետեւ մտքէն կ'ըսէր. «Եթէ միայն անոր զգեստին դպչիմ՝ պիտի բժշկուիմ»: **29** Իսկոյն արիւնի հոսքը ցամքեցաւ եւ իր մարմնին մէջ զգաց թէ տանջանքներէն բժշկուեցաւ: **30** Յիսուս իսկոյն զգաց որ իրմէ զօրութիւն մը ելաւ, եւ ամբոխին դարձաւ ու ըսաւ. «Ո՞վ դպաւ զգեստիս»: **31** Աշակերտները անոր ըսին. «Կը տեսնես որ ամբոխը քեզ կը նեղէ, եւ դեռ կը հարցնես թէ ո՞վ դպաւ ինծի»: **32** Յիսուս շուրջը կը նայէր տեսներու համար թէ ո՞վ էր այդ բանը ընողը: **33** Իսկ կինը, զարհուրած եւ դողալով՝ որ գաղտնի բան մը ըրած էր, որովհետեւ գիտէր թէ ի՛նչ պատահած էր իրեն, եկաւ ինկաւ անոր առջեւ եւ պատմեց բոլոր ճշմարտութիւնը: **34** Յիսուս ըսաւ անոր. «Դո՛ւստրս, հաւատքդ քեզ փրկեց. գնա՛ խաղաղութեամբ եւ ազատուած եղիր տանջանքներէդ»:

35 Երբ տակաւին կը խօսէր՝ ժողովարանի պետին տունէն ոմանք եկան ու ըսին. «Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ կը նեղես վարդապետը»: **36** Բայց Յիսուս, այս խօսքը լսելով՝ ըսաւ ժողովարանի պետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛»: **37** Եւ ոչ մէկուն թոյլ տուաւ որ հետը երթայ, բացի միայն Պետրոսէն, Յակոբոսէն եւ անոր Յովհաննէս եղբօրմէն: **38** Երբ ժողովարանի պետին տունը

Հասան՝ հոն տեսաւ խոռոչն բազմութիւնը, լալկաններն ու բարձր ճշողները. եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց. **39** «Ինչո՞ւ խռոված էք եւ կու լաք. աղջիկը մեռած չէ՛, այլ կը քնանայ»: **40** Անոնք կը ծաղրէին զինքը. բայց Յիսուս, ամէնքը դուրս հանելով՝ առաւ աղջկան հայրն ու մայրը եւ իր հետն եղողները ու մտաւ աղջկան պառկած տեղը. **41** եւ ձեռքէն բռնելով ըսաւ անոր. «Տալի՛թա, կո՛ւմի», որ ըսել է՝ Աղջիկ, քեզի՛ կ'ըսեմ, ելի՛ր: **42** Եւ աղջիկը իսկոյն ելաւ ու սկսաւ քալել, որովհետեւ տասներկու տարեկան էր. եւ սաստիկ զարմացան: **43** Յիսուս խիստ կերպով պատուիրեց անոնց որ մարդ չիմանայ եղածը, եւ ըսաւ որ կերակուր տան անոր:

Յիսուս Նազարեթի մէջ

Մտք 13, 53-58. Ղկ 4, 16-30

6 **1** Անկէ մեկնելով, ան իր հայրենիքը դարձաւ եւ աշակերտներն ալ անոր հետեւեցան: **2** Երբ շաբաթ օրը հասաւ, սկսաւ ժողովարանին մէջ սորվեցնել. ունկնդիրներէն շատերը կը զարմանային անոր վարդապետութեան վրայ եւ կ'ըսէին. «Ուսկի՞ց առած է այս բոլորը, կամ այս ի՞նչ իմաստութիւն է որ անոր տրուած է, եւ ինչպիսի՛ հրաշքներ կը գործուին ասոր ձեռքով. **3** ասիկա հիւսնը չէ՞, Մարիամի որդին, եղբայրը՝ Յակոբին, Յովսէփին, Յուդային ու Սիմոնին. եւ ատոր քոյրերը հոս մեր քով չե՞ն». ու կը գայթակղէին անոր վրայ: **4** Յիսուս ըսաւ անոնց. «Մարգարէն անարգուած չէ՛՝ եթէ ոչ իր հայրենիքին, իր ազգատոհմին եւ իր տան մէջ»: **5** Եւ հրաշք մը անգամ չկրցաւ գործել հոն, բայց միայն քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց զանոնք: **6** Եւ կը զարմանար անոնց անհաւատութեան վրայ: Ու շրջակայ գիւղերը կը շրջէր եւ կը սորվեցնէր:

Գլ. 6, 5 – Յիսուս չկրցաւ հրաշք գործել Նազարեթի մէջ, որովհետեւ ատոր համար անհրաժեշտ պայմանը – հաւատքը – կը պակսէր: Ամենագէտն Քրիստոսի համար անակնկալ երեւոյթ մը չէ՛ր այս, որու կանխածանօթ էր ան արդէն: Ան իր տիաճութիւնը հոս պարզապէս մարդկօրէն կ'արտայայտէ, իր զարմանքը յայտնելով:

Տասներկուֆին առաքելութիւնը

Մտք 10, 1-4. Ղկ 9, 1-10

7 Իր մօտ կանչեց տասներկուքը եւ սկսաւ զանոնք երկու երկու դրկել, իշխանութիւն տալով անոնց՝ պիղծ դեւերու վրայ: **8** Եւ պատուիրեց անոնց՝ ճամբու համար ուրիշ բան չառնել, բայց միայն գաւազան. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ գօտիին մէջ, **9** այլ հողաթափ հագուելու եւ կրկին վերարկու չկրել: **10** «Ո՛ր տունն ալ մտնէք, ըսաւ անոնց, հոն բնակեցէք, մինչեւ որ անկէ մեկնիք: **11** Եւ եթէ տեղ մը ձեզ չընդունին եւ ձեզի մօտիկ չընեն՝ անկէ մեկնելու ատեն ձեր ոտքերու փոշին թօթուեցէք իբրեւ անոնց վկայութիւն»: **12** Եւ ելլելով կը քարոզէին որպէսզի ապաշխարեն: **13** Շատ դեւեր կը հանէին եւ իւղով կ'օծէին բազմաթիւ հիւանդներ ու կը բժշկէին զանոնք:

Հերովդէս եւ Յիսուս

Մտք 14, 1-2. Ղկ 9, 7-9

14 Հերովդէս թագաւորը, լսելով Յիսուսի մասին, որովհետեւ անունը յայտնի դարձած էր, ըսաւ. «Յովհաննէս Մկրտիչ յարութիւն առեր է մեռեալներէն, անոր համար իր ձեռքով հրաշքներ կ'ըլլան»: **15** Ոմանք կ'ըսէին թէ Եղիան է, իսկ ուրիշներ՝ թէ մարգարէ մըն է եւ կամ մարգարէներէն մէկը: **16** Այս բոլորը լսելով, Հերովդէս ըսաւ. «Ասիկա Յովհաննէսն է, որուն գլուխը ես կտրել տուի. յարութիւն առած է»:

Գլխատում Յովհաննէս Մկրտիչին

Մտք 14, 3-12. Ղկ 3, 19-20

17 Արդարեւ ինքը, Հերովդէս, ձերբակալել տուած էր Յովհան-

11 – Վկայութիւն մըն է այս՝ ուղղուած անոնց հասցէին, որոնք մերժած էին Աստուծմէ իրենց տրուած շնորհքները եւ յանձին առաքեալներու՝ չէին ընդունած անոնց առաքիչը:

13 – Հիւանդները իւղով օծելը հին ատենները շատ ընդհանրացած սովորութիւն մըն էր: Հմմտ. Բարի Սամարացիին առակը (Ղկ 10, 34):

նէսը, կապած ու բանտարկած՝ Հերովդիայի պատճառով, որ իր եղբորը՝ Փիլիպպոսի կինն էր եւ զայն իբր կին առած էր: **18** Որովհետեւ Յովհաննէս կ'ըսէր Հերովդէսին՝ թէ օրինաւոր չէ որ դուն եղբորդ կինը առնես: **19** Հերովդիա ռի ունէր Յովհաննէսի դէմ եւ կ'ուզէր սպաննել զինքը, բայց չէր կրնար, **20** որովհետեւ Հերովդէս կ'ակնածէր Յովհաննէսէն, գիտնալով որ արդար եւ սուրբ մարդ էր. կը պաշտպանէր զայն եւ անոր խորհուրդով շատ բաներ կը գործէր ու քաղցրութեամբ մտիկ կ'ընէր անոր:

21 Երբ յարմար օր մը հանդիպեցաւ, Հերովդէս իր ծնունդին տարեդարձին առիթով խնճոյք կու տար իր նախարարներուն, հազարապետներուն եւ Գալիլեայի մեծամեծներուն. **22** Հերովդիայի աղջիկը ներս մտնելով պարեց, եւ հաճելի անցաւ Հերովդէսին եւ բազմականներուն: Թագաւորը ըսաւ աղջկան. «Խնդրէ՛ ինձ մէկ ինչ որ կ'ուզես եւ պիտի տամ քեզի»: **23** Եւ բազմաթիւ անգամներ երդում ըրաւ անոր, թէ ինչ ալ խնդրես՝ պիտի տամ քեզի, մինչեւ իսկ թագաւորութեանս կէսը: **24** Աղջիկը, դուրս ելլելով, հարցուց մօրը. «Ի՞նչ խնդրեմ»: «Յովհաննէս Մկրտիչի գլուխը», պատասխանեց մայրը: Աղջիկը աճապարանքով ներս մտաւ, **25** թագաւորին մօտեցաւ եւ ըսաւ. «Կ'ուզեմ որ անմիջապէս Յովհաննէս Մկրտիչին գլուխը ինծի տաս ափսէի մը վրայ»: **26** Թագաւորը շատ տիրեցաւ, բայց ըրած երդումներուն եւ կոչնականներուն պատճառով՝ չուզեց մերժել աղջկան. **27** եւ փութով դահլճ մը ղրկեց, հրամայելով որ Յովհաննէսին գլուխը բերէ: **28** Ու ան գնաց, գլխատեց զայն բանտին մէջ եւ ափսէով բերաւ գլուխը եւ տուաւ աղջկան, աղջիկն ալ տարաւ մօրը յանձնեց: **29** Երբ Յովհաննէսի աշակերտները լսեցին՝ եկան, մարմինը վերցուցին ու գերեզման դրին:

Առաքեալներու վերադարձը

Մտք 14, 13-21. Դկ 9, 10-17

30 Առաքեալները դարձան Յիսուսի քով եւ պատմեցին անոր՝ ինչ որ ըրած եւ սորվեցուցած էին: **31** Յիսուս ըսաւ անոնց. «Եկէ՛ք առանձին ամալի տեղ մը եւ քիչ մը հանգչեցէ՛ք». որովհետեւ շատեր կու գային ու կ'երթային, այնպէս որ հաց ուտելու ժամանակ իսկ չունէին: **32** Ու նաւակով առանձին ամալի տեղ մը գացին:

Առաջին քաղաքումը հացերուն

33 Շատեր տեսան անոնց մեկնիրը ու անդրադարձան, եւ բոլոր քաղաքներէն բազմութեամբ հետիրտտն հոն վազեցին եւ անոնցմէ առաջ հասան: **34** Յիսուս, նաւակէն ելլելով՝ մեծ բազմութիւն մը տեսաւ, գլխաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ հունեցող ոչխարներու կը նմանէին. եւ սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց:

35 Երբ երկար ժամեր անցան, աշակերտները մօտեցան եւ ըսին. «Այս տեղը անապատ է **36** եւ արդէն ուշ է. արձակէ՛ ժողովուրդը որ շրջակայ ագարակներն ու գիւղերը երթան եւ իրենց ուտելիք գնեն, որովհետեւ հոս ուտելիք բան հունին»: **37** «Դո՛ւք տուէ՛ք անոնց ուտելիք», պատասխանեց Յիսուս: «Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք ու տանք ատոնց որ ուտեն», պատասխանեցին: **38** «Քանի՞ հաց ունիք, ըսաւ Յիսուս. գացէ՛ք նայեցէ՛ք»: Եւ երբ ստուգեցին՝ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: **39** Հրամայեց որ խումբ խումբ նստեցնեն զանոնք դալար խոտի վրայ: **40** Եւ նստան դաս դաս, տեղ մը հարիւր հոգի, տեղ մը՝ յիսուն: **41** Եւ առնելով հինգ հացերն ու երկու ձուկերը՝ երկինք նայեցաւ, օրհնեց, կտրեց եւ տուաւ աշակերտներուն որ ժողովուրդին ներկայացնեն, եւ երկու ձուկերն ալ ամէնուն բաժնեց: **42** Ամէնքը կերան ու կշտացան: **43** Եւ տասներկու լեցուն սակառ հաւաքեցին փշրանքներուն եւ ձուկերուն մնացորդներով: **44** Իսկ կերողները հինգ հազար հոգի էին:

Յիսուս ջուրիմ վրայէն կը քալէ

Մտք 14, 22-23. Ղկ 6, 16-21

45 Եւ անմիջապէս փութացուց աշակերտները, որ նաւակ մտնեն եւ իրմէ առաջ դիմացի կողմն անցնին, Բեթսայիդա, մինչեւ որ ինքը ժողովուրդը արձակէ: **46** Եւ զանոնք արձակելէ ետք, լեռ ելաւ աղօթելու: **47** Երբ իրիկուն եղաւ՝ նաւակը ծովուն մէջ տեղն էր, եւ ինքը, մինակ՝ ցամաքին վրայ: **48** Տեսնելով որ անոնք

48 – Յոյնը՝ «տեսնելով որ անոնք կը չարչարուին թիավարելու միջոցին»: Գիշերուան չորրորդ պահը կը սկսէր առաւօտեան ժամը մօտաւորապէս 3-էն: Գիշերը Հրեաներուն բով, ըստ հռոմէական սովորութեան, բաժնուած էր չորս

Թիավարելու ատեն կը չարչարուէին, որովհետեւ հովը հակառակ էր, գիշերուան չորրորդ պահուն ծովուն վրայէն քալելով անոնց մօտեցաւ եւ կ'ուզէր առաջ անցնիլ: **49** Անոնք, տեսնելով որ ծովուն վրայ կը քալէ ուրուական կարծեցին եւ սկսան պոռալ: **50** որովհետեւ ամէնքն ալ տեսան զինքը եւ սաստիկ վախցան: Բայց Յիսուս իսկոյն անոնց հետ խօսեցաւ եւ ըսաւ. «Քաջալերուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք»: **51** Եւ նաւակ ելաւ անոնց քով ու հովը դադարեցաւ: Անոնք, իրենց մտքին մէջ աւելի եւս ապշած՝ շատ կը զարմանային: **52** որովհետեւ հացին հրաշքը չէին հասկեցած, իրենց սիրտը թմրած ըլլալով:

Բուժումներ Գեներեսարեթի մէջ

Մտք 14, 34-36

53 Միւս ափն անցնելով՝ եկան Գեներեսարեթի երկիրը: **54** եւ հազիւ նաւակէն ելան՝ տեղացի մարդիկ իսկոյն ճանչցան զինքը, **55** եւ բոլոր գաւառին մէջ, ասդին անդին վազելով, սկսան մահիճներով հիւանդներ բերել հոն՝ ուր կը լսէին թէ հասած է: **56** Եւ ուր որ մտնէր, գիւղեր, կամ քաղաքներ կամ ագարակներ, հրապարակներու վրայ կը դնէին հիւանդները եւ կ'աղաչէին անոր որ գոնէ իր զգեստին քղանցքին դպչին. եւ բոլոր անոնք որ դպան՝ բժշկուեցան:

Վէճ փարիսեցիներուն աւանդութեան մասին

Մտք 15, 1-9

7 **1** Փարիսեցիները եւ քանի մը դպիրներ որ Երուսաղէմէն եկած էին՝ հաւաքուեցան Յիսուսի շուրջը: **2** եւ տեսնելով որ անոր աշակերտներէն ոմանք անմաքուր ձեռքով, այսինքն՝ առանց լուացուելու հաց կ'ուտէին, մեղադրեցին զանոնք: **3** Որով-

պահերու, իւրաքանչիւր պահ երեք ժամէ քաղկացած՝ 1. երեկոյ (Ժ. 6-9), 2. կէս գիշեր (Ժ. 9-12), 3. հաւախօս (Ժ. 12-3) եւ առաւօտ (Ժ. 3-6):

52 – Հացերու հրաշալի կերպով բազմամալէն պէտք էին աշակերտներն իսկոյն հասկնալ Քրիստոսի ունեցած իշխանութիւնը բնութեան վրայ. եւ սակայն անոնք ոչինչ հասկեցեր էին: «Այս նոր հրաշքը կը ստրկեցնէ անոնց՝ Քրիստոսի

հետեւ փարիսեցիները եւ բոլոր Հրեաները, ծերերու ավանդութեան համաձայն, եթէ իրենց ձեռքը մինչեւ արմուկը չլուան՝ հաց չեն ուտեր. **4** եւ երբ հրապարակէն կը դառնան, եթէ նախ չլուաց-ւին՝ չեն ուտեր. եւ ուրիշ շատ սովորութիւններ կան, զորս ավանդաբար կը պահեն, ինչպէս բաժակներու, սափորներու, կաթսաներու, մահիճներու լուացումներ:

5 Ուստի փարիսեցիներն ու դպիրները Յիսուսին հարցուցին. «Ինչո՞ւ քու աշակերտներդ չեն հետեւիր ծերերու ավանդութեան, այլ անմաքուր ձեռքերով հաց կ'ուտեն»: **6** Յիսուս պատասխանեց. «Լա՛ւ մարգարեացաւ Նաայիմ ձեր մասին, կեղծաւորնե՛ր, ըսելով. Այս ժողովուրդը շրթունքով կը յարգէ զիս, եւ իրենց սիրտը հեռու է ինձմէ. **7** զուր տեղ կը պաշտեն զիս, մարդոցմէ հնարուած վարդապետութիւններ սորվեցնելով: **8** Աստուծոյ պատուիրանը կը թողուք՝ մարդոց ավանդութիւնը պահելու համար»: **9** Եւ աւելցուց. «Լաւ գիտէք անարգել Աստուծոյ պատուիրանը՝ ձեր ավանդութիւնը պահելու համար»: **10** Որովհետեւ Մովսէս ըսաւ. «Հայրդ ու մայրդ պատուէ. եւ ով որ իր հայրն ու մայրը անիծէ՝ մահով քող պատժուի»: **11** Իսկ դուք կ'ըսէք. «Եթէ մէկը իր հօր կամ մօր ըսէ. Այն բանը՝ որով կրնայի քեզի օգտակար ըլլալ՝ կորեան է, այսինքն՝ նուէր. **12** եւ յետոյ թոյլ չէք տար որ իր հօրը կամ մօրը օգնէ. **13** եւ այսպէս կ'արհամարհէք Աստուծոյ խօսքը ձեր իսկ հաստատած ավանդութեամբ. եւ ասոր նման ուրիշ շատ բաներ կ'ընէք»:

աստուածային կարողութիւնը, ինչ որ անոնք հացերու բազմամալէն հասկցած չէին տակաւին» (Թեոփ.):

Գլ. 7, 4 – Աւետարանիչը այստեղ կը բացատրէ հեթանոսութենէ դարձած իր փրիստոնեայ ընթերցողներուն հրեական լուացումներու պատուէրը: – Հիւներու ավանդութիւնները, այսինքն՝ հրեայ ականաւոր դպիրներու (օրէնագէտներու) կողմէ հաստատուած կանոնները, որոնք բերանացի կերպով յաջորդաբար կ'աւանդուէին, եւ որոնք պարտաւորիչ օրէնքի ոյժն ունէին փարիսեցիներու համար:

12 – Այս մովար սկզբունքին համաձայն, տաճարի նուիրաբերուած ընծան ազատ կը կացուցանէր որդին՝ իր ծնողաց նիւթապէս օգնելու պարտաւորութեանէն, որ աստուածային պատուիրանն է:

Ուսուցումը մաքուրին եւ անմաքուրին

Մտք 15, 10–20

14 Եւ դարձեալ ժողովուրդը իր մօտ կանչելով, ըսաւ. «Ամէնքդ ինծի՛ մօտիկ ըրէ՛ք եւ իմացէ՛ք: **15** Զկայ բան մը որ դուրսէն մտնէ մարդուս ներսը եւ կարենայ գինքը պղծել, այլ ինչ որ մարդէն կ'ելլէ՝ ա՛ն է որ կը պղծէ գինքը: **16** Ո՛վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

17 Եւ երբ, ժողովուրդէն բաժնուելով, տուն մտաւ, աշակերտները անոր հարցուցին առակին իմաստը: **18** Ինքն ալ պատասխանեց. «Դուք ալ ա՛յդչափ անմի՞տ էք, չէ՞ք հասկնար թէ ինչ որ դուրսէն կը մտնէ մարդուս ներսը՝ չի կրնար պղծել գինքը **19** որովհետեւ անոր սիրտը չի մտներ, այլ փորը կ'երթայ եւ անկէ դուրս կ'ելլէ, եւ կը մաքրէ բոլոր կերածները»: **20** Եւ աւելցուց. «Ի՞նչ որ մարդուս ներսէն կ'ելլէ՝ ա՛ն է որ կը պղծէ մարդը: **21** Որովհետեւ ներսէն, այսինքն մարդուս սրտէն կ'ելլեն չար խորհուրդները, շնութիւնը, պոռնկութիւնը, **22** գողութիւնը, սպանութիւնը, ագահութիւնը, չարութիւնը, նենգութիւնը, գիշութիւնը, չարականութիւնը, հայհոյութիւնը, ամբարտաւանութիւնը, անզգամութիւնը: **23** Այս բոլոր չարիքները ներսէն կ'ելլեն ու կը պղծեն մարդը»:

Բուժումը քանանացի կնոջ աղջկան

Մտք 15, 21–28

24 Այնտեղէն մեկնելով, Տիւրոսի եւ Սիդոնի սահմանները գնաց, տուն մը մտաւ եւ չուզեց որ մէկը գիտնայ. բայց չկրցաւ ծածկուիլ: **25** Կին մը, որուն աղջիկը կը տանջուէր պիղծ դեւէն,

15 – Ս. Եկեղեցւոյ պահեցողութեան օրէնքին հակառակորդները չարաչար մեկնած են Քրիստոսի այս խօսքը: Արդարեւ, միւսը չէ որ բերանը մտնելով՝ մարդու հոգին կը պղծէ, – ապա թէ ո՛չ թոյլ պիտի չտրուէր երբեք մաշակելը ատկէ, – այլ՝ Եկեղեցւոյ դրած օրէնքին դէմ անհնազանդութիւնը: Որովհետեւ Եկեղեցին՝ Աստուծմէ առած իր իշխանութեան գօրութեամբ կը հրամայէ մեզի որ պահեցողութեամբ գոհացում տանք ապաշխարութեան՝ մեր ամենաեական պարտականութեան: Մեր նախածնողքը ո՛չ թէ պարգապէս պտուղ կերած ըլլալուն համար դատապարտուեցան, այլ՝ արգիլուած պտուղէն կերած ըլլալուն համար, որով եղան Աստուծոյ հրամանին:

լսելով Յիսուսի մասին՝ եկաւ անոր ոտքն ինկաւ: **26** Կինը հեթանոս էր, ազգով Փիլնիկ Ասորի, եւ կ'աղաչէր Յիսուսին՝ որ դեւը հանէ իր աղջիկէն: **27** Յիսուս ըսաւ անոր. «Թոյլ տուր որ նախ տղաքը կ'չտանան. որովհետեւ լաւ չէ տղոց հացը առնել եւ չունելու տալ»: **28** «Այո՛, Տէր, պատասխանեց կինը, չունենալ տղոց սեղանին փշրանքներէն կը կերակրուին»: **29** Յիսուս պատասխանեց. «Այդ խօսքիդ համար՝ զնա՛, դեւը ելած է աղջիկէդ»: **30** Կինը տուն դարձաւ, գտաւ աղջիկը անկողին պառկած եւ դեւն ալ ելած:

Խուլ-համբիմ բուժումը

31 Դարձեալ Տիրոսի սահմաններէն մեկնելով՝ Սիդոնի ճամբով եկաւ դէպի Գալիլեայի ծովուն եզերքը, Դեկապոլիսի սահմաններուն մէջ: **32** Յիսուսին առջեւ բերին խուլ ու համր մարդ մը, եւ աղաչեցին որ անոր վրայ ձեռք դնէ: **33** Յիսուս զանիկա ամբոխէն դուրս մէկ կողմ առնելով՝ մատները անոր ականջին մէջ դրաւ, եւ թուքով անոր լեզուին դպաւ. **34** երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա՛», որ ըսել է՝ Բացուէ՛: **35** Եւ անմիջապէս ականջները բացուեցան, լեզուին կապերը քակուեցան եւ ուղիղ կերպով կը խօսէր: **36** Եւ արգիլեց անոնց որ մարդու չըսեն. բայց ո՛րչափ ինքը կ'արգիլէր՝ ա՛յնչափ աւելի կը տարածէին անոնք, **37** եւ աւելի եւս կը զարմանային ու կ'ըսէին. «Ամէն բան լաւ ըրաւ ասիկա, որովհետեւ խուլներուն լսել կու տայ եւ համբերուն՝ խօսիլ»:

Հացերու երկրորդ բազմացումը

Մտք 15, 32–39

8 **1** Այն օրերուն դարձեալ իր շուրջը շատ ժողովուրդ հաւաքւած էր եւ ուտելիք չունէին. **2** կանչեց իր աշակերտները եւ ըսաւ. «Կը գլխամ այդ ժողովուրդին վրայ, որովհետեւ երեք օրէ ի վեր քովս են եւ ուտելիք չունին: **3** Եւ եթէ գիրենք անօթի ճամբեմ իրենց տուները, ճամբան ուժասպառ պիտի ըլլան, որովհետեւ ատոնցմէ ոմանք հեռու տեղերէ եկած են»: **4** Աշակերտները պատասխանեցին. «Ի՞նչպէս կրնաս այս անապատին մէջ զանոնք կ'չտացնել»: **5** «Քանի՞ հաց ունիք», հարցուց անոնց: «Եօ-

Թը, պատասխանեցին: **6** Հրամայեց ժողովուրդին որ գետին նստին, եւ առնելով եօթը հացերը՝ գոհացաւ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ որ բաժնեն. **7** անոնք ալ բաժնեցին ժողովուրդին: Քանի մը մանր ձուկեր ալ ունէին. անոնք ալ օրհնեց եւ հրամայեց բաժնել: **8** Կերան ու կշտացան, եւ աւելցած կտորներէն եօթը զամբիւղ լեցուցին: **9** Իսկ կերողները՝ չորսը չորս հազար հոգի էին. եւ արձակեց զանոնք:

Փարիսեցիները հրաշք կը խնդրեն

Մտք 16, 1-4

10 Եւ իսկոյն աշակերտներուն հետ նաւակ մտնելով՝ Դաղմանունայի կողմերը եկաւ:

11 Փարիսեցիները եկան եւ սկսան անոր հետ վիճիլ եւ փորձելու մտքով՝ հրաշք մը կ'ուզէին երկինքէն: **12** Յիսուս, սրտի խորէն հառաչելով, ըսաւ. «Ինչո՞ւ այս սերունդը հրաշք կը խնդրէ՝ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ոչ մէկ հրաշք պիտի տրուի այս սերունդին»: **13** Ու թողուց զանոնք, դարձեալ նաւակ մտաւ եւ միւս ափն անցաւ:

Փարիսեցիներուն խմորը

Մտք 16, 5-12

14 Մոռցած էին հաց առնել եւ նաւակին մէջ միայն մէկ հաց ունէին իրենց հետ: **15** Յիսուս պատուիրեց անոնց ըսելով. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք փարիսեցիներու եւ Հերովդիանոսներու խմորէն»: **16** Իսկ անոնք իրարու մէջ կը խորհէին ու կ'ըսէին. «Հաց չունինք»: **17** Յիսուս հասկցաւ եւ ըսաւ անոնց. «Թերահաւատներ, ինչո՞ւ կը խորհիք ձեր սրտին մէջ թէ հաց չունիք. դեռ չէ՞ք ըմբռներ եւ չէ՞ք յիշեր. ձեր սիրտերը ապշած են. **18** աչք ունիք եւ չէ՞ք տեսներ, ականջ ունիք եւ չէ՞ք լսեր. տակաւին չէ՞ք հասկնար եւ չէ՞ք յիշեր.

Գլ. 8, 15 – Խմորի նմանութեամբ Փրկիչը կը հասկցնէ թէ իր աշակերտները պէտք է փարիսեցիներու կեղծ բարեպաշտութենէն, այսինքն՝ կեղծաւորութենէն զգուշանան, իսկ Հերովդիանոսներու (յոյնը՝ Հերովդէսի) խմորով հասկցնել կ'ուզէ՝ Հերովդէսի թեթեւամիտ սկզբունքները:

19 քանի՞ սակառ լեցուն մնացորդներ հաւաքեցիք երբ հինգ հացը հինգ հազար հոգիի բաժնեցի»: «Տասներկու», պատասխանեցին: 20 «Եւ քանի՞ զամբիւղ լեցուն կտորներ հաւաքեցիք, երբ եօթը հացը չորս հազարին բաժնեցի»: «Եօթը», պատասխանեցին: 21 «Ուրեմն ի՞նչպէս տակաւին չէք ըմբռներ», ըսաւ անոնց:

Բեթսայիդայի կոյրին բուժումը

22 Երբ Բեթսայիդա հասան, Յիսուսին առջեւ բերին կոյր մը, եւ կ'աղաչէին որ դպչի անոր: 23 Յիսուս կոյրին ձեռքէն բռնելով, գիւղէն դուրս հանեց, անոր աչքերը թուքով թրջեց, ձեռքը վրան դրաւ եւ հարցուց՝ թէ արդեօք բան մը կը տեսնէ՞: 24 Աչքերը բացաւ եւ ըսաւ. «Մարդիկ կը տեսնեմ, որ ծառերու նման կը շրջին»: 25 Յիսուս դարձեալ ձեռքերը անոր աչքերուն վրայ դրաւ. բացւեցան, եւ տեսաւ. բժշկուեցաւ եւ ամէն բան յստակ կը տեսնէր: 26 Եւ իր տունը դրկեց զայն ու ըսաւ. «Գիւղ մի՛ մտնէր, այլ տո՛ւնդ գնա. եւ եթէ գիւղ մտնես՝ գիւղին մէջ մարդու բան մի՛ ըսեր:

Պետրոսի դաւանութիւնը

Մտք 16, 13-20. Ղկ 9, 18-21

27 Յիսուս աշակերտներուն հետ գնաց Փիլիպպեան Կեսարեայի գիւղերը, եւ ճամբան աշակերտներուն հարցուց. «Մարդիկը իմ ով ըլլալու մասին ի՞նչ կ'ըսեն»: 28 Անոնք պատասխանեցին. «Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչը, ուրիշներ՝ Եղիան, եւ ուրիշներ՝ մարգարէներէն մէկը»: 29 «Ի՞սկ դուք՝ ո՞վ կը կարծէք որ ըլլամ ես», ըսաւ անոնց: Պետրոս պատասխանեց. 30 «Դուն Քրիստո՛սն ես»: Եւ խստիւ արգիլեց անոնց՝ որ իր մասին մարդու բան չըսեն:

Առաջին աւետումը չարչարանքներուն

Մտք 16, 21-23. Ղկ 9, 22

31 Եւ սկսաւ սորվեցնել անոնց՝ թէ պէտք է որ Մարդու Որդին

31 – Քրիստոս իր աշակերտներու սրտերուն մէջ իր գերազանցութեան հաւատքը հաստատելէ ետք, կամաց կամաց կը սկսի հասկցնել անոնց, թէ հարկ է

չատ չարչարանքներ կրէ, եւ ծերերէն, քահանայապետներէն եւ դպիրներէն անարգուի ու մեռնի, եւ երեք օրէն յարութիւն առնէ: Եւ այս խօսքը բացայայտօրէն ըսաւ: **32** Պետրոս, զինքը մէկ կողմ տանելով, սկսաւ հետը վիճիլ: **33** Յիսուս դարձաւ, եւ տեսնելով աշակերտները, յանդիմանեց Պետրոսը եւ ըսաւ. «Ետե՛ս գնա, սատանայ, որովհետեւ դուն Աստուծոյ համաձայն չե՛ս խորհիր, այլ մարդոց»:

Պայմանները Յիսուսին հետեւելու

Մտք 16, 24–28. Ղկ 9, 23–27

34 Յիսուս, իր մօտ կանչելով ժողովուրդը աշակերտներուն հետ միասին, ըսաւ անոնց. «Ո՛վ որ կ'ուզէ իմ ետեւէս գալ՝ թող ուրանայ իր անձը, խաչը առնէ եւ ետեւէս գայ: **35** Որովհետեւ ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ գայն, եւ ով որ կորսնցնէ իր անձը ինծի եւ Աւետարանին համար՝ պիտի փրկէ գայն: **36** Ի՞նչ օգուտ է մարդուն՝ եթէ բոլոր աշխարհը չահի եւ իր հոգին կորսնցնէ: **37** Որովհետեւ ի՞նչ կրնայ տալ մարդը իր հոգիին փոխարէն: **38** Եւ ով որ ամօթ համարի զիս եւ իմ խօսքերս՝ այս շնացող եւ մեղաւոր ազգին առջեւ, Մարդու Որդին ալ ամօթ պիտի համարի զինքը՝ երբ գայ իր Հօր փառքով եւ սուրբ հրեշտակներով»: **39** Եւ ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս գտնուողներէն ոմանք մահը պիտի չճաշակեն՝ մինչեւ չտեսնեն Աստուծոյ արքայութիւնը անոր բոլոր զօրութեամբ»:

Այլակերպութիւնը

Մտք 17, 1–8. Ղկ 9, 28–36

9

1 Վեց օր ետք, Յիսուս իր հետը առաւ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը եւ զանոնք առանձին բարձր լեռ մը հանեց, **2** եւ այլակերպեցաւ անոնց առջեւ: Իր զգեստները փայլուն

որ ինք չարչարուի եւ կեանքը գոհէ մարդկութեան փրկութեան համար:

32 – Պարգամիտ գործով ըսուած՝ Զի՛ կրնար ըլլալ, Տէ՛ր, եւ ես չեմ կրնար այսպիսի խօսք մը լսել թէ Մեսիան Աստուծոյ Որդին, պարտաւոր ըլլալ չարչարանք կրնի ու մեռնիլ:

դարձան, բոլորովին սպիտակ, այնքան՝ որ երկրի վրայ ոչ մէկ թափիչ կարող է այնպէս ճերմկեցնել: **3** Եւ անոնց երեւցաւ Եղիան՝ Մովսէսի հետ, եւ սկսան խօսիլ Յիսուսի հետ: **4** Պետրոս, խօսքը Յիսուսին ուղղելով, ըսաւ. «Ռա՛բբի, լաւ է որ մենք հոս մնանք. եւ երեք տաղաւարներ շինենք. մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսին եւ միւսն ալ Եղիային համար»: **5** Բայց ան չէր գիտեր թէ ի՛նչ կը խօսէր, որովհետեւ զարհուրած էին:

6 Ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ եւ ձայն մը եկաւ ամպէն եւ ըսաւ. «Ա՛տ է իմ սիրելի Որդիս, ատոր մօտիկ ըրէ՛ք»: **7** Իսկոյն իրենց չորս կողմը նայեցան, եւ բացի Յիսուսէն, ոչ ոք տեսան իրենց մօտ: **8** Եւ մինչ լեռնէն կ'իջնէին՝ պատուիրեց անոնց որ իրենց տեսածը մարդու չպատմեն, մինչեւ որ Մարդու Որդին մեռեալներէն յարութիւն առնէ: **9** Եւ անոնք այս խօսքը իրենց մտքին մէջ պահեցին. եւ իրարու կը հարցնէին՝ թէ ի՛նչ կը նշանակէ մեռեալներէն յարութիւն առնել:

Հարցումներ Եղիայի մասին

Մտք 17, 9-13

10 Հարցուցին անոր եւ ըսին. «Ինչո՞ւ դպիրները կ'ըսեն՝ թէ նախ Եղիան պէտք է գայ»: **11** Յիսուս պատասխանեց. «Եղիան նախ պիտի գայ եւ ամէն բան պիտի կարգադրէ: Ինչո՞ւ հապազրուած է Մարդու Որդիին համար՝ թէ շատ չարչարանքներ պիտի կրէ եւ պիտի անարգուի: **12** Բայց կ'ըսեմ ձեզի, թէ Եղիան եկած է արդէն եւ իրենց ուզածը ըրին անոր, ինչպէս որ գրուած է իր մասին»:

Դիւահար լուսնոտին բուժումը

Մտք 17, 14-21. Ղկ 9, 37-42

13 Յիսուս, վերադառնալով աշակերտներուն քով՝ տեսաւ

Գլ. 9, 12 – Քրիստոս այս խօսքով եղիական կրկնապատիկ գալուստը կը գանգամէ. Եղիա անձամբ «պիտի գայ, աշխարհի կատարածին, եւ Եղիա՛ հոգեւոր իմաստով, այսինքն՝ յանձին Յովհաննէս Մկրտիչի (Ղկ 1, 47) արդէն եկած է»:

անոնց շուրջը ամբողջ մը եւ դպիրներ, որ անոնց հետ կը վիճաբանէին: **14** Բոլոր ժողովուրդը, զինքը տեսնելով՝ զարմացաւ եւ ընդառաջ վագեց ողջունելու զայն: **15** «Ի՞նչ բանի մասին կը վիճէիք», հարցուց անոնց: **16** Ժողովուրդէն մէկը, պատասխանելով ըսաւ. «Վարդապետ, քեզի բերի որդիս, որ համը դեւ ունի, **17** եւ ուր ալ դեւը բռնէ զինքը՝ գետին կը զարնէ, եւ տղան կը փրփրի, ակռաները կը կրճատէ եւ կը պրկուի. աշակերտներուդ ըսի որ հանեն, բայց չկրցան հանել»: **18** Յիսուս պատասխանեց անոնց. «Ո՛վ անհաւատ սերունդ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՞րբ ձեզի պիտի հանդուրժեմ. ինձի՛ բերէք զայն»:

19 Եւ իրեն տարին. դեւը, զայն տեսնելուն պէս, իսկոյն ուժգին ցնցեց տղան, որ գետին իյնալով սկսաւ թաւալիլ ու փրփրիլ: **20** «Ո՞րչափ ատենէ ի վեր այս այսպէս է», հարցուց Յիսուս տղուն հօրը. «Մանկութենէն ի վեր, պատասխանեց ան. **21** շատ անգամ դեւը զինքը կրակի ու ջուրի մէջ կը նետէ, որպէսզի մեռցնէ. արդ, եթէ կրնաս բան մը ընել՝ գթա՛ մեր վրայ եւ օգնէ՛ մեզի, Տէ՛ր»: **22** «Եթէ կրնաս, ըսիր, աւելցուց Յիսուս. ամէ՛ն բան կարելի է անոր՝ որ կը հաւատայ»: **23** «Կը հաւատամ, աղաղակեց իսկոյն մանուկին հայրը, օգնէ՛ անհաւատութեանս»: **24** Իսկ Յիսուս, տեսնելով որ ժողովուրդը վրան կը խռնուի, սաստեց պիղծ դեւին եւ ըսաւ. «Հա՛մը ու խո՛ւլ դեւ, կը հրամայեմ քեզի, ելի՛ր ատկէ եւ անգամ մըն ալ մի՛ մտներ ատոր մէջ»: **25** Դեւը, ճշալով եւ ուժգին ցնցելով տղան՝ դուրս ելաւ, եւ պատանին մեռելի պէս մնաց, այնպէս որ շատեր ըսին թէ մեռաւ:

26 Բայց Յիսուս, անոր ձեռքէն բռնելով, ոտքի հանեց եւ կանգնեցուց: **27** Երբ Յիսուս տուն մտաւ, աշակերտները առանձին հարցուցին. «Ինչո՞ւ մենք չկրցանք հանել դեւը»: **28** Յիսուս պատասխանեց. «Այս տեսակները ուրիշ բանով չեն ելլեր՝ եթէ ոչ աղօթքով ու պահքով»:

Երկրորդ կանխասացութիւն չարչարաններուն

Մտք 17, 22-23. Ղկ 8, 43-45

29 Անկէ մեկնելով, Գալիլեայի մէջէն կ'անցնէին, եւ Յիսուս չէր

ուզեր որ մարդ իմանայ: **30** կը սորվեցնէր իր աշակերտներուն եւ կ'ըսէր. «Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը եւ պիտի սպաննեն զինքը, եւ երեք օր ետք յարութիւն պիտի առնէ մեռեալներէն»: **31** Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը եւ կը վախնային հարցնել:

Ո՞վ է ամէնէն մեծը

Մտք 18, 1-5. Ղկ 9, 46-48

32 Կափառնաում հասաւ, եւ տուն մտնելով, հարցուց անոնց. «Ի՞նչ բանի վրայ կը վիճէիք ճամբան իրարու հետ»: **33** Անոնք լուռ կեցան, որովհետեւ իրարու հետ կը վիճէին ճամբան՝ թէ ո՞վ է մեծը: **34** Յիսուս նստաւ եւ տասներկուքը կանչելով, ըսաւ անոնց. «Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ՝ ամէնէն յետինը պէտք է ըլլայ եւ ամէնուն սպասաւորը»: **35** Եւ մանուկ մը առնելով, անոնց մէջտեղը կեցուց, գիրկն առաւ զայն ու ըսաւ. **36** «Ով որ ասոր նման մանուկ մը ընդունի իմ անունովս՝ զիս կ'ընդունի, եւ ով որ զիս ընդունի՝ ո՛չ թէ զիս կ'ընդունի, այլ զայն՝ ով զիս ղրկեց»:

Ով որ մեզի հակառակ չէ, մեզի հետ է

37 Յովհաննէս, խօսք առնելով ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր, եւ մենք արգիլեցինք, որովհետեւ մեզի հետ չէր շրջեր»: **38** «Մի՛ արգիլէք, պատասխանեց Յիսուս, որովհետեւ չկայ մէկը որ իմ անունովս հրաշք գործեց եւ ապա կարենայ գէշ խօսիլ իմ մասին: **39** Որովհետեւ ո՞վ որ մեզի հակառակ չէ՝ մեր կողմն է: **40** Եւ ո՞վ որ ձեզի բաժակ մը ջուր խմցնէ, այն անունով՝ թէ դուք Քրիստոսի էք, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, պիտի չկորսնցնէ իր վարձքը»:

Գայթակոութեան դէմ

Մտք 19, 6-9. Ղկ 17, 1-2

41 Ո՞վ որ կը գայթակղեցնէ այս փոքրիկներէն մէկը որ ինծի կը հաւատան, աւելի լաւ պիտի ըլլար անոր համար՝ որ վիզէն իշու երկանաքար մը կապուէր եւ ծովը նետուէր: **42** Եթէ ձեռքդ կը

գայթակղեցնէ քեզ՝ կտրէ՝ զայն ու նետէ. որովհետեւ աւելի լաւ է քեզի համար մէկ ձեռքով մտնել յաւիտենական կեանքը, քան թէ երկու ձեռք ունենալ եւ գեհնն երթալ, անչէջ կրակին մէջ. **43** ուր անոնց որդը չի մեռնիր եւ կրակը չի մարիր: **44** Եւ եթէ ոտքդ կը գայթակղեցնէ քեզ՝ կտրէ՝ զայն ու նետէ. լա՛ւ է քեզի համար կաղ մտնել յաւիտենական կեանքը, քան երկու ոտք ունենալ եւ դժոխք իյնալ, **45** անչէջ կրակին մէջ ուր անոնց որդը չի մեռնիր եւ կրակը չի մարիր:

46 Եւ եթէ աչքդ կը գայթակղեցնէ քեզ՝ հանէ զայն. աւելի լա՛ւ է քեզի համար մէկ աչքով Աստուծոյ արքայութիւնը մտնել՝ քան երկու աչք ունենալ եւ գեհնն իյնալ, **47** ուր անոնց որդը չի մեռնիր եւ կրակը չի մարիր: **48** Որովհետեւ ամէն ինչ կրակով պիտի աղ-ուի. **49** Աղը օգտակար է, բայց եթէ աղը անհամ դառնայ, ինչո՞վ պիտի համեմուի. ուրեմն ա՛ղ ունեցէք ձեր մէջ եւ իրարու հետ խա-ղաղութեամբ ապրեցէք»:

Յիսուս կը ջնջէ ապահարգանք

Մտք 19, 1-9

10 **1** Յիսուս, անկէ մեկնելով՝ եկաւ Հրէաստանի սահման-ները, Յորդանանի միւս կողմը, եւ դարձեալ ժողովուր-դը հաւաքուեցաւ անոր շուրջը, եւ ինչպէս սովոր էր՝ սկսաւ դարձեալ սորվեցնել անոնց: **2** Իսկ փարիսեցիները մօտե-ցան, եւ զինքը փորձելու համար՝ հարցուցին. «Ներելի՞ է որ այրը իր կինը թողու»: **3** «Ի՞նչ պատուիրեց ձեզի Մովսէս», պատասխա-նեց Յիսուս: **4** «Մովսէս թոյլ տուաւ, ըսին անոր, արձակման թուղթ գրել եւ արձակել»: **5** «Ձեր խստասրտութեա՛ն համար, պա-տասխանեց Յիսուս, գրեց ձեզի այդ պատուիրանը. **6** բայց արար-

Գլ. 10, 5 – Այս թոյլտուութիւնը Հին Ուխտին անկատարութենէն կը հետե-ւէր: Որովհետեւ անոր օրէնքները չէին կարող ճշմարիտ սրբութեան առաջնոր-դել մարդը, ո՛չ ալ տալ անոր այն միջոցները, որոնք Նոր Ուխտին մէջ ձեռնտու կ'ըլլան անոր իր սրտին բոլոր անկարգ միտումներուն յաղթել կարենալու: Հմմտ. նաեւ Մտք 19, 8:

չուլթեան սկիզբէն Աստուած արու եւ էգ ստեղծեց զանոնք եւ ըսաւ. **7** ասոր համար այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ կնոջ ետեւէն պիտի երթայ, **8** եւ երկուքը՝ մէկ մարմին պիտի ըլլան. *հետեւաբար երկուք չեն, այլ մէկ մարմին*: **9** Արդ, ինչ որ Աստուած միացուց՝ մարդը թող չբաժնէ»: **10** Տան մէջ, աշակերտները դարձեալ նոյն բանը հարցուցին: **11** Եւ ան ըսաւ անոնց. «Ով որ իր կինը թողու եւ ուրիշ մը առնէ՝ կը շնայ: **12** Եւ եթէ կինը իր այրը թողու եւ ուրիշ մը առնէ՝ կը շնայ»:

Յիսուս կ'օրհնէ մանուկները

Մտք. 19, 13–15. Ղկ 18, 15–17

13 Մանուկներ բերին Յիսուսի՝ որպէսզի ձեռքը անոնց վրայ դնէ. իսկ աշակերտները կը սաստէին բերողները: **14** Յիսուս, ասիկա տեսնելով՝ բարկացաւ, յանդիմանեց զանոնք եւ ըսաւ. «Թոյլ տուէ՛ք որ մանուկները ինծի գան եւ մի՛ արգիլէ՛ք անոնց, որովհետեւ այդպիսիներո՛ւն կը պատկանի Աստուծոյ արքայութիւնը: **15** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունիր մանուկի նման՝ պիտի չ'առնէ հոն»: **16** Եւ զանոնք գիլրկն առնելով՝ ձեռքը անոնց վրայ դրաւ եւ օրհնեց զանոնք:

Հարուստ երիտասարդը

Մտք. 19, 16–22 – Ղկ 18, 18–23

17 Երբ Յիսուս անկից ճամբայ կ'ելլէր, հարուստ մարդ մը վազելով եկաւ, ծնրադրեց անոր առջեւ եւ հարցուց. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ որ յաւիտեանական կեանքը ժառանգեմ»: **18** Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. ո՛չ ոք բարի է, բացի Աստուծմէ: **19** Պատուիրանները գիտես. մի՛ շնար, մի՛

9 – Ամուսնական կապը ամուսնացեալներէն մէկուն կամ միւսին մահովը միայն կրնայ լուծուիլ: Այս կապը անփակտելի կը մնայ մինչեւ իսկ այ՛ն ատեն, երբ ամուսնացեալները որեւէ պատճառի մը համար իրարմէ բաժնուած ապրին: Մարդկային ո՛չ մէկ օրէնք կարող է աստուածային այս օրէնքը բռնաբարել կամ եղծանել:

սպաններ, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայեր, մի՛ խաբեր, հայրդ ու մայրդ պատուէ»։ **20** Վարդապետ, պատասխանեց ան, այդ բոլորը պահած եմ մանկութենէս ի վեր․ ուրիշ ի՞նչ բան կը պակսի ինծի»։

21 Յիսուս անոր նայեցաւ, սիրեց զայն եւ ըսաւ․ «Միայն մէ՛կ բան կը պակսի քեզի․ եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, զնա ծախէ ունեցածդ, աղքատներուն տուր եւ երկինքի մէջ գանձ պիտի ունենաս․ եւ խաչդ առնելով՝ ետեւէս եկուր»։ **22** Այս խօսքին վրայ, ան խոժոռեցաւ ու զնաց տրտում, որովհետեւ շատ ստացուածքներ ունէր։

Վտանգը հարստութեան

Մտք 19, 23–26․ Ղկ 18, 24–27

23 Յիսուս, շուրջը նայելով՝ ըսաւ աշակերտներուն․ «Ո՛րքան դժուար է հարստութիւն ունեցողներուն՝ Աստուծոյ արքայութիւնը մտնել»։ **24** Իսկ աշակերտները զարմացած էին անոր խօսքերուն վրայ։ Յիսուս, դարձեալ խօսելով, ըսաւ․ «Որդեակնե՛ր, ո՛րքան դժուար է Աստուծոյ արքայութիւնը մտնել անոնց համար՝ որ իրենց հարստութեան վրայ կը դնեն իրենց յոյսը։ **25** Աւելի դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի՝ քան հարուստ մը Աստուծոյ արքայութիւնը մտնել»։ **26** Անոնք դե՛ռ աւելի զարմացած՝ իրարու կ'ըսէին․ «Ուրեմն, ո՞վ պիտի կարենայ փրկուիլ»։ **27** Յիսուս, անոնց նայելով՝ ըսաւ․ «Ատիկա մարդոց համար անկարելի է, բայց ոչ Աստուծոյ համար․ որովհետեւ ամէն բան հնարաւոր է Աստուծոյ»։

Յիսուսի հետեւողներուն վարձքը

Մտք 19, 27–30․ Ղկ 18, 28–30

28 Այն ատեն Պետրոս խօսք առաւ եւ ըսաւ․ «Ահաւասիկ մենք ամէն բան թողուցինք եւ քու ետեւէդ եկանք»։ **29** Յիսուս պատասխանեց․ «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, չկայ մէկը որ ինծի կամ Աւետարանին համար թողու տուն կամ եղբայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ զաւակներ կամ ազարակներ, **30** եւ հարիւրապատիկը չստանայ հիմա, ներկայ ժամանակին՝ տուներ, եղբայրներ,

քոյրեր, մայրեր, զաւակներ եւ ագարակներ, հալածանքներով մէկտեղ, եւ հանդերձեալ աշխարհի մէջ ալ՝ յաւիտեանական կեանքը: **31** Բայց շատեր որ առաջին են՝ վերջին պիտի ըլլան, եւ վերջիններ՝ առաջին»:

Երրորդ կանխասացութիւն չարչարանքներուն

Մտք 20, 17-19. Ղկ 18, 31-32

32 Երուսաղէմ ելլելու ճամբուն վրայ էին. Յիսուս անոնց առջեւէն կը քայլէր, իսկ ետեւէն գացողները զարմացած էին ու կը վախնային: Յիսուս, դարձեալ տասներկուքը առանձին առնելով՝ սկսաւ ըսել անոնց ինչ որ իրեն պիտի պատահէր. **33** «Ահաւասիկ երուսաղէմ կ'ելլենք, եւ Մարդու Որդին պիտի մատնուի քահանայապետներուն եւ դպիրներուն, եւ մահուան պիտի դատապարտեն զինքը, եւ հեթանոսներու ձեռքը պիտի մատնեն. **34** պիտի ծաղրեն ու պիտի ծեծեն զինքը, երեսը պիտի թքեն, պիտի սպաննեն եւ երեք օրէն յարուլթիւն պիտի առնէ»:

Ջերեդէոսի որդիներուն խնդրանքը

Մտք 20, 20-23

35 Ջերեդէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Վարդապետ, քեզմէ կ'ուզենք որ մեր խնդրանքը կատարես»: **36** Եւ ան ըսաւ անոնց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի», **37** եւ անոնք ըսին անոր. «Շնորհէ՛ մեզի որ փառքիդ մէջ մեզմէ մէկը աջ կողմդ՝ միւսն ալ ձախ կողմդ բազմի»: **38** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Չէ՛ք գիտեր թէ ինչ կը խնդրէք. կրնա՞ք խմել բաժակը զոր ես պիտի խմեմ, կամ մկրտուիլ այն մկրտութեամբ որով ես պիտի մկրտուիմ»: «Կրնա՛նք», ըսին անոնք:

39 Յիսուս պատասխանեց. «Բաժակը զոր ես պիտի խմեմ՝ դուք ալ պիտի խմէք, եւ պիտի մկրտուիք այն մկրտութեամբ՝ որով ես

32 – Մինչ աշակերտները կը վախնային, Քրիստոս խաղաղ ու անյողոզող կը դիմէր մահուան:

պիտի մկրտուիմ. **40** Բայց աջ ու ձախ կողմս նստեցնելը՝ իմ ձեռքս չէ. այդ անոնց համար է՝ որոնց համար պատրաստուած է»:

Մեծեր պարտին ծառայել

Մտք 20, 24-28. Ղկ 22, 24-27

41 Այն ատեն, այս լսելով, միևս տասը աշակերտները սկսան Յակոբոսի եւ Յովհաննէսի դէմ բարկանալ: **42** Յիսուս քովը կանչեց զանոնք եւ ըսաւ. «Գիտէ՞ք թէ ազգերու մէջ, անոնք որ իշխան նկատուած են՝ անոնք կը տիրեն, եւ իրենց մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ. **43** Բայց այդպէս չլլա՛յ ձեր մէջ. այլ ով որ ձեզմէ մէկը մեծ կ'ուզէ ըլլալ՝ ձեր սպասաւորը թող ըլլայ, **44** եւ ով որ առաջին կ'ուզէ ըլլալ՝ ամէնուն ծառան թող ըլլայ: **45** Որովհետեւ Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու՝ այլ ծառայելու, եւ իր անձը փրկանք տալու շատերու փոխարէն»:

Երիւզովի կոյրը

Մտք 20, 29-34. Ղկ 18, 35-43

46 Եւ Երիւզով եկան: Մինչ ան Երիւքովէն կ'ելլէր իր աշակերտներով եւ բազմաթիւ ամբոխով, Տիմէոսի որդին՝ Բարտիմէոս, կոյր մուրացիկը, ճամբուն եզերքը նստած էր: **47** Երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին է՝ սկսաւ աղաղակել եւ ըսել. «Յիսուս, Որդի Դաւթի, ողորմէ՛ ինծի»: **48** Շատեր կը սաստէին անոր՝ որ լռէ. Բայց անիկա դեռ աւելի կը պոռար. «Որդի՛ Դաւթի, ողորմէ՛ ինծի»: **49** Յիսուս կանգ առաւ եւ հրամայեց որ կանչեն զայն: Կանչեցին կոյրը ըսելով. «Քաջալերուէ՛, ելի՛ր, քեզ կը կանչէ»: **50** Եւ ան, զգեստները նետելով, ցատկեց եւ Յիսուսին մօտ եկաւ: **51** Յիսուս հարցուց անոր. «Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի»: «Ռաբբի, ըսաւ կոյրը, թող աչքե՛րս բացուին»: **52** «Գնա՛, պատասխանեց Յիսուս, քու հաւատքդ փրկեց քեզ»: Եւ իսկոյն աչքերը բացուեցան ու Յիսուսի ետեւէն կ'երթար ճամբուն ընթացքին:

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ

Մտք 21, 1-11. Ղկ 19, 28-38. Յովհ 12, 12-16

11 **1** Երբ մօտեցան Երուսաղէմի, Բեթփազէի ու Բեթանիայի մօտերը, Ձիթենեաց լերան տակ, Յիսուս աշակերտներէն երկուքը ղրկեց՝ ըսելով. **2** «Գացէ՛ք ձեր դիմացի գիւղը եւ Հագլիւ հոն մօտէ՛ք՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ տակաւին մարդ նստած է՝ քակեցէ՛ք եւ բերէ՛ք: **3** Եւ եթէ մէկը Հարցնէ ձեզի՝ թէ ինչո՞ւ կը քակէք այդ աւանակը, պատասխանեցէ՛ք՝ որ իր տիրոջ պէտք է, եւ խսկոյն հոն պիտի ղրկէ զայն»:

4 Գացին եւ գտան աւանակը դուրսը, փողոցին մէջ՝ դրան կապուած, եւ քակեցին զայն: **5** Հոն կեցողներէն ոմանք Հարցուցին. «Ի՞նչ կ'ընէք, ինչո՞ւ կը քակէք աւանակը»: **6** Անոնք, Յիսուսի պատուիրածին համաձայն պատասխանեցին, եւ միւսները թոյլ տուին անոնց, **7** Յիսուսին բերին աւանակը, իրենց զգեստները վրան դրին, եւ Յիսուս նստաւ անոր վրայ: **8** Շատեր իրենց զգեստները ճամբուն վրայ փռեցին եւ ուրիշներ, ծառերէն ճիւղեր կտրելով, ճամբուն վրայ տարածեցին:

9 Եւ առջեւէն ու ետեւէն գացողները կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Ովսանա՛ Բարձրեալիմ. **10** օրհնեա՛լ է ան որ կու գայ Տիրոջ անունով, օրհնեա՛լ է մեր հօր Դաւիթի թագաւորութիւնը որ կու գայ: Ովսաննա՛ երկինքի մէջ եւ փա՛ռք բարձունքներու մէջ: **11** Յիսուս եկաւ Երուսաղէմ, մտաւ տաճարը եւ դիտեց շուրջը ամէն բան, եւ որովհետեւ իրիկուան ժամը ուշ էր, տասներկուքին հետ Բեթանիա ելաւ:

Անպտուղ թփեմիմ

Մտք 21, 18-19

12 Հետեւեալ օրը, մինչ Բեթանիայէն դուրս կ'ելլէին անօթեցաւ, **13** եւ հռուէն տերեւալից թփերի մը տեսնելով՝ գնաց նայե-

Գլ. 11, 13 – Այս սաղարթագեղ թփեմիմ իր վաղափառ տերեւներով յուսալ կու տար թէ կարելի պիտի ըլլար անոր նիւղերուն վրայ գոնէ քանի մը հատ գովա-

լու թէ՛ արդեօք բան մը պիտի գտնէ՞՞ վրան. ու երբ քովը հասաւ՝ տերեւէն զատ բան չգտաւ վրան. որովհետեւ թուզի ժամանակ ալ չէր: **14** Այն ատեն Յիսուս ըսաւ թղենիին. «Այսուհետեւ ոչ ոք քեզմէ պտուղ ուտէ յաւիտեան»: Եւ աշակերտները կը լսէին:

Յիսուս վաճառականները Տաճարէն կը վնասէ

Մտք 21, 12-13. Դկ 18, 45-48. Յովհ 2, 14-16

15 Երուսաղէմ եկան. եւ Յիսուս, տաճար մտնելով՝ սկսաւ տաճարին մէջ գտնուող վաճառականները եւ գնողները դուրս հանել, լուծալափոխներու սեղանները ցրուեց եւ աղաւնի վաճառողներու աթոռները կործանեց: **16** Եւ չէր թողուր որ մէկը տաճարին մէջէն անօթ մը իսկ անցընէ: **17** Կ'ուսուցանէր եւ կ'ըսէր անոնց. «Գրուած է. Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն: Իսկ դուք՝ աւագակներու որք դարձուցիք զայն»: **18** Քահանայապետներն ու դպիրները, այս բաները լսելով՝ կը խորհէին թէ ինչպէս մեռցնեն զինքը, բայց կը վախճային իրմէ, որովհետեւ բոլոր ժողովուրդը անոր վարդապետութեան վրայ զարմացած էր: **19** Երբ իրիկունն եղաւ՝ քաղաքէն դուրս ելան:

Չորցած թղենին. Հաւատք եւ աղօթք

Մտք 21, 20-22

20 Հետեւեալ առտուն, երբ այն տեղէն կ'անցնէին՝ տեսան որ թղենին արմատէն չորցեր էր: **21** Յիչեց Պետրոս եւ ըսաւ Յիսուսի. «Ռաբբի՛, ահաւասիկ թղենին զոր անիծեցիր՝ չորցած է»: **22** Յիսուս պատասխանեց. «Հաւատք ունեցէ՛ք Աստուծոյ վրայ: **23** Ժշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մէկը ըսէ այս լերան. ելի՛ր ու ծով ինկիր, եւ իր սրտին մէջ չտարակուսի, այլ հաւատայ՝ թէ ըսածը կը կատարուի, պիտի ըլլայ ինչ որ ըսէ: **24** Ասոր համար կ'ըսեմ ձե-

ցուցիչ պտուղ գտնել: Սակայն երբ Փրկիչը անոր վրայ հա՛տ մը իսկ չգտաւ, խաբուսիկ երեւոյթ ունեցող այդ ծառը նմանցուց Երուսաղէմի ու հրեայ ժողովուրդին, որոնց օրինական արդարութիւնը լոկ կերպարանաւոր արդարութիւն էր, առաքինութեան ու սրբութեան պտուղներէն ամուլ (Ս. Յերոնիմոս):

զի՛նչ որ աղօթքով խնդրէ՞ք եւ հաւատաք թէ՛ պիտի ընդունի՞ք՝ պիտի կատարուի: **25** Եւ երբ աղօթէ՞ք՝ ներեցէ՛ք եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէսզի ձեր Հայրն ալ, որ երկրինքն է, ներէ՛ ձեր յանցանքներուն: **26** Իսկ եթէ դուք չներէ՞ք, ո՛չ ալ ձեր երկնաւոր Հայրը պիտի ներէ ձեզի ձեր յանցանքները»:

Յիսուսի իշխանութիւնը

Մտք 21, 23–27. Ղկ 20, 1–8

27 Երկրորդ անգամ եկան Երուսաղէմ, եւ մինչ տաճարին մէջ կը պտըտէր՝ իր մօտ հաւաքուեցան քահանայապետները, դպիրները, ծերերը եւ ըսին. **28** «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այս բաները, եւ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: **29** «Ես ալ ձեզի հարցում մը ընեմ, ըսաւ Յիսուս, ու պատասխանեցէ՞ք ինծի. այն ատեն ես ալ ձեզի պիտի ըսեմ՝ թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները: **30** Յովհաննէսի մկրտութիւնը երկիրքէ՞ն էր՝ թէ մարդերէն. պատասխանեցէ՛ք»: **31** Անոնք իրարու հետ կը խորհէին ու կ'ըսէին. «Եթէ ըսենք որ երկիրքէն էր, պիտի ըսէ մեզի՝ թէ հապա ինչո՞ւ հաւատացիք անոր: **32** Ուրեմն, մարդերէ՞ն էր, ըսենք: Ժողովուրդէն կը վախնանք. որովհետեւ ամէնքն ալ կ'ընդունէին որ Յովհաննէս մարգարէ էր»: **33** «Ձենք գիտեր», պատասխանեցին Յիսուսին: «Ես ալ ձեզի՛ չեմ ըսեր, աւելցուց Յիսուս, թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

Առակը ապստամբ մշակներուն

Մտք 21, 33–46. Ղկ 20, 9–19

12 **1** Յիսուս սկսաւ անոնց հետ առակներով խօսիլ եւ ըսել. «Մարդ մը այգի տնկեց եւ անոր շուրջը ցանկ քաշեց. հնձան փորեց, աշտարակ շինեց եւ մշակներուն յանձնելով՝ օտար աշխարհ գնաց: **2** Երբ ժամանակը հասաւ, ծառայ մը ղրկեց մշակներուն, որպէսզի անոնցմէ առնէ այգիին պտուղներէն: **3** Բայց անոնք, բռնելով զանիկա՝ ծեծեցին եւ դատարկ արձակեցին: **4** Դարձեալ ուրիշ ծառայ մըն ալ ղրկեց. անոր ալ գլուխը

վիրաւորեցին եւ անարգելով՝ ճամբեցին: **5** Դարձեալ ուրիշ մը ղրկեց. աս ալ սպաննեցին. եւ ուրիշ շատեր ալ, որոնցմէ ոմանք ծեծեցին եւ ոմանք սպաննեցին: **6** Հուսկ, կը մնար իր սիրելի որդին. ամէնէն վերջ ան ալ ղրկեց անոնց՝ ըսելով թէ թերեւս ամբշնան որդիէս: **7** Բայց մշակները, երբ տեսան որ ան կու գայ՝ իրարու ըսին. «Ասիկա՛ է ժառանգը, եկէ՛ք սպաննենք զայն եւ ժառանգութիւնը մեզի թող մնայ»: **8** Եւ բռնելով զանիկա՝ սպաննեցին ու այգիէն դուրս նետեցին: **9** Արդ, ի՞նչ պիտի ընէ այգիին տէրը: Պիտի գայ ու մշակները պիտի սպաննէ ու այգին ուրիշներու պիտի յանձնէ: **10** Եւ դուք, չէ՞ք կարդացած Գիրքին այս խօսքը՝

«Այն քոր անարգեցին կառուցողները, ա՛ն եղաւ անկիւնափարը: **11** Տիրոջմէ եղաւ ասիկա եւ սփռեց ինչ է մեր աչքերուն»: **12** Անոնք, հասկնալով թէ իրենց համար ըսաւ այդ առակը՝ զինքը բռնել կ'ուզէին, բայց ժողովուրդէն վախցան, եւ թողուցին զինքն ու գացին:

Կեսարին տուրքը

Մտք 22, 15-22. Ղկ 20, 20-26

13 Եւ փարիսեցիներէն ու Հերովդիանոսներէն քանի մը հոգի ղրկեցին անոր, որպէսզի իր խօսքին վրայ որսան զինքը: **14** Անոնք եկան եւ խորամանկութեամբ հարցուցին. «Վարդապէ՛տ, գիտենք որ դուռն ճշմարտախօս ես, եւ ոչ մէկէն կ'ալնածիս, որովհետեւ ու-

Գլ. 12, 9 – Առակս դիւրիմաց է: Այգին տնկողը՝ Աստուած է. այգին հրեայ ժողովուրդն է: Աշտարակն ու հնձանը կը պատկերացնեն տաճարը՝ իր մէջ մատուցուած գոհեքովը: Քահանաներն ու դպիրները՝ մշակներն են. իսկ ծառաները մարգարէներն են, զորոնք ղրկած էր այգիին տէրը: Իսկ անոր մէկ հատիկ որդին՝ Յիսուս Քրիստոս է, զոր Երուսաղէմէ դուրս հանելով՝ խաչեցին:

11 – Շինողները, որոնք շինուածքին ամենակարեւոր վեմը (քարը) արհամարհեցին ու անարգեցին, Հրեաներն են, որոնք մերժեցին ընդունիլ Աստուծոյ Որդին: Եւ սակայն արհամարհուած ու անարգուած այդ վեմն է՝ որ անկիւնափարը եղաւ, այսինքն Հրեաներէն ու հեթանոսներէն կազմուած տիեզերական եկեղեցւոյ էական յօդակապը: Տե՛ս նաեւ Մտք 21, 42 ծմօք. 5:

ընչը իր արտաքինէն չես դատեր, այլ ճշմարտութեամբ կ'ուսուցանես Աստուծոյ ճանապարհը: Արդ, ըսէ՛ մեզի. պէ՞տք է Կեսարին տուրք տալ՝ թէ ոչ. տա՞նք թէ չտանք»: **15** Յիսուս, հասկնալով անոնց կեղծաւորութիւնը՝ պատասխանեց. «Ինչո՞ւ կը փորձէք զիս, կեղծաւորներ. դահեկան մը բերէք ինծի որ տեսնեմ»: **16** Անոնք ալ բերին. եւ ան հարցուց անոնց. «Որո՞ւնն է այս պատկերը կամ գրութիւնը»: Եւ անոնք ըսին. «Կեսարինն է»:

17 Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Գացէք Կեսարին տուէք ինչ որ Կեսարինն է եւ Աստուծոյ՝ ինչ որ Աստուծոյ»: Եւ զարմացան անոր վրայ:

Մեռեալներու յարութիւնը

Մտք 22, 23-33. Ղկ 20, 27-40

18 Սաղուկեցիները, որ կ'ըսէին թէ յարութիւն չկայ, մօտեցան Յիսուսի եւ հարցուցին.

19 «Վարդապետ, Մովսէս գրած է մեզի համար՝ թէ եթէ մէկուն եղբայրը մեռնի եւ կինը թողու առանց զաւակի, մեռնողին եղբայրը առնէ այդ կինը եւ իր եղբօրը զաւակ յարուցանէ: **20** Արդ, եթէր եղբայրներ կային մեր քով. առաջինը կին առաւ եւ մեռաւ առանց զաւակ ունենալու: **21** Երկրորդն ալ առաւ նոյն կինը եւ մեռաւ. ան ալ զաւակ չթողուց: Նոյնպէս երրորդն ալ նոյնը առաւ. **22** եւ եօթն ալ զաւակ չթողուցին: Ամէնէն վերջ՝ կինն ալ մեռաւ:

23 Արդ, յարութեան օրը, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կին պիտի ըլլայ, որովհետեւ եօթը եղբայրներն ալ զինքը կին առին»: **24** Յիսուս պատասխանեց անոնց. «Ճիշտ ատոր համար է որ մոլորած էք դուք, որովհետեւ ո՛չ Գիրքը գիտէք եւ ո՛չ ալ Աստուծոյ զօրութիւնը: **25** Որովհետեւ երբ մեռեալներէն յարութիւն առնեն, ո՛չ կին կ'առնեն եւ ո՛չ ալ հարս կ'երթան, այլ երկինքի հրեշտակներուն նման են: **26** Գալով մեռեալներուն՝ թէ յարութիւն կ'առնեն, կարդացած չէ՞ք Մովսէսի Գիրքին մէջ՝ թէ ի՛նչպէս մորենիին մէջէն խօսեցաւ Աստուած եւ ըսաւ. Ես եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածն:

27 Ո՛չ մեռեալներու Աստուածը, այլ՝ ողջերու. ուրեմն դուք շատ մոլորած էք»:

Առաջին պատուիրանը

Մտք 22, 34-40. Ղկ 10, 25-28

28 Դպիրներէն մէկը, մօտենալով, լսեց որ անոնք կը վիճին. երբ տեսաւ թէ Յիսուս լաւ պատասխան տուաւ՝ հարցուց անոր. «Ո՞րն է բոլոր պատուիրաններուն առաջինը»: **29** Յիսուս պատասխանեց. «Ամէնէն առաջինը՝ Լսէ՛, Իսրայէլ, մեր Տէր Աստուածը՝ միակ Տէրն է: **30** Եւ պիտի սիրես քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ, բոլոր մտքովդ եւ բոլոր զօրութեամբդ. այս է առաջին պատուիրանը:

31 Երկրորդն ալ ասոր նման է. Ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս. ասոնցմէ աւելի մեծ ուրիշ պատուիրան չկայ»: **32** Դպիրը պատասխանեց. «Լաւ է, վարդապետ, ճշմարտութեամբ ըսիր՝ թէ Աստուած մէկ է եւ անկէ դուրս ուրիշ մը չկայ. **33** եւ թէ զԱյն սիրելը բոլոր սրտով եւ բոլոր զօրութեամբ եւ բոլոր մտքով, եւ ընկերը անձին պէս սիրելը՝ բոլոր ողջակէզներէն ու զոհերէն աւելի կ'արժէ»: **34** Յիսուս, տեսնելով որ իմաստութեամբ տուաւ պատասխանը՝ ըսաւ անոր. «Հեռու չես Աստուծոյ արքայութենէն»: Եւ ոչ ոք այլեւս կը համարձակէր բան մը հարցնել անոր:

Քրիստոս, Դաւիթի Որդին

Մտք 22, 41-46. Ղկ 20, 41-44

35 Մինչ Յիսուս տաճարին մէջ կ'ուսուցանէր՝ հարցուց. «Դպիրները ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոսը Դաւիթի որդին է, **36** մինչ ինքն իսկ Դաւիթ՝ Սուրբ Հոգիով կ'ըսէ. Տէրը ըսաւ իմ Տիրոջս. նստէ՛ աջ կողմս՝ մինչեւ որ քու թշնամիներդ ռաբբիքուդ պատւանդան դնեն: **37** Իսկ եթէ Դաւիթ Տէր կը կոչէ զինքը՝ ի՞նչպէս իր որդին կ'ըլլայ»: Եւ շատ ժողովուրդ հաճոյքով մտիկ կ'ընէր անոր:

Դպիրներու կեղծաւորութիւնը

Մտք 23, 6-7. Դկ 20, 45-47

38 Եւ իր վարդապետութիւնը սորվեցնելու ատեն կ'ըսէր. «**Ձգուչացէ՛ք** դպիրներէն, որ կը սիրեն փառաւոր զգեստներով շրջիլ, հրապարակներու վրայ առաջին ողջոյնը ստանալ, **39** Ժողովարաններու մէջ առաջին աթոռը նստիլ եւ ընթերքներու ընթացքին գահի վրայ բազմիլ. **40** անոնք այրիներու տունները կը կողոպտեն եւ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն»:

Այրի կնոջ լուսան

Դկ 21, 1-4

41 Յիսուս գանձանակին դիմաց կեցած կը դիտէր՝ թէ ինչպէս ժողովուրդը դրամ կը ձգէր գանձանակին մէջ. շատ մը հարուստներ շատ դրամ ձգեցին: **42** Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ երկու լումայ ձգեց, այսինքն մէկ նաքարակիտ: **43** Յիսուս, մօտը կանչելով իր աշակերտները՝ ըսաւ անոնց. «**Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այդ աղքատ այրին աւելի դրաւ գանձանակին մէջ՝ քան բոլոր միւսները որ դրին. 44 որովհետեւ ամէնքն ալ իրենց աւելորդէն տուին, բայց ան՝ իր չքաւորութեամբը, դրաւ ինչ որ ունէր, իր բոլո՛ր ապրուստը»:**

Մարգարէական քարոզ

Մտք 24, 1-4. Դկ 21, 5-7

13 **1** Մինչ տաճարէն կ'ելլէին՝ աշակերտներէն մէկը հարցուց. «Վարդապետ, տես ինչպիսի՛ քարեր են ասոնք եւ ինչպիսի՛ շինուածք»:**2** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «**Կը տեսնե՞ս այդ բոլոր հսկայ շինուածքը. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քար քարի վրայ պիտի չմնայ որ չքանդուի»:** **3** Եւ երբ **Ձիթենեաց լերան վրայ նստաւ՝ տաճարին դիմաց, Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս հարցուցին անոր առանձին. 4** «**Ըսէ՛** մեզի,

Գլ. 13, 4 – Տաճարը ե՞րբ պիտի կործանի, եւ քու գալուստիդ ու աշխարհի կատարածին նշանն ի՞նչ պիտի ըլլայ: Աշակերտները կը կարծէին քէ երկուէր

ե՞րբ պիտի պատահին այդ բաները, եւ ի՞նչ պիտի ըլլայ նշանը այդ բոլորին կատարուելուն»: **5** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոնց. «**Զգո՛յշ եղէ՛ք որ մարդ չխաբէ ձեզ: 6 Որովհետեւ շատեր պիտի գան իմ անունովս եւ պիտի ըսեն. ե՛ս եմ Քրիստոսը, եւ շատերը պիտի մոլորեցնեն: 7 Բայց երբ լսէք պատերազմները եւ պատերազմներու ժխորը՝ մի՛ խռովիք, որովհետեւ ասոնք պիտի ըլլան, բայց դեռ վախճանը չէ այդ: 8 Ազգ ազգի դէմ պիտի ելլէ, եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, եւ տեղ տեղ երկրաշարժներ պիտի ըլլան, սովեր, համաճարակներ եւ խռովութիւններ տեղի պիտի ունենան. այդ բոլորը սկիզբն է երկունքին:**

9 Զգո՛յշ եղէ՛ք ձեր անձերուն. ձե՛զ ալ պիտի մատնեն դատարաններու, եւ ժողովարաններու մէջ պիտի ծեծեն, եւ դատաւորներու եւ թագաւորներու առջեւ պիտի ելլէք՝ ինծի համար վկայութիւն տալու անոնց առջեւ: 10 Բայց նախ պէտք է որ Աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն: 11 Եւ երբ ձեզ մատնելու տանին, կանուխէն մի՛ հոգաք, եւ մի՛ մտածէք թէ ի՛նչ պիտի խօսիք, այլ ինչ որ այդ ժամուն տրուի ձեզի՝ ա՛ն խօսեցէ՛ք. որովհետեւ դուք չէ՛ որ պիտի խօսիք, այլ՝ Սուրբ Հոգին: 12 Եղբայրն իր եղբայրը մահուան պիտի մատնէ, եւ հայրը՝ իր որդին, եւ որդիները իրենց հայրերուն դէմ պիտի ելլեն ու պիտի սպաննեն զանոնք: 13 Եւ իմ անունիս համար՝ ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց ո՛վ որ մինչեւ վերջը տուկայ՝ ան պիտի փրկուի:

Երուսաղէմի տագնապը

Մտք 24, 15-25. Ղկ 21, 20-24

14 Եւ երբ տեսնէք կոտորածին պղծութիւնը *կանգնած հոն՝ ուր*

իրարու մերձաւոր ժամանակամիջոցի մը մէջ պիտի ունենային:

9 – Հայ քարգմանութեան մէջ կը պակսի «Զգուշացե՛ք ձեր անձերուն»:

10 – Աւետարանը՝ նոյն ատենը ծանօթ աշխարհին ամէն կողմը փարզուած էր արդէն, Երուսաղէմի աւերումէն ու առաքեալներու մարտիրոսութենէն ալ առաջ: Սակայն բովանդակ տիեզերքի բոլոր կողմերը՝ աշխարհի կատարածէն առաջ փարզուած պիտի ըլլայ ան:

14 – «Աւերածին պղծութիւնը» բացատրութեամբ, Քրիստոս Երուսաղէմի տա-

պէտք չէ որ ըլլայ (կարդացողը թող հասկնայ), այն ատեն Հրէաստանի մէջ եղողները՝ լեռները թող փախչին: **15** Եւ տանիքի վրայ գտնուողը՝ թող չիջնէ տուն եւ ներս չմտնէ՝ տունէն բան մը առնելու համար: **16** Եւ ագարակ գտնուողը՝ ետ թող չդառնայ զգեստը առնելու: **17** Բայց վա՛յ յղիներուն եւ ստնտուներուն՝ այդ օրերուն: **18** Աղօթեցէք որ ասոնք ձմեռ ատեն չպատահին: **19** Որովհետեւ այն օրերուն այնպիսի մեղուքիւններ պիտի ըլլան, որոնց մամնը արարչութեան սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, եւ ոչ ալ պիտի ըլլայ:

20 Եւ եթէ Աստուած չկարճեցնէր այդ օրերը իր ընտրեալներուն սիրոյն համար, ո՛չ ոք պիտի ազատէր, բայց իր ընտրեալներուն համար զորս ընտրեց՝ կարճեցուց այդ օրերը: **21** Այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ՝ ահաւասիկ հո՛ս է Քրիստոսը կամ ահա հոն, մի՛ հաւատաք: **22** Որովհետեւ պիտի ելլեն սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ եւ նշաններ ու հրաշքներ պիտի գործեն՝ մոլորեցնելու համար, եթէ հնար ըլլայ, նոյնիսկ իր ընտրեալները: **23** Բայց դուք զգոյշ եղէք, ահա կանխաւ ամէն բան ըսի ձեզի:

Յայտնութիւն Մարգու Ռոդիին

Մարք 24, 29–31. Ղկ 12, 25–27

24 Եւ այդ օրերուն, այն նեղութենէն ետք, արեգակը պիտի խաւարի եւ լուսինը պիտի չտայ իր լոյսը, **25** աստղերը երկինքէն վար պիտի թօթափին եւ երկինքի զօրութիւնները պիտի շարժին: **26** Այն ատեն պիտի տեսնեն Մարդու Որդին ամպերու վրայ եկած՝ մեծ զօրութեամբ ու փառքով: **27** Եւ այն ատեն ան պիտի ղրկէ իր հրեշտակները ու պիտի ժողվէ իր ընտրեալները չորս կողմէն, երկրի ծայրէն մինչեւ երկինքի ծայրը:

ճարին հեթանոսներու կողմէ պոծուիլը կ'ակնարկէ: «Կարդացողը թող հասկնայ» խօսքը անտարակոյս խորհրդածութիւնն է Աւետարանիչին, ընթերցողներու մտադրութիւնը տոյն համարին վրայ հրաւիրելու եւ նոյնին կարեւորութիւնը հասկցնելու:

ԹԳՆՆԻԻՆ առակը

Մտք 24, 32–36. Ղկ 21, 29–33

28 Բայց դուք թզենիին օրինակէն սորվեցէք. երբ անոր ոստե՜րը կակղնան եւ տերեւ արձակէ, կը հասկնաք թէ ամառը մօտ է. **29** նոյնպէս ալ դուք, երբ այս բոլորը կատարուած տեսնէք՝ գիտեցէք թէ դրան մօտ է: **30** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս սերունդը պիտի չանցնի՝ մինչեւ այս ամէնը կատարուի: **31** Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս պիտի չանցնին»:

32 Իսկ այդ օրուան եւ ժամու մասին՝ ո՛չ ոք բան մը գիտէ, ո՛չ երկինքի հրեշտակները եւ ո՛չ ալ Որդին, այլ միայն Հայրը:

Հսկեցէ՛ք

Մտք 25, 13–15. Ղկ 19, 12–13

33 Զգո՛յշ եղէք, հսկեցէք եւ աղօթեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ե՛րբ է ժամանակը. **34** նման օտար երկիր գացող մարդու մը, որ կը թողու իր տունը եւ ծառաներուն իշխանութիւն կող տայ, իւրաքանչիւրին իր գործը, եւ դռնապանին կը պատուիրէ որ արթուն մնայ: **35** Արդ, արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ե՛րբ պիտի գայ տանտէրը. իրիկո՞ւնը, կէս գիշերի՞ն, հաւախօսի՞ն՝ թէ առտուան դէմ: **36** Գուցէ յանկարծակի գալով՝ ձեզ քունի մէջ գտնէ: **37** Ուրեմն, ինչ որ ձեզի կ'ըսեմ ամէնուն կ'ըսեմ. արթո՛ւն կեցէք»:

30 – Քրիստոսի ժամանակակից Հրեաները ականատես եղան Երուսաղէմի կործանման. իսկ հրեայ ժողովուրդը առհասարակ պիտի մնայ մինչեւ աշխարհի վերջը:

32 – Տարակոյս չկայ թէ Քրիստոս նա՛եւ իբր մարդ գիտէր թէ ե՛րբ պիտի ըլլայ աշխարհի կատարածը, ինչպէս ակնբերւ կը տեսնուի 33-րդ համարէն՝ «Դու՛մ չեմ գիտեր»: Սակայն իր երկնաւոր Հօր կամքը չէր այդ օրն ու ժամը մարդոց յայտնել: Իրեն յանձնարարուած պաշտօնն էր՝ պարզապէս ծանուցանել մարդոց թէ իսկապէս ընդհանրական դատաստան տեղի պիտի ունենայ աշխարհի վերջը:

Դաւադրութիւն Յիսուսի դէմ

Մտք 26, 2-5. Ղկ 22, 1-2

14 ¹ Երկու օր ետք Ջատիկ էր եւ բաղարջակերք. քահանայապետներն ու դպիրները առիթ կը փնտռէին՝ թէ ինչպէս նենգութեամբ բռնեն Յիսուսը եւ սպաննեն:

² Բայց կ'ըսէին՝ ո՛չ այս տօնին, որպէսզի խռովութիւն չծագի ժողովուրդին մէջ:

Օծումը Բեթանիայի մէջ

Մտք 26, 6-13. Յովհ 12, 1-8

³ Մինչ Բեթանիա՝ բորոտ Սիմոնի տունը սեղանի բազմեր էին, կին մը եկաւ որ ազնիւ ու մեծագին նարդեան իւղի շիշ մը ունէր. եւ շիշը կոտրելով՝ իւղը Յիսուսի գլխուն թափեց: ⁴ Աչակերտները նեղացան եւ ըսին. «Ինչո՞ւ այդպէս փճացնել այդ իւղը. ⁵ կարելի էր զայն ծախել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ աղքատներուն տալ». եւ սաստիկ բարկացան անոր դէմ: ⁶ Եւ Յիսուս ըսաւ անոնց. «Թո՛ղ տուէք ատոր, ինչո՞ւ կը նեղէք զինքը. ան բարի գործ մը ըրաւ ինծի: ⁷ Աղքատները դուք ձեր հետն ունիք ամէն ատեն, եւ երբ ուզէք՝ կրնաք անոնց բարիք ընել. բայց զիս միշտ ձեզի հետ չունիք: ⁸ Այդ կինը կրցածն ըրաւ, կանուխէն օծելով մարմինս, իբր նշան թաղումիս: ⁹ Զճմարիտ կ'ըսեմ ձեզի, ուր որ քարոզուի Աւետարանը, բոլոր աշխարհի մէջ, ատոր ըրածն ալ պիտի պատմուի՝ իր յիշատակին համար»:

Յուդայի մատնութիւնը

¹⁰ Յուդա Իսկարիովտացի, տասներկուքէն մէկը, գնաց քահանայապետներուն՝ որպէսզի Յիսուսը անոնց մատնէ: ¹¹ Երբ անոնք

Գլ. 14, 3 – Նարդուր իւղ մըն է անուշահոտ, որ կը պատրաստուէր Հնդկաստան բուսնող տունկի մը (Նարդուսի) ծաղիկներէն:

8 – Յիսուս իր այս խօսքովը կ'ուզէ հասկցնել թէ իր մահուան օրը այնքան մօտ է, որ այս օծումը կարելի է արդէն իբր իր մարմնին օծումը նկատուիլ:

այս բանը լսեցին՝ ուրախացան, եւ խոստացան դրամ տալ անոր-
ինսկ ինքը՝ յարմար առիթը կը փնտռէր զանիկա մատնելու:

Պատրաստութիւնը Զատիկան ընթրիքին

Մտք 26, 17-18. Ղկ 22, 7-13

12 Բաղարջակերքի առաջին օրը, երբ Զատիկը կը գոհէին, աշա-
կերտները հարցուցին Յիսուսի. «Ո՞ր կ'ուզես որ երթանք պատ-
րաստութիւն տեսնենք, որպէսզի Զատիկը ուտես»: **13** Աշա-
կերտներէն երկուքը զրկեց՝ ըսելով անոնց. «Քաղաք գացէք, եւ
երբ քաղաք մտնէք, ձեզի պիտի հանդիպի մարդ մը, որ ուսին վրայ
ջուրի սափոր մը ունի. անոր ետեւէն գացէք. **14** եւ ո՛ր տունը որ
մտնէ՝ ըսէք տանտիրոջ. Վարդապետը կ'ըսէ. ո՞ր է իմ իջեւանս,
ուր աշակերտներուս հետ միասին Զատիկը պիտի ուտեմ. **15** եւ
անիկա ցոյց պիտի տայ ձեզի զարդարուած եւ պատրաստ մեծ վեր-
նատուն մը. հո՛ն պատրաստութիւն տեսէք մեզի համար: **16** Աշա-
կերտները գացին պատրաստելու, քաղաք հասան, գտան ինչպէս
որ ըսեր էր իրենց եւ պատրաստեցին Զատիկը:

Աւետում Յուդայի մատնութեան

Մտք 26, 20-25. Ղկ 22, 21-23. Յովհ 13, 21-30

17 Երբ իրիկուն եղաւ, հոն եկաւ տասներկու աշակերտներուն
հետ: **18** Եւ մինչ սեղանի նստած տակաւին կ'ուտէին, Յիսուս
ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ձեզմէ մէկը, որ ինծի հետ կ'ուտէ,
պիտի մատնէ զիս»: **19** Անոնք սկսան տխրիլ ու մէկիկ մէկիկ
հարցընել. «Արդեօք ե՞ս եմ. միւսը՝ միթէ ե՞ս եմ»: **20** Յիսուս պա-
տասխանեց եւ ըսաւ. «Տասներկուքէդ մէկը, որ իր ձեռքը ինծի հետ
պնակին մէջ թաթխեց: **21** Մարդու Որդին կ'երթայ, ինչպէս որ
գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն՝ որու ձեռքով պի-

12 – Նիսան ամսոյն 14-ի կէսօրէն սկսելով միջին ութ օր խմորուած հաց
տան մէջ պահելը օրէնքով արգիւրուած էր: Այս պատճառով ալ Հրեաները Նիսա-
նի 14-ը Բաղարջակերպաց (այսինքն անխմոր հաց ուտելու) առաջին օրը կը կոչե-
ին:

տի մատնուէ Մարդու Որդին. լաւ պիտի ըլլար այդ մարդուն համար որ ծնած իսկ չըլլար»:

Հաղորդութեան հաստատութիւնը

Մտք 26, 26–29. Դկ 22, 15–20

22 Եւ մինչ կ'ուտէին, Յիսուս, հաց առնելով, օրհնեց, մանրեց եւ տուաւ անոնց՝ ըսելով. «Առէ՛ք, ասիկա մարմինս է»: **23** Եւ բաժակն առնելով՝ գոհացաւ եւ տուաւ անոնց. ամէնքն ալ խմեցին անկէ. եւ ըսաւ անոնց. **24** «Ասիկա Նոր Ուխտի իմ արիւնս է, որ կը թափուի շատերու համար: **25** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ թի բերքէն պիտի չխմեմ ալլեւս, մինչեւ այն օրը՝ երբ նորը պիտի խմեմ Աստուծոյ արքայութեան մէջ»:

Յիսուս կը յայտնէ Պետրոսի ուրացումը

Մտք 26, 30–35. Դկ 22, 31–34. Յովհ 13, 36–37

26 Եւ գոհուիլէն մատուցանելով, Ձիթենեաց լեռը ելան:

27 Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Այս գիշեր, ամէնքդ պիտի գայթակղիք իմ պատճառովս, որովհետեւ գրուած է. պիտի զարնեմ հովիւը եւ ոչխարները պիտի ցրուին: **28** Բայց յարութենէս վերջ՝ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ»: **29** Այն ատեն Պետրոս ըսաւ. «Նոյնիսկ եթէ ամէնքն ալ գայթակղին՝ ես ո'չ»: **30** «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, պատասխանեց Յիսուս, որ դու այս գիշեր իսկ, աքաղաղը դեռ երկու անգամ չերգած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»: **31** Իսկ Պետրոս աւելի եւս կը պնդէր ու կ'ըսէր. «Եթէ քեզի հետ մեռնիլ ալ հարկ ըլլայ՝ քեզ պիտի չուրանամ»: Եւ ամէնքը նոյնը կ'ըսէին:

Յիսուս Գեթսեմանիի մէջ

Մտք 26, 36–46. Դկ 22, 40–46

32 Գեթսեմանի կոչուած գիւղը հասան, եւ Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Հո'ս նստեցէք, մինչեւ որ ես աղօթեմ»: **33** Եւ հետն առնելով Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը՝ սկսաւ

տխրիլ ու տագնապիլ: **34** Այն ատեն ըսաւ անոնց. «Տրտում է հոգիս մեռնելու աստիճան. հո՛ս կեցէք եւ հսկեցէ՛ք»: **35** Իսկ ինքը, քիչ մը յառաջ երթալով՝ երեսին վրայ գետին ինկաւ, ու կ'աղօթէր որ եթէ կարելի էր՝ այդ ժամը հեռանար իրմէ: **36** Եւ կ'ըսէր. «Աբբա՛, Հայր, ամէն ինչ քեզի հնարաւոր է. հեռացո՛ւր ինծմէ այս բաժակը. բայց ոչ՝ ինչ որ ես կ'ուզեմ, այլ՝ ինչ որ դո՛ւն կ'ուզես»:

37 Եւ վերադառնալով, զանոնք քունի մէջ գտաւ. եւ ըսաւ Պետրոսին. «Սիմո՛ն, կը քնանա՞ս. չկըցա՞ր ժամ մը արթուն մնալ: **38** Արթո՛ւն կեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք. հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»: **39** Դարձեալ գնաց, աղօթեց եւ միեւնոյն խօսքերն ըսաւ: **40** Երկրորդ անգամ դարձաւ եւ զանոնք նորէն քունի մէջ գտաւ, վասնզի անոնց աչքերը ծանրացեր էին եւ չէին գիտեր ի՛նչ պատասխանել: **41** Երրորդ անգամ եկաւ եւ ըսաւ անոնց. «Քնացէ՛ք այսուհետեւ եւ հանգչեցէ՛ք, որովհետեւ վախճանը հասած է. եկած է ժամը եւ ահա Մարդու Որդին կը մատնուի մեղաւորներու ձեռքը: **42** Օ՛ն, ելէ՛ք, երթա՛նք, ահա մօտեցաւ զիս մատնողը»:

Յիսուսի ձերբակալութիւնը

Մտք 26, 47-56. Դկ 22, 47-53. Յովհ 18, 2-11

43 Մինչ Յիսուս տակաւին կը խօսէր՝ եկաւ Յուդա Իսկարիովտացին, տասներկուքէն մէկը, եւ հետը խուժան մը, զինուած՝ սուրերով եւ բիրերով, որ ղրկուած էին քահանայապետերէն, դպիրներէն եւ ծերերէն: **44** Իսկ մատնիչը նշան տուած էր անոնց եւ ըսած. «Որուն հետ որ համբուրուիմ՝ ա՛յն է, բռնեցէ՛ք զայն եւ զգուշութեամբ տարէ՛ք»: **45** Եւ հազիւ հասած՝ մօտեցաւ Յիսուսին եւ ըսաւ. «Ռաբբի՛, Ռաբբի՛», եւ համբուրեց զայն: **46** Իսկ անոնք՝ իրենց ձեռքը երկարեցին Յիսուսի վրայ եւ բռնեցին զայն:

47 Յիսուսի մօտ գտնուողներէն մէկը սուրը քաշեց եւ քահանայապետին ծառային զարկաւ ու կտրեց անոր ալանջը: **48** Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ, աւագակի՞ վրայ ելած էք, սուրերով եւ բիրերով բռնելու զիս: **49** Ամէն օր ձեր քովն էի ու տաճարին մէջ կը սորվեցնէի, եւ զիս չբռնեցիք. բայց այս կ'ըլլայ՝ որպէսզի

մարգարէներուն գրածները կատարուին»։ **50** Այն ատեն բոլոր աշակերտները թողուցին զինքը եւ փախան։ **51** Եւ երիտասարդ մը անոր ետեւէն գնաց՝ մերկ, վրան կտաւ մը առած։ **52** երիտասարդները բռնեցին զայն, բայց ան, կտաւը թողած՝ անոնց ձեռքէն փախաւ մերկ։

Յիսուս Ատեանին առջեւ

Մտք 26, 57-68. Ղկ 22, 63-71

53 Եւ տարին Յիսուսը Կայիափա քահանայապետին մօտ, ուր հաւաքուեցան բոլոր քահանայապետները, դպիրներն ու ծերերը։ **54** Պետրոս հեռուէն կը հետեւէր Յիսուսի մինչեւ ներսը՝ քահանայապետին գաւիթը, եւ սպասաւորներուն հետ նստած կրակին քով՝ կը տաքնար։ **55** Իսկ քահանայապետները եւ բոլոր ատեանը Յիսուսին հակառակ վկայութիւն կը փնտռէին՝ որպէսզի սպաննեն զայն եւ չէին գտներ։ **56** Արդարեւ շատեր անոր դէմ սուտ վկայութիւն կու տային. բայց վկայութիւնները իրարու հետ համաձայն չէին։ **57** Ոմանք կ'ելլէին եւ սուտ վկայութիւն կու տային ու կ'ըսէին։ **58** «Մենք անկէ լսեցինք որ կ'ըսէր թէ ես պիտի քակեմ այս ձեռագործ տաճարը եւ երեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ առանց ձեռքի գործի»։ **59** Սակայն եւ այնպէս իրենց վկայութիւններն ալ իրարու նման չէին։

60 Այն ատեն քահանայապետը ժողովին մէջ ոտքի ելլելով՝ հարցուց Յիսուսին. «Պատասխան մը չես տար, ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ»։ **61** Բայց ան լուռ կը կենար եւ պատասխան չէր տար։ Քահանայապետը կրկին անգամ հարցուց. «Դո՞ւ ես Քրիստոսը, օրհնեալն Աստուծոյ որդին»։ **62** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Դո՛ւն ըսիր թէ ես եմ. բայց պիտի տեսնէ՞ք Մարդու Որդին Զօրութեան աջակողմը բազմած եւ երկինքի ամպերուն վրայէն եկած»։ **63** Քահանայապետը իսկոյն պատուեց իր պատմուճանը եւ

51 – Սուրբ Գիրքի մեկնիչներէն ոմանց կարծիքն է, թէ այս «երիտասարդը» նոյնիմեց Մարկոս Աւետարանիչը եղած ըլլայ։ Որովհետեւ այլապէս անմեկնելի կը գտնեն այս անկարելի դրուագին իր Աւետարանին մէջ յիշատակուիլը։

ըսաւ. «Ալ ի՞նչ պէտք կայ վկաներու. ահա ամէնքդ անոր բերնէն լսեցիք հայհոյութիւնը. ի՞նչ կը թուի ձեզի»: **64** Ամէնքն ալ դատապարտեցին զանիկա՝ թէ մահապարտ է:

65 Ոմանք սկսան անոր երեսը թփնել, գլուխը լաթով մը ծածկեցին եւ բռունցքով հարուածեցին, հարցնելով. «Մարգարէացի՛ր մեզ, Քրիստո՛ս, ո՞վ է քեզ հարուածողը»: Եւ սպասաւորները ապտակ կ'իջեցնէին անոր վրայ:

Պետրոսի ուրացումները

Մտք 26, 69-75. Ղկ 22, 55-62

66 Եւ մինչ Պետրոս վարը, գաւիթին մէջն էր, քահանայապետին աղախիններէն մէկը եկաւ. **67** տեսաւ Պետրոսը որ կը տաքնար, նայեցաւ անոր եւ ըսաւ. «Դո՛ւն ալ Նազովրեցի Յիսուսի հետ էիր»: **68** Իսկ Պետրոս ուրացաւ եւ ըսաւ. «Ես չե՛մ ճանչնար զինքը եւ չե՛մ հասկնար թէ ինչ ըսել կ'ուզես». եւ երբ դուրս ելաւ, նախագաւիթը, աքաղաղը կանչեց: **69** Աղախինը դարձեալ տեսաւ զինքը եւ սկսաւ քովիններուն ըսել՝ թէ ա՛ս ալ անոնցմէ է. իսկ Պետրոս կրկին անգամ ուրացաւ: **70** Քիչ ետք, չուրջը եղողները դարձեալ ըսին Պետրոսին. «Ապահով՝ դո՛ւն ալ անոնցմէ ես, որովհետեւ Գալիլեացի ես, եւ խօսուածքդ անգամ անոնց նման է»: **71** Բայց ան սկսաւ նզովել, երդում ընել եւ ըսել. «Զե՛մ ճանչնար այդ մարդը որուն վրայ կը խօսիք». **72** եւ իսկոյն աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Պետրոս յիշեց Յիսուսին ըսածը՝ թէ աքաղաղը երկու անգամ չերգած՝ դուռն երեք անգամ պիտի ուրանաս զիս եւ սկսաւ լալ:

Յիսուս Պիղատոսի առջեւ

Մտք 24, 11-26. Ղկ 23, 1-5. 13-25

15 **1** Առաւօտ կանուխ քահանայապետները, ծերերուն, դպիրներուն եւ բոլոր ատեանին հետ միասին, ժողով գումարեցին, կապեցին Յիսուսը եւ տարին յանձնեցին Պիղատոսի: **2** Պիղատոս հարցուց անոր եւ ըսաւ. «Դո՞ւն ես Հրեա-

ներու թագաւորը»։ Յիսուս պատասխանեց. «Դո՛ւն կ'ըսես»։ **3** Եւ քահանայապետները շատ ամբաստանութիւններ կ'ընէին անոր դէմ։ Իսկ Յիսուս բնաւ պատասխան չէր տար։ **4** Պիղատոս դարձեալ հարցուց. «Պատասխան չե՞ս տար. տե՛ս, որքա՛ն կ'ամբաստանեն քեզ»։ **5** Բայց Յիսուս ամենեւին պատասխան չտուաւ, մինչեւ իսկ զարմանք պատճառելով Պիղատոսին։

Յիսուսի դատապարտութիւնը

6 Պիղատոս, տօնին առիթով, կ'արձակէր բանտարկեալ մը զոր անոնք կ'ուզէին։ **7** Արդ, Բարաբբա անունով մէկը կար, ձերբակալուած ուրիշ ապստամբներու հետ, որոնք խռովութեան ատեն մարդ մը սպաննած էին։ **8** Ամբոխը, հաւաքուելով, սկսաւ բարձրաձայն աղաղակել ու խնդրել որ Պիղատոս իր սովորութեան համաձայն գործէր, եւ արձակէր Բարաբբան։ **9** Պիղատոս հարցուց անոնց. «Կ'ուզէ՛ք որ արձակեմ ձեզի Հրեաներու թագաւորը»։ **10** որովհետեւ գիտէր թէ քահանայապետները նախանձէ տարւած՝ կը մատնէին զանիկա։ **11** Իսկ քահանայապետները ամբոխն ալ համոզեցին՝ որպէսզի Բարաբբան արձակէ։ **12** Պիղատոս դարձեալ խօսեցաւ եւ ըսաւ անոնց. «Իսկ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ Հրեաներու թագաւորը»։

13 Անոնք, դարձեալ քահանայապետներէն գրգռուած, կը պոռային. «Խա՛չ հանէ»։ **14** «Ի՞նչ չարիք գործած է», հարցուց Պիղատոս։ Անոնք աւելի ուժգին կ'աղաղակէին. «Խա՛չ հանէ զանիկա»։ **15** Պիղատոս, ուզելով գոհացում տալ ամբոխին՝ արձակեց Բարաբբան եւ Յիսուսը ծեծել տալէն ետք՝ անոնց ձեռքը յանձնեց, որպէսզի խաչ հանուի։

Յիսուս փառշով կը պսակուի

Մտք 27, 27–31. Յովհ 19, 1–3

16 Եւ զինուորները ներս տարին Յիսուսը, ապարանքին գաւի-

Թը. կանչեցին բոլոր գուռերը, **17** եւ Յիսուսին հագուեցուցին կարմիր պատմուճան մը եւ ծիրանի զգեստ մը, եւ գլուխը դրին փուշով շինուած պսակ մը, **18** եւ սկսան ողջունել զայն ըսելով. «Ողջո՛յն քեզի, Հրեաներու թագաւոր»։ **19** Եղէգով ալ գլուխը կը ծածէին եւ երեսը կը թքնէին. եւ առջեւը ծնրադրելով՝ կ'երկրպագէին անոր։

Ճանապարհ Խաչի

Մտք 27, 34-38. Ղկ 23, 33-34. Յովհ 13, 18-24

20 Զայն այսպէս ծաղրելէ ետ՝ պատմուճանն ու ծիրանի զգեստը հանեցին եւ իր զգեստները հագցուցին, եւ դուրս տարին՝ որպէսզի խաչ հանեն։ **21** Եւ ստիպեցին Սիմոն Կիւրենացին, Աղեքսանդրի եւ Ռուփոսի հայրը, որ ագարակէն դառնալով անկէ կ'անցնէր, որ Յիսուսի խաչափայտը տանի։ **22** Զայն տարին Գողգոթա կոչուած տեղը, որ կը թարգմանուի՝ Գանկի տեղ։ **23** Եւ անոր տուին զմուռսով խառնուած գինի, բայց ան չառաւ։

Յիսուսի խաչելութիւնը

24 Ապա խաչեցին զինքը, եւ անոր զգեստները բաժնեցին վիճակ ձգելով անոնց վրայ՝ թէ ո՛վ ինչ պիտի առնէ։ **25** Երրորդ ժամն էր երբ խաչեցին Յիսուսը։ **26** Եւ դատապարտութեան վճիռը այսպէս գրուած էր. **27** «Հրեաներու թագաւոր»։ Անոր հետ խաչ հանեցին երկու աւագակներ ալ, մէկը աջ, միւսը ձախ կողմը։ **28** Եւ կատարուեցաւ գիրը որ կ'ըսէ թէ անօրէններու կարգը դասուեցաւ։ **29** Անցորդները, իրենց գլուխը շարժելով՝ կը հայհոյէին ու կ'ըսէին. «Վա՛հ, դուռ որ տաճարը կը քակէիր եւ երեք օրէն կը շինէիր, **30** ազատէ՛ ինքզինքդ եւ խաչէ՛ դա՛ր իջիր»։ **31** Նոյնպէս քահանայապետները, իրարու մէջ կը ծաղրէին, դպիրներուն հետ միասին, ըսելով. «Ուրիշները ազատեց, ինքզինքը չի կրնար ազատել։ **32** Այդ Քրիստոսը, Իսրայէլի թագաւորը, թող հիմա՛ իջնէ խաչէն, որպէս-

21 – Աղեքսանդր եւ Ռուփոս ծանօթ էին հռոմայեցի քրիստոնեաներուն (Խմբ. Հով 16, 13), այս պատճառով Մարկոս կը յիշատակէ զանոնք։

զի տեսնենք ու հաւատանք»։ Նոյնպէս անոր հետ խաչուածները կը նախատէին զինքը։

Յիսուսի հոգեվարքն ու մահը

Մտք 27, 45-54. Ղկ 23, 44-47

33 Վեցերորդ ժամուն, խաւար պատեց բոլոր երկիրը մինչեւ իններորդ ժամը։ **34** Եւ իններորդ ժամուն՝ Յիսուս աղաղակեց բարձր ձայնով եւ ըսաւ. «Էլի՛, Էլի՛, լամա՞ սարաֆանի», որ կը թարգմանուի՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ քողուցիր զիս»։ **35** Շուրջը գտնուողներէն ոմանք, երբ լսեցին, ըսին թէ Եղիան կը կանչէ։ **36** Եւ մէկը վազեց, սպուռեմ մը թափեց քացախին մէջ եւ եղէգին ծայրը անցնելով՝ տուաւ որ խմէ, ըսելով. «Թողուցէ՛ք, տեսնենք թէ Եղիան կու գա՞յ զինքը իջեցնելու»։ **37** Իսկ Յիսուս, մեծ ձայն մը արձակելով՝ հոգին աւանդեց։ **38** Այն ատեն տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի պատրուեցաւ։ **39** Հարիւրապետը, որ հոն կեցեր էր, տեսնելով թէ այսպէս աղաղակելով հոգին աւանդեց՝ ըսաւ. «Արդարեւ այս մարդը Աստուծոյ որդի էր»։

Սուրբ կիները Գողգոթայի մէջ

40 Կիներ ալ կային, որ հեռուէն կը դիտէին. անոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացին, կրտսեր Յակոբի եւ Յովսէփ մայրը՝ Մարիամ, եւ Սողոմէն, **41** որոնք, երբ Յիսուս Գալիլեա էր, անոր ետեւէն կ'երթային ու կը ծառայէին անոր. եւ ուրիշ շատ մը կիներ ալ, որ իրեն հետ Երուսաղէմ ելած էին։

Յիսուսի քաղումը

Մտք 27, 57-61. Ղկ 23, 50-55

42 Երբ իրիկուն եղաւ, քանի որ ուրբաթ էր եւ չաբաթամուտը

42 – Ուրբաթ ասորեբէնէ (ըրուրթթա) փոխ առնուած բառին իմաստն է «պատրաստութիւն»։ Հրեաները այսպէս կ'անուանէին շաբթուան վեցերորդ օրը, իբր պատրաստութեան օր, որովհետեւ նոյն օրը կը պատրաստէին ու կը

կը սկսէր, **43** եկաւ Յովսէփ Արեմաթացին, պարկեշտ նախարար մը, որ ինքն ալ Աստուծոյ արքայութեան յոյս ունէր. համարձակեցաւ, Պիղատոսին ներկայացաւ եւ Յիսուսի մարմինը խնդրեց: **44** Իսկ Պիղատոս, զարմացած՝ թէ այնչափ շուտ մեռաւ, կանչեց հարիւրապետը եւ հարցուց անոր՝ թէ իրապէս այնչափ շուտ մեռաւ: **45** Եւ երբ ստուգեց հարիւրապետին՝ Յովսէփին շնորհեց մարմինը:

46 Յովսէփ կտաւ գնեց եւ խաչէն վար իջեցնելով՝ կտաւով փաթթեց եւ դրաւ գերեզմանին մէջ, որ ժայռի մէջ փորուած էր. եւ քար մը գլորեց գերեզմանին դրան առջեւ: **47** Իսկ Մարիամ Մագդաղենացին եւ Մարիամը, Յակոբի եւ Յովսէփի մայրը, տեսան տեղը ուր դրուեցաւ:

Պարապ գերեզմանը եւ հրեշտակին աւետումը

Մտք 28, 1-8. Ղկ 24, 1-10

16 **1** Երբ շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամը՝ Յակոբի մայրը, եւ Սողոմէն, գացին խոռնկեր գնեցին, որպէսզի գան եւ օծեն մարմինը: **2** Եւ միաշաբաթի առաւօտը, շատ կանուխ, արեւազալին, գացին գերեզմանը: **3** Անոնք իրարու կ'ըսէին. «Ո՞վ պիտի վերցնէ քարը գերեզմանին դուռէն»: **4** Բայց, իրենց աչքերը բարձրացնելով՝ տեսան որ արդէն քարը մէկ կողմ գլորած էր. իրապէս շատ մեծ էր: **5** Եւ ներսը, գերեզման մտնելով՝ տեսան երիտասարդ մը, որ սպիտակ պատմուճան հագած՝ նստած էր աջ կողմը. եւ սաստիկ վախցան: **6** «Մի՛ վախնաք, ըսաւ անոնց, խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք. յարութիւն առաւ, հոս չէ՛, ահա՛ւասիկ տեղը ուր դրուած էր: **7** Բայց գացէ՛ք, ըսէ՛ք անոր աշակերտներուն եւ Պետրոսի՝ թէ ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ. հո՛ն պիտի տեսնէք զինքը, ինչպէս որ ձեզի ըսած էր»: **8** Երբ լսեցին՝ ելան գերեզմանէն եւ

հոգային ինչ որ իրենց պէտք էր Շաբաթ (ասոր. շաբթթա = հանգիստ, դադար) օրուան համար, գոր պարտաւոր էին սուրբ պահել: Հետեւաբար, Յիսուսի մահուան օրը Ուրբաթ էր, ըստ վկայութեան բոլոր Աւետարանիչներուն:

փախան, որովհետեւ ահուգոյի մէջ էին. եւ իրենց վախէն՝ մարդու բան չըսին:

Յիսուսի երեւումները

9 Յիսուս, միաշաբաթի առաւօտը յարութիւն առնելով՝ երեւցաւ նախ Մարիամ Մագդաղենացիին, որմէ եօթը դէս հանած էր: **10** Եւ ան, երթալով, պատմեց անոնց որ Յիսուսի հետ էին եւ լացի ու սուգի մէջ էին: **11** Անոնք երբ լսեցին թէ Յիսուս ողջ է եւ անոր երեւցած է, չհաւատացին:

12 Յետոյ, տարբեր կերպարանքով երեւցաւ անոնցմէ երկուքին, որ արտ կ'երթային: **13** Անոնք ալ եկան միլսներուն պատմեցին, բայց անոնք ալ չհաւատացին:

14 Յետոյ երեւցաւ տասնմէկ աշակերտներուն՝ մինչ սեղանի նստեր էին. եւ յանդիմանեց անոնց անհաւատութիւնը եւ խստասրտութիւնը, որովհետեւ չէին հաւատացած անոնց՝ որ տեսած էին զինքը, յարութիւն առած:

Առաքելներու իշխանութիւնները

15 Յիսուս ըսաւ անոնց. «Գացէք բոլո՛ր աշխարհի մէջ եւ աւետարանը քարոզեցէք բոլո՛ր արարածներուն: **16** Ո՛վ որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի, եւ ո՛վ որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: **17** Ասո՛նք են նշանները որ պիտի ընկերանան անոնց՝ որ կը հաւատան. իմ անունովս դեւեր պիտի հանեն, **18** նոր լեզուներ պիտի խօսին, իրենց ձեռքով օձ պիտի բռնեն, եւ եթէ մահացու թոյն ալ խմեն՝ պիտի չվնասէ անոնց. իրենց ձեռքը դնելով հիւանդներուն վրայ՝ պիտի բժշկեն զանոնք»:

Համբարձումը

19 Եւ ինքը, Տէր Յիսուս, անոնց հետ այսպէս խօսելէ ետք՝ երկինք համբարձաւ եւ նստաւ Հօր աջ կողմը: **20** Իսկ անոնք՝ ելան եւ ամէն կողմ քարոզեցին, Տիրոջ գործակցութեամբ, եւ խօսքը կը հաստատէին ամէն տեսակ հրաշքներով որ կ'ընկերանային անոնց:

Ս. ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ԿԵԱՆՔԸ

Ղուկաս ազգով յոյն էր, Անտիոք քաղաքէն:

Գիտական եւ դրական լաւ դաստիարակութիւն ստացած էր, եւ արուեստով բժիշկ էր: Հաւանական կարծիք է՝ որ Ղուկաս մէկն ըլլայ այն հեթանոսներէն, որոնք Ս. Ստեփանոսի մահէն յետոյ, Անտիոքի մէջ, քրիստոնէական հաւատքն ընդունեցան:

Աշակերտած է Ս. Պօղոսի՝ ժառանգելով անոր հոգին, խանդավառ սէրը եւ վարդապետութիւնը, ու դարձած է անոր սիրելի եւ հաւատարիմ գործակիցը՝ առաքելական երկրորդ եւ երրորդ ուղեւորութիւններուն ժամանակ, հետեւած է իր պաշտելի վարդապետին մինչեւ Երուսաղէմ, Կեսարիա եւ Հռոմ:

Ժողովրդական աւանդութիւն մը կ'ըսէ՝ թէ Ղուկաս նկարիչ ալ եղած ըլլայ եւ Ս. Աստուածածնի պատկերներ նկարած: Այս մասին առաջին յիշատակութիւնը Ե. Դարուն է: Պօղոս առաքեալին մահէն վերջ, Ղուկաս քրիստոնէական հաւատքը քարոզած է Իտալիա, Գաղղիա, Դաղմատիա եւ Մակեդոնիա, եւ աւանդութեան համաձայն՝ մարտիրոսական մահ ունեցած է:

ԱՒԵՏԱՐԱՆԸ

Երրորդ Աւետարանին հեղինակն է Ղուկաս: Բոլոր Ս. Հայրերը եւ եկեղեցական ամենահին գրիչները միաձայնութեամբ Ղուկասի կ'ընծայեն երրորդ Աւետարանը, ըսելով՝ թէ ան գրի առած է ինչ որ Պօղոս առաքեալ բերանացի քարոզած է:

Աւետարանի լեզուն յունարէն է, եւ գրութեան բարձր ոճը ցոյց կու տայ՝ թէ Ղուկաս յոյն լեզուին մէջ զարգացած էր եւ գրական ճաշակ ունէր: Աւետարանը գրուած է 60-ին, Պօղոս առաքեալի

առաջին բանտարկույթեան վերջերը, «Գործք Առաքելոց»էն առաջ եւ Մատթէոսի ու Մարկոսի աւետարաններէն վերջ, ինչպէս կը հաստատէ Ս. Գրքի Յանձնաժողովը իր 1912 Յունիս 26-ի վճիռով:

Աւետարանը ուղղուած է Թէոփիլոսի, եւ անոր անձին մէջ՝ հեթանոսութենէն դարձող բոլոր քրիստոնեաներուն: Այս պատճառով՝ Ղուկաս սիրով գրի կ'առնէ Քրիստոսի այն խօսքերը եւ գործերը, որոնք խրախոյս եւ քաջալեր կը ներշնչեն հեթանոսներու. այսպէս, հաճոյքով կը խօսի Զակքէոսի տան փրկութեան, բարի աւագակի դարձին, անառակ որդիին հօր ներողամտութեան, մեղաւոր կնոջ եւ մաքսաւորին արդարանալուն, բարի սամարացիին մասին:

ՆՊԱՏԱԿԸ

Աւետարանիչը ինք կ'ըսէ. որպէսզի Թէոփիլոս եւ հաւատացեալները ճանչնան ճշմարտութիւնը այն վարդապետութեան, զոր բերանացի աւանդութեամբ ստրված էին. Այսինքն՝ թէ Քրիստոս փրկիչ է բովանդակ մարդկութեան, հրեաներուն եւ հեթանոսներուն, թէ երկնքի արքայութիւնը բաց է անխտիր ամէնուն առջեւ, հրեաներուն եւ սամարացիներուն, մաքսաւորին եւ մեղաւորին, աղքատին ու հարուստին. թէ Քրիստոս լոյսն է, որ պիտի լուսաւորէ բոլոր ազգերը:

Մինչ Մատթէոս Յիսուսը կը ներկայացնէ իբրեւ ալնկալուած Մեսիան, Մարկոս կը նկարագրէ իբր Աստուծոյ Որդին, որուն կը հնազանդի բովանդակ ստեղծուած բնութիւնը, Ղուկաս կը ներկայացնէ իբրեւ տիեզերական փրկիչ. որ լի է անսահման բարութեամբ եւ գութով ամէնուն հանդէպ:

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ս. Ղուկասի Աւետարանը կը բաժնուի եօթը մասերու.

Ա. Մաս - Յիսուսի մանկութիւնը. Յովհաննէս Մկրտիչ - Աւետում - Այցելութիւն - Ծնունդ - Ընծայում - Նազարեթ (1 - 2):

Բ. Մաս - Պատրաստութիւն քարոզութեան. Նախակարապետը

- Մկրտությունը - Անապատի մէջ (3, 4-13):

Գ. Մաս - Քարոզողութիւն Գալիլեայի մէջ. Կափառնաում - Տասներկու աշակերտներու ընտրութիւնը - Առակներ եւ հրաշքներ (4,14 - 9,50):

Դ. Մաս - Ճամբորդութիւն դէպի Երուսաղէմ. Առակներ - Քարոզներ - Հակաճառութիւններ - Հրաշքներ (9, 51 - 19, 27):

Ե. Մաս - Վերջին շաբաթ Երուսաղէմի մէջ. Յաղթական մուտքը - Վերջին պատուէրները (19, 28 - 21):

Զ. Մաս - Յիսուսի չարչարանքները եւ մահը: (22 - 23):

Է. Մաս - Յիսուսի յարութիւնը (24):

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Նախաբան

1 **1** Քանի որ շատեր ձեռնարկեցին շարադրել պատմութիւնը դէպքերուն որ մեր մէջ կատարուած են, **2** ինչպէս որ աւանդեցին մեզի անոնք որ սկիզբէն ականատեսներն ու սպասաւորները եղան խօսքին, **3** եւ ալ, որ սկիզբէն ամէն ինչ խնամքով հետազօտած էի, փափաքեցայ կարգով գրել քեզի, ո՛վ պատուական թէոփիլոս, **4** որպէսզի ճանչնաս ճշմարտութիւնը այն վարդապետութիւններուն որոնց աշակերտեցար:

Աւետում եւ ծնունդ Յովհաննէս Մկրտիչի

5 Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրով, **2** Զաքարիա անու-նով քահանայ մը կար, Աբիայի դասակարգէն, որուն կինը Ահարօնի սերունդէն էր եւ կը կոչուէր Եղիսաբեթ: **6** Երկուքն ալ Աստուծոյ առջեւ արդար էին եւ Տիրոջ բոլոր պատուիրաններուն եւ օրէնքներուն համաձայն՝ անբասիր կեանք կ'ապրէին: **7** Եւ անոնք զաւակ չունէին, որովհետեւ Եղիսաբեթ ամուլ էր, եւ երկուքն ալ յառաջացած տարիքի մէջ էին:

8 Մինչ **2** Զաքարիա Աստուծոյ առջեւ քահանայական պաշտօն կը կատարէր, **9** իր դասակարգին օրերը հասած ըլլալով, իրեն վիճակեցաւ, քահանայութեան սովորութեան համաձայն՝ Տիրոջ տաճա-

Գլ. 1, 2 – Աւանդել բառը, Նոր Կտակարանի մէջ, բերանացի կերպով հա-
ղորդուած վարդապետութեան համար միշտ կը գործածուի:

9 – Սովորութիւն էր շաբաթական սպասարկութիւն ունեցող դասակարգէն
փահանայ մը որոշել, որուն պարտականութիւնն էր տաճարին մէջ, առտու իրի-
կուն խունկ մատուցանել:

ըր ժտնել եւ խնկարկել: **10** Եւ խնկարկութեան ժամանակ՝ բոլոր ժողովուրդը դուրսը կ'աղօթէր: **11** Այդ պահուն անոր երեւցաւ Տիրոջ հրեշտակը՝ խուսկերու սեղանին աջ կողմը կանգնած: **12** Զաքարիա, զայն տեսնելուն պէս՝ խռովեցաւ ու վրան վախ եկաւ: **13** Հրեշտակը ըսաւ անոր. «Մի՛ վախնար, Զաքարիա, որովհետեւ աղօթքդ լսելի եղաւ. քու կինդ՝ Եղիսաբեթ, որդի մը պիտի ծնի քեզի եւ անոր անունը Յովհաննէս պիտի դնես: **14** Անիկա քեզի ուրախութեան եւ ցնծութեան պատճառ պիտի ըլլայ, եւ շատեր անոր ծնունդով պիտի հրճուին: **15** Որովհետեւ ան մեծ պիտի ըլլայ Տիրոջ առջեւ, գինի եւ օղի պիտի չխմէ եւ մօրը որովայնէն սկսեալ՝ Սուրբ Հոգիով պիտի լեցուի, **16** եւ Իսրայէլի որդիներէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ: **17** Եւ ինքը պիտի քալէ անոր առջեւէն՝ Եղիային հօգիով եւ զօրութեամբ, որպէսզի հայրերուն սրտերը դէպի որդիները դարձնէ, եւ ըմբոստները՝ արդարներու իմաստութեան, լաւ տրամադրուած ժողովուրդ մը պատրաստելու համար Տիրոջ»:

18 Զաքարիա ըսաւ հրեշտակին. «Եւ ի՞նչպէս հասկնամ այս բանը, քանի որ ես ծեր եմ եւ կնոջ ալ տարիքը անցած է»: **19** Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ Աստուծոյ առջեւ կը կենամ, եւ զրկուեցայ որպէսզի քեզի հետ խօսիմ եւ այս աւետիսը տամ: **20** Բայց ահա դուն համը պիտի ըլլաս եւ պիտի չկարենաս խօսիլ մինչեւ այն օրը՝ երբ այս բանը կատարուի, որովհետեւ չհաւատացիր իմ խօսքերուն՝ որ պիտի կատարուին երբ ժամանակը հասնի»: **21** Իսկ ժողովուրդը կը սպասէր Զաքարիային, եւ կը զարմանար տաճարին մէջ անոր ուշանալուն վրայ: **22** Երբ դուրս ելաւ՝ չէր կրնար խօսիլ անոնց հետ. եւ հասկցան որ տաճարին մէջ տեսիլք մը ունեցած է. նշաններով կը խօսէր անոնց հետ եւ պապանձած կը մնար:

23 Երբ իր պաշտամունքի օրերը լրացան՝ ան տուն դարձաւ: **24** Այդ օրերէն ետք, իր կինը՝ Եղիսաբեթ, յղացաւ. եւ հինգ ամիս ծածուկ կ'ապրէր, ըսելով. **25** «Ի՞նչ է այս գոր ըրաւ Տէրը ինծի այս

25 – Ամուսիւնը կամ անգաւակութիւնը հրեաներուն հոլ մեծ մախատինք կը համարուէր:

օրերուս, հաճելով վերցնել վրայէս այս նախատինքը մարդոց դիմաց»:

Աւետում

26 Եւ վեցերորդ ամսուն, Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ զրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը որուն անունն էր Նազարեթ, **27** կոյսի մը որ նշանուած էր Դաւիթի տունէն Յովսէփ անունով մարդու մը հետ. եւ կոյսին անունը Մարիամ էր: **28** Հրեշտակը, անոր մօտենալով՝ ըսաւ. «Ողջո՛յն քեզի, շնորհքներով լի, Տէրը քեզի հետ է»: **29** Այս խօսքերը լսելով, Մարիամ վրդովեցաւ եւ կը խորհէր թէ ինչ կը նշանակէ այս ողջոյնը: **30** Հրեշտակը ըսաւ. «Մի՛ վախնար, Մարիամ, որովհետեւ Աստուծոյ առջեւ շնորհք գտար. **31** ահա՛ պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնիս եւ անոր անունը Յիսուս պիտի դնես: **32** Ան մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալին Որդին պիտի կոչուի. **33** Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթի աթոռը, եւ Յակոբի տան վրայ պիտի թագաւորէ յաւիտեան. եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ»: **34** Մարիամ հարցոյց հրեշտակին. «Ինչպէ՞ս կրնայ ըլլալ ինծի ատիկա, քանի որ ես այր չեմ ճանչնար»: **35** Հրեշտակը պատասխանեց. «Սուրբ Հոգին պիտի իջնէ քու վրադ եւ Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի, որովհետեւ Սուրբը որ քեզմէ պիտի ծնի՝ Աստուծոյ Որդի պիտի կոչուի: **36** Ահա՛ Եղիսաբեթ, քու ազգականդ ալ, որդի մը յղացած է իր ծերութեան ատեն եւ արդէն վեցերորդ ամսուայ մէջ է, ինքը որ ամուլ կոչուած էր. **37** որովհետեւ Աստուծոյ

28 – Գրաբար թարգմանութեան Ուրախ Լեռ բերկրեալդ բացատրութիւնը լիովին չի համապատասխաներ յոյն բնագրին արտայայտած իմաստին: Յունարէն $\chi\alpha\rho\iota\sigma$ = ($\chi\alpha\rho\iota\sigma$ բայէն) կրնայ ընդհանուր առմամբ նաեւ ուրախացի՛ր իմաստն ունենալ. սակայն հոս, այս պարբերութեան մէջ, $\chi\alpha\rho\iota\sigma$ «ողջոյն քեզի» իմաստն ունի պարգապէս: Իսկ $\kappa\epsilon\chi\alpha\rho\iota\tau\omega\mu\acute{\epsilon}\nu\eta$ կը նշանակէ ո՛չ թէ բերկրեալ, հապա «շնորհագար», հաճելի, շնորհալի = լի շնորհօք:

34 – Մարիամ հաստատ մտադրած էր կոյս մնալ: Կարծելով սակայն թէ մայրութիւն յանձն առնելովը՝ հրաժարած պիտի ըլլար իր կուսութենէն, խոնարհութեամբ ու զարմանքով մը կը հարցնէ հրեշտակին. «Ի՞նչպէս պիտի ըլլայ ատիկա»: Հրեշտակը սակայն կը բացատրէ անոր, թէ Աստուծոյ Հոգին ու Աստուծոյ զօրութիւնն է որ պիտի իրագործէ այս յղութիւնը:

համար անկարելի բան չկայ»։ **38** Մարիամ ըսաւ. «Ահա՛ււստիկ, Տիրոջ աղախինն եմ ես, ըսածիդ պէս թող ըլլայ ինծի»։ Եւ հրեշտակը մեկնեցաւ անոր քովէն։

Մարիամ կ'այցելէ Եղիսաբեթին

39 «Այն օրերուն Մարիամ, ճամբայ ելլելով՝ փութով գնաց լեռնակողմը, Յուդեայի մէկ քաղաքը. **40** եւ մտնելով Զաքարիայի տունը՝ ողջոյն տուաւ Եղիսաբեթին։ **41** Եղիսաբեթ, հագլւ լսեց Մարիամի ողջոյնը, մանուկը խայտաց իր որովայնին մէջ. եւ Եղիսաբեթ լեցունեցաւ Սուրբ Հոգիով, **42** ու բարձրաձայն գոչեց. «Օրհնեա՛ւ ես դուն կիներուն մէջ, եւ օրհնեալ է պտուղը քու որովայնիդ։ **43** Այս ի՞նչպէս կ'ըլլայ որ Տիրոջս մայրը ինծի գայ։ **44** Որովհետեւ ահա, երբ քու ողջոյնիդ ձայնը ականջիս հասաւ, մանուկս ցնծալով խայտաց որովայնիս մէջ։ **45** Եւ երանի՛ անոր որ հաւատաց, որովհետեւ պիտի կատարուի ինչ որ Տիրոջ կողմէ ըսւեցաւ իրեն»։

46 Մարիամ պատասխանեց. «Իմ անձս Տէրը կը փառաւորէ, **47** եւ Հոգիս կը ցնծայ իմ փրկիչ Աստուծովս. **48** որովհետեւ իր աղախինին նուաստութեան նայեցաւ։ Ահա, ասկէ ետք բոլոր ազգերը ինծի երանի՛ պիտի տան, **49** որովհետեւ Հզօրն ինծի մեծամեծ բաներ ըրաւ. եւ սուրբ է անոր անունը։ **50** Անոր ողորմութիւնը՝ իր երկիւղածներուն վրայ է, սերունդէ սերունդ։ **51** Հրաշքներ գործեց իր բազուկով, ամբարտաւանները՝ իրենց սրտին խորհուրդովը ցրուեց։ **52** Հզօրներն իրենց գահէն տապալեց, եւ խոնարհները բարձրացուց։ **53** Անօթիները բարիքներով լիացուց եւ հարուստները ձեռնունայն արձակեց։ **54** Պաշտպան կանգնեցաւ իր Իսրայէլ ծառային՝ յիշելով իր ողորմութիւնը, **55** ինչպէս խօսած էր մեր

39 – Աւանդութեան համաձայն, Այն Քարիմ կոչուած քաղաքն է, երկու ժամ հեռու Երուսաղէմէն, դէպի արեւմուտք։

41 – Մարմնացած Բանը իր առաջին շնորհքները Մարիամի միջոցով կը բաշխէ։ Մանուկն Յովհաննէս ու Եղիսաբեթ կը լեցուին Սուրբ Հոգիով։ Յովհաննէս կը ճանչնայ Փրկիչը, եւ անկէ ստացած սրբաբար շնորհքին պարգեւներով կը գեղուի անոր հոգին։

հայրերուն՝ Աբրահամին եւ անոր սերունդին, յաւիտեան»:

56 Մարիամ չուրջ երեք ամիս կեցաւ Եղիսաբեթի մօտ, եւ իր տունը դարձաւ:

Ծնունդ եւ քլփատում Յովհաննէս Մկրտիչի

57 Եղիսաբեթի ծննդաբերելու ժամանակը հասաւ, եւ որդի մը ծնաւ: **58** Դրացիներն ու ազգականները, լսելով որ Տէրը մեծ ողորմութիւն ցոյց տուաւ անոր հանդէպ՝ կ'ուրախակցէին անոր հետ:

59 Ութերորդ օրը, եկան մանուկը թլփատելու. եւ կ'ուզէին հօրը անունով՝ Զաքարիա կոչել զայն: **60** Մայրը, խօսք առնելով՝ «Ո՛հ, ըսաւ, Յովհաննէս պիտի կոչուի»: **61** Անոնք ըսին. «Ազգականներուդ մէջ չկայ մէկը որ Յովհաննէս կոչուած ըլլայ»: **62** Եւ նշանացի կ'ակնարկէին հօրը՝ թէ ի՞նչպէս կ'ուզէ որ կոչուի մանուկը: **63** Անիկա տախտակ մը ուղեց ու վրան գրեց. «Յովհաննէս է անոր անունը». ամէնքը զարմացան: **64** Իսկոյն Զաքարիայի բերանը բացուեցաւ ու լեզուն քակուեցաւ. կը խօսէր եւ կ'օրհնէր զԱստուած: **65** Վախ տիրեց բոլոր անոնց վրայ որ կը լսէին այս բաները եւ չուրջը կը բնակէին. եւ այս դէպքերը Հրէաստանի ամբողջ լեռնակողմը կը պատմուէին: **66** Եւ բոլոր լսողները իրենց սրտին մէջ կը պահէին ու կ'ըսէին. «Արդեօք ի՞նչ պիտի ըլլայ այս մանուկը»: Եւ Տիրոջ ձեռքը անոնց հետ էր:

Զաքարիայի օրհներգը

67 Իսկ Զաքարիա, անոր հայրը, Սուրբ Հոգիով լեցուեցաւ, մարգարէացաւ եւ ըսաւ.

68 «Օրհնեա՛լ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այցելեց մեզի եւ փրկեց իր ժողովուրդը, **69** եւ իր ծառային՝ Դաւիթի տունէն փրկութեան զօրութիւն մը յարոյց մեզի, **70** ինչպէս ասեո՞ք իր սուրբ մարգարէներուն բերնով խոստացած էր՝ **71** թէ մեր քչնամիներէն ու բոլոր մեզ ատողներու ձեռքէն պիտի ազատէ մեզ, **72** ողորմութիւն պիտի ընէ մեր հայրերուն, յիշելով իր սուրբ ուխտը, **73** այն երգումը զոր ըրած էր մեր հօր՝ Աբրահամին, **74** որով

մեր թշնամիներու ձեռքէն ազատած՝ **75** առանց երկիւղի, սրբութեամբ եւ արդարութեամբ, պիտի ծառայենք իրեն մեր կեանքին բոլոր օրերուն:

76 Իսկ դուն, մանո՛ւկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ Տիրոջ առջեւէն պիտի երթաս՝ **77** պատրաստելու համար անոր մամբաները, եւ ժողովուրդին տալու փրկութեան գիտութիւնը, **78** իրենց մեղքերու թողութեան համար, շնորհիւ մեր Աստուծոյ գթառատ ողորմութեան, որով արեգակը բարձունքէն այցելեց մեզի, **79** որպէսզի լուսաւորէ զանոնք՝ որ խաւարի ու մահուան ստուերներու մէջ կը նստէին, եւ ուղղէ մեր ոտքերը՝ խաղաղութեան ճամբուն վրայ»:

80 Մանուկը կ'աճէր ու կը զօրանար հոգիով, եւ անապատներու մէջ կը բնակէր, մինչեւ այն օրը՝ երբ Իսրայէլի երեւցաւ:

Յիսուսի ծնունդը

2 **1** Այդ օրերուն, Օգոստոս կեսարին կողմէ հրովարտակ մը ելաւ՝ բոլոր աշխարհը մարդահամար ընելու: **2** Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ՝ երբ Կիւրինիոս Ասորիքի վրայ կուսակալ էր: **3** Եւ ամէնքը կ'երթային արձանագրուելու, իւրաքանչիւրն իր քաղաքը: **4** Յովսէփ ալ, Դաւիթի տունէն եւ սերունդէն ըլլալով՝ ճամբայ ելաւ Գալիլեայի Նազարէթ քաղաքէն դէպի Հրէաստան, Դաւիթի քաղաքը, **5** որ Բեթղեհէմ կը կոչուի, արձանագրուելու համար Մարիամի հետ, որ իր նշանածն էր եւ յղի էր: **6** Երբ հոն հասան՝ Մարիամի ծննդաբերութեան ժամանակը եկաւ, **7** եւ ծնաւ իր անդրանիկ որդին, եւ խանձարուրով պատեց ու դրաւ մսուրի մէջ, որովհետեւ իրենց համար տեղ չկար իջեանին մէջ:

78 – Յիսուս Քրիստոսով, մարդկութեան համար, երկինքէն ծագած է հոգեւոր Արեգակ մը: Հին Կտակարանին մէջ արդէն գրուած է գալիք Մեսիային համար (Նաթ.9, 1-2) Մագող լոյս, եւ Քրիստոս ինքնին Աշխարհի լոյսը կ'անուանէ ինքզինքը:

8 Այնտեղ հովիւներ կային, որոնք գիշերը, բացօթեայ, իրենց հօտերը կը պահպանէին: 9 Տիրոջ հրեշտակը երեւցաւ անոնց, եւ Տիրոջ փառքը ծագեցաւ անոնց վրայ ու սաստիկ վախցան: 10 Հրեշտակն ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, ահա՛ ձեզի կ'աւետեմ մեծ ուրախութիւն մը, 11 որ բոլոր ժողովուրդին ուրախութիւնը պիտի ըլլայ: Որովհետեւ այսօր Դաւիթի քաղաքին մէջ Փրկիչ մը ծնաւ ձեզի, 12 որ Օծեալ Տէրն է: Եւ այս թող նշան ըլլայ ձեզի. մանուկ մը պիտի գտնէք խանձարուրով պատուած եւ մսուրի մէջ դրուած»:

13 Եւ յանկարծակի այդ հրեշտակին հետ երեւցաւ բազմութիւն մը երկնաւոր գօրքերու, որ կ'օրհնէին զԱստուած եւ կ'ըսէին.

14 «Փա՛ռք Աստուծոյ՝ բարձունքներուն մէջ, խաղաղութիւն երկրի վրայ եւ հաճութիւն մարդոց միջեւ»:

15 Երբ հրեշտակները երկինք վերացան՝ հովիւները ըսին իրարու. «Եկէ՛ք, երթանք մինչեւ Բեթղեհէմ, եւ տեսնենք թէ ի՛նչ է այս պատահածը զոր Տէրը ցոյց կու տայ մեզի»:

16 Եւ փութով գացին ու գտան Մարիամն ու Յովսէփը եւ մանուկը՝ մսուրի մէջ դրուած:

17 Այս տեսնելով, գիտցան թէ ինչ ըսուած էր իրենց՝ մանուկին մասին: 18 Եւ բոլոր անոնք որ կը լսէին՝ կը զարմանային հովիւներու պատմածներուն վրայ: 19 Իսկ Մարիամ, այս ամէնը կը պահէր եւ իր սրտին մէջ կը խորհէր անոնց վրայ: 20 Հովիւները դարձան, կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած այն բոլոր բաներուն համար զոր լսեցին ու տեսան, ինչպէս ըսուած էր իրենց:

Թլփատում եւ ընծայում Յիսուսի

21 Երբ մանուկին թլփատումի ութ օրերը լրացան՝ անունը Յիսուս դրին, ինչպէս հրեշտակէն կոչուած էր, տակաւին որովայնին մէջ չլղացած:

Գլ. 2, 7 – «Անդրանիկ» բառը Սուրբ Գրքի լեզուով չունի մեր ընթացիկ լեզվին ունեցած սովորական իմաստը, հակադրութեամբ յետմածին կամ կրտսեր որդիին: Աւետարանիչը կ'իշխէ այս բացատրութեամբ մասնաւորապէս շեշտել, որ Մարիամի Որդիին վրայ եւս կատարուած են անդրանիկ զաւակներու մասին եղած օրէնքի բոլոր տրամադրութիւնները:

22 Եւ երբ, Մովսէսի օրէնքին համաձայն՝ լրացան սրբութեան օրերը, Երուսաղէմ տարին զայն՝ Տիրոջ ներկայացնելու համար, **23** ինչպէս գրուած էր Տիրոջ օրէնքին մէջ. «Ամէն արու անդրանիկ Տիրոջ պիտի նուիրուի, **24** եւ գոյգ մը տատրակ կամ աղանիի երկու ձագ ընծայ պիտի տրուի, Տիրոջ օրէնքին համաձայն»:

Սիմէոն ծերունիի օրհնութիւնը

25 Երուսաղէմի մէջ Սիմէոն անունով մարդ մը կար, արդար եւ երկիւղած, որ կը սպասէր Իսրայէլի մխիթարութեան. **26** անոր մէջ կը բնակէր Սուրբ Հոգին, որ իրեն յայտնած էր թէ պիտի չմեռնէր՝ մինչեւ տեսնէր Տիրոջ Օծեալը: **27** Ան, Սուրբ Հոգիէն մղուած՝ տաճար եկաւ, եւ երբ ծնողքը Յիսուս մանուկը բերաւ որպէսզի օրէնքին պատուէրը կատարեն անոր վրայ, **28** Սիմէոն գիրկն առաւ զայն, օրհնեց զԱստուած եւ ըսաւ.

29 «Ո՛վ Տէր, խաղաղութեամբ արձակէ՛ հիմա քու ծառադ, քու խօսքիդ համաձայն. **30** որովհետեւ աչքերս տեսան քու փրկութիւնդ, **31** զոր պատրաստեցիր բոլոր ժողովուրդներու առջեւ, **32** իբրեւ լոյս՝ լուսաւորելու համար հեթանոսները, եւ փառք՝ Իսրայէլի, քու ժողովուրդիդ»:

33 Հայրն ու մայրը զարմացած էին այս խօսքերուն վրայ, որ կ'ըսուէին Յիսուսի մասին: **34** Սիմէոն զանոնք ալ օրհնեց եւ ըսաւ անոր մօրը՝ Մարիամին. «Ահա՛ ասիկա շատերուն համար պիտի ըլլայ տապալուծի եւ կանգնուծի պատճառ Իսրայէլի մէջ, եւ հակառակութեան նշան: **35** Եւ քու սրտէդ սուրբ մը պիտի անցնի, ու այդպէս պիտի յայտնուին շատ սրտերու խորհուրդները»:

Աննա մարգարէուհին

36 Հոն էր Աննա մարգարէուհին, Փանուշի աղջիկը, Ասերի

22 – Մովսիսական օրէնքի համաձայն, մայր մը իր ծննդաբերութենէն ետք, եօթը օր անմաքուր կը համարուէր, եւ անկէ ետք ալ դեռ 30 օր ներուած չէր իրեն տունէ դուրս ելլել ու հրապարակաւ երեւնալ:

ազգատոհմէն, չատ յառաջացած տարիքով, որ կոռուսութենէն ետք՝ եօթը տարի ապրած էր ամուսինին հետ: **37** Ան ութսունչորս տարեկան այրի էր. տաճարէն բնաւ չէր հեռանար, այլ գիշեր ցերեկ կը ծառայէր Աստուծոյ, պահքով եւ աղօթքով: **38** Ինքն ալ նոյն պահուն վրայ հասնելով՝ շնորհակալ կ'ըլլար Տիրոջ եւ մանուկին մասին կը խօսէր ամէնուն հետ որ Երուսաղէմի փրկութեան կը ապաստին:

39 Երբ ամէն ինչ կատարեցին Տիրոջ օրէնքին համաձայն՝ վերադարձան Գալիլեա, իրենց քաղաքը՝ Նազարեթ: **40** Եւ մանուկը կ'աճէր ու կը զօրանար, լի իմաստութեամբ, եւ Աստուծոյ շնորհքը անոր վրան էր:

Յիսուս վարդապետներուն մէջ

41 Յիսուսի ծնողքը ամէն տարի, Զատիկի տօնին, Երուսաղէմ կ'երթային: **42** Երբ Յիսուս տասներկու տարեկան եղաւ, Երուսաղէմ ելան, տօնին սովորութեան համաձայն. **43** եւ երբ տօնական օրերը վերջացան, մինչ կը վերադառնային, Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց, եւ ծնողքը չէին գիտեր: **44** Եւ կարծելով թէ ուղեկիցներուն հետ է՝ օրուան մը ճամբայ քալեցին, յետոյ սկսան ազգականներու եւ ծանօթներու մէջ փնտռել զայն: **45** Եւ երբ չգտան՝ Երուսաղէմ վերադարձան զայն փնտռելու համար:

46 Եւ երեք օր վերջ՝ տաճարին մէջ գտան զինքը, որ վարդապետներու հետ նստած մտիկ կ'ընէր եւ հարցումներ կ'ուղղէր անոնց, **47** եւ բոլոր լսողները կը զարմանային անոր իմաստութեան եւ տուած պատասխաններուն վրայ: **48** Երբ զինքը տեսան՝ զարմացան, եւ մայրը ըսաւ անոր. «Որդեա՛կ, այս ի՞նչ ըրիր մեզի այսպէս. ահա՛ւասիկ, հայրդ եւ ես մտահոգ էինք եւ քեզ կը

41 – Ամէն Իսրայէլացի պարտաւոր էր, իր տասներկուերորդ տարիքը լրացնելէ ետք, երեք գլխաւոր – Զատիկի, Պնտեկոստէի ու Տաղաւարանարաց – տօներուն Երուսաղէմ երթալ:

42 – Տասներկու տարեկան հրեայ տղան օրէնքի որդի, այսինքն՝ անոր պատւիրաններուն ենթակայ կ'ըլլար:

փնտռէինք»։ 49 Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ կը փնտռէիք զիս, չէի՞ք գիտեր որ ես Հօրս տունը պէտք է ըլլամ»։ 50 Բայց անոնք չհասկցան այդ խօսքը որ ըսաւ իրենց։

51 Անոնց հետ իջաւ եւ Նազարեթ գնաց, եւ անոնց հնազանդ էր։ Եւ անոր մայրը այս բոլորը իր սրտին մէջ կը պահէր։ 52 Իսկ Յիսուս կը զարգանար իմաստութեամբ, հասակով եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդոց առջեւ։

Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը

Մտք 3,1 – 12. Մրկ 1, 1-8

3 1 Տիբերիոս Կեսարի կայսրութեան տասնհինգերորդ տարին, երբ Պոնտացի Պիղատոս Հրէաստանի կուսակալ էր, Հերովդէս՝ Գալիլեայի չորրորդապետ, անոր եղբայրը Փիլիպպոս՝ Իսուրացիներու եւ Տրաքոնացիներու աշխարհին չորրորդապետ, 2 Աննայի եւ Կայիափայի քահանայապետութեան օրով, Աստուած խօսեցաւ Զաքարիայի որդիին՝ Յովհաննէսի հետ, անապատին մէջ։ 3 Եւ ան եկաւ Յորդանանի բոլոր շրջակայքը՝ ապաշխարութեան մկրտութիւնը քարոզելով մեղքերու թողութեան համար, 4 ինչպէս որ գրուած էր Եսայի մարգարէին պատգամներու գրքին մէջ։

«Ահա՛ ձայնն անոր որ անապատին մէջ կը գոչէ. պատրաստեցե՛ք

49 – Εν τοῖς τοῦ Πατρός μου εἶναι կրնայ նշանակել տեղական իմաստով՝ ըլլալ Հօրս տան մէջ, կամ բարոյական իմաստով՝ ըլլալ իմ Հօրս վերաբերեալ գործերուն մէջ։ Առաջին իմաստի համաձայն եղած կը գտնենք Աւետարանի ասորիքէն թարգմանութիւնը, որուն հետեւողութեամբ նաեւ մեր գրաբար թարգմանութիւնը։ Յիսուս ըսել ուզած կ'ըլլայ. ինչո՞ւ մտայոյզ եղած կը փնտռէք զիս. չէ՞ք գիտեր, որ ես իմ Հօրս տունը պէտք էի ըլլալ։ Վուրգատան բարոյական իմաստով առած ու թարգմանած է Քրիստոսի այս խօսքը։

51 – Մարմնացեալ Բանն իր երկրաւոր կեանքին անցուց խոնարհութեամբ ու հնազանդութեամբ։ Եւ որովհետեւ մարդկութեան մեծագոյն մասը իր ձեռքի աշխատութեամբն է որ կ'ապրի, ուզեց Փրկիչը, որ աշխատամբը նուիրականանայ իր օրինակովը։

Տիրոջ փանապարհը եւ հարթեցէ՛ք անոր շաւիղները: **5** Բոլո՛ր ձորերը պիտի լեցունին եւ բոլո՛ր լեռներն ու բլուրները պիտի խոնարհին. դժուարին մամբաները պիտի դիւրանան եւ խորտուրորտ եղողները հարթ պիտի դառնան. **6** եւ ամէն մարդ պիտի տեսնէ Աստուծոյ փրկութիւնը»:

7 Ան կ'ըսէր ժողովուրդին որ իրմէ մկրտուելու կու գար. «Իժե-
րո՛ւ ձագեր, ո՞վ սորվեցուց ձեզի փախչիլ մօտալուտ բարկութե-
նէն: **8** Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղ տուէ՛ք, եւ
մի՛ սկսիք ըսել՝ թէ մեր հայրը Աբրահամն է. որովհետեւ կ'ըսեմ ձե-
զի, Աստուած կարող է այս քարերէն անգամ Աբրահամի որդիներ
հանել: **9** Բայց այլեւս կացի՛նը ծառերուն արմատին դրուած է.
ամէն ծառ, որ բարի պտուղ չի տար՝ կը կտրուի եւ կրակ կը նետ-
ւի»: **10** «Ուրեմն ի՞նչ ընելու ենք», հարցուց ժողովուրդը: **11** Յով-
հաննէս պատասխանեց անոնց. «Ով որ երկու զգեստ ունի՝ թող
մէկը չունեցողին տայ, եւ նոյնը ընէ՝ ով որ կերակուր ունի»:
12 Մաքսաւորներն ալ եկան մկրտուելու եւ ըսին. «Վարդապետ,
մենք ի՞նչ ընելու ենք»: **13** Պատասխանեց. «Մի՛ պահանջէք աւելի
քան ինչ որ ձեզի արտօնուած է»: **14** Ձինուորներ ալ կը հարցնէին
ու կ'ըսէին. «Իսկ մենք ինչ պէտք է ընենք»: Անոնց ալ ըսաւ.
«Մարդ մի՛ հարչարէք եւ մի՛ զրպարտէք, գոհացէ՛ք ձեր թոշակով»:

15 Մինչ ժողովուրդը ակնկալութեան մէջ էր ու սրտին մէջ կը
խորհէր Յովհաննէսի մասին՝ թէ արդեօք ի՞նքն է Քրիստոսը:
16 Յովհաննէս ամէնուն ըսաւ. «Ես կը մկրտեմ ձեզ ջուրով, բայց
կու գայ ինծմէ՛ աւելի զօրաւորը, որուն կօշիկներուն կապերը քա-
կելու արժանի չեմ. ա՛ն պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով եւ կրա-

Գլ. 3, 13 – Յովնը՝ «Ձեզի սահմանուածէն աւելի բան մը մի՛ պահանջէ՛ք»:

16 – Յովհաննէսի ձեռնով մկրտուող անձերը պարտաւոր էին իրենց գործած մեղքերուն վրայ սրտանց ցաւի ու փափաքի մերժման եւս մաքրուիլ մեղքին թողութեան: – Կրակը Սուրբ Հոգւոյն զօրութիւնն է, որ մերժուստ կը վառէ մարդը, կը մաքրէ ու կը սրբացնէ: Տեսանելի կերպով տեղի ունեցաւ այս կրակը փրիստոնեական առաջին Պենտեկոստէի օրը (Հոգեգալուստ), անտեսանելի կերպով կը կրկնուի ան՝ Մկրտութեան սուրբ աւազանի մէջ ու Դրոշմի սուրբ խորհուրդի ժամանակ:

կով: 17 Ան ձեռքն առած է ցորենը բաժնելու գործիքը՝ կալը մաքրելու, ցորենը շտամարանին մէջ ժողովելու եւ յարդն ալ անշէջ կրակով այրելու համար»: 18 Այսպէս եւ նման շատ յորդորներով կը քարոզէր ժողովուրդին:

19 Բայց Հերովդէս չորրորդապետը, որ կը յանդիմանուէր Յովհաննէսէն՝ իր եղբօր կնոջ, Հերովդիայի, եւ իր գործած չարիքներուն համար, 20 բոլոր ոճիրներուն վրայ մէկ հատ ալ աւելցուց՝ բանտարկելով Յովհաննէսը:

Յիսուսի մկրտութիւնը եւ ազգացուցակը

21 Երբ բոլոր ժողովուրդը մկրտուեցաւ, եւ Յիսուս ալ մկրտուեցաւ ու սկսաւ աղօթել, երկինքը բացուեցաւ, 22 եւ Սուրբ Հոգին, մարմնաւոր կերպարանքով, աղաւնիի նման անոր վրայ իջաւ. եւ երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. «Դու ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ»:

23 Երբ Յիսուս սկսաւ քարոզութիւնը, չուրջ երեսուն տարեկան էր, ինչպէս կը կարծուէր, որդին էր Յովսէփի՝ որդի Յակոբի, որդի Հեղին, որդի Մատթատին, 24 որդի Ղեւիին, որդի Մեղքիին, որդի Յաննէին, որդի Յովսէփին, որդի Մատաթիային, 25 որդի Ամովսին, որդի Նաւուամին, որդի Էսդիին, որդի Նանգէին, 26 որդի Մաաթին, որդի Մատաթիային, որդի Սեմէիին, որդի Յովսէփին, որդի Յովդային,

27 որդի Յովանային, որդի Բէսային, որդի Զորոբաբելին, որդի Սաղաթիէլին, որդի Ներիին, 28 որդի Մեղքիին, որդի Ադիին, որդի Կովսամին, 29 որդի Ելմադամին, որդի Էրին, որդի Յեսուին,

17 – Այստեղ Ս. Յովհաննէս՝ Քրիստոսի դատաւորական իշխանութիւնը կ'ակնարկէ: Կալը մախ հրեայ ժողովուրդն է, իսկ ընդարձակ մտքով՝ բոլոր աշխարհը:

23 – «Որդի Յովսէփայ». Մատթէոսի քով Ս. Յովսէփի հայրը Յակոբ կոչուած է, իսկ Ղուկասի քով՝ Հեղի: Ըստ Ս. Օգոստինոսի, Յովսէփ բնական որդին էր Յակոբի, եւ յետոյ որդեգրուած Հեղիէ: Այս իմաստով անուանուած էր ան Հեղիի որդի:

որդի Եղեազարին, որդի Յովրամին, **30** որդի Մատթատին, որդի Ղեւիին, որդի Սիմէոնին, որդի Յովգային, որդի Յովսէփին, որդի Յովնամին, որդի Եղիակիմին, **31** որդի Մեղեային, որդի Մեննիին, որդի Մատտաթին, որդի Նաթանին, որդի Դաւթին,

32 որդի Յեսսէին, որդի Ովբեղին, որդի Բոյոսին, որդի Սաղմոնին, որդի Նաասոնին, որդի Ամինադաբին, **33** որդի Արամին, որդի Աղմիին, որդի Առնիին, որդի Եսրոմին, որդի Փարէսին, **34** որդի Յովգային, որդի Յակոբին, որդի Իսահակին, որդի Աբրահամին,

որդի Թառային, **35** որդի Նաքովրին, որդի Սերուքին, որդի Ռազաւին, որդի Փաղեկին, որդի Եբերին, որդի Սաղային, **36** որդի Կայնանին, որդի Արփաքսադին, որդի Սեմին, որդի Նոյին, որդի Ղամէքին, **37** որդի Մաթուսաղային, որդի Ենովքին, որդի Յարեղին, որդի Մաղաղիէլին, որդի Կայնանին, որդի Ենովսին, **38** որդի Սեթին, որդի Ադամին, որդի Աստուծոյ:

Յիսուսի փորձութիւնը

Մտթ 4, 1-11. Մրկ 1, 12-13

4 **1** Յիսուս, լի Սուրբ Հոգիով, դարձաւ Յորդանանէն եւ Հոգիէն առաջնորդուեցաւ անապատ, **2** ուր քառասուն օր փորձուեցաւ սատանայէն. այդ օրերուն՝ ոչ կերաւ ոչ ալ խմեց, եւ երբ անցան այդ օրերը՝ անօթեցաւ:

3 Այն ատեն սատանան ըսաւ Յիսուսին. «Եթէ Աստուծոյ Որդի ես՝ ըսէ՛ այդ քարին որ հաց ըլլայ»: **4** Յիսուս պատասխանեց. «Գրուած է թէ մարդս միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ ամէն իստով»:

5 Ապա բարձր լեռ մը հանելով զինքը՝ մէկ ակնարկով ցոյց տուաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները, եւ ըսաւ անոր. **6** «Քեզի պիտի տամ այս բոլոր իշխանութիւնը եւ անոնց փառքը, որովհետեւ ինձի տրուած է եւ ես կու տամ որուն որ կ'ուզեմ»:

7 Ուստի, եթէ առջեւ իյնաս ու երկրպագես՝ այս բոլորը քու կը

պիտի ըլլայ»։ **8 Յիսուս պատասխանեց.** «Գրուած է. Տէր Աստուծոյդ պիտի երկրպագես, եւ Ամոր միայն պիտի ծառայես»։

9 Եւ տարաւ զինքը Երուսաղէմ ու տաճարին աշտարակին վրայ կեցուց, եւ ըսաւ. «**Եթէ Աստուծոյ Որդին ես՝ ինքզինքդ ասկէ վար նետէ.** **10 որովհետեւ գրուած է թէ** իր երեշտակներուն պատուիրած է քեզի համար որ պահպանեն քեզ, **11 եւ իրենց ձեռքերուն վրայ բռնեն քեզ, որպէսզի ոտքդ քարի չզարնես»։**

12 Յիսուս պատասխանեց. «Ըսուած է որ քու Տէր Աստուծոյ պիտի չփորձես։ **13 Սատանան, աւարտելէ ետք իր բոլոր փորձութիւնները, ժամանակ մը անկէ հեռու մնաց։**

Սկիզբ Յիսուսի քարոզութեան

Մտք 4, 12-17. Մրկ 1, 14-15

14 Յիսուս, Հոգիին զօրութեամբ, դարձաւ Գալիլեա, եւ իր համբաւը տարածուեցաւ զաւառին ամէն կողմերը։ **15 Ան կ'ուսուցանէր անոնց ժողովարաններուն մէջ, ամէնէն փառաւորուելով։**

Յիսուս Նազարեթի մէջ

Մտք 13, 53-58. Մրկ 6, 1-6

16 Եկաւ Նազարեթ, ուր սնած էր, եւ իր սովորութեան համաձայն՝ չաբաթ օրը ժողովարան մտաւ։ **17 Եւ իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը, եւ ելաւ կարդալու. երբ գիրքը բացաւ՝ գտաւ այն տեղը ուր գրուած էր.**

18 «Տիրոջ հոգին իմ վրաս է, ասոր համար իսկ օծեց զիս եւ զրկեց՝ աղփատներուն աւետարանելու, սրտաբեկ հոգիները բժշկելու, **19** գերիներուն ազատութիւն եւ կոյրներուն տեսութիւն քարոզելու, հարըստահարուածները ազատ արձակելու, եւ Տիրոջ շնորհաբեր տարին հռչակելու»։ **20 Եւ գիրքը փակելով՝ պաշտօնեային տուաւ ու նստաւ. եւ ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը անոր վրայ սեւեռած էին։** **21 Եւ սկսաւ ըսել անոնց.** «Այս գրութիւնը զոր ձեր ականջներով լսեցիք՝ այսօր կատարուեցաւ»։ **22 Եւ ամէնքը կը վկայէին ու կը զարմանային այն շնորհալի խօսքերուն**

վրայ, որ կ'ելլէին անոր բերնէն, ու կ'ըսէին. **23** «Ասիկա Յովսէփի որդին չէ՞»: Յիսուս ըսաւ անոնց. «Անշուշտ ինծի պիտի ուղղէք այս առածը. Բժիշկ, ինքզինքդ բժշկէ. ինչ որ ըրիր Կափառնառումի մէջ, ինչպէս լսեցինք, հո՛ւս, քու հայրենիքիդ մէջ ալ ըլլէ»: **24** Եւ աւելցուց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. չկայ մարգարէ մը որ իր հայրենիքին մէջ ընդունելի ըլլայ: **25** Արդարեւ կ'ըսեմ ձեզի, շատ այրիներ կային Եղիայի օրով՝ Իսրայէլի մէջ, երբ երկինքը փակուեցաւ երեք տարի ու վեց ամիս եւ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ. **26** եւ սակայն անոնցմէ ո՛չ մէկուն ղրկուեցաւ Եղիա, բայց միայն Սիդոնի Սարեփթա ֆաղափին մէջ ապրող այրի կնոջ մը: **27** Նմանապէս շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիայէ մարգարէին օրով, եւ սակայն անոնցմէ ո՛չ մէկը մաքրուեցաւ, բացի Նէեման ասորիէն միայն»:

28 Այս խօսքերը լսելով, Ժողովարանի մէջ եղողները ամէնքն ալ բարկութեամբ լեցուեցան, **29** եւ ոտքի ելլելով՝ քաղաքէն դուրս հանեցին զինքը, տարին մինչեւ լերան գագաթը՝ որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը, որպէսզի գահալվեժ ընեն զինքը: **30** Բայց Յիսուս, անոնց մէջէն անցնելով՝ գնաց:

Դիւահարին քոչկուքիւնը

Մրկ 1, 21 – 28

31 Եւ իջաւ Գալիլեայի Կափառնառում քաղաքը. եւ շաբաթ օրերը կը սորվեցնէր անոնց: **32** Եւ կը զարմանային անոր վարդապետութեան վրայ, որովհետեւ հեղինակութեամբ լի էր անոր խօսքը:

33 Ժողովարանին մէջ մարդ մը կար որ պիղծ դեւ ունէր. եւ բարձրաձայն աղաղակեց ու ըսաւ. **34** «Թո՛ղ տուր, ի՞նչ ունիս մեզի հետ, Յիսո՛ւս Նազովրեցի. մեզ կորուստի մատնելո՞ւ եկար. զիտենք թէ ո՛վ ես դուն. Աստուծոյ Սո՛ւրբը»: **35** Յիսուս սաստեց անոր եւ ըսաւ. «Պապանձէ՛ ու ելիր ատկէ»: Դեւը անոնց առջեւ գե-

Գլ. 4, 24 – Ինչպէս երբեմն Եղիա եւ Եղիսէ, իրենց հայրենակիցներուն փոխաւ տօն չգտնելով՝ հրաշք չգործեցին անոնց առջեւ, նոյնպէս նաեւ Յիսուս, իր հայրենի ֆաղափին մէջ, չուզեց հրաշք գործել:

տին զարկաւ զայն եւ առանց անոր վնասելու՝ ելաւ: **36** Ամէնքը զարմացան. իրարու հետ կը խօսէին ու կ'ըսէին. «Այս ի՞նչ խօսք է. իշխանութեամբ եւ զօրութեամբ կը սաստէ պիղծ դեւերուն՝ եւ կ'ելլեն»: **37** Եւ անոր համբաւը կը տարածուէր ամէն տեղ, գաւառին շուրջը:

Պետրոսի զոգանջին բժշկութիւնը

38 Յիսուս, ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի տունը մտաւ. Սիմոնի զոքանչը բարձր ջերմով կը տառապէր, եւ անոր մասին աղաչեցին Յիսուսի. **39** անոր քովը գնաց, սաստեց ջերմին, եւ ջերմը թողուց զայն. եւ իսկոյն ոտքի ելլելով՝ սկսաւ սպասարկել անոնց:

40 Եւ արեւը մարը մտնելու ատեն, ամէն անոնք որ զանազան ցաւերով տանջուող հիւանդներ ունէին, անոր կը բերէին. եւ Յիսուս անոնցմէ իւրաքանչիւրին վրայ ձեռքը կը դնէր ու կը բժշկէր:

41 Շատերէն ալ դեւերը կ'ելլէին, կ'աղաղակէին ու կ'ըսէին. դո՛ւն ես Աստուծոյ Որդին. եւ ան կը սաստէր ու չէր թողուր որ խօսին. որովհետեւ գիտէին թէ ան Քրիստոսն է:

Յիսուս կ'անցնի Հրէաստան

Մրկ 1, 35-39

42 Իսկ առաւօտուն, ելաւ ամալի տեղ մը գնաց, մինչ ժողովուրդը զինքը կը փնտռէր. մինչեւ քովը գացին եւ չէին թողուր որ իրենցմէ հեռանայ: **43** Յիսուս ըսաւ անոնց. «Ուրիշ քաղաքներու ալ պէտք է աւետարանեմ Աստուծոյ արքայութիւնը, որովհետեւ ատո՛ր համար զրկուած եմ»: **44** Եւ կը քարոզէր Գալիլեայի ժողովարաններուն մէջ:

Առաջին չորս առաքեալները կը կանչուին

Մտք 4, 18-22. Մրկ 1, 16-20

5

1 Մինչդեռ ժողովուրդը իր շուրջը կը խռնուէր Աստուծոյ խօսքը լսելու համար, Յիսուս, որ Գեննեսարեթի ծովակին փին կանգնած էր, **2** տեսաւ երկու նաւակներ որ ծովեզեր-

քը կեցած էին եւ ձկնորսները՝ որ անոնցմէ դուրս ելած, ուռկանները կը լուսային: **3** Մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որ Սիմէոնինն էր, եւ խնդրեց անկէ որ ցամաքէն քիչ մը հեռացնէ. նստաւ եւ նաւակին մէջէն կը սորվեցնէր ժողովուրդին:

4 Երբ քարոզելէն դադրեցաւ՝ ըսաւ Սիմոնին. «*Խո՛րը տար նաւակը եւ ուռկանները նետեցէք որսալու համար*»: **5** «*Վարդապետ, ըսաւ Սիմոն, բոլոր գիշերը աշխատեցանք եւ բան չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար՝ ուռկանները կը նետենք*»: **6** Երբ ըրին այդպէս՝ ձուկերու բազմութիւն մը բռնեցին, այնքան՝ որ ուռկանները կը պատռտէին: **7** Եւ նշան ըրին միւս նաւակի որսակից ընկերներուն՝ որ գան իրենց օգնեն. եկան եւ լեցուցին երկու նաւակներն ալ՝ ընկղմելու աստիճան:

8 Երբ Սիմոն Պետրոս ասիկա տեսաւ, եկաւ, Յիսուսի ոտքն ինկաւ եւ ըսաւ. «*Հեռացի՛ր ինծմէ, Տէ՛ր, որովհետեւ ես մեղաւոր մարդ մըն եմ*»: **9** Որովհետեւ վախը պատեց զինքը եւ բոլոր իրեն հետ եղողները՝ իրենց որսացած ձուկերուն պատճառով. **10** նոյնպէս՝ Զեբեդէոսի որդիները, Յակոբոս եւ Յովհաննէս, որ Սիմոնի որսակիցներն էին: Յիսուս ըսաւ Սիմոնին. «*Մի վախճար, այսուհետեւ մարդիկ պիտի որսաս՝ կեանքի համար*»: **11** Եւ անոնք նաւակը ցամաք հանելով՝ ամէն բան թողուցին ու Յիսուսի ետեւէն գացին:

Բորոտին քժշկութիւնը

Մտք 8, 1-4. Մրկ 1, 40-45

12 Եւ երբ քաղաքներէն մէկուն մէջ կը գտնուէր, բորոտութենէ վարակուած մարդ մը, Յիսուսը տեսնելով՝ երեսն ի վար գետին ինկաւ, աղաչեց եւ ըսաւ. «*Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել*»: **13** Յիսուս ձեռքը երկարեց, դպաւ անոր եւ ըսաւ. «*Կ'ուզե՛մ, մաքրուէ՛*». եւ իսկոյն բորոտութիւնը անհետացաւ վրայէն: **14** Ապա պատուիրեց եւ ըսաւ անոր. «*Մարդու մի՛ ըսեր, այլ գնա՛, ինք*

Գլ. 5, 3 – Սիմոնի մաւակը՝ Եկեղեցին է. Պետրոս ղեկավարն է ամոր: Ուր Պետրոս է՝ հոն է Եկեղեցին:

զինքդ քահանային ցոյց տուր, եւ սրբուած ըլլալուդ համար՝ Մովսէսի պատուիրած նուէրը տո՛ւր, իբրեւ վկայութիւն անոնց:

15 Բայց Յիսուսի համբաւը երթալով կը տարածուէր եւ շատ ժողովուրդ կը հաւաքուէր, զայն լսելու եւ իրենց հիւանդութիւններէն բժշկուելու համար: **16** Իսկ ինքը ամայի տեղեր առանձնացաւ՝ աղօթելու համար:

Անդամալոյծին բժշկութիւնը

Մտք 9, 1-8. Մրկ 2, 1-12

17 Օր մը, երբ կը սորվեցնէր՝ շուրջը նստած էին փարիսեցիները եւ օրէնքի վարդապետները, որոնք հաւաքուած էին Գալիլեայի եւ Հրէաստանի բոլոր քաղաքներէն ու Երուսաղէմէն. եւ Տիրոջ գօրութիւնն իր վրայ էր՝ որպէսզի բժշկութիւն կատարէ:

18 Եւ ահա քանի մը մարդիկ անդամալոյծ մը բերին մահիծով միասին եւ կը ջանային ներս մտցնել ու Յիսուսին առջեւ դնել: **19** Եւ երբ ամբոխին պատճառով չկրցան կերպ մը գտնել զայն ներս մտցնելու համար, տանիք ելան եւ առաստաղէն վար կախեցին զայն եւ մահիծով միասին իջեցուցին մէջտեղը, Յիսուսին առջեւ: **20** Եւ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անոր. «Ո՛վ մարդ, ներած են քու մեղքերդ»:

21 Դպիրներն ու փարիսեցիներ սկսան խորհիլ եւ ըսել. «Ո՞վ է ասիկա, որ հայհոյութիւն կ'ըսէ. Աստուծմէ զատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»: **22** Յիսուս, իմանալով անոնց մտածումները, խօսքը անոնց ուղղեց եւ ըսաւ. «Ի՞նչ կը խորհիք ձեր սրտին մէջ. **23** ո՞րը աւելի դիւրին է. ըսել Քու մեղքերդ ներուած են, թէ ըսել՝ Ելի՛ր եւ քալէ՛: **24** Բայց որպէսզի գիտնաք թէ Մարդու Որդին իշխանութիւն ունի երկրիս վրայ մեղքերը ներելու, «Քեզի՛ կ'ըսեմ, ըսաւ Յիսուս անդամալոյծին, ելի՛ր, ա՛ռ մահիծդ եւ տունդ գնա»: **25** Եւ անիկա իսկոյն ելաւ ամէնուն առջեւ, առաւ մահիծը որուն վրայ պառկած էր եւ գնաց իր տունը, փառք տալով Աստուծոյ: **26** Ամէնքը զարմացան ու փառք կու տային Աստուծոյ, եւ վախով լեցուած կ'ըսէին. «Զարմանալի բաներ տեսանք այսօր»:

Մատթեոս առաքնալիմ կոչումը

Մտք 9, 9-12. Մրկ 2, 13-17

27 Անկէ վերջ Յիսուս դուրս ելաւ, եւ տեսնելով Ղեւի անունով մաքսաւոր մը, որ նստած էր մաքսատան մէջ, ըսաւ անոր. «Հետեւէ՛ ինծի»: **28** Եւ ան, ամէն բան ձգած՝ ոտքի ելաւ եւ անոր ետեւէն գնաց:

29 Ղեւի, իր տան մէջ մեծ ընդունելութիւն մը տուաւ Յիսուսին, եւ բազմաթիւ մաքսաւորներ եւ ուրիշ շատեր սեղանակից էին: **30** Իսկ փարիսեցիներն ու անոնց դպիրները կը տրտնջէին իրեն դէմ իր աշակերտներուն առջեւ՝ ըսելով. «Ինչո՞ւ մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէք եւ կը խմէք»: **31** Յիսուս պատասխանեց անոնց. «Առողջները բժիշկի պէտք չունին, այլ՝ հիւանդները: **32** Եւ ես չեմ եկած ապաշխարութեան կանչելու արդարները, այլ՝ մեղաւորները:

Վէճ՝ ծովապահուքեան մասին

Մտք 9, 14-17. Մրկ 2, 18-22

33 Անոնք ըսին Յիսուսի. «Ինչո՞ւ Յովհաննէսին աշակերտները ստէպ ծոմ կը պահեն եւ աղօթքներ կ'ընեն, ինչպէս նաեւ փարիսեցիները, իսկ քու աշակերտներդ կ'ուտեն ու կը խմեն»: **34** Յիսուս պատասխանեց. «Միթէ՞ կրնա՞ք ծոմ պահել տալ հարսնեւորներուն, երբ փեսան իրենց հետ է. **35** պիտի գան օրեր՝ երբ փեսան իրենցմէ պիտի վերցուի. ա՛յն ատեն անոնք ծոմ կը պահեն»:

36 Առաւ մըն ալ ըսաւ անոնց. «Ոչ ոք նոր զգեստէն կտոր մը պատռելով՝ հին զգեստին վրայ կը դնէ, որովհետեւ թէ՛ նորը կը պատռուի թէ՛ նորէն առնուած կտորը հինին չի՛ յարմարիր: **37** Եւ ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնէ. ապա թէ՛ ոչ՝ նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը, ինքը կը թափի եւ տիկերն ալ կը փձանան: **38** Այլ նոր գինին՝ նոր տիկերու մէջ լեցնելու է եւ երկուքն ալ կը պահուին: **39** Եւ ո՛չ ոք հին գինին խմելէ վերջ՝ նորը կ'ուզէ, որովհետեւ պիտի ըսէ թէ հինը աւելի քաղցր է»:

ԲԺՇԿՈՒԹԻՆՆԵՐ շԱՐԱԹ ՕՐՈՎ

Մտք 12, 1-8. Մրկ 2, 23-28

Մտք 12, 9-14. Մրկ 3, 1-6

6 **1** Շաբաթ օր մը, արտերուն մէջէն անցնելու ատեն, Յիսուսի աշակերտները հասկ կը փրցնէին եւ մանրելով իրենց ափին մէջ՝ կ'ուտէին: **2** Փարիսեցիներէն ոմանք ըսին. «Ինչո՞ւ կ'ընէք բան մը՝ որ թոյլ տրուած չէ ընել շաբաթ օրը»: **3** Յիսուս պատասխանեց. «Կարդացած չէ՞ք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինքը եւ իրեն հետ եղողները. **4** ինչպէս մտաւ Աստուծոյ տունը եւ առաջաւորութեան հացը կերաւ եւ տուաւ անոնց՝ որ իրեն հետ էին, մինչ՝ քահանաներէն զատ ո՛չ ոք կրնար ուտել»: **5** Եւ աւելցուց. «Մարդու Որդին՝ շաբաթին ալ տէրն է»:

6 Եւ ուրիշ շաբաթ օր մը, ժողովարան մտնելով, սկսաւ սորովեցընել. այնտեղ մարդ մը կար, որուն աջ ձեռքը գոսացած էր: **7** Եւ դպիրներն ու փարիսեցիները զինքը կը դիտէին՝ տեսնելու համար թէ պիտի բժշկէ՞ շաբաթ օրով, որպէսզի վրան չարախօսութիւն ընելու պատրուակ գտնեն: **8** Իսկ ինքը, ճանչնալով անոնց մտածումները՝ ըսաւ գոսացած ձեռքով մարդուն. «Ելի՛ր, մէջտեղ եկուր»: Եւ ան ոտքի ելաւ ու կանգնեցաւ: **9** Յիսուս ըսաւ անոնց. «Ձեզի բան մը հարցնեմ. ի՞նչ թոյլ տրուած է ընել՝ շաբաթ օրը, բարե՞րի՞ք գործել՝ թէ՛ չարիք, կեա՞նք մը փրկել՝ թէ՛ կորսնցնել»: **10** Եւ զայրագին չուրջը ամէնուն նայելով՝ ըսաւ մարդուն. «Երկարէ՛ ձեռքդ»: Եւ ան երկարեց ու ձեռքը առողջացաւ միւսին նման: **11** Անոնք կատաղութեամբ լեցուեցան եւ իրարու հետ կը խօսէին՝ թէ ի՞նչ կրնան ընել Յիսուսին:

Գլ. 6, 1 – Երկրորդ առաջին շաբաթ օրը Զատիկի շաբթուան յաջորդող երկրորդ շաբաթն է:

7 – Գրաբար թարգմանութեան «սպասէին»ը ո՛չ թէ սպասել, այլ՝ լրտեսել կը նշանակէ:

Առաքելներու ընտրութիւնը

Մտք 10, 1-4. Մրկ 3, 13-19

12 Այդ օրերուն՝ Յիսուս լեռ ելաւ աղօթելու եւ բոլոր գիշերը անցուց աղօթելով Աստուծոյ։ **13** Երբ առաւօտ եղաւ՝ կանչեց իր աշակերտները եւ անոնցմէ տասներկու հոգի ընտրեց եւ զանոնք առաքեալ կոչեց։ **14** Սիմոնը՝ զոր Պետրոս անուանեց, եւ անոր եղբայրը՝ Անդրէաս, Յակոբոս եւ Յովհաննէս, **15** Փիլիպպոս եւ Բարթողիմէոս, Մատթէոս եւ Թոմաս, Յակոբոս Ալփեան եւ Սիմոն՝ նախանձայոյզ կոչուածը, **16** Յուդա Յակոբեան եւ Յուդա Իսկարիովտացին՝ որ մատնիչ եղաւ։

Բազմութիւնները կը հետեւին Յիսուսի

Մտք 4, 24-25. Մրկ 3, 7-14

17 Եւ անոնց հետ իջնելով՝ տափարակ տեղ մը կեցաւ իր աշակերտներու խումբին եւ բազմաթիւ ամբոխին հետ, **18** որոնք եկած էին Հրէաստանէն, Երուսաղէմէն, Տիւրոսի եւ Սիդոնի ծովեզերքէն, զինքը լսելու եւ իրենց հիւանդութիւններէն բժշկուելու համար։ Եւ պիղծ դեւերէն տառապողները կը բժշկուէին։ **19** Եւ բոլոր ժողովուրդը կ'ուզէր Յիսուսին դպչիլ, որովհետեւ զօրութիւն մը կ'ելլէր անկէ եւ կը բժշկէր ամէնքը։

Երանութիւնները

20 Եւ ան, իր աչքերը դէպի աշակերտները բարձրացնելով, ըսաւ․

Երանի՛ ձեզի՝ որ աղքատ էք հոգիով, որովհետեւ ձե՛րն է Աստուծոյ արքայութիւնը։

21 Երանի՛ ձեզի՝ որ անօթի էք հիմա, որովհետեւ պիտի յագե՛նաք։

12 – Քրիստոսի օրինակին համաձայն, Եկեղեցին կը պատուիրէ իր հաւատացեալներուն՝ խնդրել Աստուծմէ, որ արժանաւոր քահանաներ տայ իր Եկեղեցիին։

Երանի՛ ձեզի՝ որ կու լաք հիմա, որովհետեւ պիտի խնդաք:

22 Երանի՛ ձեզի՝ երբ մարդիկ ատեն ձեզ ու վռնտեն եւ նախատեն, եւ ձեր մասին չար անուն հանեն Մարդու Որդիին պատճառով: **23** Ուրախ եղէք այն օրը եւ ցնծացէք, որովհետեւ ահա ձեր վարձքը մեծ է երկինքի մէջ: որովհետեւ անոնց հայրերն ալ ա՛յնպէս կ'ընէին մարգարէներուն:

24 Բայց վա՛յ ձեզի, հարուստե՛ր, որ ձեր մխիթարութիւնն ունեցաք:

25 Վա՛յ ձեզի՝ որ հիմա յագեցած էք, որովհետեւ պիտի անօթեանաք:

Վա՛յ ձեզի՝ որ հիմա կը ծիծաղիք, որովհետեւ պիտի սգաք ու լաք:

26 Վա՛յ ձեզի, երբ բոլոր մարդիկ ձեր վրայ լաւ խօսին, որովհետեւ անոնց հայրերն ալ ա՛յնպէս կ'ընէին սուտ մարգարէներուն:

Քրիստոնէական սէր

27 Բայց կ'ըսեմ ձեզի՝ որ ինծի մտիկ կ'ընէք. սիրեցէ՛ք ձեր թշնամիները, բարիք ըրէք ձեզ ատողներուն: **28** Օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ ձեզ կը զրպարտեն: **29** Եթէ մէկը ծնօտիդ զարնէ՝ միւսն ալ դարձուր. բաճկոնդ հանողին՝ մի՛ մերժեր նաեւ շապիկդ: **30** Ո՛վ որ քեզմէ խնդրէ՝ տո՛ւր անոր. ունեցածդ քեզմէ առնողէն՝ ետ մի՛ պահանջեր: **31** Ինչ որ կ'ուզէք որ ընեն ձեզի մարդիկ՝ դուք ալ ա՛յնպէս ըրէք անոնց: **32** Եթէ դուք ձեզ սիրողները միայն սիրէք՝ ի՞նչ արժանիք ունիք, որովհետեւ մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: **33** Եւ

30 – Այս բոլոր օրինակները բառացիօրէն առնուելու չեն: Մեր Տէրը այդ օրինակներով կ'ուզէ մեր սրտին մէջ արթնցնել ներողամիտ, համբերատար ու անձնուէր սիրոյ գաղափարը:

32 – Սէրը ընդհանուրին, այսինքն ամէնուն վրայ տարածուելու է: Սէրը քրիստոնէական է՝ երբ մեր ընկերները – բարեկամ կամ թշնամի – Աստուծոյ համար կը սիրենք:

եթէ բարիք ընէք ձեր բարերարներուն՝ ի՞նչ արժանիք ունիք, որովհետեւ մեղաւորներն ալ նոյնը կ'ընեն: **34** Եւ եթէ փոխ տաք անոնց՝ որոնցմէ կը յուսաք ետ առնել, ի՞նչ արժանիք ունիք, որովհետեւ մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կ'ու տան՝ որպէսզի փոխարէն նոյն չափով ստանան: **35** Բայց դուք՝ սիրեցէ՛ք ձեր թշնամիները, բարիք ըրէք ձեզ ատուներուն եւ փոխ տուէք անոնց՝ որոնցմէ յոյս չունիք որ ետ պիտի առնէք, եւ շատ մեծ պիտի ըլլայ ձեր վարձքը եւ Բարձրեալին որդիները պիտի ըլլաք, որովհետեւ ան բարի է չարերուն եւ ասպերախտներուն հանդէպ:

36 Գթած եղէք, ինչպէս ձեր Հայրը գթած է: **37** Մի՛ դատէք եւ պիտի չդատուիք, մի՛ դատապարտէք ու պիտի չդատապարտուիք. ներեցէ՛ք եւ դո՛ւք ալ ներում պիտի գտնէք: **38** Տուէ՛ք եւ պիտի տրուի ձեզի. ձեր գիրկը պիտի լեցնեն՝ առատ, թաթաղուն, շարժուն եւ զեղուն չափով. այն չափով որ չափէք՝ նո՛յն չափով ալ դո՛ւք պիտի չափուիք»:

39 Առակ մըն ալ ըսաւ անոնց. «Միթէ կոյրը կոյրին կրնա՞յ առաջնորդել. չէ՞ որ երկուքն ալ փոսը կ'իյնան: **40** Աչակերտը իր վարդապետէն գերազանց է, բայց այն որ կատարեալ է՝ իր վարդապետին նման պիտի ըլլայ: **41** Ինչո՞ւ եղբօրդ աչքին չիւղը կը տեսնես, եւ քու աչքիդ մէջի գերանը չես նշմարեր. կամ ի՞նչպէս կրնաս եղբօրդ ըսել. Եղբա՛յր, թո՛ղ որ աչքէդ չիւղը հանեմ, **42** եւ դուն՝ աչքիդ մէջի գերանը չես տեսներ: Կեղծաւո՛ր, նախ քու աչքիդ գերանը հանէ, եւ յետոյ յստակ պիտի տեսնես, որպէսզի կարենաս եղբօրդ աչքին չիւղը հանել:

43 Որովհետեւ գոյութիւն չունի բարի ծառ մը որ չար պտուղ տայ, ոչ ալ չար ծառ մը՝ որ բարի պտուղ տայ. **44** արդարեւ, ամէն մէկ ծառ իր պտուղէն կը ճանչցուի. որովհետեւ փուշերէն թուզ չի քաղուիր, ոչ ալ մորենիէն խաղող կը կլթուի: **45** Բարի մարդը իր սրտին բարի գանձերէն կը հանէ բարին, եւ չար մարդը՝ չար գան-

37 – Մի՛ դատեր քու ընկերդ, որովհետեւ անոր դատաւորը դուն չես: Եթէ չկարենաս իսկ արդարացնել անոր սխալ գործերը, սակայն եւ այնպէս փրխտոնեական սէրը կը պատուիրէ, որ գէթ անոր դիտաւորութիւնը արդարացնես:

ձերէն կը հանէ չարը. որովհետեւ սրտի առատութենէն կը խօսի բերանը:

Հարկ է գործադրել Յիսուսի խօսքերը

Մտք-7, 24-27

46 Ինչո՞ւ գիտ Տէ՛ր, Տէ՛ր կը կոչէք, եւ ըսածներս չէք գործադրեր: **47** Ով որ ինծի կու գայ եւ խօսքերուս մտիկ կ'ընէ ու զանոնք կը գործադրէ՝ ես պիտի ցուցնեմ ձեզի թէ ան որո՞ւ կը նմանի: **48** Կը նմանի տուն շինող այն մարդուն՝ որ կը փորէ, խորը կ'երթայ եւ ժայռի վրայ կը դնէ հիմը: Երբ հեղեղները հասնին, գետը կը հարուածէ տունը, բայց չի կրնար շարժել զայն, որովհետեւ ան ժայռի վրայ հաստատուած է: **49** Եւ ով որ կը լսէ իմ խօսքերս եւ չի կատարեր զանոնք, կը նմանի այն մարդուն՝ որ տունը հողի վրայ կը շինէ, առանց հիմի. գետը կը հարուածէ զայն, եւ իսկոյն կը տապալի ան, եւ մեծ կ'ըլլայ այդ տան կործանումը»:

Հարիւրապետին ծառային բուժումը

Մտք-8, 5-10. Յովհ 4, 46-54

7 **1** Երբ վերջացուց ժողովուրդին ուղղուած բոլոր խօսքերը՝ Կափառնաում մտաւ: **2** Հարիւրապետի մը ծառան, որ շատ սիրելի էր անոր, չարաչար հիւանդ էր եւ մեռնելու մօտ: **3** Յիսուսի մասին լսած ըլլալով՝ Հրեաներուն ծերերէն քանի մը հոգի զրկեց աղաչելու անոր որ գայ եւ ծառան առողջացնէ:

4 Անոնք ալ Յիսուսի քով գալով, կ'աղաչէին անոր պնդելով ու կ'ըսէին. «Արժանի է որ այդ շնորհքը ընես իրեն. **5** որովհետեւ ան կը սիրէ մեր ազգը եւ ինքն է որ մեր ժողովարանը շինեց»: **6** Յիսուս գնաց անոնց հետ: Երբ տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը բարեկամներ զրկեց՝ ըսելու անոր. **7** «Տէր, մի՛ յոգնիր, որովհետեւ ես արժանի չեմ որ յարկիս տակ մտնես: Ասոր համար՝ եւ ոչ իսկ ինքզինքս արժանի համարեցայ քու մօտդ գալու. այլ՝ խօսք մը միայն ըսէ եւ ծառաս պիտի բժշկուի: **8** Որովհետեւ ես ալ իշխանութեան ենթակայ մարդ մըն եմ, ձեռքիս տակ զինուորներ ունիմ. ասոր կ'ըսեմ՝ գնա՛, եւ կ'երթայ, եւ ուրիշի մը՝ եկո՛ւր, եւ

կու գայ, եւ ծառայիս՝ այս բանն ըրէ, ու կ'ընէ»։ **9** Յիսուս, այս խօսքերը լսելով, զարմացաւ, եւ իր ետեւէն գացող ժողովուրդին դառնալով՝ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Իսրայէլի մէջ անգամ այսքան հաւատք չգտայ»։ **10** Պատգամաւորները տուն դարձան, եւ հիւանդ ծառան բժշկուած գտան։

Նայիմի այրիին որդին յարութիւն կ'առնէ

11 Հետեւեալ օրը քաղաք մը կ'երթար որուն անունն էր Նային. իրեն հետ կ'երթային աշակերտները եւ բազմաթիւ ժողովուրդ։ **12** Երբ քաղաքին դրան մօտեցաւ, պատահեցաւ որ մեռեալ մը կը տանէին, որ մօրը միակ զաւակն էր, եւ մայրն ալ այրի էր. եւ քաղաքի ժողովուրդէն մեծ մաս մը անոր կ'ընկերանար։ **13** Երբ Տէրը տեսաւ մայրը՝ գթաց անոր վրայ եւ ըսաւ. «Մի՛ լար»։ **14** Եւ մօտենալով՝ դագաղին դպաւ. անոնք որ կը տանէին, կեցան։ Եւ ան ըսաւ. «Պատանի՛, քեզի՛ կ'ըսեմ, կանգնէ՛»։ **15** Եւ մեռեալը կանգնեցաւ, նստաւ ու սկսաւ խօսիլ։ Եւ զայն մօրը յանձնեց։ **16** Ամէնքը վախցան ու կը փառաւորէին զԱստուած, ըսելով թէ մեծ մարգարէ մը յայտնուեցաւ մեր մէջ, թէ Աստուած իր բարութեամբը այցելեց իր ժողովուրդին։ **17** Յիսուսի մասին եղած այս զրոյցը տարածուեցաւ բոլոր Հրէաստանի մէջ եւ բոլոր շրջակայ տեղերը։

Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը փախն

Մտք 11, 2-15

18 Յովհաննէսի աշակերտները պատմեցին անոր այս բոլորին մասին։ **19** Եւ Յովհաննէս, իր մօտ կանչելով աշակերտներէն եր-

Գլ. 7, 19 – Յովհաննէս այս հարցումը Յիսուսին կ'ուղղէ ո՛չ թէ իր գիտութեան համար՝ այլ իր աշակերտներուն ու ժողովուրդին համար։ Ան կ'ուզէ, որ Փրկիչը զանոնք իրենց վարանամիտ ու երկմիտ վիճակէն դուրս հանէ, եւ անոնց խստապարանոց սիրտը համոզէ անոր մեծախոյութեան մասին։ – Ան որ պիտի գայ՝ նոյնիմիւ Մեծիւն է։

կու հոգի, Տիրոջ ղրկեց հարցնելու համար. «Դո՞ւն ես ան որ պիտի գայ՝ թէ ուրիշի մը սպասենք»։ **20** Եւ անոնք, Յիսուսի քով գալով, ըսին. «Յովհաննէս Մկրտիչ մեզ քեզի ղրկեց, հարցնելու համար թէ դո՞ւն ես այն որ պիտի գայ՝ թէ ուրիշի մը սպասենք»։

21 Նոյն ժամուն, Յիսուս շատեր բժշկեց իրենց հիւանդութիւններէն, վէրքերէն ու պիղծ դեւերէն եւ շատ մը կոյրերու տեսողութիւն շնորհեց. **22** եւ պատասխանեց անոնց. «Գացէ՛ք, պատմեցէ՛ք Յովհաննէսին՝ ինչ որ տեսաք եւ լսեցիք. կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռեալները յարութիւն կ'առնեն եւ Աւետարանը կը քարոզուի աղքատներուն»։ **23** Եւ երանի՛ անոր, որ իմ պատճառովս չի գայթակղիր»։

Գովեստ Յովհաննէս Մկրտիչին

24 Եւ երբ Յովհաննէսի պատգամաւորները մեկնեցան, Յիսուս սկսաւ Յովհաննէսի մասին ժողովուրդին խօսիլ. «Ի՞նչ ելաք տեսնելու անապատին մէջ. հովէն շարժող եղէ՞ք մը։ **25** Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մա՞րդ մը փափկազգեստ. ահաւասիկ անոնք որ փառաւոր զգեստներ կը հագնին ու փափկութեամբ կ'ապրին՝ արքունի պալատներու մէջ են։ **26** Կամ ի՞նչ ելաք տեսնելու. մարգարէ՞ մը. այո՛, կ'ըսեմ ձեզի, աւելի՛ քան մարգարէ մը. **27** որովհետեւ ա՛յս է, որուն համար գրուած է. Ահա՛ իմ պատգամաւորս կը ղրկեմ՝ քու առջեւ, որ պիտի պատրաստէ մանապաւիտ քու առջեւ։ **28** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կնոջմէ ծնածներուն մէջ Յովհաննէսէն աւելի մեծ մարգարէ չկայ. բայց Աստուծոյ արքայութեան մէջ՝ ամէնէն փոքրիկը իրմէ աւելի մեծ է»։ **29** Եւ բոլոր ժողովուրդն ու մաքսաւորները որ լսեցին, արդարացուցին զԱստուած՝ որ Յովհաննէսի մկրտութեամբ մկրտուած են։ **30** Իսկ փարիսեցիները եւ օրէնսգէտները անարգեցին իրենց վրայ Աստուծոյ ունեցած ծրագիրը՝ չմկրտուելով անկէ։

Յիսուս կը դատէ ժամանակակից սերունդը

Մրկ 11, 16-19

31 «Արդ, որո՞ւ նմանցնեմ այս սերունդի մարդիկը. եւ որո՞ւն

կը նմանին անոնք: **32** Կը նմանին մանուկներու, որոնք հրապարակի վրայ նստած՝ զիրար կը կանչեն ու կ'ըսեն. Փո'ղ զարկինք ձեզի եւ դուք չպարեցիք, ողբ երգեցինք ու դուք չլացիք: **33** Արդարեւ, եկաւ Յովհաննէս Մկրտիչը. ան ո'չ հաց կ'ուտէր եւ ո'չ գինի կը խմէր. եւ դուք կ'ըսէիք՝ Դիւահա՛ւր է: **34** Եկաւ Մարգու Որդին, որ կ'ուտէ ու կը խմէ. եւ կ'ըսէք՝ Ահա կերող ու խմող մարդ մը, բարեկամը մաքաւաւորներու եւ մեղաւորներու: **35** Եւ իմաստուն թիւնը արդարացաւ՝ իր որդիներուն շնորհիւ»:

Մեղաւոր կեցի հաւատքը

36 Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր Յիսուսի, որ իրեն հետ ճաշէ, ու մտնելով փարիսեցիին տունը՝ բազմեցաւ: **37** Քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար, որ երբ իմացաւ թէ փարիսեցիին տունը սեղանի նստեր է, ազնիւ իւղի շիշ մը բերելով, **38** Յիսուսի ետեւը՝ ոտքերուն քով կեցած՝ կու լար, արցունքով կը թրջէր անոր ոտքերը եւ իր գլուխին մազերովը կը սրբէր. կը համբուրէր անոր ոտքերը եւ իւղով կ'օծէր:

39 Փարիսեցին՝ որ զինքը հրաւիրած էր՝ աս տեսնելով. մտքէն կ'ըսէր. «Եթէ մարգարէ ըլլար՝ պիտի գիտնար թէ ո'վ կամ ինչ պիտի՝ կին մը իրեն կը դպչի, որովհետեւ մեղաւոր է»: **40** Այն ատեն Յիսուս ըսաւ. «Սիմոն, ըսելիք մը ունիմ քեզի»: Ան պատասխանեց. «Ըսէ՛ Վարդապետ»: **41** «Փոխատու մը, ըսաւ Յիսուս, երկու պարտապան ունէր. մէկը հինգ հարիւր դահեկան կը պարտէր, իսկ միւսը՝ յիսուն: **42** Եւ որովհետեւ չէին կրնար վճարել՝ երկուքին ալ շնորհեց. ըսէ՛ հիմա, անոնցմէ ո՞ր մէկը աւելի շատ պիտի սիրէ զինքը»: **43** Սիմոն պատասխանեց. «Ինծի այնպէս կը թուի թէ ան՝ որուն շատ ներեց»: Եւ Յիսուս յարեց. «Ուղի՛ղ դատեցիր»:

44 Եւ դառնալով դէպի կինը՝ ըսաւ Սիմոնին. «Կը տեսնե՞ս այս կինը. քու տունդ մտայ, ոտքերս չլուացիր, իսկ ասիկա՝ իր արցունքներով թրջեց ոտքերս եւ իր մազերովը սրբեց: **45** Դուն ինծի համբոյր չտուիր, իսկ ան՝ ահա մտնելէս ի վեր ոտքերս համբուրելէ չի դադրիր: **46** Իւղով գլուխս չօծեցիր. ասիկա անոյշ իւղով օծեց

ոտքերս: **47** Ասոր համար կ'ըսեմ քեզի. ներուած են անոր բազմաթիւ մեղքերը, որովհետեւ չատ սիրեց. որովհետեւ ան՝ որուն չատ կը ներուի, չատ կը սիրէ, եւ ան՝ որուն քիչ կը ներուի, քիչ կը սիրէ»: **48** Եւ ապա ըսաւ կնոջ. «Ներուած են քու մեղքերդ»: **49** Սեղանակիցները սկսան իրենց մտքէն ըսել. «Ո՞վ է ասիկա, որ մեղքերը կը թողու: **50** Եւ Յիսուս ըսաւ կնոջ. «Հաւատքդ փրկեց քեզ, գնա՛ խաղաղութեամբ»:

Բարեպաշտ կիները

8 **1** Անկէ վերջ, Յիսուս կը շրջէր քաղաքներն ու գիւղերը, կը քարոզէր եւ կ'աւետարանէր Աստուծոյ արքայութիւնը եւ տասներկուքը անոր հետ էին, **2** ինչպէս նաեւ քանի մը կիներ, որոնք բժշկուած էին չար դեւերէ եւ հիւանդութիւններէ. Մարիամ, որ Մագդաղենացի կը կոչուէր, որմէ եօթը դեւ ելած էր, **3** Յովհաննա, Հերովդէսի մատակարարին՝ Քուղայի կինը եւ Շուշան. եւ ուրիշ շատեր, որ իրենց ինչքերով կը հոգային անոնց պէտքերը:

Սերմնացանին առակը

Մտք 13, 1-9. Մրկ 4, 1-9

4 Երբ չատ բազմութիւն հաւաքուեցաւ եւ ամէն քաղաքէ իրեն եկան՝ այս առակը պատմեց. **5** «Սերմնացանը ելաւ իր սերմը ցանելու, եւ ցանելու ատեն՝ մաս մը ճամբուն վրայ ինկաւ եւ ոտքի կոխան եղաւ ու երկինքի թռչունները կերան զայն: **6** Մաս մը ապառաժի վրայ ինկաւ, եւ հազիւ բուսաւ, հիւթ չունենալուն պատճառով՝ չորցաւ: **7** Մաս մը փուշերու մէջ ինկաւ, եւ փուշերը միա-

47 – Հիմա ալ, կատարեալ սիրոյ գոյումով, կը մերուին մեզի մեր մեղքերը: Բայց որովհետեւ Աստուծոյ սէրը կը պահանջէ մեզմէ, որ մենք լիովին կատարենք իր սուրբ կամքը, հետեւաբար, կատարեալ սիրոյ մերգործութեամբ արդէն իսկ լոկիւայն առաջադրած կ'ըլլամք, մեր արդէն իսկ մերուած մեղքերը՝ Քրիստոսի պատուէրին համաձայն, խոստովանելու եւ զանոնք հեռաւորելու Քրիստոսէն առաքեալներուն տրուած իշխանութեան՝ «որուն որ արձակէ՝ արձակուած պիտի ըլլայ»:

սին բուսնելով՝ խեղդեցին զայն: **8** Եւ ուրիշ մաս մը լաւ եւ պարարտ հողի մէջ ինկաւ, եւ բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ»: Այսպէս խօսելէ ետք, ըսաւ. «Ո՛վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

9 Աշակերտները հարցուցին իրեն՝ թէ ի՞նչ կը նշանակէ այս առակը: **10** Յիսուս պատասխանեց. «Ձեզի տրուած է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտնալ, բայց ուրիշներուն՝ առականելով, որպէսզի տեսնելով հանդերձ՝ չտեսնեն, եւ լսելով հանդերձ՝ չհասկնան»:

11 Իսկ առակին նշանակութիւնը այս է: Սերմը Աստուծոյ *Խօսքն* է: **12** Ճամբուն վրայ ինկածները անոնք են՝ որ կը լսեն, բայց յետոյ կու գայ սատանան եւ անոնց սրտէն կը հանէ *Խօսքը*, որպէսզի չըլլայ թէ հաւատան ու փրկուին: **13** Ապառաժի վրայ ինկածները անոնք են, որ երբ կը լսեն՝ ուրախութեամբ կ'ընդունին *Խօսքը*, բայց արմատ չունին. ատեն մը կը հաւատան եւ փորձութեան ժամանակ կը հեռանան: **14** Իսկ փուշերու մէջ ինկածները անոնք են՝ որ կը լսեն *Խօսքը*, բայց հոգեւոր, հարստութեամբ եւ աշխարհի ցանկութիւններով զբաղած՝ կը խեղդուին եւ անպտուղ կը մնան: **15** Իսկ պարարտ հողին մէջ ինկածները անոնք են՝ որ բարի եւ զուարթագին սրտով կը լսեն *Խօսքը*, կ'ընդունին եւ յարատեւելով՝ պտուղ կու տան:

Ճրագիմ առակը

16 Ոչ ոք ճրագը կը վառէ եւ կարասին տակ կը պահէ, կամ մահիճին տակ կը դնէ, այլ՝ աշտանակին վրայ, որպէսզի մտնողները լոյս տեսնեն: **17** Որովհետեւ չկայ ծածուկ բան՝ որ չյայտնուի, ոչ ալ գաղտնի՝ որ չգիտցուի ու երեւան չելլէ: **18** Ուստի զգո՛յճ եղէք այսուհետեւ թէ ինչպէ՛ս կը լսէք. որովհետեւ ունեցողին պիտի տրուի, եւ չունեցողէն պիտի առնուի՝ ինչ որ կը կարծէ թէ ունի»:

Յիսուսի ազգականները

Մտք 12, 46-50. Մրկ 3, 31-35

19 Յիսուսի մայրն ու եղբայրները եկան, եւ բազմութեան

պատճառով չէին կրնար անոր մօտենալ: **20** Իմացուցին անոր եւ ըսին. «Մայրդ ու եղբայրներդ դուրսը կեցեր են եւ քեզ տեսնել կ'ուզեն»: **21** Ան պատասխանեց. «Մայրս ու եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ Խօսքը կը լսեն ու կը կատարեն»:

Յիսուս տէր է քնութեան

Մտք 12, 46–50. Մրկ 3, 31–35

22 Օր մը նաւակ ելաւ աշակերտներուն հետ եւ ըսաւ անոնց. «Եկէ՛ք, ծովակին միւս կողմն անցնինք». ու մեկնեցան: **23** Եւ մինչ կը նաւարկէին, Յիսուս քնացաւ. եւ հովի մորիկ մը իջաւ ծովակին վրայ. նաւակը ջուրով կը լեցուէր եւ իրենք սկսան տագնապիլ: **24** Անոնք մօտեցան, արթնցուցին զինքը եւ ըսին. «Վարդապէ՛տ, Վարդապէ՛տ, կը կորսուինք ահաւասիկ»: Եւ ինքը, ելլելով՝ սաստեց հովին ու խռոված ալիքներուն, եւ հանդարտեցան. ու խաղաղութիւն տիրեց: **25** Եւ ըսաւ անոնց. «Ո՛ր է ձեր հաւատքը». իսկ անոնք՝ վախճ բռնուեցան եւ զարմացած իրարու կ'ըսէին. «Արդեօք ո՞վ է ասիկա, որ հովերուն եւ ջուրերուն կը հրամայէ ու կը հնազանդին իրեն»:

Գերգեսացի դիւաւարը

Մտք 8, 28–34. Մրկ 5, 1–20

26 Եւ նաւարկելով, իջան Գերգեսացիներու երկիրը, որ կը գտնուի Գալիլեայի դիմացը: **27** Երբ Յիսուս ցամաք ելաւ, հանդիպեցաւ քաղաքէն եկող մարդու մը, որուն մէջ դեւեր կային ու երկար ժամանակէ ի վեր զգեստ հագուած չէր եւ ոչ ալ տան մէջ բնակած, այլ՝ գերեզմաններուն մէջ:

28 Անիկա, տեսնելով Յիսուսը՝ աղաղակեց եւ առջեւը ինկաւ ու բարձրաձայն ըսաւ. «Խ՞նչ գործ ունիս ինծի հետ, Յիսո՛ւս, Բարձրեալ Աստուծոյ Որդի, կ'աղաչեմ, մի՛ տանջեր զիս»: **29** Որովհետեւ ան պիղծ դեւին կը հրամայէր՝ որ մարդէն ելլէ, քանի երկար ժամանակէ ի վեր տիրացած էր անոր. թէեւ շղթաներով կապուած եւ երկաթի մէջ պահուած էր, բայց կապանքները կը խզէր եւ դեւէն մղուած՝ անապատ կը քշուէր: **30** Յիսուս հարցուց անոր. «Խ՞նչ

է անունդ»: Ան պատասխանեց. «Լեզէոն», որովհետեւ շատ դեւեր մտած էին անոր մէջ: **31** Եւ կ'աղաչէին անոր որ իրենց չհրամայէ անդունդը երթալ:

32 Հոն, լերան վրայ արածող, բազմաթիւ խոզերու երամակ մը կար. դեւերը աղաչեցին որ հրաման տայ իրենց որ անոնց մէջ մտնեն. եւ ան հրաման տուաւ: **33** Եւ դեւերը, մարդէն ելլելով՝ խոզերուն մէջ մտան. եւ երամակը բարձունքէն դէպի ծովակը խուժեց ու խեղդուեցաւ:

34 Խոզարածները, եղածը տեսնելով՝ փախան ու քաղաքին եւ ագարակներու մէջ պատմեցին: **35** Բնակիչները ելան պատահածը տեսնելու, եւ գալով Յիսուսի մօտ՝ գտան մարդը որմէ դեւերը ելած էին, որ հագուած եւ զգաստացած նստած էր Յիսուսի ոտքերուն քով. եւ վախցան: **36** Տեսնողները պատմեցին անոնց՝ թէ ինչպէս դիւահարը ազատուեցաւ: **37** Եւ Գերգեսացիներուն մերձակայ երկրին բոլոր բնակչութիւնը կ'աղաչէր Յիսուսի՝ որ իրենց սահմաններէն հեռանայ, որովհետեւ սաստիկ վախէ բռնուած էին. եւ Յիսուս, նաւակ մտնելով՝ ետ դարձաւ:

38 Մարդը, որմէ դեւերը ելած էին, կ'աղաչէր որ հետը չըջի. բայց Յիսուս ետ դրկեց զայն, ըսելով. **39** «Դարձի՛ր տունդ եւ պատմէ՛ ինչ որ Աստուած ըրաւ քեզի»: Գնաց եւ բոլոր քաղաքին մէջ պատմեց ինչ որ Յիսուս իրեն ըրաւ:

Յայրոսի աղջիկը եւ տեռատես կիմը

Մտք 9, 18–26. Մրկ 5, 21–43

40 Վերադարձին՝ Յիսուս ժողովուրդէն ընդունուեցաւ, որովհետեւ ամէնքն ալ իրեն կը սպասէին: **41** Եւ հահ ներկայացաւ Յայ-

Գլ. 8, 33 – Յիսուս գոհացում տուաւ դեւերուն աղաչամբին, որպէս զի ցուցնէ թէ ինչպիսի դաժան ու անողորմ իշխանութիւններէ եր որ կը տառապէր այն ինդն մարդը, եւ միանգամայն, որպէս զի զգացնէ անոնց իր ամենակարող զօրութիւնն ու իշխանութիւնը:

37 – Հեթանոս բնակիչներուն համար շատ աւելի կարեւոր էին խոզերու կեանքը՝ քան իրենց հոգիին փրկութիւնը եւ իրենց յաւիտեանական կեանքը:

ըոս անուանով մարդ մը, որ ժողովարանին պետն էր, եւ Յիսուսի ոտքն իյնալով՝ կ'աղաչէր որ իր տունը մտնէ. **42** որովհետեւ մէկ հատիկ աղջիկ մը ունէր, գրեթէ տասներկու տարեկան, որ մահամերձ էր: Մինչ Յիսուս կ'երթար, ժողովուրդը զինքը կը նեղէր:

43 Եւ կին մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնհոսութիւն ունէր եւ բոլոր ունեցածը բժիշկներուն ծախսած էր եւ ոչ մէկէն կրցած էր բուժուիլ, **44** ետեւէն մօտեցաւ, Յիսուսի զգեստին քղանցքին դպաւ եւ իսկոյն արիւնի հոսումը դադրեցաւ: **45** Յիսուս հարցուց. «Ո՞վ դպաւ ինծի»: Եւ երբ ամէնքը կ'ուրանային, Պետրոս եւ հետը եղողները ըսին. «Վարդապետ, ժողովուրդն է որ կը սեղմէ ու կը նեղէ քեզ»: **46** Յիսուս ըսաւ. «Մէկը ինծի դպաւ, որովհետեւ զգացի թէ ինծմէ զօրութիւն մը ելաւ»: **47** Կինը, տեսնելով որ բրածը ծածուկ չմնաց, եկաւ դողալով եւ անոր առջեւն ինկաւ, եւ բոլոր ժողովուրդին դիմաց պատմեց՝ թէ ինչո՞ւ համար դպաւ եւ թէ ի՞նչպէս իսկոյն բժշկուեցաւ: **48** Յիսուս ըսաւ. «Քաջալերուէ՛, դուստրս, հաւատքդ բժշկեց քեզ, գնա՛ խաղաղութեամբ»:

49 Եւ մինչդեռ կը խօսէր՝ ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ անոր. «Աղջիկդ մեռաւ, ալ մի՛ նեղեր Վարդապետը»: **50** Իսկ Յիսուս, երբ լսեց, ըսաւ. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛ եւ պիտի փրկուի»: **51** Երբ տուն հասաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ ներս մտնէ իրեն հետ, բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: **52** Ամէնքն ալ կուլ լային եւ կ'ողբային անոր վրայ: «Մի՛ լաք, ըսաւ Յիսուս, որովհետեւ աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: **53** Իսկ անոնք կը ծաղրէին զինքը, որովհետեւ գիտէին թէ մեռած է: **54** Բայց ինքը, դուրս հանելով ամէնքը՝ բռնեց աղջկան ձեռքէն, աղաղակեց եւ ըսաւ. **55** «Աղջիկ, ելի՛ր, կանգնէ»: **56** Անոր հոգին վերադարձաւ եւ անմիջապէս կանգնեցաւ. եւ Յիսուս հրամայեց որ կերակուր տան: Ծնողքը զարմացան. իսկ Յիսուս պատուիրեց անոնց՝ որ եղածը մարդու չպատմեց:

Առաքելներու փարոգութիւնը

Մտք 10, 9-14. Մրկ 6, 7-13

9 **1** Յիսուս, տասներկու առաքելները կանչելով՝ անոնց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ բոլոր դեւերուն, ինչպէս նաեւ հիւանդներուն վրայ՝ զանոնք բժշկելու համար: **2** Եւ զանոնք ղրկեց Աստուծոյ արքայութիւնը քարոզելու եւ ախտաւորները բուժելու: **3** Եւ ըսաւ անոնց. «Ճամբու համար բան մի՛ առնէք. ո՛չ գաւազան, ո՛չ տոպրակ, ո՛չ հաց, ո՛չ դրամ, եւ երկու զգեստ մի՛ կրէք ձեզի հետ: **4** Ո՛ր տունն ալ մտնէք՝ հոն մնացէք եւ անկէ՛ մեկնեցէք: **5** Անոնք որ ձեզ չեն ընդունիր, այդ քաղաքէն ելլելու ատեն՝ ձեր ոտքերու փոշին թօթուեցէք իբրեւ վկայութիւն անոնց դէմ»: **6** Եւ անոնք ելան, քաղաքներն ու գիւղերը սկսան շրջիլ, կ'աւետարանէին եւ բժշկութիւն կ'ընէին ամէն տեղ:

Հերովդէսի մտահոգութիւնը

Մտք 14, 1-2. Մրկ 6, 14-16

7 Հերովդէս չորրորդապետը, լսելով այս բոլոր պատահանքները՝ զարմացաւ, որովհետեւ ոմանք կ'ըսէին թէ Յովհաննէս մեռեալներէն յարութիւն առած է. **8** եւ ուրիշներ՝ թէ Եղիան յայտնուած է, իսկ ուրիշներ ալ՝ թէ նախկին մարգարէներէն մէկը յարութիւն առած է: **9** Հերովդէս ըսաւ. «Յովհաննէսը ե՛ս գլխատեցի. ո՞վ է ուրեմն ասիկա՝ որու մասին այսպիսի բաներ կը լսեմ»: Եւ կ'ուզէր տեսնել զայն:

Հացերու առաջիմ քաղմացումը

Մտք 14, 13-21. Մրկ 6, 30-44

10 Առաքելները դարձան եւ իրենց բոլոր ըրածները պատմեցին Յիսուսին: Ու զանոնք առնելով՝ զնաց առանձին ամայի տեղ

Գլ. 9, 3 – Ամէն աշխարհիկ հոգ մէկդի դրուելու է:

5 – Ուտի փոշիները թօթափելը կը նշանակէ թէ բոլոր մեղքերու պատասխանատուութիւնն անոնց վրայ պիտի ծանրանայ:

մը, քաղաքի մը մօտ, որուն անունն էր Բեթսայիդա: **11** Իսկ ժողովուրդը, երբ իմացաւ՝ անոր ետեւէն գնաց, եւ Յիսուս զանոնք ընդունելով՝ անոնց հետ կը խօսէր Աստուծոյ արքայութեան մասին. եւ անոնք որ բժշկութեան պէտք ունէին՝ կը բժշկէր զանոնք:

12 Օրը սկսաւ իրիկնանալ. տասներկու աշակերտները, մօտենալով, ըսին. «Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի չըջակայ գիւղերը եւ ագարակները երթան, հանգչին եւ կերակուր գտնեն, որովհետեւ հոս ամալի տեղ ենք»: **13** «Դո՛ւք ուտելիք տուէք անոնց», ըսաւ Յիսուս: Իսկ անոնք պատասխանեցին. «Մենք հինգ հացէն եւ երկու ձուկէն աւելի բան չունինք, բացի եթէ երթանք եւ այս ժողովուրդին բաւարար կերակուր գնենք»: **14** Որովհետեւ շուրջ հինգ հազար հոգի էին: Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Բազմեցուցէ՛ք զանոնք խումբ խումբ, յիսուն յիսուն»: **15** Այնպէս ըրին եւ ամէնքը տեղաւորեցին: **16** Յիսուս հինգ հացը եւ երկու ձուկերը առնելով՝ երկինք նայեցաւ, օրհնեց, մանրեց եւ աշակերտներուն տուաւ՝ որ ժողովուրդին բաժնեն: **17** Ամէնքն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած կտորներով տասներկու սակառ լեցուցին:

Պետրոսի դաւանութիւնը

Մտք 16, 13-20. Մրկ 8, 27-30

18 Երբ օր մը առանձին կ'աղօթէր՝ աշակերտներն ալ իրեն հետ էին. հարցուց անոնց եւ ըսաւ. «Ժողովուրդը ի՞նչ կ'ըսէ թէ ով եմ ես»: **19** Անոնք ալ պատասխանեցին. «Յովհաննէս Մկրտիչը, ուրիշներ՝ Եղիան, իսկ ուրիշներ՝ հին մարգարէներէն մէկը, որ յարութիւն առեր է»: **20** «Ի՛սկ դուք, ո՞վ կ'ըսէք թէ ըլլամ», հարցուց անոնց: «Աստուծոյ Օծեալը», պատասխանեց Պետրոս: **21** Յիսուս խիստ կերպով սաստեց եւ պատուիրեց անոնց՝ որ այդ բանը մարդու չըսեն:

21 – Յիսուս կ'արգիլէ առաքեալներուն իր մեսիական պատիւին մասին խօսիլ ժողովուրդին, որպէս զի չըլլայ թէ անոնց մէջ մեսիական երկրաւոր պետութիւն մը հիմնելու յոյսն ու ակնկալութիւնը արթնցնէ: Եւ երկրորդ՝ անոնց տկար հաւատքը ըմբռնել չէր կրնար, թէ Մեսիան՝ Աստուծոյ Օծեալը պիտի մերժուէր ի՛ր իսկ սեպիական ժողովուրդին:

22 Եւ աւելցուց՝ թէ պէտք է Մարդու Որդին շատ չարչարանք կրէ, եւ նախատուի քահանայապետներէն, ծերերէն ու դպիրներէն, եւ սպաննուի ու երեք օր վերջ յարութիւն առնէ:

Յիսուսիմ հետեւելու պայմանները

Մտք 16, 24-27. Մրկ 8, 34-38

23 Կ'ըսէր ամէնուն. «Եթէ մէկը ուզէ իմ հետեւէս գալ՝ թող ուրանայ իր անձը եւ իր խաչը առնէ ամէն օր եւ հետեւի ինծի: **24** Որովհետեւ ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն. եւ ով որ ինծի համար իր անձը կորսնցնէ՝ պիտի փրկէ զայն: **25** Ի՞նչ օգուտ է մարդուն՝ եթէ ամբողջ աշխարհը շահի եւ իր անձը կորսնցնէ կամ անոր վնասէ: **26** Որովհետեւ ով որ ամօթ համարի գիտ եւ իմ խօսքերս, Մարդու Որդին ալ ամօթով պիտի ձգէ զինքը՝ երբ գալու ըլլայ իր եւ իր Հօր եւ սուրբ Հրեշտակներու փառքով:

27 Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ որ տեսնեն Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուսի այլակերպութիւնը

Մտք 17, 1-9. Մրկ 9, 2-10

28 Այս խօսքերէն չուրջ ութ օր ետք, Յիսուս, հետն առնելով Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը՝ լեռ ելաւ աղօթելու համար: **29** Աղօթքի պահուն՝ անոր դէմքը այլակերպուեցաւ եւ զգեստը սպիտակ փայլուն երեւոյթ մը առաւ: **30** Եւ ահա երկու մարդիկ հետը կը խօսէին, Մովսէսն ու Եղիան, **31** որոնք փառքի մէջ երեւնալով՝ կը խօսէին անոր մահուան մասին, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր: **32** Իսկ Պետրոս եւ անոր հետ եղողները քունի մէջ ծանրացած էին. երբ արթնցան՝ տեսան անոր փառքը եւ երկու մարդիկը, որոնք անոր քով կեցած էին: **33** Երբ անոնք մեկնեցան՝ Պետրոս ըսաւ Յիսուսին. «Վարդապետ, լաւ է ձեզի համար որ հոս մնանք եւ երեք տաղաւար չինենք. մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ մէկը Եղիային համար». եւ չէր գիտեր իր ըսածը: **34** Այս խօսքին վրայ՝ ամպ մը եկաւ եւ ծածկեց զանոնք, **35** եւ երբ ամպին տակ

մտան՝ վախցան: **36** Ձայն մը լսուեցաւ ամպէն, որ կ'ըսէր. «Ա՛ս է իմ ընտրեալ Որդիս, մտի՛կ ըրէ՞ք անոր»: Մինչ տակաւին ձայնը կը լսուէր՝ Յիսուս առանձին մնաց. անոնք լռեցին եւ այն օրերուն ո՛չ մէկուն պատմեցին ինչ որ տեսան:

Լուսնոտ դիւահարը

Մտք 17, 14-18. Մրկ 9, 14-27

37 Հետեւեալ օրը, երբ լեռնէն կ'իջնէին, բազմաթիւ ժողովուրդ Յիսուսին ընդառաջ գնաց. **38** եւ ժողովուրդէն մարդ մը աղաղակեց ու ըսաւ. «Վարդապետ, կ'աղաչեմ, նայէ՛՜ զաւակիս, որովհետեւ մէկ հատիկս է. **39** եւ ահա դեւը կը տիրանայ իրեն. յանկարծ կը պոռայ եւ ուժգին գետին կը զարնէ, կը տապալէ, կը փրփրեցնէ եւ հազիւ կը հեռանայ իրմէ, խորտակելով գինքը: **40** Աղաչեցի աշակերտներուդ որ հանեն դեւը, բայց չկրցան»: **41** Յիսուս պատասխանեց. «Ո՛վ անհաւատ եւ մոլորած ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ եւ պիտի հանդուրժեմ ձեզի. հո՛ս բեր զաւակդ»: **42** Եւ երբ կը մօտենար, դեւը հարուածեց մանուկը եւ ուժգին ցնցեց զայն: **43** Իսկ Յիսուս սաստեց պիղծ դեւին, բժշկեց մանուկը եւ յանձնեց անոր հօրը: Ամէնքը կը սքանչանային Աստուծոյ սքանչելիքներուն վրայ:

Մարդու Որդին պիտի մատնուի

Մտք 17, 22. Մրկ 9, 30-32

44 Մինչ ամէնքը կը զարմանային անոր բոլոր ըրածներուն վրայ, Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Այս խօսքերս լաւ մը դրէ՞ք ձեր ականջներուն մէջ, որովհետեւ Մարդու Որդին պիտի մատնուի մարդերու ձեռքը»: **45** Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը, որովհետեւ ծածկուած էր իրենցմէ, որպէսզի չհասկնան. եւ կը վախնային հարցնել այդ խօսքին մասին:

Ճշմարիտ մեծութիւնը

Մտք 18, 1-5. Մրկ 9, 33-37

46 Աշակերտներուն մէջ խնդիր ծագեցաւ՝ թէ ո՛վ է արդեօք

իրենց մէջ ամէնէն մեծը: **47** Յիսուս, հասկնալով անոնց սրտին մէջ եղող մտածումը, առաւ մանուկ մը եւ զայն կեցուց անոնց մէջտեղ, իրեն մօտ, եւ ըսաւ. **48** «Ո՛վ որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս կ'ընդունի, եւ ո՛վ որ զիս ընդունի՝ կ'ընդունի զայն որ զիս զրկեց: Որովհետեւ ո՛վ որ փոքրիկ է ձեր ամէնուն մէջ՝ ասն է մեծը»:

49 Յովհաննէս, խօսք առնելով, ըսաւ. «Վարդապէ՛տ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ արգիլեցինք, որովհետեւ մեզի հետ չէր չըջեր»: **50** Յիսուս պատասխանեց. «Մի՛ արգիլէք, որովհետեւ ով որ ձեզի թշնամի չէ՝ ձեր կողմն է»:

Սամարացիներու մերժումը

Մտք 19, 1. Մրկ 10, 1

51 Երբ մօտեցան օրերը ուր ան պիտի վերանար՝ որոշեց Երուսաղէմ երթալ: **52** Իր առջեւէն պատգամաւորներ զրկեց, որոնք գացին, Սամարացիներու գիւղ մը մօտան՝ որպէսզի իրեն համար տեղ մը պատրաստեն. **53** բայց անոնք չընդունեցան զինքը, որովհետեւ Երուսաղէմ կ'երթար: **54** Այս տեսնելով, իր աշակերտներէն՝ Յակոբոսն ու Յովհաննէսը ըսին. «Տէ՛ր, կ'ուզե՛ս որ ըսենք որ երկիրքէն կրակ իջնէ ու զանոնք մեռցնէ»: **55** Ան դարձաւ, յանդիմանեց զանոնք եւ ըսաւ. «Դուք չէ՛ք գիտեր թէ ինչ հոգիի տէր էք: **56** Որովհետեւ Մարդու Որդին չեկաւ մարդոց հոգիները կորսնցնելու, այլ փրկելու»: Եւ ուրիշ գիւղ մը գացին:

Առաքելական կոչումի պայմանները

Մտք 8, 18-22

57 Մինչ կը քալէին, ճամբուն վրայ մէկը ըսաւ Յիսուսին. «Ետե-

51 – Գրաբար թարգմանութեան մէջ կը կարդանք «գերեսս հաստատել», երապական բացատրութիւն մը, որուն իմաստն է՝ հաստատ կերպով միտքը դնել, հաստատապէս որոշում տալ: Քրիստոս «հաստատեց իր երեսը», դառնալով արիաբար դէպի այն բաղաժը՝ ուր արդէն վնոուած էր իր կորուստը:

ւէդ պիտի գամ ո՛ւր որ երթաս»։ **58** Յիսուս պատասխանեց. «Աղ-
ուէսները որչ ունին եւ երկինքի թռչունները՝ բոյն, բայց Մարդու
Որդին գլուխը դնելիք տեղ չունի»։

59 Ուրիշի մը ըսաւ. «Ետեւէ՛ս եկուր»։ «Տէ՛ր, պատասխանեց
ան, հրաման տուր որ երթամ նախ հայրս թաղեմ»։ **60** Յիսուս յա-
րեց. «Թո՛ղ որ մեռեալները իրենց մեռեալները թաղեն, եւ դուն
գնա՛, Աստուծոյ արքայութիւնը քարոզէ»։

61 Ուրիշ մը ըսաւ. «Տէ՛ր, ետեւէդ պիտի գամ, բայց հրաման
տուր որ նախ ընտանիքիս հրաժեշտ տամ»։ **62** Յիսուս պատասխա-
նեց. «Ո՛չ մէկը ձեռքը մածին վրայ կը դնէ եւ ետեւը կը նայի՝ եթէ
կ'ուզէ Աստուծոյ արքայութեան ատակ ըլլալ»։

Աշակերտներու առաքումը

Մտք 10, 9-15. Մրկ 6, 8-11

10 **1** Ասկէ ետք Տէրը ուրիշ եօթանասուններկու հոգի ալ ընտ-
րեց եւ երկու երկու զանոնք իր առջեւէն ղրկեց, այն բո-
լոր քաղաքներն ու տեղերը՝ ուր ինքը պիտի երթար։ **2** Եւ
կ'ըսէր անոնց. «Հունձքը առատ է, բայց մշակները սակաւաթիւ.
աղաչեցէ՛ք ուրեմն հունձքի Տիրոջ՝ որ մշակներ ղրկէ իր հունձքին
համար։ **3** Գացէ՛ք, ահա ես կը ղրկեմ ձեզ իբրեւ զառնուկներ՝ գալ-
լերու մէջ։ **4** Ձեզի հետ մի՛ առնէք ո՛չ քսակ, ո՛չ տոպրակ, ո՛չ կօ-
շիկ, եւ ճամբան մարդու ողջոյն մի՛ տաք։ **5** Ո՛ր տունն ալ մտնէք՝
նախ ըսէք. *Քաղաղութիւն այս տան վրայ*։ **6** Եթէ հոն խաղաղու-

Գլ. 10, 1 – Փրկիչը ուզեց որ իր Եկեղեցիին մէջ որոշ աստիճանաւորութիւն
մը ըլլայ. ասոր համար ալ Եօթանասուն (ըստ յայն եւ ասորի ձեռագիրներէն
ումանց՝ Եօթանասուներկուէին) պաշտօնը ստորակարգուած է առաքելներու
պաշտօնին։

4 – Տէրը իր այս կերպ քացատրութեամբ հասկցնել կ'ուզէ միայն, թէ առաք-
ելները պէտք չեն թերանալ իրենց պաշտօնի պարտականութեան մէջ այս կամ
այն պատճառներով։

6 – «Ողջոյնի որդի», այսինքն՝ ողջոյնի արժանի մէկը։

Թեան որդի գտնուի՝ ձեր խաղաղութիւնն անոր վրայ թող հանգչի, ապա թէ ոչ՝ թող ձեզի դառնայ: **7** Նո՛յն տունը մնացէք, կերէ՛ք ու խմեցէ՛ք ինչ որ ձեզի տան, որովհետեւ մշակը արժանի է իր վարձքին: Տունէ տուն մի՛ տեղափոխուիք: **8** Եւ ո՛ր քաղաքը որ մտնէք ու ձեզ ընդունին՝ կերէք ինչ որ ձեր առջեւը դնեն: **9** Բժշկեցէ՛ք հոն գտնուող հիւանդները եւ ըսէ՛ք անոնց. Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է: **10** Իսկ այն քաղաքը՝ ուր մտնէք ու ձեզ չընդունին, երբ հրապարակը ելլէք՝ ըսէք. **11** Այս փոշին ալ, որ ձեր քաղաքէն մեր ոտքերուն վրայ փակած է, ձեր վրայ կը թօթափենք. միայն թէ ա՛ս գիտցէք՝ որ Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է: **12** Կ'ըսեմ ձեզի որ այդ օրը աւելի հեշտ պիտի ըլլայ Սողոմոնային տուն քան այդ քաղաքին համար:

13 Վա՛յ քեզի, Քորազին, վա՛յ քեզի, Բեթսայիդա՛, որովհետեւ եթէ Տիւրոսի եւ Սիդոնի մէջ կատարուած ըլլային այն հրաշքները որ ձեր մէջ կատարուեցան, չատոնց արդէն քուրճ հազած եւ մոխիրի մէջ նստած՝ ապաշխարած կ'ըլլային: **14** Բայց դատաստանին օրը աւելի թեթեւ պիտի ըլլայ Տիւրոսի եւ Սիդոնի՝ քան ձեզի: **15** Իսկ դո՛ւն, Կափառնաաւմ, որ մինչեւ երկինք բարձրացած ես, մինչեւ դժոխք պիտի իջնես:

16 Ո՛վ որ ձեզի մտիկ ընէ՝ ինծի մտիկ կ'ընէ, ո՛վ որ ձեզ անարգէ՝ զիս կ'անարգէ, եւ ո՛վ որ զիս անարգէ՝ կ'անարգէ զԱյն՝ որ զիս զրկեց. եւ ո՛վ որ զիս լսէ՝ կը լսէ զԱյն՝ որ զիս զրկեց»:

Աշակերտներուն վերադարձը

17 Եօթանասուններկուքը ուրախութեամբ դարձան եւ ըսին. «Տէ՛ր, քու անունովդ՝ դեւերն ալ կը հնազանդին մեզի»: **18** Յիսուս պատասխանեց. «Կը տեսնէի սատանան՝ որ երկինքէն կ'իյնար փայլակի նման: **19** Ահա, ձեզի տուի իշխանութիւն՝ կոխելու օձերն ու կարիճները եւ թշնամիին ամբողջ զօրութիւնը, եւ ոչ մէկ բան պիտի վնասէ ձեզի: **20** Բայց մի՛ ուրախանաք որ դեւերը կը հնազանդին ձեզի, այլ հրճուեցէ՛ք որ ձեր անունները գրուած են երկինքի մէջ»:

Յիսուսի ուրախութիւնը

Մտք 11, 25-27

21 Նոյն ժամուն, Յիսուս ցնծաց Սուրբ Հոգիով եւ ըսաւ. «Շնորհակալ եմ քեզի, Հա՛յր, Տէր երկիրնքի եւ երկրի, որ այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ գիտուններէն եւ յայտնեցիր մանուկնե-րուն: Այո՛, Հա՛յր, որովհետեւ ա՛յսպէս հաճոյ թրեցաւ քեզի: **22** Ամէն ինչ տրուած է ինծի իմ Հօրմէս. եւ ո՛չ ոք գիտէ թէ ո՛վ է Որդին՝ բայց միայն Հայրը, եւ ո՛վ է Հայրը՝ բայց միայն Որդին, եւ անիկա՝ որուն կամենայ Որդին յայտնել»:

23 Եւ դառնալով աշակերտներուն՝ առանձին, ըսաւ. «Երանի՛այն աչքերուն որ կը տեսնեն ինչ որ դուք կը տեսնէք. **24** կ'ըսեմ ձեզի, թէ շատ մարդարէններ ու թագաւորներ փափաքեցան տեսնել ինչ որ դո՛ւք կը տեսնէք, բայց չտեսան, եւ լսել ինչ որ դո՛ւք կը լսէք, բայց չլսեցին»:

Բարի Սամարացի

Մտք 22, 34-40. Մրկ 12, 28-31

25 Եւ ահա օրէնքի վարդապետներէն մէկը ոտքի ելաւ, եւ զինքը փորձելու համար՝ ըսաւ. «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: **26** Յիսուս հարցուց. «Ի՞նչ գրուած է Օրէնքին մէջ, դուն ի՞նչ կը կարդաս»: **27** Անիկա պատասխանեց. «Սիրէ՛ Բու Տէր Աստուածդ բոլո՛ր սրտովդ, բոլո՛ր հոգիովդ, բոլո՛ր զօրութեամբդ ու բոլո՛ր մտքովդ, եւ ընկերդ՝ Բու անձիդ պէս»: **28** «Ուղիղ պատասխանեցիր», ըսաւ Յիսուս, «այդ ըրէ՛ եւ պիտի փրկուիս»:

29 Բայց անիկա, ուզելով ինքզինքը արդարացնել՝ ըսաւ Յիսուսին. «Ո՞վ է իմ ընկերս »: **30** Յիսուս պատասխանեց. «Մարդ մը Երուսաղէմէն Երիզով կ'իջնէր. եւ աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք մերկացուցին զինքը, վիրաւորեցին, կիսամահ թողուցին ու գացին: **31** Պատահամբ, նոյն ճամբէն քահանայ մը կ'իջնէր. տեսաւ ու անցաւ գնաց: **32** Նոյնպէս Ղեւտացի մը, նոյն տեղէն անցնելով՝ տեսաւ ու թողուց գնաց: **33** Սամարացի մըն ալ, նոյն կողմերը ճամբորդելով՝ քովը եկաւ, եւ տեսնելով զայն՝ գթաց

անոր վրան. **34** մօտեցաւ, վէրքերը պատեց, վրան ձէթ ու գինի դրաւ եւ իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ զայն պանդոկ մը եւ դարմանել տուաւ: **35** Հետեւեալ օրը, երբ անկէ կը մեկնէր, հանեց երկու դահեկան տուաւ պանդոկապետին եւ ըսաւ. «Մնամք տար անոր, եւ ինչ որ աւելի ծախսես՝ դարձիս կը վճարեմ քեզի»: **36** Արդ, քեզի համաձայն, այդ երեքէն ո՞րն է աւագակներու ձեռքն ինկած մարդուն ընկերը»: **37** «Այն որ վրան գթաց», պատասխանեց ան: «Գնա՛, դուն ալ նո՛յնպէս ըրէ՛», ըսաւ Յիսուս:

Մարթա եւ Մարիամ

38 Մինչ կ'երթային՝ Յիսուս գիւղ մը մտաւ եւ Մարթա անունով կին մը գինքը իր տունը ընդունեցաւ: **39** Անիկա քոյր մը ունէր, որուն անունն էր Մարիամ, որ Տիրոջ ոտքին մօտ եկաւ նստաւ եւ անոր խօսքերուն մտիկ կ'ընէր: **40** Մարթա շատ զբաղած էր գործերով: Եկաւ, Յիսուսին քով կեցաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, հոգ չե՞ս ըներ որ քոյրս զիս մինակ թողուցած է ծառայութեան մէջ. ուրեմն ըսէ՛ իրեն որ ինծի օգնէ»: **41** «Մարթա՛, Մարթա՛, պատասխանեց Յիսուս, դուն կը տագնապիս եւ շատ բաներով կը զբաղիս: **42** Բայց հոս՝ քիչ բան հարկաւոր է: Մարիամ լաւ բաժինը ընտրեց, եւ իր ձեռքէն պիտի չառնուի այդ»:

Տէրունական աղօթքը

Մտք. 6, 9-13

11 **1** Օր մը Յիսուս, տեղ մը կեցած կ'աղօթէր. երբ վերջացուց՝ աշակերտներէն մէկը ըսաւ անոր. «Տէ՛ր, աղօթել սորվեցուր մեզի, ինչպէս Յովհաննէս սորվեցուց իր աշակերտներուն»: **2** Յիսուս պատասխանեց. «Երբ աղօթէք՝ ըսէք.

Հա՛յր մեր, սուրբ ըլլայ քու անունդ,
թող գայ քու թագաւորութիւնդ:

3 Մեր ամէնօրեայ հացը տո՛ւր մեզի օրէ օր:

4 Եւ ներէ՛ մեր մեղքերուն,

ինչպէս մենք կը ներենք ամէն անոնց որ պարտական են մեզի.
եւ մի՛ տանիր մեզ փորձութեան»:

Աղոթքի գորութիւնը

Մտք 7, 7-11. Յովհ 14, 13-14

5 Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ ձեզմէ մէկը բարեկամ մը ունենայ եւ կէս գիշերին անոր երթայ եւ ըսէ. **6** բարեկամ, երեք հաց փոխ տուր ինծի, որովհետեւ բարեկամս ճամբորդութենէն եկաւ, եւ բան չունիմ դնելիք անոր առջեւ: **7** Եւ միւսը ներսէն ձայն տայ եւ ըսէ. «Մի՛ նեղեր զիս, որովհետեւ դուռը փակ է եւ զաւակներս ինծի հետ անկողինն են. չեմ կրնար ելլել եւ քեզի հաց տալ»: **8** Կ'ըսեմ ձեզի, եթէ նոյնիսկ բարեկամութեան համար չելլէ եւ չտայ, գոնէ անոր թախանձանքին համար պիտի ելլէ ու պէտք եղածը պիտի տայ:

9 Եւ ես կ'ըսեմ ձեզի. խնդրեցէ՛ք եւ պիտի տրուի ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի. **10** որովհետեւ ով որ խնդրէ՝ կ'առնէ, եւ ով որ փնտռէ՝ կը գտնէ, եւ ո'վ որ բախէ՝ կը բացուի անոր: **11** Եւ ո՞վ է ձեզմէ այն հայրը, որ քար տայ իր զաւակին՝ երբ հաց կը խնդրէ ան, կամ օձ տայ՝ ձուկի տեղ, **12** կամ կարիճ՝ երբ հաւկիթ կը խնդրէ: **13** Իսկ եթէ դուք, որ չար էք եւ զիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներուն, ո՛րչափ աւելի ձեր երկնաւոր Հայրը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ կը խնդրեն իրմէ»:

Չար ոգիները

14 Յիսուս համը դեւ մը հանեց. երբ դեւը ելաւ՝ համրը խօսեցաւ, եւ բոլոր ժողովուրդը զարմացաւ: **15** Բայց անոնցմէ ոմանք ըսին. «Անիկա դեւերու իշխանին՝ Բէեղզբեուդի միջոցով կը հանէ դեւերը»: **16** Իսկ ուրիշներ կը փորձէին զինքը եւ երկնքէն հրաշք կ'ուզէին: **17** Բայց զիտնալով անոնց մտադրութիւնը, ըսաւ անոնց. «Ամէն թագաւորութիւն որ ինք իր մէջ բաժնուած է՝ կը քանդուի եւ այն տունը որ ինք իր մէջ բաժնուած է՝ ուրիշ տան մը վրայ կը

Գլ. 11, 13 – «Երկնաւոր Հայրը բարի բաներ պիտի տայ»: Նոյն բնագիրը՝ «Երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին պիտի տայ»:

կործանի: **18** Արդ, եթէ սատանան ինք իր մէջ բաժնուած է՝ ի՞նչպէս կանգուն պիտի մնայ իր թագաւորութիւնը, քանի որ ինծի կ'ըսէք թէ դեւերու իշխանին՝ Բէեղզբեռուղով միջոցով կը հանեմ դեւերը: **19** Եթէ ես Բէեղզբեռուղով կը հանեմ դեւերը, ձեր որդիները ինչո՞վ պիտի հանեն. անոր համար՝ անո՞նք պիտի ըլլան ձեր դատաւորները: **20** Իսկ եթէ Աստուծոյ մատով կը հանեմ դեւերը, ուրեմն, հասած է ձեր վրայ Աստուծոյ արքայութիւնը: **21** Երբ զօրաւոր մարդ մը, լաւ զինուած, կը պահպանէ իր տունը՝ ինչքերը ապահով են. **22** բայց եթէ աւելի զօրաւոր մէկը վրան գալով, յաղթէ, գէնքերը որոնց վրայ դրած էր իր յոյսը, կ'առնէ եւ աւարն ալ կը բաժնէ:

23 Ո՛վ որ ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, եւ ո՛վ որ ինծի հետ չի հաւաքեր՝ կը ցրուէ:

24 Երբ պիղծ դեւը մարդու մը մէջէն ելլէ՝ անջրդի տեղեր կը չրջի, հանգիստ կը փնտռէ, եւ երբ չգտնէ, կ'ըսէ. Դառնամ տունս, ուրկէ ելայ. **25** եւ կու գայ, մաքրուած ու յարդարուած կը գտնէ: **26** Այն ատեն կ'երթայ եւ իրմէ աւելի չար եօթը դեւեր ալ կ'առնէ ու կը մտնէ եւ հոն կը բնակի. ու այդ մարդուն վերջին վիճակը՝ առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ»:

Երանի՛ր անոր որ Աստուծոյ Խօսքը կը պահէ

27 Եւ մինչ Յիսուս այսպէս կը խօսէր, ժողովուրդին մէջէն կ'ին մը ձայնը բարձրացուց եւ ըսաւ. «Երանի՛ր այն որովայնին որ քեզ կրեց եւ ստինքներուն՝ որ քեզ դիցցուցին»: **28** Յիսուս պատասխանեց. «Երանի՛ մանաւանդ անոնց՝ որ Աստուծոյ Խօսքը կը լսեն ու կը կատարեն»:

23 – Որովհետեւ Քրիստոս յաղթեց սատանայի իշխանութեան եւ հաստատեց Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ, ոչ ոք կրնայ այլեւ տարտամութեան մէջ մնալ: Այն որ չ'աշխատիր, իր կարողութեան չափով, Քրիստոսի գործին՝ կը ցրուէ զայն:

Յովնանի հրաշքը

Մտք 12, 38-42

29 Երբ ամբողջը իր շուրջը հաւաքուեցաւ՝ սկսաւ ըսել. «Այս սերունդը չար սերունդ է, նշան կը խնդրէ, բայց երկինքէն ուրիշ նշան պիտի չտրուի իրեն»։ Յովնանի նշանէն զատ։ **30** Որովհետեւ, ինչպէս որ Յովնան նշան եղաւ Նինուէացիներուն, այնպէս ալ Մարգու Որդին նշան պիտի ըլլայ այս սերունդին։ **31** Հարաւի դշտոն, դատաստանին օրը, այս սերունդին հետ պիտի ելլէ եւ պիտի դատապարտէ զայն, որովհետեւ ինքը աշխարհի ծայրէն եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու. եւ ահա Սողոմոնէն աւելի մեծը կայ հոս։ **32** Նինուէի մարդիկը, դատաստանին օրը, այս սերունդին հետ պիտի ելլեն եւ պիտի դատապարտեն զայն, որովհետեւ անոնք ապաշխարեցին Յովնանի քարոզութեամբ եւ ահա Յովնանէն աւելի մեծը կայ հոս»։

Հոգիին աչքը

33 «Ոչ ոք ճրագը կը վառէ եւ ծածուկ տեղ մը կը դնէ կամ գրուանին տակ, այլ աշտանակին վրայ, որպէսզի մտնողները լոյս տեսնեն։ **34** Մարմինդ ճրագը՝ աչքդ է. երբ աչքդ յստակ է՝ բոլոր մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբ աչքդ վատ է՝ մարմինդ խաւար կ'ըլլայ։ **35** Զգոյշ եղի՛ր ուրեմն, չըլլայ թէ լոյսը որ քու մէջդ է՝ խաւար դառնայ։ **36** Արդ, եթէ բոլոր մարմինդ լուսաւոր է եւ մութ մաս չկայ՝ բոլորովին լուսաւոր պիտի ըլլայ, նման ճրագին որ նշոյլներով կը լուսաւորէ քեզ»։

Փարիսեցիներուն կեղծաւորութիւնը

37 Եւ մինչդեռ կը խօսէր՝ փարիսեցի մը կ'աղաչէր իրեն որ իր տունը ճաշ ուտէ. եւ Յիսուս մտաւ ու բազմեցաւ։ **38** Փարիսեցին, տեսնելով որ ճաշէն առաջ չլուացուեցաւ՝ զարմացաւ։ **39** Տէրը ըսաւ անոր. «Հիմա դուք, փարիսեցիներ, բաժակին ու պնակին արտաքինը կը մաքրէք եւ ձեր ներսը լի է կողոպուտով եւ չարութեամբ։ **40** Անմիտնէ՛ր, այն որ արտաքինն ըրաւ՝ նոյնը ներքինն

ալ չըրա՞ւ: **41** Բայց ձեզի համար՝ կը բաւէ որ ձեր կրցածին չափ ողորմութիւն տաք, եւ ահա ամէն բան մաքուր պիտի ըլլայ ձեզի համար: **42** Բայց վա՛յ ձեզի, փարիսեցիներ, որ կու տաք տասանորդը անանուիի, համանի եւ բոլոր բանջարեղէններու, եւ զանց կ'ընէք Աստուծոյ օրէնքն ու սէրը. ասոնք պէտք էիք կատարել եւ միւսը զանց չընել: **43** Վա՛յ ձեզի, փարիսեցիներ, որ ժողովարաններու մէջ կը սիրէք առաջին աթոռները եւ հրապարակներու վրայ առաջին ողջոյնները: **44** Վա՛յ ձեզի, որ թաքնուած գերեզմաններու կը նմանիք, որոնց վրայէն մարդիկ կ'անցնին առանց նշմարելու»:

45 Օրէնագէտներէն մէկը, խօսք առնելով, ըսաւ. «Վարդապետ, այդպէս խօսելով՝ մեզ ալ կը նախատես»: **46** Յիսուս պատասխանեց. «Վա՛յ ձեզի ալ, օրէնագէտներ, որ կը բեռնաւորէք մարդիկը դժուարակիր բեռներով եւ դուք մէկ մատով իսկ չէք դպչիր բեռներուն:

47 Վա՛յ ձեզի, որ չիրիմներ կը չինէք մարգարէներուն գորս ձեր հայրերը սպաննեցին. **48** ուրեմն կը վկայէք թէ կամակից էք ձեր հայրերուն գործերուն. որովհետեւ իրենք կոտորեցին զանոնք, եւ դուք անոնց գերեզմաններ կը չինէք:

49 Ասոր համար Աստուծոյ իմաստութիւնն ըսաւ. Մարգարէներ եւ առաքեալներ պիտի զրկեմ անոնց, որոնցմէ ոմանք պիտի սպաննուին ու հալածուին: **50** Որպէսզի այդ սերունդէն պահանջ-ւի աշխարհի սկիզբէն թափուած բոլոր մարգարէներու արիւնը, **51** սկսելով Աբէլի արիւնէն՝ մինչեւ արիւնը Ջաքարիայի, որ խո-

43 – Յոյնը ունի պարզապէս «ողջոյններ», ո՛չ թէ «նախողջոյններ» (առաջին ողջոյններ):

48 – Ռաբիները կամ օրինականները արտափուստ ա՛յնպէս կը կեդաւորին, իբր թէ իրենք կը յարգեն մարգարէները, սակայն ներփուստ անոնք եւս համա-վիտ են մարգարէները սպաննող իրենց հայրերու արարքներուն:

49 – Աստուծոյ իմաստութիւնը, այսինքն աստուածային նախախնամու-թիւնն է, որ իր անսահման իմաստութեամբը հրամայած կամ թոյլատրած է այս պատահարները, որոնց մասին կը խօսի Փրկիչը (Է. 35):

ընդհանուր առմամբ, կ'ըսեմ ձեզի, այդ պիտի պահանջուի այս սերունդէն:

52 Վա՛յ ձեզի, օրէնսագէտներ, որ գիտութեան բանալիները կը պահէք. դուք չէք մտնել եւ մտնողներուն ալ արգելք կ'ըլլաք»:

53 Եւ երբ այս բոլորը խօսեցաւ անոնց՝ բազմութեան առջեւ, անոնք ամօթահար մնացին. եւ դպիրներն ու փարիսեցիները սկսան զայրանալ եւ գրգռել զայն շատ մը հարցերու մասին. **54** եւ կը սպասէին անոր բերնէն խօսք մը որոտալ, որպէսզի չարախօսութիւն ընեն անոր դէմ:

Փարիսեցիներու խմորը

12 **1** Երբ շուրջը հազարներով ժողովուրդ հաւաքուեցաւ, զիրար կոխելու աստիճան, Յիսուս սկսաւ նախ իր աշակերտներուն ըսել. «Զգո՛յ՛ եղէք փարիսեցիներու խմորէն, որ կեղծաւորութիւն է: **2** Որովհետեւ չկայ ծածուկ բան մը՝ որ չյայտնուի, եւ ոչ ալ գաղտնիք՝ որ չիմացուի: **3** Որովհետեւ ինչ որ խաւարի մէջ ըսէք՝ լոյսի մէջ պիտի լսուի, եւ ինչ որ շտեմարանին մէջ ականջն ի վար ըսէք՝ տանիքներու վրայ պիտի հռչակուի:

4 Արդ, կ'ըսեմ ձեզի, սիրելիներս, մի՛ վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն եւ անկէ աւելի բան չեն կրնար ընել: **5** Բայց ձեզի ցուցնեմ՝ թէ որմէ՛ պէտք է վախնաք. վախցէ՛ք անկէ որ սպաննելէն վերջ՝ իշխանութիւն ունի գեհնէն նետելու. այո՛, կ'ըսեմ ձեզի, անկէ՛ վախցէք: **6** Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու դահեկանի կը ծախուի. եւ սակայն անոնցմէ ո՛չ մէկը մոռցուած է Աստուծոյ առջեւ: **7** Իսկ ձեր գլխուն բոլոր մազերն անգամ համրուած են. մի՛ վախնաք ուրեմն, որովհետեւ շատ ճնճղուկներէ աւելի կ'արժէք:

52 – Դպիրները ժողովուրդէն կը ծածկէին «գիտութեան բանալիները», այսինքն՝ Հին Կտակարանի խօսքերու իրական իմաստը կը խեղաթիւրէին, որովհետեւ անոնք (դպիրները) երկրաւոր թագաւոր մը, աշխարհակալ Մեսիա մը կ'ուզէին ունենալ:

Գլ. 12, 1 – Կեղծաւորութիւնը կ'ապականէ մարդուն մէջ ամէն բարի բան:

5 – Աստուծոյ վախը պէտք է ամէն ուրիշ վախերէ վեր ըլլայ:

8 Կ'ըսեմ ձեզի. Ո՛վ որ մարդոց առջեւ դաւանի զիս՝ Մարդու Որդին ալ զինքը պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն առջեւ: 9 Իսկ ո՛վ որ ուրանայ զիս մարդոց առջեւ՝ պիտի ուրացուի Աստուծոյ հրեշտակներուն առջեւ:

10 Եւ ո՛վ որ Մարդու Որդիին դէմ խօսի՝ ներում պիտի գտնէ, բայց ո՛վ որ Սուրբ Հոգին հայհոյէ՝ պիտի չներուի անոր:

11 Բայց երբ ձեզ տանին ժողովարաններու, դատաւորներու եւ իշխաններու առջեւ՝ մի՛ մտահոգուիք թէ ի՛նչպէս պատասխան պիտի տաք կամ ի՛նչ պիտի ըսէք: 12 Որովհետեւ Սուրբ Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն՝ թէ ի՛նչ պէտք է խօսիք»:

Գաւառի մի՛ դիզէք. Ագառի մեծատունը

13 Ժողովուրդէն մէկը ըսաւ. «Վարդապետ, ըսէ եղբօրս որ ժառանգութիւնը բաժնէ հետս»: 14 Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեր վրայ»: 15 Եւ ըսաւ անոնց. «Տեսէ՛ք եւ զգոյշ եղէ՛ք ամէն ազահուլթեհէ, որովհետեւ մարդուս կեանքը իր ամբարած ինչքերու առատութեանէն կախուած է»:

16 Եւ անոնց առակ մը պատմեց. «Հարուստ մարդու մը արտերը առատ բերք տուին. 17 մարդը մտքէն խորհեցաւ ու ըսաւ. Ի՞նչ ընեմ, քանի որ բերքերս դնելու տեղ չունիմ: 18 Գիտեմ ընելիքս, ըսաւ, կը քակեմ շտեմարաններս եւ աւելի մեծեր կը շինեմ, եւ հոն կը ժողվեմ ցորենը եւ բոլոր բարիքներս. 19 եւ ես ինծի կ'ըսեմ. Հոգի՛ս, շատ ինչքեր ունիս երկար տարիներու համար ամբարուած. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացիր: 20 Բայց Աստուած ըսաւ անոր. Անմիտ, այս զիչեր իսկ քու հոգիդ պիտի պահանջուի քեզմէ, իսկ պատրաստածդ որո՞ւ պիտի մնայ: 21 Այսպէս է անիկա՝ որ իր անձին համար կը գանձէ, եւ Աստուծոյ առջեւ հարուստ չէ»:

10 – Այն որ յամառութեամբ կը հակառակի Սուրբ Հոգիին շնորհներուն, այնպիսին, սովորաբար, դարձի չի գար, եւ ասոր համար թողութիւն ու ներում չի գտներ:

Աւելորդ մտաեռացութիւններ. Ապաւինիլ նախախնամութեան

Մտք 6, 25-34

22 Ըսաւ աշակերտներուն. «Ասո՛ր համար է որ կ'ըսեմ ձեզի. մի՛ մտահոգուիք ձեր կեանքին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, եւ ոչ ալ ձեր մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագուիք: **23** Որովհետեւ կեանքը կերակուրէն աւելի կ'արժէ եւ մարմինը՝ հագուստէն: **24** Նայեցէ՛ք ազուաններուն, որ ո՛չ կը ցանեն եւ ո՛չ ալ կը հնձեն, ո՛չ շտեմարան ունին, ո՛չ ալ ամբարանոց, եւ սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Ո՛րչափ աւելի ձեզ՝ որ թռչուններէն աւելի լաւ էք: **25** Ո՞վ ձեզմէ կարող է ճիգ ընելով՝ կանգուն մը երկարել հասակը: **26** Արդ, եթէ ամենափոքր բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրիշ բաներու համար հոգ կ'ընէք: **27** Նայեցէ՛ք շուշանին, ի՛նչպէս կ'ածի. ո՛չ կ'աշխատի, ո՛չ կը մանէ. կ'ըսեմ ձեզի, եւ ոչ իսկ Սողոմոն իր բոլոր փառքին մէջ՝ ասոնցմէ մէկուն նման հագուեցաւ: **28** Ուրեմն, եթէ խոտը, որ այսօր դաշտն է եւ վաղը հնոց պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը զգեստաւորէ, ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատներ: **29** Եւ դուք՝ մի՛ հոգաք թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, եւ ձեր միտքը մի՛ տանջէք: **30** Որովհետեւ այդ ամէնը աշխարհի հեթանոսները կը փնտռեն: Բայց ձեր Հայրը գիտէ թէ այս ամէնը ձեզի հարկաւոր է: **31** Այլ խնդրեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը, եւ այդ ամէնը աւելիով պիտի տրուի ձեզի: **32** Մի՛ վախճար, փոքրիկ հօտ, որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ տալ ձեզի արքայութիւնը:

33 Ծախեցէ՛ք ձեր ինչքերը եւ ողորմութիւն տուէք, ձեզի համար անմաշ քսակներ եւ անսպառ գանձեր պատրաստեցէք երկինքի մէջ, ուր ո՛չ գողը կը մօտենայ ո՛չ ցեցը կը փճացնէ: **34** Որովհետեւ ուր է ձեր գանձը՝ հոն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը:

Միշտ պատրաստ եղե՛ք՝ Տէրը դիմաւորելու

Մտք 25, 1-13

35 Զեր գօտիները պինդ կապեցէք ձեր մէջքին եւ ճրագները վա-

35 – «Գօտիները պինդ կապել ձեր մէջքէն», յարատւ ու փայթեռանդ ծառայութեան, իսկ «վառուած ճրագները» յարատւ արթնութեան պատկերն են:

ռած պահեցէք: **36** նմանեցէք այն մարդոց՝ որ իրենց տիրոջ կը սպասեն՝ թէ երբ պիտի դառնայ հարսանիքէն: որպէսզի երբ գայ եւ դուռը բախէ՝ իսկոյն բանան: **37** Երանի այն ծառաներուն զորս տէրը, իր դարձին, արթուն պիտի գտնէ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ինքը գօտի պիտի կապէ մէջքին եւ սեղանի պիտի նստեցնէ զանոնք, եւ առաջ անցած՝ պիտի սպասաւորէ անոնց: **38** Եւ եթէ, երկրորդ կամ երրորդ պահուն գալով, նոյնպէս գտնէ զանոնք, երանելի են այդ ծառաները: **39** Բայց ա'ս գիտցէք: եթէ տանտէրը գիտնար թէ ո'ր ժամուն գող պիտի գայ, կը հսկէր եւ չէր թողոր որ իր տունը խորտակեն: **40** Դուք ալ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր չկարծած ժամուն՝ կու գայ Մարդու Որդին»:

Հաւատարիմ տնտեսը

41 Պետրոս հարցուց. «Տէ՛ր, մեզի՞ համար ըսիր այս առակը՝ թէ ամէնուն»: **42** Տէրը պատասխանեց. «Ո՞վ է այն հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը, զոր տէրը իր գերդաստանին վրայ կը դնէ՝ յարմար ժամուն կերակուր տալու համար անոնց: **43** Երանի՛ այն ծառային՝ զոր տէրը, իր վերադարձին, այդպէս ըրած գտնէ: **44** Ժշմարիտ կ'ըսեմ ձեզի, իր բոլոր ինչքերուն վերակացու պիտի կարգէ զինքը: **45** Բայց եթէ այդ ծառան ինքնիրեն ըսէ. Տէրս կ'ուշանայ գալու. եւ սկսի ծառաներն ու աղախինները ծեծել, ուտել, խմել ու գինովնալ, **46** այդ ծառային տէրը պիտի գայ անոր չսպասած օրը եւ չկարծած ժամուն, մէջտեղէն պիտի հանէ զայն եւ անոր ինկած մասը պիտի բաժնէ անհաւատարիմներուն հետ:

47 Իսկ այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտնալէն ետք, անոր կամքին համաձայն չէ պատրաստուած եւ չէ գործած՝ շատ ծեծ պիտի ուտէ: **48** Այն որ չի գիտեր եւ ծեծի արժանի գործ կ'ընէ՝ քիչ ծեծ պիտի ուտէ: Որուն շատ տրուած է՝ շատ պիտի պահանջուի անկէ, եւ որուն որ աւելի վստահուած՝ դե՛ռ աւելի պիտի պահանջուի անկէ:

Հուր եւ քաժանուիմ

49 Կրակ ձգելու եկայ երկրի վրայ, եւ ո'րքան կը փափաքիմ՝ որ

արդէն իսկ բորբոքած ըլլար ան: **50** Մկրտութիւն մը ունիմ մկրտուեցիք, եւ ի՛նչքան կը փուլթամ որ ան կատարուի:

51 Կը կարծէք թէ երկրիս վրայ խաղաղութիւն բերելո՞ւ եկած եմ: Ո՛չ, կ'ըսեմ ձեզի, այլ՝ բաժանում: **52** Որովհետեւ ասկէ ետք՝ տան մը մէջ ուր հինգ հոգի կան, անոնք իրարմէ բաժնուած պիտի ըլլան, երեքը՝ երկուքէն եւ երկուքը՝ երեքէն. **53** հայրը՝ որդիէն պիտի բաժնուի, եւ որդին՝ հօրմէն, մայրը՝ աղջիկէն, եւ աղջիկը՝ մօրմէն. կեսուրը՝ իր հարսէն, եւ հարսը՝ կեսուրէն»:

Փրկութեան ժամանակը

54 Ժողովուրդին ալ ըսաւ. «Երբ տեսնէք որ արեւմուտքէն ամպ կ'ելլէ, իսկոյն կ'ըսէք թէ անձրեւ պիտի գայ, եւ ա'յնպէս ալ կ'ըլլայ: **55** Եւ երբ հարաւի հովը փչէ՝ կ'ըսէք թէ խորշակ պիտի ըլլայ, եւ ա'յնպէս ալ կ'ըլլայ: **56** Կեղծաւորներ, երկինքի եւ երկրի երեւոյթները քննել գիտէք, բայց ի՞նչպէս չէք գիտեր այս ժամանակը քննել:

57 Ինչո՞ւ դուք ձեզմէ չէք ընտրեր ուղիղը: **58** Երբ թշնամիիդ հետ դատաւորին կ'երթաս՝ ջանա ճամբան անոր հետ հաշիւդ կարգադրել եւ ազատուիլ, որպէսզի չըլլայ թէ քեզ դատաւորին տանի եւ դատաւորն ալ դահիճին յանձնէ, եւ դահիճն ալ քեզ բանտ նետէ: **59** Կ'ըսեմ քեզի՝ թէ բանտէն պիտի չկարենաս ելլել մինչեւ որ չվճարես վերջին լուծան»:

Ապաշխարութեան կարեւորութիւնը

13 **1** Նոյն ժամանակ ոմանք եկան եւ պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը իրենց զոհե-

50 – Յիսուս, իր չարչարանքներու մկրտութիւնը վերջացնելէ ետքն է որ Սուրբ Հոգիին կրակովը պիտի մաքրէ ու սրբացնէ մարդիկը:

56 – Հրեաները Յովիաննէսի փարոգութենէն եւ Յիսուսի գործերէն կարող էին հասկնալ թէ հասած է Մեսիայի գալստեան ժամանակը:

րուն հետ խառնեց Պիղատոս: **2** Յիսուս պատասխանեց. «Կը կարծէ՞ք որ այդ Գալիլեացիները միւս բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի բաներ կրեցին: **3** Ո՛չ, կ'ըսեմ ձեզի, բայց եթէ չապաշխարէք՝ ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: **4** Կամ այն տասնութը հոգիները որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ մեռցուց. կը կարծէք որ անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Շրուսադէմի բոլոր բնակիչները: **5** Ո՛չ, կ'ըսեմ ձեզի. բայց եթէ չապաշխարէք՝ ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք»:

Անպտուղ քօքնիմ

6 Այս առակն ալ պատմեց. «Մարդ մը իր այգիին մէջ թփերի մը տնկած էր, եւ եկաւ պտուղ քաղելու անկէ ու չգտաւ: **7** Ըսաւ այգեգործին. Ահա՛ երեք տարի է որ կու գամ այդ թփերէն պտուղ քաղելու եւ չեմ գտներ. արդ, կտրէ՛ ատիկա, ինչո՞ւ երկիրը խափանէ: **8** «Տէ՛ր, պատասխանեց անիկա, այս տարի ալ թո՛ղ, մինչեւ որ անոր չուրջը փորեմ ու աղբ դնեմ. **9** թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կը կտրես»:

Կարկամած կնոջ բուժումը

10 Շաբաթ օր մը Յիսուս ժողովարանի մը մէջ կ'ուսուցանէր. **11** եւ հոն կին մը կար որ տասնութը տարիէ ի վեր դեւի մը հիւանդութենէն բռնուած էր եւ կարկամած էր, ու չէր կրնար ամենեւին վեր նայիլ: **12** Յիսուս, տեսնելով զանիկա՝ մօտը կանչեց զայն եւ ըսաւ. «Ո՛վ կին, ազատուած ես հիւանդութենէդ»: **13** Եւ հազիւ ձեռքը վրան դրաւ՝ իսկոյն շտկուեցաւ ու փառք կու տար Աստուծոյ:

14 Այն ատեն, ժողովարանին պետը բարկացաւ թէ ինչո՞ւ Յիսուս շաբաթ օրով բժշկեց. եւ ըսաւ ժողովուրդին. «Աչխատանքի

Գլ. 13, 2 – Հրեաները դժբախտութիւնները Աստուծոյ պատիժը կը նկատէին (Հմմտ. Յովհ 9, 2):

6 – Այգիի քօքնիմ իսրայէլեան ժողովուրդին պատկերն է:

վեց օր կայ, այդ օրերո՛ւն եկէք եւ բժշկուեցէք, ո՛չ թէ շաբաթ օրը»:

15 «Կեղծաւորնե՛ր, ատասխանեց Տէրը, ձեզմէ իւրաքանչիւրը շաբաթ օրով իր եզը կամ էջը մսուրէն չի՞ քակեր ու չի՞ տանիր ջուր տալու: **16** Իսկ Աբրահամի այս դուստրը, զոր սատանան ահաւասիկ տասնութը տարիէ ի վեր կապած էր, պէտք չէ՞ր շաբաթ օրով այս կապանքներէն արձակուիլ»: **17** Եւ մինչ այսպէս կը խօսէր, բոլոր հակառակորդները կ'ամէնային եւ ամբողջ ժողովուրդը կ'ուրախանար այն ամէն փառաւոր գործերուն համար զոր ան կը կատարէր:

Մաճանիսի հատիկը եւ խմորը

Մտք 13, 31-32. Մրկ 4, 30-32

18 Եւ կ'ըսէր. «Ի՞նչ բանի կը նմանի Աստուծոյ արքայութիւնը, կամ ի՞նչ բանի նմանցնեմ: **19** Նման է մանանեխի հատիկին, զոր մարդ մը, առնելով զայն՝ իր պարտէզին մէջ կը ցանէ. ան կ'աճի եւ մեծ ծառ կը դառնայ, եւ երկինքի թռչունները անոր ճիւղերուն վրայ բոյն կը դնեն»:

20 Եւ դարձեալ ըսաւ. «Ի՞նչ բանի նմանցնեմ Աստուծոյ արքայութիւնը: **21** Նման է թթխմորին, զոր կին մը, առնելով զայն՝ կը խառնէ երեք գրիւ ալիւրի մէջ, մինչեւ որ բոլորը խմորուի»:

Նեղ դուռը

22 Յիսուս քաղաքներն ու գիւղերը կը շրջէր եւ կը սորվեցնէր, մինչ դէպի Երուսաղէմ կ'ուղղուէր: **23** Մէկը հարցուց անոր. «Տէ՛ր, արդեօք քի՞չ են անոնք որ պիտի փրկուին»: **24** Յիսուս պատասխանեց. «Դուք ջանացէք նեղ դռնէն մտնել. կ'ըսեմ ձեզի թէ չատեր պիտի ուզեն մտնել եւ պիտի չկարենան»:

25 Անգամ մը որ տանտէրը մտնէ եւ դուռը փակէ, դուք, դուրսը կեցած՝ պիտի սկսիք դուռը բախել եւ ըսել. Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզի. եւ անիկա պիտի պատասխանէ եւ ըսէ ձեզի. Չե՛մ ճանչնար ձեզ, ուսկի՞ց էք: **26** Այն ատեն պիտի սկսիք ըսել. Քու առջեւդ կերանք ու խմեցինք, եւ դուն մեր հրապարակներուն վրայ սորվեցուցիր:

27 Բայց ան պիտի պատասխանէ. «Կ'ըսե՛մ ձեզի, չե՛մ գիտեր ուսկից էք դուք. հեռացէ՛ք ինծմէ ամէնիդ, անիրա՛ւ մշակներ»:

28 Եւ հոն տեղի պիտի ունենայ լաց եւ ակռաներու կրճտում, երբ տեսնէք Աբրահամը, Իսահակը, Յակոբը եւ բոլոր մարգարէները՝ Աստուծոյ արքայութեան մէջ, եւ դուք՝ դուրսը հանուած:

29 Եւ պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն, եւ Աստուծոյ արքայութեան մէջ պիտի բազմին: **30** Եւ ահա վերջիններ կան՝ որ առաջին պիտի ըլլան, եւ առաջիններ՝ որ վերջին պիտի ըլլան:

Հերովդէս Յիսուսի դէմ

31 Նոյն օրը քանի մը փարիսեցիներ եկան եւ ըսին. «Ելի՛ր գնա՛ ասկէ, որովհետեւ Հերովդէս կ'ուզէ սպաննել քեզ»: **32** Յիսուս պատասխանեց. «Գացէ՛ք եւ ըսէ՛ք այդ աղուէսին, թէ՛ ահա դեւեր կը հանեմ եւ բժշկութիւն կը կատարեմ այսօր եւ վաղը: Եւ երրորդ օրը վախճանիս կը հասնիմ»: **33** Բայց հարկ է որ այսօր, վաղը եւ միւս օրը երթամ, որովհետեւ կարելի է որ մարգարէ մը Երուսաղէմէն դուրս մեռնի»:

Ողբ՝ Երուսաղէմի վրայ

Մտք 23, 37–39

34 «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, դուն որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր քեզի զրկուածները, քանի՛ քանի անգամ ուզեցի հաւաքել զաւակներդ, ինչպէս հաւը կը հաւաքէ իր ձագերը թեւերուն տակ, բայց դուք չուզեցիք: **35** Ահա ձեր տունը աւերակ պիտի մնայ: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ՛ այլեւս պիտի չտեսնէք զիս, մինչեւ այն օրը՝ երբ ըսէք. Օրհնեա՛լ է այն որ Տիրոջ անունով կու գայ»:

30 – Հրեաներէն իբր «վերջիններ» համարուած հեթանոսներէն շատերը պիտի գան, եւ Իսրայէլի որդիներուն սահմանուած տեղը իբր առաջիններ պիտի գրաւեն. մինչ զանոնք արհամարհող Իսրայէլացիները Աստուծոյ արքայութենէն պիտի արտաքսուին:

Ջրգողին բուժումը

14 ¹ Երբ շաբաթ օր մը փարիսեցիներու գլխաւորներէն մէկուն տունը մտաւ ճաշ ուտելու՝ անոնք ուշադրութեամբ կը դիտէին զինքը: ² Եւ ահա ջրգողութիւնէ բռնուած մարդ մը իր առջեւ կեցած էր: ³ Յիսուս, խօսքը օրէնսագէտներուն եւ փարիսեցիներուն ուղղելով՝ ըսաւ. «Օրինաւոր է շաբաթ օրը բժշկել՝ թէ ոչ»: ⁴ Բայց անոնք լռեցին: Եւ ան, բռնելով հիւանդը, բժշկեց զայն եւ ճամբեց: ⁵ Եւ ըսաւ անոնց. «Եթէ ձեզմէ մէկուն զաւակը կամ եզը ջրհոր իյնայ, անմիջապէս դուրս չի՞ հաներ զայն, նոյնիսկ շաբաթ օրով»: ⁶ Եւ անոնք չկրցան պատասխան տալ ասոր:

Խոնարհութեան դաս

⁷ Առակ մըն ալ պատմեց հրաւիրեալներուն, տեսնելով թէ ինչպէս առաջին տեղը կ'ընտրէին անոնք, եւ ըսաւ անոնց. ⁸ «Երբ մէկը քեզ հարսանիքի կամ կոչունքի հրաւիրէ՝ առաջին տեղը մի' նստիր. գուցէ քեզմէ աւելի կարեւոր մէկը հրաւիրուած ըլլայ, ⁹ եւ այն որ քեզ ու զինքը հրաւիրեց՝ գայ եւ ըսէ քեզի. Տե՛ղ տուր ասոր: Այն ատեն պիտի ստիպուիս ամօթով վերջին տեղը նստիլ: ¹⁰ Այլ երբ հրաւիրուիս՝ գնա, վերջին տեղը նստէ, որպէսզի երբ քեզ հրաւիրողը գայ՝ ըսէ քեզի. Բարեկամ, վեր հրամմէ: Այն ատեն սեղանակիցներուդ առջեւ պիտի փառաւորուիս: ¹¹ Որովհետեւ ով որ ինքզինքը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

Հրաւիրեալներու ընտրութիւնը

12 Կոչունքի հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք տաս՝

Գլ. 14, 1 – Գրաբար թարգմանութեան մէջ գործածուած սպասել բայը, «դիտել» կամ «լրտեսել» նշանակութեամբ պէտք է հասկնալ:

12 – «Մի՛ հրաւիրեր ո՛չ քու բարեկամներդ» եւն.: Երբ լեզուի ոգիին համաձայն, այս նախադասութեան իմաստն է՝ Մի՛ հրաւիրեր «միայն» քու բարեկամներդ... հապա «նաեւ» ազգատները (Հմմտ. Մատթ. 9, 13):

մի՛հ հրաւիրեր բարեկամներդ, ո՛չ եղբայրներդ, ո՛չ ազգականներդ, ո՛չ ալ հարուստ դրացիներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէն քեզ հրաւիրեն եւ քեզի հատուցում ըլլայ: **13** Այլ երբ ճաշկերոյթ տաս՝ կանչէ՛ աղքատները, խեղճերը, կաղերը եւ կոյրերը: **14** Եւ երջանիկ պիտի ըլլաս. որովհետեւ անոնք փոխարէն հատուցանելիք չունին, եւ քեզի փոխարէն պիտի հատուցուի արդարներու յարուստեան օրը»:

Հրաւեր մերժող հրաւիրեալները

15 Սեղանակիցներէն մէկը, այս խօսքը լսելով՝ ըսաւ. «Երանի անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»: **16** Յիսուս պատասխանեց. «Մարդ մը մեծ ընթրիք պատրաստեց եւ շատեր հրաւիրեց: **17** Ընթրիքի ժամուն, իր սպասաւորը դրկեց հրաւիրեալներուն՝ ըսելու. «Եկէ՛ք, ահա ամէն ինչ պատրաստ է: **18** Բայց ամէնքն ալ, մէկը միւսին հետեւէն, սկսան հրաժարիլ: Առաջինն ըսաւ. Ագարակ գնեցի եւ պէտք է երթամ տեսնեմ գայն. կ'աղաչեմ հրաժարած համարէ գիս: **19** Միւսը ըսաւ. Հինգ լուծ եզ գնեցի, եւ պիտի երթամ գանոնք փորձելու. կը խնդրեմ, հրաժարած նկատէ գիս: **20** Ուրիշ մըն ալ ըսաւ. նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ:

21 Եւ սպասաւորը, դառնալով՝ պատմեց իր տիրոջ այս բոլորը: Այն ատեն տանտէրը, բարկացած՝ ըսաւ սպասաւորին. Անմիջապէս գնա՛ քաղաքին հրապարակները եւ փողոցները, եւ հոս բեր մտցուր աղքատները, խեղճերը, կաղերն ու կոյրերը: **22** Սպասաւորը ըսաւ. Տէ՛ր, ինչ որ հրամայեցիր՝ կատարուեցաւ, եւ դեռ տեղ կայ: **23** Տէ՛րը ըսաւ սպասաւորին. Գնա՛՝ ճամբաներն ու ցանկապատները, եւ ստիպէ՛ որ մտնեն, որպէսզի տունս լեցուի: **24** Կ'ըսեմ ձեզի, որ այդ հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի ճաշակէ»:

24 – Առաջին իմաստը սա է. Իսրայէլացի հարուստներն ու մեծերը կը մերժեն ընդունիլ Մեսիայի թագաւորութեան հրաւերը. մինչդեռ ժողովուրդին հասարակ ու ռաբիի դասակարգը, ինչպէս նաեւ Իսրայէլացիներէ արհամարհուած հեթանոսները կը հետեւին Քրիստոսի կոչին:

Հրաժարիլ ամեն բանէ եւ Քրիստոսի հետեւիլ

25 Մինչ մեծ բազմութիւն մը կ'երթար անոր ետեւէն, դարձաւ եւ ըսաւ անոնց. **26** «Եթէ մէկը կ'ուզէ ինծի գալ եւ չ'ատեր իր հայրն ու մայրը, կիներն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, նա' եւ իր անձը՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ: **27** Եւ ով որ չ'առնէր իր խաչն ու ետեւէս չի գար՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ:

28 Երբ ձեզմէ մէկը ուզէ աշտարակ մը շինել՝ նախ չի՞ նստիր ու ծախքը չի՞ հաշուեր, տեսնելու համար թէ արդեօք պէտք եղած միջոցը ունի՞՞ գլուխ հանելու համար: **29** Որպէսզի չըլլայ թէ, հիմը դնելէն ետք, չկարենալով աւարտել՝ բոլոր տեսնողները սկսին գիւնքը ծաղրել ու ըսել. **30** այս մարդը սկսաւ շինել եւ չկրցաւ աւարտել: **31** Կամ ո՞վ է այն թագաւորը, որ կ'երթայ պատերազմ ընելու ուրիշ թագաւորի մը դէմ, եւ նախ չի նստիր ու խորհիր թէ կրնա՞յ տասը հազար հոգիով դիմադրել անոր որ քսան հազար հոգիով վրան կու գայ: **32** Հակառակ պարագային, երբ միւսը դեռ հեռուն է՝ պատուիրակութիւն դրկելով խաղաղութիւն կը խնդրէ: **33** Արդ, այսպէս ձեզմէ ամէն ոք որ չի հրաժարիր իր բոլոր ինչքերէն, չի կրնար իմ աշակերտս ըլլալ:

34 Լա՛ւ է աղը, բայց եթէ աղը իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի համեմուրէ: **35** Օգտակար չէ ո՛չ հողին, ո՛չ ալ աղբին, այլ՝ դուրս կը նետուի: Ո՞վ որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

Մոլորած ոչխարը

Մտք. 18, 12-14

15 **1** Բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները կը մօտենային անոր՝ մտիկ ընելու համար: **2** Իսկ փարիսեցիներն ու

26 – «Ատի» բառը հոս գործածուած է «նուազ սիրել» իմաստով, ինչպէս մեր Տէրն ինքնին կը բացատրէ գայն (Մատթ. 10, 37):

33 – Այն որ հաստատ մտադրած է հետեւիլ Քրիստոսի եւ աշակերտիլ անոր, պէտք է նախապէս հասուն խորհուրդով կշռէ, թէ արդեօք ատոր համար պահանջուած բարոյական ուժը կը զգա՞յ իր մէջ:

դպիրները կը տրտնջէին եւ կ'ըսէին. «Այս մարդը ինչո՞ւ մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կ'ուտէ»: **3** Այն ատեն այս առակը պատմեց անոնց. **4** «Ո՞վ է ձեզմէ այն մարդը որ, երբ իր ունեցած հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ՝ չի թողուր իննսունեւինը անապատին մէջ եւ չ'երթար կորսուածը փնտռելու՝ մինչեւ որ գտնէ զայն: **5** Եւ երբ գտնէ՝ ուրախութեամբ կը դնէ զայն ուսերուն վրայ, **6** եւ տուն հասնելով՝ կը կանչէ բարեկամներն ու զբարեցիները եւ կ'ըսէ անոնց. Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսուած ոչխարս: **7** Կ'ըսեմ ձեզի, ա՛յսպէս է ուրախութիւնը երկինքի մէջ մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ, քան իննսունեւինը արդարներուն համար՝ որ ապաշխարութեան պէտք չունին»:

Կորսուած դրամը

8 Կամ ո՞վ է այն կինը, որ երբ իր ունեցած տասը դրամներէն մէկը կորսնցնէ՝ ճրագը չի վառեր եւ տունը չ'աւելբ ու խնամքով չի փնտռեր՝ մինչեւ որ գտնէ զայն: **9** Եւ երբ գտնէ՝ կը կանչէ բարեկամ ուսերն ու զբարեցուհիները եւ կ'ըսէ. Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսնցուցած դրամս: **10** Կ'ըսեմ ձեզի, ա՛յսպէս պիտի ուրախանան Աստուծոյ հրեշտակները մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ»:

Անառակ որդիք

11 Եւ ըսաւ. «Մարդ մը երկու որդի ունէր: Անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. **12** Հա՛յր, տո՛ւր ստացուածքներուդ այն բաժինը որ ինծի կ'իյնայ. եւ հայրը բաժնեց անոնց իր ինքերը: **13** Քիչ օրեր ետք, կրտսեր որդին, ամէն բան ժողվելով՝ հեռու աշխարհ գնաց եւ հոն վատնեց իր ունեցածները, որովհետեւ անառակութեամբ կ'ապրէր:

14 Երբ ամէն ինչ սպառեց՝ սաստիկ սով տիրեց այդ երկրին մէջ, եւ ինքը սկսաւ աղքատնալ: **15** Եւ գնաց մտաւ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով, որ զինքը իր ագարակը դրկեց՝ խոզեր արածելու: **16** Կը փափաքէր փորը կշտացնել խոզերուն կերած եղ-

ջիւրներով, բայց ան ալ տուող չկար: **17** Այն ատեն ինքնիրեն գալով՝ ըսաւ. Ո՛րքան վարձկաններ կան հօրս տունը որ առատ հաց ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: **18** Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. Հա՛յր, մեղանչեցի երկինքի եւ քու առջեւդ. **19** ալ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. համարէ զիս իբր քու վարձկաններէդ մէկը: **20** Եւ ելաւ, հօրը քով դարձաւ:

Եւ մինչ դեռ հեռուն էր, հայրը տեսաւ զինքը, գուլթը շարժեցաւ, ելաւ, անոր ընդառաջ գնաց, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց զինքը: **21** Որդին ըսաւ. Հա՛յր, մեղանչեցի՝ երկինքի եւ քու առջեւդ, այլեւս արժանի չեմ որդիդ կոչուելու: **22** Հայրը իր ծառաներուն ըսաւ. Անմիջապէս բերէ՛ք իր նախկին պատմուճանը եւ հագուեցուցէ՛ք անոր, մատանին անցուցէ՛ք մատը եւ կօշիկները ոտքը, **23** բերէ՛ք պարարտ եզը, մորթեցէ՛ք, ուտե՛նք եւ ուրախանանք: **24** Որովհետեւ իմ այս որդիս մեռած էր եւ ողջացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ. եւ սկսան ուրախանալ: **25** Իսկ երէց որդին՝ ագարակն էր. վերադարձին, երբ տան մօտեցաւ, լսեց երգերու եւ պարերու ձայնը, **26** եւ կանչելով ծառաներէն մէկը՝ հարցուց թէ ի՞նչ կայ: **27** Անիկա պատասխանեց. եղբայրդ դարձաւ ու հայրդ պարարտ եզը մորթեց, որովհետեւ ողջ առողջ գտաւ զայն: **28** Ան բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. իսկ հայրը, դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: **29** Որդին ըսաւ. Այս քանի՞ տարի է որ քեզի կը ծառայեմ եւ երբեք հրամաններէդ դուրս ելած չեմ. ո՛ւր մը անգամ չտուիր ինծի որ բարեկամներուս հետ ուրախանայի»: **30** Բայց երբ եկաւ քու այդ որդիդ, որ հարստութիւնդ վատնեց պոռնիկներու հետ, պարարտ եզը մորթեցիր անոր համար:

31 Հայրը ըսաւ. Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես եւ ի՛նչ որ ունիմ՝ քուկդ է: **32** Բայց պէ՛տք էր որ խնճոյք ընէինք եւ ուրախանայինք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր եւ ողջացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

Անհաւատարիմ տնտեսը

16 ¹ Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Հարուստ մարդ մը կար՝ որ տնտես մը ունէր որուն վրայ ամբաստանութիւն ըրին, իբրեւ թէ իր ինչքերը կը վատնէր: ² Կանչեց զայն եւ ըսաւ. Ի՞նչ է այս որ կը լսեմ քու վրադ. տնտեսութեանդ հաշիւը տուր, որովհետեւ չես կրնար այլեւս տնտես ըլլալ: ³ Տնտեսը մտքէն ըսաւ. հիմա ի՞նչ ընեմ, քանի որ տէրս տնտեսութիւնը ձեռքէս կ'առնէ. աշխատիլ՝ չեմ կրնար, մոլորալ՝ կ'ամէնամ: ⁴ Գիտեմ ընելիքս, որ երբ տնտեսութենէս ելլեմ՝ զիս իրենց տունը ընդունին:

⁵ Եւ մի առ մի կանչելով իր տիրոջ պարտապանները՝ հարցուց առաջինին. Դուն ո՞րքան պարտք ունիս տիրոջս: ⁶ Հարիւր մար ձէթ, պատասխանեց: Ա՛ռ պարտաթուղթդ, ըսաւ անոր, նստէ՛ եւ շուտով գրէ՛ յիսուն: ⁷ Յետոյ հարցուց միւսին. Դուն ո՞րքան պարտք ունիս: Ան ալ պատասխանեց. Հարիւր քուց տորեն: Ա՛ռ պարտաթուղթդ, ըսաւ տնտեսը, եւ նստէ ու գրէ՛ ութսուն:

⁸ Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսը, որովհետեւ իմաստութեամբ գործեց. արդարեւ այս աշխարհի որդիները, իրենց տեսակին մէջ, աւելի իմաստուն են քան լոյսի որդիները:

⁹ Ես ալ կ'ըսեմ ձեզի. դուք ձեզի բարեկամներ ըրէք անիրաւ

Գլ. 16, 9 – Հոս խնդիրը նիւթական հարստութեան մասին է, գոր Բրիստոս «անիրաւ մամոնայ», այսինքն՝ երկրաւոր (անցաւոր ու ոչինչ) հարստութիւն կ'անուանէ: Եւ այս՝ ո՛չ միայն անոր համար որ նոյնին ստացումը յաճախ կապուած է անիրաւութեան, այլ նաեւ, որովհետեւ անոր գործածութիւնը շատ անգամ մեղքի ու անիրաւութեան պատճառ կ'ըլլայ: Անիրաւ մամոնայ անունն ինքնին բաւ է արդէն զգացնել տալու Բրիստոսի աշակերտներուն, որ երկրաւոր հարստութեանց հանդէպ խոհեմ ու զգուշաւոր ըլլան: Երկրաւոր հարստութիւններն այնպէս մը գործածուելու են, որ անոնք, յաւիտեանական կեանքին մէջ, արդիւնաւոր ըլլան զանոնք ստացողին համար, եւ այս կ'ըլլայ, եթէ ան, ատոնց միջոցով, երկինքի մէջ շանի իրեն բարեկամներ – աղքատներ ու չճաւորներ, եւ ատոնց փոխարէն՝ Բրիստոսը, կամ Եկեղեցին ու Սուրբերը: Ասո՛նք են ահա, որ յետոյ, երբ պակսի հարստութիւնը, («յորժամ պակասիցի այն») – եւ այս ամէն մարդու պիտի պատահի մահուան ատեն – անոնք պիտի օգնեն անոր՝ ընդուն-

մամոնայով, որպէսզի երբ ան պակսի՝ ձեզ յաւիտենական յարկերուն մէջ ընդունին: **10** Ո՛վ որ քիչին մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ է, եւ ո՛վ որ քիչին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ է: **11** Ուստի եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չեղաք՝ ո՞վ պիտի վստահի ձեզի ճշմարիտը: **12** Եւ եթէ օտարի ինչքերուն հաւատարիմ չեղաք, ձերինը ո՞վ պիտի վստահի ձեզի:

13 Ո՛չ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել. որովհետեւ կա՛մ մէկը պիտի առէ ու միւսը սիրէ, կա՛մ մէկը պիտի յարգէ ու միւսը արհամարէ: **25**՝ք կրնար Աստուծոյ ծառայել եւ մամոնային»:

Փարիսեցիներուն կեղծաւորութիւնը

14 Փարիսեցիներն ալ, որ արծաթասէր էին, այս բոլորը լսելով՝ կը ծաղրէին զինքը: **15** Յիսուս ըսաւ անոնց. «Դուք ձեզ կ'արդարացնէք մարդոց առջեւ, սակայն Աստուած զիտէ ձեր սիրտը. որովհետեւ ով որ բարձր է մարդոց առջեւ՝ պիղծ է Աստուծոյ առջեւ:

16 Օրէնքն ու մարգարէները՝ մինչեւ Յովհաննէս, անկէ ետք՝ Աստուծոյ արքայութիւնը կը քարոզուի եւ ամէն ոք կը ջանայ բռնութեամբ ներս մտնել:

17 Աւելի դիւրին է որ երկինքն ու երկիրը անցնին՝ քան թէ Օրէնքէն նշանախեց մը իյնայ:

18 Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ՝ կը չնայ, եւ ով որ արձակուածը առնէ՝ կը չնայ:

ւելու յաւիտենական բնակարանները: Քրիստոսի խորհրդաւոր այս խօսքը ապացոյց մըն է բարի գործերու վարձատրութեան, ինչպէս նաեւ անուղղակի փաստ մը՝ Սուրբերու բարեխօսութեան:

16 – Փրկիչը իր այս խօսքով կը թուի թէ յանդիմանել կ'ուզէ փարիսեցիներու ամբարտաւան վերապահութիւնը, նոյնին հակադրելով փոյթն ու եռանդը բարեացակամ հոգիներու, որոնք կը վազէին, կու գային ըլլա՛յ Կարապետի (Մտթ. 3, 15), ըլլա՛յ նոյնինքն Մեսիայի (Ղուկ. 12, 1, Յովհ. 2, 19) քարոզներուն ունկնդրելու:

Ամփոփում հարուստը եւ աղքատ Ղազարոսը

19 Հարուստ մը կար, որ բեհեզ ու ծիրանի կը հագուէր եւ ամէն օր ճոխ սեղաններ կը սարքէր: 20 Աղքատ մըն ալ կար, Ղազարոս անուանով, որ վէրքերով ծածկուած՝ անոր դրան առջեւ կը պառկէր: 21 ան կը փափաքէր կշտանալ հարուստին սեղանէն ինկած փշրանքներով, եւ շուներն ալ կու գային ու կը լցէին անոր վէրքերը: 22 Եւ պատահեցաւ որ աղքատը մեռաւ, եւ հրեշտակները տարին զինքը Աբրահամի գիրկը:

23 Մեծատունն ալ մեռաւ, եւ թաղուեցաւ. դժոխքէն, ուր տանջանքներու մէջ էր, աչքերը վեր բարձրացուց, հեռուէն տեսաւ Աբրահամ եւ Ղազարոսն ալ, որ անոր գիրկը հանգչած էր: 24 Եւ աղաչեց. Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ Ղազարոսը ղրկէ, որ պէսզի մատին ծայրը ջուրին մէջ թաթխէ եւ լեզուս զովացնէ, որովհետեւ ծարաւէս կ'այրիմ այս կրակին մէջ: 25 Որդի՛ս, պատասխանեց Աբրահամ, յիշէ՛ որ երբ ողջ էիր, բարիքներ ունեցար, իսկ Ղազարոս՝ չարչարանքներ. հիմա ան կը մխիթարուի հոս եւ դուն հոն ծարաւէ կը տառապիս: 26 Եւ այս բոլորէն զատ՝ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ. այնպէս որ, եթէ մէկը ուզէ ասկէ ձեր կողմը անցնիլ՝ չի կրնար, եւ ո՛չ ալ ազկից մէկը կրնայ մեր կողմը անցնիլ:

27 Միւսը ըսաւ. կ'աղաչեմ, հայր, հօրս տունը ղրկէ զինքը: 28 որովհետեւ այնտեղ հինգ եղբայր ունիմ, թող տայ իր վկայութիւնը անոնց՝ որպէսզի իրենք ալ չգան այս տանջանքներու վայրը: 29 Աբրահամ պատասխանեց. անոնք Մովսէսն ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն: 30 Ո՛չ, հայր Աբրահամ, ըսաւ միւսը, գոնէ մեռեալներէն մէկը թող երթայ անոնց մօտ, եւ այն ատեն կ'ապաշխարեն: 31 Եթէ Մովսէսին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, ըսաւ Աբրահամ, նոյնիսկ եթէ մեռեալներէն մէկը յարութիւն առնէ՝ պիտի չհաւատան»:

Գայթակորթիւն եւ Եղբայրսիրութիւն

Մտք 18, 6-7

17 ¹ Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վա՛յ անոր՝ որուն ձեռքով կու գան: ² Աւելի լաւ էր անոր, որ վիզէն երկանաքար մը կախած՝ ծով նետուէր, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: ³ Զգո՛յշ եղէք:

եթէ եղբայրդ մեղանչէ՝ յանդիմանէ՛ զինքը, եւ եթէ զղջայ՝ ներէ՛ անոր: ⁴ Եթէ օրը եօթն անգամ մեղանչէ քեզի դէմ եւ եօթն անգամ դառնայ քեզի եւ ըսէ՝ կը զղջամ, ներէ՛ անոր»:

Հաւատքի ոյժը

⁵ Առաքեալները ըսին Տիրոջ. «Հաւատքը աւելցուր մեր մէջ»: ⁶ Տէրը պատասխանեց. «Եթէ մանանեխի հատիկին հափ հաւատք ունենաք եւ այս թթենիին ըսէք. Արմատախի՛ւ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ, պիտի հնազանդի ձեզի: ⁷ Ո՞վ է ձեզմէ այն մարդը որ հողագործ կամ հովիւ ծառայ մը ունի, եւ երբ ինքը ագարակէն դառնայ՝ ըսէ անոր. շուտով եկուր սեղան նստէ: ⁸ Ընդհակառակը, անոր պիտի չըսէ՞. ընթրիքս պատրաստէ, եւ գօտի կապած՝ ինծի ծառայէ, մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, յետոյ դուն ալ կ'ուտես ու կը խմես: ⁹ Միթէ անիկա շնորհակա՞լ պիտի ըլլայ այդ ծառային, որ իր բոլոր հրամանները կատարած է: ¹⁰ Նոյնպէս ալ դուք, երբ կատարէք ձեզի տրուած բոլոր հրամանները, ըսէք. անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտական էինք ընելու՝ ըրինք»:

Տասը քորոտներու բուժումը

¹¹ Երբ Երուսաղէմ կ'երթար, Սամարիայի եւ Գալիլեայի սահմաններէն անցաւ: ¹² Եւ մինչ գիւղ մը կը մտնէր՝ իրեն հանդիպեցան տասը բորոտներ, որոնք հեռուն կեցած՝ իրենց ձայնը բարձրացնելով ըսին. ¹³ «Յիսու՛ս վարդապետ, ողորմէ՛ մեզի»: ¹⁴ Երբ տեսաւ զանոնք՝ ըսաւ անոնց. «Գացէք դուք ձեզ քահանաներուն ցոյց տուէք»: Եւ մինչդեռ կ'երթային՝ արդէն իսկ մաքրը-

ւեցան: **15** Անոնցմէ մէկը, տեսնելով թէ բժշկուեցաւ, դարձաւ, բարձրաձայն փառք տուաւ Աստուծոյ, **16** եւ Յիսուսի ոտքն իյնալով երեսն ի վար, շնորհակալ եղաւ. եւ անիկա Սամարացի էր: **17** Յիսուս հարցուց. «Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան. ո՞րը ես միւս ինը բորոտները, **18** որոնցմէ մէկն ալ չդարձաւ Աստուծոյ փառք տալու, բացի այս օտարազգիէն միայն»: **19** Եւ ըսաւ անոր. «Ելի՛ր գնա՛, որովհետեւ հաւատքդ քեզ փրկեց»:

Աստուծոյ թագաւորութեան գալուստը

20 Երբ փարիսեցիները հարցուցին իրեն, թէ ե՞րբ պիտի գայ Աստուծոյ թագաւորութիւնը, պատասխանեց. «Աստուծոյ թագաւորութիւնը արտաքին երեւոյթով չի գար: **21** Եւ պիտի չըսեն՝ թէ ահաւասիկ հոս է կամ հոն, որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է»:

22 Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Օրեր պիտի գան, երբ պիտի փափաքիք տեսնել Մարդու Որդիին օրերէն մէկը ու պիտի չտեսնէք: **23** Եւ ձեզի պիտի ըսեն՝ թէ ահաւասիկ հոս է կամ հոն. անոնց ետեւէն մի՛ երթաք: **24** Որովհետեւ, ինչպէս որ փայլակը երկինքէն փայլատակելով, մէկ ծայրէն միւս ծայրը կը լուսաւորէ, այնպէս պիտի ըլլայ Մարդու Որդիին՝ երբ հասնի անոր օրը: **25** Բայց նախ պէտք է որ ան շատ չարչարուի եւ անարգուի այս սերունդէն:

26 Եւ ինչպէս որ եղաւ Նոյի օրերուն, նոյնպէս պիտի ըլլայ Մարդու Որդիի օրերուն: **27** Կ'ուտէին ու կը խմէին, կին կ'առնէին եւ հարս կ'երթային, մինչեւ այն օրը երբ Նոյ մտաւ տապանը եւ ջրհեղեղը եկաւ ու ամէնքը ոչնչացուց: **28** Նոյնպէս ալ պատահեցաւ Ղովտի օրերուն, երբ կ'ուտէին ու կը խմէին, կը գնէին ու կը ծախէին, կը տնկէին ու կը շինէին. **29** բայց, այն օրը որ Ղովտ Սողոմէն ելաւ՝

Գլ. 17, 21 – Հրեաները այնպէս կը կարծէին, թէ Աստուծոյ թագաւորութիւնը ժողովուրդին վրայ մեծ տպաւորութիւն ու ազդեցութիւն առաջ բերող արտաբնականներով ու մեծաշուք փառաւորութեամբ երեւան պիտի գայ երկրի վրայ: Այս թիր կարծիքին դէմ է որ կը շեշտէ Փրկիչը, թէ Աստուծոյ թագաւորութիւնը ներքին սեփականութիւն մը, հոգեւոր բարիք մըն է:

երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց եւ ամէնքը մեռցուց: **30** Այդպէ՛ս պիտի ըլլայ նաեւ այն օրը՝ երբ Մարդու Որդին պիտի յայտնուի:

31 Այն օրը, ով որ տանիքն է եւ իր կարասիները տունն են, թող չիջնէ զանոնք առնելու համար. եւ ով որ դաշտը կը գտնուի՝ նոյնպէս ետ թող չդառնայ: **32** Յիշեցէ՛ք Ղովտի կիներ: **33** Ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ՝ պիտի փրկէ: **34** Կ'ըսեմ ձեզի, այն գիշերը եթէ երկու հոգի մէկ անկողինի մէջ ըլլան՝ մէկը պիտի առնուի եւ միւսը թողուի: **35** Եւ եթէ երկու կին միասին աղան, մէկը պիտի առնուի՝ միւսը պիտի թողուի: **36** Եւ եթէ երկու հոգի դաշտը գտնուին՝ մէկը պիտի առնուի եւ միւսը թողուի: Այն ատեն հարցուցին անոր եւ ըսին. «Ո՛ր, Տէ՛ր»:
37 Ան պատասխանեց. «Ուր մարմին կայ, հոն պիտի հաւաքուին արծիւները»:

Անիրաւ դատաւորը եւ այրին

18 **1** Առակ մըն ալ պատմեց անոնց՝ ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել եւ չձանձրանալ: Ըսաւ. **2** «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծոյն չէր վախնար եւ մարդոցմէ չէր ամչնար: **3** Նոյն քաղաքին մէջ այրի մըն ալ կար, որ անոր մօտ կ'երթար ու կ'ըսէր. Դա՛տա տես հակառակորդիս դէմ: **4** Դատաւորը երկար ատեն չուզեց. բայց յետոյ ինքնիրեն ըսաւ. թէեւ Աստուծոյն չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, **5** բայց գոնէ այրիին պատճառած յոգնութեան համար՝ տեսնեմ սա դատը, որպէսզի շարունակ չգայ ու զիս չձանձրացնէ»:

33 – Այն որ երկրաւոր կեանքը ամէն բանէ վեր կը դասէ եւ ամէն գնով զայն պահպանել կ'ուզէ՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ասոր հակառակ, այն որ իր երկրաւոր կեանքը Աստուծոյ կը նուիրէ ու կը գտնէ՝ ատոր փոխարէն պիտի շահի յաւիտեանակալ կեանքը:

36 – Այսինքն՝ ո՞ր պիտի ըլլայ այս բանը: – Ինչպէս գիշատիչ թռչունները իրենց աւարին շուրջ կը հաւաքուին, այսպէս՝ Քրիստոս իբր Դատաւոր պիտի երևի հոն՝ ուր մարդիկ հաւաքուած պիտի ըլլան դատուելու համար:

Պլ. 18, 2 – Մարդոցմէ շատերը ո՛չ թէ Աստուծոյ սէրէն՝ հապա պարզապէս մարդահանութենէ դրդուած կը գործեն, որպէս զի գոնէ մարդոց առջեւ բարի երևան:

6 Եւ Տէրը ըսաւ. «Լսեցէ՛ք թէ ի՛նչ կ'ըսէր անիրաւ դատաւորը: **7** Իսկ Աստուած՝ արդարութիւն պիտի չընէ՞ իր ընտրեալներուն որ գիշեր ցերեկ կ'աղաղակեն իրեն, եւ միայն պիտի սպասցնէ՞ զիրենք: **8** Այո՛, կ'ըսեմ ձեզի, չուտո՛վ արդարութիւն պիտի ընէ. իսկ Մարդու Որդին երբ գայ՝ արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Փարիսեցիւն եւ մաքսաւորը

9 Այս առակն ալ պատմեց, անոնց համար որ համոզուած էին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: **10** «Երկու հոգի տաճար ելան աղօթելու, մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: **11** Փարիսեցին, ոտքի կեցած, առանձինը այս աղօթքը կ'ընէր. Աստուած իմ, շնորհակալ եմ քեզի, որովհետեւ ես՝ ուրիշ մարդոց պէս յափըշտակող, անիրաւ, չնացող չեմ. ո՛չ ալ այս մաքսաւորին կը նմանիմ: **12** Շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ բոլոր ստացւածքներուս տասանորդը կու տամ: **13** Իսկ մաքսաւորը՝ մէկ կողմ քաշուած, չէր համարձակեր եւ ոչ իսկ աչքերը երկինք բարձրացնել. այլ կուրծքը կը ծեծէր ու կ'ըսէր. Աստուած իմ, քաւէ՛ զիս, մեղաւորս: **14** Կ'ըսեմ ձեզի՝ որ ասիկա տուն իջաւ աւելի արդար քան միւսը: Որովհետեւ ով որ ինզինքը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

Յիսուս կ'օրհնէ մանուկները

Մտք 19, 13–15. Մրկ 10, 13–16

15 Յիսուսին կը ներկայացնէին նաեւ մանուկներ, որպէսզի անոնց դպնայ: Աշակերտները, այս տեսնելով՝ կը յանդիմանէին զանոնք: **16** Բայց Յիսուս, իր մօտ կանչելով տղաքը, ըսաւ. «Թո՛ղ տուէ՛ք մանուկներուն որ ինծի գան, եւ մի՛ արգիլէ՛ք զանոնք, որովհետեւ այդպիսիներունն է Աստուծոյ արքայութիւնը: **17** Ժշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ մանուկի մը նման չ'ընդունիր Աստուծոյ արքայութիւնը՝ հոն պիտի չ'մտնէ ան»:

7 – Ամտաբերբ՝ միայն պիտի մնայ, այսինքն՝ պիտի համբերէ որ ընկնուի՞ն անոնք:

Հարուստ երիտասարդը

18 Իշխան մը հարցուց անոր. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: **19** «Ինչո՞ւ գիտ բարի կը կոչես, պատասխանեց Յիսուս, Աստուած՝ միայն բարի է: **20** Պատուիրանները գիտես. մի՛ շնար, մի՛ սպաննեք, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայեք, հայրդ ու մայրդ պատուէ»: **21** Ան ըսաւ. «Այդ ամէնը պահած եմ մանկութենէս ի վեր»: **22** Այս խօսքերուն վրայ, Յիսուս ըսաւ. «Քեզի մէ՛կ բան կը պակսի տակաւին. ինչ որ ունիս՝ ծախէ՛, աղքատներո՛ւն տուր եւ երկնքի մէջ զանձեր պիտի ունենաս, ապա ետեւէս եկուր»: **23** Անիկա, երբ այս խօսքերը լսեց, տխրեցաւ, որովհետեւ չատ հարուստ էր:

24 Յիսուս, զանիկա տխրած տեսնելով՝ ըսաւ. «Որչա՛փ դժուար է հարստութիւն ունեցողներուն՝ Աստուծոյ արքայութիւնը մտնել: **25** Աւելի դժուրին է որ ուղտ մը ասեղի ծակէն անցնի՝ քան հարուստ մը Աստուծոյ արքայութիւնը մտնէ»: **26** Լսողները հարցուցին. «Ուրեմն, ո՞վ կրնայ փրկուիլ»: **27** Յիսուս պատասխանեց. «Ինչ որ անհնարին է մարդոց համար՝ հնարաւոր է Աստուծոյ»:

Յիսուսին հետեւողներուն վարձքը

28 Պետրոս ըսաւ. «Ահաւասիկ մենք՝ մեր բոլոր ունեցածը թողուցինք ու ետեւդ եկանք»: **29** Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, մէկը չկայ որ թողած ըլլայ տուն, կամ ծնողք, կամ եղբայրներ, կամ կին, կամ զաւակներ՝ Աստուծոյ արքայութեան համար, **30** որ այժմէն իսկ անոր բազմապատիկը չընդունի, եւ հանդերձեալ աշխարհին մէջ ալ յաւիտենական կեանքը չժառանգէ»:

Կանխասացութիւն չարչարանքներուն

Մտք 20, 17-19. Մրկ 10, 32-34

31 Եւ մէկ կողմ տանելով տասներկուքը՝ ըսաւ անոնց. «Ահա՛

18 – Հրեաներու ժողովրդանոցի եւ կամ քաղաքի գլխաւորներէն մէկը:

25 – Շատ դժուարին եւ կամ անկարելի եղած բան մը փորձել ընել, ինչպէս՝ ուղտը ասեղի ծակէն անցընել:

կ'ելլենք Երուսաղէմ, եւ պիտի կատարուին ինչ որ մարգարէները գրած են Մարգու Որդիին մասին: **32** Որովհետեւ ան հեթանոսներուն պիտի մատնուի. պիտի ծաղրեն զայն, պիտի նախատեն ու երեսին պիտի թքեն, **33** պիտի ձաղկեն եւ պիտի սպաննեն զինքը, եւ երեք օրէն յարութիւն պիտի առնէ»: **34** Իսկ անոնք՝ բան չհասկըցան այս ըսուածներէն. այս խօսքը իրենց համար մոլթ էր եւ չէին ըմբռներ՝ թէ ինչ կ'ըսէր:

Երիւզովի կոյրը

Մտք 20, 29-34. Մրկ 10, 46-52

35 Երբ Յիսուս Երիւզովի կը մօտենար՝ կոյր մը, որ ճամբուն եզերքը նստած էր մուրալու համար, **36** լսելով որ ամբողջը կ'անցնի՝ հարցուց թէ ի՛նչ կայ: **37** Անոր ըսին թէ Յիսուս Նազովրեցին կ'անցնի: **38** Եւ ան, աղաղակեց ըսելով. «Յիսուս, Դաւիթի՝ որդի, ողորմէ՛ ինծի»: **39** Եւ անոնք որ առջեւէն կ'երթային, զայն կը սաստէին որ լռէ, բայց ան շատ աւելի ուժգին կ'աղաղակէր. «Դաւիթի՝ որդի, ողորմէ՛ ինծի»: **40** Յիսուս կանգ առաւ եւ հրամայեց որ իր առջեւ բերեն զայն. եւ երբ մօտեցաւ՝ հարցուց անոր. **41** «Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի»: «Տէ՛ր, ըսաւ, աչքերս թող բացուին որ տեսնեմ»: **42** Եւ Յիսուս ըսաւ անոր. «Տե՛ս, հաւատաք՝ փրկե՛ց քեզ»: **43** Եւ իսկոյն սկսաւ տեսնել եւ անոր ետեւէն գնաց. ժողովուրդը, այս տեսնելով՝ կ'օրհնէր զԱստուած:

Զակէոս

19 **1** Երիւզով մտնելով՝ քաղաքին մէջէն կ'անցնէր: **2** Եւ ահա Զակէոս անունով մարդ մը, որ մաքսապետ էր եւ հարուստ, կ'ուզէր տեսնել թէ ո՛վ էր Յիսուսը. **3** բայց բազմութեան պատճառով չէր կրնար, որովհետեւ հասակով կարճ էր: **4** Եւ յառաջ վազելով՝ ժանտաթգենիի մը վրայ ելաւ, որպէսզի գանիկա տեսնէ, որովհետեւ այն տեղէն պիտի անցնէր: **5** Յիսուս, այդ տեղը հասնելով՝ վեր նայեցաւ եւ ըսաւ. «Զակէո՛ս, աճապարէ վա՛ր իջիր ատկէ, որովհետեւ հարկ է որ այսօր քու տունդ իջեալնիմ»: **6** Ան աճապարեց, իջաւ եւ ուրախութեամբ ընդունեցաւ զին-

քը: **7** Այս տեսնելով՝ ամէնքը սկսան տրտնջել եւ ըսել՝ թէ մեղաւոր մարդու մը տունը գնաց իջեւանելու: **8** Իսկ Զակքէոս՝ ներկայացաւ եւ ըսաւ Տիրոջ. «Տէ՛ր, ահա ինչքերուս կէսը աղքատներուն կու տամ, եւ եթէ մէկը գրկած եմ՝ քառապատիկը կը հատուցանեմ»: **9** Յիսուս ըսաւ անոր. «Այսօր այս տան փրկութիւնը կատարուեցաւ, որովհետեւ ա՛ս ալ Աբրահամի զաւակ էր: **10** Որովհետեւ Մարդու Որդին եկած է փնտռելու եւ փրկելու կորսուածը»:

Տասը մնասնեքու առակը

Մտք 25, 14–30

11 Մինչդեռ անոնք այս խօսքերը կը լսէին՝ Յիսուս առակ մըն ալ պատմեց, որովհետեւ Երուսաղէմի կը մօտենար, եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի: **12** «Ան ըսաւ. ազնուական մարդ մը հեռաւոր աշխարհ գնաց, որպէսզի իր թագաւորութիւնը առնէ եւ վերադառնայ: **13** Կանչեց իր տասը ծառաները եւ տասը մնաս տալով անոնց՝ ըսաւ. շահագործեցէ՛ք ասոնք մինչեւ որ ես գամ: **14** Բայց քաղաքացիները կ'ատէին զինքը: Անոր ետեւէն պատգամաւորներ ղրկեցին եւ ըսին. չենք ուզեր որ անիկա մեր վրայ թագաւորէ»:

15 Թագաւորութիւնը առնելէ ետք, երբ վերադարձաւ՝ կանչեց ծառաները, որոնց դրամ տուած էր, զիտնալու համար՝ թէ ո՛վ ի՛նչ

Գլ. 19, 12–26 – Ով որ չի գործակցիր Աստուծոյ շնորհքին հետ՝ կը կորսնցնէ գայլ: «Ազնուական մարդը» Քրիստոս է, Աստուծոյ Որդին, իբր մարդ՝ յղացած Սուրբ Հոգիէն եւ ծնած Կոյսէ մը, որ սերած էր Դաւիթի թագաւորական ցեղէն: Ան համբարձաւ երկինք եւ կը նստի Հօր Աստուծոյ աջ կողմը, եւ ուրկէ ան պիտի գայ դատելու կենդանիներն ու մեռելակները: – «Մնասնեքը» Աստուծոյ շնորհքներն են, գործնք ան ամէնուն կու տայ՝ իրենց հոգիին փրկութեան գործածելու համար զանոնք: «Քաղաքացիները» Հրեաներն են, բայց նաեւ Եկեղեցւոյ բոլոր թշնամիները: Թագաւորին վերադարձը կը յիշեցնէ Քրիստոսի փառաւոր գալուստը, ընդհանրական դատաստանի օր, ատոր համար այդ ժամանակամիջոցը մահուան անմիջապէս յաջորդող առանձնական դատաստանի համարատուութիւնն ալ է: Մեր արդիւնքներն ու բարի գործերը՝ Աստուծոյ պարգևներն են:

չահած էր: **16** Եկաւ առաջինը եւ ըսաւ. Տէ՛ր, քու մնասդ՝ տասը մնաս չահեցաւ: **17** Ան պատասխանեց. Ապրի՛ս, բարի ծառայ, քանի որ քիչին մէջ հաւատարիմ եղար՝ իշխանութիւն ունեցիր տասը քաղաքի վրայ: **18** Եկաւ երկրորդը եւ ըսաւ. Տէ՛ր, քու մնասդ հինգ մնաս չահ բերաւ: **19** Ան պատասխանեց. Դուն ալ հինգ քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր:

20 Միւսն ալ եկաւ եւ ըսաւ. Տէ՛ր, ահա՛ քու մնասդ, զոր թաշկինակիս մէջ ծրարած էի: **21** Որովհետեւ կը վախնայի քեզմէ, քանի որ դուն խիստ մարդ մըն ես. կը վերցնես՝ ինչ որ չես դրած, կը հնձես՝ ինչ որ չես սերմանած: **22** Քու բերնովդ պիտի դատեմ քեզ, չա՛ր ծառայ, պատասխանեց տէրը. քանի գիտէիր որ ես խիստ մարդ եմ, կը վերցնեմ ինչ որ չեմ դրած, եւ կը հնձեմ՝ ինչ որ չեմ սերմանած. **23** ինչո՞ւ դրամս սեղանաւորներուն չտուիր, որ ես վերադարձիս զայն տոկոսովը պահանջէի: **24** Եւ սպասաւորներուն ըսաւ. առէ՛ք ատկէ մնասը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր որ տասը մնաս ունի: **25** Տէ՛ր, արդէն տասը մնաս ունի, ըսին: **26** Կ'ըսեմ՝ ձեզի՛ որ ունեցողին պիտի տրուի եւ չունեցողէն՝ ունեցածն ալ պիտի առնուի:

27 Բայց իմ այդ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ ես իրենց վրայ թագաւորեմ, հո՛ս բերէ՛ք եւ սպաննեցէ՛ք իմ առջեւս»:

Քրիստոսի մուտքը Երուսաղէմ

28 Այս խօսքերն ըսելէ ետք՝ յառաջ անցաւ Երուսաղէմ ելլելու համար:

29 Երբ մօտեցաւ Բեթփազէի եւ Բեթանիայի, Ձիթենեաց կոչւած լերան մօտ, աշակերտներէն երկուքը զրկեց ըսելով. **30** «Գացէ՛ք մեր դիմացի գիւղը, ու երբ մտնէ՛ք՝ պիտի տեսնէ՛ք կապուած աւանակ մը, որուն վրայ երբեք մարդ չէ նստած. քակեցէ՛ք զայն ու բերէ՛ք: **31** Եւ եթէ մէկը ձեզի հարցնէ թէ ինչո՞ւ կը քակէ՛ք, ա՛յսպէս պատասխանեցէ՛ք. Տէրը պէտք ունի անոր»։ **32** Աշակերտները գացին եւ գտան ինչպէս որ իրենց ըսած էր. աւանակը կեցած էր իր տեղը: **33** Եւ երբ կը քակէին աւանակը՝ անոր տէրերն ըսին.

«Ինչո՞ւ կը քակէք աւանակը»: 34 «Տէրը պէտք ունի անոր», պատասխանեցին:

35 Ու բերին զայն Յիսուսին. եւ իրենց զգեստները աւանակին վրայ դնելով՝ հեծցուցին Յիսուսը: 36 Եւ մինչ ան կը յառաջանար՝ անոնք ճամբուն վրայ իրենց զգեստները կը տարածէին: 37 Երբ ան Ձիթենեաց լերան զառիվայրին մօտեցաւ՝ աշակերտներուն ամբողջ բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ բարձրաձայն օրհնել զԱստուած՝ անոր կատարած բոլոր հրաշքներուն համար զոր կը տեսնէին: 38 Եւ կ'ըսէին. «Օրհնեալ ըլլայ թագաւորը որ կու գայ Տիրոջ անունով. խաղաղութի՛ւն երկինքի մէջ եւ փա՛ռք բարձունքներու վրայ»:

39 Ամբոխին մէջէն, փարիսեցիներէն ոմանք ըսին անոր. «Վարդապէ՛տ, սաստի՛ սա աշակերտներուդ»: 40 Յիսուս պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, եթէ ատոնք լռեն՝ քարերը պիտի աղաղակեն»:

Յիսուս կու լայ Երուսաղէմի վրայ

41 Երբ ան մօտեցաւ, քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ եւ ըսաւ. 42 «Եթէ գոնէ դո՛ւն գիտնայի՛ր այսօր, թէ ո՛րն է քու խաղաղութիւնդ. բայց հիմա ան ծածկուած է քու աչքերէդ: 43 Որովհետեւ օրեր պիտի գան քեզի համար, երբ թշնամիներդ պատնէշ պիտի կանգնեն շուրջդ, պիտի պաշարեն քեզ եւ ամէն կողմէ պիտի նեղեն. 44 հիմնայատակ պիտի քանդեն քեզ եւ քու որդիներդ որ կը բնակին քու մէջդ, ու քար քարի վրայ պիտի չթողուն հոս, որովհետեւ դուն չգիտցար քու այցելութեանդ ժամանակը»:

Տաճարին մաքրագործումը

Մտք 24, 12-13. Մրկ 11, 15-17

45 Ու տաճար մտնելով, սկսաւ դուրս հանել աղաւնի վաճառողներն ու գնողները, լուծայափոխներու սեղանները ցրուեց, եւ ըսաւ անոնց. 46 «Գրուած է. Իմ տունս՝ աղօթքի տուն պիտի ըլլայ. իսկ դուք աւազակներու որջ դարձուցիք գայն»:

47 Եւ ամէն օր անոնց կը սորվեցնէր տաճարին մէջ. բայց քա-

Հանայապետները, դպիրները եւ ժողովուրդին գլխաւորները կ'ուզէին զինքը մեռցնել. սակայն չէին գիտեր թէ ինչպէս ընեն, որովհետեւ ամբողջ ժողովուրդը անոր շրթունքներէն կախուած՝ մտիկ կ'ընէր:

Քրիստոսի իշխանութիւնը

Մտք 21, 23-27. Մրկ 11, 27-33

20 ¹ Այդ օրերէն մէկը, մինչ Յիսուս տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցնէր ու կ'աւետարանէր, վրայ Հասան քահանայապետներն ու դպիրները, ծերերուն հետ, ² եւ ըսին անոր. «Ըսէ՛ մեզի, ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այս բաները. կամ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: ³ «Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, պատասխանեց Յիսուս, ⁴ ըսէ՛ք ինծի. Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ»: ⁵ Անոնք, իրարու մէջ խորհեցան եւ ըսին. «Եթէ ըսենք՝ թէ երկինքէն էր, այն ատեն պիտի ըսէ՝ ինչո՞ւ Հաւատացիք: ⁶ Իսկ եթէ ըսենք թէ մարդերէն է, բոլոր ժողովուրդը մեզ կը քարկոծէ, որովհետեւ Համոզուած է թէ Յովհաննէս մարգարէ էր»: ⁷ Եւ պատասխանեցին՝ թէ չեն գիտեր ուրկէ է: ⁸ «Ես ալ ձեզի չեմ ըսեր, ըսաւ Յիսուս, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

Ձաք մշակները

Մտք 21, 33-46. Մրկ 12, 1-12

⁹ Եւ սկսաւ ժողովուրդին պատմել այս առակը. «Մարդ մը այգի տնկեց եւ մշակներուն վարձու տալով՝ ճամբորդութեան ելաւ երկար ժամանակի համար: ¹⁰ Երբ ժամանակը Հասաւ, ծառայ մը

Գլ. 20, 9 – Յիսուս իր այս առակով կը նկարագրէ Իսրայէլի ժողովուրդին Աստուծոյ երեսնէ իյնալը: Բաւական չեղաւ այդ ժողովուրդին՝ Աստուծոյ կողմէն դրկուած մարգարէներուն հետ արհամարհանքով վարուիլը, հապա նաեւ յանդգնեցաւ նոյնիմֆն Աստուծոյ Որդին մերժել, անարգել ու սպաննել: Եւ այսպէս՝ ան նամբայ բացաւ Աստուծոյ քաղաքութեան՝ հեթանոսաց երկիրներուն մէջ մուտք գտնելուն:

ղրկեց մշակներուն, որպէսզի այգիին պտուղէն տան անոր. բայց մշակները ծեծեցին զայն եւ պարապ ձեռքով ետ ճամբեցին: **11** Ուրիշ ծառայ մըն ալ զրկեց. ա՛ն ալ նոյնպէս ծեծեցին, անարգեցին եւ պարապ ձեռքով ետ զրկեցին: **12** Երրորդ մըն ալ զրկեց. ա՛տ ալ վիրաւորեցին եւ վռնեցին: **13** Այն ատեն, այգիին տէրը ըսաւ. **Ի՞նչ ընեմ. սիրելի որդիս զրկեմ, թերեւս անկէ պատկառին:** **14** Իսկ մշակները, երբ տեսան զայն՝ իրարու հետ խորհեցան եւ ըսին. ա՛յս է ժառանգորդը, սպաննենք զինքը, որպէսզի ժառանգուի թիւնը մեզի մնայ: **15** Եւ այգիէն դուրս հանելով՝ սպաննեցին զայն:

Հիմա, այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ անոնց: **16** Պիտի գայ, այդ մշակները պիտի սպաննէ, եւ այգին ուրիշներու պիտի տայ: Եւ անոնք, երբ այս լսեցին, ըսին. «Քա՛ւ լիցի»: **17** Իսկ Յիսուս, անոնց նայելով, ըսաւ. «Հապա ի՞նչ կը նշանակէ այն՝ որ գրուած է. թէ Վէմը, գոր շինողները անարգեցին՝ անկիւնաքար եղաւ: **18** Ո՛վ որ այս վէմին զարնուի՝ պիտի փշրուի, եւ որուն վրայ որ իննայ՝ այդ պիտի ճգմէ»:

19 Դպիրներն ու քահանայապետները կ'ուզէին նոյն ժամուն բռնել զինքը, բայց ժողովուրդէն վախցան. որովհետեւ հասկցած էին թէ իրենց համար պատմեց այս առակը:

Կեսարիմ տուրքը

Մտք 22, 15-22. Մրկ 12, 13-17

20 Ապա դաւադիրներ զրկեցին, զայն լրտեսելու համար, որպէսզի կեղծաւորութեամբ իրենք զիրենք արդար ձեւացնելով՝ կարենան զայն իր խօսքերուն մէջ բռնել ու պետութեան եւ կուսակալին իշխանութեան մատնել: **21** Հարցում ուղղեցին անոր՝ ըսելով. «Վարդապե՛տ, գիտենք որ դուն ուղիղ կը խօսիս եւ կ'ուսուցանես, եւ մարդոց հաճելի ըլլալու համար չես գործեր, այլ ճշմարտութեամբ Աստուծոյ ճանապարհը կը քարոզես: **22** Ներելի՞ է մեզի Կեսարին տուրք տալ, թէ ոչ»: **23** Յիսուս, հասկնալով անոնց խորամանկութիւնը, ըսաւ. **24** «Դահեկան մը ցուցուցէք ինձի»: Եւ անոնք ցուցուցին: «Որո՞ւն է վրայի պատկերը եւ գրութիւնը»: «Կեսարինը», պատասխանեցին: **25** Եւ ան ըսաւ. «Գացէ՛ք,

ուրեմն, ինչ որ Կեսարին է՝ Կեսարին տուէք, ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ»:

26 Եւ Հկրցան զինքը խօսքի վրայ բռնել ժողովուրդին առջեւ, եւ զարմանալով անոր տուած պատասխանին վրայ՝ լռեցին:

Մեռեալներու յարութիւնը

Մտք 22, 23–33. Մրկ 12, 18–27

27 Սանդուկեցիներէն ոմանք, որ կը հակառակէին եւ կ'ըսէին թէ յարութիւն չկայ, մօտեցան Յիսուսին եւ ըսին. **28** «Վարդապետ, Մովսէս գրած է մեզի համար, որ եթէ մէկուն եղբայրը որ կին ունի, մեռնի առանց զաւակ թողլու, ասիկա՝ թող առնէ այդ կինը եւ զաւակ հասցնէ իր եղբօր: **29** Արդ, եթէր եղբայրներ կային. առաջինը կին առաւ եւ մեռաւ՝ առանց զաւակ ունենալու. **30** երկրորդն ալ նոյն կինը առաւ եւ մեռաւ առանց զաւակ ունենալու. **31** երրորդն ալ նոյնը առաւ. նոյնը ըրին եթէր եղբայրներն ալ, ու մեռան առանց զաւակ թողլու: **32** Ամէնէն վերջ՝ կիսն ալ մեռաւ: **33** Արդ, յարութեան ատեն, ասոնցմէ որո՞ւն պիտի ըլլայ այս կինը, քանի որ եթէն ալ զինքը կին առին»:

34 Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Այս աշխարհի որդիները կին կամ ամուսին կ'առնեն. **35** բայց անոնք որ արժանի կ'ըլլան հասնելու հանդերձեալ կեանքին եւ մեռեալներու յարութեան՝ ո՛չ կին կ'առնեն ո՛չ ալ ամուսին. **36** որովհետեւ այլեւս չեն կրնար մեռնիլ. հրեշտակներու հաւասար կը դառնան եւ Աստուծոյ որդի, քանի որ յարութեան՝ որդիներ են: **37** Իսկ թէ մեռեալները յարութիւն կ'առնեն՝ Մովսէսն ալ գուշակեց այդ՝ մօրենիին մէջ, երբ **Տէրը կոչեց՝** Աստուած Աբրահամի, Աստուած Իսահակի եւ Աստուած Յակոբի: **38** Արդ Աստուած՝ մեռեալներու Աստուած չէ, այլ՝ կեն-

34 – «Այս աշխարհի որդիները» բացատրութեամբ սովորաբար կը հասկըցուի մարդկութեան ապականած մասը (16,8): Այստեղ սակայն, առանց որեւէ բարոյական խտրութեան, այդ խօսքը իր մէջ կը բովանդակէ աշխարհի մեռեալ շրջանին պատկանող, այսինքն՝ Մեսիայի երկրորդ գալուստէն ու մեռելներու յարութենէն առաջ ապրող բոլոր մարդիկը:

դանիններու, որովհետեւ իրեն համար ամէնքն ալ կենդանի են»:

39 Դպիրներէն ոմանք պատասխանեցին եւ ըսին. **40** «Լա՛ւ ըսիր, Վարդապետ»: Եւ այլեւս ոչ մէկը կը համարձակէր որեւէ բան մը հարցնել:

Քրիստոս՝ Դաւիթի որդին

Մտք 22, 41-45. Մրկ 12, 15-17

41 Ան հարցուց անոնց. «Ի՞նչպէս կ'ըսեն Քրիստոսի համար՝ թէ Դաւիթի որդին է. **42** քանի որ ինքն իսկ Դաւիթ, սաղմոսներու գրքին մէջ, կ'ըսէ. Տէրը ըսաւ իմ Տիրոջս. նստէ՛ աջ կողմս, **43** մինչեւ որ քշնամիներդ ռափերուդ պատուանդան դնեմ: **44** Արդ, եթէ Դաւիթ Տէր կը կոչէ զանիկա՝ ի՞նչպէս կ'ընայ անոր որդին ըլլալ»:

Դպիրներու կեղծաւորութիւնը

Մտք 23, 6-7. Մրկ 12, 38-40

45 Եւ մինչ բոլոր ժողովուրդը մտիկ կ'ընէր՝ ըսաւ իր աշակերտներուն. **46** «Զգուշացէ՛ք դպիրներէն, որ կ'ուզեն պատմուճաններով չըջիլ, կ'ախորժին հրապարակներու վրայ ողջոյններ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին ակօղանները գրաւել, եւ ընթրիքներու ընթացքին՝ առաջին տեղերը: **47** Որ այրիներու տունները կը կլլեն եւ երկար կ'աղօթեն՝ երեւնալու համար. անոնք աւելի խիստ կերպով պիտի դատուին»:

Այրի կնոջ երկու լուման

Մրկ 12, 41-44

21 **1** Յիսուս, աչքերը բարձրացնելով՝ տեսաւ հարուստներ, որ իրենց նուէրները կը ձգէին զանձանակին մէջ: **2** Տեսաւ նաեւ աղքատ այրի կին մը՝ որ երկու լումայ ձգեց հոն: **3** Եւ ըսաւ. «Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այդ աղքատ այրին բոլորէն աւելի ձգեց: **4** Որովհետեւ անոնք ամէնքը իրենց ունեցածին աւելորդէն ձգեցին իբրեւ նուէր Աստուծոյ, բայց անիկա, իր աղքատութեամբ հանդերձ՝ իր բոլոր ունեցածը, իր ապրուստը ձգեց»:

Կանխատեսութիւն Նրուսադէմի կործանումին

Մտք 24, 1-3. Մրկ 13, 1-4

5 Երբ ոմանք տաճարին մասին կը խօսէին՝ թէ գեղեցիկ քարերով եւ աշտարակներով զարդարուած է, ըսաւ. 6 «Օրեր պիտի դան որ քար քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի այդ բոլորէն զոր կը տեսնէք»: 7 Հարցում ըրին անոր, ըսելով. «Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, եւ ի՞նչ է նշանը՝ երբ ատոնք պիտի կատարուին»:

8 Ան պատասխանեց. «Զգո՛յ՝ յէղէք, չխաբուի՛ք, որովհետեւ շատեր պիտի դան իմ անունովս եւ պիտի ըսեն՝ թէ Ես եմ, եւ թէ Ժամանակը մօտեցած է: Անոնց ետեւէն մի՛ երթաք: 9 Երբ լսէք պատերազմներու եւ խռովութիւններու մասին, մի՛ զարհուրիք, որովհետեւ պէտք է որ նախ ատոնք կատարուին. բայց տակաւին վախճանը չէ հասած»: 10 Նոյն ատեն ըսաւ անոնց. «Ազգ ազգի վրայ պիտի ելլէ, եւ թագաւորութիւն թագաւորութեան դէմ. 11 եւ շատ տեղեր ահաւոր երկրաշարժներ պիտի ըլլան, սովեր եւ համաճարակներ, արհաւիրքներ եւ մեծամեծ նշաններ պիտի դան երկինքէն:

12 Բայց այս բոլորէն առաջ՝ ձեզ պիտի ձերբակալեն ու պիտի հալածեն. ժողովարաններու եւ բանտերու պիտի մատնեն, դատաւորներու եւ թագաւորներու առջեւ պիտի քաշեն ձեզ՝ իմ անունիս համար: 13 Եւ ատիկա առիթ պիտի ըլլայ ձեզի համար՝ վկայութիւն տալու: 14 Արդ, լաւ մը դրէք ձեր մտքին մէջ՝ թէ պէտք չէ կանուխէն պատրաստուիք պատասխան տալու. 15 որովհետեւ ե՛ս պիտի տամ ձեզի բերան եւ իմաստութիւն, որուն պիտի չկարենան դէմ կենալ կամ պատասխան տալ ձեր բոլոր հակառակորդները: 16 Պիտի մատնուիք նոյնիսկ ձեր ծնողներէն, եղբայրներէն, ազգականներէն եւ բարեկամներէն, ու ձեզմէ ոմանք աւելի լաւ է սպաննուին: 17 Եւ իմ անունիս համար ամէնէն պիտի

Գլ. 21, 13 – Այդ պիտի ըլլայ ձեզի համար փառաւոր վկայութիւն մը իմ մասին:

ատուիք: **18** Բայց մազ մը անգամ պիտի չկորսուի ձեր գլուխէն: **19** Եւ ձեր համբերութեամբը պիտի փրկէք ձեր հոգիները:

20 Բայց երբ տեսնէք Երուսաղէմը զօրքերով պաշարուած, այն ատեն գիտցէք որ մօտ է անոր ակերումը: **21** Այն ժամանակ, անոնք որ Հրէաստան են՝ լեռները թող փախչին, եւ անոնք որ քաղաքին մէջ են՝ թող մեկնին անկէ, եւ անոնք որ գիւղերու մէջ են՝ թող քաղաք չմտնեն: **22** Որովհետեւ վրէժխնդրութեան օրեր են անոնք, որպէսզի կատարուին բոլոր գրուածները: **23** Բայց վա՛յ յղիներուն եւ ստնտուներուն՝ այդ օրերուն, որովհետեւ մեծ տագնապ մը պիտի տիրէ երկրի վրայ, եւ բարկութիւն՝ այս ժողովուրդին դէմ: **24** Եւ սուրի բերանը պիտի իյնան ու գերի պիտի տարուին բոլոր ազգերու մէջ, եւ Նրուսադէմը ոտնակոխ պիտի ըլլայ հեթանոսներէն, մինչեւ որ լրանան հեթանոսներու ժամանակները:

25 Նշաններ պիտի երեւնան արեւուն, լուսինին եւ աստղերուն մէջ, եւ երկրի վրայ ազգերը պիտի խռովին՝ ծովու եւ ալիքներու ահեղ շառաչէն: **26** Մարդիկ ուշաթափ պիտի ըլլան սարսափէն, սպասելով տիեզերքի վրայ գալիք դէպքերուն, որովհետեւ երկինքի զօրութիւնները պիտի սասանին: **27** Եւ այն ատեն պիտի տեսնեն Մարդու Որդին՝ որ պիտի գայ ամպերու վրայ, զօրութեամբ եւ մեծ փառքով: **28** Եւ երբ այս բաները սկսին կատարուիլ՝ ելէ՛ք, ձեր գլուխը բարձրացուցէք, որովհետեւ մօտ է ձեր փրկութիւնը»:

ԹԳԵՆԻԻՑ ԱՌԱՅԻՐ

Մտք 24, 32–35. Մրկ 13, 28–31

29 Առակ մըն ալ պատմեց անոնց. «Տեսէ՛ք թգենին եւ բոլոր ծառերը: **30** Երբ ծիլ արձակեն՝ կը տեսնէք եւ անոնցմէ կը հասկնաք որ արդէն մօտ է ամառը: **31** Նոյնպէս դուք ալ, երբ այս բոլորը կատարուած տեսնէք՝ գիտցէք թէ մօտ է Աստուծոյ արքայութիւնը: **32** Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս սերունդը պիտի չանցնի՝ մինչեւ որ այս ամէնը կատարուի: **33** Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս պիտի չանցնին»:

Հսկեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք

34 Ձգո՛յշ եղէ՛ք ձեր անձերուն, որպէսզի ձեր սրտերը չծանրանան շուռայտութեամբ եւ գինովութեամբ ու աշխարհիկ հոգեւորով, եւ յանկարծակի ձեր վրայ չհասնի այդ օրը: **35** որովհետեւ որոգայթի նման պիտի հասնի այն ամէնուն վրայ որ կը բնակին երկրի երեսը: **36** Ուստի արթուն կեցէ՛ք այսուհետեւ, միշտ աղօթեցէ՛ք, որպէսզի արժանի ըլլաք փրկուելու այն բոլոր բաներէն որ պիտի պատահին եւ ներկայանալու Մարդու Որդիին առջեւ»:

37 Յերեկը, ան տաճարին մէջ կը սորվեցնէր, իսկ գիշերը՝ կ'ելլէր, կ'առանձնանար Ձիթենեաց կոչուած լեռը: **38** Եւ բոլոր ժողովուրդը առաւօտ կանուխ իրեն կը դիմէր տաճարին մէջ, անոր խօսքերը լսելու համար:

Դաւադրութիւն Յիսուսի դէմ

22 **1** Մօտ էր բաղարջակերքի տօնը, որ Պասքա կը կոչուի: **2** Եւ քահանայապետներն ու դպիրները հնարք մը կը փնտռէին՝ թէ ի՛նչպէս սպանեն Յիսուսը: բայց կը վախճանային ժողովուրդէն: **3** Եւ սատանան մտաւ իսկարիօպտացի կոչուած Յուդային սիրտը, որ տասներկու առաքեալներու թիւէն էր: **4** ան գնաց խօսեցաւ քահանայապետներուն, դպիրներուն եւ ժողովուրդին իշխաններուն հետ, թէ ի՛նչ կերպով իրենց մատնէ զայն: **5** Անոնք ալ ուրախացան եւ խոստացան դրամ տալ: **6** Յուդա յանձն առաւ, եւ յարմար առիթը կը փնտռէր զայն մատնելու՝ ժողովուրդէն հեռու:

Վերջին ընթրիքը

Մտք 26, 17-19. Մրկ 14, 12-16

7 Հասաւ բաղարջակերքի օրը՝ երբ օրէնք էր պատեքը գոհել: **8** Յիսուս զրկեց Պետրոսն ու Յովհաննէսը եւ ըսաւ. «Գացէ՛ք,

պատրաստեցէ՛ք մեզի պասեքը, որպէսզի ուտենք»։ **9** «Ո՞ր կ' ուզես որ պատրաստենք», հարցուցին անոնք։ **10** «Ահա, ըսաւ Յիսուս, երբ քաղաք մտնէ՛ք՝ ձեզի պիտի հանդիպի մարդ մը որ ջուրի սափոր մը կը կրէ։ Հետեւեցէ՛ք անոր մինչեւ այն տունը ուր պիտի մտնէ։ **11** Եւ ըսէ՛ք տանտիրոջ՝ Վարդապետը կ' ըսէ քեզի։ Ո՞ր է այն տեղը, ուր պիտի ուտեմ պասեքը աշակերտներուս հետ։ **12** Եւ ան պիտի ցուցնէ ձեզի մեծ վերնատուն մը, զարդարուած։ Հո՛ն պատրաստեցէ՛ք»։ **13** Գացին ու գտան ինչպէս որ իրենց ըսած էր։ Եւ պատրաստեցին պասեքը։

14 Երբ ժամը հասաւ՝ տասներկու առաքեալներուն հետ սեղանի նստաւ։ **15** Եւ ըսաւ անոնց․ «Անձկագի՛ն փափաքեցայ այս պասեքը ուտել ձեզի հետ չարչարուելէս առաջ։ **16** Որովհետեւ կ' ըսեմ ձեզի թէ այլեւս պիտի չուտեմ անկէ, մինչեւ որ ան կատարուի Աստուծոյ արքայութեան մէջ»։

17 Եւ բաժակն առնելով՝ գոհացաւ եւ ըսաւ․ «Առէ՛ք ասիկա եւ իրարու մէջ բաժնուեցէ՛ք։ **18** Կ' ըսեմ ձեզի, թէ ասկէ վերջ որ թի բերէ՛ն պիտի չիմեմ, մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը գայ»։

Սուրբ Հաղորդութեան հաստատութիւնը

Մտք 26, 26-28․ Մկ 14, 22-24

19 Յետոյ, հաց առնելով՝ գոհացաւ, մանրեց, տուաւ անոնց եւ ըսաւ․ «Ա՛յս է իմ մարմինս, որ տրուած է ձեզի համար։ Ասիկա իմ յիշատակիս համար ըրէ՛ք»։ **20** Նոյնպէս, ընթրիքէն վերջ, բաժակն առնելով՝ ըսաւ․ «Այս բաժակը Նոր Ուխտն է իմ արիւնովս, որ կը թափուի ձեզի համար»։

16 – Զատիկի տօնը աւելի կատարեալ կերպով պիտի իրականանայ երկինքի մէջ՝ քան իսկ այս երկրի վրայ։ Որովհետեւ ինչ որ թէ Եգիպտոսի գերութենէն միայն, հապա մեղքէ ու անոր իշխանութենէն ազատութիւնն է որ պիտի տօնախմբուի մեծահանդէս շուքով։

20 – Գոհութեան Ս․ Խորհրդուոյն հաստատման խօսքերը Ղուկասի քով քիչ մը կը շեղին Մատթէոսէն ու Մարկոսէն։

Յիսուս կը յայտնէ թէ պիտի մատնուի

21 «Բայց ահաւասիկ, մատնիչիս ձեռքը ինծի հետ է սեղանին վրան: **22** Մարդու Որդին կ'երթայ, ինչպէս որ սահմանուած է. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով կը մատնուի»: **23** Անոնք սկսան իրարու հարցնել՝ թէ իրենցմէ ո՞վ է որ այդ բանը պիտի ընէ:

Վէ՛մ առաքեալներուն մէջ՝ թէ ո՞վ է մեծը

24 Վէ՛ճ մը ծագեցաւ իրենց մէջ՝ թէ ո՞վ մեծ պիտի համարուի իրենցմէ: **25** Յիսուս ըսաւ անոնց. «Ազգերու մէջ թագաւորները կը տիրեն, եւ անոնք որ կ'իշխեն անոնց վրայ՝ բարերար կը կոչուին: **26** Բայց դուք այդպէս չըլլա՛ք. այլ ձեր մէջէն մեծը՝ կրտսերին նման թող ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին նման: **27** Ո՞վ է մեծը, սեղանի նստո՞ղը թէ սպասաւորը. անշուշտ սեղանի նստողը: Բայց ես՝ ձեր մէջն եմ իբրեւ սպասաւոր:

28 Դո՛ւք էք որ միշտ իմ հետս մնացիք փորձութիւններու Ժամանակ: **29** Եւ ես՝ արքայութիւնը կը խոստանամ ձեզի, ինչպէս որ իմ Հայրս խոստացաւ ինծի. **30** որովհետեւ իմ սեղանէս պիտի ուտէք եւ խմէք իմ արքայութեանս մէջ, եւ պիտի նստիք տասներկու աթոռներու վրայ, դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը:

Յիսուս կ'ազդարարէ Պետրոսը

31 Եւ Տէրը ըսաւ. Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա՛ սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղէ անցընել. **32** բայց ես աղաչեցի քեզի համար, որպէսզի քու հաւատքդ չպակսի. եւ դուն վերստին դառնալով՝

25 – Հնագոյն դարերու ինքնակալներէն շատեր իրենց անձին՝ «Բարերար պետութեան» տիտղոսը դնել տուած էին:

32 – Ինչպէս Տէրը աղօթած էր Պետրոսի համար եւ զայն ամրացուցուած իր հաւատքին մէջ, այսպէս նաեւ Պետրոս պարտաւոր է, իբր անոր փոխանորդը երկրի վրայ, հաստատել իր առաքելակիցները, իրենց հաւատքին մէջ:

քու եղբայրներդ հաստատես»։ **33** «Տէ՛ր, պատասխանեց Պետրոս, պատրաստ եմ քեզի հետ թէ՛ բանտ երթալու եւ թէ՛ մեռնելու»։ **34** Եւ ան ըսաւ. «Քեզի՛ կ'ըսեմ, Պետրոս, որ այսօր՝ աքաղաղը դեռ չերգած, երեք անգամ պիտի ուրանաս թէ չես ճանչնար զիս»։

Յիսուսի վնոական պահերը

35 Եւ ըսաւ անոնց. «Երբ ձեզ ղրկեցի առանց քսակի, մաղախի եւ կօշիկներու, միթէ բանի մը պէտք ունեցա՞ք»։ **36** «Ո՛չ մէկ բանի», պատասխանեցին անոնք։ Յիսուս աւելցուց. «Բայց հիմա, ո՛վ որ քսակ ունի թող առնէ, նոյնպէս՝ մախաղ ունեցողը՝ իսկ ով որ չունի՝ թող զգեստները ծախէ եւ սուր մը գնէ»։ **37** Բայց ես կ'ըսեմ ձեզի՝ թէ պէտք է որ իմ վրաս կատարուի այն ինչ որ գրուած է, թէ անօրէններու կարգին դասուեցաւ. որովհետեւ ինչ որ իմ մասիս գրուած է՝ կատարուելու վրայ է»։ **38** «Տէ՛ր, ըսին անոնք, ահա երկու սուր կայ հոս»։ Յիսուս պատասխանեց. «Բաւական են»։

Յիսուս Գեթսեմանիի մէջ

Մտք 26, 36-46. Մրկ 12, 32-42

39 Յիսուս, իր սովորութեան համաձայն, ելաւ գնաց Ձիթենեաց լեռը, եւ աշակերտները անոր հետեւեցան։ **40** Երբ հոն հասաւ՝ ըսաւ անոնց. «Աղօթեցէ՛ք որ փորձութեան մէջ չիյնաք»։

41 Իսկ ինքը, անոնցմէ քարընկէց մը հեռանալով՝ ծուռկի ինկաւ աղօթելու համար. եւ կ'ըսէր. **42** «Հա՛յր, եթէ կ'ուզես՝ անցո՛ւր

36 – Եթէ առաքելները մինչեւ այն ատենը կրցան առանց որեւէ հոգ մ'ունենալու՝ խաղաղ ապրիլ, այլ սակայն պիտի գան այնպիսի վայրկեաններ, ուր կեանքի ու մահուան վերահաս վտանգներու առջեւ պիտի գտնուին։ Այդպիսի վտանգներու պարագային հարկաւոր է սուրի գործածութիւնը։ Քրիստոսի այս խօսքերը սակայն իրական կամ նիւթական սուրերու մասին հասկցուելու չեն, հապա՛ հոգեւոր գեմքերու, որոնցմով առաքելները պէտք է զինուած ըլլան, հաւատքի քշմամբներուն դէմ՝ մարտնչիլ կարենալու համար։

38 – Առաքելները Փրկչին մտադրութեան կը յանձնեն թէ վերնատան մէջ կայ երկու սուր։ Տէրը սակայն կ'ընդմիջէ անոնց խօսքը։ Ապագան պիտի բանայ անոնց՝ անոր խօսքերուն իմաստը։

ինծմէ այս բաժակը. բայց ո՛չ իմ կամքս այլ քո՛ւ կամքդ թող ըլլայ»։ **43** Եւ երկինքէն հրեշտակ մը երեւցաւ իրեն եւ կը քաջալերէր զինքը։ Տագնապի մէջ էր ու աւելի թախանձագին կ'աղօթէր։ **44** Եւ քրտինքը, արեան կաթիլներուն, նման չիթ առ չիթ կը հոսէր գետին։

45 Աղօթքէն ելլելով, աշակերտներուն քով եկաւ եւ զանոնք գտաւ քնացած, տրտմութեան պատճառով։ **46** «Ինչո՞ւ կը քնանաք, ըսաւ անոնց, ելէ՛ք, աղօթեցէ՛ք, որպէսզի փորձուիմք ան մէջ չիյնաք»։

Յիսուսի ձերբակալութիւնը

Մտք 26, 45-56. Մրկ 14, 43-52

47 Մինչ կը խօսէր, ահա ամբոխ մը, որուն կ'առաջնորդէր տասներկուքէն մէկը՝ որ Յովնա կը կոչուէր. ան մօտեցաւ Յիսուսին՝ զայն համբուրելու համար, որովհետեւ ա՛յդ տուած էր անոնց իբր նշան, թէ՛ զով որ համբուրեմ՝ ա՛ն է, զա՛յն բռնեցէք։

48 Յիսուս ըսաւ անոր. «Յովնա՛, համբուրելո՞ւ կը մատենս Մարգու Որդին», **49** Հետը եղողները, տեսնելով ինչ որ կը պատահի, ըսին. «Տէ՛ր, զարնե՛ք սուրով»։ **50** Եւ անոնցմէ մէկը զարկաւ քահանայապետին ծառային եւ անոր աջ ականջը կտրեց։ **51** Յիսուս ըսաւ. «Կը բաւէ՛ այդչափը». եւ ականջին դպչելով՝ բժշկեց զայն։

52 Յիսուս, խօսքը ուղղելով իր վրայ եկող քահանայապետներուն, տաճարի իշխաններուն եւ ծերերուն, ըսաւ. «Աւագակի՞ր՝ վրայ ելաք սուրերով եւ բիրերով. **53** ամէն օր ձեր հետն էի տաճարին մէջ եւ ձեռք չզարկիք ինծի. բայց ա՛յս է ձեր ժամը եւ խաւարի իշխանութիւնը»։

Պետրոսի ուրացութիւնը

Մտք 26, 69-75. Մրկ 14, 66-72

54 Եւ Յիսուսը բռնելով՝ տարին մտցուցին քահանայապետին տունը. իսկ Պետրոս, հեռուէն կը հետեւէր անոր։ **55** Երբ գաւիթին

մէջ կրակ վառեցին ու շուրջը նստան՝ Պետրոս ալ անոնց մէջ նստաւ: **56** Աղախին մը, զայն տեսնելով կրակին քով նստած՝ նայեցաւ անոր եւ ըսաւ. «Ա՛ս ալ անոր հետ էր»: **57** Բայց Պետրոս ուրացաւ եւ ըսաւ. «Չեմ ճանչնար զինքը, ո՛վ կին»: **58** Քիչ ետք, ուրիշ մը, զայն տեսնելով՝ ըսաւ. «Դո՛ւն ալ անոնցմէ ես»: Պետրոս պատասխանեց. «Ես անոնցմէ չե՛մ, ո՛վ մարդ»: **59** Երբ ժամ մը անցաւ, ուրիշ մէկը, պնդելով կ'ըսէր. «Ճիշդ է, ա՛ս ալ անոր հետ էր, որովհետեւ Գալիլեացի է»: **60** Բայց Պետրոս ըսաւ. «Չեմ գիտեր ի՛նչ կը խօսիս, ո՛վ մարդ»: Տակաւին անոր խօսքը չաւարտած, անմիջապէս աքաղաղ մը երգեց: **61** Տէրը դարձաւ ու Պետրոսին նայեցաւ: Պետրոս յիշեց Տիրոջ խօսքը. «Այսօր, աքաղաղը դեռ չերգած, երեք անգամ պիտի ուրանաս, ըսելով թէ զիս չես ճանչնար»: **62** Եւ դուրս ելլելով՝ լացաւ դառնապէս:

Յիսուս կը մախատուի

63 Այն մարդիկը որ զինքը կը պահէին, կը ծաղրէին ու կը ծեծէին զինքը, **64** երեսը կը ծածկէին եւ կը տանջէին. եւ կը հարցնէին անոր՝ ըսելով. «Գուշակէ՛, ո՞վ է քեզի զարնողը»: **65** Եւ ուրիշ շատ մը հայհոյանքներով կը խօսէին անոր:

Յիսուս ծերակոյտին առջեւ

Մտք26, 57-66. Մրկ 14, 53-64

66 Երբ առաւօտ եղաւ, ժողովուրդին ծերակոյտը, քահանայապետներն ու դպիրները հաւաքուեցան, եւ իրենց ատեանը բերել տալով Յիսուսն՝ ըսին. «Եթէ դո՛ւն ես Քրիստոսը՝ ըսէ՛ մեզի»: **67** Յիսուս պատասխանեց. «Եթէ նոյնիսկ ըսեմ ձեզի՝ դուք պիտի չհաւատաք ինծի. **68** եւ եթէ հարցումներ ուղղեմ ձեզի՝ դուք պատասխան պիտի չտաք եւ ոչ ալ պիտի արձակէք զիս: **69** Բայց ասկէ վերջ, Մարդու Որդին պիտի մատի Աստուծոյ զօրութեան աջակողմը»: **70** Այն ատեն ամէնքը հարցուցին. «Ուրեմն դո՞ւն ես Աստուծոյ Որդին»: **71** Ան պատասխանեց. «Դո՛ւք կ'ըսէք՝ թէ ե՛ս եմ»: Անոնք պոռացին. «Ալ ի՞նչ պէտք կայ վկայութեան. քանի որ մենք անձամբ լսեցինք ատոր բերնէն»:

Յիսուս Պիղատոսին առջեւ

Մտք 27, 11-14. Մրկ 15, 2-5. Յովհ 18, 29-38

23 ¹ Եւ բոլոր ժողովականները ոտքի ելան, եւ Յիսուսը Պիղատոսին տարին:

² Եւ սկսան անոր վրայ ամբաստանութիւն ընել եւ ըսել. «Մենք ասիկա գտանք մինչ մեր ազգը կը խռովէր, եւ կ'արգիլէր Կեսարին հարկ տալ, եւ ինքիրեն համար կ'ըսէր թէ ինք Քրիստոս թագաւորն է»: ³ Այն ատեն Պիղատոս հարցուց անոր. «Դու Զրեաներու թագաւոր՞ն ես»: Յիսուս պատասխանեց. «Դո՛ւն ըսիր»: ⁴ Պիղատոս քահանայապետներուն եւ ժողովուրդին ըսաւ. «Ես այս մարդուն վրայ որեւէ յանցանք չեմ գտներ»: ⁵ Բայց անոնք կը պնդէին ու կ'ըսէին թէ ժողովուրդը ապստամբութեան կը մղէ, եւ կը քարոզէ բոլոր Զրեաստանի մէջ, Գալիլեայէն սկսելով մինչեւ հոս: ⁶ Երբ Պիղատոս Գալիլեայի անունը լսեց, հարցուց թէ այս մարդը Գալիլեացի՞ է: ⁷ Եւ երբ իմացաւ թէ Հերովդէսի իշխանութենէն է, զայն դրկեց Հերովդէսին, որ այդ օրերուն Երուսաղէմ էր:

Յիսուս Հերովդէսին առջեւ

⁸ Երբ Հերովդէս Յիսուսը տեսաւ՝ շատ ուրախացաւ, որովհետեւ երկար ատենէ ի վեր կը փափաքէր զինքը տեսնել. արդարեւ շատ անգամ անոր մասին լսած էր եւ կը յուսար անոր ձեռքով կատարուած հրաշք մը տեսնել: ⁹ Շատ հարցումներ ըրաւ անոր, բայց Յիսուս բնաւ չպատասխանեց: ¹⁰ Քահանայապետներն ու դպիրները, որ հոն կեցած էին, չարաչար կ'ամբաստանէին զայն: ¹¹ Հերովդէս, իր զինուորներուն հետ, արհամարհեց զինքը եւ ծաղրելով՝ սպիտակ զգեստ մը հագցուց անոր, եւ դարձեալ դրկեց Պիղատոսին: ¹² Պիղատոս եւ Հերովդէս այն օրը բարեկամացան, որովհետեւ առաջ իրարու թշնամի էին:

Յիսուս դարձեալ Պիղատոսին առջեւ

Մտք 27, 15-26. Մրկ 15, 6-15. Յովհ 18, 38-19-16

¹³ Այն ատեն Պիղատոս կանչեց քահանայապետները, իշխան-

ներն ու ժողովուրդը. **14** եւ ըսաւ անոնց. «Դուք առիք, ինծի բերիք այս մարդը իբրեւ ժողովուրդը մոլորեցնող. ահա՛ւստիկ, ձեր առջեւ դատեցի եւ այդ մարդուն վրայ չգտայ ո՛չ մէկ յանցանք, որուն համար կ'ամբաստանէք զինքը: **15** Ո՛չ ալ Հերովդէս, քանի որ ան մեզի վերադարձուց զինքը. **16** ուստի մահուան արժանի բան մը գործած չէ, հետեւաբար պիտի պատժեմ զինքը եւ ազատ պիտի արձակեմ»:

Յիսուս եւ Բարաբբա

17 Պիղատոս պարտական էր տօնին օրը բանտարկեալ մը արձակել անոնց: **18** Անոնք, բոլոր բազմութեամբ կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Վերցո՛ւր ատիկա մէջտեղէն, եւ Բարաբբա՛ն արձակէ մեզի»: **19** անիկա բանտ դրուած էր՝ քաղաքին մէջ խռովութիւն հանած եւ սպաննութիւն մը ըրած ըլլալուն համար: **20** Պիղատոս դարձեալ սկսաւ խօսիլ անոնց, որովհետեւ կ'ուզէր արձակել Յիսուսը: **21** Բայց անոնք դարձեալ սկսան աղաղակել եւ ըսել. «Խա՛չ հանէ, խա՛չ հանէ ատիկա»: **22** Ան, երրորդ անգամ ըսաւ. «Ի՞նչ չարիք գործած է ասիկա. ես ասոր վրայ մահուան արժանի յանցանք մը չեմ գտներ. պիտի պատժեմ ու արձակեմ զինքը»: **23** Բայց անոնք բարձրաձայն կը պնդէին եւ կը խնդրէին որ խաչ հանէ զայն. եւ անոնց ու քահանայապետներուն աղաղակները երթալով կը զօրանային:

24 Եւ Պիղատոս հաւանեցաւ կատարել անոնց խնդրանքը: **25** Արձակեց Բարաբբան, զոր կը խնդրէին, եւ որ խռովութեան համար բանտարկուած էր. իսկ Յիսուսը՝ անոնց կամքին յանձնեց:

Դէպի Գողգոթա

26 Երբ Յիսուսը առին տարին, Սիմոն Կիւրենացի անունով մէկը բռնեցին, որ դաշտէն կը վերադառնար. անոր կռնակը դրին խաչը, որպէսզի կրէ զայն Յիսուսի ետեւէն: **27** Անոր ետեւէն կ'երթար ժողովուրդի եւ կիներու բազմութիւն մը, որոնք կու լային եւ կ'ողբային անոր վրայ: **28** Յիսուս դարձաւ եւ ըսաւ անոնց. «Երուսաղէմի՛ աղջիկներ, մի՛ լաք իմ վրաս, այլ լացէ՛ք դուք ձեր

վրայ եւ ձեր զաւակներուն վրայ: **29** Որովհետեւ պիտի գան օրեր, երբ պիտի ըսեն. Երանի՛ր ամուլներուն եւ այն որովայններուն՝ որ չծնան, եւ ստինքներուն՝ որ կաթ չտուին: **30** Այն ատեն պիտի սկսին գոչել լեռներուն՝ թէ ինկե՛ք մեր վրայ, եւ բլուրներուն՝ թէ ծածկեցե՛ք մեզ: **31** Որովհետեւ եթէ այսպէ՛ս կ'ընեն դալար փայտին, ի՞նչ պիտի ընեն չորին»: **32** Ուրիշ երկու չարագործներ ալ բերին՝ անոր հետ սպաննելու համար:

Խաչելութիւնը

Մտթ 27, 35–38. Մրկ 15, 24–28

33 Երբ հասան Գանկ կոչուած տեղը, հոն խաչ հանեցին զինքը, եւ չարագործներէն մին՝ աջ, միւսը՝ ձախ կողմը խաչեցին: **34** Յիսուս ըսաւ. «Հա՛յր ներէ՛ր անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»: Եւ վիճակ ձգելով՝ անոր զգեստները բաժնուեցան:

35 Մինչ ժողովուրդը կեցած՝ կը դիտէր, իշխանները կ'անարգէին զինք եւ կ'ըսէին. «Ուրիշները փրկեց, թող ինքզինքն ալ փրկէ, եթէ ա'տ է Քրիստոսը, Աստուծոյ ընտրեալ Որդին»: **36** Զինուորներն ալ կը ծաղրէին զինքը. եւ առջեւը գալով՝ անոր քացախ կը հրամցնէին եւ կ'ըսէին. **37** «Եթէ դո՛ւն ես Հրեաներու թագաւորը՝ ազատէ՛ ինքզինքդ»: **38** Գրուածին մըն ալ դրուած էր խաչին վրայ՝ յունարէն, լատիներէն եւ եբրայերէն տառերով, թէ Ասիկա է Հրեաներու Թագաւորը:

Բարի աւագակը

39 Իսկ կախուած չարագործներէն մէկը՝ կը հայհոյէր եւ կ'ըսէր. «Դուն չե՞ս Քրիստոսը. քեզ ալ փրկէ, մեզ ալ»: **40** Իսկ ընկերը, յանդիմանելով զինքը՝ պատասխանեց. «Աստուծմէ չե՞ս վախնար դուն, որ նոյն պատիժը կը կրես. **41** մենք՝ արդար կեր-

Գլ. 23, 36 – «Ռալար փայտը», Ս. Գրքին մէջ, պատկերն է արդարին: Եթէ ես, որ անմեղ եմ, այսօր կը չարչարուիմ, հապա ի՞նչ կը սպասէ ամբարիշտներու եւ անգեղ մեղաւորներու:

պով, որովհետեւ մեր ըրածներուն արժանի հատուցումը ընդունած ենք. բայց ասիկա գէշ բան մը չէ ըրած»։ **42** Ապա ըսաւ Յիսուսին. «Յիշէ՛ զիս, Տէր, երբ գաս թագաւորութեամբդ»։ **43** Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, այսօր ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»։

Յիսուսի մահը

Մտք 27, 45-50. Մրկ 15, 33-37. Յովհ 19, 25-30

44 Գրեթէ վեցերորդ ժամն էր, երբ խաւարը պատեց բոլոր երկիրը մինչեւ իններորդ ժամը, եւ արեւը խաւարեցաւ։ **45** Տաճարին վարագոյրը պատռուեցաւ մէջտեղէն. **46** Եւ Յիսուս, բարձր ձայնով աղաղակեց եւ ըսաւ. «Հա՛յր, քու ձեռքդ կը յանձնեմ իմ հոգիս»։ եւ այս ըսելով՝ հոգին աւանդեց։

47 Հարիւրապետը, տեսնելով եղածը՝ կը փառաւորէր զԱստուած, ըսելով. «Իսկապէս այս մարդը արդար էր»։ **48** Բոլոր ժողովուրդը, որ եկած էր այս տեսարանը դիտելու, պատահածը տեսնելով՝ կուրծքը կը բախէր եւ ետ կը դառնար։ **49** Հեռուն կեցած էին բոլոր ծանօթները, ինչպէս նաեւ այն կիները որ Գալիլեայէն հետեւած էին իրեն համար եւ կը տեսնէին այս բոլորը։

Յիսուսի քաղումը

Մտք 27, 57-61. Մրկ 15, 42-47. Յովհ 19, 38-42

50 Եւ ահա Յովսէփ անունով մարդ մը, որ նախարար էր, բարեգործ եւ արդար. **51** ան համամիտ չէր անոնց խորհուրդներուն եւ գործերուն. Հրէաստանի Արիմաթիա քաղաքէն էր եւ ինքն ալ կը սպասէր Աստուծոյ արքայութեան։ **52** Ան ներկայացաւ Պիղատոսին եւ խնդրեց Յիսուսի մարմինը։ **53** Եւ խաչէն վար առնելով՝ կտաւով պատեց ու դրաւ ժայռափոր գերեզմանի մէջ, ուր բնաւ մէկը չէր դրուած։ **54** Օրը ուրբաթ էր, եւ շաբաթ կը լուսնար։

55 Անոր կը հետեւէին կիներն ալ, որոնք Գալիլեայէն Յիսուսի հետ եկած էին, ու տեսան գերեզմանը եւ թէ ինչպէս դրուեցաւ հոն մարմինը։ **56** Դարձան, խուկեր եւ իւղեր պատրաստեցին եւ շաբաթ օրը հանգիստ ըրին, պատուիրանին համաձայն։

Յիսուսի յարութիւնը

Մտք 28, 1-8. Մրկ 1,6 1-8. Յովհ 20, 1-2

24 ¹ Շաբթուայ առաջին օրը, առաւօտ կանուխ, գերեզման գացին, բերելով պատրաստուած խուկները. ուրիշ կիներ ալ անոնց հետ: ² Եւ քարը, գերեզմանին առջեւ, թաւալած գտան: ³ Ու ներս մտնելով՝ չգտան Տէր Յիսուսի մարմինը: ⁴ Մինչ ասոր վրայ տարակոյսի մէջ էին, ահա՛ լուսաւոր զգեստով երկու մարդիկ երեւցան: ⁵ Եւ երբ կիները զարհուրեցան եւ իրենց երեսը գետին խոնարհեցուցին, անոնք ըսին. «Ինչո՞ւ մեռեալներու մէջ կը փնտռէք կենդանին»: ⁶ Հոս չէ՛, յարութիւն առաւ: Յիշեցէ՛ք, ի՛նչ ըսաւ ձեզի երբ Գալիլեա էր: ⁷ Ան կ'ըսէր թէ պէտք է որ Մարդու Որդին մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի, խաչուի եւ երրորդ օրը յարութիւն առնէ»: ⁸ Եւ յիշեցին անոր խօսքերը:

⁹ Գերեզմանէն դառնալով՝ այս ամէնը պատմեցին տասնմէկ աշակերտներուն եւ բոլոր միւսներուն:

¹⁰ Այդ կիներն էին՝ Մարիամ Մագդաղենացի, Յովհաննա, Մարիամ՝ Յակոբի մայրը, եւ ուրիշներ ալ ասոնց հետ, որոնք այս բաները պատմեցին առաքեալներուն: ¹¹ Բայց այդ խօսքերը զառանցանք թուեցան անոնց եւ չէին հաւատար: ¹² Սակայն Պետրոս ելաւ, վազեց դէպի գերեզման, եւ ծռելով՝ նայեցաւ ու տեսաւ որ միայն կտաւները կային, եւ վերադարձաւ զարմացած՝ թէ ի՛նչ էր եղածը:

Եւմաւուսի աշակերտները

¹³ Անոնցմէ երկու հոգի, նոյն օրը գիւղ մը կ'երթային, որ Երուսաղէմէն հարիւր վաթսուն ասպարէզ հեռու էր, եւ կը կոչուէր Եմաւուս: ¹⁴ Անոնք իրարու հետ կը խօսէին այս բոլոր պատահած դէպքերուն վրայ: ¹⁵ Մինչ կը խօսէին ու կը վիճէին իրարու հետ՝ ինքը Յիսուս մօտեցաւ եւ սկսաւ քալել անոնց հետ: ¹⁶ Բայց անոնց աչքերը կապուած էին, որպէսզի չճանչնան զինքը: ¹⁷ Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ բանի վրայ կը վիճէիք իրարու հետ քալելու ատեն, եւ հիմա տխուր էք»:

18 Անոնցմէ մէկը, որ Կղէովպաս կը կոչուէր, պատասխան տալով ըսաւ. «Երուսաղէմի մէջ դո՞ւն միայն մնացեր ես, որ չես գիտեր թէ ինչե՛ր պատահեցան հոն այս օրերուս»:

19 «Ի՞նչ», հարցուց անոնց: Անոնք պատասխանեցին. «Նազովրեցի Յիսուսի մասին, որ մարգարէ մըն էր, գործով ու խօսքով զօրաւոր՝ Աստուծոյ եւ ամբողջ ժողովուրդին առջեւ: **20** Ինչպէ՛ս դատապարտեցին ու խաչեցին զինքը: **21** Մենք կը յուսալինք թէ ա՛ն ըլլար Իսրայէլի փրկիչը, բայց ասով հանդերձ այս երրորդ օրն է որ այս բաները պատահեցան: **22** Սակայն մեզի զարմանք պատճառեցին մերիններէն մի քանի կիներ, որ առաւօտ կանուխ գերեզման գացեր էին, **23** եւ անոր մարմինը չգտնելով՝ եկան եւ ըսին թէ հրեշտակներու տեսիլք ունեցեր են, որոնք Յիսուսի համար ըսեր են թէ ան ողջ է: **24** Մեզմէ ոմանք ալ գերեզման գացին եւ նոյնպէս գտան, ինչպէս կիները ըսած էին, բայց զինքը չտեսան»:

25 Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Ո՛վ անմիտ եւ թուլասիրտ մարդիկ, որ չէք հաւատար այն բոլոր բաներուն զոր մարգարէները խօսեցան: **26** Զէ՞ որ Քրիստոս պէտք էր այս չարչարանքները կրել ու այնպէս իր փառքին մէջ մտնել»։ **27** Եւ սկսելով Մովսէսէն ու բոլոր մարգարէներէն՝ բացատրեց անոնց ինչ որ Գիրքերուն մէջ իր մասին գրուած էր:

28 Երբ մօտեցան այն գիւղին ուր կ'երթային, Յիսուս պատճառ բերաւ թէ աւելի հեռու տեղ մը պիտի երթար: **29** Եւ անոնք պնդեցին ու ըսին. «Մեր մօ՛տ մնացիր, որովհետեւ իրիկուն է եւ մոլթն ալ կոխած է»։ Եւ ան մտաւ, անոնց հետ գիշերելու համար: **30** Երբ անոնց հետ սեղանի նստաւ՝ առաւ հացը, օրհնեց, մանրեց եւ անոնց տուաւ: **31** Անոնց աչքերը բացուեցան ու ճանչցան զինքը. բայց ինքը աներեւոյթ եղաւ: **32** Եւ սկսան իրարու ըսել. «Զէ՞ որ մեր սիրտը կը ճմլուէր ներսէն՝ երբ ճամբան կը խօսէր մեզի հետ. եւ ի՛նչպէս կը մեկնէր մեզի Գիրքերը»:

33 Եւ իսկոյն ելան ու Երուսաղէմ դարձան եւ հաւաքուած գտան տասնմէկ աշակերտները եւ անոնց ընկերները, որոնք իրենց ըսին. **34** «Տէրը ճշմարտապէս յարութիւն առած է եւ երեւցած է Սիմոնին»։ **35** Անոնք ալ պատմեցին ինչ որ իրենց պատահած է

ճամբան, եւ թէ ինչպէս ինքզինքը ծանօթացուցած է իրենց՝ հացը բեկանելու ատեն:

Յիսուս կ'երեւի առաքեալներուն

36 Եւ մինչ այսպէս կը խօսէին, ինքը Յիսուս անձամբ անոնց մէջ եկաւ, կեցաւ եւ ըսաւ անոնց. «Խաղաղութի՛ւն ձեզի, ե՛ս եմ, մի՛ վախնաք»: **37** Բայց անոնք սարսափած՝ կը վախնային ու կը համարէին ոգի մը տեսնել: **38** «Ինչո՞ւ կը խռովիք, ըսաւ անոնց, եւ ինչո՞ւ ձեր սրտին մէջ տարակոյս կը մտնէ: Տեսէ՛ք ձեռքերս եւ ոտքերս. **39** ես ի՛նքս եմ. չօշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք. որովհետեւ ոգին մարմին եւ ոսկր չունի, ինչպէս կը տեսնէ՛ք. որովհետեւ ոգին մարմին եւ ոսկր չունի, ինչպէս կը տեսնէք որ ես ունիմ»: **40** Այս ըսելով՝ ցոյց տուաւ անոնց իր ձեռքերն ու ոտքերը: **41** Եւ մինչ տալաւ չէին հաւատար ուրախութենէն եւ զարմացեր էին՝ ըսաւ անոնց. «Ուտելիք բան մը ունի՞ք հոս»: **42** Անոնք ալ խորոված ձուկի կտոր մը տուին եւ մեղրի խորիսխ: **43** Առաւ եւ կերաւ անոնց առջեւ, եւ աւելցածը անոնց տուաւ:

Յիսուսի վերջին խրատները

44 Յիսուս ըսաւ անոնց. «Ահա ինչ որ կ'ըսէի ձեզի, երբ տակաւին ձեզի հետ էի, թէ պէտք է կատարուէր այն բոլորը որ Մովսէսի Օրէնքին, Մարգարէներուն եւ Սաղմոսներուն մէջ գրուած էր իմ մասին»: **45** Այն ատեն բացաւ անոնց միտքը՝ որպէսզի հասկընան Գիրքերը: **46** Եւ ըսաւ անոնց. «Այսպէս գրուած էր, եւ այսպէս պէտք էր որ Քրիստոս չարչարուէր եւ երրորդ օրը մեռեալներէն յարութիւն առնէր, **47** եւ իր անունով ապաշխարութիւն քարոզուէր՝ մեղքերու թողութեան համար, բոլոր ազգերուն, սկսելով Երուսաղէմէն: **48** Եւ դուք ասոնց վկաներն էք: **49** Ահա ես կը զրկեմ ձեզի Հօրս աւետիսը. եւ դուք մնացէ՛ք Երուսաղէմ քաղաքը, մինչեւ որ վերէն զօրութիւն ստանաք»:

Համբարձումը

50 Եւ զանոնք տարաւ մինչեւ Բեթանիա, ու ձեռքերը բարձրացընելով՝ օրհնեց զանոնք: **51** Եւ մինչ կ'օրհնէր՝ մեկնեցաւ անոնցմէ ու երկինք վերացաւ: **52** Անոնք երկրպագութիւն ըրին Յիսուսի ու մեծ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ: **53** Միշտ տաճարն էին, կը գովէին ու կ'օրհնէին զԱստուած:

Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԽԵՏԱՐԱՆԻԶ

ԿԵԱՆՔԸ

Յովհաննէս, Առաքեալ եւ Աւետարանիչ, զաւակն էր Զերեդէ-
ոսի եւ Սողոմէի, ու եղբայրը՝ մեծն Յակոբոսի: Հայրը՝ Գալիլեա-
յի լճակին ձկնորսներէն մէկն էր. իսկ մայրը՝ Սողոմէ, այն
բարեպաշտ կիներէն էր, որոնք Յիսուսի ետեւէն կ'երթային քա-
րոզողութիւններու ատեն, եւ կը հոգային անոր պէտքերը:

Երբ օր մը, Յովհաննէս ու Յակոբոս իրենց նաւակին մէջ
նստած՝ ուռկանները կը կարկտէին, Յիսուս երկուքն ալ առաքե-
լութեան կանչեց. անոնք նաւակին մէջ թողլով իրենց հայրը՝ իս-
կոյն Յիսուսի հետեւեցան:

Յովհաննէս Յիսուսի նախասիրած աշակերտն էր, եւ Պետրոսի
ու Յակոբոսի հետ արժանի եղաւ մասնակցելու Վարդապետին
փառաւորութեան՝ Թափոր լերան վրայ, ինչպէս նաեւ հոգեվար-
քին՝ Գեթսեմանիի պարտէզին մէջ: Վերջին ընթրիքին՝ Յիսուս
թոյլ տուաւ որ Յովհաննէս գլուխը հանգչեցնէր իր կուրծքին
վրայ, եւ խաչին ոտքը՝ Յովհաննէսին յանձնեց իր ամենասուրբ
Մայրը: Համբարձումէն ետք՝ Յովհաննէս Առաքեալ ժամանակ մը
Երուսաղէմ մնաց եւ Պետրոսի հետ առաջնակարգ դեր ունեցաւ
նորածին Եկեղեցւոյ մէջ: Աւելի ուշ՝ Սամարիա գնաց, դարձեալ
Պետրոսի հետ, Սուրբ Հոգին պարգեւելու նորադարձերուն: Երբ
Պօղոս Առաքեալ երկրորդ անգամ Երուսաղէմ եկաւ՝ հոն էր նա-
եւ Յովհաննէս, Եկեղեցւոյ իսկական սիւներէն մէկը:

Նոր Կտակարանի տուած այս տեղեկութիւններէն զատ՝ կան
առաքելական Հայրերու վկայութիւնները, որոնց համաձայն՝
Յովհաննէս քարոզած է Փոքր Ասիա եւ կառավարած է Եփեսոսի
եկեղեցին, ուր գրեթէ հարիւր տարեկան հասակին մեռած է, Տրայ-
իանոսի կայսրութեան (98-117) առաջին տարիներուն:

ԱՒԵՏԱՐԱՆԸ

Չորրորդ Աւետարանին հեղինակն է Յովհաննէս Առաքեալ: Բազմաթիւ են վկաները քրիստոնէութեան առաջին շրջանէն, Ս. Երանոս, Հիպպոլիտոս, Կղեմէս Աղեքսանդրացի: Իսկ ասոնցմէ առաջ՝ Յովհաննէսի Աւետարանէն մէջըբերումներ ըրած են Ս. Իգնատիոս, Պապիրաս, Պողիկարպոս, Յուստինոս, եւն.:

Աւետարանի գրութեան թուականը որոշ չենք գիտեր, բայց ընդհանուր կարծիքն է՝ որ 90-100 թուականին գրուած ըլլայ, Եփեսոսի մէջ, յունարէն:

ՆՊԱՏԱԿԸ

Քրիստոսի աստուածութեան ջատագովութիւն մըն է՝ ընդդէմ Գնոստիկեան աղանդաւորներուն, որոնք կ'ուրանային Քրիստոսի աստուածութիւնը եւ կը ջանային խաթարել անոր վարդապետութիւնը:

Յովհաննէս Աւետարանիչ ուզած չէ կրկնել ինչ որ Մատթէոս, Մարկոս եւ Ղուկաս ըսած կամ պատմած են, այլ՝ արծուօրէն սաւառնելով, բարձրացած է մինչեւ երկնաւոր Հօր ծոցը, տեսնելու հոն՝ ծնունդը յաւիտեանական Բանին, որ հաւասար է Հօր, որ արարիչ է ամէն բանի, կեանք է, ճանապարհ, ճշմարտութիւն եւ լոյս՝ համօրէն մարդկութեան, աղբիւր ամէն շնորհքի եւ յոյս յարուածեան:

Այս բոլորը կ'աւանդէ Յովհաննէս՝ իբրեւ գերբնական իրականութիւն, հաստատուած Քրիստոսի խօսքերուն եւ գործերուն վրայ, ոչ թէ իբրեւ լոկ աստուածաբանական ճառեր՝ իր կողմէն խմբագրուած, ինչպէս դիտել կու տայ Ս. Գրքի Յանձնաժողովը, իր 1907 Մայիս 29-ի վճիռով:

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ս. Յովհաննէսի Աւետարանը կը բաժնուի չորս մասերու.

Նախաբան - Ծնունդ յաւիտեանական Բանին (1, 1 - 18):

Ա. Մաս - Յիսուս կը յայտնէ իր աստուածութիւնը եւ փառքը. Յովհաննէս Մկրտիչ - Առաջին աշակերտները - Հակաճառութիւններ - Առականեր եւ հրաշքներ - Դարձեր. (1, 19 - 11):

Բ. Մաս - Յիսուս ինքզինքը կը յայտնէ աշակերտներուն. Բեթանիա - Յաղթական մուտք Երուսաղէմ - Ընթրիքի ճառը - Վերջին աղօթքը. (12 - 17):

Գ. Մաս - Յիսուսի չարչարանքները եւ մահը (18 - 19):

Դ. Մաս - Յիսուսի յարուցելը եւ երեւումները. Յիսուս կ'երեւալ - նայ Մարիամ Մագդաղենացիին - Թովմասի անհաւատութիւնը - Պետրոսի գլխաւորութիւնը. (20 - 21):

ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆ

LUS

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Ծնունդ Բանին ի յաւիտեանից

1 **1** Սկիզբը՝ Բանը կար, եւ Բանը Աստուծոյ քով էր, եւ Բանը Աստուած էր: **2** Ան սկիզբէն Աստուծոյ քովն էր: **3** Ամէն ինչ անով եղած է, եւ գոյութիւն ունեցող բաներէն ոչ մէկը առանց անոր եղած է: **4** Կեանքը անոր մէջ էր եւ կեանքը մարդերու լոյսն էր: **5** Լոյսը խաւարին մէջ կը լուսաւորէ, բայց խաւարը չըմբռնեց զայն:

6 Աստուծմէ զրկուած մարդ մը կար, որուն անունն էր՝ Յովհաննէս: **7** Անիկա վկայութիւն տալու եկաւ, որ լոյսին համար վկայէ, որպէսզի ամէնքը իրմով հաւատան: **8** Ինքը չէր լոյսը, այլ՝ եկած էր լոյսին համար վկայելու:

9 Ճշմարիտ լոյսը այն է՝ որ կը լուսաւորէ ամէն մարդ որ աշխարհ կու գայ: **10** Աշխարհի մէջ էր եւ աշխարհ անով եղած էր. բայց աշխարհը չճանչցաւ զայն: **11** Իրեններուն եկաւ եւ իրենները

Գլ.1, 1-13 – Նախաբանը ներշնչուած խորհրդածութիւն մըն է Աստուծոյ Որդւոյն յաւիտեական եւութեան, անոր՝ աշխարհի հետ ունեցած աղերսին եւ մարդկութիւնը փրկելու համար երկրի վրայ անոր երեւնալուն շուրջ: Աւետարանիչը «Բան» (LOGOS) կ'անուանէ զայն: Այս անուանակոչութիւնը իր հիմն ունի արդէն Հին Կտակարանի Իմաստութեան գիրքերուն մէջ, գ. օր. Առակաց 8. 11-36, Սիր. 24. 5-16: Այս անունը կը գտնուի նաեւ յունական փիլիսոփայութեան մէջ, ուր, այդ անունով, կը բնորոշուի տիեզերական Միտքը: Յովհաննէս սակայն այդ բառը կը գործածէ, որպէս զի հեթանոս փիլիսոփաներու «Բան»ի թիւր ու մոլար վարդապետութեան հակադրէ քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը: Ան՝ իր այս վսեմ նախաբանով կը բացատրէ «Բան»ին աղերսը Աստուծոյ եւ մարդոց հանդէպ (1-5), անոր տեսանելի երեւումը երկրի վրայ (6-13), անոր աստուածային փառքն ու շնորհներուն պարգեւները (14-18):

չընդունեցան զինքը: **12** Իսկ անոնք որ ընդունեցան զինքը՝ իշխանութիւն տուաւ անոնց՝ ըլլալու Աստուծոյ որդիներ, որ կը հաւատան իր անունին: **13** Որոնք ո՛չ արիւնէ, ո՛չ մարմնի կամքէն, ո՛չ մարդու կամքէն, այլ՝ Աստուծմէ ծնան: **14** Եւ Բանը մարմին եղաւ եւ բնակեցաւ մեր մէջ. եւ մենք տեսանք անոր փառքը, փառք՝ զոր Միածինը կ'ընդունի Հօրմէն, լի շնորհքով եւ ճշմարտութեամբ:

15 Յովհաննէս վկայեց անոր մասին, աղաղակեց եւ ըսաւ. «Ասիկա՛ է որուն համար կ'ըսէի. Այն որ ինծմէ ետք պիտի գայ՝ ինծմէ առաջ անցաւ, որովհետեւ ինծմէ առաջ կար»: **16** Եւ մենք ամէնքս անոր լիութենէն ընդունեցանք շնորհք շնորհքի վրայ: **17** Որովհետեւ Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, իսկ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ եկան: **18** Ոչ ոք տեսած է երբեք զԱստուած, բայց Միածին Որդին միայն՝ որ Հօր ծոցն է, ա՛ն յայտնեց:

Յովհաննէս Մկրտիչի վկայութիւնը

19 Եւ այս է վկայութիւնը զոր տուաւ Յովհաննէս, երբ Հրեաները Երուսաղէմէն քահանաներ ու Ղեկապետներ ղրկեցին, որ հարցնեն՝ թէ «Դուք ո՞վ ես»: **20** Ան խոստովանեցաւ եւ չուրացաւ, խոստովանեցաւ թէ՛ «Ես չե՛մ Քրիստոսը»: **21** Հարցուցին անոր. «Հապա դուք ո՞վ ես, Եղիա՞ն ես»: Ան ըսաւ. «Ո՛չ»: «Մարգարէ՞ն ես»: «Ո՛չ», պատասխանեց: **22** Այն ատեն ըսին անոր. «Ո՞վ ես, որ պէսզի մեզ ղրկողներուն պատասխան տանք. ի՞նչ կ'ըսես դուք քեզի համար»: **23** Ան ըսաւ. «Ես ձայնն եմ անոր որ կը գոչէ անապատին մէջ. Հարթեցի՛ք Տիրոջ մանապարհը, ինչպէս ըսաւ Եսայի մարգարէն»: **24** Անոնք որ ղրկուած էին, փարիսեցիներ էին: **25** Հարցուցին իրեն. «Ուրեմն ինչո՞ւ կը մկրտես, եթէ դուք չես Քրիստոսը, ո՛չ Եղիան եւ ո՛չ ալ մարգարէն»: **26** Յովհաննէս պատասխանեց եւ ըսաւ. «Ես ձեզ կը մկրտեմ ջուրով: Ձեր մէջ կայ մէկը զոր դուք չէք ճանչնար. **27** ան իմ ետեւէս կու գայ, եւ ես անոր կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ»:

28 Ասիկա պատահեցաւ Բեթանիայի մէջ, Յորդանանի միւս կողմը, ուր կը գտնուէր Յովհաննէս եւ կը մկրտէր: **29** Հետեւեալ

օրը, Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ իրեն կու գար, եւ ըսաւ. «Ահա՛ Աստուծոյ Գառնուկը, որ վրան կ'առնէ աշխարհի մեղքերը: **30** Ա՛ս է որուն համար կ'ըսէի թէ իմ ետեւէս կու գայ մարդ մը՝ որ ինծմէ առաջ անցաւ, որովհետեւ ինծմէ առաջ էր: **31** Ես չէի ճանչնար զինքը, բայց եկայ ջուրով մկրտելու, որպէսզի անիկա յայտնուի Իսրայէլին»: **32** Յովհաննէս վկայեց եւ ըսաւ. «Տեսայ Հոգին, որ աղաւնիի նման կ'իջնէր երկինքէն եւ կը հանգչէր անոր վրայ: **33** Ես չէի ճանչնար զինքը, բայց անիկա որ զրկեց զիս ջուրով մկրտելու՝ ըսաւ ինծի. Այն՝ որո՛ւն վրայ պիտի տեսնես որ Հոգին կ'իջնէ ու կը հանգչի, ա՛ն է որ կը մկրտէ Սուրբ Հոգիով: **34** Եւ ես տեսայ ու վկայեցի թէ ասիկա է Աստուծոյ Որդին»:

Յիսուսի առաջին աշակերտները

35 Յաջորդ օրը, Յովհաննէս դարձեալ հոն էր, եւ իրեն հետ՝ աշակերտներէն երկու հոգի: **36** Եւ նայելով Յիսուսին որ կ'անցնէր, ըսաւ. «Ահա՛ Քրիստոսը, Աստուծոյ Գառնուկը»: **37** Երկու աշակերտները լսեցին այս խօսքերը եւ Յիսուսին ետեւէն գացին: **38** Յիսուս, ետ դառնալով՝ տեսաւ զանոնք, որ իրեն կը հետեւէին, եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք»: Անոնք պատասխանեցին. «Ռա՛բբի, որ կը նշանակէ Վարդապետ, ո՞ւր է քու բնակարանդ»: **39** Ան ըսաւ անոնց. «Եկէ՛ք տեսէք»: Գացին եւ տեսան ուր կը բնակէր. եւ այդ օրը անոր քով մնացին, որովհետեւ չուրջ տասներորդ ժամն էր:

40 Անդրէաս, Սիմոն Պետրոսի եղբայրը, մէկն էր այն երկուքէն որ, Յովհաննէսի խօսքերը լսելով՝ Յիսուսի ետեւէն գացած էին: **41** Անիկա, առտու կանուխ գտաւ իր եղբայրը՝ Սիմոնը, եւ ըսաւ անոր. «Գտա՛նք Մեսիան, որ կը նշանակէ Քրիստոս»: **42** Եւ տարաւ զայն Յիսուսին քով: Յիսուս, անոր նայելով՝ ըսաւ. «Դուն Սիմոնն ես, Յովնանի որդին. դուն պիտի կոչուիս Կեփաս, որ կը նշանակէ Պետրոս»:

42 – Կեփաս, ասորերէն բառ մը (Képha), որ կը նշանակէ քար կամ ժայռ. (յն. Petros):

43 Հետեւեալ օրը, Յիսուս ուզեց Գալիլեա երթալ. եւ հանդիպելով Փիլիպպոսին՝ ըսաւ անոր. «Հետեւէ՛ ինծի»: **44** Փիլիպպոս Բեթսայիդայէն էր, Անդրէասի եւ Պետրոսի քաղաքէն: **45** Փիլիպպոս հանդիպեցաւ Նաթանայէլին, եւ ըսաւ անոր. «Գտանք Յիսուսը, Յովսէփի որդին, Նազարեթէն, որուն մասին Մովսէս գրած է Օրէնքին մէջ, ինչպէս նաեւ մարգարէները»: **46** Նաթանայէլ պատասխանեց. «Կարելի՞ է որ Նազարեթէն բարի բան մը ելլէ»: Փիլիպպոս ըսաւ. «Եկո՛ւր եւ տես»: **47** Յիսուս, երբ տեսաւ Նաթանայէլը որ դէպի իրեն կու գար՝ ըսաւ անոր մասին. «Ահա՛ ճշմարիտ Իսրայէլացի մը՝ որուն մէջ նենգութիւն չկայ»: **48** Նաթանայէլ հարցուց. «Ուրկէ՞ կը ճանչնաս զիս»: Յիսուս պատասխանեց. «Փիլիպպոս քեզ չէր կանչած տակաւին, երբ տեսայ քեզ թզենիին տակ»: **49** Նաթանայէլ պատասխանեց. «Ու՛րբի, դո՛ւն ես Աստուծոյ Որդին, դո՛ւն ես Իսրայէլի թագաւորը»: **50** Յիսուս պատասխանեց անոր. «Դուն կը հաւատաս՝ որովհետեւ քեզի ըսի թէ թզենիին տա՞կ տեսայ. ասկէ շատ աւելի մեծ բաներ պիտի տեսնես»: **51** Եւ ըսաւ անոր. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակները որ կ'ելլեն ու կ'իջնեն Մարդու Որդիին վրայ»:

Կանայի հարսանիքը

2 **1** Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանա քաղաքին մէջ. Յիսուսի մայրն ալ հոն էր: **2** Հարսանիքին հրաւիրւած էին Յիսուս եւ իր աշակերտները: **3** Երբ գինին պակսեցաւ՝ մայրը ըսաւ Յիսուսին. «Գինի չունին»: **4** Յիսուս պատասխանեց անոր. «Ո՛վ կ'ին, ի՞նչ կ'ուզես ինծմէ. ժամանակս դեռ չէ՛ հասած»: **5** Մայրը սպասաւորներուն ըսաւ. «Ի՛նչ որ ըսէ ձեզի՛, րը՛՛ք»:

Գլ. 2, 4 – Գրաբար թարգմանութեան «Զի՞ կայ իմ եւ քո» խօսքը բառացի թարգմանութիւնն է եբրայական շատ սովորական մէկ ասացուածքին, որուն բանաձևը թարգմանութիւնն է՝ ինծի ու քեզի ի՞նչ, այսինքն՝ «մեզի ի՞նչ կը վերաբերի այդ բանը»: Ասոր համագոր իմաստը գործածած է Ս. Ղուկաս, 4. 34,

6 Այնտեղ կային քարէ վեց սափորներ, որ սահմանուած էին Հրեաներու լուացումներուն, եւ որոնցմէ իւրաքանչիւրը երկու կամ երեք մար տարողութիւն ունէր: **7** Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Սափորները լեցուցէ՛ք ջուրով»: Եւ մինչեւ բերանը լեցուցին զանոնք: **8** Ապա ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին»: Եւ անոնք տարին: **9** Սեղանապետը, հազիւ ճաշակեց ջուրը որ գինի դարձած էր, եւ չէր գիտեր թէ ուրկէ էր ատիկա, թէպէտ սպասաւորները որ ջուրը լեցուցին՝ գիտէին, խօսեցաւ փեսային հետ ու ըսաւ. **10** «Ամէն մարդ նախ անոյշ գինին կը հրամցնէ, եւ երբ արբեանան՝ ա՛յն ատեն յոռին կու տայ. դուն անոյշ գինին պահեցիր մինչեւ հիմա⁶»: **11** Այս եղաւ սկիզբը հրաշքներուն զորս ըրաւ Յիսուս Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, եւ անով յայտնեց իր փառքը. եւ աշակերտները հաւատացին իրեն: **12** Անկէ ետք Յիսուս Կափառնաուժ իջաւ. մայրը, եղբայրները եւ աշակերտներն ալ իրեն հետ. եւ քանի մը օր հոն մնացին:

Տաճարին մաքրագործումը

13 Հրեաներու Զատիկը մօտ ըլլալով՝ Յիսուս Երուսաղէմ ելաւ, **14** ու տաճարին մէջ գտաւ արջառ, ոչխար եւ աղաւնի ծախողներ

«թուլացո՛ւ» (թո՛ղ տուր) բայով: – Գալով «Կին» բառին, գոր Յիսուս կը գործածէ Մարիամի հետ խօսած ատեն, ծանօթ է թէ յոյներն ու բոլոր արեւելիքիները կը կիրարկէին գայն իրենցմէ ամէնէն անկի յարգուած անձնաւորութիւններու համար: Կրնայ ըլլալ ուրեմն, որ յարգանքի կից խանդակաթ սիրոյ արտայայտութիւն մը եղած ըլլայ անոնց քով այդ բառը՝ «Տիրուհի» բառին համագոր: – «Իմ ժամանակս դեռ չէ հասած» խօսքովը Յիսուս հասկցնել կ’ուզէ, որ հո՛ւ, Կանայի մէջ, հրաշք գործելու ժամանակը դեռ եկած չէ, թէւ բացառութիւն ընելով, որոշեալ ժամանակէն առաջ, հրաշք մը կը գործէ հոն: Սյս ժամանակը սակայն պայմանաւոր էր եւ կրնար կարելոր պատճառի մը համար, ինչպէս էր հոս, Մարիամի բարեխօսութեամբը, փոխուիլ. իրօք ալ, Աստուածամօր բարեխօսութեամբը ժամանակակէտը փոխուած ու որոշեալ ժամէն առաջ հրաշքը գործուած էր:

6 – Սովորութիւն ունէին Հրեաները ամէն ցաշէ առաջ իրենց ձեռքներն ու ամանները լուալու: – «Մար»ը արեւելեան չափ մը՝ 35-40 լիտր տարողութեամբ:

12 – Յիսուսի եղբայրներն էին իր հօրեղբորորդիները: Երբայական սովորութեան համաձայն, բոլոր մերձաւոր ազգականները եղբայր կ’անուանէին զիրար:

եւ լուծալափոխներ, որ հոն նստած էին: **15** Պարանով խարազան մը շինեց եւ ամէնքը տաճարէն վռնտեց, ոչխարներով, արջառներով միասին. լուծալափոխներու դրամները ցրուեց եւ սեղանները կործանեց: **16** Իսկ աղաւնի ծախողներուն ըսաւ. «Վերցուցէ՛ք ատոնք ասկէ եւ Հօրս տունը շուկայ մի՛ դարձնէք»: **17** Այն ատեն աշակերտները յիշեցին՝ թէ գրուած է «Քու տանդ նախանձը պիտի ուտէ զիս»:

18 Հրեաները հարցուցին. «Ի՞նչ նշան կրնաս տալ մեզի՝ թէ իրաւունք ունիս այդ բաները ընելու»: **19** Յիսուս պատասխանեց. «Քաղցէ՛ք այդ տաճարը եւ ես երեք օրէն կը շինեմ զայն»: **20** Հրեաները ըսին. «Այս տաճարը քառասունվեց տարիէն շինուեցաւ, եւ դուն երե՞ք օրէն պիտի շինես զայն»: **21** Բայց անիկա իր մարմինին տաճարին համար կ'ըսէր: **22** Եւ երբ մեռեալներէն յորութիւն առաւ՝ աշակերտները յիշեցին թէ ա՛յս էր որո՞ւ մասին կը խօսէր. եւ հաւատացին Գիրքին եւ Յիսուսին ըսած խօսքին:

Քրիստոսի առաջին Ձատիկը

23 Երբ Յիսուս Ձատիկ տօնին Երուսաղէմ կը գտնուէր, չատեր տեսներով անոր ըրած հրաշքները՝ հաւատացին իր անունին: **24** Բայց Յիսուս ինքզինքը չէր վստահեր անոնց, որովհետեւ ամէնքն ալ կը ճանչնար. **25** եւ պէտք չունէր որ ոեւէ մէկը վկայութիւն տար մարդուն մասին, որովհետեւ ինքը գիտէր թէ ի՞նչ կայ մարդուն ներսը:

Յիսուս՝ Նիկողոմոսին հետ

3 **1** Փարիսեցիներու մէջ մարդ մը կար, հրեայ իշխան մը՝ Նիկողեմոս անունով: **2** Անիկա գիշեր մը Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր. «Ռա՛բբի, մենք գիտենք որ դուն Աստուծոյ կողմէն եկած ես իբրեւ Վարդապետ, որովհետեւ ո՛չ ոք կրնայ ընել

Գլ. 3, 1 – Հրեայ իշխանը Սենեդրիոնի՝ Հրեաներու գերագոյն ատեանի անդամներէն մէկն էր:

քու գործած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»։ **3** Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»։

4 Նիկողեմոս ըսաւ. «Ի՞նչպէս կրնայ մարդ ծնիլ, երբ արդէն ծեր է. կարելի՞ բան է որ մարդ կրկին մօրը որովայնը մտնէ եւ ծնի»։ **5** «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պատասխանեց Յիսուս, եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել։ **6** Որովհետեւ մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Հոգիէն ծնածը՝ հոգի։ **7** Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիլ։ **8** Որովհետեւ հովը կը փչէ ո՛ւր որ ուզէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր՝ թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ. նոյնպէս են ամէն անոնք, որ Հոգիէն ծնած են»։ **9** Նիկողեմոս հարցուց. «Ի՞նչպէս կրնայ ըլլալ ատրկա»։

10 Յիսուս ըսաւ. «Դուն Իսրայէլի վարդապետ ես, եւ չե՞ս գիտեր այդ բաները։ **11** Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, մենք, ինչ որ գիտենք՝ ա՛յդ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ ա՛յդ կը վկայենք. բայց դուք մեր վկայութիւնը չէք ընդունիր։ **12** Եթէ երկրաւոր բաներ ըսի ձեզի եւ չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք՝ եթէ երկնաւոր բաներ ըսեմ։ **13** Ո՛չ ոք երկինք ելած է, բայց միայն անիկա՝ որ երկինքէն իջաւ, Մարդու Որդին, որ երկինքն է։ **14** Եւ ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, նոյնպէս պէտք է բարձրանայ Մարդու Որդին. **15** Որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ ընդունի յաւիտեանական կեանքը»։

16 Որովհետեւ Աստուած այնպէ՛ս սիրեց աշխարհը՝ որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ. որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտեանական կեանքը։ **17** Որովհետեւ Աստուած իր Որդին չորկեց աշխարհ՝ որ աշխարհը դատէ, այլ որպէսզի անով փրկուի աշխարհը։ **18** Ո՛վ որ հաւատայ անոր՝ պիտի

3 – Յիսուս նախ կը բացատրէ Նիկողեմոսի արքայութիւն մտնել կարենալու պայմանները (1-12), եւ յետոյ կը ծանօթացնէ իր անձն ու իր առաքելութիւնը (13-21)։

չդատապարտուի: Իսկ ո՛վ որ չհաւատայ՝ արդէն իսկ դատապարտւած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ Միածին Որդիին անունին:

19 Եւ այս է դատաստանը. Լոյսը աշխարհ եկաւ, եւ մարդիկ խաւարը աւելի սիրեցին՝ քան լոյսը, որովհետեւ իրենց գործերը չար էին: **20** Որովհետեւ ով որ չար կը գործէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի մօտենար, որպէսզի իր գործերը չյայտնուին: **21** Իսկ ով որ ճշմարտութիւնը կը գործադրէ՝ լոյսին կ'ու գայ, որպէսզի յայտանի ըլլան իր գործերը՝ թէ Աստուծոմով գործուած են:

Յովհաննէսի վերջին վկայութիւնը

22 Անկէ ետք, Յիսուս իր աշակերտներով Հրէաստան գնաց եւ հոն կը շրջէր անոնց հետ ու կը մկրտէր:

23 Յովհաննէս ալ կը մկրտէր Յայենոնի մէջ, Սաղիմի մօտ, որովհետեւ առատ ջուրեր կային հոն, եւ կ'ու գային ու կը մկրտուէին: **24** Այն ատեն Յովհաննէս դեռ բանտ դրուած չէր:

25 Վէճ մը ծագեցաւ Յովհաննէսի աշակերտներուն եւ Հրեայի մը միջեւ, լուացումներու մասին: **26** Աշակերտները Յովհաննէսին մօտ եկան ու ըսին. «Ռաբբի՛, այն որ քեզի հետ էր Յորդանանի միւս կողմը, որուն մասին դուն վկայեցիր, ահա ա՛յն ալ կը մկրտէ եւ ամէնքը անոր կ'երթան»: **27** Յովհաննէս պատասխանեց. «Մարդը չի կրնար ինքնիրմէ բան մը ընել՝ եթէ երկինքէն տրուած չըլլայ իրեն: **28** Դուք իսկ կը վկայէք ինծի՝ որ ըսի ձեզի թէ ես չեմ Քրիստոսը, այլ՝ անոր առջեւէն զրկուածն եմ: **29** Ո՛վ որ ունի հարսը՝ ա՛յն է փեսան. իսկ փեսային բարեկամը, որ կեցած մօտիկ կ'ընէ անոր, ուրախութեամբ կը հրճուի փեսային ձայնը լսելով. արդ,

22 – Ըստ Գլ. 4, 2ի, Յիսուս ինք անձամբ չէր մկրտէր, հապա իր աշակերտներուն ձեռքով: Աս սակայն լոկ պատրաստութիւն մըն էր մկրտութեան:

25 «Մաքրութիւն» բառը գործածուած է հոս մկրտութեան տեղ: Բանալիէն առարկան սա՛ է թէ արդեօք Յովհաննէսի՞ մկրտութիւնը, թէ՛ Յիսուսինը աւելի մեծ զօրութիւն ունի մաքրելու:

այս ուրախութիւնը որ իմս է՝ կատարեալ է: **30** Ա՛ն պէտք է աճի, եւ ես նուազիմ:

31 Այն որ վերէն կու գայ՝ վեր է ամէնէն. ով որ երկրէն կու գայ՝ երկրաւոր է եւ երկրի մասին կը խօսի: **32** Այն որ երկնքէն կու գայ՝ վեր է ամէնէն, եւ կը վկայէ ինչ որ տեսաւ ու լսեց. բայց անոր վկայութիւնը ոչ ոք կ'ընդունի: **33** Ով որ ընդունի անոր վկայութիւնը՝ կը հաստատէ թէ Աստուած ճշմարիտ է: **34** Որովհետեւ այն որ Աստուծոյ զրկուած է՝ Աստուծոյ խօսքը կը խօսի, որովհետեւ Աստուած չափով չի տար Հոգին: **35** Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան անոր ձեռքը յանձնած է: **36** Ով որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտեական կեանք ունի. եւ ով որ մերժէ հաւատալ Որդիին՝ անիկա պիտի չտեսնէ կեանքը, այլ Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ պիտի մնայ:

Յիսուս եւ Սամարացի կիներ

4 **1** Երբ Յիսուս իմացաւ որ փարիսեցիները լսած էին՝ թէ ինքը շատ աւելի աշակերտներ կ'ընէ եւ կը մկրտէ քան Յովհաննէսը, **2** - թէեւ Յիսուս ինքը անձամբ չէր մկրտեր, այլ՝ իր աշակերտները - **3** թողուց Հրէաստանը եւ դարձեալ Գալիլեա եկաւ: **4** Եւ ստիպուեցաւ Սամարիայէն անցնիլ: **5** Ու եկաւ Սամարիայի մէկ քաղաքը, որուն անունը Սիւքար էր, մօտ այն գիւղին գոր Յակոբ տուած էր իր որդիին՝ Յովսէփին: **6** Հոն կար Յակոբի ջրհորը. եւ Յիսուս, ճամբորդութենէն յոգնած՝ նստաւ ջրհորին եզերքը. շուրջ վեցերորդ ժամն էր:

7 Սամարիայէն կիւն մը եկաւ ջուր հանելու: Յիսուս ըսաւ անոր. «Ջուր տուր ինծի որ խմեմ». **8** որովհետեւ աշակերտները քաղաք գացեր էին՝ կերակուր գնելու: **9** Սամարացի կիներ պատասխանեց, «Դուն որ Հրեայ ես, ի՞նչպէս ինծմէ՝ Սամարացի կնոջմէ մը, ջուր

Գլ. 4, 9 – Բաբելոնի գերութենէն ետք, կէս հեթանոս ու խառնարիւն Սամարացիները Հրեաներու հետ կրօնական հաղորդակցութենէ մերժուած ըլլալով՝ քշմամուծիւն առաջ եկած էր իրենց միջեւ:

կ'ուզես»․ քանի որ Հրեաները Սամարացիներուն հետ բնաւ յարաբերութիւն չունին: **10** Յիսուս պատասխանեց․ «Եթէ դուն գիտնալիր Աստուծոյ պարգեւը, եւ թէ ո՛վ է որ քեզի կ'ըսէ՝ Զուր տուր ինծի, գուցէ դո՛ւն անկէ խնդրէիր եւ ան քեզի տար կենդանի ջուրը»:

11 «Տէ՛ր, ըսաւ կինը, դուն դոյլ անգամ չունիս եւ այս ջրհորը խոր է․ ուրեմն դուն ի՞նչպէս կենդանի ջուրը ունիս: **12** Միթէ աւելի մե՞ծ ես քան մեր հայրը՝ Յակոբ, որ այս ջրհորը մեզի տուաւ․ ինքը ասկէ խմեց, ինչպէս նաեւ իր որդիներն ու ոչխարները»:

13 Յիսուս պատասխանեց․ «Ո՛վ որ այդ ջուրէն խմէ՝ դարձեալ կը ծարաւնայ․ բայց ով որ խմէ այն ջուրէն զոր ես պիտի տամ, յաւիտեան պիտի չծարաւնայ․ **14** եւ ջուրը զոր ես պիտի տամ անոր՝ պիտի դառնայ յաւիտեանական կեանքին համար հոսող ջուրի աղբիւր»:

15 «Տէ՛ր, ըսաւ կինը, տո՛ւր ինծի այդ ջուրէն, որ չծարաւնամ ու նորէն հոս չգամ ջուր հանելու»։ **16** «Գնա՛, ամուսինդ կանչէ, ըսաւ Յիսուս, եւ հոս եկուր»։ **17** «Ամուսին չունիմ», պատասխանեց կինը։ **18** «Լա՛ւ ըսիր, աւելցուց Յիսուս, թէ ամուսին չունիմ։ Որովհետեւ հինգ ամուսին փոխած ես, եւ այն որ հիմա ունիս՝ քու ամուսինդ չէ․ այդ խօսքը ճի՛շտ ըսիր»։ **19** «Տէ՛ր, ըսաւ կինը, կը տեսնեմ որ դուն մարգարէ ես։ **20** Մեր հայրերը այս լերան վրայ երկրպագութիւն ըրին, իսկ դուք կ'ըսէք թէ միայն Երուսաղէմ է այն տեղը ուր պէտք է երկրպագութիւն ընել»։

21 Յիսուս պատասխանեց․ «Հաւատա՛ ինծի, ո՛վ կին, որ ժամանակ պիտի գայ՝ երբ ո՛չ այս լերան վրայ եւ ո՛չ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընեն Հօր։ **22** Դուք երկրպագութիւն կ'ընէք անոր՝ զոր չէք ճանչնար․ մենք երկրպագութիւն կ'ընենք անոր՝ զոր կը ճանչնանք, որովհետեւ փրկութիւնը Հրեաներէն կու գայ։ **23** Բայց պիտի գայ ժամանակ, եւ արդէն իսկ եկած է, որ

10 – «Կենդանի» ջուրը սամարացի կնոջ բերնին մէջ հոսուն աղբիւր կը նշանակէ, իսկ Փրկչին բերնին մէջ՝ աստուածային նշմարտութեան ու շնորհքին ջուրը:

23 – Աստուծոյ երկրպագութեան մոր պաշտօնը, այլեւս որոշ տեղույ մը

ճշմարիտ երկրպագուները երկրպագութիւն պիտի ընեն Հօր՝ հոգիով եւ ճշմարտութեամբ. որովհետեւ Հայրը այսպիսի երկրպագուներ կ'ուզէ:

24 Հոգի է Աստուած եւ անոր երկրպագուները պէտք է հոգիով եւ ճշմարտութեամբ երկրպագեն»: **25** Կինը ըսաւ անոր. «Գիտեմ որ Մեսիան, այսինքն՝ Քրիստոսը, պիտի գայ. երբ ան գայ՝ ամէն բան պիտի սորվեցնէ մեզի»: **26** Յիսուս պատասխանեց. «Անիկա ե՛ս եմ, որ քեզի հետ կը խօսիմ»: **27** Այս խօսքին վրայ՝ անոր աշակերտները եկան. եւ զարմացան որ կնոջ մը հետ կը խօսէր, բայց անոնցմէ ոչ մէկը ըսաւ՝ թէ ի՛նչ կ'ուզես, կամ ի՛նչ կը խօսիս ատոր հետ: **28** Կինը թողուց սափորը եւ քաղաք երթալով՝ ժողովուրդին ըսաւ. **29** «Եկէ՛ք, տեսէ՛ք մարդ մը, որ պատմեց ինծի ինչ որ ըրած եմ. արդեօք ա՞ն է Քրիստոսը»: **30** Եւ քաղաքէն ելլելով՝ անոր քով կու գային:

31 Մինչ այդ՝ աշակերտներ կ'աղաչէին ու կ'ըսէին. «Ռա՛բբի, հաց կեր»: **32** Յիսուս պատասխանեց. «Ես ուտելիք կերակուր մը ունիմ զոր դուք չէք գիտեր»: **33** Աշակերտները իրարու կը հարցնէին. «Արդեօք մէկը ուտելիք բան մը բերա՞ւ իրեն»: **34** Յիսուս ըսաւ անոնց. «Իմ կերակուրս ա՛յն է՝ որ գործադրեմ կամքն անոր որ զիս զրկեց, ու կատարեմ անոր գործերը: **35** Չէ՞ որ դուք կ'ըսէք՝ թէ չորս ամիսէն հունձքը կը հասնի. լաւ ուրեմն, ես կ'ըսեմ ձեզի. բարձրացուցէ՛ք ձեր աչքերը եւ տեսէ՛ք արտերը, որ արդէն սպիտակացած են եւ հունձքի հասած: **36** Հնձողը իր վարձքը կ'առնէ եւ պտուղը կը հաւաքէ յաւիտենական կեանքին համար. այնպէս որ սերմանողն ու հնձողը միասին կ'ուրախանան: **37** Որովհետեւ հոս կը յարմարի այն առածը՝ թէ ուրիշ մէկն է սերմանողը եւ ուրիշ՝ հնձողը: **38** Ես զրկեցի ձեզ հնձելու՝ այն ինչ որ ձեզի աշխա-

կապուած չէ, ինչպէս էր Հիմ Ուիտի մէջ, հապա ան՝ ամէն բանէ առաջ ներքին է ու հոգեւոր, համապատասխան Աստուծոյ հոգեկան էութեան:

35 – Մինչ տակաւին չորս ամիս պէտք էր հունձֆի հասուննալուն, Սամարացիները, որոնք ծարաւի էին իրենց հոգիին փրկութեան, հասուն ու պատրաստ էին հոգեւոր հունձֆի՝ Մեսիական թագաւորութեան: Այս հունձքը քիչ յետոյ առաքելները պիտի քաղէին (Գործ. 8, 4-17):

տանք չէր արժած․ ուրիշներ աշխատեցան, եւ դուք անոնց աշխատանքէն օգտուեցաք»:

39 Եւ Սամարացիներու այդ քաղաքէն շատեր հաւատացին անոր, խօսքին վրայ այդ կնոջ՝ որ կը վկայէր թէ բոլոր ըրածներս պատմեց ինծի: **40** Երբ Սամարացիները եկան Յիսուսին մօտ՝ աղաչեցին որ իրենց քով մնայ․ եւ ան երկու օր մնաց: **41** Եւ դեռ շատեր հաւատացին Յիսուսին՝ իր խօսքին համար: Եւ կ'ըսէին կնոջ. **42** «Այլեւս քու խօսքերուդ համար չէ՛ որ կը հաւատանք, այլ՝ որովհետեւ մենք անձամբ լսեցինք անկէ, եւ համոզուած ենք՝ թէ ասն է ճշմարտապէս աշխարհի փրկիչը»:

Թագաւորագնին բժշկութիւնը

43 Երկու օր ետք, անկէ մեկնեցաւ եւ գնաց Գալիլեա: **44** Որովհետեւ Յիսուս ինքը վկայեց՝ թէ մարգարէն յարգանք չի վայելեր իր գաւառին մէջ: **45** Երբ Գալիլեա հասաւ, Գալիլեացիները ընդունեցան զինքը, որովհետեւ տօնի ժամանակ տեսած էին բոլոր հրաշքները զորս գործած էր Երուսաղէմի մէջ․ որովհետեւ իրենք ալ գացած էին տօնին:

46 Յիսուս դարձեալ եկաւ Գալիլեայի Կանա քաղաքը, ուր ջուրը գինիի փոխած էր․ հոն կար արքայական սերունդէն անձ մը, որուն որդին հիւանդ էր Կափառնաուժի մէջ: **47** Լսելով թէ Յիսուս Հրէաստանէն Գալիլեա եկած է, մօտեցաւ անոր եւ աղաչեց որ իջնէ եւ բժշկէ իր որդին, որովհետեւ մահամերձ էր: **48** Յիսուս ըսաւ անոր․ «Մինչեւ որ հրաշքներ ու նշաններ չտեսնէք՝ չէք հաւատար»։ **49** Թագաւորագնը պատասխանեց․ «Տէ՛ր, զաւակս չմե-

44 – Հո՛ւս է որ Աւետարանիչը կու տայ իսկական դրդապատմաբնոր Յիսուսի՝ Երուսաղէմէն ու Հրէաստանէն մեկնելուն: Փրկիչն ինքնին կը հաստատէ այն փորձառութիւնը, թէ մարգարէ մը պատիւ չունի իր հայրենիքին մէջ:

46 – Գրաբար թարգմանութեան «Թագաւորագն» բառը պէտք է ըստ յոյն բնագրին (βασιλικός) թագաւորական պաշտօնեայ հասկնալ: Այդ անձը թագաւորական բարձրաստիճան պաշտօնատար մըն էր Հերովդէս Անտիպաս չորրորդապետին, որ ժողովուրդի բերնին մէջ «Թագաւոր» կը կոչուէր:

ռած, իջիր»։ **50** Յիսուս ըսաւ անոր․ «Գնա՛, զաւակդ ողջ է»։ Մարդը հաւատաց Յիսուսի խօսքին ու գնաց։

51 Եւ մինչ կը վերադառնար՝ ծառաները անոր դիմացը եկան, աւետիս տուին եւ ըսին․ «Զաւակդ ողջ է»։ **52** Հարցուց անոնց․ «Ո՞ր ժամուն առողջացաւ»։ Պատասխանեցին անոնք․ «Երէկ, եօթներորդ ժամուն ջերմը անցաւ»։ **53** Հայրը հասկցաւ՝ թէ ճիշդ ա՛յն ժամուն էր, երբ Յիսուս ըսաւ իրեն՝ թէ զաւակդ ողջ է։ Եւ հաւատաց ինքը եւ իր բոլոր տունը։ **54** Այս երկրորդ հրաշքը եղաւ զոր գործեց Յիսուս՝ Հրէաստանէն Գալիլեա դառնալով։

Պրոքատիկէի անդամայծը

5 **1** Անկէ ետք Հրեաներուն տօնն էր, եւ Յիսուս Երուսաղէմ ելաւ։ **2** Երուսաղէմի մէջ, Պրոքատիկէի մօտ աւազան մը կար, որ երայեցերէն Բեթսեզդա կը կոչուէր, եւ հինգ սրահ ունէր։ **3** Հոն պառկած էին բազմութիւն մը հիւանդներու, կոյրերու, կաղերու, գօսացածներու, որոնք կը սպասէին ջուրերուն շարժելուն։

4 Որովհետեւ Տիրոջ հրեշտակը երբեմն երբեմն աւազան կ'իջնէր եւ ջուրերը կը շարժէր․ ով որ ջուրերուն շարժելու պահուն՝ առաջին անգամ աւազան իջնէր, կը բժշկուէր, ոչ մէկ հետք պահելով իր հիւանդութենէն։ **5** Հոն մարդ մը կար որ երեսունութ տարիէ ի վեր հիւանդ էր։

6 Երբ Յիսուս պառկած տեսաւ զայն, գիտնալով թէ երկար ատենէ ի վեր այդ վիճակին մէջ էր, հարցուց անոր․ «Կ'ուզե՞ս առողջանալ»։ **7** Հիւանդը պատասխանեց․ «Տէ՛ր, մէկը չունիմ որ զիս աւազան նետէ երբ ջուրը շարժի․ եւ մինչ ես կը դանդաղիմ՝ ինծմէ առաջ ուրիշ մը կ'իջնէ»։ **8** «Ելի՛ր, ըսաւ Յիսուս, ա՛ռ անկո-

Գլ. 5, 1 – Պրոպատիկէ կը նշանակէ «Ոչխարներու դուռ», իսկ Բեթսեզդայի նշանակութիւնն է «Գթութեան տուն»։

4 – Յունարեմի մէջ՝ կը բժշկուէր՝ ինչ հիւանդութեամբ որ ալ վարակուած ըլլար։

ղինդ ու քալէ՛»։ **9** Մարդը իսկոյն առողջացաւ, ոտքի ելաւ, առաւ անկողինը եւ սկսաւ քալել։ Եւ այդ օրը Շաբաթ էր։

10 Հրեաները բժշկուած մարդուն ըսին. «Շաբաթ է, եւ ներելի չէ որ անկողինդ տանիս»։ **11** Ան պատասխանեց. «Այն որ զիս բժշկեց՝ ա՛ն ըսաւ ինծի. Ա՛ռ անկողինդ ու քալէ՛»։ **12** Հարցուցին անոր. «Ո՞վ է այն մարդը, որ քեզի ըսաւ. Ա՛ռ անկողինդ ու քալէ՛»։ **13** Բժշկուողը չէր գիտեր՝ թէ ո՛վ էր, որովհետեւ Յիսուս հեռացած էր անկէ՝ ամբողին խոնուելուն պատճառով։ **14** Յետոյ Յիսուս տաճարին մէջ գտաւ զայն եւ ըսաւ անոր. «Ահաւասիկ առողջացար, այլեւս մի՛ մեղանչեր, որպէսզի աւելի գէշը չպատահի քեզի»։ **15** Մարդը գնաց, պատմեց Հրեաներուն՝ թէ Յիսուս էր զինք բժշկողը։ **16** Եւ այս պատճառով Հրեաները կը հալածէին Յիսուսը, որովհետեւ Շաբաթ օրով կ'ընէր այս բաները։

17 Յիսուս պատասխանեց անոնց. «Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ե՛ս ալ կը գործեմ»։ **18** Ասոր վրայ Հրեաները դե՛ռ աւելի հետամուտ էին զինքը սպաննելու. որովհետեւ ո՛չ միայն Շաբաթը չէր պահեր, այլ նաեւ զԱստուած իր Հայրը կը կոչէր եւ ինքզինքը Աստուծոյ հաւասար կը նկատէր։

Յիսուս՝ Հօր համագոյ Որդին

19 Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մարդու Որդին չի կրնար ինքնիրմէ բան մը ընել՝ եթէ չտեսնէ Հայրը որ կ'ընէ. որովհետեւ ինչ որ ան կ'ընէ՝ Որդին ալ նոյնը կ'ընէ։ **20** Որովհետեւ Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ամէն ինչ՝ որ ինքը կ'ընէ. եւ անոնցմէ աւելի մեծ գործեր ալ ցոյց

14 – Աւելի մեծ չարիքը, գոր Փրկիչը կը սպառնայ մարդուն, անդիի աշխարհի մէջ միայն կրնայ ըլլալ։

17 – Աստուած անդադար կը գործէ, պահպանելով ու կառավարելով այն ամէնը, ինչ որ ստեղծած է, եւ իր տնօրինութիւններուն մէջ ան կը գործէ մարդոց փրկութեան համար։

19 – Ինչպէս որ Որդին Հօրմէն ունի աստուծային բնութիւնը, նոյնպէս նաեւ Հօրմէն ունի եւ Հօրը հետ միասին կ'ընէ ամէն գործ։

պիտի տայ անոր, այնպէս որ դուք ալ պիտի զարմանաք: **21** Որովհետեւ, ինչպէս Հայրը մեռեալներուն յարութիւն կու տայ եւ կը կենդանացնէ զանոնք, նոյնպէս ալ Որդին՝ կենդանութիւն կու տայ որուն որ ուզէ:

22 Որովհետեւ Հայրը մարդ չի՝ դատեր, այլ՝ ամէն դատաստան յանձնած է Որդիին: **23** որպէսզի ամէնքը պատուեն Որդին՝ ինչպէս կը պատուեն Հայրը: Ով որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ զինքը զրկած է: **24** Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ իմ խօսքս լսէ եւ հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանքը կ'ընդունի եւ չ'ենթարկուիր դատաստանի, այլ՝ մահէն դէպի կեանք կը փոխադրուի: **25** Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ պիտի գայ ժամանակ եւ արդէն իսկ եկած է, երբ մեռեալները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը, եւ լսողները պիտի ապրին:

26 Որովհետեւ, ինչպէս որ Հայրը ինք իր մէջ կեանք ունի, նոյնպէս ալ տուած է Որդիին՝ որ ինք իր մէջ կեանք ունենայ: **27** Եւ իշխանութիւն տուած է անոր՝ դատաստան ընելու, որովհետեւ Մարդու Որդի է:

28 Ասոր համար, մի՛ զարմանաք. որովհետեւ կու գայ ժամանակը՝ երբ բոլոր անոնք որ գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը, **29** եւ դուրս պիտի ելլեն. անոնք որ բարի գործ ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չարիք գործած են՝ դատապարտութեան յարութեան համար: **30** Ես կարող չեմ ինքնիրմէս բան մը ընել, բայց լսածիս համաձայն կը դատեմ, եւ իմ դատաստանս արդար է, որովհետեւ ո՛չ թէ իմ կամքս կը փնտռեմ, այլ կամքն անոր՝ որ զիս զրկեց:

Յիսուս՝ զրկուած Հօրմէն

31 Եթէ ես ինծի համար վկայեմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ:
32 Բայց կայ ուրիշ մը որ կը վկայէ ինծի համար. եւ ես գիտեմ՝ թէ

28 – Գրաբարը՝ ... «ասոր վրայ դու՛ք ինչո՞ւ կը զարմանաք»:

32 – Գրաբարը՝ «եւ դու՛ք գիտե՛ք թէ այն վկայութիւնը, զոր տուաւ...»:

ճշմարիտ է այն վկայութիւնը զոր կու տայ ինծի համար: **33** Դուք մարդ զրկեցիք Յովհաննէսին, եւ անիկա ճշմարտութեան վկայութիւն տուաւ: **34** Բայց ես մարդոցմէ վկայութիւն չեմ առներ. այլ այս բաները կ'ըսեմ՝ որպէսզի դուք փրկուիք: **35** Ան էր ճրագը, որ կը վառէր ու կը լուսաւորէր, եւ դուք ուզեցիք ժամանակ մը անոր լոյսով ուրախանալ:

36 Բայց ես Յովհաննէսին տուած վկայութիւնէն աւելի մեծը ունիմ. այն գործերը զորս Հայրս տուաւ ինծի որ կատարեմ. այս գործերն իսկ զոր կը կատարեմ, կը վկայեն ինծի համար՝ թէ Հայրն է որ զիս զրկեց: **37** Եւ Հայրը որ զիս զրկեց՝ ա՛ն վկայեց ինծի համար. դուք ո՛չ անոր ձայնը լսած էք ո՛չ ալ երեսը տեսած: **38** Եւ անոր խօսքը ձեր մէջ չէ հաստատուած, որովհետեւ չէք հաւատար անոր՝ զոր ինքը զրկեց:

39 Դուք Գիրքե՛րը քննեցէք, քանի որ կը կարծէք թէ անոնց մէջ կը գտնէք յաւիտեանական կեանքը. եւ ճիշդ ատո՛նք են որ ինծի համար կը վկայեն: **40** Բայց դուք չէք ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք: **41** Ես մարդոցմէ փառք չեմ ընդունիր: **42** Բայց ես գիտեմ թէ դուք Աստուծոյ սէրը չունիք ձեր մէջ: **43** Ես եկայ Հօրս անունով, եւ դուք չէք ընդունիր զիս. եթէ ուրիշ մը գար իր անունով՝ պիտի ընդունէիք զայն: **44** Ի՞նչպէս կրնաք հաւատալ, դուք՝ որ իրարմէ փառք կ'ընդունիք եւ չէք փնտռեր այն փառքը, որ միայն Աստուծմէ կու գայ: **45** Մի՛ կարծէք թէ ես Հօրս առջեւ պիտի ամբաստանեմ ձեզ. ձեզ ամբաստանողը՝ Մովսէ՛սն է, որուն վրայ դրած էք ձեր յոյսը: **46** Որովհետեւ, եթէ դուք Մովսէսին հաւատայիք, անպայման ինծի՛ ալ պիտի հաւատայիք. որովհետեւ ան ի՛մ մասիս գրած է: **47** Բայց եթէ անոր գրածներո՛ւն չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք իմ խօսքերուն»:

Հացերու քաղմացումը

6

1 Ասկէ վերջ Յիսուս Գալիլեայի Տիրեբրական ծովուն ղիմացի կողմն անցաւ: **2** Անոր ետեւէն կ'երթար մեծ բազմութիւն մը, որովհետեւ կը տեսնէին հրաշքները՝ զոր կը գործէր

Հիւանդներու վրայ: **3** Յիսուս լեռ ելաւ եւ հոն նստաւ աշակերտներուն հետ: **4** Եւ մօտ էր Զատիկը, հրեաներու տօնը: **5** Յիսուս աչքերը վեր բարձրացուց եւ տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն. հարցուց Փիլիպպոսին. «Ուրկէ՞ պիտի գնենք հաց՝ որ ատոնք ուտեն»: **6** Այս կ'ըսէր՝ զանիկա փորձելու համար. որովհետեւ ինքը գիտէր՝ թէ ինչ պիտի ընէր:

7 Փիլիպպոս պատասխանեց. «Երկու հարիւր դահեկանի հաց չի բաւեր ատոնց, նոյնիսկ եթէ իւրաքանչիւրը քիչ բան առնէ»: **8** Աշակերտներէն մէկը՝ Անդրէաս, Սիմոն Պետրոսի եղբայրը, ըսաւ Յիսուսին. **9** «Հոս պատանի մը կայ, որ գարիէ հինգ հաց ունի եւ երկու ձուկ. բայց ատ ի՞նչ է այդչափ բազմութեան համար»:

10 Յիսուս ըսաւ. «Նստեցուցէ՛ք մարդիկը»: Առատ խոտ կար այն տեղ, եւ գրեթէ հինգ հազար հոգի նստան: **11** Յիսուս առաւ հացերը, գոհացաւ եւ բաժնեց նստողներուն. նոյնպէս ձուկերն ալ, որչափ որ ուզեցին: **12** Երբ կշտացան՝ ըսաւ աշակերտներուն. «Հաւաքեցէ՛ք աւելցած կտորները, որպէսզի բան չկորսուի»: **13** Հաւաքեցին եւ տասներկու սակառ լեցուցին գարիէ հինգ հացերու կտորներով, որ աւելցած էին կերողներէն: **14** Իսկ մարդիկը, տեսնելով Յիսուսի գործած հրաշքը՝ կ'ըսէին. «Ստուգիւ ա'ս է Մարգարէն, որ աշխարհ պիտի գար»: **15** Յիսուս, երբ իմացաւ թէ պիտի գան զինքը յափշտակելու՝ որպէսզի թագաւոր ընեն, դարձեալ լեռ ելաւ առանձին:

Յիսուս ջուրիմ վրայէն կը քալէ

16 Երբ իրիկուն եղաւ՝ աշակերտները ծովեզերք իջան: **17** Ու նաւակ մտնելով՝ մեկնեցան դէպի ծովուն դիմացի ափը, Կափառնառմ: Մուլթը կոխած էր եւ Յիսուս դեռ եկած չէր իրենց մօտ: **18** Հովը ուժգին կը փչէր եւ ծովը ալեկոծ էր: **19** Հագիւ քսանհինգ կամ երեսուն ասպարէզ թիավարած էին՝ տեսան Յիսուսը, որ ծովուն վրայէն քալելով նաւակին կը մօտենար, եւ զարհուրեցան:

Գլ. 6, 19 – Քսանհինգ կամ երեսուն ասպարէզը՝ կ'ընէ մերձաւորապէս, 5–6 քմ., որ լինին մէջտեղերը ցոյց կու տայ:

20 «Ե՛ս եմ, մի՛ վախնաք», ըսաւ անոնց: **21** Կ՛ուզէին զինքը նաւակին մէջ առնել. բայց նաւակը իսկոյն հասաւ այն երկիրը՝ ուր կ'երթային:

22 Յաջորդ օրը, ժողովուրդը՝ որ ծովուն միւս կողմը մնացեր էր, անդրադարձաւ որ հոն մէկ նաւակ միայն կար - ուր Յիսուսի աշակերտները մտած էին - եւ թէ՛ Յիսուս նաւակ մտած չէր իր աշակերտներուն հետ. այլ՝ անոնք առանձին մեկնած էին: **23** Տիւբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան, այն տեղը ուր, Տիրոջ օրհնելէն վերջ՝ հաց կերած էին: **24** Ժողովուրդը, տեսնելով որ Յիսուս հոն չէ, եւ ոչ ալ աշակերտները, առին նաւակները եւ Կափառնառում եկան Յիսուսը փնտռելու: **25** Երբ զանկաւ գտան, ծովուն միւս ափը, ըսին անոր. «Ռա՛բբի, ե՞րբ եկար հոս»:

Երկնաւոր հացը

26 Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք զիս կը փնտռէք՝ ոչ անոր համար որ հրաշք տեսաք, այլ որովհետեւ կերաք հացէն ու կշտացաք: **27** Աշխատեցէ՛ք ոչ կորստական կերակուրին համար, այլ կերակուրին՝ որ կը մնայ յաւիտենական կեանքին մէջ, եւ զոր Մարդու Որդին պիտի տայ ձեզի. վասնզի ինքն է, զոր Հայրն Աստուած իր կնիքովը հաստատեց»: **28** «Ի՞նչ ընելու ենք, հարցուցին անոր, որպէսզի Աստուծոյ գործերը կատարենք»:

29 Յիսուս պատասխանեց. «Աստուծոյ գործը այս է՝ որ հաւատաք անոր, զոր ինքը զրկած է»: **30** «Ի՞նչ հրաշք կ'ընես, ըսին անոր, որ տեսնենք ու հաւատանք քեզի. ի՞նչ կը գործես: **31** Մեր

27 - Այս անիկա՛ է՝ գոր Աստուած Հայրը զրկեց ձեր մօտ, դռնը մնելով անոր վրայ իր կնիքն ու իր նկարագիրը, հաստատելով անոր վարդապետութիւնն ու առաքելութիւնը բազմապատիկ հրաշքներով:

29 - Անկորստական կերակուրին մասնակցիլ կարեւորաւ համար, Յիսուս կը սահմանէ անոնց, իբր գլխաւոր արարք, հաւատալ իրեն:

31 Հրեաները ա՛յն ատեն միայն կ'ուզեն հաւատալ Յիսուսի, երբ ան՝ Մովսէսի գործած մանաւայի հրաշքին նման հրաշքով մը հաւաստէ իր առաքելութիւնը:

հայրերը անապատին մէջ մանանան կերան, ինչպէս գրուած է-
Երկինքէն հաց տուաւ անոնց ուտելու»:

32 Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Մովսէս չէ որ տուաւ ձեզի երկինքէն հացը, այլ՝ Հայրս ձեզի պի-
տի տայ ճշմարիտ հացը, երկինքէն: **33** Որովհետեւ Աստուծոյ հա-
ցը այն է՝ որ երկինքէն կ'իջնէ ու կեանք կու տայ աշխարհի»:

34 «Տէ՛ր, ըսին անոր, միշտ տուր մեզի այն հացը»: **35** «Ե՛ս եմ
կեանքի հացը, պատասխանեց Յիսուս. ո՛վ որ ինծի գայ՝ երբեք պի-
տի չանօթենայ, եւ ո՛վ որ հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ:
36 Բայց ես ըսի ձեզի. տեսաք զիս ու չէք հաւատար ինծի. **37** Այն
ամէնքը զոր Հայրն ինծի կու տայ, ինծի պիտի գան, եւ ո՛վ որ ին-
ծի գայ՝ դուրս պիտի չվտարեմ գայն: **38** Որովհետեւ երկինքէն
իջած եմ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս
ղրկեց:

39 Այս է Հօրս կամքը, որ զիս զրկեց. որ ինծի տուածներէն ո՛չ
մէկը կորսնցնեմ, այլ՝ յարութիւն տամ անոնց, վերջին օրը: **40** Այս
է իմ Հօրս կամքը. ո՛վ որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւի-
տենական կեանքը ստանայ, եւ ես յարութիւն տամ անոր, վերջին
օրը»:

41 Հրեաները կը գանգատէին անոր դէմ, որովհետեւ ըսաւ՝ թէ
ես եմ երկինքէն իջած հացը. եւ կ'ըսէին. **42** «Միթէ ասիկա Յիսու-
սը չէ՞, Յովսէփի որդին, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. ու-
րեմն հիմա ի՞նչպէս կ'ըսէ՝ թէ ես երկինքէն իջայ»: **43** Յիսուս
պատասխանեց. «Մի՛ տրտնջէք իրարու հետ. **44** ո՛չ ոք կրնայ ինծի
գալ՝ եթէ Հայրը, որ զիս զրկեց, չքաշէ գայն, եւ ես վերջին օրը յա-
րութիւն պիտի տամ անոր: **45** Մարգարէներուն մէջ գրուած է.

32 – Յիսուս երկինքէն իջած մանանայի հացին կը հակադրէ նախ՝ երկնա-
յին ճշմարիտ հացը, որ անհամատարբէն գերազանց է իր տեսակովն ու իր ազ-
դեցութեամբը (32–34): Յետոյ ցոյց կու տայ իր անձը իբր կեանքի ճշմարիտ
հաց, որ քաղցն ու ծարաւը յաւիտեանապէս կը յագեցնէ ու կ'անցընէ: Ասոր հա-
մար սակայն հարկ է որ մարդիկ հաւատան իր խօսքերուն. եւ ճիշդ այս մասին
մէջ՝ Հրեաները անհոգ ու անտարբեր գտնուած էին եւ ե՛մ մինչեւ այսօր (35–47):

Ամէնքն ալ Աստուծոմէ ուսած պիտի ըլլան: Ո՛վ որ Հօրմէն կը լսէ ու կը սորվի՝ ինծի կու գայ:

46 Ո՛չ ոք տեսած է Հայրը, եթէ ոչ ան՝ որ Աստուծոմէ է, ան տեսած է Հայրը: 47 Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ո՛վ որ կը հատաւ ինծի՝ յաւիտեանական կեանքը կ'ընդունի:

Յիսուս կեանքի հացն է

48 Ե՛ս եմ կեանքի հացը: 49 Ձեր հայրերը անապատին մէջ կերան մանանան ու մեռան: 50 Ա՛յս է հացը, որ երկինքէն իջած է. եթէ մէկը ասկէ ուտէ՝ պիտի չմեռնի: 51 Ե՛ս եմ կենդանի հացը, երկինքէն իջած: Եթէ մէկը այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի. եւ հացը, զոր ես պիտի տամ՝ իմ մարմինս է, զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար»:

52 Հրեաները իրարու հետ կը վիճէին ու կ'ըսէին. 53 «Ասիկա ի՞նչպէս կրնայ իր մարմինը մեզի տալ՝ որ ուտենք» 54 Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չուտէք Մարդու Որդիին մարմինը եւ չխմէք անոր արիւնը՝ կեանք չէք ունենար ձեր մէջ: 55 Ո՛վ որ ուտէ իմ մարմինս եւ ըմպէ իմ արիւնս՝ յաւիտեանական կեանք պիտի ունենայ, եւ ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր:

56 Որովհետեւ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ արիւնս՝ ճշմարիտ ըմպելի: 57 Ո՛վ որ ուտէ իմ մարմինս եւ ըմպէ իմ արիւնս, իմ մէջս կը բնակի եւ ես՝ անոր մէջ: 58 Ինչպէս Հայրը, որ զիս զրկեց, կ'ապրի, եւ ես կ'ապրիմ իրմով, նոյնպէս՝ ո՛վ որ ուտէ զիս, ան ալ պիտի ապրի ինծմով: 59 Ա՛յս է այն հացը՝ որ երկինքէն իջած է. չի նմանիր մանանային, զոր ձեր հայրերը կերան ու մեռան. ո՛վ որ ուտէ այս հացը՝ յաւիտեան պիտի ապրի»: 60 Յիսուս այս խօսքերը ըսաւ Կափառնառումի ժողովարանին մէջ, քարոզելու ատեն:

48 – Յիսուս, Գոհութեան խորհուրդին մէջ, կու տայ իր հաւատացեալներուն «կեանքի հաց»ը՝ իր մարմինն ու արիւնը իբր սնունդ մեր հոգիին: Այս հացին ֆաշակմամբ, մարդոց կեանքը ամենասերտ կերպով կը զօղուի ու կը միաւորուի անոր կեանքին հետ:

Տարակուսողներ և դասալիքներ

61 Աշակերտներէն շատերը, երբ լսեցին՝ ըսին. «Ծանր է այդ խօսքը, ո՞վ կրնայ ատոր մտիկ ընել»: **62** Երբ Յիսուս իմացաւ թէ ատոր համար կը տրտնջէին աշակերտները՝ ըսաւ անոնց. «Ա՛տ կը գայ/թաղեցնէ ձեզ: **63** Իսկ ի՞նչ պիտի ընէք՝ եթէ տեսնէք Մարդու Որդին բարձրացած հոն՝ ուր էր նախապէս: **64** Հոգին է կենդանարարը, մարմինը բանի չի ծառայէր. այս խօսքերը զոր ես խօսեցայ ձեզի, հոգի են եւ կեանք: Բայց ձեռք մէջ կան ոմանք, որ չեն հաւատար»: **65** Որովհետեւ Յիսուս գիտէր սկիզբէն՝ թէ որո՞նք են չհաւատացողները եւ թէ ո՞վ էր ան, որ պիտի մատնէր զինքը: **66** Եւ կ'ըսէր. «Ասոր համար ըսի ձեզի. Ո՛չ ոք կրնայ ինծի գալ, եթէ չօրմէս տրուած չըլլայ անոր»:

67 Այն վայրկեանէն՝ աշակերտներէն շատեր ետ քաշուեցան եւ այլեւս անոր հետ չէին շրջեր: **68** Յիսուս հարցուց տասներկու աշակերտներուն. «Դո՞ւք ալ կ'ուզէք երթալ»: **69** Սիմոն Պետրոս պատասխանեց. «Տէ՛ր, որո՞ւն պիտի երթանք. յաւիտեանական կեանքի խօսքեր ունիս դուն. **70** եւ մենք հաւատացինք ու ճանչցանք՝ թէ դո՛ւն ես Աստուծոյ Սուրբը»: **71** Յիսուս պատասխանեց. «Մի/թէ ես չընտրեցի՞ ձեզ, տասներկուդդ, եւ ձեզմէ մէկը սատանայ է»: **72** Եւ կ'ականարկէր Յովհաննէս, Սիմոն Իսկարիովտացիի որդիին. որովհետեւ ան էր որ պիտի մատնէր զինքը, եւ տասներկուքէն մէկն էր:

Յիսուս Տաղաւարահարի տօնին

7 **1** Անկէ վերջ, Յիսուս, չուզելով Հրէաստան շրջիլ՝ Գալիլեայի մէջ կը շրջէր, որովհետեւ հրեաները սպաննել կ'ուզէին զինքը: **2** Մօտ էր հրեաներու Տաղաւարահարի տօնը: **3** Եղ-

63 – Այսինքն՝ երբ դուք իմ երկինք համբառնալու օրս զիս տեսնէք, թէ ի՛նչպէս ձեռք Վարդապետը, երկինքէն երկիր իջած Որդին մարդոյ, դարձեալ երկինք՝ իր առաջուան տեղը կը վերադառնայ, այն ատեն իմ ըսածս գայթակղեցուցիչ խօսք մը պիտի չթուի ձեզի:

Գլ. 7, 3 – Յիսուսի «եղբայրները» իր հօրեղբորդիներն էին:

բայրները ըսին իրեն. «Ելի՛ր ասկէ եւ Հրէաստան գնա, որպէսզի աշակերտներդ ալ տեսնեն կատարած գործերդ: **4** Որովհետեւ չկայ մէկը, որ ուզէ հրապարակի վրայ յայտնուիլ, եւ ինքը ծածուկ գործէ. քանի որ այդպիսի բաներ կը գործես՝ յայտնէ ինքզինքդ աշխարհի»:

5 Որովհետեւ եղբայրներն ալ չէին հաւատար իրեն: **6** Յիսուս ըսաւ. «Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է: **7** Աշխարհը չի կրնար ձեզ ատել, բայց զիս կ'ատէ. որովհետեւ ես կը վկայեմ իրեն դէմ՝ թէ չար են իր գործերը: **8** Դուք գացէ՛ք այդ տօնին. ես չեմ գար այդ տօնին, որովհետեւ ժամանակս դեռ աւարտած չէ»: **9** Աս ըսելէ ետք՝ ինքը Գալիլեա մնաց: **10** Բայց երբ եղբայրները մեկնեցան՝ յետոյ ինքն ալ գնաց տօնին, ո՛չ յայտնապէս, այլ ծածուկ:

Յիսուսի աստուածային առաքելութիւնը

11 Իսկ հրեաները զինքը կը փնտռէին տօնին եւ կ'ըսէին. **12** «Ո՛ր է անիկա»: Ժողովուրդին մէջ վէճ կար իր մասին. ոմանք կ'ըսէին՝ թէ լաւ մարդ է, իսկ ուրիշներ՝ թէ ոչ, այլ կը մոլորեցնէ ժողովուրդը: **13** Բայց հրեաներու վախէն. ոչ ոք համարձակ կը խօսէր անոր մասին:

4 – Յիսուսի «եղբայրները» անտրամաբանական կը գտնեն Յիսուսի գործունէութիւնը անարգ համարուած Գալիլեայի մէջ: Իրենց գաղափարին համաձայն, ան պէ՛տք էր Երուսաղէմի մէջ իբր Մեսիա ցոյց տալ ինքզինքը: Այս նպատակին հասնելու պատեհագոյն առիթը կը ներկայացնէին առաջիկայ տօնական օրերը: Հետեւաբար Յիսուսի ազգականներուն անգամ կը պակսէր ճշմարիտ Մեսիայի հաւատքը:

6 – «Իմ ժամանակս», այսինքն՝ Երուսաղէմի մէջ, ինզինքս ժողովուրդին ցուցնելու ժամանակը: «Ձեր ժամանակը միշտ պատրաստ է», այսինքն՝ բոլոր ժամանակները յարմար են ձեզի, դուք կրնա՛ք ձեր ուզած ատենը երթալ Երուսաղէմ:

8 – Յիսուս չուզեց Երուսաղէմ գացող ուղեւորներու խումբին միանալ եւ Տաղաւարահարաց օսոյի միջոցին ինքզինքը հրապարակաւ ու մեծաշուք հանդէսով իբր Մեսիա յայտնել աշխարհէն եկած ամբողջ բազմութեան, ինչպէս կը փափաքէին իր ազգականները:

14 Երբ տօնին կէսը հասած էր, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ սորվեցնել: 15 Հրեաները զարմացած՝ կ'ըսէին. «Թո՛նչպէս գիտէ ասիկա Գրքերը, քանի որ բնաւ ուսած չէ»: 16 Յիսուս պատասխանեց. «Իմ վարդապետութիւնը՝ իմա չէ՛, այլ անոր՝ որ զիս զրկեց: 17 Եթէ մէկը ուզէ անոր կամքը կատարել, պիտի հասկնայ՝ թէ այս վարդապետութիւնը Աստուծո՞մէ՞ է արդեօք, թէ՛ ես իմ կողմէս կը խօսիմ: 18 Ո՛վ որ ինք իր կողմէն կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ. իսկ ո՛վ որ կը փնտռէ փառքն անոր՝ որ զինքը զրկած է, ան ճշմարիտ է եւ անիրաւութիւն չկայ անոր մէջ: 19 Չէ՞ որ Մովսէս տուաւ ձեզի Օրէնքը. եւ սակայն ձեզմէ ոչ ոք Օրէնքը կը պահէ: Ինչո՞ւ կ'ուզէք սպաննել զիս»:

20 Ժողովուրդը պատասխանեց եւ ըսաւ. «Դեւ կայ քու մէջդ, ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: 21 Յիսուս պատասխանեց անոնց. «Գործ մը կատարեցի եւ դուք ամէնքդ զարմացած էք: 22 Մովսէս ձեզի թրփատութիւնը տուաւ - թէեւ Մովսէսէն չէր, այլ նախահայրերէն - եւ դուք շաբաթ օրը մարդ կը թլփատէք: 23 Եթէ շաբաթ օրը մարդ կը թլփատուի, որպէսզի Մովսէսի օրէնքը չլուծուի, ինչո՞ւ ինծի բարկացեր էք՝ որ շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի: 24 Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ ուղիղ դատաստան կտրեցէք»:

25 Երուսաղէմացիներէն ոմանք կ'ըսէին. «Ասիկա չէ՞ որ կ'ուզէին սպաննել: 26 Ահաւասիկ յայտնապէս կը խօսի եւ բան չեն ըսեր ասոր. արդեօք իշխաննե՞րն ալ հասկցան իսկապէս՝ թէ ան է Քրիստոսը: 27 Բայց մենք գիտենք՝ թէ ասիկա ուրկէ է. մինչդեռ երբ Քրիստոսը գայ՝ ոչ ոք պիտի գիտնայ թէ ուրկէ է»:

28 Յիսուս տաճարին մէջ սորվեցնելու ատեն աղաղակեց եւ ըսաւ. «Թէ՛ զիս կը ճանչնաք, եւ թէ՛ ուրկէ ըլլալս գիտէք. եւ սակայն ինքիրմէս եկած չեմ. այլ ճշմարիտ է անիկա՝ որ զիս զրկեց, զոր դուք չէք ճանչնար: 29 Բայց ես կը ճանչնամ զինքը, որովհետեւ անոր քովէն եկած եմ եւ անիկա զրկեց զիս»: 30 Ուզեցին բռնել զինքը - բայց ան խոյս տուաւ - եւ ոչ ոք ձեռք զարկաւ անոր, որովհետեւ իր ժամը դեռ հասած չէր: 31 Ժողովուրդէն շատեր հաւատացին անոր եւ կ'ըսէին. «Քրիստոսը երբ գայ, ասոր ըրած հրաշքներէն աւելի՞ն պիտի ընէ»:

32 Փարիսեցիները լսեցին ժողովուրդին գանգատները անոր մասին. եւ քահանայապետներն ու փարիսեցիները սպասաւորները ղրկեցին՝ որ բռնեն Յիսուսը: **33** Յիսուս ըսաւ անոնց. «Դեռ քիչ մը ժամանակ ձեզի հետ եմ, եւ կ'երթամ անոր՝ որ զիս ղրկեց: Պիտի փնտռէք զիս ու պիտի չգտնէք: **34** Եւ ուր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ»: **35** Հրեաները իրարու կ'ըսէին. «Ո՞ւր պիտի երթայ արդեօք, որ մենք չկարենանք գտնել զինքը. միթէ հեթանոսներու սփիւռքը պիտի երթայ եւ հեթանոսներո՞ւն պիտի սորվեցնէ: **36** Ի՞նչ կը նշանակէ այս խօսքը, զոր ըսաւ. Պիտի փնտռէք զիս ու պիտի չգտնէք, եւ ուր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ»:

Յիսուս կը յայտնէ Ս. Հոգին

37 Տօնին վերջին հանդիսաւոր օրը, Յիսուս կեցած կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Եթէ մէկը ծարաւի է՝ ինծի թող գայ ու խմէ: **38** Ո՛վ որ ինծի հաւատայ, ինչպէս կ'ըսէ Գիրքը, անոր ծոցէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին»: **39** Այս խօսքով ակնարկեց Հոգիին, զոր պիտի ընդունէին իրեն հաւատացողները. որովհետեւ Հոգին տակաւին տրուած չէր, քանի որ Յիսուս չէր փառաւորուած:

Հրեաներու գանազան կարծիքները

40 Ժողովուրդէն ոմանք, այս խօսքերը լսելով՝ կ'ըսէին. «Իսկպէս ա՛ս է Մարգարէն». ուրիշներ կ'ըսէին. «Ա՛ս է Քրիստոսը»: Ոմանք ալ կ'ըսէին. **41** «Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: **42** Զէ՞ որ Գիրքը կ'ըսէ՝ թէ Քրիստոսը Դաւիթի սերունդէն պիտի գայ ու Բեթղեհէմ գիւղէն, ուրկէ էր նաեւ Դաւիթ»: **43** Եւ Յիսուսի պատճառով ժողովուրդին մէջ անհամաձայնութիւն ծագեցաւ: **44** Անոնցմէ ոմանք ուզեցին բռնել զինքը, բայց ոչ ոք ձեռք զարկաւ անոր:

Պատգամաւորներուն վկայութիւնը

45 Սպասաւորները վերադարձան քահանայապետներուն եւ

փարիսեցիներուն մօտ, որոնք հարցուցին իրենց. **46** «Ինչո՞ւ գինքը հոս չբերիք»: Սպասաւորները պատասխանեցին. «Ո՛չ ոք այն մարդուն նման խօսած է երբեք»: **47** Փարիսեցիները հարցուցին. «Դո՞ւք ալ արդեօք մոլորեցաք: **48** Միթէ իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր, **49** բացի այս խաժամուժ ամբողջէն, որ Օրէնքը չի գիտեր ու նզովուած է»: **50** Նիկողեմոս, որ Յիսուսի մօտ եկած էր նախապէս գիշերով, եւ անոնցմէ մէկն էր, ըսաւ անոնց. **51** «Միթէ մեր Օրէնքը կը դատապարտէ՞ մէկը առանց կանխապէս իրմէ լսելու կամ գիտնալու՝ թէ ի՞նչ ըրած է»: **52** Պատասխանեցին անոր. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես. քննէ՛ եւ պիտի տեսնես՝ որ Գալիլեայէն մարդարէ չ'ելլեր»: **53** Եւ իւրաքանչիւր ոք իր տունը դարձաւ:

Շնացող կիներ

8 **1** Յիսուս գնաց Ձիթենեաց լեռը: **2** Եւ առտուան դէմ դարձեալ տաճար եկաւ, ուր բոլոր ժողովուրդը իրեն կու գար, եւ ինքը նստած՝ կը սորվեցնէր անոնց: **3** Դպիրներն ու փարիսեցիները շնութեան մէջ բռնուած կին մը բերին ու մէջտեղը կեցընելով՝ ըսին Յիսուսի. **4** «Վարդապետ, այս կինը շնութեան մէջ բռնուեցաւ: **5** Մովսէս՝ Օրէնքին մէջ պատուիրեց մեզի այսպիսիները քարկոծել. արդ դուն ի՞նչ կ'ըսես ասոր համար»: **6** Այսպէս կ'ըսէին գինքը փորձելու համար, որպէսզի կարենային գինքը ամբաստանել: Իսկ Յիսուս, ծռած՝ մատովը գետնին վրայ կը գրէր: **7** Երբ կը յամառէին հարցնել, վեր նայելով ըսաւ անոնց. «Ձեր մէջէն անմեղը նախ թող քար նետէ ատոր վրայ»: **8** Եւ դարձեալ ծռած՝ կը գրէր գետնին վրայ: **9** Անոնք, երբ այս խօսքը լսեցին՝ սկսան մէկիկ մէկիկ դուրս ելլել, ծերերէն սկսեալ՝ մինչեւ վերջինը. միայն Յիսուս մնաց, եւ կինը՝ որ առջեւը կեցեր էր: **10** Յիսուս

Գլ. 8, 9 – Յոյն ձեռագիրներէն ունիմք՝ «Իրենց խղճմտամբէն յանդիմանուելով՝ մէկիկ մէկիկ դուրս ելան»:

10 – Յունարեմը՝ «Եւ երբ Յիսուս վեր կանգնելով՝ կնոջմէն զատ մէկը չտեսաւ, ըսաւ անոր...»:

չտկուեցաւ եւ հարցուց. «Ո՛վ կին, ո՞ւր ես, ո՞չ մէկը քեզ դատապարտեց»: **11** «Ո՛չ, Տէր», պատասխանեց կինը: «Ե՛ս ալ չեմ դատապարտեր, ըսաւ Յիսուս. գնա՛ եւ ասկէ վերջ մի՛ մեղանչեր»:

Քրիստոս Աստուծոյ Որդի

12 Յիսուս դարձեալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ե՛ս եմ աշխարհի լոյսը. ով որ իմ ետեւէս գայ՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ՝ պիտի ընդունի կեանքի լոյսը»: **13** Փարիսեցիները ըսին անոր. «Դուն քու անձիդ համար կը վկայես, եւ քու վկայութիւնդ ճշմարիտ չէ»:

14 Յիսուս պատասխանեց. «Թէպէտ ե՛ս կը վկայեմ անձիս համար, բայց իմ վկայութիւնս ճշմարիտ է. որովհետեւ գիտեմ՝ թէ ուրկէ՛ եկայ եւ ո՛ւր կ'երթամ. բայց դուք չէք գիտեր՝ թէ ուրկէ՛ եկայ եւ ո՛ւր կ'երթամ»:

15 Դուք մարմնի համաձայն կը դատէք. ես ոչ ոք կը դատեմ: **16** Եթէ դատելու ալ ըլլամ՝ իմ դատաստանս ճշմարիտ է, որովհետեւ մինակ չեմ, այլ ես եւ Հայրը՝ որ զիս զրկեց:

17 Զեր Օրէնքին մէջ ալ գրուած է՝ թէ Երկու մարդերու վկայութիւնը ճշմարիտ է: **18** Ե՛ս եմ որ կը վկայեմ ինծի համար. կը վկայէ ինծի համար նաեւ Հայրը՝ որ զիս զրկեց»: **19** «Ո՞ւր է քու Հայրդ», հարցուցին անոր: «Ո՛չ զիս կը ճանչնաք եւ ո՛չ ալ Հայրս, պատասխանեց Յիսուս. եթէ զիս ճանչնայիք, թերեւս Հայրս ալ ճանչնայիք»: **20** Այս խօսքերն ըսաւ Յիսուս գանձատան մէջ, մինչ կը սորվեցնէր տաճարին մէջ, եւ ոչ ոք բռնեց զինքը, որովհետեւ ժամը դեռ հասած չէր:

13 – Մովսիսական օրէնքին համաձայն, տրուած վկայութիւն մը վաւեր ըլլալու համար երկու կամ երեք վկայ կը պահանջուէր: Օրէնքին այս սկզբունքը սակայն չէր կրնար Յիսուսի մերձեցուիլ, որովհետեւ իր վկայութիւնը աստուծային էր, հետեւաբար բացարձակ նշմարտութիւն եւ ինքն իր մէջ կատարելապէս բաւարար:

18 – Թէեւ Յիսուսի իր անձին համար տուած վկայութիւնը կատարելապէս բաւական է, սակայն եւ այնպէս ինք միայն չէ՝ որ կը վկայէ, նոյնը կը հաստատէ Հայրը՝ անոր ձեռնով գործած հրաշքներովը: Ասով կատարելապէս գոհացում տրուած կ'ըլլայ Մովսիսական օրէնքի պահանջին:

21 Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ես կ'երթամ եւ պիտի փնտռէք զիս ու ձեր մեղքին մէջ պիտի մեռնիք, որովհետեւ ուր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ»:

22 Ասոր համար հրեաները կ'ըսէին. «Արդեօք անձնասպա՞ն պիտի ըլլայ, որ կ'ըսէ թէ ուր որ ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ»:

23 Յիսուս ըսաւ անոնց. «Դուք վարէն էք, իսկ ես՝ վերէն. դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ: **24** Անոր համար ըսի ձեզի՝ թէ ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. որովհետեւ եթէ չհաւատաք թէ ես եմ՝ ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք»:

25 «Ո՞վ ես դուն», հարցուցին անոր: Յիսուս պատասխանեց. «Նախ եւ առաջ, ի՞նչ հարկ կայ որ ես ձեզի խօսիմ: **26** Ձեր մասին չատ խօսելիք եւ դատելիք ունիմ. բայց այն որ զիս զրկեց՝ ճշմարիտ է, եւ ինչ որ անկէ լսած եմ՝ ա՛յն կը խօսիմ աշխարհի»:

27 Անոնք չհասկցան թէ Հօրը մասին էր որ կը խօսէր իրենց: **28** Յիսուս ըսաւ անոնց. «Երբ բարձրացնէք Մարդու Որդին՝ ա՛յն ատեն պիտի ճանչնաք թէ ես եմ. եւ թէ ինքիրմէս բան մը չեմ ըներ, այլ՝ ինչպէս սորվեցուց ինծի Հայրս, այնպէս կը խօսիմ: **29** Ան որ զիս զրկեց՝ ինծի հետ է, զիս մինակ չթողուց, որովհետեւ ես միշտ անոր հաճոյքը կը կատարեմ»:

30 Այս խօսքերուն վրայ՝ շատեր հաւատացին իրեն: **31** Եւ Յիսուս իրեն հաւատացող հրեաներուն ըսաւ. «Եթէ դուք մնաք խօսքիս մէջ, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք: **32** Դուք պիտի ճանչնաք ճշմարտութիւնը եւ ճշմարտութիւնն ալ ձեզ պիտի ազատէ»:

Բուռն հակառակօրէն

33 Անոնք պատասխանեցին. «Մենք Աբրահամի զաւակներն ենք, եւ երբեք մէկու ծառայ եղած չենք. դուն ի՞նչպէս կ'ըսես՝ թէ

28 – Երբ դուք Մարդու Որդին խաչ հանէք, յարութիւն առնելէն, երկիմէ համբառնալէն, Սուրբ Հոգւոյն առաքումէն ու Երուսաղէմի վրայ տրուելիք դատավճիռին սաստկութենէն պիտի հասկնաք թէ ես ճշմարիտ Մեսիան եմ եւ Աստուծոյ Որդին:

ազատ պիտի ըլլաք»։ **34** Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ո՛վ որ մեղք կը գործէ, մեղքին ծառայ է։ **35** Եւ ծառան միշտ տունը չի մնար. մինչդեռ Որդին յաւիտեան կը մնայ։ **36** Ուրեմն եթէ Որդին ձեզ ազատէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք։ **37** Գիտեմ որ Աբրահամի զաւակ էք, բայց դուք կ'ուզէք սպաննել զիս, որովհետեւ իմ խօսքս ձեր մէջ տեղ չունի։ **38** Ես կը պատմեմ՝ ինչ որ Հօրս քով տեսայ. իսկ դուք կ'ընէք՝ ինչ որ ձեր հօրմէն սորված էք»։

39 «Մեր հայրը Աբրահամն է», պատասխանեցին անոնք։ «Եթէ Աբրահամի որդիներն ըլլայիք, ըսաւ Յիսուս, Աբրահամին գործերը պիտի ընէիք։ **40** Բայց հիմա դուք կ'ուզէք սպաննել զիս, մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւնը խօսեցայ եւ զոր լսեցի իմ Հօրմէս. այդ բանը չըրաւ Աբրահամ։ **41** Դուք ձեր հօրը գործերը կ'ընէք»։ Պատասխանեցին. «Մենք պոռնկորդի չենք. մենք մէկ հայր ունինք, Աստուած»։

42 Յիսուս պատասխանեց. «Եթէ Աստուած ըլլար ձեր հայրը՝ զիս ալ պիտի սիրէիք անշուշտ, որովհետեւ ես Աստուծոյն ելայ եւ եկայ, եւ ոչ թէ ինքիւրմէս եկայ, այլ՝ ան ղրկեց զիս։ **43** Ինչո՞ւ չէք հասկնար իմ լեզուս. որովհետեւ չէք կրնար հանդուրժել իմ խօսքերուս։ **44** Ձեր հայրը սատանան է, եւ դուք կ'ուզէք ձեր Հօր ցանկութիւնը կատարել. որովհետեւ ան սկիզբէն մարդասպան էր եւ ճշմարտութեան մէջ չմնաց. քանի որ անոր մէջ ճշմարտութիւն չկայ։ Երբ սուտ խօսի, իր խորքէն կը խօսի, որովհետեւ ստախօս է եւ հայր ստախօսութեան։ **45** Իսկ ես, որ ճշմարտութիւնը կը խօսիմ, չէք հասկնար զիս։ **46** Ձեզմէ ո՞վ կրնայ իբր մեղաւոր մեղադրել զիս. եթէ ճշմարտութիւնը կ'ըսեմ՝ ինչո՞ւ չէք հաւատար

36 – Յիսուս կը հակադրէ Հրեաներու ազգային ազատութեան հպարտութիւնը՝ Աստուծոյ որդիներու ճշմարիտ ազատութեանը, որ մեղքէ ու յաւիտեանական մահէ ազատ ու գերեւ ըլլալու վրայ կը կայանայ։

41 – Հրեաներու ըմբռնումին համաձայն, հեթանոսները պոռնկութենէ կը սերին, որովհետեւ անոնք սուտ աստուածներու կը ծառայէին։ Կոապաշտութիւնը, Հին Կտակարանին մէջ, յաճախ պոռնկութիւն անունով որակուած է։

ինծի: 47 Ո՛վ որ Աստուծոմէ է՝ կը լսէ Աստուծոյ խօսքը. դուք՝ որովհետեւ Աստուծոմէ չէք՝ ասոր համար չէք լսեր»:

48 Հրեաները պատասխանեցին անոր. «Իրաւունք չունի՞նք ըսելու՝ թէ Սամարացի ես ու դեւ կայ մէջդ»: 49 «Իմ մէջն դեւ չկայ, պատասխանեց Յիսուս, այլ՝ կը պատւեմ Հայրս եւ դուք կ'անարգէք զիս: 50 Ես չեմ փնտռեր իմ փառքս. կայ մէկը՝ որ կը փնտռէ զայն ու կը դատէ: 51 Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մէկը իմ խօսքս պահէ՝ մահ պիտի չտեսնէ յաւիտեան»: 52 Հրեաները անոր ըսին. «Հիմա հասկցանք որ դեւ կայ մէջդ. Աբրահամ մեռաւ, մարգարէներն ալ մեռան. իսկ դուն կ'ըսես՝ եթէ մէկը խօսքս պահէ՝ մահ պիտի չճաշակէ յաւիտեան: 53 Միթէ դուն աւելի՞ մեծ ես քան մեր հայրը Աբրահամ, որ մեռաւ. մարգարէներն ալ մեռան. արդ, ինքզինքդ ո՞վ կը կարծես»:

54 Յիսուս պատասխանեց. «Եթէ ես ինքզինքս փառաւորեմ, ոչինչ է իմ փառքս. Հայրս է որ զիս կը փառաւորէ, ան՝ որուն համար դուք կ'ըսէք՝ թէ մեր Աստուածն է: 55 Դուք զինքը չէք ճանչնար, բայց ես զինքը կը ճանչնամ. եւ եթէ ըսեմ՝ թէ չեմ ճանչնար զինքը, ձեզի նման ստախօս կ'ըլլամ. բայց կը ճանչնամ զինքը եւ կը պահեմ անոր խօսքը: 56 Աբրահամ՝ ձեր հայրը, փափաքեցաւ տեսնել իմ օրս. տեսաւ եւ ուրախացաւ»:

57 «Դուն դեռ յիսուն տարեկան չկաս, ըսին հրեաները, եւ Աբրահա՞մը տեսար»: 58 Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես»: 59 Քար առին հրեաները որպէսզի վրան նետեն, բայց Յիսուս խոյս տուաւ եւ ելաւ գնաց տաճարէն:

48 – Հրեաներու աչքին հեթանոս էին Սամարացիները, որոնք սատանաներու բաժին կ'իյնային:

Ի ծնէ կոյրին քոշկութիւնը

9 **1** Անցնելու ատեն՝ ի ծնէ կոյր մը տեսաւ: **2** Աչակերտները հարցուցին իրեն. «Ռաբբի՛, մեղքը որո՞ւնն է. իրե՞նն է, թէ ծնողքին, որ կոյր ծներ է»: **3** Յիսուս պատասխանեց. «Մեղքը ո՛չ անորն է, ո՛չ հօրը եւ ո՛չ ալ մօրը. այլ՝ որպէսզի Աստուծոյ գործերը յայտնուին անով: **4** Եւ ես պէտք է կատարեմ գործերն անոր՝ որ զիս ղրկեց, քանի որ տակաւին ցերեկ է. կու գայ գիշերը՝ երբ ոչ ոք կրնայ գործել: **5** Քանի դեռ աշխարհիս վրայ եմ, աշխարհիս լոյսն եմ»:

6 Այս ըսելով՝ գետինը թփաւ եւ թուփով կաւ շինեց եւ կաւով կոյրին աչքերը ծեփեց **7** եւ ըսաւ. «Գնա՛, լուացուէ՛ Սելովամի՛ աւազանին մէջ», որ կը նշանակէ՝ առաքեալ: Գնաց, լուացուեցաւ. դարձաւ ու կը տեսնէր: **8** Իսկ դրացիները եւ անոնք որ նախապէս տեսած էին զանիկա, թէ մուրացկան էր, կը հարցնէին. «Ասիկա չէ՞ր այն մարդը, որ նստած կը մուրար»:

9 Ոմանք կ'ըսէին՝ թէ ան է. ուրիշներ կ'ըսէին՝ թէ ո՛չ, այլ անոր կը նմանի. իսկ ինքը կ'ըսէր՝ թէ ես եմ: **10** «Աչքերդ ի՞նչպէս բացուեցան», հարցուցին անոր: **11** «Մարդ մը, որուն Յիսուս կ'ըսեն - պատասխանեց - կաւ շինեց, անով աչքերս ծեփեց եւ ըսաւ ինծի. Գնա՛ Սելովամ, լուացուէ՛: Գացի, լուացուեցայ ու կը տեսնեմ»: **12** «Ո՛ր է ան», հարցուցին: «Չեմ գիտեր», պատասխանեց:

13 Փարիսեցիներուն տարին զանիկա՝ որ կոյր էր ատենօք: **14** Շաբաթ օր մըն էր երբ Յիսուս կաւ շինեց եւ կոյրին աչքերը բացաւ: **15** Այն ատեն փարիսեցիները դարձեալ հարցուցին անոր. «Ի՞նչպէս կը տեսնես». եւ ան պատասխանեց անոնց. «Աչքերուս վրայ կաւ դրաւ, լուացուեցայ եւ կը տեսնեմ»: **16** Փարիսեցիներէն ոմանք ըսին. «Աստուծմէ չէ այն մարդը, քանի որ շաբաթ չի պահեր»: Ուրիշներ կ'ըսէին. «Ի՞նչպէս կրնայ մեղաւոր մարդ մը այսպէս հրաշքներ ընել»: Եւ իրենց մէջ տարակարծութիւն կար:

Գլ. 9, 2 – Հրեաներու ըմբռնումին համաձայն, ամէն մարդկային չարիք ուղղակի հետեւանք է անձնական, կամ ծնողաց եւ կամ նախնեաց կողմէ գործուած մեղքերու:

17 Դարձեալ հարցուցին կոյրին. «Դուք ի՞նչ կ'ըսես այն մարդուն համար, որ աչքերդ բացաւ»: «Մարգարէ է», պատասխանեց ան: **18** Հրեաները չէին հաւատար թէ կոյր էր եւ աչքերը բացուած էին, այնքան որ անոր ծնողքը կանչեցին: **19** Հարցուցին անոնց. «Ա՞ն է ձեր որդին, որուն համար կ'ըսէիք՝ թէ կոյր ծնած է. ի՞նչպէս կ'ըլլայ որ հիմա կը տեսնէ»:

20 «Գիտենք թէ ա'ս է մեր որդին, պատասխանեցին ծնողները, եւ թէ կոյր ծնաւ. **21** բայց թէ հիմա ի՞նչպէս կը տեսնէ՝ չենք գիտեր. չենք ալ գիտեր՝ թէ ով բացաւ անոր աչքերը. իրեն հարցուցէք. չափահաս է, ինքը թող խօսի իր մասին»: **22** Այսպէս ըսին ծնողքը, որովհետեւ կը վախնային հրեաներէն, քանի որ հրեաները խօսք դրած էին՝ ժողովարանէն դուրս վտարել ո'վ որ դաւանի թէ ա'ն է Քրիստոսը: **23** Ասոր համար կոյրին ծնողներն ըսին՝ թէ չափահաս է, իրեն հարցուցէք:

24 Կրկին անգամ կանչեցին մարդը որ կոյր էր, եւ ըսին իրեն. «Փառք տուր Աստուծոյ. մենք գիտենք որ այն մարդը մեղաւոր է»:
25 «Թէ մեղաւոր է՝ ես չեմ գիտեր, պատասխանեց ան. բայց միայն գիտեմ որ կոյր էի եւ հիմա կը տեսնեմ»: Դարձեալ հարցուցին.
26 «Ի՞նչ ըրաւ քեզի, ի՞նչպէս բացաւ աչքերդ»: **27** «Դեռ հիմա ըսի ձեզի, պատասխանեց անոնց, եւ մտիկ չըրիք. ինչո՞ւ կ'ուզէք անգամ մըն ալ լսել. միթէ դո՞ւք ալ կ'ուզէք անոր աշակերտ ըլլալ»: **28** Անոնք կը նախատէին ու կ'ըսէին. «Դո՛ւն եղիր անոր աշակերտ, **29** մենք Մովսէսի աշակերտ ենք: Մենք գիտենք թէ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ. իսկ ասիկա՝ չենք գիտեր թէ ուրկէ՛ է»:

30 «Այդ է զարմանալին, պատասխանեց մարդը, որ դուք չէք գիտեր՝ թէ ուրկէ է, եւ սակայն իմ աչքերս բացաւ: **31** Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չ'ըներ, բայց երբ մէկը աստուածապաշտ է եւ իր կամքը կը կատարէ՝ անոր մտիկ կ'ընէ: **32** Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած բան չէ՝ որ մէկը ի ծնէ կոյրի մը աչքերը բացած ըլլայ: **33** Եթէ այն մարդը Աստուծոմէ չըլլար՝ բան պիտի չկարենար ընել»: **34** «Դուք ամբողջովին մեղքերու մէջ ծնած ես, պատասխանեցին, ու մեզի դա՞ն կու տաս»: Եւ դուրս վռնտեցին զինքը:

35 Յիսուս լսեց որ դուրս վտարեցին զանիկա, եւ երբ գտաւ՝ ըսաւ անոր. «Կը հաւատամ՞ Մարդու Որդիին»: **36** «Տէ՛ր, պատասխանեց, ո՞վ է որ հաւատամ անոր»: **37** «Դուն տեսար զինքը, ըսաւ Յիսուս, եւ ա՛ն է որ քեզի հետ կը խօսի»: **38** «Կը հաւատամ, Տէ՛ր», ըսաւ, եւ երկրպագեց անոր: **39** Յիսուս ըսաւ. «Դատաստան ընելու համար եկայ այս աշխարհս, որպէսզի անոնք որ չեն տեսներ՝ տեսնեն, եւ տեսնողներն ալ կուրնան»: **40** Փարիսեցիներէն ոմանք, որ անոր հետ էին, այս խօսքը լսելով՝ ըսին. «Միթէ մե՞նք ալ կոյր ենք»: **41** «Եթէ կոյր ըլլայիք, պատասխանեց Յիսուս, մեղք պիտի չունենայիք. բայց հիմա որ կ'ըսէք թէ կը տեսնենք, ձեր մեղքը կը մնայ ձեր մէջ»:

Անձնուէր ու քաջ հովիւր

10 **1** «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, ո՛վ որ դռնէն չի մտներ ոչխարներու փարախը, այլ՝ ուրիշ տեղէ կը մտնէ, անիկա գող է եւ աւազակ: **2** Իսկ ո՛վ որ դռնէն կը մտնէ՝ ան հովիւ է ոչխարներուն: **3** Դռնապանը կը բանայ անոր եւ ոչխարները մտիկ կ'ընեն անոր ձայնին. ան իր ոչխարները իրենց անունով կը կանչէ եւ դուրս կը հանէ: **4** Երբ բոլոր ոչխարները դուրս հանէ՝ ինք անոնց առջեւէն կ'երթայ եւ ոչխարները իրեն կը հետեւին, որովհետեւ կը ճանչնան անոր ձայնը: **5** Օտարին ետեւէն չեն երթար, այլ կը փախչին անկէ, որովհետեւ չեն ճանչնար օտարներու ձայնը»: **6** Յիսուս այս առակը պատմեց անոնց, բայց անոնք չհասկցան՝ թէ ի՛նչ բանի վրայ կը խօսէր:

7 Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, է՛ս եմ ոչխարներու դուռը: **8** Բոլոր անոնք, որ ինծմէ առաջ եկան՝ գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց մտիկ չըրին: **9** Ե՛ս եմ դուռը, եթէ մէկը ինծմէ ներս մտնէ՝ պիտի փրկուի. պի-

Գլ. 10, 9 – Փրկիչը հոս իր անձը ցոյց կու տայ մեզի իբր դուռ, որ դէպի փառապաշտօնը եւ ուրիշ բնութիւն հովիւր միայն կրնայ ոչխարներուն մօտ երթալ: Փարիսեցիները բնութիւն հովիւներ չեն, որովհետեւ անոնք կը մոլորեցնեն ժողովուրդը եւ կեանքի իրական բարիքները կը յափշտակեն անոնցմէ:

տի մտնէ եւ պիտի ելլէ ու ճարակ պիտի գտնէ: **10** Գողը չի գար՝ եթէ ոչ՝ գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ որ-պէսզի կեանք ունենան եւ առատօրէ՛ն ունենան:

11 Ե՛ս եմ բարի հովիւը. բարի հովիւը իր կեանքը կու տայ ոչ-խարներուն համար: **12** Իսկ վարձկանը, որ հովիւ չէ, եւ որուն չեն պատկանիր ոչխարները եւ կը փախչի, եւ գայլը կը յափշտակէ զա-նոնք ու կը ցրուէ: **13** Որովհետեւ վարձկան է եւ հոգ չընեն ոչխար-ներուն համար:

14 Ե՛ս եմ բարի հովիւը. կը ճանչնամ իմիններս ու անոնք ալ զիս կը ճանչնան: **15** Ինչպէս որ Հայրը զիս կը ճանչնայ, ե՛ս ալ Հայրը կը ճանչնամ. եւ ոչխարներուն համար կեանքս ալ կու տամ: **16** Ու-րիշ ոչխարներ ալ ունիմ որ այս փարախէն չեն. զանոնք ալ պէտք է հոս բերեմ, եւ ձայնիս մտիկ պիտի ընեն, ու պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ: **17** Ասոր համար է որ Հայրս կը սիրէ զիս. որովհետեւ ես կեանքս կու տամ, որպէսզի նորէն առնեմ: **18** Ո՛չ ոք ինծմէ կ'առնէ զայն, այլ ես ինքիրմէս կու տամ. իշխանութիւն ունիմ տալու եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնելու: Այս պատուէրը զոր Հօրմէս ստացայ»:

19 Դարձեալ տարակարծութիւն ինկաւ հրեաներուն մէջ այս խօսքերուն համար: **20** Եւ անոնցմէ շատերը կ'ըսէին. «Դիւահար է եւ խելքը կորսնցուցած, ինչո՞ւ մտիկ կ'ընէք անոր»: **21** Ուրիշ-ներ կ'ըսէին. «Այդպիսի խօսքերը դիւահարի չեն. միթէ դեւը կրնա՞յ կոյրին աչքը բանալ»:

10 – Արդարացումով, շնորհիվ ու երկմաւոր փառքի տուչութեամբ, որոնց լրացումն է մարմնոյ յարութիւնը:

16 – Աստուածային Հովիւը պիտի ֆանդէ Հրեաներու միջեւ գտնուող հին միջնորմը, եւ զամէնքը իրարու միացնելով՝ պիտի կազմէ մէկ հօտ: Փրկչին այս խոստումը լիովին պիտի իրականանայ աշխարհի կատարածին:

18 – Յիսուս իր յարութիւն առնելուն ի՛նք եւս գործակից եղաւ՝ իբր Աստ-ւած, հետեւաբար Քրիստոսի անձին վրայ միացած են երկու բնութիւն: – Մեր Տէրը, փրկագործութիւնն ի գլուխ հանելու համար, Հօրմէն իրեն առաջարկուած զանազան կերպերէն մէկը ընտրեց: Այս իր ընտրածը, որ նոյնպէս առաջարկ-ւած էր իր Հօրմէն իրեն, կրնայ Հօրը հրամանը կամ առաջարկը կոչուիլ:

Յիսուս՝ Որդի Աստուծոյ

22 Այն ատեն Երուսաղէմի մէջ Նաւակատիք էր. եւ ձմեռ էր: **23** Յիսուս կը շրջէր տաճարին Սողոմոնեան սրահին մէջ: **24** Հրեաները անոր շուրջն հաւաքուեցան եւ ըսին. «Մինչեւ ե՞րբ պիտի տանջես մեր հոգին. եթէ դուն ես Քրիստոսը՝ ըսէ՛ մեզի յայտնապէս»: **25** Յիսուս պատասխանեց անոնց. «Ըսի՜ ձեզի ու չէք հաւատար ինծի. գործերը՝ զոր ես կը կատարեմ Հօրս անուանով՝ անոնք կը վկայեն ինծի համար: **26** Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: **27** Իմ ոչխարներս ձայնիս մօտիկ կ'ընեն եւ ես կը ճանչնամ զանոնք ու ետեւէս կ'ու գան: **28** Եւ ես անոնց յաւիտեանական կեանք կ'ու տամ ու անոնք յաւիտեան պիտի չկորսուին. ո՛չ ոք պիտի յափշտակէ զանոնք իմ ձեռքէս: **29** Հայրս, որ զանոնք ինծի տուաւ՝ բոլորէն մեծ է, եւ ո՛չ ոք կրնայ Հօրս ձեռքէն յափշտակել զանոնք: **30** Ես եւ Հայրս մէկ ենք»:

31 Դարձեալ քար առին հրեաները, որպէսզի քարկոծեն զինքը: **32** Յիսուս պատասխանեց անոնց. «Շատ մը բարի գործեր ցոյց տուի ձեզի իմ Հօրմէս. այդ գործերէն որո՞ւն համար կը քարկոծէք զիս»: **33** Հրեաները պատասխանեցին. «Բարի գործի համար չէ որ կը քարկոծենք քեզ, այլ՝ հայհոյութեան համար. որովհետեւ դուն մարդ ես եւ ինքզինքդ Աստուած կը համարիս»:

34 Յիսուս պատասխանեց անոնց. «**25**^o որ ձեր Օրէնքին մէջ գրուած է. Ես ըսի որ աստուածներ էի: **35** Արդ եթէ աստուածներ կը կոչէ զանոնք, որոնց ուղղուած էր Աստուծոյ խօսքը, - եւ Գիրը չի ջնջուիր - **36** դուք ի՞նչպէս կրնաք «Կը հայհոյես» ըսել անոր՝ զոր Հայրը նուիրագործած եւ աշխարհ ղրկած է. որովհետեւ ըսի՜ թէ Աստուծոյ Որդի եմ: **37** Եթէ չեմ կատարեր Հօրս գործերը՝ մի՛ հաւատաք ինծի. **38** իսկ եթէ կը կատարեմ՝ նոյնիսկ եթէ ինծի չհաւատաք, գոնէ գործերուս հաւատացէ՛ք. որպէսզի գիտնաք ու ճանչնաք՝ թէ Հայրը իմ մէջս է եւ ես Հօրս մէջ»:

34 - Եթէ Օրէնքը (Հին Կտակարանը) դատաւորներն իբր Աստուծոյ տեղապահները՝ «աստուածներ» կ'անուանէ, ապա ո՛րչափ եւս առաւել կարող է ինքզինքն «Աստուծոյ Որդի» անուանել ան՝ որ Հօրմէ օծուելով՝ ղրկուած է աշխարհ:

39 Դարձեալ կ'ուզէին բռնել զինքը՝ բայց ան ազատուեցաւ անոնց ձեռքէն: 40 Ու նորէն գնաց Յորդանանի միւս կողմը, այն տեղ՝ ուր Յովհաննէս նախապէս կը մկրտէր, եւ հոն մնաց: 41 Շատեր իր մօտ եկան եւ կ'ըսէին՝ թէ Յովհաննէս ոչ մէկ հրաշք գործեց, բայց ինչ որ ըսաւ Յիսուսի համար՝ ճշմարիտ էր. եւ հոն շատեր հաւատացին անոր:

Ղազարոսի յարութիւնը

11 1 Ղազարոս անունով հիւանդ մը կար, Բեթանիայէն, Մարիամի եւ անոր քրոջ՝ Մարթայի զիւղէն: 2 Այս այն Մարիամն էր, որ անուշաբոյր իւղով օծեց Տէրը եւ մագերով սրբեց անոր ոտքերը. ասոր եղբայրը՝ Ղազարոս, հիւանդ էր: 3 Քոյրերը մարդ զրկեցին Յիսուսին եւ ըսին. «Տէ՛ր, ահա ասիկ ան գոր կը սիրէիր՝ հիւանդ է»:

4 Յիսուս, երբ լսեց՝ ըսաւ. «Այդ հիւանդութիւնը մահուան պիտի չտանի, այլ՝ Աստուծոյ փառքին համար է, որպէսզի անով փառաւորուի Աստուծոյ Որդին»: 5 Յիսուս կը սիրէր Մարթան, անոր քոյրը, Մարիամը, եւ Ղազարը: 6 Երբ լսեց թէ ասիկա հիւանդ է, երկու օր եւս կեցաւ հոն՝ ուր կը գտնուէր: Յետոյ ըսաւ աշակերտներուն. 7 «Եկէ՛ք, դարձեալ Հրէաստան երթանք»:

8 «Ռա՛բբի, ըսին աշակերտները, հրեաները դեռ հիմա կ'ուզէին քեզ քարկոծել, եւ դուն՝ նորէ՞ն կ'ուզես հոն երթալ»: 9 «Տասներկու ժամ չէ՞ օրը, պատասխանեց Յիսուս. եթէ մէկը ցերեկը քալէ՝ չի սայլաքիր, որովհետեւ կը տեսնէ այս աշխարհի լոյսը: 10 Բայց եթէ գիշերը քալէ՝ կը սայլաքի, որովհետեւ լոյս չունի հետը»:

11 Այս ըսելէն յետոյ՝ աւելցուց. «Ղազարոս, մեր բարեկամը

Գլ. 11, 10 – Այս պատկերաւոր խօսքով Փրկիչը այս հասկցնել կ'ուզէ. Որքան ատեն որ իմ գործունէութեան ժամանակը, որ Հօրմէ որոշուած ու սահմանւած է, կը տեւէ, ո՛չ մէկ իշխանութիւն ունի թշնամիներս իմ վրաս, երբ սակայն ժամանակս լրանայ՝ այն ատեն պիտի մատուով թշնամիներուս ձեռքը:

քնացեր է՝ երթամ, արթնցնեմ զինքը»։ **12** «Տէ՛ր, ըսին աշակերտները, եթէ քնացեր է՝ ուրեմն կ'ապրի»։ **13** Յիսուս կ'աղնարկէր անոր մահուան, սակայն անոնք այնպէս կարծեցին՝ թէ քնանալու մասին կ'ըսէր։ **14** Այն ատեն Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց. «Ղազարոս մեռաւ։ **15** Եւ ես ուրախ եմ ձեզի համար, որ հոն չէի, որպէսզի դուք ալ հաւատաք. ուրեմն եկէ՛ք հիմա անոր երթանք»։ **16** Թո՛վմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, ըսաւ իր աշակերտակիցներուն. «Օ՛ն, երթա՛նք մենք ալ անոր հետ մեռնինք»։

17 Յիսուս եկաւ եւ գտաւ զանիկա՝ չորս օրէ ի վեր գերեզման դրուած։ **18** Բեթանիա Երուսաղէմէն տասնհինգ ասպարէզի չափ հեռու էր։ **19** Հրեաներէն շատեր եկած էին Մարթայի եւ Մարիամի մօտ, որպէսզի մխրթարեն զանոնք, իրենց եղբօր մահուան համար։

20 Մարթա, լսելով որ Յիսուս կու գայ՝ դիմաւորելու գնաց, մինչ Մարիամ տունը մնացած էր։ **21** Մարթա ըսաւ Յիսուսին. «Տէ՛ր, եթէ դուն հոս եղած ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ։ **22** Բայց հիմակ ալ, գիտեմ թէ ինչ որ Աստուծո՛մէ խնդրես՝ Աստուծո՛ւ կու տայ քեզի»։

23 Յիսուս ըսաւ անոր. «Եղբայրդ յարուլթիւն պիտի առնէ»։ **24** «Գիտեմ, պատասխանեց Մարթա, թէ յարուլթիւն պիտի առնէ, վերջին օրը, յարուլթեան ժամանակ»։ **25** «Ե՛ս եմ յարուլթիւնն ու կեանքը, ըսաւ Յիսուս. ո՛վ որ կը հաւատայ ինծի, նոյնիսկ եթէ մեռնի՝ պիտի ապրի։ **26** Իսկ ո՛վ որ ողջ է եւ կը հաւատայ ինծի՝ պիտի չմեռնի յաւիտեան. կը հաւատա՞ս ասոր»։ **27** «Այո՛, Տէր, ըսաւ Մարթա, ես հաւատացի՝ թէ դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր»։ **28** Այս ըսելէն վերջ, գնաց կան-

25 – Այստեղ Յիսուս իր անձը ցոյց կու տայ իբր Աստուծոյ Որդի, որ իր անձանակամ աստուածային իշխանութեամբը կարող է յարութիւն առնել եւ բոլոր մեռելներու յարութիւն առնել տալ։ Այն որ իրեն կը հաւատայ՝ կ'ունենայ կեանք մը որ մարմնաւոր կեանքէն ալ անդին կ'ապրի, եւ ո՛չ մէկ բան կարող է եղծանել զայն։ Իսկ այն որ իրեն չի հաւատար՝ չհաւատացողն ալ յարութիւն կ'առնէ, սակայն անոր յարութիւնը կ'ըլլայ յարութիւն յաւիտեանակամ մահուան համար։

չելու իր քոյրը՝ Մարիամը, ցած ձայնով ըսելով. «Վարդապետը եկած է եւ քեզ կը կանչէ»։ **29** Մարիամ, հագիւ թէ լսեց՝ իսկոյն ելաւ եւ մօտը եկաւ։

30 Յիսուս տակաւին գիւղ մտած չէր, այլ դեռ հոն էր՝ ուր Մարթա զիմաւորած էր գինքը։ **31** Իսկ հրեաները, որ Մարիամին հետ տունն էին ու կը մխրթարէին գինքը, երբ տեսան թէ Մարիամ աճապարանքով ելաւ ու գնաց, իրենք ալ ետեւէն գացին. կը կարծէին թէ գերեզման կ'երթայ լալու համար։ **32** Իսկ Մարիամ՝ երբ Յիսուսի կեցած տեղը հասաւ ու զանիկա տեսաւ՝ անոր ոտքն ինկաւ եւ ըսաւ. **33** «Տէ՛ր, եթէ հոս եղած ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ»։ Յիսուս, տեսնելով՝ թէ անիկա կու լայ, անոր ընկերացող հրեաներն ալ կու լան, հոգիով խռոված եւ յուզուած՝ հարցուց. «Ո՛ր դրիք զանիկա»։ **34** «Տէ՛ր, եկո՛ւր եւ տես», ըսին անոր։ **35** Եւ Յիսուս արտասուեց։

36 Հրեաները կ'ըսէին. «Տեսէ՛ք, ո՛րչափ կը սիրէր գինքը»։ **37** Բայց անոնցմէ ոմանք կ'ըսէին. «Ասիկա, որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս ընել՝ որ աս ալ չմեռնէր»։ **38** Յիսուս, դարձեալ սրտէն զայրանալով, գերեզման եկաւ, որ քարայր մըն էր եւ վէմ մը դրուած էր վրան։ **39** «Վերցուցէ՛ք այդ քարը», ըսաւ Յիսուս։ Մեռեալին քոյրը՝ Մարթա, ըսաւ անոր. «Տէ՛ր, արդէն իսկ հոտած պիտի ըլլայ, որովհետեւ չորս օրուան է»։ **40** «Քեզի չըսի՞, պատասխանեց Յիսուս, որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես»։ Եւ երբ քարը վերցուցին, **41** Յիսուս աչքերը բարձրացուց եւ ըսաւ. «Հա՛յր, շնորհակալ եմ քեզի, որ ինծի մտիկ ըրիր։ **42** Ես գիտէի որ միշտ մտիկ կ'ընես ինծի. բայց չուրջս գտնուող ժողովուրդին համար է որ կ'ընեմ, որպէսզի հաւատան՝ թէ դուն զրկեցիր զիս»։ **43** Այս ըսելէն վերջ՝ բարձրաձայն գոչեց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր»։ **44** Եւ մեռեալը դուրս եկաւ, ոտքերը կապուած, ձեռքերը երիզներով պնդուած, եւ դէմքը վարչամակով փաթթուած։ Յիսուս ըսաւ. «Քակեցէ՛ք եւ թողուցէ՛ք որ երթայ»։

45 Հրեաներէն չատերը, որ Մարիամենց տունը եկած էին, տեսնելով Յիսուսի ըրածը՝ հաւատացին անոր։ **46** Եւ անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն պատմեցին ինչ ըրաւ Յիսուս։

Մահավնիւ Յիսուսի դէմ

47 Քահանայապետներն ու փարիսեցիները ժողով գումարեցին եւ ըսին. «Ի՞նչ ընելու ենք. որովհետեւ այդ մարդը շատ հրաշքներ կ'ընէ: **48** Եթէ այնպէս թողունք՝ ամէնքը իրեն պիտի հաւատան, եւ հռոմայեցիները պիտի գան ու պիտի կործանեն մեր ազգն ու երկիրը»:

49 Անոնցմէ մէկը, որ Կայիափա կը կոչուէր, եւ որ այն տարին քահանայապետ էր, ըսաւ անոնց. **50** «Դուք բան չէք գիտեր, եւ ոչ իսկ խորհիլ. մեզի աւելի լաւ է՝ որ մարդ մը մեռնի ժողովուրդին համար, քան թէ բոլոր ազգը կորսուի»: **51** Այս խօսքը ինքիրմէն չըսաւ, այլ՝ որովհետեւ տարուան քահանայապետն էր, մարգարէացաւ թէ Յիսուս պիտի մեռնէր ազգին համար: **52** Եւ ո՛չ միայն ազգին համար՝ այլ որպէսզի Աստուծոյ ցիրուցան որդիները մէկ-տեղ հաւաքէ: **53** Այն օրէն ետք, վճռեցին սպաննել Յիսուսը:

Յիսուս Երուսաղէմէն կը հեռանայ

54 Այնուհետեւ Յիսուս ա'լ համարձակ չէր չըջեր հրեաներու մէջ, այլ զնաց անապատին մօտակայ տեղ մը, Եփրայիմ կոչուած քաղաքը, եւ հոն մնաց իր աշակերտներով միասին: **55** Մօտ էր հրեաներու Զատիկը, եւ այն գաւառէն շատեր Երուսաղէմ ելան Զատիկէն առաջ, որպէսզի իրենք զիրենք մաքրեն: Կը փնտռէին Յիսուսը, **56** եւ տաճարին մէջ կեցած՝ իրարու կ'ըսէին. «Ի՞նչ կը կարծէք, պիտի չգա՞յ այս տօնին»: **57** Քահանայապետներն ու փարիսեցիները պատուիրած էին, որ եթէ մէկը անոր ո'ւր ըլլալը գիտնայ՝ իմացնէ, որպէսզի ձերբակալեն զայն:

49 – Հերովդէսէն ապիւն, քահանայապետութեան պաշտօնն ու պատիւը միշտ մէկ տարուան համար միայն կը տրուէր:

51 – Կայիափա մարգարէական հոգիով խօսեցաւ այս մեծ ճշմարտութիւնը, Քրիստոսի մահը կարողութիւն պիտի ունենայ բովանդակ աշխարհը փրկելու:

Բեթանիայի ընթրիքը

12 ¹ Զատիկէն վեց օր առաջ Յիսուս Բեթանիա եկաւ, ուր կը գտնուէր Ղազարը, այն՝ որ մեռած էր եւ որուն յարուածին տուած էր ինքը: ² Հոն ընթրիք մը տուին Յիսուսին եւ Մարթա կը ծառայէր. Ղազար ալ սեղանակիցներէն մէկն էր: ³ Իսկ Մարիամ, առնելով լիտր մը նարդոսի ազնիւ եւ թանկագին իւղ, անով Յիսուսի ոտքերը օծեց եւ իր մազերով սրբեց, մինչ տունը լեցուեցաւ իւղին բոյրով:

⁴ Աչակերտներէն մէկը՝ Յուդա Իսկարիովտացի, որ Յիսուսի մատնիչը պիտի ըլլար, ըսաւ: ⁵ «Ինչո՞ւ այդ իւղը երեքհարիւր դենարի չծախուեցաւ եւ աղքատներուն չտրուեցաւ»: ⁶ Այսպէս ըսաւ, ո՛չ անոր համար որ աղքատներուն մասին հոգ կ'ընէր, այլ՝ որովհետեւ գող էր եւ գանձանակը իր մօտ ըլլալով, ինչ որ հոն ձգուէր՝ ինքը կ'առնէր: ⁷ Յիսուս ըսաւ. «Թոյլ տուր ատոր. թաղումի օրուանս համար պահած էր այդ իւղը: ⁸ Աղքատները միշտ ձեզի հետ ունիք, բայց զիս միշտ ձեզի հետ չունիք»:

⁹ Բազմաթիւ հրեաներ, իմանալով որ Յիսուս հոն է, եկան ո՛չ միայն Յիսուսի համար, այլ որպէսզի Ղազարն ալ տեսնեն, որուն յարուածին տուած էր մեռելայնէն: ¹⁰ Իսկ քահանայապետները խորհուրդ ըրին որ Ղազարն ալ մեռցնեն: ¹¹ Որովհետեւ հրեաներէն չատեր, անոր պատճառով, կ'երթային եւ կը հաւատային Յիսուսին:

Յիսուսի յաղթական մուտքը

¹² Հետեւեալ օրը ժողովուրդի բազմութիւն մը, որ տօնին եկած էին, լսելով թէ ¹³ Յիսուս Երուսաղէմ կու գայ՝ արմաւենիի ոտեր առին եւ դիմաւորեցին զինքը աղաղակելով. «Ովսանա՛ւ, օրհնեա՛ւ ըլլայ այն՝ որ Տիրոջ անունով կու գայ, Իսրայէլի թագաւորը»: ¹⁴ Եւ Յիսուս, էչ մը գտնելով՝ վրան նստաւ, ինչպէս գրուած է. ¹⁵ «Մի՛ վախճար, դուստր Սիոնի, ահա քագաւորդ կու գայ իշու աւանակի վրայ նստած»: ¹⁶ Սկիզբը, աչակերտները չհասկցան այս բաները, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝ այն

ատեն յիշեցին թէ այս խօսքերը Յիսուսի համար գրուած էին, եւ թէ իրենք ա՛յդ ըրած էին անոր:

17 Եւ Յիսուսի ընկերացող ժողովուրդը վկայ եղած էր՝ երբ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց եւ յարութիւն տուաւ անոր: **18** ասոր համար ժողովուրդը զինքը դիմաւորելու ելաւ, որովհետեւ լսել էր՝ թէ այդ հրաշքը կատարած էր: **19** Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք որ բան չէք շահիր, ահաւասիկ արար աշխարհ անոր ետեւէն գնաց»:

Հեթանոսներու յարգանքը

20 Տօնին առիթով երկրպագութեան եկողներուն մէջ հեթանոսներ ալ կային: **21** Անոնք մօտեցան Փիլիպպոսին, որ Գալիլեայի Բեթսաիդայէն էր, աղաչեցին անոր եւ ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: **22** Փիլիպպոս եկաւ Անդրէասին ըսաւ, Անդրէաս եւ Փիլիպպոս՝ Յիսուսին հաղորդեցին, **23** Յիսուս պատասխանեց անոնց. «Հասաւ ժամը որ Մարդու Որդին փառաւորուի:

24 Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ ու չմեռնի՝ ինք մինակ կը մնայ. իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կու տայ: **25** Ո՛վ որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցընէ զայն. եւ ո՛վ որ կ'ատէ իր անձը այս աշխարհիս մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն: **26** Եթէ մէկը ուզէ ինծի ծառայել՝ իմ ետեւէս թող գայ, եւ ուր որ ես եմ՝ իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ: Եթէ մէկը ծառայէ ինծի՝ Հայրս պիտի պատէ զայն:

27 Բայց հիմա հոգիս խռոված է, եւ ի՞նչ ըսեմ. Հա՛յր, ազատէ՛ զիս այս ժամէն. բայց ճիշդ ասոր համար է որ այս ժամուս հասայ: **28** Հա՛յր, փառաւորէ՛ քու անունդ»: Ձայն մը եկաւ երկինքէն. «Փառաւորեցի, եւ դարձեալ պիտի փառաւորեմ»: **29** Ժողովուրդը, որ ներկայ էր ու կը լսէր ձայնը, կ'ըսէր. «Որոտում եղաւ». ու-

Գլ. 12, 27 – Մօտալուտ մահուան մտածումը կը խռովէ Քրիստոսի հոգին: Սակայն եւ այնպէս ան կը համակերպի Հօրը կամքին, որ այս երկիւղալի ու տագնապալի ժամը թողուց որ գայ իր Որդւոյն վրայ, որպէս զի ասով իրագործէ անոր փառաւորութիւնն ու աշխարհի փրկութիւնը:

ըիշներ կ'ըսէին. «Հրեշտակ մը խօսեցաւ անոր հետ»: **30** Յիսուս պատասխանեց. «Այս ձայնը ինծի համար չեկաւ, այլ ձեզի համար: **31** Հիմա է աշխարհիս դատաստանը, հիմա աշխարհիս իշխանը դուրս պիտի նետուի: **32** Եւ երբ ես բարձրանամ երկրէս՝ ամէնքն ալ ինծի պիտի քաշեմ»: **33** Աս կ'ըսէր՝ նշանակելու համար թէ ի՛նչ մահով պիտի մեռնէր: **34** Ժողովուրդը պատասխանեց. «Մենք Օրէնքէն լսած ենք՝ թէ Քրիստոսը յաւիտեան կը մնայ. իսկ դուն ի՞նչպէս կ'ըսես՝ թէ պէտք է բարձրանայ Մարդու Որդին: Ո՞վ է այդ Մարդու Որդին»:

35 Յիսուս ըսաւ անոնց. «Դեռ քիչ մը ժամանակ ձեզի հետ է լոյսը, քալեցէ՛ք քանի որ լոյսն ունիք, որպէսզի խաւարը ձեզի չհասնի. որովհետեւ ո՛վ որ խաւարի մէջ կը քալէ՝ չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ: **36** Քանի դեռ լոյսը ձեզի հետ է՝ հաւատացէ՛ք լոյսին, որպէսզի լոյսի որդիները ըլլաք»: Այս բաները խօսելէն ետք, Յիսուս գնաց ծածկուեցաւ անոնցմէ:

Հրեաներու անհաւատութիւնը

37 Թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր Յիսուս անոնց առջեւ, բայց անոնք չէին հաւատար. **38** որպէսզի կատարուի Եսայի մարգարէին խօսքը, թէ «Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր լուրին, եւ Տիրոջ բազուկը որո՞ւն յայտնուեցաւ»: **39** Անոր համար չէին կրնար հաւատալ, որովհետեւ դարձեալ կ'ըսէ Եսայի.

40 «Անոնց աչքերը կուրցուց եւ սրտերը կարծրացուց, որպէսզի

32 – Քրիստոսի մահը մագնիս մըն է, որ անդիմադրելի ուժով իրեն կը քաշէ սիրտերը:

39 – Երբ մէկը խտաւարտութեամբ կ'ընդդիմանայ Աստուծոյ շնորհքին, այնպիսին երթալով ա՛լ աւելի կը խտաւանայ, այնպէս որ այ՛լ եւս ան հաւատալ անգամ չի կրնար: Հաւատալ չուզելն ի վերջոյ կը փոխուի հաւատալ չկարենալու:

40 – Աստուած չարիք չ'ընէր երբեք, այլ միայն կը թոյլատրէ գայն: Ս. Գրքի մէջ սակայն շատ ստեպ, խիստ բացատրութեամբ, իբր Աստուծմէ դրկուած կը նշանակուին մարդկութեան վրայ եկած չարիքները: Աստուած կը բառնայ մեր-գործական շնորհքը անոնց վրայէն, որոնք յամառութեամբ իրենց աչքերը կը խփեն նշմարտութեան առջեւ, եւ կը թողու զանոնք իրենց անձին:

չըլլայ թէ աչքերով տեսնեն եւ սրտով իմանան ու դարձի գան եւ ես բժշկեմ գանոնք»:

41 Այս խօսքերն ըսաւ Յսայի, որովհետեւ տեսաւ անոր փառքը եւ խօսեցաւ անոր մասին: 42 Բայց իշխաններէն շատեր հաւատացին անոր. սակայն փարիսեցիներուն վախէն՝ չէին յայտներ, որպէսզի ժողովարանէն չարտաքսուին: 43 Որովհետեւ անոնք աւելի սիրեցին մարդոց փառքը՝ քան Աստուծոյ փառքը:

44 Յիսուս կ'աղաղակէր եւ կ'ըսէր. «Ո՛վ որ ինծի կը հաւատայ, ոչ թէ ինծի կը հաւատայ, 45 այլ անոր՝ որ զիս զրկեց: Եւ ո՛վ որ զիս կը տեսնէ, կը տեսնէ զայն՝ որ զիս զրկեց: 46 Ես իբրեւ լոյս եկայ աշխարհ, որպէսզի ո՛վ որ ինծի հաւատայ՝ խաւարի մէջ չմնայ: 47 Եթէ մէկը լսէ խօսքերս ու չպահէ զանոնք, ես չեմ դատեր զինքը, որովհետեւ աշխարհը դատելու չեկայ, այլ՝ փրկելու աշխարհը: 48 Ո՛վ որ կ'անարգէ զիս եւ չընդունիր խօսքերս՝ կա՛յ մէկը որ կը դատէ զայն. խօսքը՝ զոր ես խօսեցայ, ա՛ն պիտի դատէ զինքը վերջին օրը:

49 Որովհետեւ ես ինքիրմէս չխօսեցայ, այլ Հայրը՝ որ զրկեց զիս, ա՛ն պատուիրեց ինծի՝ ինչ որ պէտք է ըսեմ ու խօսիմ: 50 Եւ գիտեմ՝ թէ իր պատուէրը յաւիտենական կեանք է: Ուստի ինչ որ ես կը խօսիմ՝ ա՛յնպէս կը խօսիմ, ինչպէս Հայրն ինծի ըսաւ»:

Ոտնլուայ

13 **1** Զատկի տօնէն առաջ, Յիսուս, գիտնալով թէ հասած է իր ժամը, որ այս աշխարհէն Հօրը քով երթայ, սիրեց իրենները որ աշխարհի մէջ էին, ծայր աստիճան սիրեց զանոնք: **2** Ընթրիքի պահուն, երբ արդէն սատանան Սիմոնի որդի՝ Իսկարիոթացի Յուդային սրտին մէջ դրած էր որ մատնէ զինքը, **3** Յիսուս, գիտնալով որ Հայրը ամէն ինչ իր ձեռքը յանձնած էր, եւ թէ Աստուծմէ ելած էր ու Աստուծոյ կ'երթար, **4** ելաւ սեղանէն, զգեստները մէկ կողմ դրաւ եւ ղենջակ մը առնելով՝ մէջքին կապեց: **5** Յետոյ ջուր լեցնելով կոնքին մէջ՝ սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ եւ սրբել ղենջակով զոր մէջքին կապած էր:

6 Եկաւ Սիմոն Պետրոսին մօտ. «Տէ՛ր, ըսաւ Պետրոս, դո՞ւն իմ ոտքերս պիտի լուսամ»։ **7** «Ինչ որ ես կ'ընեմ, պատասխանեց Յիսուս, դուն չես հասկնար հիմա, բայց վերջը պիտի հասկնաս»։ **8** Յաւիտեան պիտի չլուսաւ իմ ոտքերս», ըսաւ անոր Պետրոս։ «Եթէ քեզ չլուսամ, աւելցուց Յիսուս, ինծի հետ բաժին պիտի չունենաս»։

9 «Տէ՛ր, ըսաւ Սիմոն Պետրոս, ո՛չ միայն ոտքերս՝ այլ նաեւ ձեռքերս ու գլուխս»։ **10** Յիսուս պատասխանեց. «Ո՛վ որ արդէն լուսացուած է, միայն ոտքերը լուսալու պէտք ունի, որովհետեւ բոլորովին մաքուր է. դուք ալ մաքուր էք, բայց ոչ ամէնքդ»։ **11** Որովհետեւ գիտէր Յիսուս՝ թէ ո՛վ էր որ զինքը պիտի մատնէր. անոր համար ըսաւ, թէ ոչ ամէնքդ մաքուր էք։

12 Անոնց ոտքերը լուսալէ ետք՝ զգեստները հագուեցաւ եւ դարձեալ սեղանի նստաւ ու ըսաւ անոնց. «Գիտէ՞ք ի՛նչ ըրի ձեզի։ **13** Դուք զիս Վարդապետ եւ Տէր կը կոչէք, եւ լա՛ւ կ'ընէք. որովհետեւ իրապէս եմ։ **14** Արդ, եթէ ես, Տէրս ու Վարդապետս, ձեր ոտքերը լուսացի, դուք ալ պարտական էք իրարու ոտքերը լուսալ։

15 Որովհետեւ օրինակ մը տուի ձեզի, որպէսզի ինչպէս որ ես ձեզի ըրի, դուք ալ ընէք։

Յիսուսի կտակը

16 Զչմարիտ, ճչմարիտ կ'ըսեմ ձեզի. ծառան մեծ չէ իր տիրոջ՝ մէն, եւ ոչ ալ զրկուածը՝ զինքը զրկողէն։ **17** Երբ այս բանը գիտէք, երանելի պիտի ըլլաք՝ եթէ գործադրէք զայն։ **18** Ամէնուդ համար չէ որ կ'ըսեմ. որովհետեւ կը ճանչնամ՝ թէ որոնք ես իմ ընտրած-

Գլ. 13, 10 – Առաքելները Քրիստոսի վարդապետութեամբն ու անոր շնորհովը մաքուր եւ սուրբ էին։ Այսուհանդերձ անոնց մարդկային զգացումներուն ու ջանքերուն վրայ կը կառչին այն փոքրիկ թերութիւնները, որոնցմէ մարդս իր ներկայ երկրաւոր կեանքի միջոցին չի կրնար բոլորովին զերծ մնալ։

14 – Այս խօսքով, Փրկիչը իր աշակերտները ո՛չ այնքան յորդորել կ'ուզէ որ անոնք եւս իր ըրած այս գործը ընեն, որքան կը պահանջէ անոնցմէ, որ իր այդ գործովը սորվեցուցած խոնարհութեան ու եղբայրսիրութեան առաքինութիւններն ի գործ դնեն։

ներս. բայց հարկ է որ կատարուի Գիրը՝ թէ Այն որ ինծի հետ հաց կ'ուտէր՝ դաւաճանեց ինծի: **19** Այժմէն կ'ըսեմ ձեզի, դեռ չպատահած. որպէսզի երբ պատահի՝ հաւատաք թէ ես եմ: **20** Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ո՛վ որ կ'ընդունի այն զոր ես պիտի ղրկեմ, զիս կ'ընդունի. եւ ո՛վ որ զիս կ'ընդունի, կ'ընդունի զայն՝ որ զիս ղրկեց:

Մատնիչը կը յայտնուի

21 Այս ըսելու ատեն՝ Յիսուս խռովեցաւ հոգիով, վկայեց եւ ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»: **22** Աշակերտները իրարու կը նայէին շուարած թէ որո՛ւ համար կ'ըսէ:

23 Աշակերտներէն մէկը, զոր կը սիրէր Յիսուս, բազմած էր Յիսուսի քով, անոր կուրծքին մօտ: **24** Սիմոն Պետրոս նշան ըրաւ անոր՝ հարցնելու թէ ո՛վ է ան որուն կ'ականարկէ: **25** Ան ալ Յիսուսի կուրծքին փարելով ըսաւ. **26** «Տէ՛ր, ո՞վ է»: «Ա՛ն է, պատասխանեց Յիսուս, որուն պիտի տամ պատառը՝ զայն թաթխելէն վերջ»: Եւ պատառը թաթխելով՝ տուաւ Յուդա Իսկարիովտացիին: **27** Պատառը առնելէն ետք՝ սատանան մտաւ անոր մէջ: Յիսուս ըսաւ անոր. «Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ»: **28** Սեղանակիցներէն ոչ ոք հասկցաւ թէ ինչ բանի համար ըսաւ անոր այս խօսքը: **29** Որովհետեւ ոմանք կը կարծէին՝ թէ արկղը Յուդային քով ըլլալով, Յիսուս անոր ըսաւ. «Գնէ՛ ինչ որ տօնին համար հարկաւոր է մեզի, կամ թէ՛ աղքատներուն բան մը տուր»: **30** Իսկ Յուդա, պատառն առնելով՝ իսկոյն դուրս ելաւ: Եւ գիշեր էր:

Նոր պատուիրանը

31 Երբ Յուդա դուրս ելաւ՝ Յիսուս ըսաւ. «Հիմա փառաւոր-

21 – Փրկիչը սաստիկ յուզուած էր Յուդայի գործած այս հրէշային արար-
քին համար:

31 – Յիսուս կը տեսնէ խաչը բարձրացած, եւ խաչին միջոցով ու անոր ար-
դիւնքովն ինքզինքն եւ իր Հայրը փառաւորուած:

ւեցաւ Մարդու Որդին եւ Աստուած փառաւորուեցաւ անով:
32 Եւ եթէ Աստուած փառաւորուեցաւ անով, Աստուած ալ զանի-
 կա պիտի փառաւորէ իրմով. **33** եւ շուտով պիտի փառաւորէ:
 Որդեակներ, դեռ քիչ մը ատեն ձեզի հետ եմ. պիտի փնտռէք զիս,
 եւ ինչպէս հրեաներուն ըսի՝ թէ ուր ես կ'երթամ դուք չէք կրնար
 գալ, հիմա ձեզի ալ կ'ըսեմ: **34** Նոր պատուիրան կու տամ ձեզի՝ որ
 զիրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ զիրար սիրեցէք:
35 Ամէնքը ասով պիտի ճանչնան՝ թէ դուք իմ աշակերտներս էք,
 եթէ զիրար սիրէք»:

Յիսուս կը զգուշացնէ Պետրոսը

36 «Տէ՛ր, ո՞ւր կ'երթամ», հարցուց Սիմոն Պետրոս: Յիսուս պա-
 տասխանեց. «Ուր ես կ'երթամ՝ դուն չես կրնար հիմա ետեւէս գալ.
 բայց վերջը պիտի գաս ետեւէս»: **37** «Տէ՛ր, ըսաւ Պետրոս, ինչո՞ւ
 հիմա պիտի չկարենամ ետեւէդ գալ. արդէն կեանքս ալ քեզի հա-
 մար պիտի տամ»: **38** «Կեա՞նքդ ինծի համար պիտի տաս, պատաս-
 խանեց Յիսուս. Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դեռ
 աքաղաղը չիօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս»:

Երկնաւոր Հօր օրհնանք

14 ¹ Թող չխռովի ձեր սիրտը. Աստուծոյ հաւատացէք, ինծի
 ալ հաւատացէք: ² Հօրս տան մէջ շատ օթեւաններ կան.
 եթէ այդպէս չըլլար՝ ձեզի ըսած կ'ըլլայի. որովհետեւ ես
 կ'երթամ ձեզի տեղ պատրաստելու: ³ Եթէ ես երթամ ու ձեզի տեղ
 պատրաստեմ՝ դարձեալ կու գամ եւ ձեզ քովս կ'առնեմ, որպէսզի
 ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք: ⁴ Դուք գիտէք՝ թէ ո՛ւր կ'երթամ,
 ճամբան ալ գիտէք: ⁵ «Տէ՛ր, ըսաւ Թովմաս, չենք գիտեր թէ ո՛ւր
 կ'երթաս, եւ ի՞նչպէս կրնանք ճամբան ալ գիտնալ»:

⁶ Յիսուս ըսաւ. «Ե՛ս եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ
 կեանքը: Ո՛չ ոք կու գայ Հօր՝ եթէ ոչ ինծմով: ⁷ Եթէ զիս ճանչցած

ըլլայիք՝ Հայրս ալ պիտի ճանչնայիք. ասկէ վերջ կը ճանչնաք զինքը եւ տեսած ալ էք զինքը»:

8 «Տէ՛ր, ըսաւ Փիլիպպոս, ցո՛յց տուր մեզի Հայրը եւ ասով գոհ կ'ըլլանք»։ **9** Յիսուս պատասխանեց. «Այսքան ժամանակ ձեզի հետ եմ եւ չճանչցա՞ր զիս, Փիլիպպոս. ո՛վ որ զիս տեսաւ՝ Հայրն ալ տեսաւ, եւ դու ի՞նչպէս կ'ըսես՝ ցո՛յց տուր մեզի Հայրը: **10** Ձե՞ս հաւատար՝ որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն ալ՝ իմ մէջս. այս խօսքերը զոր ես ձեզի կ'ըսեմ՝ ինքիրմէս չեմ խօսիր. այլ Հայրը որ իմ մէջս կը բնակի՝ ինքը կը կատարէ այս գործերը: **11** Կը հաւատա՞ք ինծի, որ ես Հօր մէջ եմ եւ Հայրը իմ մէջս. ապա թէ ոչ՝ գոնէ գործերուս համար հաւատացէք:

Միփառական խոստումներ

12 Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ո՛վ որ ինծի հաւատայ, այն գործերը զոր ես կը կատարեմ՝ ինքն ալ պիտի կատարէ, եւ անոնցմէ աւելի մեծերը պիտի կատարէ. որովհետեւ ես Հօրս քով կ'եղեմ: **13** Եւ ինչ որ իմ անունովս խնդրէք՝ պիտի կատարեմ, որպէսզի Հայրը փառաւորուի Որդիով: **14** Ինչ որ խնդրէք իմ անունովս՝ պիտի կատարեմ զայն:

15 Եթէ զիս կը սիրէք՝ պատուիրաններս պահեցէք: **16** Ես ալ պիտի աղաչեմ Հօր՝ որ ուրիշ Միփառիչ մը տայ ձեզի, որ ձեզի հետ բնակի յաւիտեան. **17** ճշմարտութեան Հոգին, զոր աշխարհ չի կրնար ընդունիլ, վասնզի չի տեսներ զայն, եւ ոչ ալ կը ճանչնայ. բայց դուք կը ճանչնաք, վասնզի ձեր մօտ կը բնակի եւ ձեր մէջ է: **18** Որբ պիտի չթողուի ձեզ. պիտի գամ ձեզի: **19** Քիչ ատենէն աշխարհ այլեւս չի տեսներ զիս. բայց դուք պիտի տեսնէք զիս,

համագոյակից Հօր Որդի՝ այլապէս անոնք գիտնաւա՞նք ալ իբր Յիսուսի Հայրը ֆանեցած պիտի ըլլային: Հիմա է ժամանակը, ուր անոնք կատարեալ ծանօթութեան կը հասնին:

17 – Սուրբ Հոգին նշմարութեան հոգին է, որովհետեւ ան աստուածային նշմարութիւնն է, եւ անոր կ'առաջնորդէ աշակերտները:

որովհետեւ ես ողջ եմ եւ դուք ալ ողջ պիտի ըլլաք: **20** Այն օրը պիտի հասկնաք՝ որ ես Հօրս մէջն եմ, դուք՝ իմ մէջս, եւ ես՝ ձեր մէջը: **21** Ո՛վ որ իմ պատուիրաններս գիտէ եւ կը պահէ զանոնք՝ անիկա է որ կը սիրէ զիս. եւ ով որ կը սիրէ զիս՝ պիտի սիրուի իմ Հօրմէս. ես ալ պիտի սիրեմ զանիկա եւ ինքզինքս պիտի յայտնեմ անոր»:

22 «Տէ՛ր, հարցուց անոր Յուդա, ոչ իսկարիովտացին, ի՞նչ պատճառով մեզի պիտի յայտնես ինքզինքդ, եւ ոչ աշխարհի»:
23 Յիսուս պատասխանեց. «Եթէ մէկը զիս սիրէ՝ իմ խօսքս պիտի պահէ, եւ Հայրս պիտի սիրէ զինքը եւ անոր քով պիտի գանք ու պիտի օթեւանինք անոր մօտ: **24** Եւ ո՛վ որ զիս չի սիրեր՝ խօսքերս չի պահեր. եւ խօսքը՝ զոր դուք կը լսէք ինծմէ՝ իմս չէ, այլ՝ Հօրը, որ զիս ղրկեց:

25 Այս բաները խօսեցայ ձեզի քանի տակաւին ձեր քով եմ.
26 Իսկ Միխիթարիչը, Սուրբ Հոգին, զոր Հայրը իմ անունովս պիտի ղրկէ, ան ձեզի պիտի սորվեցնէ ամէն բան եւ պիտի յիշեցնէ բոլոր ըսածներս:

27 Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՛մ խաղաղութիւնս կու տամ ձեզի. ո՛չ որպէս աշխարհս կու տայ՝ կու տամ ես ձեզի:
28 Թող չխռովին ձեր սրտերը ու չվախնան: Լսեցիք որ ըսի ձեզի՝ թէ կ'երթամ եւ կը վերադառնամ ձեր մօտ. եթէ զիս սիրէիք՝ ուրեմն պիտի ուրախանայիք թէ ես Հօր քով կ'երթամ, որովհետեւ Հայրը ինծմէ մեծ է: **29** Այժմէն, դեռ չեղած ըսի ձեզի, որպէսզի երբ ըլլայ՝ հաւատաք: **30** Այլեւս շատ պիտի չխօսիմ ձեզի հետ. որովհետեւ աշխարհիս իշխանը կու գայ, բայց իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի. **31** սակայն պէտք է որ աշխարհս գիտնայ՝ թէ ես կը սիրեմ Հայրը, եւ կը գործեմ այնպէս՝ ինչպէս Հայրն ինծի պատուիրած է: Օ՛ն, ելէ՛ք, երթա՛նք ասկէ:

Ճշմարիտ որթատունկը

15 **1** Ե՛ս եմ ճշմարիտ որթատունկը եւ Հայրս մշակն է։ **2** Ամէն ճիւղ, որ իմ վրաս է եւ պտուղ չի բերեր՝ կը կտրէ։
 եւ ամէն ճիւղ, որ պտուղ կու տայ՝ կը յօտէ, որպէսզի
 աւելի պտղաբեր ըլլայ։ **3** Դուք արդէն իսկ սուրբ էք, համաձայն
 այն խօսքին՝ զոր ըսի ձեզի։ Մնացէք իմ մէջս, եւ ես ձեր մէջ։ **4** Ինչ-
 պէս ճիւղը ինքիրմէն չի կրնար պտուղ բերել եթէ որթատունկին
 վրայ հաստատուած չըլլայ, նոյնպէս դուք ալ՝ եթէ իմ վրաս հաս-
 տատուած չըլլաք։

5 Ե՛ս եմ որթատունկը եւ դուք՝ ճիւղերը։ Ո՛վ որ մէջս հաստատ-
 ւած է եւ ես անոր մէջ՝ այնպիսին շատ պտուղ կը բերէ։ որովհետեւ
 առանց ինծի ոչինչ կրնաք ընել։ **6** Եթէ մէկը իմ մէջս հաստատուած
 չըլլայ, ճիւղին նման դուրս կը նետուի ու կը չորնայ, եւ յետոյ կը
 ժողվեն գայն, կրակ կը նետեն ու կ'այրի։ **7** Եթէ դուք իմ մէջս հաս-
 տատուիք եւ իմ խօսքերս ալ ձեր մէջ, ինչ որ ուզէք՝ ինդրեցէք,
 պիտի տրուի ձեզի։ **8** Ասով կը փառաւորուի Հայրս, որ դուք
 առատ պտուղ բերէք, եւ իմ աշակերտներս ըլլաք։

Նորայրական կատարեալ սէր

9 Ինչպէս Հայրը սիրեց զիս, ես ալ ձեզ սիրեցի։ Հաստատուն կե-
 ցէք իմ սիրոյս մէջ։ **10** Եթէ պահէք իմ պատուիրաններս, իմ սի-
 րոյս մէջ պիտի մնաք։ Ինչպէս որ ես պահեցի Հօրս պատուի-
 րանները եւ կը մնամ անոր սիրոյն մէջ։ **11** Ասոնք ըսի ձեզի,
 որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ, եւ ձեր ուրախութիւնը
 կատարեալ ըլլայ։ **12** Ա՛յս է իմ պատուէրս՝ որ զիրար սիրէք, ինչ-
 պէս ես ձեզ սիրեցի։ **13** Ո՛չ ոք ասկէ աւելի մեծ սէր ունի՝ երբ իր
 կեանքը կու տայ բարեկամներուն համար։ **14** Դուք իմ բարեկամ-

Գլ. 15, 1 – Որթատունկի եւ ճիւղի նմանութիւնը կը պատկերացնէ մեր առ-
 ջեւ Քրիստոսի եւ իրենններուն միջեւ հաստատուած կեանքի սերտ կցորդու-
 թիւնը, եւ ցոյց կու տայ նոյնին կարեւոր հարկը, եւ այն կցորդութենէն յառաջ
 գալիք փառաւոր արդիւնքը։

ներս էք, եթէ կատարէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի:

15 Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր, որովհետեւ ծառան չի գիտեր՝ թէ ի՛նչ կ'ընէ իր տէրը. այլ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետեւ յայտնեցի ձեզի ինչ որ Հօրմէս լսեցի: **16** Ո՛չ թէ դուք ընտրեցիք զիս, այլ ես ընտրեցի ձեզ եւ սահմանեցի՝ որ երթաք ու պտղաբեր ըլլաք, եւ ձեր պտուղը տեւական ըլլայ. որպէսզի ինչ որ խնդրէք Հօրմէն իմ անունովս՝ տայ ձեզի: **17** Ա՛յս է իմ պատուէրս՝ որ զիրար սիրէք:

Աշխարհի ատելութիւնը

18 Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէ՛ք որ ձեզմէ առաջ՝ զիս ատեց: **19** Եթէ այս աշխարհէն ըլլայիք՝ աշխարհը անշուշտ իրենները պիտի սիրէր. բայց որովհետեւ այս աշխարհէն չէք, այլ ես ընտրեցի եւ հանեցի ձեզ աշխարհէն՝ անոր համար աշխարհը ձեզ կ'ատէ:

20 Յիշեցէ՛ք այն խօսքը, զոր ձեզի ըսի՝ թէ ծառան իր տիրոջմէն աւելի մեծ չէ. եթէ զիս հալածեցին՝ ձեզ ալ պիտի հալածեն. եթէ իմ խօսքս պահեցին՝ ձերն ալ պիտի պահեն: **21** Բայց բոլոր այս բաները պիտի ընեն ձեզի իմ անունիս համար, որովհետեւ չեն ճանչնար զայն որ զիս ղրկեց:

22 Եթէ ես եկած ու խօսած չըլլայի՝ մեղք պիտի չունենային անոնք. բայց հիմա իրենց մեղքին արդարացում չունին: **23** Ով որ զիս կ'ատէ՝ Հայրս ալ կ'ատէ: **24** Եթէ անոնց մէջ կատարած չըլլայի այն գործերը՝ զոր ուրիշ ոչ մէկը կատարեց, մեղք պիտի չունենային. բայց հիմա, տեսնելով հանդերձ՝ թէ՛ զիս ատեցին, եւ թէ՛ Հայրս: **25** որպէսզի կատարուի այն խօսքը, որ իրենց Օրէնքին մէջ գրուած է, թէ Զուր տեղ ատեցին զիս: **26** Բայց երբ գայ Միխիթարիչը, զոր ես ձեզի պիտի ղրկեմ Հօրմէն, ճշմարտութեան Հոգին,

19 – Եթէ աշակերտները պատկանած ըլլային աշխարհի, աշխարհը անոնց մէջ նշմարած ըլլալով գիմֆը յատկանշող կէտերը պիտի սիրէր զանոնք: Արդ, աշխարհ կը տեսնէ անոնց վրայ նորօրինակ կեանք մը, բոլորովին ներհակ իր վարած կեանքին, հետեւաբար կ'արհամարհէ զանոնք ու կ'ատէ:

որ Հօրմէն կ'ելլէ, ան պիտի վկայէ ինծի համար. **27** դուք ալ իմ վկաներս էք, որովհետեւ սկիզբէն ինծի հետ էք:

Հալածանքները

16 **1** Ասոնք խօսեցայ ձեզի, որպէսզի չգայթակղիք: **2** Իրենց ժողովարաններէն դուրս պիտի վտարեն ձեզ. նոյնիսկ ժամանակ պիտի գայ, որ երբ մէկը ձեզ սպաննէ՝ պիտի կարծէ որ Աստուծոյ պաշտամունք կը կատարէ: **3** Այսպէս պիտի ընեն ձեզի, որովհետեւ ոչ Հայրը ճանչցան եւ ոչ ալ զիս: **4** Ասոնք ըսի ձեզի, որպէսզի երբ ժամանակը գայ՝ յիշէք թէ արդէն ըսած էի ձեզի: **5** Այս բաները սկիզբէն չըսի ձեզի, որովհետեւ ձեզի հետ էի: Բայց հիմա կ'երթամ անոր՝ որ զիս ղրկեց. ու ձեզմէ ոչ մէկը կը հարցնէ՝ թէ ո՛ւր կ'երթաս: **6** Բայց որովհետեւ այս բաները խօսեցայ ձեզի, ձեր սրտերը տրտմութեամբ լեցուեցան:

Սուրբ Հոգիին դերը

7 Բայց ես ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, լա՛ւ է ձեզի համար որ ես երթամ. որովհետեւ եթէ ես չերթամ՝ Միւրթարիչը պիտի չգայ ձեզի. իսկ եթէ երթամ՝ զայն ձեզի պիտի ղրկեմ: **8** Ու երբ անիկա գայ՝ պիտի յանդիմանէ աշխարհը՝ մեղքի համար, արդարութեան համար, եւ դատաստանի համար: **9** Մեղքի համար, որովհետեւ ինծի չեն հաւատար: **10** Արդարութեան համար, որովհետեւ Հօր քով կ'երթամ եւ այլեւս պիտի չտեսնէք զիս: **11** Դատաստանի համար, որովհետեւ աշխարհիս իշխանը դատապարտուած է: **12** Դեռ չատ բաներ ունիմ ձեզի ըսելիք, բայց հիմա չէք կրնար տանիլ: **13** Բայց

Գլ. 16, 8 – Սուրբ Հոգին պիտի գայ լրացնելու Յիսուսի սկսած գործը: Ան պիտի յանդիմանէ աշխարհը «մեղքի համար», յայտ յանդիման ապացուցանելով անոր գործած ոնիրը, մերժած ըլլալով նանչնալ Մեսիան, «արդարութեան համար», անհերքելի փաստերով ապացուցանելով բոլոր աշխարհի՝ Յիսուսի արդարութիւնը, անոր սրբութիւնն ու աստուածութիւնը, «դատաստանի համար», կործանելով սատանայի՝ այս աշխարհի իշխանին իշխանութիւնը:

13 – Սուրբ Հոգին ո՛չ թէ նոր վարդապետութիւն մը կը փարզէ, հապա այն աստուածային նշմարտութիւնը, զոր Աստուածորդին ստրկեցուցած է:

երբ գայ ինքը, ճշմարտութեան Հոգին, պիտի սորվեցնէ ձեզի բովանդակ ճշմարտութիւնը: Որովհետեւ ինքիր կողմէն պիտի չխօսի՝ այլ ինչ որ լսէ՝ այն պիտի խօսի, եւ գալիք բաները պիտի պատմէ ձեզի: **14** Ան զիս պիտի փառաւորէ, որովհետեւ իմինէս պիտի առնէ եւ ձեզի պիտի յայտնէ: **15** Ինչ որ Հայրն ունի՝ իմս է. անոր համար ըսի՝ թէ իմինէս պիտի առնէ, եւ ձեզի պիտի յայտնէ:

Ուրախութեան պատճառներ

16 Քիչ ատենէն այլեւս պիտի չտեսնէք զիս, եւ դարձեալ քիչ ատենէն՝ պիտի տեսնէք զիս, որովհետեւ Հօր քով կ'երթամ: **17** Աշակերտներէն ոմանք իրարու կ'ըսէին. «Ի՞նչ կը նշանակէ այս խօսքը. քիչ ատենէն այլեւս պիտի չտեսնէք զիս, եւ դարձեալ քիչ ատենէն՝ պիտի տեսնէք զիս, եւ թէ՛ Հօրս քով կ'երթամ»: **18** Եւ կ'ըսէին. «Ի՞նչ է այս «քիչ ատենէն»ը, չենք հասկնար ինչ ըսել կ'ուզէ»: **19** Յիսուս, իմանալով որ կ'ուզէին իրեն հարցնել՝ ըսաւ անոնց. «Քիչ ատենէն այլեւս պիտի չտեսնէք զիս, եւ քիչ ատենէն պիտի տեսնէք զիս» որովհետեւ ըսի ձեզի՝ իրարու կը հարցնէք: **20** Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք պիտի լաք եւ ողբաք, իսկ աշխարհը պիտի խնդայ. դուք պիտի տրտմիք, բայց ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի: **21** Կ'ինը ծննդաբերութեան ժամանակ ցաւ կը կրէ, որովհետեւ ժամը հասած է. բայց երբ մանուկը ծնի, այլեւս ցաւերը չի յիշեր ուրախութենէն՝ որ մարդ մը աշխարհ եկաւ: **22** Դուք ալ հիմա տրտում էք. բայց ես դարձեալ պիտի տեսնեմ ձեզ, եւ ձեր սիրտերը պիտի ուրախանան, եւ ձեր ուրախութիւնը ո՛չ ոք պիտի խլէ ձեզմէ: **23** Այն օրը այլեւս ինծի բան պիտի չհարցնէք: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ինչ որ խնդրէք Հօրմէն իմ անունովս՝ պիտի տայ ձեզի: **24** Մինչեւ հի-

14 – Հայր եւ Որդի մոյն էութիւնը եւ մոյն գիտութիւնն ունին: Ասոր համար ալ Սուրբ Հոգին, որ Հօրմէն եւ Որդիէն կը բղխի, իր փարոզները՝ ինչպէս Հօրմէն, նմանապէս նաեւ Որդիէն կը ստանայ:

23 – Վերապաշտութեան ատեն, այսինքն՝ յարութենէն ետք, աշակերտները այլեւս պիտի չհարցնեն Յիսուսի, որովհետեւ Յիսուսի հիմա խօսած մթին խօսքերը անկէ ետք պայծառ պիտի հասկցուին:

մա բան մը չխնդրեցիք իմ անունովս․ խնդրեցէ՛ք ու պիտի առնէք, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

25 Այս բաները առականերով խօսեցայ ձեզի․ պիտի գայ ժամանակ՝ երբ այլեւս առականերով պիտի չխօսիմ ձեզի հետ, այլ յայտնապէս պիտի խօսիմ ձեզի Հօր մասին: **26** Այն օրը իմ անունովս պիտի խնդրէք, եւ չեմ ըսեր ձեզի՝ թէ ձեզի համար պիտի խնդրեմ Հօրմէն: **27** որովհետեւ ինքն իսկ Հայրը կը սիրէ ձեզ, որովհետեւ դուք զիս սիրեցիք եւ հաւատացիք՝ թէ ես Աստուծոմէ ելայ: **28** Եւ այ Հօրմէն եւ եկայ աշխարհ, դարձեալ կը թողում աշխարհը ու կ'երթամ Հօր քով»:

29 Աշակերտները ըսին. «Ահա՛ հիմա յայտնապէս կը խօսիս եւ առակ այլեւս չես պատմեր: **30** Հիմա հասկցանք թէ ամէն բան գիտես, եւ հարկ չկայ որ մէկը քեզի բան մը հարցնէ․ անոր համար կը հաւատանք՝ որ Աստուծոմէ ելար»:**31** Յիսուս պատասխանեց. «Հիմա՞ կը հաւատաք: **32** Ահա պիտի գայ ժամանակ, մանաւանդ թէ եկած իսկ է, երբ դուք պիտի ցրուիք իւրաքանչիւրն իր տեղը եւ զիս մինակ պիտի թողուք․ բայց ես մինակ չեմ, որովհետեւ Հայրը ինծի հետ է: **33** Այս բաները խօսեցայ, որպէսզի ինծմով խաղաղութիւն ունենաք: Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք․ սակայն քաջալերուեցէ՛ք, ես յաղթեցի աշխարհի»:

Գեորգոյն Գահանայապետին աղօթքը

17 **1** Այս խօսքերէն վերջ՝ Յիսուս աչքերը երկինք բարձրացնելով ըսաւ. «Հա՛յր, հասած է ժամը․ փառաւորէ՛ քու Որդիդ, որպէսզի Որդիդ ալ քեզ փառաւորէ: **2** Ինչպէս անոր իշխանութիւն տուիր ամէն մարմնի վրայ, որպէսզի յաւիտենական կեանք տայ բոլոր անոնց՝ զոր իրեն յանձնեցիր: **3** Այս է յաւիտենական կեանքը, որ ճանչնան քեզ, միա՛կ ճշմարիտ Աստ-

Գլ. 17, 1 – Այս աղօթքը Գահանայապետական կը կոչուի, որովհետեւ Յիսուս – խաչին վրայ իր գոհը կատարելու ժամանակը հասած ըլլալով – իր Հօրմէն այս գոհի արդիւնքը կը խնդրէ իր անձին (1–5), իր աշակերտներուն (6–19) եւ բոլոր հաւատացեալներուն համար:

լածը, եւ զայն՝ զոր դուն ղրկեցիր, Յիսուս Քրիստոսը: **4** Ես քեզ փառաւորեցի երկրի վրայ, կատարելով զործը՝ զոր ինծի յանձնեցիր որ ընեմ: **5** Եւ հիմա, Հայր, փառաւորէ՛ զիս քու քովդ այն փառքով՝ զոր աշխարհիս ստեղծուելէն առաջ ունէի քու քովդ:

6 Քու անունդ յայտնեցի այն մարդերուն զորս ինծի տուիր աշխարհէն. քուկդ էին եւ դուն ինծի տուիր զանոնք, եւ անոնք քու խօսքդ պահեցին: **7** Հիմա հասկցան թէ ինչ որ ինծի տուիր՝ քեզմէ է: **8** Որովհետեւ խօսքերը, զոր տուիր ինծի, ես անոնց տուի. եւ անոնք ընդունեցան ու ճշմարտութեամբ գիտցան՝ թէ ես քեզմէ ելայ, եւ հաւատացին թէ դուն ղրկեցիր զիս: **9** Ես անոնց համար կ'աղաչեմ, եւ ո'չ թէ աշխարհի համար. անոնց համար՝ զորս ինծի տուիր, որովհետեւ քուկդ են անոնք: **10** Ինչ որ իմա է, այն բոլորը քուկդ է. եւ ինչ որ քուկդ է՝ այն իմա է, եւ ես անոնցմով փառաւորուած եմ: **11** Ես այլեւս աշխարհի մէջ չեմ. անոնք աշխարհի մէջ են, եւ ես քեզի կու գամ: Հայր սուրբ, պահէ՛ զանոնք քու անունովդ, որով ինծի տուիր, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք: **12** Երբ աշխարհի մէջ էի անոնց հետ, ես կը պահէի զանոնք քու անունովդ, որով ինծի տուիր. եւ պահեցի զանոնք, եւ անոնցմէ ո'չ մէկը կորսուեցաւ, բացի կորստեան որդիէն, որպէսզի Գիրը կատարուի:

13 Բայց հիմա քեզի կու գամ, եւ այս բաները կը խօսիմ աշխարհի մէջ, որպէսզի անոնք իմ ուրախութիւնս լիովին ունենան իրենց մէջ: **14** Ես քու խօսքդ անոնց տուի եւ աշխարհը ատեց զանոնք. որովհետեւ աշխարհէն չեն, ինչպէս ես ալ աշխարհէն չեմ: **15** Չեմ խնդրեր որ զանոնք վերցնես աշխարհէն, այլ՝ պահես զանոնք չարէն: **16** Աշխարհէն չեն, ինչպէս ես ալ աշխարհէն չեմ: **17** Սո'ւրբ ըրէ զանոնք քու ճշմարտութեամբդ, որովհետեւ քու խօսքդ ճշմարտութիւն է: **18** Ինչպէս դուն զիս աշխարհ ղրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ ղրկեցի:

12 – Առաքնալնքնուն համար իր ըրած աղօթքին մէջ Փրկիչը կը խնդրէ իր Հօրմէն, որ միութեան մէջ պահէ զանոնք, աշխարհի կողմէ սպառնացուած վտանգներու դէմ պաշտպանէ զանոնք եւ Սուրբ Հոգւով սրբացնէ:

19 Եւ ես անոնց համար ինքզինքս կը նուիրեմ, որպէսզի անոնք ալ նուիրագործուին, ճշմարտութեամբ: 20 Բայց միայն անոնց համար չէ՛ որ կ'աղաչեմ, այլ նաեւ բոլոր անոնց համար՝ որ ասոնց խօսքովը ինծի պիտի հաւատան: 21 Որպէսզի ամէնքն ալ մէկ ըլլան, ինչպէս դո՛ւն, Հա՛յր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ: որպէսզի անոնք ալ մեր մէջ ըլլան, եւ աշխարհը հաւատայ՝ թէ դուն զրկեցիր զիս: 22 Այն փառքը զոր տուիր ինծի՝ ես ալ անոնց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ մենք մէկ ենք: 23 Ես անոնց մէջ, դուն իմ մէջս, որպէսզի կատարեալ ըլլան միութեան մէջ. եւ աշխարհ գիտնայ՝ թէ դուն զրկեցիր զիս, եւ սիրեցիր զանոնք այնպէս՝ ինչպէս զիս սիրեցիր:

24 Հա՛յր, կը փափաքիմ՝ ուր որ ես ըլլամ, հետս ըլլան նաեւ անոնք՝ զոր ինծի յանձնեցիր, որպէսզի տեսնեն իմ փառքս՝ զոր ինծի տուիր. որովհետեւ աշխարհի ստեղծուելէն առաջ սիրեցիր զիս: 25 Հա՛յր արդար, աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ եւ անոնք ալ ճանչցան՝ թէ դուն զրկեցիր զիս: 26 Ես քու անունդ ծանօթացուցի անոնց եւ պիտի ծանօթացնեմ, որպէսզի այն սէրը՝ որով դու զիս սիրեցիր՝ անոնց մէջ ըլլայ ու ես ալ անոնց մէջ»:

Յիսուսի ձերբակալութիւնը

18 1 Այս խօսքերէն վերջ՝ Յիսուս աշակերտներուն հետ միասին Կեղերոնի հեղեղատին միւս կողմն անցաւ, ուր պարտէզ մը կար, հոն մտաւ ինքը եւ իր աշակերտները:

19 – Փրկիչը փահմայական աստիճան կը խնդրէ իր աշակերտներուն համար, մասնաւորապէս որպէս զի անոնք քաղաքէն նշարտութիւնը. եւ յետոյ ինքզինքն զատարաստ կը ցուցնէ իր անձը գոհաբերելու անոնց համար:

20 – Փրկիչը կը խնդրէ բոլոր հաւատացեալներուն համար, որ միաբան սիրով ըլլան իրարու հետ եւ արժանանան յաւիտեական երանութեան:

22 – Փրկիչը իր չարչարանքներովն ու մահովը՝ Աստուծոյ որդիներն ըլլալու շնորհիւ շահեցաւ եւ տուաւ հաւատացեալներուն: Ասիկա ամենամեծ փառքն է, որ կարելի ըլլայ տրուիլ արարածի մը:

Գլ. 18, 1 – «Կեդրոն» հեղեղատ մըն էր Երուսաղէմի եւ Զիքենեաց լեռան միջեւ:

2 Յուդա՝ որ զինքը պիտի մատնէր, այն տեղին ծանօթ էր. որովհետեւ Յիսուս շատ անգամ աշակերտներով միասին հոն կը հաւաքուէր: **3** Յուդա, հետն առնելով գունդ մը եւ սպասաւորներ քահանայապետներէն ու փարիսեցիներէն, հոն եկաւ ջահերով, լապտերներով ու զէնքերով: **4** Իսկ Յիսուս, գիտնալով բոլոր իրեն պատահելիքները, ելաւ հարցուց. «Ո՞վ կը փնտռէք»: **5** «Յիսուս Նազովրեցին», պատասխանեցին: «Ե՛ս եմ», ըսաւ անոնց Յիսուս: Անոնց հետ էր նաեւ մատնիչը՝ Յուդա:

6 Հազիւ Յիսուս անոնց ըսաւ՝ թէ Ե՛ս եմ, ետ գացին եւ գետնին զարնուեցան: **7** Յիսուս դարձեալ հարցուց անոնց. «Ո՞վ կը փնտռէք»: «Յիսուս Նազովրեցին», պատասխանեցին: **8** Ձեզի ըսի՝ թէ ե՛ս եմ, կրկնեց Յիսուս. եթէ զիս կը փնտռէք՝ թողուցէք ատոնք որ երթան»: **9** Ասով կատարուեցաւ այն խօսքը, զոր ան ըսաւ. «Ո՛չ մէկը կորսնցուցի անոնցմէ՝ զորս ինծի տուիր»: **10** Իսկ Սիմոն Պետրոս, որ սուր մը ունէր, քաշեց ու զարկաւ քահանայապետին ծառային ու կտրեց անոր աջ ականջը. ծառային անունը Մաղքոս էր: **11** Յիսուս ըսաւ Պետրոսին. «Սուրդ իր պատեանը դիր. բաժաւ կը զոր Հայրը տուաւ ինծի՝ պիտի չիմե՞մ»:

12 Իսկ գունդը, հազարապետը եւ հրեայ սպասաւորները բռնեցին Յիսուսը եւ կապեցին, **13** տարին նախ Աննային, որ նոյն տարւաւն քահանայապետին՝ Կայիափայի աներն էր: **14** Ասիկա այն Կայիափան էր, որ հրեաներուն խորհուրդը տուաւ՝ թէ աւելի լաւ է որ մարդ մը մեռնի ժողովուրդին համար:

Պետրոսի առաջին ուրացութիւնը

15 Յիսուսի ետեւէն կ'երթային Սիմոն Պետրոս եւ աշակերտը: Այս աշակերտը, ծանօթ ըլլալով քահանայապետին՝ Յիսուսի հետ մտաւ քահանայապետին գաւիթը: **16** Պետրոս դուրսը, դրան քով

6 – Փրկիչը առիթ կ'ուզէ տալ իր թշնամիներուն դարձի գալու, եւ հասկցնելու անոնց, թէ առանց իր թոյլտուութեան բան մըն ալ չեն կարող ընել իրեն: Աստուծոյ Գառնուկը ինքզինքն զայլերու ձեռքը յանձնելէ առաջ, ցոյց կու տայ անոնց, որ ինք առիւծն է նաեւ Յուդայի ցեղին

կեցեր էր․ միևս աշակերտը, որ ծանօթ էր քահանայապետին, դուրս ելաւ ու դռնապանին հետ խօսելով՝ ներս մտցուց Պետրոսը։ **17** Դռնապան աղջիկը հարցուց Պետրոսին․ «Միթէ դո՞ւն ալ այն մարդուն աշակերտներէն ես»։ «Ո՛չ», պատասխանեց Պետրոս։ **18** Ծառաներն ու սպասաւորները հոն, խարոյկ վառած՝ կը տաքնային, որովհետեւ ցուրտ էր․ Պետրոս ալ անոնց հետ կեցած՝ կը տաքնար։

Յիսուսի հարցաքննութիւնը

19 Քահանայապետը հարցուց Յիսուսին՝ իր աշակերտներուն եւ վարդապետութեան մասին։ **20** Յիսուս պատասխանեց․ «Ես յայտնապէս խօսեցայ աշխարհին․ ես միշտ սորվեցուցի ժողովաւորաններու եւ տաճարին մէջ, ուր կը հաւաքուէին բոլոր հրեաները, եւ ծածոկի, բան մը չեմ խօսած։ **21** Ինչո՞ւ կը հարցնես ինծի․ հարցո՛ւր անոնց որ լսեցին՝ թէ ի՛նչ խօսեցայ իրենց․ գիտեն անոնք թէ ի՛նչ խօսեցայ»։ **22** Երբ անիկա այս խօսքերն ըսաւ, հոն կեցող սպասաւորներէն մէկը ապտակ մը զարկաւ Յիսուսի, ըսելով․ «Ա՛յդպէս կը պատասխանես քահանայապետին»։ **23** «Եթէ գէշ խօսեցայ, պատասխանեց Յիսուս, ցո՛յց տուր գէշ ըլլալը․ իսկ եթէ լաւ՝ ինչո՞ւ կը զարնես ինծի»։ **24** Իսկ Աննա՝ Կայիափա քահանայապետին ղրկեց զանիկա՝ կապուած։

Պետրոս դարձեալ կ'ուրաւայ

25 Սիմոն Պետրոս հոն կեցած կը տաքնար․ հարցուցին իրեն․ «Դո՞ւն ալ անոր աշակերտներէն ես»։ «Ո՛չ, չե՛մ», պատասխանեց եւ ուրացաւ։ **26** Քահանայապետին ծառաներէն մէկը, ազգական անոր՝ որուն ականջը կտրեց Պետրոս, ըսաւ․ «**25**՞ որ անոր հետ քեզ պարտէզին մէջ տեսայ»։ **27** Պետրոս դարձեալ ուրացաւ եւ իսկոյն աքաղաղը խօսեցաւ։

Յիսուս Պիղատոսի առջեւ

28 Կայիափայի տունէն Յիսուսը տարին կուսակալին ապա-

րանքը. առաւօտ էր եւ հրեաները ապարանք չմտան, որպէսզի չպղծուին, այլ Զատիկն ուտեն: **29** Ուստի Պիղատոս ինքը դուրս ելաւ եւ հարցուց անոնց. «Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ»: **30** «Եթէ այս մարդը չարագործ չլլար, պատասխանեցին անոնք, քեզի չէինք յանձներ»:

31 Պիղատոս ըսաւ. «Դո՛ւք առէք զայն եւ ձեր Օրէնքին համաձայն դատեցէք»: Հրեաները պատասխանեցին. «Մենք իրաւունք չունինք մարդ սպաննելու»: **32** Ասով կը կատարուէր այն խօսքը, որով Յիսուս մատնանշած էր՝ թէ ինչպիսի մահով պիտի մեռնէր:

33 Պիղատոս կրկին անգամ ապարանք մտաւ, կանչեց Յիսուսը եւ ըսաւ անոր. «Դո՞ւն ես հրեաներուն թագաւորը: **34** Յիսուս պատասխանեց. «Դուն քեզմէ՞ կ'ըսես ատիկա, թէ ուրիշներ քեզի ըսին իմ մասին»: **35** Պիղատոս ըսաւ. «Միթէ ե՞ս ալ հրեայ եմ. քու ազգդ եւ քու քահանայապետներդ մատնեցին քեզ ինծի. ի՞նչ ըրած ես դուն»: **36** «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ, պատասխանեց Յիսուս. եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս՝ անշուշտ իմ սպասաւորներս կը կռուէին, որպէսզի հրեաներուն ձեռքը չմատնուէի. բայց արդ իմ թագաւորութիւնս այստեղէն չէ»: **37** «Ուրեմն դուն թագաւո՞ր ես», հարցուց Պիղատոս: «Դո՛ւն կ'ըսես որ թագաւոր եմ, պատասխանեց Յիսուս. բայց ես անոր համար ծնած եւ եկած եմ աշխարհ, որպէսզի վկայեմ ճշմարտութեան. ամէն մարդ՝ որ ճշմարտութեան կողմն է՝ մտիկ կ'ընէ ձայնիս»: **38** Պիղատոս ըսաւ. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»:

Յիսուս կամ Բարաբբա

Ասոր վրայ՝ Պիղատոս դարձեալ դուրս ելաւ հրեաներուն քով եւ ըսաւ անոնց. «Ես ո՛չ մէկ յանցանք կը գտնեմ այս մարդուն վրայ: **39** Բայց դուք սովորութիւն ունիք, որ Զատիկի տօնին առիթով ես մէկը ազատ արձակեմ ձեզի. արդ կ'ուզէ՞ք որ արձակեմ հրեաներու թագաւորը»: **40** Ամէնքը միասին աղաղակեցին. «Ո՛հ ատիկա, այլ Բարաբբան». եւ Բարաբբան աւազակ մըն էր:

Ահա մարդը

19 **1** Այն ատեն Պիղատոս առաւ Յիսուսը եւ զայն ձաղկել տուաւ: **2** Իսկ զինուորները փուշէ պսակ մը չինելով՝ դրին անոր գլուխը եւ ծիրանի զգեստ հագուեցուցին: **3** Կը մօտենային անոր եւ կ'ըսէին. «Ողջո՛յն, Հրեաներու թագաւոր», եւ կ'ապտակէին զայն: **4** Պիղատոս նորէն դուրս ելաւ եւ ըսաւ անոնց. «Ահա զինքը դուրս կը բերեմ ձեզի, որպէսզի գիտնաք՝ որ ես անոր վրայ ո՛րեւէ յանցանք չեմ գտներ»:

5 Յիսուս դուրս ելաւ՝ փուշէ պսակով մը գլխուն եւ ծիրանի զգեստ հագած: Պիղատոս ըսաւ անոնց. «Ահա՛ մարդը»: **6** Երբ քահանայպետներն ու սպասաւորները տեսան զայն՝ աղաղակեցին եւ ըսին. «Խա՛չ հանէ, իսա՛չ հանէ զանիկա»: Պիղատոս ըսաւ անոնց. «Դո՛ւք առէք զինքը եւ դո՛ւք խաչեցէք, որովհետեւ ես անոր վրայ յանցանք չեմ գտներ»: **7** Հրեաները պատասխանեցին. «Մենք Օրէնք ունինք եւ մեր Օրէնքին համաձայն՝ պէտք է որ մեռնի, որովհետեւ ինքզինքը Աստուծոյ Որդի ըրաւ»: **8** Պիղատոս, այս խօսքերը լսելուն՝ աւելի վախցաւ:

Բ. Հարցաքննութիւն Պիղատոսի

9 Պիղատոս դարձեալ ապարանք մտաւ եւ ըսաւ Յիսուսին. «Ուսկի՞ց ես դուն». բայց Յիսուս չպատասխանեց: **10** «Ինծի հետ չե՞ս խօսիր, ըսաւ Պիղատոս. չե՞ս գիտեր որ իշխանութիւն ունիմ քեզ խաչ հանելու, եւ իշխանութիւն ունիմ ազատ արձակելու»: **11** Յիսուս պատասխանեց. «Դուն իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն չէիր ունենար՝ եթէ վերէն տրուած չըլլար քեզի. ասոր համար աւելի մեծ է մեղքն անոր՝ որ զիս քեզի մատնեց»:

12 Այն վայրկեանէն՝ Պիղատոս կ'ուզէր ազատ արձակել զինքը, իսկ հրեաները կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Եթէ ատիկա արձակես՝ բարեկամ չես Կեսարին. ո՛վ որ ինքզինքը թագաւոր կը կոչէ՝ հակառակ է Կեսարին»: **13** Պիղատոս, երբ այս խօսքերը լսեց՝ դուրս բերել տուաւ Յիսուսը, եւ բեմին վրայ նստաւ, այն տեղը որ քարայրատակ կը կոչուէր եւ երայերէն՝ Կապպաթա:

14 Ձատիկի ուրբաթին էր, գրեթէ վեցերորդ ժամը: Պիղատոս ըսաւ հրեաներուն. «Ահա՛ ձեր թագաւորը»: 15 Անոնք աղաղակեցին. «Վերցո՛ւր մէջտեղէն, վերցո՛ւր եւ խա՛չ հանէ ատիկա»: Պիղատոս հարցուց. «Ես իս՞չ հանեմ ձեր թագաւորը»: «Կեսարէն զատ ուրիշ թագաւոր չունինք», պատասխանեցին քահանայապետները: 16 Այն ատեն Պիղատոս անոնց ձեռքը յանձնեց Յիսուսը՝ որպէսզի խաչուի:

Յիսուս Գողգոթայի վրայ

17 Անոնք առին Յիսուսը ու տարին. եւ ան կը կրէր խաչափայտը ու կ'ելլէր այն տեղը՝ որ Գանկ կը կոչուէր, երապեցերէն՝ Գողգոթա, 18 ուր խաչեցին զինքը եւ իրեն հետ՝ ուրիշ երկու հոգի ալ, երկու կողմերը, իսկ մէջտեղը՝ Յիսուսը: 19 Պիղատոս տախտակ մըն ալ գրեց ու խաչին վրայ դրաւ, ուր գրուած էր. «Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրեաներու»:

20 Հրեաներէն շատերը կարդացին այդ տախտակը, որովհետեւ Յիսուսի խաչուած տեղը քաղաքին մօտ էր, եւ գրուած էր երապեցերէն, լատիներէն եւ յունարէն:

21 Հրեաներու Քահանայապետները ըսին Պիղատոսին. «Մի՛ գրեր՝ Թագաւոր Հրեաներու. այլ թէ՛ ինքն ըսաւ որ Թագաւոր եմ Հրեաներու»: 22 Պիղատոս պատասխանեց. «Ինչ որ գրեցի՝ գրեցի»: 23 Իսկ զինուորները, Յիսուսը խաչելէ վերջ՝ առին անոր զգեստները եւ չորս մասի բաժնեցին, իւրաքանչիւր զինուորի՝ մաս մը. գալով պատմուճանին՝ որովհետեւ առանց կարի միակտուր վերէն վար հիւսուած էր, ըսին իրարու. 24 «Չպատուեք ասիկա, այլ վիճակ ձգենք՝ թէ որո՛ւ կ'ելլէ», որպէսզի կատարուէր Գիրը որ կ'ըսէ. «Բաժնեցի զգեստներս իրեմց մէջ, եւ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցիմ»: Ահա՛ ա՛յդ ըրին զինուորները:

Մարիամ եւ Յովհաննէս խաչին ոտքը

25 Յիսուսի խաչին քով կեցեր էին մայրը, մօրաքոյրը՝ Կղէովպեան Մարիամը եւ Մարիամ Մագդաղենացին: 26 Յիսուս, երբ տե-

սաւ իր մայրը եւ անոր քով՝ աշակերտը զոր կը սիրէր, ըսաւ մօրը. «Ո՛վ կ'ին, ահա՛ քու որդիդ»: **27** Յետոյ աշակերտին ըսաւ. «Ահա՛ քու մայրդ»: Եւ այդ ժամանակէն սկսեալ, աշակերտը իր քովն առաւ զանիկա:

Յիսուսի հոգեվարքն ու մահը

28 Անկէ վերջ Յիսուս, գիտնալով թէ ամէն ինչ լրացած է, որպէսզի Գիրը կատարուի՝ ըսաւ. «Ծառաւի եմ»: **29** Հոն քացախով լեցուն աման մը կար եւ զինուորները լեղախառն քացախով լեցուն սպունգը նիզակի մը ծայրն անցընելով՝ Յիսուսի բերնին մօտեցուցին: **30** Երբ լեղախառն քացախն առաւ՝ Յիսուս ըսաւ. «Ամէն ինչ կատարուած է», եւ գլուխը խոնարհեցնելով՝ հոգին աւանդեց:

31 Այն օրը ուրբաթ էր, եւ որպէսզի մարմինները խաչին վրայ չմնան մինչեւ շաբաթ - որովհետեւ այն շաբաթը մեծ օր մըն էր - հրեաները խնդրեցին Պիղատոսէն՝ որ անոնց սրունքները խորտակեն ու վերցնեն: **32** Զինուորները եկան եւ առաջինին սրունքները խորտակեցին. նոյնպէս միւսինը որ անոր հետ խաչուած էր: **33** Բայց երբ Յիսուսի մօտեցան՝ տեսան որ մեռած էր արդէն. ուստի անոր սրունքները չխորտակեցին: **34** Բայց զինուորներէն մէկը տէգով խոցեց անոր կողը. եւ իսկոյն արիւն եւ ջուր ելաւ: **35** Այն որ տեսաւ՝ վկայեց, եւ իր վկայութիւնը ճշմարիտ է, եւ ինքը գիտէ՝ թէ ճշմարիտ կ'ըսէ, որպէսզի դուք ալ հաւատաք: **36** Որովհետեւ այս բաները պատահեցան՝ որպէսզի կատարուի Գիրը, թէ «Անոր ոսկրը պիտի չփշրուի»: **37** Եւ դարձեալ միւս Գիրը, թէ «Պիտի նայիմ անոր՝ զոր խոցեցիմ»:

Յիսուսի քաղումը

38 Ասկէ վերջ՝ Յովսէփ Արիմաթացին, որ Յիսուսի աշակերտ էր բայց գաղտնի, հրեաներու վախէն խնդրեց Պիղատոսէն՝ որ վերցնէ Յիսուսի մարմինը. եւ Պիղատոս հրաման տուաւ. եկաւ Յովսէփ եւ վերցուց: **39** Եկաւ նաեւ Նիկոդեմոս, այն՝ որ նախապէս գիշերով Յիսուսի մօտ եկած էր, եւ բերաւ հարիւր լիտրի չափ հալւէով խառն զմուռս: **40** Առին Յիսուսի մարմինը եւ պատեցին

կտաւներով ու խուկներով, հրեաներու սովորութեան համաձայն:

41 Եւ այն տեղը՝ ուր խաչուեցաւ Յիսուս, պարտէզ մը կար, եւ պարտէզին մէջ՝ նոր գերեզման մը, ուր բնաւ մարդ դրուած չէր: **42** Հոն, հրեաներու ուրբաթին պատճառով՝ քանի որ մօտ էր գերեզմանը, գետեղեցին Յիսուսը:

Յիսուսի յարութիւնը

20 **1** Միաշաբաթի օրը, Մարիամ Մագդաղենացին առտու արշալոյսին կու գայ գերեզման եւ կը տեսնէ՝ որ քարը վերցուած է գերեզմանի դուռէն: **2** Կը վազէ կու գայ Սիմոն Պետրոսի եւ միւս աշակերտին, զոր կը սիրէր Յիսուս, եւ կ'ըսէ անոնց. «Տէրը գերեզմանէն վերցուցեր են եւ չենք գիտեր՝ թէ ո՛ւր դրեր են»: **3** Պետրոս եւ միւս աշակերտը ճամբայ ելան ու դէպի գերեզման գացին: **4** Երկուքը միասին կը վազէին. բայց միւս աշակերտը Պետրոսէն աւելի արագ վազեց եւ անկէ առաջ գերեզման հասաւ, **5** ու ծռելով՝ տեսաւ որ կտաւները հոն էին. բայց ներս չմտաւ: **6** Հասաւ նաեւ Սիմոն Պետրոս, որ անոր ետեւէն կու գար. գերեզման մտաւ, ու տեսաւ որ կտաւները հոն էին, **7** իսկ վարչամակը՝ որ անոր գլուխն էր, միւս կտաւներուն հետ չէր, այլ առանձին ծալուած ու մէկ կողմ դրուած էր: **8** Այն ատեն միւս աշակերտն ալ, որ աւելի առաջ եկած էր գերեզմանը, ներս մտաւ, տեսաւ եւ հաւատաց: **9** Որովհետեւ դեռ չէին հասկեցած Գրիը՝ թէ պէտք էր որ մեռեալներէն յարութիւն առնէր: **10** Ապա աշակերտները տուն վերադարձան:

Գլ. 20, 9 – «Գրուածը», այսինքն Սուրբ Գրիգորին մէջ իր յարութեան մասին գրուածը, Քրիստոս շատ անգամ ըսած էր իր աշակերտներուն: Սակայն Մեսիայի անձին նկատմամբ անոնց ունեցած սխալ գաղափարները, անտարակոյս, արգելք եղած էին, իրենց ըսուածները բառացիօրէն հասկնալ կարենալու: Աստուծոյ ծրագիրներուն կատարեալ գիտակցութիւնն այն ատեն միայն ունեցան անոնք, երբ աստուածային Յարուցեալը ինքզինքը ցոյց տուաւ անոնց, եւ երկինք համբառնալէ ետք, Սուրբ Հոգին ղրկեց անոնց:

Յիսուս կ'երեւի Մագդաղենացիին

11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կեցած կու լար, եւ մինչ կու լար՝ ծռեցաւ դէպի գերեզմանը. **12** եւ տեսաւ երկու սպիտակագգեստ հրեշտակներ, որ նստեր էին, մէկը՝ սնարին, միւսը՝ ոտքերուն կողմը, ուր դրուած էր Յիսուսի մարմինը: **13** Եւ անոնք ըսին. «Ո՛վ կին, ինչո՞ւ կու լաս»: «Որովհետեւ Տէրս գերեզմանէն վերցուցեր են», պատասխանեց անոնց, «եւ չեմ գիտեր՝ ո՛ւր դրեր են»: **14** Այս ըսելով՝ ետեւ դարձաւ, եւ տեսաւ Յիսուսը, որ կեցեր էր. բայց չէր գիտեր՝ թէ Յիսուսն էր: **15** Յիսուս հարցուց անոր. «Ո՛վ կին, ինչո՞ւ կու լաս, զո՞վ կը փնտռես»: Ան, կարծելով որ պարտիզպանն է՝ ըսաւ անոր. «Տէր, եթէ դուն վերցուցիր, ըսէ՛ ինձի, ո՞ւր դրիր, որպէսզի առնեմ զայն»: **16** Յիսուս ըսաւ անոր. «Մարիա՛մ». ան ալ դարձաւ եւ երբայեցերէն ըսաւ. «Րաբբունի», որ կը նշանակէ՝ Վարդապետ: **17** Յիսուս ըսաւ. «Մի՛ մօտենար ինձի. որովհետեւ դեռ Հօրս քով ելած չեմ. այլ գնա՛ իմ եղբայրներուս եւ ըսէ՛ անոնց՝ թէ ես կ'ելլեմ իմ Հօրս եւ ձեր Հօր քով, իմ Աստուծոյս եւ ձեր Աստուծոյն քով»: **18** Մարիամ Մագդաղենացին եկաւ եւ աշակերտներուն պատմեց՝ թէ ինք տեսաւ Տէրը եւ իրեն այս խօսքերն ըսաւ:

Յիսուս կ'երեւի աշակերտներուն

19 Նոյն միաշաբաթի օրը, երեկոյեան, մինչ աշակերտները հաւաքուած էին, եւ հրեաներու վախէն՝ դռները փակած էին, Յիսուս եկաւ եւ, անոնց մէջտեղ կանգնելով, ըսաւ անոնց. «Խաղաղութի՛ւն ձեզի»: **20** Այս ըսելով՝ անոնց ցոյց տուաւ ձեռքերն ու կողը: Աշակերտները, տեսնելով Տէրը՝ ուրախացան: **21** Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Խաղաղութի՛ւն ձեզի. ինչպէս Հայրը զիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ»: **22** Այս խօսքերն ըսելով՝ փչեց անոնց վրայ եւ ըսաւ. **23** «Առէ՛ք Սուրբ Հոգին. որոնց որ մեղքերը թողուք՝

21 – «Խաղաղութիւն ձեզի», փոխան՝ «Ողջոյն ձեզի»ի:

23 – Յիսուս իր անսահման կարողութեամբը՝ լիագոր իշխանութեամբ կ'օժտէ առաքեալները, Սուրբ Հոգւոյն զօրութեամբը արձակելու մեղքերը: Ապաշ-

Թողուա՛ծ ըլլան, եւ որոնց կապէք՝ կապուած ըլլան»:

Թովմաս կը հաւատայ

24 Բայց տասներկուքէն մէկը, Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, անոնց հետ չէր Յիսուսի եկած ատեն: **25** Միւս աշակերտները կ'ըսէին անոր՝ Թէ Տէրը տեսանք: Բայց անիկա ըսաւ. «Մինչեւ որ չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ գամերու նշանը, եւ մատներս չմտցնեմ անոր կողին մէջ՝ չեմ հաւատար»:

26 Ութ օր վերջ, աշակերտները դարձեալ ներսն էին. Թովմաս ալ միասին: Դռները փակ ըլլալով հանդերձ՝ Յիսուս եկաւ, անոնց մէջտեղ կեցաւ եւ ըսաւ. «Խաղաղութի՛ւն ձեզի»:

27 Յետոյ ըսաւ Թովմասին. «Բեր մատդ եւ դի՛ր հոս, տե՛ս ձեռքերս. երկարէ՛ ձեռքդ ու միսէ՛ կողիս մէջ եւ մի՛ ըլլար անհաւատ, այլ հաւատացեալ»:

28 Թովմաս պատասխանեց. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ»:

29 Յիսուս աւելցուց. «Կը հաւատաս, որովհետեւ տեսար զիս. երանի՛ անոնց որ առանց տեսած ըլլալու պիտի հաւատան»:

30 Ուրիշ շատ հրաշքներ ալ ըրաւ Յիսուս իր աշակերտներուն առջեւ, որոնք այս գրքին մէջ գրուած չեն: **31** Բայց այսչափը գրուեցաւ, որպէսզի հաւատաք թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, եւ հաւատալով՝ յաւիտենական կեանքն ունենաք անոր անուանով:

Տիբերական լեակին հրաշքը

21 **1** Անկէ վերջ, դարձեալ Յիսուս ինքզինքը յայտնեց իր աշակերտներուն, Տիբերիայի ծովեզերքը. եւ յայտնեց այսպէս: **2** Միասին էին Սիմոն Պետրոս, Թովմաս՝ Երկուորեակ կոչուածը, Նաթանայէ՛լ՝ որ Գալիլեայի Կանա քաղաքէն

խարութեան խորհուրդը Փրկչին գատկական պարգեւն է մարդկութեան: Մեղ-
փերը արձակելու եւ կապելու այս գանազանումը սակայն չ'ենթադրեր կամայա-
կանութիւն մը, հապա իրական գոյմամբ եւ առաջադրութեամբ միացած
անձնական ու լիակատար խոստովանութիւն մը մեղքերու:

էր, Ձեբեդէոսի որդիները եւ աշակերտներէն ուրիշ երկու հոգի: **3.** «Զուկ որսալու կ'երթամ», ըսաւ անոնց Սիմոն Պետրոս: «Մենք ալ կու գանք քեզի հետ», պատասխանեցին անոր: Գացին ու նաւակ մտան եւ այն գիշերը բան մը չբռնեցին:

4 Առաւօտեան դէմ՝ Յիսուս ծովեզերքը կեցած էր, բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուսն է: **5** «Տղա՛ք, ըսաւ Յիսուս, ուտելու բան մը ունի՞ք»: «Ո՛չ», պատասխանեցին: **6** «Ուռկանը նաւակին աջ կողմը նետեցէք, ըսաւ Յիսուս, եւ պիտի գտնէք»: Նետեցին, եւ ձուկերու բազմութենէն՝ չէին կրնար քաշել: **7** Այն աշակերտը, զոր կը սիրէր Յիսուս, ըսաւ Պետրոսին. «Տէ՛րն է անիկա»: Սիմոն Պետրոս երբ լսեց՝ թէ Տէրն է, սփածանելին վրան առաւ, քանի մերկ էր, եւ ծով նետուեցաւ:

8 Իսկ միւս աշակերտները նաւակով եկան. որովհետեւ ցամաքէն գրեթէ երկու հարիւր կանգուն հեռու էին, եւ ուռկանը կը քաշէին ձուկերով միասին: **9** Երբ ցամաք ելան՝ տեսան վառուած կրակ մը, վրան ալ՝ ձուկ դրուած եւ հաց: **10** Յիսուս ըսաւ անոնց. «Բերէ՛ք այդ ձուկերէն, զոր հիմա բռնեցիք»: **11** Սիմոն Պետրոս նաւակ մտաւ եւ ուռկանը ցամաք քաշեց, հարիւր յիսուն երեք մեծամեծ ձուկերով լեցուն. եւ այդչափ ըլլալով հանդերձ՝ ուռկանը չպատռեցաւ:

12 Յիսուս ըսաւ անոնց. «Եկէ՛ք, ճաշեցէք»: Աշակերտներէն ո՛չ մէկը կը համարձակէր հարցնել իրեն՝ թէ դուն ո՛վ ես. որովհետեւ գիտէին՝ թէ Տէրն է: **13** Յիսուս մօտեցաւ, առաւ հացը, եւ տուաւ անոնց, նոյնպէս ձուկը: **14** Այս երրորդ անգամն էր, որ Յիսուս՝ մեռեալներէն յարութիւն առնելէն վերջ՝ երեւցաւ աշակերտներուն:

Պետրոսի Առաքելութիւնը

15 Ժաշէն ետք, Յիսուս հարցուց Սիմոն Պետրոսին. «Սիմոն՝ Յովնանի, կը սիրե՞ս զիս ատոնցմէ աւելի»: «Այո՛, Տէր, պատասխանեց, դուն ալ գիտես որ կը սիրեմ քեզ»: «Արածէ՛ իմ գառնուկներս», ըսաւ անոր: **16** Դարձեալ հարցուց անոր. «Սիմոն՝ Յովնանի, կը սիրե՞ս զիս»: «Այո՛, Տէր, պատասխանեց, դուն ալ գիտես որ կը

սիրեմ քեզ»։ «Արածէ՛ իմ ոչխարներս», ըսաւ անոր Յիսուս։ **17** Երրորդ անգամ մըն ալ հարցուց անոր․ «Սիւմո՛ն Յովնանի, կը սիրե՞ս զիս»։ Տրտմեցաւ Պետրոս, որովհետեւ երրորդ անգամ հարցուց իրեն՝ թէ կը սիրե՞ս զիս, ու ըսաւ․ «Տէ՛ր, դուն ամէն բան գիտես եւ ամէն բան կը ճանչնաս․ գիտես նաեւ թէ կը սիրեմ քեզ»։ «Արածէ՛ իմ ոչխարներս», ըսաւ անոր Յիսուս։

18 «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, երբ դեռ երիտասարդ էիր՝ քու ձեռքովդ կը կապէիր գօտիդ եւ կ'երթայիր ուր որ կ'ուզէիր․ բայց երբ ծերանաս՝ ձեռքերդ վեր պիտի բարձրացնես եւ ուրիշ մը գօտի պիտի կապէ քեզի ու պիտի տանի՝ ուր որ չես ուզեր երթալ»։ **19** Ասիկա ըսաւ, նշանակելով թէ ի՛նչ մահով պիտի փառաւորէր զԱստուած․ եւ այս ըսելէն վերջ՝ աւելցուց․ «Ետեւէ՛ս եկուր»։

20 Պետրոս դարձաւ եւ տեսաւ որ ետեւէն կու գար այն աշակերտն ալ՝ զոր կը սիրէր Յիսուս, այն՝ որ ընթրիքի ատեն Յիսուսի լանջքին փարելով՝ հարցուցած էր․ «Տէ՛ր, ո՞վ է որ քեզ պիտի մատնէ»։ **21** Պետրոս, զանիկա տեսնելով՝ ըսաւ Յիսուսին․ «Տէ՛ր, իսկ ասիկա ի՞նչ պիտի ըլլայ»։ **22** Յիսուս պատասխանեց․ «Եթէ ես ուզեմ՝ որ ատիկա մնայ մինչեւ որ ես գամ, քեզի ի՞նչ փոյթ․ դուն ետեւէս եկուր»։ **23** Եւ ասկէ՝ եղբայրներուն մէջ զրոյց տարածուեցաւ եւ կարծեցիկ թէ այն աշակերտը պիտի չմեռնի։ Սակայն Յիսուս անոր չըսաւ՝ թէ պիտի չմեռնի, այլ՝ եթէ ես ուզեմ որ անիկա մնայ մինչեւ որ ես գամ, ի՞նչ փոյթ քեզի։

Վերջաբան

24 Այս աշակերտն է, որ կը վկայէ այս բաներուն, եւ որ գրած

Գլ. 21, 17 – Յիսուս, բարի Հովիւր, Ս. Պետրոսը իր փոխանորդը կը կարգէ հոս եւ հանդիսապէս կը յանձնէ անոր իր Եկեղեցւոյն հովուապետութեան պաշտօնը։ Յիսուսի երեք անգամ անոր հարցում ուղղելը՝ անոր եռապատիկ ուրացութիւնը կը նշանակէ, զոր Պետրոս պէտք էր դարմանել՝ երիցս խոստովանելով Քրիստոսի անձին հանդէպ իր տածած գորովագութ՝ սէրը։

18 – Պիտի տանին զՔեզ հոն՝ ուր դուն չես ուզեր երթալ, այսինքն՝ խաչի մահաւան։

է ասոնք. եւ գիտենք՝ թէ անոր վկայութիւնը ճշմարիտ է: 25 Բայց
դեռ ուրիշ շատ գործեր ալ կան, զորս կատարեց Յիսուս, որոնք
եթէ մէկիկ մէկիկ գրի առնուէին՝ կարծեմ թէ աշխարհս ալ բաւա-
րար պիտի չըլլար պարունակելու այդ գիրքերը, եթէ գրուած ըլ-
լային:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

- 1.- ԱՌԱԿՆԵՐՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ — Մատթ 13, 10-17
Մարկ. 4, 10-12. Դուկ 8. 9:
- 2.- ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ
Տրուած է Աստուծոյ կողմէ, անոնց որ զայն կ'ընդունին.
Սերմանողը — Մատթ 13, 3-23. Մարկ 4, 3-20
Դուկ 8, 4-15:
Սահմանուած է տարածուելու.
Ցորենը որ ինքնիրեն կ'անի — Մակ 4, 26-29:
Մանանեխի հատիկը — Մատթ 13, 31, Մարկ 4, 30-32,
Դուկ 13, 18:
Խմորը — Մատթ 13, 33. Դուկ 13, 20:
Չարը եւ բարին խառն են մէջը.
Որումը — Մատթ 13, 24-30. 36-43:
Ուռկանը — Մատթ 13, 47-50:
- 3.- ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՔՆԵՐԸ
Նախընտրելի է քան ամէն բարիք.
Թափնուած գանձը — Մատթ 13-44:
Մարգարիտը — Մատթ 13, 45:
Կը պահանջէ անպայմանաւոր փարում.
Ձեռքը մանին դնող մարդը — Դուկ 9, 62:
Աշտարակ կառուցողը — Դուկ 14, 20-30:
Պատերազմի գացող թագաւորը — Դուկ 14, 31-33:
Խուսափող հրաւիրեալները — Դուկ 14, 15-24:
Անհաւատարիմ տնտեսը — Դուկ 16, 1-8:

Ապիկար ծառաները – Դուկ 17, 7-10:

Կը պահանջէ խզում ամէն բանէ.

Նեղ մամբան եւ դուռը – Մատթ 7, 13. Դուկ 13, 24:

Անհեռատես հարուստը – Դուկ 12, 16-21:

Ասեղի ծակէն անցնող ուղտը – Դուկ 19, 24:

Մարկ. 10, 25. Դուկ 18, 25:

4.- ԱՍՏՈՒԱԾ ՀԱՇԻԻ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՁԷ

ՏՈՒԱԾ ՊԱՐԳԵԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ծառը կը դատուի իր պտուղներէն – Մատթ 7, 6-20

Դուկ 6, 43:

Տաղանդները – Մատթ 25, 14-30:

Դրամները – Դուկ 19, 12-27:

Դագար եւ հարուստը – Դուկ 16, 19-31:

Հարսանեկան տարագը – Մատթ 22, 11-44:

Հսկել եւ միշտ պատրաստ ըլլալ Տիրոջ Գալուստին.

Սպասող ծառաները – Դուկ 12, 35-48:

Գիշերուան գողը – Մատթ 24, 43. Դուկ 12, 39:

Հաւատարիմ ծառաները – Մատթ 24, 45-51. Դուկ 12, 42-46:

Տասը կոյսերը – Մատթ 25, 1-13:

5.- ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամէն բան կախում ունի Աստուծոյ շնորհէն.

Այգի դրկուած գործաւորները – Մատթ 20, 1-16:

Դուռը բաց է ամէնուն, ոմանք կը հրաժարին.

Հարսանեկան խնջոյք – Մատթ 22, 2-20:

Երկու գաւակները – Մատթ 21, 28-32:

Մարդասպան մշակները – Մատթ 21, 33-45

Մարկ. 12, 1-12. Դուկ. 20, 9-19:

Հրապարակի մանուկները – Մատթ 11, 16-19

Դուկ 7, 31-35:

Աստուծոյ գթութիւնը ընդառաջ կ'երթայ զղջացողներուն.

Կորսուած գառնուկը – Մատթ 18, 12-14. Դուկ 15, 3-7:

Կորսուած դրամը – Դուկ 15, 8-10:

Անառակ որդին – Դուկ 15, 11-32:

Պարտապանները – Դուկ 7, 41-43:

Անպտուղ թզենին – Ղուկ 13, 6-9:
 Աստուած կը խնդրէ որ վստահինք.
 Թռչունները եւ վայրի շուշանները – Մատթ 6, 26-30:
 Պահանջկոտ բարեկամը – Ղուկ 11, 5-8:
 Հայր եւ որդի – Ղուկ 11, 11-13:
 Անիրաւ դատաւորը եւ այրի կինը – Ղուկ 18, 1-8:
 Եղբայրսիրութիւնը՝ օրէնք Արքայութեան.
 Բարի Սամարացին – Ղուկ 10, 29-37:
 Անգութ պարտապահանջը – Մատթ 18, 23-25:
 Ոչ ոք պէտք է ինքզինք ուրիշին գերազնահատէ.
 Յարդի շիւղը եւ գերանը աչքերուն մէջ – Մատթ 7, 1-5
 Ղուկ 6, 37-42:
 Վերջին տեղը – Ղուկ 14, 7-11:
 Փարիսեցին եւ մաքսաւորը – Ղուկ 18, 9-14:
 Յիսուսի աշակերտները աղն են եւ լոյսը երկրի –
 Մատթ 5, 13-16: Մարկ 9, 50. Ղուկ 11, 33:

6.- ՅԻՍՈՒՍ ԻՆՓՆՁԻՆՔ ԿԸ ՆՄԱՆՑՆԷ.

Բարի հովիւին – Յովհ 10, 11-16:
 Հանապարհին – Յովհ 14, 4-6:
 Կենդանի ջուրին – Յովհ 4, 10-15:
 Յորենի հատիկին – Յովհ 12, 24:
 Աշխարհի լոյսին – Յովհ 8, 12:
 Կեանքի հացին – Յովհ 6, 35:
 Փարախի դրան – Յովհ 10, 1-10:
 Կեանքին – Յովհ 11, 25:
 Որթատունկին – Յովհ 15, 1-8:

ՅԻՍՈՒՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

- 1.— Ինչո՞ւ ՀԱՄԱՐ ՅԻՍՈՒՍ ՀՐԱՇՔՆԵՐ Կ'ԸՆԷ
Դո՞ւն ես՝ որ պիտի գար: Աւետում Մեսիայի պարգեւներուն
Մատթ 11, 3-6:
Դուք է տարուած Յիսուս դպաւ անոնց աչքերուն –
Մատթ 20, 34:
Կարեկցութենէ տարուած. ձեռք տարածեց – Մարկ 1, 41:
Յիսուս կը բուժէ հոգիւն եւ մարմինը – Մատթ 9, 6
Յովհ 5, 14:
Կը մերժէ հրաշքը սատանային թելադրութեամբ –
Մատթ 4, 1-7:
Կը հաւատա՞ք որ կարող եմ ասիկա ընել – Մատթ 9, 28:
Հաւատո՞ղ քեզ փրկեց – Մատթ 20, 34. Մարկ 10, 52
Ղուկ 17, 19:
Մեծ է հաւատո՞ղ, բաղձանքիդ համաձայն թող ըլլայ –
Մատթ 15, 28:
Առաջին հրաշքը յայտնեց անոր փառքը եւ
աշակերտները հաւատացին – Յովհ 2, 11:
Հացի բազմացումը, նշան կեանքի հացին – Յովհ 6, 26-35:
Յիսուսի գործերը կը վկայեն անոր առաքելութեան –
Յովհ 3, 2-5. 36. 10-25:
Հրաշքը հրաւեր է հաւատքին – Յովհ 20, 31:
Կարողութիւնը կը տրուի առաքեալներուն – Մատթ 10, 1:
Այսպէս Յիսուս կը հաստատէ անոնց խօսքը –
Մարկ 16, 17-20:

- 2.— ՀՐԱՇՔՆԵՐԸ՝ ԲՆՈՒԹԵԱՆ ՈՅԺԵՐՈՒ ՎՐԱՅ

Զուրը կը փոխէ գինիի – Յովի 2, 1-11:
 Հրաշագործ ձկնորսութիւնը – Մատթ 4, 18-22
 Մարկ 1, 16-20: Ղուկ 5, 1-11:
 Կը խաղաղեցնէ փոթողիկը – Մատթ 8, 23-37
 Մարկ 4, 35-41: Ղուկ 8, 22-25:
 Կը բազմացնէ հացերը – Մատթ 14, 13-21
 Մարկ 6, 30-44: Ղուկ 4, 10-17, Յովի 6, 1-13:
 Կը փալէ ջուրի վրայ – Մատթ 14, 22-23, Մարկ 6, 45-52:
 Երկրորդ անգամ հացերը կը բազմացնէ –
 Մատթ 15, 32-38, Մարկ 8, 1-10:
 Դրամը ձուկի բերանին մէջ – Մատթ 17, 24-27:
 Խօսքով կը չորցնէ թգեմիւն – Մատթ 21, 18-21
 Մարկ 11, 12-14:
 Հրաշագործ ձկնորսութիւն, յարութենէն ետք –
 Յովի 21, 3-14:

- 3.- ԽՄԲՈՎԻՆ ՅԻՇՈՒԱԾ ԲՈՒԺՈՒՄՆԵՐ
- Հիւանդներ եւ դիւահարներ – Մատթ 4, 23. 8. 16. 12. 15
 Մարկ 1, 32-34, 3, 10. Ղուկ 4, 40. 6. 18:
 Մեսիայի բարիքները – Մատթ 11, 2-6. Ղուկ 7, 18-22:
 Ամէն տեսակ հիւանդներ կը բուժէ – Մատթ 14, 14, 15, 30,
 Ղուկ 9, 11:
 Հիւանդները որ կը դաշին անոր հագուստին –
 Մատթ 14, 35. Մարկ 6, 33:
 Տանարին մուտքին – Մատթ 21, 14:

- 4.- ԲՈՒԺՈՒՄՆԵՐ
- Սպայի որդին, Կանայի մէջ – Յովի 4, 43-54:
 Պետրոսի զոհանչը – Մատթ 8, 14. Մարկ 1, 29-31:
 Բորոտ մը – Մատթ 8. 2-4. Մարկ 1, 40-45:
 Կափառնառումի անդամալոյծը – Մատթ 9, 1-8,
 Մարկ 2, 1-12:
 Գօսացած ձեռքով մարդը – Մատթ 12, 9-13,
 Մարկ 3, 1-5, Ղուկ 6, 6-10:
 Հարիւրապետին ծառան – Մատթ 8, 5-13, Ղուկ 7, 1, 10:
 Տեռատես կիներ – Մատթ 9, 20-22. Մարկ 5, 24-34,

Ղուկ 8, 43-48:

Երկու կոյրերը – Մատթ 9, 27-31:

Պրորֆատիկէի անդամալոյծը – Յովհ 5, 1-18:

Խուլ-համբլը – Մատթ 7, 31-37:

Բեթսայիդայի կոյրը – Մարկ 8, 22-26:

Ի ծնէ կոյրը – Յովհ 9, 1-40:

Ջրգողը – Ղուկ 14, 1-16:

Տասը բորոտները – Ղուկ 17, 11-19:

Երիֆովի կոյրը – Մատթ 20, 29-34. Մարկ 10, 46-52

Ղուկ 18, 35-53:

Մաղֆոսի ականջը – Ղուկ 22, 50:

5.- ԱՅՍԱՀԱՐՆԵՐՈՒ ԲՈՒԺՈՒՄՆԵՐ

Կափառնաումի այսահարին բուժումը – Մատթ 12, 23-28:

Կոյր-համբ դիւահարը – Մատթ 12, 22. Ղուկ 11, 14:

Գերգեսացին – Մատթ 8, 28-34. Մարկ 5, 1-20

Ղուկ 8, 36-39:

Համբ դիւահարը – Մատթ 9, 32-34:

Կանանացի կնոջ աղջիկը – Մատթ 15, 21-28

Մարկ 7, 24-30:

Լուսնոտը – Մատթ 17, 14-21. Մարկ 9, 14-29

Ղուկ 13 10-17:

Կարկամած կինը – Ղուկ 13, 10-17:

Յիսուս Աստուծոյ Հոգիով կ'արտաքսէ դեւերը –

Մատթ 12, 23-28:

6.- ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայրոսի աղջիկը – Մատթ 9, 18. 23-26. Մարկ 5, 35-43

Ղուկ 8, 49-56:

Նայինի ալի կնոջ որդին – Ղուկ 7, 11-17:

Ղազար – Յովհ 11, 1-44:

Յիսուս կ'աւետէ իր յարութիւնը – Մատթ 16, 21. 17, 22:

Կը բաղդատէ զայն Յովնանի նշանին – Մատթ 12, 39:

Յիսուս ուրիշ բազմաթիւ «նշաններ» եւս ըրաւ –

Յովհ 20, 30:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Երրորդ, այսինքն Ղուկասի Աւետարանը եւ Առաքեալներու Գործերը հնագոյն շրջանին հաւանաբար կը կազմէին մէկ գիրք: Եկեղեցւոյ նախանձախնդրութիւնը՝ չորս աւետարանները ունենալու մէկ գիրքի մէջ, զայն մղած է բաժնելու Ղուկասի Աւետարանը Առաքեալներու Գործերէն: Այս բաժանումը կատարուած է ամենայն հաւանականութեամբ 150-էն առաջ եւ, հելլէն գրական աշխարհի սովորութեամբ, Ղուկասի երկրորդ գիրքը կոչուած է Առաքեալներու Գործեր:

Առաքեալներու Գործերուն նախաբանը (1, 1), ինչպէս նաեւ երրորդ Աւետարանին նախաբանը (1, 4) երկու գրութիւնները կը ներկայացնեն իբր սահմանուած, միեւնոյն հեղինակէն՝ մի ոմն Թէոփիլոսի: Ասկէ զատ, երկու գիրքերուն լեզուի եւ ոճի սերտ առնչութիւնները ցոյց կու տան՝ թէ ասոնք գործն են միեւնոյն հեղինակին:

Եկեղեցւոյ հնագոյն աւանդութիւնը Առաքեալներու Գործին իբր հեղինակ կը ճանչնայ սուրբ Ղուկասը: Երկրորդ դարու մատենագիրներն ալ, իբր հեղինակ նոյն գիրքին՝ կը յիշեն սուրբ Ղուկասը: Երկու գիրքերուն ալ ընդմէջէն երեւան կու գայ հեղինակը՝ իբրեւ քրիստոնեայ հաւատացեալ առաքելական շրջանին, հելլէն չրեայ՝ ըստ ոմանց, ծագումով Յոյն՝ ըստ ուրիշներուն: Հմուտ է հրէական աւանդութիւններուն եւ Աստուածաշունչի Եօթանասնից յունարէն թարգմանութեան:

Արհեստով բժիշկ է, կ'ընկերանայ Պողոսին՝ անոր երկրորդ եւ երրորդ առաքելական ուղեւորութեան, ինչպէս ցոյց կու տայ գիրքին երկրորդ եւ երրորդ մասերուն մէջ գործածութիւնը առաջին դէմք յոգնակիրին: Պողոս կը ներկայացնէ զինքը իբրեւ սիրելի բժիշկ (Կող 4, 14), իբրեւ ընկերացող անոր՝ երկու գերութիւններուն ժամանակ (Կող 4, 14. Փի 2, 4 եւ 2 Տիմ 4, 11):

ԳՐՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Հնագույն ավանդույթները յիշատակութիւնն չունի այս ուղղութեամբ: Ըստ ոմանց, Ղուկաս գրած է գիրքը Աքայիա՝ Պետրոսի եւ Պօղոսի մարտիրոսութենէն ետք: Այս պարագային, զարմանք պիտի պատճառէր անոր լուրերը երկու Առաքեալներուն կեանքին մեկնակէտին մասին: Ուրիշներ կը համարին՝ թէ Ղուկաս գիրքը գրած է Հռոմ: Բովանդակութիւնը ցոյց կու տայ՝ թէ գիրքը կը վերջանայ Պօղոսի գերութեամբ, 61-63 թուականին: Հռոմի մէջ երկու տարիներուն տեւողութիւնը զոր կը յիշէ (28, 30) կը համապատասխանէ օրինական պայմանաժամին, որմէ ետք, եթէ ամբաստանութիւնը չհաստատուէր, կը համարուէր իբրեւ չեղեալ եւ բանտարկեալը ազատ կ'արձակուէր. այս տողերը ուրեմն գրուած են սուրբ Պօղոսի ազատագրութենէն ետք: Աւետարաններուն ներմուծումին մէջ տեսանք՝ թէ Մարկոսի Աւետարանը գրուած է հաւանաբար 64-ին: Ղուկաս գրած է իր Աւետարանը այս թուականէն ետք, քանի որ ծանօթ է Մարկոսեան ավանդութեան:

Առաքեալներու Գործերն ալ ուրեմն գրուած են այս թուականէն ետք: Կարգ մը հեղինակներ, գրութեան շրջանը կը դնեն 80-100 տարիներուն միջեւ: Սակայն, քանի որ գիրքին մէջ չկայ ոչ մէկ ակնարկութիւն եօթնասունական թուականներու դէպքերուն որ կատարուեցան Երուսաղէմի մէջ, դժուար է հաստատել՝ թէ Առաքեալներու Գործերը յօրինուած են 70-էն ետք:

ԱՂԲԻՒՆԵՐԸ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Գրութեան ճշգրիտ թուականի մը յառաջացումը երկրորդական է գիրքին հաստատուն արժէքին դիմաց: Ղուկաս ականատես վկան է գիրքին մէջ պատմուած դէպքերուն մէկ մասին, միւս մասին համար կը դիմէ աղբիւրներուն: Ինչպէս կը յիշատակէ Աւետարանին նախաբանին մէջ, Ղուկաս իր տրամադրութեան տակ ունի հարուստ, զանազան, ընդարձակ եւ մանրամասնուած աղբիւրներ: Աղբիւրներու այս զանազանութիւնը կ'երեւի գիրքին լեզուական քննութենէն: Այն մասերուն մէջ, ուր Ղուկաս կը գոր-

ծածկ ահանատես վկայի աղբիւրները, ըստ իր յուշագրութիւններուն, լեզուն կը պարզէ ճշգրիտ եւ վայելուչ յունարէնը: Իսկ այն մասերուն մէջ, ուր աչքի առջեւ ունի հաւաքած աղբիւրները, ըստ ոմանց գրաւոր եւ արամայերէն, լեզուն խրթին է եւ կը ծանրանայ սեմական-արամայական դարձուածքներով:

Ստոյգ է՝ թէ Ղուկաս իր տրամադրութեան տակ ունեցած է աղբիւրներ, զորս կարելի է ընդգծել: Նախ այն աղբիւրները որ կը հային Երուսաղէմի հասարակութեան կեանքին եւ պատմութեան (1-5) Պետրոսի առաքելութեան (9, 32-11, 18 եւ 12) եւ ապա Փիլիպպոսի առաքելութեան: Վերջինիս հայոց տեղեկութիւնները առած է հաւանաբար ուղղակի Փիլիպպոսէն, երբ Կեսարիոյ մէջ անոր հանդիպեցաւ: Անտիոքի մէջ հրեայ Հելլէնականներու առաքելութեան եւ հասարակութեան կեանքին աղբիւրները հաւանաբար տուած են Ղուկասի, նոյն ոստանին Եկեղեցւոյ պատասխանատուները (6, 1-8, 3. 11, 18-30. 13, 1-3):

Շատ հաւանական է, որ Ղուկաս ուղղակի Պողոսէն քաղած է տեղեկութիւններ անոր անձին, անոր գործին մասին, դարձէն առաջ, ինչպէս նաեւ առաջին առաքելութեան հայոց մանրամասնութիւնները: Պողոսի երկրորդ եւ երրորդ առաքելական ուղեւորութիւններուն Ղուկաս կ'ընկերանայ անոր եւ կը նօթագրէ դէպքերը, անցքերը եւ հանգրուանները, ինչպէս նաեւ անձերու անունները:

ԳԻՐՔԻՆ ԿԱՌՈՅՑԸ

Առաքեալներու Գործերը կը ցուցադրեն մեզի իրագործումը Յիսուսի *Խօսքին*. «Դուք իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմ, ամբողջ Հրէաստանի մէջ եւ մինչեւ աշխարհի ծայրերը» (1, 8):

Գիրքը կարելի է բաժնել հետեւեալ մասերուն.

- Կազմութիւն Երուսաղէմի քրիստոնեայ հաւաքականութեան (1-5):

- Հաւատքին ծաւալումը շնորհիւ քրիստոնեայ հելլէն Հրեաներուն, Ստեփանոսի մարտիրոսութենէն ետք (6, 1-8, 3):

- Աւետարանացումը Սամարիոյ, Երուսաղէմի շրջակայքին եւ մինչեւ Կեսարիա (8, 2-25. 8, 26-40. 9, 32-11, 18) Դամասկոս եւ Կիւրիկիա (9, 1-34):

- Անտիոքի հասարակութիւնը, (11, 19-26) քարոզութիւն հեթանոսներուն:

- Պօղոսի առաջին առաքելութիւնը, Երուսաղէմի ժողովէն առաջ, հարցը հեթանոսներու ընկալման նոր կրօնքին մէջ առանց մովսրսական Օրէնքին պարտադրանքին:

- Պօղոսի երկրորդ եւ երրորդ առաքելութիւնները (15-21, 17):

- Պօղոսի երկրորդ Երուսաղէմ, ձերբակալութիւնը եւ գերութիւնը Կեսարիա (21, 18-25-32):

- Պօղոսի ճամբորդութիւնը դէպի Հռոմ եւ բանտարկութիւնը (27-28):

Դիտուած Արեւելքէն, կայսրութեան մայրաքաղաքը կրնար ներկայացնել «Աշխարհի Ծայրերը» եւ Ղուկաս վերջակէտը կը դնէ իր գիրքին:

Թերեւս զարմանալի թուի՝ թէ ինչո՞ւ Ղուկաս չի պատմեր միւս առաքեալներուն աւետարանացումի վաստակը կամ հնազոյն եկեղեցիներուն հիմնարկութիւնը, ինչպէս Աղեքսանդրիոյ եւ Հռոմի, ուր կային քրիստոնեաներ, ինչպէս կը վկայէ Պօղոս Հռոմայեցի հաւատացեալներուն թուղթին մէջ: Ղուկաս տեղեկութիւններ չի տար նաեւ Պետրոսի առաքելութեան մասին Պաղեստինէն դուրս, ոչ ալ կը յիշէ թէ ուր գնաց, երբ անոր մասին կու տայ առեղծոսածային տեղեկութիւնը. «Գնաց յայլ տեղի»:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Առաքեալներու Գործերը անդրանիկ պատմութիւնն են նորածին Եկեղեցւոյ եւ կը ցոլացնեն հաւատքը ի Քրիստոս: Այս հաւատքը կռուանն է առաքելական քարոզութեան եւ անոր զարգացումին: Նախ կը կեդրոնանայ յարուցեալ Քրիստոսի անձին չուրջ, որ Տէրն է Յարութեամբ (2, 22-36), Աստուծոյ Որդին է (9, 20): Առաք-

եալներուն ճառերը կը յառաջբերեն Հին Կտակարանէն անցքեր, բանաձեւերու համար քրիստոսաբանական վարդապետութիւնը, զոր կը քարոզեն Հրեաներուն: Յիսուս Տիրոջ Ծառան է, ըստ Եսայեան մարգարէութիւններուն (3, 13. 4, 25-8, 32-33) նոր Մովսէսն է (3, 22. 7, 20): Անոր Յարութիւնը կը փաստելի Սաղմոսաբանով (Սղմ. 15, 8-10, Գործք Առաք. 2, 24-32. 13, 34-37): Հոգիին գեղումը կանխաւ գուշակուած է Յովէլի մարգարէութեամբ (2, 16): Այս հաւատքը սահմանուած է Հրեաներուն եւ Հեթանոսներուն, այսպէս կը հաստատեն Ստեփանոս, Պետրոս, Պօղոս եւ Երուսաղէմի ժողովը (15):

Կ'ուրուագծէ նաեւ դիմագիծը քրիստոնեայ առաջին հաւաքականութեան, որուն կեանքին տիրող յատկանիշն է ուրախութիւնը, հասարակաց կեանքը: Խորհուրդներով՝ կեանքը կը բերեղանայ՝ Մկրտութեան եւ Հացի բեկանումին, այսինքն Սուրբ Հաղորդութեան շուրջ: Կու տայ պատկերը եկեղեցային կազմակերպութեան. կը յիշէ մարգարէները, վարդապետները (11, 30. 13, 1) երէցները, զորս Պօղոս կը դնէ իբրեւ վերակացու տեղական եկեղեցիներուն, որ կը հիմնուին իր կողմէ:

Այս գիրքին հաւատքով ոգեւորուած ընթերցումը, առաքեալներու եւ այլ պաշտօնեաներու եռանդնոտ վաստակէն անդին, զգալի կ'ընէ ներկայութիւնը Սուրբ Հոգիին, որ իր շունչով կը մղէ եւ կ'ոգեւորէ: Ղուկաս ցոյց կու տայ Հոգին՝ գործի վրայ Եկեղեցւոյ ծաւալումին համար: Իրաւամբ ուրեմն այս գիրքը կոչուած է Սուրբ Հոգիին Աւետարանը: Հոգիին ներկայութիւնը հոգեւոր ցնծութեամբ կը լիացնէ ամբողջ գիրքը, զոր կ'իրականացնեն միայն անոնք, որ կը հասկնան սքանչելի դէպքը որ կատարուեցաւ այն առաջին տասնամեակներուն. ծաւալումը Քրիստոսի համաշխարհական Եկեղեցւոյն:

ԱՌԱՔԵԱԼ ՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ

Նախաբան

1 **1** Առաջին գիրքս, ո՛վ Թէոփիլոս, գրեցի այն ամէն բաներուն մասին զորս Յիսուս սկսաւ ընել եւ ուսուցանել սկիզբէն, **2** մինչեւ այն օրը ուր պատուէր տուաւ առաքեալներուն, զորս ընտրած էր Սուրբ Հոգիին ներշնչումով, եւ վերացաւ երկինք: **3** Չարչարանքներէն ետք, ան բազմաթիւ նշաններով յայտնուեցաւ անոնց՝ ողջ, քառասուն օրերու ընթացքին երեւեցաւ անոնց եւ խօսեցաւ Աստուծոյ Արքայութեան մասին: **4** Ճաշի ժամանակ զոր կը բաժնէր անոնց հետ, պատուիրեց անոնց չհեռանալ Երուսաղէմէն, այլ «սպասել Հօր խոստումին, ինչպէս լսեցիք ինծմէ, **5** որովհետեւ Յովհաննէս մկրտեց ջուրով, բայց, քիչ ժամանակ ետք, դուք պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով», ըսաւ անոնց:

Համբարձում

6 Անոնք մօտեցան անոր եւ հարցուցին. «Տէր, արդեօ՞ք հիմա է ժամանակը, երբ դուն պիտի վերահաստատես Իսրայէլի թագաւորութիւնը»: **7** Ան ըսաւ անոնց. «Ձեզի չիյնար գիտնալ ժամը եւ ժա-

Գլ. 1, 1 – Ս. Ղուկաս իր Աւետարանը «առաջին գիրք» կ'անուանէ, իսկ Գործք Առաքելոցը՝ «երկրորդ գիրք»:

5 – Փրկիչը Սուրբ Հոգւոյն հաղորդութիւնը փոխաբերական իմաստով «մկրտութիւն» կ'անուանէ. որովհետեւ առաքեալներու հոգիները Հոգեգալըստեան օրը Սուրբ Հոգւոյն շնորհքներուն հեղեղովը պիտի ողորդուէին:

6 – Առաքեալները Քրիստոսի յարութենէն ետքն ալ դեռ Իսրայէլի ազգային անկախութեան վերահաստատուիլը կ'ակնկալէին: Քրիստոս սակայն կը հասկցընէ անոնց քէ իր թագաւորութիւնը բովանդակ աշխարհն իր մէջ կը բովանդակէ:

մանակը, զոր Հայրը սահմանեց իր իշխանութեամբ: **8** Բայց դուք պիտի ընդունիք զօրութիւնը, երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ: Այն ատեն դուք պիտի ըլլաք իմ վկաներս Երուսաղէմ, ամբողջ Հրէաստանի մէջ, Սամարիա եւ մինչեւ աշխարհի ծայրերը»: **9** Այս խօսքերը ըսելէն ետք, մինչ անոնք կը նայէին, ան վերացաւ. եւ ամպը ծածկեց զինքը անոնց աչքերէն: **10** Մինչ անոնք իրենց աչքերը սեւեռած կը նայէին դէպի երկինք, ահաւասիկ երկու մարդիկ, սպիտակ հագած, երեւեցան անոնց եւ ըսին. **11** «Ո՛վ Գալիլիացիներ, ի՞նչու այսպէս կը նայիք դէպի երկինք: Այս Յիսուսը, որ ձեր քովէն երկինք վերացաւ, պիտի գայ նոյնպէս, ինչպէս տեսաք անոր վերանալը դէպի երկինք»:

Առաքելները՝ վերնատան մէջ

12 Այն ատեն անոնք Երուսաղէմ դարձան **Ձիթենեաց լեռնէն**, որ մօտ է Երուսաղէմի շաբթուայ մը ճանապարհով: **13** Մտան քաղաք եւ ելան վերնատունը, ուր էր անոնց բնակարանը, եւ էին՝ Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս, Անդրէաս եւ Փիլիպպոս, Թովմաս եւ Բարթոլղիմէոս, Մատթէոս եւ Յակոբոս՝ որդի Ալփիայի, Սիմոն Նախանձալոյզ, եւ Յուդա՝ որդի Յակոբոսի: **14** Ամէնքը միասիրտ կը յարատեւէին աղօթքի մէջ, մի քանի կիներու եւ Մարիամի՝ Յիսուսի մօր եւ անոր եղբայրներուն հետ:

Մատաթիայի ընտրութիւնը

15 Այն օրերուն, Պետրոս կանգնեցաւ եղբայրներուն միջեւ, եւ համախմբուած էին մօտաւորապէս հարիւր քսան հոգիներ, եւ

10 – Երկու սպիտակ հագուած մարդիկը՝ մարդկային կերպարանքին տակ երկու հրեշտակներ են:

12 – Մէկ ֆիլոմթքրէ փչ մը անելի:

14 – Յիսուսի եղբայրներու մասին հմմտ. Մատթէոսի 12 գլխուն քիւ 7 ծանօթութիւնը:

15 – Ինչպէս Աւետարաններուն՝ նմանապէս նաեւ Գործք Առաքելոցին մէջ Պետրոս երեսան կու գայ իբր գլուխ Քրիստոսի Եկեղեցւոյն:

ըսաւ. **16** «Եղբայրներ, հարկ էր որ կատարուէր Գիրքը, ուր Դաւիթի բերնով Սուրբ Հոգին ըսած էր Յուդայի մասին, որ եղաւ առաջնորդը անոնց որ բռնեցին Յիսուսը:

17 Անիկա մեր թիւէն էր, մեզի հետ էր եւ անոր ալ տրուած էր բաժին մը այս պաշտօնէն: **18** Անիկա ստացաւ դաշտ մը իբրեւ վարձք իր անիրաւութեան, ուռեցաւ եւ պատռեցաւ մէջտեղէն եւ անոր աղիքները թափուեցան: **19** Այս յայտնի եղաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներուն, եւ այդ դաշտը իրենց լեզուով կոչուեցաւ Ակեղտամա, որ կը նշանակէ Արեան Դաշտ: **20** Արդ, Սաղմոսարանին մէջ գրուած է. Անոր բնակութիւնը թող ըլլայ աւերակ եւ չգտնուի մէկը, որ հոն բնակի:

Գրուած է նաեւ. Ուրիշ մը թող առնէ անոր պաշտօնը:

21 Արդ, հարկ է որ այն մարդոցմէ որոնք մեզի հետեւեցան այն ժամանակէն, երբ Տէր Յիսուս ապրեցաւ մեր մէջ, **22** սկսեալ Յովհաննէսի մկրտութենէն մինչեւ այն օրը երբ վերացաւ մեզմէ, գտնուի մէկը, որ մեզի հետ ըլլայ, իբր վկայ անոր Յարութեան:

23 Երկու անձեր ներկայացուցին, Յովսէփը, որ կոչուած էր Բարսաբայ եւ անուանուած՝ Յուստոս, եւ Մատաթիա: **24** Եւ աղօթքի կենալով, ըսին. «Դուն, Տէր, սրտագէտը բոլոր մարդոց, յայտնէ մեզի՝ թէ այս երկուքէն զո՞վ ընտրեցիր, **25** որպէսզի առաքելական ծառայութեան մէջ գրաւէ տեղը զոր Յուդա թողուց, անոր տեղը երթալով»: **26** Վիճակ ձգեցին եւ վիճակը ելաւ Մատաթիային, որ համարուեցաւ մին տասնմէկ առաքեալներուն:

Սուրբ Հոգիին Գալուստը

2 **1** Երբ Պէնտեկոստէի օրերը հասան, ամէնքը հաւաքուած էին միատեղ, **2** երբ երկինքէն հնչիւն մը եկաւ սաստիկ հովի նման եւ լեցուց տունը ուր անոնք նստած էին: **3** Կրակի

16 – Սուրբ Հոգին կանխատեսած էր Յուդայի, իր ազատ կամքով առնելիք որոշումը, եւ կանխաւ ալ ըսած: Հետեւաբար հա՛րկ էր որ Ս. Գիրքին այս խօսքը կատարուէր:

նման լեզուներ տեսան որ կը բաժնուէին եւ կը հանգչէին անոնց իւրաքանչիւրին վրայ: **4** Ամէնքը լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ այլ լեզուներով, ինչպէս որ Հոգին կու տար անոնց՝ որ խօսէին:

5 Երուսաղէմի մէջ կը բնակէին երկիւղած Հրեաներ, երկինքի տակ եղող բոլոր ազգերէն: **6** Երբ այս ձայնը լսուեցաւ, բազմութիւնը եկաւ եւ խմբուեցաւ, եւ անոնցմէ իւրաքանչիւրը կը լսէր զանոնք՝ որ կը խօսէին իրենց լեզուով: **7** Անոնք կը հիանային եւ կը զարմանային եւ կ'ըսէին իրարու. «Ասոնք ամէնքը, որ կը խօսին, արդեօ՞ք Գալիլիացիներ չեն», **8** եւ ինչպէ՞ս մենք կը լսենք զանոնք մեր մայրենի բարբառով: **9** Պարթեւներ, Մարեր եւ Իլամացիներ եւ անոնք որ կը բնակին Միջագետք, Հրէաստան, Կապադովկիա, Պոնտոս, Ասիա, **10** Փռիւզիա, Պամփիլիա, Եգիպտոս եւ Լիբիոյ այն կողմերը որ մօտ են Կիւրենիոյ, եկուոր Հռոմայեցիներ, **11** Հրեաներ եւ հրեայ նորադարձներ, Կրետացիներ եւ Արաբներ, կը լսենք զանոնք, որ մեր լեզուով կը հռչակեն Աստուծոյ սքանչելիքները»:

12 Ամէնքը զարմացած կը սքանչանային եւ կ'ըսէին իրարու. «Ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա»: **13** Ուրիշներ ալ հեգնելով կ'ըսէին. «Ասոնք քաղցր գինիով գինովցած են»:

Գլ. 2, 4 – Առաքեալները արդէն ընդունած էին Ս. Հոգին, որ տուած էր անոնց իշխանութիւն՝ մեղքերը արձակելու: Այսօր անոնք վերէն զօրութիւն կը գգնուին, որպէսզի յետագային աներկիւղաբար ամէն կողմ ֆրիստոնէական հաւատքը փարոզեն: Այսօր անոնց մէջ կ'աւելի սրբաբար շնորհքը եւ կը ստանան այն մասնաւոր շնորհքը, որ դրոշմի խորհուրդով կը տրուի: Այսօր եւս (Յով. 14. 26) կը կատարուի, Սուրբ Հոգին զանոնք անսխալական ընելով իրենց փարոզած վարդապետութեան մէջ:

9 – «Հրէաստան» անունին Սուրբ Երկրէն հեռակայ այս երկիրներու շարքին մէջ համարուիլը՝ անոր աշխարհագրական դիրքին բացարձակապէս անհամապատասխան է: Ս. Յերոնիմոս զայն կարդացած է Syria, իսկ Ս. Օգոստինոս՝ Armenia (Հայաստան), ինչ որ շատ աւելի կը յարմարի:

11 – «Նորադարձ» կը կոչուէին այն օտարականները, որոնք հրէական հաւատքը, պաշտամունքն ու հրահանգներէն գոնէ մաս մը ընդունած կ'ըլլային:

Պետրոսին ճառը

14 Այն ատեն Պետրոս կանգնեցաւ Տասնմէկին հետ, բարձրացուց ձայնը եւ խօսեցաւ անոնց. «Դուք, Հրէաստանցի մարդիկ եւ դուք ամէնքդ որ կը բնակիք Երուսաղէմ, ասիկա թող յայտնի ըլլայ ձեզի եւ մօտիկ ըրէք իմ խօսքերուս: **15** Այս մարդիկը գինովցած չեն ինչպէս որ դուք կը կարծէք, որովհետեւ տակաւին օրուան երրորդ ժամն է: **16** Այլ այս այն է՝ ինչ որ ըսաւ Յովէլ մարգարէն.

17 «Այն վերջին օրերուն, կ'ըսէ Տէրը, պիտի հեղում իմ Հոգիէս ամէն մարմնի վրայ, եւ ձեր տղաներն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: **18** Եւ ես, իմ ծառաներուս եւ իմ աղախիններուս վրայ պիտի հեղում իմ Հոգիէս, **19** երկիմֆի մէջ, վերը՝ հրաշքներ ցոյց պիտի տամ, իսկ վարը, երկրի վրայ՝ արիւն, հուր եւ ծուխի մրրիկ:

20 Արեւը պիտի փոխուի խաւարի, լուսինը՝ արեան, նախ քան հասնիլը Տիրոջ մեծ եւ երեւելի Օրուն:

21 Այն ատեն, ով որ կանչէ Տիրոջ անունը՝ պիտի փրկուի»:

22 «Իսրայէլացիներ, լսեցէք այս խօսքերը: Յիսուս Նազովրեցին, այս մարդը զոր Աստուած ցոյց տուաւ ձեզի հրաշքներով, զօրութեամբ եւ նշաններով զորս Աստուած գործեց անոր ձեռքով, ինչպէս որ դուք իսկ գիտէք, **23** այս մարդը որ մատուցաւ, ըստ Աստուծոյ ծրագրին եւ կանխագիտութեան, դուք զայն բռնեցիք եւ սպաննել տուիք, խաչին վրայ դամելով անօրէններու ձեռքով. **24** բայց Աստուած յարոյց զայն, լուծելով մահուան կապանքները, որովհետեւ անհնար էր որ ան մնար մահուան իշխանութեան տակ: **25** Դաւիթ ի՛նք եւս կ'ըսէ անոր մասին.

Ես կանխաւ Տէրը կը տեսնէի միշտ իմ առջեւ, ան կը կանգնի իմ աջիս, որպէսզի չասանիմ:

26 Սիրտս կը հրնուի, հոգիս կը ցնծայ,
նոյնիսկ մարմինս կը հանգչի յոյսով:

27 Դուն պիտի չթողուս հոգիս դժոխքին մէջ, եւ թոյլ պիտի չտաս

որ Սուրբդ ապականութիւն տեսնէ:

28 Կեանքի մամբան ցոյց տուիր ինծի,

բու դէմքիդ ուրախութեամբ եւ քաղցրութեամբ համակեցիր զիս,
անվերջ ուրախութիւնն է վայելչութեան:

29 Եղբայրներ, հարկ է համարձակութեամբ ըսել ձեզի՝ թէ Դա-
ւիթ նահապետը մեռաւ եւ թաղուեցաւ, եւ անոր գերեզմանը մին-
չեւ օրս կը մնայ մեր մէջ: **30** Որովհետեւ ան մարգարէ էր եւ
գիտէր՝ թէ Աստուած երդումով խոստացած էր իր աթոռին վրայ
բազմեցնել անոր սերունդէն մէկը: **31** Եւ կանխաւ տեսաւ եւ աւե-
տեց Քրիստոսի յարուածին: Եւ անոր հոգին չմնաց դժոխքին մէջ եւ
անոր մարմինն ալ ապականութիւն չտեսաւ:

32 Աստուած յարոյց այս Յիսուսը, եւ մենք ամէնքս անոր վկա-
ներն ենք: **33** Ան փառաւորութեամբ Աստուծոյ աջով, ընդունեցաւ
Հօրմէն Սուրբ Հոգիին աւետիսը եւ սփռեց զայն, ինչպէս որ դուք
հիմա կը տեսնէք եւ կը լսէք: **34** Որովհետեւ Դաւիթ երկինք չելաւ,
բայց ինքն իսկ կ'ըսէ. Տէրը ըսաւ իմ Տիրոջ. մատն աչ կողմս,
35 մինչեւ որ թշնամիներդ պատուանդան դնեմ քու ոտքերուդ:

36 Արդ, Իսրայէլի ամբողջ տունը թող իմանայ ճշմարտու-
թեամբ թէ՛ Աստուած Տէր եւ Օծեալ ըրաւ այն Յիսուսը, զոր դուք
խաչեցիք»:

Առաջին դարձերը

37 Այս խօսքերը լսելով, անոնք զղջացին բոլոր սրտով եւ ըսին
Պետրոսին եւ միւս առաքեալներուն. «Եղբայրներ, ի՞նչ պէտք է
ընենք»: **38** Պետրոս ըսաւ անոնց. «Ապաշխարեցէ՛ք եւ ձեզմէ իւրա-
քանչիւրը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերուն
թողութեան համար, եւ այն ատեն դուք պիտի ընդունիք Սուրբ
Հոգիին պարգեւը: **39** Որովհետեւ խոստումը ձեզի համար է, ձեր
որդիներուն համար եւ ամէն անոնց համար որ հեռու են եւ զորս
մեր Տէր Աստուած կը կանչէ»: **40** Շատ մը ուրիշ խօսքերով, Պե-
տրոս վկայութիւններ կը բերէր, կը մխիթարէր զանոնք եւ կ'ըսէր.
«Ազատուեցէ՛ք այս մոլորեալ սերունդին ձեռքէն»:

41 Ոմանք սիրալոթար ընդունեցան խօսքը եւ մկրտուեցան: Եւ այն օրը մօտաւորապէս երեք հազար հոգիներ աւելցան:

Քրիստոնեայ առաջին հասարակութիւնը

42 Անոնք ամէն օր յարատեւօրէն կը հետեւէին առաքեալներուն ուսուցումին, հաղորդութեան, հացի բեկանումին եւ աղօթքներուն: **43** Երկիւղը կը համակէր բոլոր հոգիները, բազմաթիւ էին հրաշքները եւ նշանները զորս կը գործէին առաքեալները: **44** Բոլոր հաւատացեալները միասին կը մնային, եւ ամէն ինչ հասարակաց էր: **45** Անոնք կը ծախէին իրենց ինչքերը եւ կալուածները եւ հասոյթները կը բաժնէին ամէնուն՝ իւրաքանչիւրին կարիքին համաձայն: **46** Ամէն օր միասին կը յաճախէին տաճարը, իրենց տուններուն մէջ կը բեկանէին հացը եւ ուրախութեամբ եւ սրտի պարզութեամբ կը ճաշակէին կերակուրը: **47** Կը գովաբանէին զԱստուած, կը վայելէին ժողովուրդին համակրանքը եւ ամէն օր Տէրը նոր փրկեալներ կ'աւելցնէր հասարակութեան մէջ:

Պետրոս կը բուժէ ի ծնէ կաղը

3 **1** Պետրոս եւ Յովհաննէս տաճար կ'ելլէին իններորդ ժամու աղօթքին: **2** Հոն կար ի ծնէ կաղ մը, զոր ամէն օր կը տեղաւորէին տաճարին այն դրան առջեւ, որ կը կոչուի Գեղեցիկ, որպէսզի ողորմութիւն խնդրէր անոնցմէ որ տաճար կը մտնէին: **3** Երբ ան տեսաւ Պետրոսը եւ Յովհաննէսը, որոնք տաճար կը մտնէին, սկսաւ աղաչել, որպէսզի ողորմութիւն առնէր անոնցմէ: **4** Այն ատեն, Պետրոս աչքերը անոր վրայ սեւեռեց, ինչպէս նաեւ Յովհաննէս, եւ ըսաւ անոր. «Մեզի՛ նայէ»: **5** Անիկա անոնց կողմը դարձաւ եւ կ'ականկալէր բան մը ընդունիլ անոնցմէ: **6** Բայց Պետրոս ըսաւ անոր. «Արժաթ եւ ոսկի չունիմ, բայց կու տամ քեզի ինչ

Գլ. 3, 1 – Հրեաներու փոխառակալ աղօթքի սահմանուած ժամեր էին երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերը (առաւօտեան ժամը 9-ը, կէսօրը եւ երկուցիշ ժամը 3-ը): Իններորդ ժամուն կը մատուցուէր երեկոյեան զոհը:

որ ունիմ. յանուն Նազովրեցի Յիսուս Քրիստոսի, ոտքի ել եւ քալէ»։ **7** Եւ բռնեց անոր ձեռքէն եւ ոտքի հանեց զինք։ Անոր ազդերերը եւ սրունքները ամրացան, **8** վեր ցատկեց, սկսաւ քալել եւ անոնց հետ տաճար մտաւ, կը քալէր, կը վազվզէր եւ զԱստուած կ'օրհնէր։ **9** Բոլոր ժողովուրդը տեսաւ զինք երբ կը վազէր եւ զԱստուած կ'օրհնէր։

10 Ամէնքը կը ճանչնային զինք, որովհետեւ ամէն օր Գեղեցիկ դրան առջեւ նստած ողորմութիւն կը խնդրէր. եւ ամէնքը լեցուեցան զարմանքով եւ երկիւղով՝ նշանին համար որ կատարուեցաւ։

Պետրոսի ֆառը ժողովուրդին

11 Մինչ անիկա Պետրոսին եւ Յովհաննէսին մօտ կը մնար, ամէնքը զարմացած դէպի անոնց կողմը վազեցին՝ Սողոմոնի սրահին մէջ։ **12** Պետրոս, երբ տեսաւ, խօսքը բազմութեան ուղղեց եւ ըսաւ. «Իսրայէլացիներ, դուք ինչո՞ւ կը զարմանաք այս դէպքին համար, ինչո՞ւ ապշած կը նայիք մեզի, իբրեւ թէ մենք մեր կարողութեամբ կամ քաջութեամբ այս մարդուն կարողութիւն տուած ենք քալելու։ **13** Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց իր Ծառան՝ Յիսուսը, զոր դուք ուրացաք եւ մատնեցիք Պոնտոս Պիղատոսին առջեւ, երբ ան յօժար էր ազատ արձակել զինք։

14 Դուք ուրացաք Սուրբը եւ Արդարը եւ խնդրեցիք շնորհքը մահապարտ մարդուն համար, **15** եւ սպաննել տուիք կեանքի Իշխանը, զոր սակայն Աստուած յարոյց մեռեալներէն, եւ մենք անոր վկաներն ենք։ **16** Անոր անունը, որուն հաւատաց այս մարդը զոր դուք կը տեսնէք եւ կը ճանչնաք, այս անունը զօրացուց զինքը, եւ անոր հաւատքը, ձեր բոլորին դիմաց, առողջութիւն տուաւ անոր։

17 Բայց ես գիտեմ, եղբայրներ, թէ դուք անգիտութեամբ գործեցիք, ինչպէս նաեւ ձեր պետերը։ **18** Բայց Աստուած այսպէս կատարեց ինչ որ կանխաւ աւետած էր բոլոր մարգարէներուն բերնով թէ՛ իր Օծեալը պիտի չարչարուէր։ **19** Ապաշխարեցէք ուրեմն, դարձի եկէք, որպէսզի ձեր մեղքերը ներուին **20** եւ Տէրը

Հանգիստի ժամանակ բերէ ձեզի, եւ զրկէ Քրիստոսը՝ Յիսուս, որ նախասահմանուած է ձեզի. **21** այն՝ զոր երկինքը պիտի պահէ մինչեւ ընդհանրական վերանորոգումի ժամանակը, որուն մասին Աստուած խօսեցաւ մարգարէներուն բերնով **22** Նախ Մովսէս ըսաւ մեր հայրերուն. «Տէր Աստուած պիտի յարուցանէ ձեզի մարգարէ մը՝ նման ինծի, ձեր եղբայրներուն մէջէն. մտիկ ըրէք անոր ամէն բանի համար որ պիտի խօսի ձեզի: **23** Այն որ չունկնդրէ այս մարգարէին, պիտի բնաջնջուի այս ժողովուրդին ծոցէն»: **24** Այնուհետեւ, բոլոր մարգարէները որ խօսեցան, սկսեալ Սամուէլէն, եւ անոր յաջորդները, նոյնպէս աւետեցին այս օրերը:

25 Դուք որդիներն էք մարգարէներուն եւ Ուխտին, զոր Աստուած կնքեց մեր հայրերուն հետ երբ ըսաւ Աբրահամին. «Քու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը»: **26** Աստուած յարոյց իր Ծառան՝ նախ ձեզի համար եւ առաքեց զայն որպէսզի օրհնէ ձեզ, երբ ձեզմէ իւրաքանչիւրը դառնայ իր հարուստիւններէն»:

Պետրոս եւ Յովհաննէս Ատեանին առջեւ

4 **1** Անոնք տակաւին կը խօսէին ժողովուրդին, երբ վրայ հասան քահանաներ, տաճարին կառավարիչը եւ Սաղուկեցիներ, **2** որոնք զայրացած էին, տեսնելով որ անոնք կ'ուսուցանէին ժողովուրդին եւ կ'աւետէին մեռեալներու յարութիւնը Յիսուսով: **3** Ձեռք զրին անոնց վրայ եւ բանտարկեցին զանոնք մինչեւ յաջորդ առաւօտը, որովհետեւ արդէն իրիկուն էր: **4** Սա-

21 – Հրեաներուն քրիստոնէութեան դարձնէն ետքն է որ տեղի պիտի ունենայ Քրիստոսի երկրորդ գալուստը եւ անկէ ետք երանաւէտ յաւիտեանակեցութիւնը:

26 – Մեսիայի օրհնութիւնը թէեւ բովանդակ մարդկութեան վրայ կը տարածուէր, սակայն անոր մասնակցողներէն առաջինները պիտի ըլլային Իսրայէլացիները: Ատոր արժանանալու առաջին ու էական պայմանն է մեղքէ խորշիկ:

Գլ. 4, 1 – Սաղուկեցիներու տեսութիւնը մասնաւորաբար յարութեան վարդապետութեան մասին էր, զոր չէին ընդունիր:

կայն անոնցմէ չատեր, որոնք խօսքը ունկնդրած էին, հաւատացին. եւ հաւատացեալներուն թիւը, հաշուելով միայն այր մարդիկը, մօտաւորապէս հինգ հազար էր:

5 Յաջորդ օրը, Հրեաներուն պետերը, ծերերը, դպիրները հաւաքուեցան Երուսաղէմ: **6** Հոն էին Աննա քահանայապետը, Կալիսիա, Յովնաթան եւ Աղեքսանդրոս, եւ բոլոր անոնք որ քահանայական տունէն էին: **7** Հանեցին առաքեալները ատեանին առջեւ եւ սկսան հարցաքննել զանոնք. «Դուք ի՞նչ իշխանութեամբ կամ ի՞նչ անունով ասկա ըրիք»:

8 Այն ատեն Պետրոս, Սուրբ Հոգիով լեցուած, ըսաւ անոնց. «Ժողովուրդի իշխաններ եւ Իսրայէլի երեցներ, **9** արդեօ՞ք պատշա՞ճ է դատել մեզ այսօր այս տկար մարդուն եղած բարիքին համար, որու շնորհիւ ան բուժուեցաւ: **10** Լա՛ւ իմացէք, դուք ամէ՛նքդ, ինչպէս նաեւ Իսրայէլի ամբողջ ժողովուրդը, թէ այս մարդը այսօր կը ներկայանայ ձեր առջեւ բուժուած՝ անունովը միայն Նազովրեցի Յիսուսի Քրիստոսի, զոր դուք խաչեցիք, եւ որուն Աստուած յարութիւն տուաւ մեռեալներէն: **11** Այս Յիսուսն է վէժը զոր դուք՝ կառուցողներ, մերժեցիք, եւ անկիւնաքար դարձաւ:

12 Որովհետեւ երկինքի տակ չկայ ուրիշ անուն մը՝ տրուած մարդոց, որով մենք կարող ենք փրկուիլ»:

13 Տեսնելով համարձակութիւնը Պետրոսի եւ Յովհաննէսի եւ նկատի առնելով՝ թէ անոնք անգէտ եւ անուս մարդիկ էին, Ատեանի մարդիկը կը զարմանային, որովհետեւ կը ճանչնային զա-

5 – Պաշտօնի գլուխը գտնուող քահանայապետը Կալիսիան էր թէեւ, սակայն եւ այնպէս նախորդ քահանայապետները եւս կը պահէին իրենց երբեմն վաւրած պաշտօնին տիրոջը:

12 – Կա՛մ մարդիկ, որ կ'ըսեն. Արդարութեամբ ապրիլը միայն կը բաւ մարդը երջանկութեան հասցնելու: Աստուած սակայն զուտ արտաքին այս արդարութենէն աւելի բան մը կը պահանջէ մարդէն: Ան կը պահանջէ մեզմէ մերքին ու գերբնական արդարութիւն մը, որ կը ստացուի Քրիստոսի հետ միաւորութեամբ: Ան որ գուրկ է այս միաւորութենէն՝ գուրկ կը գտնուի նաեւ ճշմարիտ արդարութենէն, զոր սակայն հա՛րկ է որ ունենայ ամէն մարդ:

նոնք եւ գիտէին թէ Յիսուսի հետեւորդներ էին. **14** կը տեսնէին նաեւ մարդը, որ բուժուած էր եւ կանգնած անոնց մօտ, եւ չէին կրնար պատասխանել: **15** Այն ատեն Ատեանէն դուրս հանել տուին զանոնք եւ սկսան իրարու հետ խորհրդակցիլ: **16** Անոնք կ'ըսէին. «Ի՞նչ պիտի ընենք այս մարդոց, որովհետեւ յայտնի նշան մը գործընեցաւ անոնց ձեռքով. ասիկա Երուսաղէմի բոլոր բնակիչներուն ծանօթ է եւ չենք կրնար ուրանալ զայն: **17** Բայց որպէսզի աւելի չտարածուի ժողովուրդին մէջ, սպառնանք անոնց, որ ոչ մէկուն չխօսին այն անունով»: **18** Եւ կանչելով զանոնք, պատուիրեցին անոնց որ բնաւ չխօսին եւ չուսուցանեն Յիսուսի անունով: **19** Բայց Պետրոս եւ Յովհաննէս պատասխանեցին անոնց եւ ըսին. «Արդա՞ր է Աստուծոյ առջեւ, հնազանդիլ աւելի ձեզի քան Աստուծոյ. դո՛ւք դատեցէք: **20** Բայց մենք չենք կրնար հօգնակել ինչ որ տեսանք եւ լսեցինք»: **21** Անոնք սպառնացին անոնց եւ արձակեցին զանոնք, որովհետեւ ժողովուրդին պատճառով չէին գիտեր ինչպէս պատժել զանոնք, քանի որ կատարուած դէպքին համար ամէնքը զԱստուած կը փառաւորէին: **22** Արդարեւ, մարդը որ հրաշքով բուժուած էր, աւելի քան քառասուն տարեկան էր:

Առաքեալներու աղօթքը

23 Անոնք, երբ ազատ արձակուեցան, եկան իրենց մարդոց մօտ եւ պատմեցին անոնց ինչ որ քահանայապետները եւ երեցները ըսած էին անոնց:

24 Երբ իմացան անոնք, իրենց ձայնը բարձրացուցին առ Աստուած եւ ըսին. «Դո՛ւն, Տէր Աստուած, որ ստեղծեցիր երկիրքը եւ երկիրը, ծովը եւ ինչ որ կայ անոնց մէջ, **25** դուն մեր հօր Դաւիթին՝ քու ծառայիդ բերանով խօսեցար եւ Սուրբ Հոգիով ըսիր.

Ինչո՞ւ կը խռովիմ ազգերը,
եւ ժողովուրդները սիմ ծրագիրներ կը խորհին,

26 Երկրի թագաւորներն կ'ըմբոստանան
եւ իշխանները կը դաշնակցին միասին
Տիրոջ դէմ եւ անոր Օծեալին դէմ:

27 Արդարեւ անոնք միասին հաւաքուեցան այս քաղաքին մէջ քու Սուրբ Որդիիդ՝ Յիսուսի դէմ, զոր դուն օծեցիր, Հերովդէսը եւ Պոնտիոս Պիղատոսը՝ հեթանոս ազգերուն եւ Իսրայէլի ժողովուրդին հետ, **28** որպէսզի գործադրեն ինչ որ դուն կանխաւ սահմանեցիր քու զօրութեամբդ եւ իմաստութեամբդ: **29** Հիմա, Տէր, տես անոնց սպառնալիքները եւ ըրէ որ քու ծառաներդ, ամենայն համարձակութեամբ հռչակեն քու խօսքդ: **30** տարածէ՛ ձեռքդ, որպէսզի կատարեն բուժումներ, նշաններ եւ հրաշքներ, քու Որդիիդ՝ Յիսուսի անունով: **31** Մինչ անոնք կ'աղօթէին, դղրդեցաւ վայրը ուր հաւաքուած էին, եւ ամէնքը լեցուեցան Սուրբ Հոգիով, եւ սկսան համարձակութեամբ աւետել Աստուծոյ խօսքը:

Քրիստոնեայ հասարակութիւն

32 Հաւատացեալներու բազմութիւնը մէկ սիրտ եւ մէկ հոգի էր: Անոնցմէ ոչ մէկը իր ինչքերը իր սեփականութիւնը կը համարէր, եւ ամէն բան հասարակաց էր: **33** Առաքեալները մեծ զօրութեամբ կու տային վկայութիւնը Տէր Յիսուսի Յարութեան եւ ամէնքը մեծ համակրանք կը վայելէին:

34 Անոնցմէ ոչ մէկը կարիքի մէջ էր, որովհետեւ ամէն անոնք, որ ունէին կալուածներ կամ տուններ, կը ծախէին զանոնք եւ վաճառման գինը կը բերէին **35** եւ առաքեալներուն ոտքը կը դնէին, եւ կը բաժնէին իւրաքանչիւրին կարիքին համաձայն: **36** Յովսէփ, որ առաքեալներէն կոչուեցաւ Բառնաբաս, որ կը նշանակէ՝ որդի մխիթարութեան, Ղեւտացի էր եւ ծագումով Կիպրացի: **37** ան դաշտ մը ունէր, ծախեց զայն եւ բերաւ դրամը եւ դրաւ առաքեալներուն ոտքին առջեւ:

32 – Ինչքերու հասարակաց այս գործածութիւնը որ նախկին քրիստոնեաներուն մէջ շատ սովորական էր, պարտաւորիչ հանգամանք չունէր, այլ ազատ կամքով կը գործադրուէր: Ո՛չ մէկը իր ունեցած մէկ բանը բացարձակապէս ի՛ր սեփականութիւնը կը նկատէր:

Ամանիայի եւ Սափիրայի խարդախութիւնը

5 **1** Իսկ Անանիա անուանով մարդ մը, իր կնոջ՝ Սափիրային հետ ծախեց իր կալուածը **2** եւ արժէքին մէկ մասը պահեց՝ իր կնոջ գիտակցութեամբ, իսկ միւս մասը բերաւ եւ դրաւ առաքեալներուն ոտքին առջեւ: **3** Պետրոս ըսաւ անոր. «Անանիա, ինչո՞ւ սատանան սրտիդ տիրեց, որպէսզի դուն ստես Սուրբ Հոգիին եւ պահես մէկ մասը կալուածին արժէքին: **4** **2**՞ որ ան քեզի կը պատկանէր երբ ձեռքդ էր, եւ երբ վաճառեցիր՝ անոր վաճառքը կրնայիր տրամադրել ուզածիդ պէս. ինչո՞ւ ուրեմն այս որոշումը առիր սրտիդ մէջ: Դուն մարդու չէ որ ստեցիր, այլ Աստուծոյ»: **5** Այս խօսքերը լսելով, Անանիա ինկաւ եւ հոգին աւանդեց: Մեծ վախ ինկաւ անոնց վրայ որ լսեցին դէպքը: **6** Երիտասարդներ ոտքի ելան, ամփոփեցին մարմինը եւ տարին թաղեցին զայն:

7 Երբ մօտաւորապէս երեք ժամ անցաւ, անոր կինը, որ չէր գիտեր պատահածը, ներս մտաւ: **8** Պետրոս հարցուց անոր եւ ըսաւ. «Դուն ըսէ ինծի, այսքա՞ն էր գինը կալուածին զոր ծախեցիք»: Անիկա պատասխանեց՝ այո, այդքան էր: **9** Պետրոս ըսաւ անոր. «Դուք ինչպէ՞ս համաձայնեցաք փորձել Տիրոջ Հոգին: Ահաւասիկ, ոտքերը որ տարին եւ թաղեցին քու ամուսինդ, դրան առջեւն են եւ քեզ ալ պիտի տանին»: **10** Իսկոյն անիկա ինկաւ Պետրոսի ոտքերուն առջեւ եւ հոգին աւանդեց: Երիտասարդները, որ կը մտնէին, գտան զայն մեռեալ եւ տարին թաղեցին իր ամուսինին մօտ: **11** Մեծ երկիւղ ինկաւ ամբողջ Եկեղեցւոյ եւ բոլորին վրայ որ դէպքը կ'իմանային:

Համայնապատկեր Եկեղեցւոյ

12 Առաքեալներու ձեռքով բազմաթիւ նշաններ եւ հրաշքներ

Գլ. 5, 3 – Առաքեալներուն ստեղծագործական ուժովը՝ ստեղծագործելու ուժովը՝ Սուրբ Հոգւոյն, որ լուսաւորած էր զանոնք:

9 – «Տիրոջ Հոգին փորձել», այսինքն փորձի ենթարկել անոր գիտութիւնն ու անոր անսահման արդարութիւնը:

կը գործուէին ժողովուրդին մէջ: Ամէնքը միասիրտ կը մնային Սո-
ղոմոնի սրահին մէջ, **13** եւ ոչ ոք կը համարձակէր անոնց միանալ,
սակայն ժողովուրդը կը յարգէր զանոնք: **14** Հաւատացեալները
օրէ օր աւելի մեծ թիւով կը միանային Տիրոջ, այր մարդոց եւ կի-
ներու բազմութեամբ: **15** Եւ մինչեւ իսկ հրապարակներու վրայ կը
հանէին հիւանդները, կը տեղաւորէին զանոնք մահիճներու կամ
պատգարակներու վրայ, որպէսզի երբ Պետրոս անցնէր, գէթ
անոր շուքը ծածկէր անոնցմէ մէկը: **16** Շրջակայ քաղաքներէն
բազմութիւնը կը հաւաքուէր Երուսաղէմ, հիւանդները կը բերէ-
ին, եւ անոնք որ բռնուած էին պիղծ դեւերէ, ամէնքը կը բուժուէ-
ին:

Ձերբակալութիւն եւ ազատութիւն առաքեալներուն

17 Այն ատեն քահանայապետը, իր բոլոր շուրջիներով եւ Սա-
ղուկեցիներուն աղանդին հետ, կանգնեցաւ, նախանձէ շարժելով.
18 անոնք ձերբակալեցին առաքեալները եւ հրապարակաւ բանտ
դրին զանոնք:

19 Տիրոջ հրեշտակը, սակայն, գիշերը բացաւ բանտին դռները,
դուրս հանեց զանոնք եւ ըսաւ անոնց. **20** «Գացէք եւ տաճարին մէջ
ամենայն համարձակութեամբ աւետեցէ՛ք ժողովուրդին այս
Կեանքին բոլոր պատգամները»: **21** Անոնք, երբ լսեցին, առաւօտ
կանուխ մտան տաճար եւ սկսան ուսուցանել:

Առաքեալները Ատեանին առջեւ

Եկաւ քահանայապետը եւ անոնք որ իր հետն էին: Նիստի կան-
չեցին Ատեանը եւ ամբողջ ծերակոյտը իսրայելի որդիներուն եւ
մարդ դրկեցին բանտ, որպէսզի բերեն առաքեալները: **22** Սպասա-
ւորները, երբ եկան, չգտան զանոնք բանտին մէջ, վերադարձան

11 – «Եկեղեցի» բառը առաջին անգամն է որ կը գործածուի Գործք Առաքե-
լոցի մէջ «Հաւատացեալներու ժողովը» իմաստով:

18 – Առաքեալներու նիստիւնը եւ ժողովուրդին առջեւ անոնց վայելած վարկն
ու համբաւը՝ նախանձը գրգռած էր ժողովուրդի փառասէր առաջնորդներուն:

եւ պատմեցին. **23** «Գտանք բանտը՝ փակուած ամենայն զգուշու-
թեամբ եւ պահապանները որ կը հսկէին դրան առջեւ, **24** բայց ներ-
սը մարդ չգտանք»: Երբ այս լուրը իմացան, տաճարին կառավա-
րիչը եւ քահանայապետը զարմացան անոնց պատահածին մասին
եւ իրարու կը հարցնէին թէ ի՞նչ կընար նշանակել ասիկա: **25** Այն
ատեն մէկը եկաւ եւ պատմեց անոնց թէ՝ մարդիկը զորս դուք
բանտ դրիք, տաճարն են եւ կ'ուսուցանեն ժողովուրդին:

26 Կառավարիչը զնաց իր մարդոց հետ եւ բերաւ առաքեալնե-
րը, սակայն ոչ բռնութեամբ, որովհետեւ կը վախնային քարկոծու-
մի ենթարկուելէ բազմութեան կողմէ: **27** Բերին զանոնք, հանեցին
Ատեանին առջեւ, եւ քահանայապետը հարցուց անոնց. **28** «Մենք
խիստ կերպով չպատուիրեցի՞նք ձեզի որ չուսուցանէք այդ անու-
նով. ահաւասիկ դուք լեցուցիք Երուսաղէմը ձեր վարդապետու-
թեամբ եւ կ'ուզէք այդ մարդուն արիւնը մեր գլխուն վրայ բերել»:
29 Պետրոս եւ առաքեալները պատասխանեցին անոնց եւ ըսին.
«Պէտք է աւելի Աստուծոյ հնազանդիլ քան մարդոց: **30** Մեր հայ-
րերուն Աստուածը յարոյց այն Յիսուսը զոր դուք սպաննեցիք՝
կախելով զինք խաչէն: **31** Աստուած սակայն իր աջով փառաւորեց
զինքը իբրեւ առաջնորդ եւ փրկիչ, որպէսզի անով ապաշխարու-
թիւն եւ մեղքերու թողութիւն տայ Իսրայելի: **32** Եւ մենք վկա-
ներն ենք այս դէպքերուն, մենք եւ Սուրբ Հոգին, զոր Աստուած
տուաւ անոնց որ իրեն կը հնազանդին»: **33** Երբ ասիկա լսեցին,
անոնք կը զայրանային եւ կը խորհէին սպաննել զանոնք:

Գամաղիելի միջամտութիւնը

34 Այն ատեն Գամաղիէլ անունով մէկը, փարիսեցի, օրէնսու-
սոյց եւ յարգուած բոլոր ժողովուրդէն, Ատեանին մէջ ոտքի ելաւ.
հրամայեց, որ վայրկեանի մը համար առաքեալները դուրս հանեն:

28 – Պիղատոսի առջեւ երբեմն իրենց յարուցած՝ «Ատոր արիւնը մե՛ր եւ մեր
որդիներուն վրայ թող ըլլայ» (Մտթ. 27, 25) բարձրագոյ աղաղակը կը հնչէ քա-
հանայապետի ականջներուն:

31 – Յոյն ձեռագիրներէն ումանց մէջ կը կարդանք՝ «Աստուած իր աջակող-
մը բարձրացուց զայն»:

35 Ապա ըսաւ Ատեանի մարդոց. «Իսրայէլացիներ, զգոյշ եղէք թէ՛ ինչ պիտի ընէք այս մարդոց հանդէպ: **36** Այս օրերէն առաջ յայտնուեցաւ Թեւտա, որ ինքզինքը մէկը կը կարծէր, չուրջը հաւաքեց թիւով չորս հարիւր մարդիկ, ինք սպաննուեցաւ եւ ամէնքը որ անոր միացեր էին, ցրուեցան եւ անոնցմէ ոչինչ մնաց: **37** Անկէ ետք, մարդահամարի օրերուն, յայտնուեցաւ Յուդա Գալիլացին, որ իր ետեւէն շատ մարդիկ ոտքի հանեց, ինքը անհետացաւ եւ ամէնքը որ անոր կը հետեւէին, ցրուեցան: **38** Հիմա ուրեմն, ես կ'ըսեմ ձեզի, դուք հեռու մնացէք այս մարդոցմէ եւ թողուցէք զանոնք, որովհետեւ, եթէ ասոնց խօսքը եւ գործը մարդոցմէ են, չուտով կը քանդուին: **39** Բայց եթէ Աստուծմէ են, դուք չէք կրնար քանդել զանոնք եւ թերեւս ալ աստուածամարտ ըլլաք»: Ամէնքը հաւանեցան անոր կարծիքին:

40 Կանչեցին առաքեալները, գաւազանով ծածեցին զանոնք, եւ պատուիրեցին այլեւս չխօսիլ Յիսուսի անունով, եւ արձակեցին զանոնք: **41** Անոնք մեկնեցան Ատեանէն բոլորովին ուրախ, որովհետեւ արժանի համարուեցան նախատինքի՝ Անունին համար: **42** Եւ ամէն օր, տաճարին կամ տուներուն մէջ անդադար կ'ուսուցանէին եւ կ'աւետարանէին Յիսուս Քրիստոսը:

Սարկաւագներուն ընտրութիւնը

6 **1** Այդ օրերուն, մինչ կը բազմանար թիւը աշակերտներուն, Հելլէնականներուն կողմէ գանգատներ եղան Եբրայեցիներուն դէմ, որովհետեւ անոնց այրիները կ'անտեսուէին առօրեայ ծառայութեան մէջ: **2** Տասներկուքը հաւաքեցին աշակերտներու բազմութիւնը եւ ըսին անոնց. «Պատշաճ չէ որ մենք թողունք Աստուծոյ Խօսքը եւ սեղանին ծառայենք: **3** Եղբայրներ, ընտրեցէք ձեր մէջէն եօթը մարդիկ՝ վարքով բարի, լեցուած Հոգիով եւ իմաստութեամբ. մենք կը կարգենք զանոնք այս ծառայութեան համար. **4** իսկ մենք, կը մնանք հաւատարիմ աղօթքին եւ

խօսքին ծառայութեան»։ **5** Առաջարկը հաճելի թուեցաւ ամբողջ հասարակութեան եւ ընտրեցին Ստեփանոսը, որ լի էր Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ, Փիլիպպոսը եւ Պրոքորոսը, Նիկանովրան, Տիմոնը, Պարմենասը եւ Նիկողայոսը, որ Անտիոքացի աշակերտ էր։

6 Ներկայացուցին զանոնք առաքեալներուն, որոնք աղօթէին ետք ձեռք դրին անոնց վրայ։ **7** Աստուծոյ խօսքը կ'աճէր եւ աշակերտներու թիւը շատ կը բազմանար Երուսաղէմի մէջ, եւ քահանաներուն բազմութիւնը հաւատքին կը հետեւէր։

Ստեփանոսի ձերբակալութիւնը

8 Ստեփանոս, շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ, մեծ հրաշքներ եւ նշաններ կը գործէր ժողովուրդին մէջ։ **9** Այն ատեն միջամտեցին մարդիկ՝ Ազատագրեալներու ժողովարանէն, Կիւրենացիներ, Աղեքսանդրացիներ եւ ուրիշներ, որ եկած էին Կիլիկիայէն եւ Ասիայէն։ Անոնք սկսան վիճիլ Ստեփանոսի հետ, **10** սակայն անկարող էին դէմ դնել իմաստութեան եւ Հոգիին որով ան կը խօսէր։ **11** Այն ատեն կաշառեցին մարդիկ, որպէսզի ըսէին. «Մենք լսեցինք զինքը, որ հայհոյութեան խօսքեր կ'ըսէր Մովսէսի եւ Աստուծոյ դէմ»։ **12** Անոնք խռովեցին ժողովուրդը, երեցները եւ դպիրները, յանկարծակի նետուելով անոր վրայ՝ յափշտակեցին զայն եւ տարին Ատեանին առջեւ. **13** եւ սուտ վկաներ հանեցին մէջտեղ, որ կ'ըսէին. «Այս մարդը անդադար հայհոյութեան խօսքեր կ'ըսէ սուրբ տեղւոյն եւ Օրէնքին դէմ։ **14** Մենք լսեցինք զինքը որ կ'ըսէր. Յիսուս Նազովրեցին պիտի կործանէ այս սրբավայրը եւ պիտի փոխէ օրէնքները զորս Մովսէս տուաւ մեզի»։ **15** Այն ամէնքը որ կը բազմէին Ատեան, իրենց աչքերը կը սեւեռէին Ստեփանոսի վրայ. եւ անոր դէմքը անոնց կ'երեւէր հրեշտակի դէմքին նման։

9 – Ազատագրուածները, իբր պատերազմական գերիներ, Հռոմ տարուած այն Հրեաներն էին, որոնք յետոյ ազատ արձակուելով գերութեանէ, անոնց մէկ մասը Երուսաղէմ վերադարձած ու հոն իրեն սեփական ժողովրդանոց մը շինած էր։

Ստեփանոսի գառը

7 **1** Քահանայապետը հարցուց անոր՝ թէ իրապէս այդ այդպէս¹ է: **2** Անիկա պատասխանեց. «Եղբայրներ՝ եւ հայրեր, մտիկ ըրէք ինծի: Փառքի Աստուածը երեւեցաւ մեր հօր՝ Աբրահամին, երբ տակաւին Միջագետք էր, Խարանի երկիրը հաստատուէին առաջ. եւ ըսաւ անոր. **3** Թո՛ղ բու երկիրդ եւ ազգատոհմդ եւ գնա՛ դէպի այն երկիրը գոր ես ցոյց պիտի տամ՝ քեզի: **4** Այն ատեն, անիկա թողուց Քաղդէացիներուն երկիրը եւ հաստատուեցաւ Խորան: Անկէ, անոր հօր մահէն ետք, Աստուած փոխադրեց զայն եւ բնակեցուց այն երկրին մէջ ուր այժմ դուք կը բնակիք: **5** Այս երկրին մէջ սակայն, չտուաւ անոր ոչ մէկ սեփականութիւն եւ ոչ իսկ ոտք դնելիք տեղ մը, սակայն խոստացաւ անոր սեփականութիւնը տալ իրեն եւ իրմէ ետք իր սերունդին, թէպէտ տակաւին զաւակ չունէր: **6** Եւ Աստուած յայտնեց անոր, թէ անոր սերունդը պանդուխտ պիտի ըլլայ օտար երկրին մէջ, ծառայ պիտի դառնայ եւ պիտի չարչարուի չորս հարիւր տարի:

7 Բայց Աստուած ըսաւ. ազգը որ ծառայ պիտի դարձնէ զանոնք, ես պիտի դատեմ զայն: Անկէ ետք, անոնք պիտի երթան եւ պաշտամունք պիտի ընծայեն ինծի այս վայրին մէջ: **8** Յետոյ տուաւ անոր Ուխտը եւ թլփատութիւնը, եւ ապա, երբ ծնաւ Իսահակը, Աբրահամ թլփատեց զայն ութերորդ օրը: Եւ Իսահակ ծնաւ Յակոբը եւ Յակոբ՝ տասներկու նահապետները:

9 «Նահապետները նախանձեցան Յովսէփին, եւ վաճառեցին զինքն որպէս գիւղացի Եգիպտոս տարուի: Բայց Աստուած անոր հետ էր. **10** եւ ազատեց զինքը անոր բոլոր նեղութիւններէն եւ տուաւ անոր շնորհք եւ իմաստութիւն՝ Փարաւոնին, Եգիպտացիներու թագաւո-

Գլ. 7, 2 – Ստեփանոս ծայրագոյն կ'ընէ Իսրայէլի ամբողջ պատմութիւնը, սկսելով նահապետներու ժամանակէն մինչեւ ներկայ ժամանակը: Ճարտարաբան լեզուով ան կը պատկերացնէ թէ ինչպէս Աստուած հրաշալի ու սիրալիր կերպով առաջնորդեց իր ժողովուրդին, եւ սակայն ի՛նչպէս այս վերջինը իր Տիրոջ այդքան սիրոյն համդէպ ապերախտ գտնուեցաւ, եւ ի վերջոյ մինչեւ իսկ աստուածասպան ալ եղաւ:

ըին առջեւ, որ զայն կարգեց Եգիպտոսի եւ իր տան տնտես: **11** Այն օրերուն մեծ սով եւ անձկութիւն տիրեցին Եգիպտոսի եւ Քանանի մէջ, եւ մեր հայրերը կերակուր չէին գտներ:

12 Իմանալով թէ Եգիպտոսի մէջ ուտելիք կը գտնուէ, Յակոբ առաջին անգամ հոն ղրկեց մեր հայրերը: **13** Երկրորդ անգամին, Յովսէփ ինքզինքը յայտնեց իր եղբայրներուն, եւ անոր ծագումը յայտնի եղաւ Փարաւոնին: **14** Յովսէփ մարդ ղրկեց եւ կանչեց իր հայրը, Յակոբը, եւ բոլոր ազգատոհմը, որ կը հաշուէր եօթանասուն հինգ հոգի: **15** Յակոբ իջաւ Եգիպտոս, ուր վախճանեցաւ ինքը եւ մեր հայրերը: **16** Անոնց մարմինը փոխադրուեցաւ Սիւքէմ եւ դրուեցաւ այն գերեզմանին մէջ, զոր Աբրահամ դրամով գնած էր Եմովրայի որդիներէն՝ Սիւքէմի մէջ:

17 Մինչ կը մօտենար ժամանակը, երբ պիտի կատարուէր խոստումը զոր Աստուած տուած էր Աբրահամին, ժողովուրդը աճեցաւ եւ բազմացաւ Եգիպտոսի մէջ, **18** մինչեւ որ իշխանութեան եկաւ ուրիշ թագաւոր մը, որ Յովսէփը չէր ճանչնար: **19** Նենգութիւն խորհեցաւ մեր ազգին դէմ, չարչարեց մեր հայրերը եւ մինչեւ իսկ հրամայեց որ նորածինները դուրսերը լքուին, որպէսզի չկարենան ապրիլ: **20** Այն ժամանակ ծնաւ Մովսէս, որ կայտառ էր Աստուծոյ առջեւ: **21** Ան, մինչեւ երեք ամիս սնաւ իր հօր տան մէջ, յետոյ, երբ լքեցին զինքը, Փարաւոնին աղջիկը առաւ զայն եւ սնոյց իբրեւ իր որդեգիրը: **22** Այսպէս, Մովսէս դաստիարակուեցաւ Եգիպտացիներուն իմաստութեամբ, եւ հօգի էր խօսքով եւ գործով:

23 «Երբ լրացուց քառասնամեայ տարիքը, միտքն ինկաւ այցելել իր եղբայրներուն, Իսրայելի որդիներուն: **24** Տեսնելով մէկու մը անիրաւուած ըլլալը, զայրացաւ, անիրաւուածին վրէժը ուզեց լուծել եւ սպաննեց Եգիպտացին: **25** Ան կը խորհէր թէ իր եղբայրները պիտի հասկնային՝ թէ Աստուած իր ձեռքով փրկութիւն պիտի բերէր անոնց. սակայն անոնք չհասկացան:

26 Յաջորդ օրը, ան տեսաւ զանոնք՝ որ կը կռուէին իրարու դէմ, եւ յորդորեց զանոնք որ հաշտուին: Բարեկամներ, ըսաւ անոնց, դուք եղբայրներ էք, ինչո՞ւ զիրար կը զրկէք: **27** Այն ատեն,

ան որ իր ընկերը կը զրկէր, մերժեց զինքը եւ ըսաւ անոր. «Ո՞վ դրաւ քեզ իշխան եւ դատաւոր մեր վրայ: **28** Արդեօք պիտի ուզէ՝ իր սպաննե՞լ զիս, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին»: **29** Այս խօսքերուն վրայ, Մովսէս փախաւ եւ գաղթեց Մադիամի երկիրը, ուր երկու զաւակներ ունեցաւ:

30 «Երբ քառասուն տարեկան եղաւ, Տիրոջ հրեշտակը երեւեցաւ անոր Սինա լեռան անապատին հրակէզ մորենիին մէջ: **31** Այս տեսիլին դիմաց Մովսէս զարմացաւ: Մինչ կը մօտենար, որպէսզի աւելի լաւ տեսնէր, լսեց Տիրոջ ձայնը որ կ'ըսէր. **32** «Ես եմ Աստուածը քու հայրերուդ, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը: Սարսափած, Մովսէս չէր համարձակեր նայիլ: **33** Այն ատեն Տէրը ըսաւ անոր. «Հանէ՛ կօշիկներդ ոտքերէդ, որովհետեւ վայրը ուր կանգնած ես, սուրբ երկիր է: **34** Ես տեսայ իմ ժողովուրդիս չարանքը Եգիպտոսի մէջ, լսեցի անոր հեծեծանքը եւ իջայ, որպէսզի ազատեմ զայն. եկուր ուրեմն, որպէսզի քեզ Եգիպտոս զրկեմ»:

35 «Այս Մովսէսը, զոր ուրացեր էին, ըսելով՝ ո՞վ դրաւ քեզ իշխան եւ դատաւոր, ահաւասիկ Աստուած կը զրկէր զայն անոնց՝ իբրեւ պետ եւ փրկիչ, հրեշտակին միջոցաւ որ անոր երեւեցաւ մորենիին մէջ: **36** Ի՛նքն է որ հանեց զանոնք եւ գործեց նշաններ ու հրաշքներ Եգիպտոսի մէջ, կարմիր ծովուն վրայ եւ անապատին մէջ, քառասուն տարի: **37** Այս Մովսէսն է որ ըսաւ Իսրայելի որդիներուն. «Աստուած ձեր եղբայրներուն մէջէն պիտի յարուցանէ մարգարէ մը ինծի նման, մտի՛կ ըրէ՛ք անոր»: **38** Ի՛նքն է որ, համախմբումի մը ժամանակ անապատին մէջ, հրեշտակին հետ էր որ կը խօսէր անոր Սինա լեռան վրայ եւ միաժամանակ մեր հայրերուն հետ էր: Ի՛նքն է որ ընդունեցաւ կեանքի խօսքերը, որպէսզի փոխանցէ զանոնք մեզի: **39** Ահաւասիկ այս մարդն է որուն մեր հայրերը չուզեցին հնազանդիլ, մերժեցին զինք եւ սրտով վերադարձան Եգիպտոս. **40** եւ ըսին Ահարոնի. «Աստուածներ շինէ մեզի՝ որ մեր առջեւէն փախն, որովհետեւ այն Մովսէսը որ հանեց մեզ

35 – Հրեշտակ. Աստուած ինքնին (հմտ. 31, 33 համարները):

37 – Մարգարէ մը, ակնարկութիւն՝ Մեսիային:

Եգիպտոսէն, չեմք գիտեր թէ ինչ եղաւ»։ **41** Եւ հորթ մը շինեցին այդ օրերուն, կռուքերուն զոհէր մատուցին եւ կ'ուրախանային իրենց ձեռքին գործով։ **42** Այն ատեն Աստուած հեռացաւ անոնցմէ եւ մատնեց զանոնք երկնային զօրութիւններուն պաշտամունքին, ինչպէս որ գրուած է մարգարէներուն գիրքին մէջ։

43 Արդեօք գոհեր եւ ընծանե՞ր մատուցի՜ք ինձի
 քառասուն տարիներ անապատին մէջ,
 Իսրայելի՛ տուն։
 Դուք կրեցիք Մոլոքի վրանը
 եւ Հոեմփայի աստուծոյն աստղը,
 պատկերները գորս շինեցիք,
 որպէսզի պաշտէիք զանոնք։
 ասոր համար ես պիտի տարագրեմ ձեզ
 Բաբելոնէն անդին։

44 Անապատին մէջ մեր հայրերը ունէին Վկայութեան Վրանը,
 ինչպէս որ տնօրինած էր Ան, որ կը խօսէր Մովսէսին, պատուիրե-
 լով անոր որ շինէ զայն տիպարին համաձայն զոր տեսած էր։
45 Մեր հայրերը ընդունեցան զայն եւ Յեսուի առաջնորդութեամբ
 բերին այն երկիրը զոր գրաւեցին ազգերէն՝ զորս Աստուած վտա-
 րեց անոնց առջեւէն, եւ այսպէս եղաւ մինչեւ Դաւիթի օրերը։
46 Ասիկա արժանացաւ Աստուծոյ հաճութեան եւ հայցեց չնորհ-
 քը՝ բնակարան մը գտնելու Յակոբի Աստուծոյն։ **47** Սողոմոնն էր
 որ կառոյց անոր տունը։

48 Բարձրեալը, սակայն, չի բնակիր մարդու ձեռքով շինուած
 բնակարաններուն մէջ, ինչպէս որ կ'ըսէ մարգարէն։

49 Երկինքը իմ աթոռս է,
 եւ երկիրը՝ պատուանդանը իմ ոտքերուս։

42 – Երկինքի զօրութիւնները՝ արեւը, լուսինն ու աստղերը։

43 – Մոլոքի վրանը, պատիկ վրան մը, որուն մէջ կը գտնուէր Ամմոնացի-
 ներու երկինքի կամ արեւու աստուած՝ Մոլոքի պատկերը։ Հոեմփա աստուածը
 Զրուանն (Saturnus) է։ Իսրայէլացիները ատեն մը այն աստուածներուն պաշ-
 տօն մատուցած էին։

Դուք ի՞նչ տուեց պիտի կառուցանեմ ինձի, կ'ըսէ Տէրը, եւ ի՞նչ պիտի ըլլայ իմ համագիստիս վայրը:

50 Իմ ձեռքս չէ՞, որ կը ստեղծէ այս ամէնը:

51 *Խստապարանոց, ականջներով եւ սրտով անթլփատ մարդիկ, դուք միշտ կը հակառակիք Սուրբ Հոգիին: Այսպէս եղան ձեր հայրերը, այսպէս էք նաեւ դուք:* **52** *Մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին ձեր հայրերը: Սպաննեցին անոնք որ կանխաւ կը գուշակէին Արդարին գալուստը, 53 նոյնինքն Անիկա՝ զոր դուք հիմա մատնեցիք եւ սպաննեցիք, դուք որ Օրէնքը ընդունեցաք հրեշտակներուն սպասարկութեամբ, սակայն չպահեցիք զայն»:* **54** *Այս խօսքերուն վրայ, անոնց սրտերը զայրոյթով լեցուեցան եւ իրենց ակռաները կը կրճատէին Ստեփանոսին դէմ:*

Ստեփանոսի քարկոծումը

55 *Ստեփանոս, լի Սուրբ Հոգիով՝ հայեցաւ դէպի երկինք, տեսաւ Աստուծոյ փառքը եւ Յիսուսը՝ կանգնած Աստուծոյ աջին.* **56** *եւ ըսաւ. «Ահաւասիկ, կը տեսնեմ երկինքը բացուած եւ մարդու Որդին կանգնած Աստուծոյ աջին»:* **57** *Անոնք սակայն, բարձր ճիշեր արձակեցին, խցեցին իրենց ականջները եւ միասին խուժեցին անոր վրայ, հանեցին քաղաքէն դուրս եւ սկսան քարկոծել զայն:* **58** *Վկաները իրենց զգեստները դրած էին երիտասարդի մը ոտքերուն առջեւ, որ կը կոչուէր Սաւուղ:* **59** *Եւ մինչ կը քարկոծէին զինք, Ստեփանոս այսպէս կ'աղօթէր. «Տէ՛ր Յիսուս, ընդունէ իմ հոգիս»:* **60** *Ապա ծունկի եկաւ եւ բարձր ձայնով աղաղակեց. «Տէ՛ր, մեղք մի համարիր անոնց ասիկա»:* *Եւ այս խօսքերը ըսելով, ան ննջեց:*

51 – «Սրտով ու ականջով անթլփատները» կը նշանակէ եբրայական լեզուի բացատրութեամբ, նշմարտապէս գիտցածին ու խղիւժի ձայնին հակառակը խորհիլ, խօսիլ ու գործել:

53 – «Ի յարգանս հրեշտակներու», այսինքն՝ Օրէնքը ձեռքի բերող եւ ձեռք վրայ պարտք դնող հրեշտակներու նշխարական սիրոյն: Եբրայական աւանդութեան մը համաձայն, հրեշտակներն են որ Օրէնքը բերած ու տուած կ'ըլլան Մովսէսին:

Հալածանք Եկեղեցւոյ դէմ

8 Եւ Սաւուղ կամակից էր անոր սպաննութեան:

1 Այդ օրերուն բուռն հալածանք եղաւ Եկեղեցւոյ դէմ Երուսաղէմի մէջ: Ամէնքը, բացի առաքեալներէն, ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիոյ գիւղերուն մէջ:

2 Սակայն աստուածապաշտ մարդիկ թաղեցին Ստեփանոսը եւ անոր վրայ մեծ ողբ ըրին: **3** Իսկ Սաւուղ մեծ վնասներ կը պատճառէր Եկեղեցւոյ, տունէ տուն կը մտնէր, այլ մարդիկ ու կիներ դուրս կը քաշէր եւ բանտ կը նետէր:

Փիլիպպոս Սամարիոյ մէջ

4 Անոնք որ ցրուեցան, կը շրջէին եւ կ'աւետարանէին Խօսքը: **5** Իսկ Փիլիպպոս իջաւ Սամարացիներուն մէկ քաղաքը եւ կը քարոզէր Յիսուս Քրիստոսը: **6** Բազմութիւնները միասին կ'ունկնդրէին անոր խօսքերը, որովհետեւ ամէնքը կը լսէին նշաններուն մասին զորս կը գործէր կամ կը տեսնէին զանոնք: **7** Արդարեւ, պիղծ ոգիները կ'ելլէին շատ մը դիւահարներէ, մեծ աղաղակներ արձակելով: **8** Բազմութիւն անդամալոյծներ եւ կաղեր բուժուեցան, եւ այն քաղաքին մէջ մեծ էր ուրախութիւնը:

Սիմոն մոզք

9 Այդ քաղաքին մէջ նախապէս կար մարդ մը, որ կը կոչուէր Սիմոն. ան կը մոգէր եւ հիացումի կը մատնէր Սամարիոյ ժողովուրդը: Ինք իր մասին կ'ըսէր թէ՝ մեծ մէկն է, **10** եւ ամէնքը, ամէնէն փոքրէն մինչեւ ամէնէն մեծը, կը կապուէին անոր եւ կ'ըսէին. «Ասիկա Աստուծոյ զօրութիւնն է, որ կը կոչուի Մեծ»: **11** Անոնք կը կապուէին Սիմոնի, որովհետեւ երկար ժամանակ է ի վեր ան կը հիացնէր զանոնք իր մոգութիւններով: **12** Բայց, երբ հաւատացին Փիլիպպոսին, որ կ'աւետարանէր անոնց Աստուծոյ Արքայութիւնը

Գլ. 8, 5 – Ո՛չ թէ առաքեալը՝ այլ 6, 5-ի մէջ յիշատակուած Փիլիպպոս սարկաւազը:

եւ Յիսուս Քրիստոսի անունը, այլ մարդիկ եւ կիներ մկրտուեցան: **13** Սիմոն ինքն ալ հատաւաց եւ մկրտուեցաւ եւ անկէ ետք Փիլիպպոսէն չէր բաժնուեր եւ հիացումի մէջ էր, երբ կը տեսնէր նշանները եւ մեծ հրաշքները, որ կը կատարուէին իր աչքերուն առջեւ:

14 Առաքեալները, որ Երուսաղէմ մնացեր էին, երբ իմացան թէ, Սամարիոյ մէջ ընդուներ են Աստուծոյ խօսքը, անոնց ղրկեցին Պետրոսն ու Յովհաննէսը: **15** Ասոնք իջան Սամարացիներուն մօտ, աղօթեցին անոնց վրայ, որպէսզի անոնք Սուրբ Հոգին ընդունին: **16** Որովհետեւ մինչեւ այդ օրը ոչ մէկուն վրայ իջած էր. անոնք միայն մկրտուեր էին Տէր Յիսուսի անունով: **17** Այն ատեն իրենց ձեռքերը դրին անոնց վրայ, եւ անոնք ընդունեցան Սուրբ Հոգին:

18 Սիմոն, երբ տեսաւ թէ Սուրբ Հոգին կը տրուէր առաքեալներուն կողմէ ձեռքի դրութեամբ, դրամ առաջարկեց անոնց եւ ըսաւ. **19** «Ինծի ալ տուէ՛ք այդ իշխանութիւնը, որպէսզի ան, որուն վրայ ես ձեռքերս դնեմ, Սուրբ Հոգին ընդունի»: **20** Պետրոս ըսաւ անոր. «Թող կորսուի՛ քու դրամդ եւ դուն ալ անոր հետ, որովհետեւ դուն կարծեցիր թէ դրամով պիտի գնես Աստուծոյ պարգեւը: **21** Այս գործին մէջ դուն չունիս ո՛չ բաժին ո՛չ ժառանգութիւն, որովհետեւ քու սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առջեւ: **22** Չղջա՛ ուստի քու չար գործիդ վրայ եւ աղաչէ Տիրոջ, թերեւս ներում տրուի քու այդ նենգ մտածումներուդ. **23** որովհետեւ ես կը տեսնեմ քեզ մաղձի դառնութեան եւ անիրաւութեան կնճիռներուն մէջ: **24** Սիմոն պատասխանեց եւ ըսաւ. «Աղաչեցե՛ք Տիրոջ ինծի համար որպէսզի վրաս ոչինչ չգայ այն ամէն բաներէն զորս դուք խօսեցաք»:

15 – Փիլիպպոս, իբր սարկաւագ՝ իշխանութիւն չունէր մկրտուածին տալու դրոշմի խորհուրդը. այդ իշխանութիւնն ունէին միայն առաքեալները:

19 – Այս Սիմոնի անունէն է որ սուրբ իրերը դրամով ծախելու եւ գնելու ձեռնարկը «սիմոնակաւութիւն» կոչուեցաւ:

20 – Պետրոսի այս խօսքին նպատակը ըսել չէ՝ Սիմոնի յաւիտեանական կոթուսը, այլ յորդոր մըն է ան՝ գոջումի բերելու զինք:

25 Առաքեալները, իրենց վկայութիւնը տալով, աւետեցին Աստուծոյ *Խօսքը* եւ վերադարձան Երուսաղէմ՝ աւետարանելով Սամարացիներու շատ մը գիւղերը:

Փիլիպպոս կը մկրտէ ներքինին

26 Տիրոջ հրեշտակը խօսեցաւ Փիլիպպոսի հետ եւ ըսաւ անոր. «Եւ եւ զնա դէպի հարաւ, այն ճանապարհով որ կը տանի Երուսաղէմէն դէպի Գազա, եւ որ ամայի է»: **27** Փիլիպպոս մեկնեցաւ եւ զնաց. եւ ահա եթովպացի մարդ մը, ներքինի, որ պաշտօնեայ էր Կանդակին, Եւթովպիոյ հզօր թագուհիին, եւ պատասխանատու անոր բոլոր գանձերուն, Երուսաղէմ եկած էր ուխտի. **28** ան կը վերադառնար, կառքին մէջ նստած, եւ կը կարդար Եսայի մարգարէն: **29** Հոգին ըսաւ Փիլիպպոսին. «Յառաջացիր եւ հասիր կառքին»: **30** Փիլիպպոս, աճապարելով, լսեց որ ներքինին կը կարդար Եսայի մարգարէն: Հարցուց անոր. «Կը հասկնա՞ս ինչ որ կը կարդաս»: **31** Անիկա պատասխանեց. «Ինչպէ՞ս պիտի հասկնամ, եթէ մէկը չառաջնորդէ ինծի»: Եւ հրաւիրեց Փիլիպպոսը որ ելլէ եւ նստի իրեն մօտ: **32** Գիրքին անցքը զոր կը կարդար, հետեւեալն էր.

Գառնուկի նման որ կը տարուի դէպի սպանդ,

ինչպէս ոչխարին ձագը անմոռնչ, զոր կը խուզեն, այսպէս ալ ան քերանը չի բանար:

33 Երբ ան ինքզինքն խոնարհեցուց,

արդարութիւնը մերժուեցաւ անոր:

Անոր ազգատոհմին մասին ո՞վ պիտի պատմէ, որովհետեւ անոր կեանքը խլուեցաւ երկրէն:

34 *Խօսքը Փիլիպպոսին ուղղելով՝ ներքինին ըսաւ անոր. «Կ'աղաչեմ, մարգարէն որո՞ւն մասին կ'ըսէ ասիկա: Ինքիրե՞ն թէ*

27 – «Կանդակա» անունը Եթովպիոյ Թագուհիներուն պատուոյ տիտղոսն է, ինչպէս էր «Փարաուն»՝ Եգիպտոսի Թագաւորներունը:

33 – Սուրբ Գիրքի այս հատուածին մէջ Եսայի մարգարէն կանխաւ կը պատմէ Մեսիայի կրկիւմ չարչարանքն ու անոր փրկարար մահը:

ուրիշի մասին»։ **35** Այն ատեն Փիլիպպոս խօսք առաւ եւ Գիրքին այս անցքէն մեկնելով՝ անոր աւետարանեց Յիսուս Քրիստոսը։

36 Ճամբան շարունակելով, հասան ջուրի մը եզերքը. եւ ներքինին ըսաւ անոր. «Ահաւասիկ ջուրը, ի՞նչ արգելք կայ որ ես մկրտուիմ»։ **37** Փիլիպպոս ըսաւ անոր. «Կարելի է՝ եթէ դուն կը հաւատաս ամբողջ սրտովդ»։ Ներքինին պատասխանեց եւ ըսաւ անոր. «Կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է»։

38 Եւ հրամայեց որ կառքը կեցնեն։ Երկուքն ալ, Փիլիպպոս եւ ներքինին, իջան ջուրին մէջ, եւ ան մկրտեց զինքը։ **39** Եւ երբ ջուրէն դուրս ելան, Սուրբ Հոգին եկաւ ներքինին վրայ, եւ Տիրոջ հրեշտակը յափշտակեց Փիլիպպոսը, եւ ներքինին չտեսաւ այլեւս զինքը, բայց ուրախութեամբ շարունակեց իր ճամբան։ **40** Իսկ Փիլիպպոս ինքզինք գտաւ Ազովտոս, շարունակեց իր ճամբան բոլոր քաղաքներուն մէջ կը քարոզէր Աւետարանը, մինչեւ որ հասաւ Կեսարիա։

Սաւուղին դարձը

9 **1** Իսկ Սաւուղ, որ տակաւին սպառնալիք եւ մահ կը չնչէր Տիրոջ աշակերտներուն դէմ, ներկայացաւ քահանայապետին եւ անկէ նամակներ խնդրեց Դամասկոսի ժողովարաններուն համար, **2** որպէսզի, եթէ հոն գտնէ Ճանապարհին հետեւողներ, այր թէ կին, չղթայակապ Երուսաղէմ տանի զանոնք։

3 Երբ ճամբու վրայ էր եւ մօտեցած էր Դամասկոսի, յանկարծ երկինքէն եկող լոյս մը, փայլակի նման, շրջապատեց զինքը։ **4** Գետին ինկաւ եւ լսեց ձայն մը որ կ'ըսէր անոր. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հալածես զիս»։ **5** Ան հարցուց. «Ո՞վ ես դուն, Տէր»։ Զայնը պատասխանեց. «Ես եմ Յիսուսը, զոր դուն կը հալածես»։ **6** Բայց կանգնէ՛ դուն, մտի՛ր քաղաք եւ հոն պիտի ըսեն քեզի ինչ որ պէտք

է ընես»։ **7** Իսկ մարդիկը որ հետն էին, կը մնային անշուշտ, միայն ձայնը կը լսէին, բայց ոչինչ կը տեսնէին։ **8** Սաւուղ կանգնեցաւ գետնէն, թէպէտ աչքերը բաց էին, սակայն բան չէր տեսնէր․ անոր ձեռքը բռնելով՝ քաղաք մտցուցին։ **9** Երեք օրեր շարունակ ան չէր տեսներ․ եւ ո՛չ կերաւ ո՛չ խմեց։

10 Դամասկոսի մէջ աշակերտ մը կար Անանիա անունով։ Տեւսիքի մէջ, Տէրը ըսաւ անոր․ «Անանիա»։ Անանիա պատասխանեց․ «Ահաւասիկ եմ, Տէ՛ր»։ **11** Տէրը ըսաւ անոր․ «Կանգնէ՛ եւ գնա՛ այն փողոցը որ կը կոչուի Ուղիղ, եւ Յուդայի տունը մտնելով, հարցուց Սաւուղ անունով Տարսոնացիի մը մասին։ Ան ահաւասիկ կ'աղօթէ, **12** եւ տեսաւ Անանիա անունով մարդ մը, որ կը մտնէ եւ ձեռքը վրան կը դնէ, որպէսզի տեսողութիւնը տայ անոր»։ **13** Անանիա պատասխանեց․ «Տէր, չատերէն լսեցի այն մարդուն մասին՝ թէ ո՛րքան չարիք հասցուցած է քու սուրբերուդ․ Երուսաղէմի մէջ։ **14** Հոս եկած է, քահանայապետէն տրուած իշխանութեամբ՝ որպէսզի ձերբակալէ ամէն անոնք որ քու անունդ կը կանչեն»։ **15** Տէրը ըսաւ անոր․ «Դուն գնա՛, որովհետեւ անիկա ինծի համար ընտրեալ անօթն է որ անունս պիտի տանի հեթանոս ազգերուն, թագաւորներուն եւ Իսրայէլի որդիներուն առջեւ։ **16** Որովհետեւ ես ցոյց պիտի տամ անոր՝ թէ ան ո՛րքան պիտի չարչարուի իմ անունիս համար»։ **17** Այն ատեն Անանիա գնաց, մտաւ տունը, ձեռքը դրաւ անոր վրայ եւ ըսաւ․ «Սաւուղ եղբայր, վե՛ր նայէ․ Տէ՛րը զրկեց գիս, Յիսո՛ւսը որ երեւցաւ քեզի այն ճամբուն վրայ ուրկէ դուն կու գայիր, որպէսզի տեսնես եւ լեցուիս Սուրբ Հոգիով»։ **18** Անոր աչքերուն վրայէն կարծես կեղեւներ թօթափեցան եւ գտաւ տեսողութիւնը։ **19** Տեղւոյն վրայ մկրտուեցաւ, յետոյ կերակուր կերաւ եւ զօրացաւ։

Սաւուղի փառագլութիւնը Դամասկոսի մէջ

Դամասկոսի մէջ, աշակերտներուն հետ, մի քանի օր անցուց․

13 – «Սուրբեր» կը կոչուին քրիստոնեաներ, որովհետեւ անոնք մկրտուեալքն են հրաժարած ըլլալով մեղաւոր աշխարհէն՝ սրբացած են։

20 Եւ անկէ ետք անմիջապէս սկսաւ ժողովարաններուն մէջ քարոզել թէ Յիսուս Աստուծոյ Որդին է: **21** Այն ամէնքը որ կը լսէին զինքը, կը զարմանային եւ կ'ըսէին. «Արդեօք ասիկա չէ՞, որ Երուսաղէմի մէջ կը հալածէր զանոնք որ Յիսուսի անունը կը կանչէին, եւ հոս եկած է նոյն նպատակով, որպէսզի տանի զանոնք քահանայապետին»: **22** Բայց Սաւուղ հետզհետէ կը զօրանար, կը յաղթահարէր Դամասկոսի Հրեաները եւ կը փաստէր անոնց՝ թէ Յիսուս է Քրիստոսը:

23 Բազմաթիւ օրեր ետք, Հրեաները խորհրդակցեցան, որպէսզի սպաննեն զինք: **24** Բայց անոնց նենգութիւնը յայտնի եղաւ Սաւուղին: Հրեաները գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի սպաննեն զինքը: **25** Այն ատեն աշակերտները առին զինքը եւ գիշերանց սակառով մը պարիսպէն վար իջեցուցին զայն:

Սաւուղ Երուսաղէմ կ'անցնի

26 Սաւուղ, երբ Երուսաղէմ եկաւ, կը փորձէր աշակերտներուն միանալ, բայց ամէնքը կը վախնային անկէ եւ չէին հաւատար՝ թէ ան իրապէս աշակերտ է: **27** Այն ատեն Բառնաբաս առաւ զինքը եւ տարաւ առաքեալներուն մօտ, եւ պատմեց անոնց՝ թէ ինչպէս ճամբու վրայ Սաւուղ տեսած էր Տէրը, որ խօսած էր անոր, եւ թէ ինչ համարձակութեամբ Դամասկոսի մէջ քարոզած էր Յիսուսի անունով: **28** Անկէ ետք, անոնց հետ կ'երթար եւ կու գար Երուսաղէմի մէջ, եւ կը քարոզէր Տիրոջ անունով: **29** Կը խօսէր եւ կը վիճէր Հելլենականներուն հետ, սակայն անոնք կը խորհէին սպաննել զինքը: **30** Եղբայրները, երբ իմացան, տարին զինքը մինչեւ Կեսարիա եւ անկէ ճամբայ հանեցին դէպի Տարսոն:

22 – Սաւուղս ֆանի մը օր (հ. 19) Դամասկոսի մէջ փարոզելէ ետք, մեկնեցաւ Արաբիա (Փաղ. Ա. 17), որպէս զի ներանձնութեան մէջ ինքզինքը պատրաստէ Աստուծոյ իրեն սահմանուած պաշտօնին: Արաբիայէն կրկին դարձաւ Դամասկոս (հ. 22. Փաղ. Ա. 17):

31 Սակայն Եկեղեցին խաղաղութիւն կը վայելէր ամբողջ Հրէ-աստանի, Գալիլիոյ եւ Սամարիոյ մէջ, կ'աճէր եւ կ'ապրէր Տիրոջ երկրաւոր մէջ եւ կը համակուէր Սուրբ Հոգիին մխիթարութեամբ:

Պետրոս Լիւդիոյ մէջ

32 Պետրոս, որ կը շրջէր ամէն կողմերը, իջաւ սուրբերուն մօտ որ կը բնակին Լիւդիա: **33** Այնտեղ գտաւ մարդ մը Ենէա անունով, որ անդամալոյծ էր եւ ութ տարիներէ ի վեր կը պառկէր մահիճին վրայ: **34** Պետրոս ըսաւ անոր. «Ենէա, Տէր Յիսուս Քրիստոս կը բուժէ քեզ, ե՛լ եւ դուն քու ձեռքովդ անկողինդ շտկէ»: Անիկա իսկոյն ոտքի ելաւ: **35** Լիւդիայի եւ Սարոնայի բոլոր բնակիչները տեսան զինք եւ Տիրոջ դարձան:

Պետրոս յարուսթիւն կու տայ Տաքիթայի

36 Յորբէի մէջ կին մը կար, որ աշակերտած էր նաեւ, եւ որուն անունն էր Տաքիթա, որ կը նշանակէ Այծեմնիկ: Ան մեծ արժանիք ունէր իր ըրած բարի գործերով եւ ողորմութիւններով: **37** Այն օրերուն, Այծեմնիկ հիւանդացաւ եւ մեռաւ: Անոր մարմինը լուացին եւ դրին վերնատան մէջ: **38** Լիւդիա հեռու չէր Յորբէէն. աշակերտները, երբ իմացան թէ Պետրոս Լիւդիա կը գտնուի, երկու մարդ զրկեցին, աղաչելով զինքը որ առանց ուշանալու իրենց մօտ գայ: **39** Պետրոս անմիջապէս անոնց հետ մեկնեցաւ: Երբ հասաւ, հանեցին զինք վերնատուն, ուր բոլոր այրիները լալով անոր շուրջը հաւաքուած էին եւ ցոյց կու տային անոր զգեստներն ու վերարկուները զորս Այծեմնիկ կը նուիրէր անոնց, երբ տակաւին ողջ էր: **40** Պետրոս ամէնքը դուրս հանեց, ծունկի եկաւ եւ աղօթեց, ապա դէպի մարմինը դառնալով, ըսաւ. «Տաքիթա, Տէր Յիսուս

31 – «Սուրբ Հոգիին մխիթարութեամբ», այսինքն Սուրբ Հոգիին ներքին թելադրութեամբ, որ կը տրամադրէր հոգիները քրիստոնէական կրօնին ընդգրկելու:

35 – Սարովմա (Ասարոնա) Յոպպէ միւնչեւ Կեսարիա տարածուող ծովագեր-եայ հարթավայրն է:

Քրիստոսի անունով, վե՛ր կանգնէ՛»։ Անիկա աչքերը բացաւ եւ Պետրոսը տեսնելով՝ նստաւ։ **41** Պետրոս բռնեց անոր ձեռքէն եւ ոտքի հանեց զայն։ Կանչեց սուրբերը եւ այրիները եւ ցոյց տուաւ անոնց Այծեմնիկը կենդանի։ **42** Ամբողջ Յոբբէն իմացաւ զէպքը եւ շատերը հաւատացին Տիրոջ։ **43** Պետրոս երկար օրեր մնաց Յոբբէ, կաշեգործի մը քով որ Սիմոն կը կոչուէր։

Պետրոս Կոռնելիոսի մօտ

10 **1** Կեսարիա մարդ մը կար Կոռնելիոս անունով եւ հարկւրապետ էր Իտալական գոլնդին։ **2** Ան բարեպաշտ եւ աստուածավախ մէկն էր, ինչպէս անոր ամբողջ ընտանիքը, առատ ողորմութիւններ կ'ընէր ժողովուրդին եւ միշտ կ'աղօթէր Աստուծոյ։

3 Ան տեսիլ մը ունեցաւ. օրուան իններորդ ժամուն, Տիրոջ հրեշտակը տեսաւ յայտնապէս որ կը մտնէր իր տունը եւ կը կանչէր զինքը. «Կոռնելիո՛ս»։ **4** Հրեշտակը տեսնելով, ան զարհուրեցաւ եւ հարցուց. «Ի՞նչ է, Տէր»։ Հրեշտակը պատասխանեց անոր. «Աղօթքներդ եւ ողորմութիւններդ բարձրացան առ Աստուած եւ ան յիշեց քեզ։ **5** Հիմա ուրեմն մարդ ղրկէ Յոբբէ եւ կանչէ Սիմոնը, որ կը կոչուի Պետրոս։ **6** Ան հիւրաբար կը գտնուի Սիմոն անունով կաշեգործի մը մօտ, որ կը բնակի ծովուն եզերքը»։ **7** Երբ մեկնեցաւ հրեշտակը որ իրեն կը խօսէր, Կոռնելիոս կանչեց իր ծառաներէն երկու հոգի եւ իր թիկնապահներէն բարեպաշտ զինուոր մը, **8** բացատրեց անոնց ամէն բան եւ ղրկեց զանոնք Յոբբէ։

9 Յաջորդ օրը, մինչ անոնք ճամբայ ելած էին եւ կը մօտենային քաղաքին, Պետրոս, վեցերորդ ժամուն տանիք ելաւ աղօթելու հա-

Գլ. 10, 1 – Այն գումղը, ուր հարիւրապետ էր Կոռնելիոս, իր շարքերուն մէջ քաղաքի իտալացի զինուորներ ունեցալուն պատճառով՝ «իտալական» կոչւած էր։

մար: 10 Անօթեցած ըլլալով, ան ուզեց բան մը ճաշակել: Մինչ կերակուրը կը պատրաստէին, ան յափշտակուեցաւ: 11 Տեսաւ երկինքը որ կը բացուէր, եւ առարկայ մը՝ նման մեծ կտաւի, որ չորս ծայրերէն կապուած կ'իջնէր դէպի երկիր: 12 Անոր մէջ կային ամէն տեսակ չորքոտանիներ եւ երկրի սողուններ եւ երկինքի թռչուններ: 13 Երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր անոր. «Պետրոս, ոտքի՛ ել, մորթէ եւ կեր»: 14 Պետրոս պատասխանեց. «Քա՛ւ լիցի, Տէր, որովհետեւ ես երբեք խառնակ եւ անսուրբ բան չեմ կերած»: 15 Երկրորդ անգամ, ձայնը դարձեալ ըսաւ անոր. «Ինչ որ Տէրը սրբացուց, դուն պիղծ մի՛ համարեր»: 16 Ասիկա կրկնուեցաւ երեք անգամ, ապա կտաւը բարձրացաւ դէպի երկինք:

17 Մինչ Պետրոս բոլորովին զարմացած կը հարցնէր ինքնիրեն, թէ ի՛նչ կրնար նշանակել տեսիլը զոր կը տեսնէր, ահա մարդիկը որ զրկուած էին Կուռնելիոսի կողմէ՝ հարցնելու համար Սիմոնի բնակարանին մասին, կանգ առին դրան առջեւ:

18 Կանչեցին եւ հարցուցին՝ թէ Սիմոնը, որ Պետրոս կը կոչուի, հո՞ն կը բնակի: 19 Եւ մինչ Պետրոս տակաւին կը մտածէր տեսիլքին մասին, Հոգին ըսաւ անոր. 20 «Ահա՛ մարդիկը որ քեզ կը փնտռեն: Ոտքի՛ ել, վար իջիր եւ գնա անոնց հետ առանց խիղճ ընելու, որովհետեւ ե՛ս զրկեցի զանոնք»: 21 Պետրոս իջաւ մարդոց մօտ եւ ըսաւ անոնց. «Ահաւասիկ, ե՛ս եմ այն որ դուք կը փնտռէք. ի՞նչ է հարցը որուն համար եկաք»: 22 Անոնք պատասխանեցին. «Կուռնելիոս հարիւրապետը, արդար եւ Աստուծոյ երկիւղը ունեցող մարդ, որուն կը վկայէ ամբողջ հրեայ ազգը, հրահանգ ստացաւ սուրբ հրեշտակէն՝ որ քեզ իր տունը կանչէ եւ լսէ խօսքերը զոր դուն պիտի ըսես անոր»: 23 Պետրոս ներս առաւ զանոնք եւ իր մօտ հիւրընկալեց:

16 – Այս երևույթով Աստուած ուզեց հասկցնել Պետրոսին որ մաքուր եւ ամբողջ կերակուրներու դիտական խնդիրը վերացւած է այլեւս, եւ թէ այսուհետեւ Հրեաներու կողմէ եղած մաքուր ու ամբողջ մարդոց՝ այսինքն Հրեայի ու հեթանոսի խտրութիւնը ջնջուած է. հետեւաբար ասո՛նք եւս, ինչպէս անոնք, կրնան փրկութեան հասնիլ:

24 Յաջորդ օրը, Պետրոս ճամբայ ելաւ եւ մեկնեցաւ անոնց հետ: Յորբէի եղբայրներէն ոմանք ընկերացան անոր: Յաջորդ օրը Կեսարիա մտան: Կուռնելիոս կը սպասէր անոնց եւ հրաւիրած էր իր ազգականները եւ մտերիմ բարեկամները: 25 Երբ Պետրոս ներս կը մտնէր, Կուռնելիոս ընդառաջ եկաւ, ինկաւ անոր ոտքերուն առջեւ եւ խոնարհեցաւ: 26 Պետրոս ոտքի հանեց զինք եւ ըսաւ. «Ոտքի՛ ել, է՛ս ալ մարդ եմ»: 27 Եւ անոր հետ խօսակցելով՝ ներս մտաւ: Այն ատեն տեսաւ մեծ թիւով մարդիկը որ հաւաքուած էին հոն: 28 Եւ ըսաւ անոնց. «Դուք անձամբ գիտէք թէ բացարձակապէս արգիւրուած է Հրեայի մը՝ այլազգիի մը դպչիլ կամ անոր տունը մտնել: Բայց Աստուած ցոյց տուաւ ինծի թէ՝ մարդոցմէ ոչ մէկը պէտք է խառնակ կամ պիղծ համարել: 29 Ասոր համար եւ առանց առարկելու, ես եկայ որովհետեւ դուն կանչեցիր զիս: Բայց արդ կը հարցնեմ թէ ինչո՞ւ համար կանչեցիք զիս»: 30 Կուռնելիոս պատասխանեց. «Չորս օր առաջ, ես իմ տանս մէջ կ'աղօթէի իններորդ ժամուն, եւ ահա մարդ մը, սպիտակ հագած, կանգնեցաւ դիմացս, եւ ըսաւ ինծի. 31 «Կուռնելիոս, քու աղօթքդ լսելի եղաւ եւ քու ողորմութիւններդ յիշուեցան Աստուծոյ առջեւ: 32 Արդ, մարդ զրկէ Յորբէ եւ կանչէ Սիմոնը, որ կը կոչուի Պետրոս, որ իջեւանած է Սիմոն կաշեգործին տունը՝ ծովուն եզերքը, որ գայ եւ խօսի քեզի: 33 Ես անմիջապէս մարդ զրկեցի քեզի եւ դուն լաւ ըրիր գալովդ: Ահաւասիկ, մենք ամէնքս քու առջեւդ ենք, լսելու համար ինչ որ Աստուած հրամայեց քեզի որ խօսիս»:

Պետրոսի մատը Կուռնելիոսի

34 Այն ատեն Պետրոս խօսք առաւ եւ ըսաւ. «Հիմա կը տեսնեմ թէ ճշմարտապէս Աստուծոյ մօտ աշառութիւն չկայ, 35 այլ ամէն ազգի մէջ, այն որ Տիրոջ երկիւղն ունի եւ արդարութիւնը կը գործադրէ՝ հաճելի է անոր:

36 Ան իր խօսքը առաքեց Իսրայելի որդիներուն՝ խաղաղութիւն աւետարանելու համար անոնց, Յիսուս Քրիստոսի միջոցաւ. ինքն է Տէրն ամէնուն: 37 Դուք գիտէք ինչ որ տեղի ունեցաւ ամբողջ Հրէաստանի մէջ, սկսեալ Գալիլեայէն, մկրտութենէն ետք զոր

Յովհաննէս քարոզեց. **38** Յիսուս Նազովրեցին, զոր Աստուած օծեց Սուրբ Հոգիով եւ զօրութեամբ, ինչ որ անցաւ բարիք ընելով եւ բուժելով ամէնքը որ բռնուած էին սատանայէն, որովհետեւ Աստուած անոր հետ էր:

39 Մենք կը վկայենք անոր բոլոր գործերուն մասին զորս ան ըրաւ Հրէաստանի եւ Երուսաղէմի մէջ. սակայն սպաննեցին զինքը, խաչէն կախելով: **40** Աստուած յարոյց զինք երրորդ օրը, կարողութիւն տալով անոր՝ երեւնալու, սակայն ո՛չ բոլոր ժողովուրդին. **41** այլ մեզի՝ վկաներուս, զորս Աստուած կանխաւ ընտրեց. եւ մենք կերանք ու խմեցինք անոր հետ, մեռեալներէն իր յարութիւն առնելէն ետք: **42** Ինք պատուիրեց մեզի քարոզել ժողովուրդին եւ վկայել՝ թէ ինքն է Աստուծմէ սահմանուած Դատաւորը կենդանիներուն եւ մեռեալներուն: **43** Բոլոր մարգարէները անոր մասին կը վկայեն թէ ով որ կը հաւատայ անոր՝ մեղքերու թողութիւն պիտի ընդունի անոր անունով»:

Մկրտութիւն առաջին հեթանոսներուն

44 Մինչ Պետրոս այս խօսքերը կ'ըսէր, Սուրբ Հոգին հանգչեցաւ բոլորին վրայ որ խօսքը կը լսէին: **45** Բոլոր թրփատեալ հաւատացեալները որ եկած էին Պետրոսի հետ, զարմացան, երբ տեսան զեղումը Սուրբ Հոգիին պարզեւններուն՝ հեթանոսներուն վրայ: **46** Արդարեւ կը լսէին զանոնք՝ որ լեզուներ կը խօսէին եւ զԱստուած կը փառաբանէին: **47** Այն ատեն Պետրոս ըսաւ. «Արդեօք կարելի՞ է մկրտութեան ջուրը մերժել անոնց՝ որ ընդունեցան Հոգին, ինչպէս մենք»: **48** Հրամայեց մկրտել զանոնք Յիսուս Քրիստոսի անունով: Այն ատեն աղաչեցին անոր, որ իրենց մօտ մնար մի քանի օր:

Երուսաղէմի մէջ Պետրոս կ'արդարացնէ իր գործելակերպը

11

1 Առաքեալները եւ եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին թէ հեթանոսներն ալ ընդունած են Աստուծոյ խօսքը: **2** Բայց երբ Պետրոս Երուսաղէմ ելաւ,

Թշվառեալ հաւատացեալները խղճի հարց ըրին անոր մասին **3** եւ ըսին՝ թէ ան մտած է չթշվառուած մարդոց տունը եւ անոնց հետ կերած է: **4** Պետրոս սկսաւ դէպքերը կարգով պատմել անոնց եւ ըսաւ. **5** «Ես Յորբէ քաղաքին մէջ կ'աղօթէի, երբ յափշտակուեցայ եւ տեսիլ մը ունեցայ: Երկինքէն կ'իջնէր առարկայ մը, նման մեծ կտաւի, որ չորս ծայրերէն կախուած էր երկինքէն, եւ եկաւ ու հասաւ մինչեւ իմ քովս: **6** Աչքերս սեւեռած, ես կը դիտէի զայն եւ տեսայ երկրի չորքոտանիներ, զազաններ, սողուններ եւ երկինքի թռչուններ: **7** Լսեցի ձայն մը որ կ'ըսէր ինծի. Պետրոս, ե՛լ, մորթէ եւ կեր: **8** Ես պատասխանեցի. Քա՛ւ լիցի, Տէր, որովհետեւ խառնակ եւ անսուրբ բան երբեք չէ մտած իմ բերանս: **9** Երկրորդ անգամ ձայնը երկինքէն ըսաւ ինծի. «Ինչ որ Աստուած սրբացուց, դուն խառնակ մի՛ համարեր»: **10** Ասիկա կրկնուեցաւ երեք անգամ եւ ապա առարկան բարձրացաւ դէպի երկինք:

11 «Եւ ահա նոյն պահուն երեք մարդիկ ներկայացան տան առջեւ ուր ես իջեալնա՞ծ էի: Անոնք կեսարիայէն ղրկուած էին ինծի: **12** Հոգին ըսաւ ինծի՝ որ ընկերանամ անոնց առանց խիղճ ընելու: Հետս եկան նաեւ այս վեց եղբայրները եւ մենք մտանք այն մարդուն տունը: **13** Ան պատմեց մեզի՝ թէ ինչպէս իր տան մէջ ունեցած է հրեշտակին տեսիլքը, որ դիմացը կանգնած ըսած է անոր. «Մարդ ղրկէ Յորբէ եւ կանչել տուր Սիմոնը, որ կը կոչուի Պետրոս»: **14** Ինք պիտի ըսէ քեզի խօսքերը որ պիտի փրկեն քեզ եւ քու ամբողջ ընտանիքդ»:

15 Արդ, ես հազիւ սկսեր էի խօսիլ, երբ Հոգին Սուրբ իջաւ անոնց վրայ, ինչպէս սկիզբը մեր վրայ: **16** Ես յիշեցի Տիրոջ խօսքերը զորս կ'ըսէր. «Յովհաննէս մկրտեց ջուրով, բայց դուք պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով»: **17** Եթէ Աստուած տուաւ անոնց միեւնոյն պարգեւը զորս տուաւ մեզի, քանի որ հաւատացին Տէր Յի-

Գլ. 11, 3 – Հրէութեան դարձած քրիստոնեաներ, որոնք տակաւին հրէական մտայնացումով տոգորուած էին, յանդիմանեցին Պետրոսը, որ անթիվատմելու (հեթանոսներու) հետ մտած էր սեղանի: Անոնք զայն մոյմպէս յանդիմանեցին հեթանոսները եկեղեցւոյ ծոցն ընդունած ըլլալուն համար:

սուս Քրիստոսի, ես ո՞վ էի, որ արգելք դնէի Աստուծոյ»:

18 Անոնք, երբ այս խօսքերը լսեցին, լռեցին, եւ կը փառաւորէին զԱստուած՝ ըսելով. «Ուրեմն Աստուած հեթանոսներուն ալ տուաւ կեանքի տանող ապաշխարութիւնը»:

Հիմնարկութիւն Ամտիոժի Եկեղեցւոյն

19 Անոնք որ ցրուած էին նեղութիւններուն ժամանակ որ Ստեփանոսին պատճառով պատահեցան, հասան մինչեւ Փիւնիկէ, Կիպրոս եւ Անտիոք, սակայն անոնք ո՛չ մէկուն կը քարոզէին խօսքը՝ բացի Հրեաներէն: **20** Անոնց մէջ սակայն կային մի քանի Կիպրացիներ եւ Կիւրենացիներու որոնք, Անտիոք գալով, կը խօսէին նաեւ Յոյներուն եւ կ'աւետարանէին անոնց **Տէր Յիսուսը**: **21** Տիրոջ ձեռքը կ'օգնէր անոնց, եւ մեծ եղաւ բազմութիւնն անոնց որ հաւատացին եւ Տիրոջ դարձան: **22** Լուրը հասաւ Երուսաղէմի Եկեղեցւոյն ականջը եւ Բառնաբասը Անտիոք ղրկեցին:

23 Երբ ան հասաւ եւ տեսաւ շնորհքը զոր Աստուած տուած էր, ուրախացաւ եւ կը քաջալերէր ամէնքը սրտի յօժարութեամբ հաւատարիմ մնալ Տիրոջ: **24** Որովհետեւ զուարթամիտ մարդ էր եւ լի Սուրբ Հոգիով եւ հաւատքով. եւ մեծ բազմութիւն մը յարեցաւ Տիրոջ:

25 Այն ատեն Բառնաբաս գնաց Տարսոն, Սաւուղը փնտռելու համար: Գտաւ զայն եւ բերաւ Անտիոք: **26** Տարի մը ամբողջ անոնք կը հաւաքուէին Եկեղեցւոյ մէջ եւ կ'ուսուցանէին մեծ բազմութեան: Անտիոքի մէջ է որ առաջին անգամ հաւատացեալները քրիստոնեայ կոչուեցան:

19 – Ինչպէս Երուսաղէմը կեդրոնն էր հրէութենէ դարձած քրիստոնեայ եկեղեցւոյ, նոյնպէս ալ Ամտիոժ քաղաքը կեդրոնն էր հեթանոսութենէ դարձած քրիստոնեաներու:

26 – «Եկեղեցի», այսինքն հասարակութիւն: – Քրիստոնեայ անուանակոչութիւնը հեթանոսներու կողմէ եկաւ: Քրիստոնեաները զիրար աշակերտ, սուրբ կ'անուանէին:

Բառնաբաս եւ Սաւուղ կը դրկուին Նրուսաղէմ

27 Այն օրերուն, մարգարէներ Երուսաղէմէն Անտիոք իջան:
28 Անոնցմէ մէկը, որու անունն էր Ագապոս, ոտքի ելաւ եւ Հոգի-
 ին ազդեցութեամբ կանխազուշակեց թէ մեծ սով պիտի ըլլայ ամ-
 բողջ աշխարհի վրայ: Ինչ որ տեղի ունեցաւ Կղաւղիոսի օրերուն:
29 Այն ատեն, աշակերտները որոշեցին որ իւրաքանչիւրը, իր կա-
 րողութեան համեմատ, օգնութիւն զրկէ եղբայրներուն որ կը
 բնակին Հրէաստան: **30** այդպէս ալ ըրին եւ օգնութիւնները զրկե-
 ցին երէցներուն՝ Բառնաբասի եւ Սաւուղի ձեռքով:

Ձերբակալութիւնը Պետրոսի եւ հրաշքով ազատութիւն

12 **1** Այն ժամանակներուն, Հերովդէս ձեռք դրաւ Եկեղեց-
 ւոյ մի քանի անդամներուն վրայ, զանոնք չարչարելու
 համար: **2** Սուրով սպաննել տուաւ Յակոբը, Յովհաննէ-
 սի եղբայրը: **3** Երբ տեսաւ թէ ասիկա հաճելի է Հրեաներուն, ձեռ-
 բակալել տուաւ նաեւ Պետրոսը. եւ Բաղարջակերքի օրերն էին:
4 Ձերբակալել տուաւ եւ բանտ նետեց զինքը եւ յանձնեց զայն չորս
 զինուորներէ բաղկացած չորս գունդերու պահպանութեան. եւ
 կ'ուզէր Զատիկէն ետք հանել զայն ժողովուրդին առջեւ: **5** Մինչ
 Պետրոս հսկողութեան տակ էր բանտին մէջ, Եկեղեցւոյ աղօթքը
 անոր համար անդադար կը բարձրանար առ Աստուած:

6 Արդ, նախորդ գիշերն իսկ այդ օրուան, երբ Հերովդէս պիտի
 հանէր զինք ատենանին առջեւ, Պետրոս, կրկին շղթաներով կապ-
 ւած, կը քնանար երկու զինուորներու միջեւ, եւ դրան առջեւ պա-

27 – «Մարգարէներ», այսինքն մարգարէութեան պարգեւը ստացած հաւա-
 տացեալներ:

30 – «Երէցները» առաքեալներէ կարգուած եկեղեցական առաջնորդներ էին,
 որոնք Յակոբոս առաքեալի գլխաւորութեան տակ Նրուսաղէմի եկեղեցին կը կա-
 ուալարէին:

Գլ. 12, 1 – Հերովդէս Ագրիպպա՝ Արիստորուդասի ու Բերենիկէի որդին, որ
 եղբորորդին էր Հերովդէս Անտիպասի եւ թոռ Հերովդէս Մեծի, 37 թուին թա-
 ցաւոր անուանուեցաւ 40/41 թուին եւ իշխեց թովանդակ Պաղեստինի վրայ:

հակները կը պահպանէին բանտը: **7** Յանկարծ Տիրոջ հրեշտակը եկաւ, եւ խուցը լեցունեցաւ լոյսով: Հրեշտակը խթեց Պետրոսին կողը, արթնցուց գայն եւ ըսաւ անոր. «Շուտով վեր ել»: Շղթաները թօթափեցան անոր ձեռքերէն: **8** Այն ատեն հրեշտակը ըսաւ անոր. «Գօտիդ կապէ եւ կօշիկներդ հագիր»: Երբ այն ալ ըրաւ. Դարձեալ ըսաւ անոր. «Վերարկուդ նետէ ուսերուդ վրայ եւ հետեւէ ինծի»: **9** Պետրոս ելաւ եւ կը հետեւէր անոր եւ չէր գիտէր թէ ի՛նչ կը պատահէր իրեն հրեշտակին միջոցաւ, այլ կը կարծէր թէ երազ կը տեսնէր: **10** Անցան առաջին պահակներու դիրքը եւ ապա երկրորդը եւ հասան երկաթեայ դռան առջեւ, որ կը բացուէր քաղաքին վրայ. դուռը ինքնիրմէ բացուեցաւ անոնց առջեւ եւ յառաջացան մինչեւ փողոցին ծայրը. եւ յետոյ հրեշտակը յանկարծ թողուց զինք: **11** Պետրոս, ինքնիրեն գալով՝ ըսաւ. «Հիմա գիտեմ թէ ճշմարտապէս Աստուած զրկեց իր հրեշտակը եւ փրկեց զիս Հերովդէսի ձեռքէն եւ Հրեայ ժողովուրդին ամէն ակնկալութենէն»:

12 Ուշքի գալով, եկաւ տունը Մարիամին՝ մօրը Յովհաննէսին, որ կօշուեցաւ Մարկոս, եւ ուր շատեր հաւաքուած էին եւ կ'աղօթէին: **13** Երբ բախեց տան դուռը, Հռովմէ անունով աղախինը՝ ականջ դնելով: **14** Ճանչցաւ Պետրոսին ձայնը եւ ուրախութենէն, փոխանակ դուռը բանալու, վազեց ներս եւ իմացուց թէ Պետրոս դռան առջեւն է: **15** Անոր կ'ըսէին՝ Յնորա՛ծ ես. բայց ինք կը պնդէր թէ ըսածը ճիշդ է: Այն ատեն անոնք ըսին՝ Անոր հրեշտակն է: **16** Մինչ այն, Պետրոս կը շարունակէր դուռը բախել: Երբ բացին եւ տեսան զինքը, զարմացան: **17** Պետրոս ձեռքով նշան կ'ընէր անոնց որ լռեն. եւ պատմեց թէ ինչպէս Տէրը ազատեց զինքը բանտէն, եւ աւելցուց, «Պատմեցէք ասիկա Յակոբին եւ եղբայրներուն»: Յետոյ ելաւ եւ ուրիշ տեղ գնաց:

18 Առաւօտեան ժամուն, մեծ իրարանցում ինկած էր զինուորներուն մէջ՝ թէ արդեօք ի՛նչ եղաւ Պետրոսը: **19** Հերովդէս մարդ

17 – Պետրոսի ուր գացած ըլլալը կը լռէ Ղուկաս. որովհետեւ տեղւոյն յիշատակութիւնը կրնար վտանգաւոր ըլլալ առաքեալին համար: Պետրոս հաւանական է որ Հռոմ գացած ըլլայ, ուր, նոյն միջոցին, հալածամքի սպառնալիք կար քրիստոնեաներուն դէմ (Եւսեբիոս, Հերոնիմոս): Պետրոս 42 թուին անցած էր Հռոմ:

ղրկեց որ Պետրոսը փնտռեն, բայց չգտան զինք: Հրամայեց, որ հարցաքննեն պահակները եւ ապա սպաննել տուաւ զանոնք: Յետոյ Հրէաստանէն իջաւ Կեսարիա եւ հոն կը մնար:

Հերովդէսի մահը

20 Հերովդէս սուր հակառակութեան մէջ էր Տիւրոսի եւ Սիդոնի բնակիչներուն հետ: Անոնք համաձայնեցան եւ Հերովդէսին մօտ եկան, սիրաշահեցան նախ Բղաստոսը, որ սենեկապետն էր թագաւորին, եւ խաղաղութիւն հայեցին, որովհետեւ անոնց երկիրը արքունի շտեմարաններէն կ'առնէր պարենաւորումը: **21** Որոշուած օրը, Հերովդէս արքայական զգեստները հագած, ատենաւ բազմեցաւ եւ հրապարակաւ կը ճառախօսէր անոնց: **22** Ամբոխը կ'աղաղակէր. «Աստուած՝ մըն է որ կը խօսի եւ ո'չ թէ մարդ մը»: **23** Նոյն ժամուն Տիրոջ հրեշտակը հարուածեց զինք, որովհետեւ ան փառք էր տուած Աստուծոյ: Որդնալից եղաւ եւ մեռաւ:

Բառնաբաս եւ Սաւուղ կը դառնան Ամտիոք

24 Աստուծոյ խօսքը, սակայն, կ'աճէր եւ կը ծաւալէր: **25** Բառնաբաս եւ Սաւուղ, իրենց առաքելութիւնը կատարելէ ետք, վերադարձան Երուսաղէմէն եւ իրենց հետ առին Յովհաննէսը, որ կը կոչուի Մարկոս:

Բառնաբաս եւ Սաւուղ կը մեկնին առաքելութեան

13 **1** Անտիոքի Եկեղեցւոյ մէջ կային մարգարէներ եւ վարդապետներ՝ ինչպէս Բառնաբաս, Շմաւոն, որ կոչուած էր Նիզեքը, Ղուկիոս Կիւրենացին եւ Մանայէն՝ դայեկորդի Հերովդէս չորրորդապետին եւ Սաւուղ: **2** Մինչ անոնք

Գլ. 13,1 – «Մարգարէներ», այսինքն Աստուծոյ անունովը խօսող ներշնչւած մարդիկ, եւ վարդապետներ, որոնք իրենց սեպհական գիտութեամբ, առանց ներշնչուած ըլլալու մարգարէներու պէս, կը տրվեցնէին կրօնի ճշմարտութիւնները:

պաշտօն կը մատուցանէին Տիրոջ եւ պահք կը պահէին, Հոգին Սուրբ ըսաւ անոնց. «Որոշեցէք ինծի համար Բառնաբասն ու Սաւուղը ի սպաս այն գործին որուն ես կանչած եմ զանոնք»։ **3** Այն ատեն, պահք պահելէ եւ աղօթք ընելէ ետք, ձեռք դրին անոնց վրայ եւ արձակեցին զանոնք։

Կիպրոսի առաքելութիւնը եւ Եղիմաս մոզքը

4 Անոնք, Սուրբ Հոգիէն առաքելութեան ղրկուելով, իջան Սեւեկիա եւ նաւարկեցին դէպի Կիպրոս։ **5** Հասան Սաղամիւս եւ Տիրոջ խօսքը հռչակեցին Հրեաներու ժողովարանին մէջ։ Իրենց հետ իբրեւ օգնական ունէին Յովհաննէսը։ **6** Ամբողջ կղզիին շրջանը ընելէ ետք մինչեւ Պափոս, հոն գտան հրեայ մոզ մը, սուտ մարգարէ, որուն անունն էր Բարեյեսու։ **7** ան, փոխ-հիւպատոս Սերկիոս Պողոսի շրջանակէն էր, որ իմաստուն մարդ մըն էր. անիկա կանչել տուաւ Բառնաբասը եւ Սաւուղը, որովհետեւ կ'ուզէր լսել Աստուծոյ խօսքը։ **8** Բայց Եղիմաս մոզը, - այսպէս կը թարգմանուի անոր անունը -, հակառակեցաւ անոնց, որովհետեւ կը ջանար հաւատքէն հեռացնել փոխ-հիւպատոսը։

9 Սաւուղ՝ կոչուած նաեւ Պողոս, լեցուած Սուրբ Հոգիով, աչքերը անոր վրայ սեւեռեց եւ ըսաւ անոր. **10** «Ո՛վ մարդ, լի ամէն նենգութեամբ եւ խորամանկութեամբ, որդի սատանայի, թշնամի ամէն արդարութեան, դուն պիտի չգաղղի՞ս շեղեցնել Աստուծոյ ճամբաները։ **11** Ահաւասիկ հիմա քու վրադ է Տիրոջ աջը, դուն պիտի կուրնաս եւ արեւը պիտի չտեսնես ժամանակի մը համար»։ Նոյն վայրկեանին, մութն ու խաւարը իջան անոր վրայ, եւ ան կը շրջէր ամէն կողմ, կը փնտռէր մէկը որ առաջնորդէր իրեն։ **12** Այն ատեն փոխ-հիւպատոսը, տեսնելով պատահածը՝ հաւատաց եւ խորապէս կը հիանար Տիրոջ վարդապետութեան վրայ։

4 – Պողոսի առաքելական առաջին ուղեւորութիւնը (46-48) Փոքր Ասիոյ հաւաքէն կը սկսի։

9 – Կը յիշատակուի Առաքելին եբրայական Շաուլ (Սաւուղ) անունին կից, իբր հռոմէական քաղաքացի կրած հռոմէական Պաւղոս կամ Պողոս մականունը։

Պերգէ եւ Անտիոֆ

13 Պօղոս եւ անոր ընկերները նաւ առին Պափոսէն եւ եկան Պերգէ, Պամփիլիոյ մէջ: **14** Յովհաննէս թողուց զանոնք եւ վերադարձաւ Երուսաղէմ: Իսկ անոնք շարունակեցին Պերգէէն անդին եւ հասան Անտիոք՝ Պիսիդիոյ մէջ եւ շաբաթ օրը մտան ժողովարան եւ նստան: **15** Օրէնքին եւ մարգարէներուն ընթերցումէն ետք, ժողովարանին պետերը մարդ ղրկեցին, որպէսզի ըսեն անոնց. «Եթէ միւրթարութեան խօսքեր ունիք ժողովուրդին համար, խօսեցէք»:

Պօղոսին քարոզը Հրեաներուն

16 Պօղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ եւ ըսաւ. «Իսրայելացիներ, եւ դո՛ւք, Աստուծոյ երկիւղածներ, մտի՛կ ըրէք: **17** Իսրայելի, այս ժողովուրդին Աստուածը, ընտրեց մեր հայրերը եւ բազմացուց ժողովուրդը պանդխտութեան շրջանին, Եգիպտոսի երկրին մէջ, տարածեց իր բազուկին զօրութիւնը, հանեց զանոնք այդ երկրէն, **18** եւ քառասուն տարիներ շարունակ խնամեց զանոնք անապատին մէջ: **19** Յետոյ, բնաջնջելով եօթը ագգեր Քանանի երկրին մէջ, իբրեւ ժառանգութիւն տուաւ անոնց այս երկիրը, **20** մօտաւորապէս չորս հարիւր յիսուն տարիներ: Անկէ ետք, տուաւ անոնց դատաւորներ մինչեւ Սամուէլ մարգարէն: **21** Անկէ յետոյ, անոնք թագաւոր մը ուզեցին, եւ Աստուած տուաւ անոնց՝ Սաւուղը, Կիսի որդին, Բենիամինի ցեղէն, քառասուն տարիներ: **22** Երբ հեռացուց Սաւուղը, յարոյց անոնց Դաւիթ թագաւորը, որուն մասին տուաւ այս վկայութիւնը. գտայ Դաւիթը, Յեսսէի որդին, իմ սրտիս համաձայն մարդը, որ պիտի կատարէ իմ կամքս: **23** Անոր սերունդէն է որ Աստուած, ըստ իր խոստումին, յարոյց Իսրայելի՝ Յիսուսը, իբր Փրկիչ: **24** Յովհաննէս Կարապետ պատրաստեց անոր գալուստը՝ հռչակելով Իսրայելի բոլոր ժողովուրդին համար ապաշխարութեան մկրտութիւնը: **25** Իր

16 – Աստուածավախները կամ նորահաւատները այն հեթանոսներն են, որոնք մանչնալով ճշմարիտ Աստուածը՝ հրեաներուն հետ միասին կը պաշտէին զայն առանց սակայն մոլիսիսական օրէնքները պահելու:

առաքելութիւնը աւարտելու ընթացքին, Յովհաննէս կ'ըսէր. «Ես չեմ այն որ կը կարծէք թէ եմ: Ահաւասիկ, ան կու գայ իմ ետեւէս եւ ես արժանի չեմ անոր կօշիկները քակելու»:

26 «Եղբայրներ, դո՛ւք, աբրահամեան տոհմին որդիներ, եւ դո՛ւք, Աստուծոյ երկիւղածներ որ հոս ներկայ էք, ձեզի ղրկուեցաւ փրկութեան այս պատգամը: **27** Բայց անոնք որ Երուսաղէմ կը բնակին եւ անոնց իշխանները, առանց գիտնալու կատարեցին մարգարէներուն պատգամները զորս ամէն շաբաթ կը կարդան: **28** Թէպէտ անոր վրայ մահուան ոչ մէկ պատճառ չգտան, սակայն դատեցին եւ դատապարտեցին զայն եւ խնդրեցին Պիղատոսէն որ սպաննէ զայն: **29** Երբ կատարեցին ամէն ինչ որ անոր մասին գրուած է, իլեցուցին զայն խաչէն եւ դրին գերեզմանին մէջ: **30** Սակայն Աստուած յարոյց զինք մեռելներէն **31** եւ բազմաթիւ օրեր շարունակ երեւեցաւ անոնց որ անոր հետ Գալիլիայէն Երուսաղէմ ելած էին. եւ ասոնք են այժմ անոր վկաները ժողովուրդին մօտ:

32 Մենք կ'աւետարանենք ձեզի խոստումը, որ տրուած էր հայրերուն, **33** եւ Աստուած կատարեց զայն ի նպաստ մեզի, անոնց որդիներուն եւ յարոյց Յիսուսը ինչպէս որ գրուած է երկրորդ սաղմոսին մէջ. Դուն ես իմ Որդիս, եւ ես այսօր ծնայ քեզ: **34** Թէ Աստուած յարոյց զինք մեռելներէն եւ այսուհետեւ երբեք պիտի չվերադառնայ ապականութեան, կանխաւ հռչակուած էր: Ես պիտի տամ քեզի Դաւիթի սրբութիւնները, անոնք, որ արժանի են հաւատքի: **35** Ասոր համար ուրիշ տեղ մը կ'ըսէ. Դուն պիտի չիժողուս, որ Սուրբդ ապականութիւն տեսնէ: **36** Արդ, Դաւիթ, իր ժամանակին ծառայեց Աստուծոյ ծրագրին եւ մեռաւ, միացաւ իր հայրերուն եւ տեսաւ ապականութիւնը: **37** Բայց Ան, զոր Աստուած յարոյց, չտեսաւ ապականութիւնը:

34 – Աստուծոյ կողմէ Դաւիթին տրուած խոստումներն են, թէ անոր սերունդէն մէկու մը՝ այսինքն Մեսիայի թագաւորութիւնն ու գահը յաւիտեանական պիտի ըլլան:

37 – Այս խօսքը Դաւիթին չհայիր յայտնապէս, որովհետեւ մեռաւ ան, որով տեսաւ ապականութիւն: Հետեւաբար այդ խօսքը Բրիտանոսի վրայ միայն կրնայ պատշաճիլ:

38 «Արդ, իմացէք, եղբայրներ, Անո՛վ կ'աւետարանուի ձեզի թողութիւնը մեղքերուն: **39** Կատարեալ արդարութիւնը, զոր չկրցաք ընդունիլ Մովսէսի Օրէնքով, ով որ կը հաւատայ, Անով կ'ընդունի զայն:

40 «Զգոյ՛շ եղէք, ձեզմով չկատարուի ինչ որ ըսած են մարգարէները:

41 Տեսէ՛ք արհամարհողներ, զարմացէ՛ք եւ անհետացէ՛ք:

Որովհետեւ ձեր օրերուն եւ պիտի կատարեմ գործը, որուն պիտի չհաւատայիք, եթէ պատմէին զայն ձեզի»:

42 Երբ ժողովարանէն կ'ելլէին, կ'աղաչէին անոնց, որ յաջորդ չաբաթն ալ խօսին իրենց նոյն նիւթին մասին: **43** Երբ բազմութիւնը ցրուեցաւ, բազմաթիւ Հրեաներ եւ երկիրաձօներ, որ զԱստուած կը պաշտէին, հետեւեցան Պօղոսի եւ Բառնաբասի եւ ասոնք, իրենց խօսակցութեան ընթացքին, կը յորդորէին զանոնք որ հաւատարիմ մնան Աստուծոյ Շնորհքին:

Պօղոս եւ Բառնաբաս կը խօսին հեթանոսներուն

44 Յաջորդ չաբաթ օրը, գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար: **45** Հրեաները, երբ այս բազմութիւնը տեսան, նախանձով լեցւեցան եւ հայհոյութիւններով կը հակառակէին Պօղոսի խօսքերուն: **46** Այն ատեն Պօղոս եւ Բառնաբաս համարձակութեամբ յայտարարեցին. «Մենք պարտական էինք նախ ձեզի աւետել Աստուծոյ խօսքը: Քանի որ դուք կը մերժէք զայն եւ դուք ձեզ արժանի չէք համարիլ յաւիտենական կեանքին, ահաւասիկ մենք կը դառնանք դէպի հեթանոսները: **47** որովհետեւ այսպէս պատուիրեց մեզի Տէրը:

Եւ հաստատեցի քեզ իբր լոյս ազգերուն, որպէսզի փրկութիւնը տանիս միմչեւ երկրի ծայրերը:

47 – Այս խօսքին մէջ, զոր Տէրը կ'ուղղէ իր Ծառային՝ Մեսիայի, Պօղոս կը տեսնէ պատուէր մը՝ ուղղուած առաքելներուն, Աւետարանը փարոգելու հեթանոսներուն:

48 Հեթանոսները, այս լսելով, կ'ուրախանային, եւ սկսան փառաւորել Տիրոջ խօսքը, եւ ամէնքը, որ սահմանուած էին յաւիտենական կեանքին՝ ընդունեցան հաւատքը: **49** Եւ այսպէս Աստուծոյ խօսքը կը տարածուէր ամբողջ շրջանին մէջ:

50 Հրեաները սակայն, գրգռեցին ազնուազարմ կիներ որ գԱստուած կը պաշտէին, ինչպէս նաեւ քաղաքին պարագլուխները, հալածանք յարուցին Պօղոսի եւ Բառնաբասի դէմ եւ հեռացուցին զանոնք իրենց սահմաններէն: **51** Ասոնք իրենց ոտքերուն փոշին թօթափեցին անոնց վրայ եւ գացին Իկոնիոն: **52** Իսկ աշակերտները լեցուած էին ուրախութեամբ եւ Սուրբ Հոգիով:

Առաքելութիւն՝ Իկոնիոնի մէջ

14 **1** Իկոնիոնի մէջ անոնք մտան ժողովարան եւ այնպէս խօսեցան, որ մեծ բազմութեամբ Հրեաներ եւ Յոյներ հաւատացին: **2** Սակայն թերահաւատ Հրեաները հեթանոսները գրգռեցին եւ լարեցին եղբայրներուն դէմ: **3** Պօղոս եւ Բառնաբաս բաւական երկարեցին իրենց կեցութիւնը այնտեղ՝ վստահութեամբ լեցուած Տիրոջ հանդէպ, որ կը վկայէր իր շնորհքին քարոզութեան եւ անոնց ձեռքով կը գործէր հրաշքներ եւ նշաններ:

4 Քաղաքին բնակչութիւնը երկուքի բաժնուեցաւ. ոմանք Հրեաներուն կողմն էին, իսկ ուրիշներ՝ առաքեալներուն: **5** Հեթանոսներ եւ Հրեաներ, գլխաւորութեամբ իրենց պետերուն, կը պատրաստուէին հալածել եւ քարկոծել զանոնք: **6** Բայց իմանալով իրողութիւնը, անոնք ապաստանեցան Լիկայոնացիներուն քաղաքները՝ Լիւստրոս եւ Դէրբէ եւ անոնց շրջակայքը, **7** եւ հոն կը հռչակէին Աւետարանը:

48 – Աստուած կ'ուզէ ամէնուն փրկութիւնը, պայմանաւ սակայն որ մարդն ալ ուզէ զայն ու գործակցի Աստուծոյ շնորհքին, որովհետեւ «Ան որ ստեղծեց քեզ, առանց քեզի, պիտի չփրկէ քեզ առանց քեզի» (Ս. Օգոստինոս):

Անդամալոյծին բուժումը

8 Այնտեղ կը նստէր Լիւստրացի մարդ մը, ոտքերէն տկար, կաղ ի ծնէ եւ երեքեք չէր քալած: 9 Ասիկա լսեց Պօղոսին խօսքերը: Պօղոս աչքերը սեւեռեց անոր վրայ եւ տեսնելով, թէ բուժուելու հաւատք ունի, 10 բարձր ձայնով ըսաւ անոր. «Քեզի՛ կ'ըսեմ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով, ուղիղ կանգնէ ոտքերուդ վրայ»: Ասիկա իսկոյն շտկուեցաւ, սկսաւ վազվզել եւ քալել: 11 Բազմութիւնները, տեսնելով Պօղոսին ըրածը, բարձրացուցին իրենց ձայնը եւ սկսան լիկայոնարէն բարբառով աղաղակել. «Աստուածները մարդու կերպարանքով մեր մէջ իջան»: 12 Անոնք Բառնաբասը կը կոչէին Դիոս եւ Պօղոսը՝ Հերմէս, որովհետեւ ինքն էր գլխաւոր խօսողը:

13 Քուրմերը ցուլեր եւ պսակներ հասցուցին Դիոսի, որ քաղաքին մուտքին էր, եւ բազմութեան հետ կը պատրաստուէին զոհել: 14 Երբ իմացան, Բառնաբաս եւ Պօղոս առաքեալները պատուեցին իրենց զգեստները, վազեցին ամբոխէն դուրս եւ աղաղակեցին. 15 «Ո՛վ մարդիկ, ի՞նչ կ'ընէք, մենք ձեզի նման մարդիկ ենք, մենք կ'աւետարանենք ձեզի որպէսզի թողուք այդպիսի ունայն կուռքերը եւ դառնաք դէպի կենդանի Աստուածը, որ ստեղծեց երկիրնքը, երկիրը, ծովը եւ ինչ որ անոնց մէջ կը գտնուի: 16 Ասիկա թոյլ տուաւ ազգերուն, անցեալի սերունդներուն ժամանակ, որ հետեւին իրենց ճանապարհներուն. 17 սակայն ինքզինքը չթողուց առանց վկայութեան, իր բարերարութեամբ երկինքէն տուաւ ձեզի անձրեւն ու պտղաբեր եղանակները, եւ յազեցուց ձեր սրտերը կերակուրով եւ ուրախութեամբ»: 18 Այս խօսքերով, անոնք հազիւ կըրցան արգիլել որ ամբոխը զոհ մատուցանէր իրենց, այլ երթան իւրաքանչիւրն իր տունը:

Վերջ առաքելութեան

19 Մինչ անոնք կը շրջէին եւ կ'ուսուցանէին, Անտիոքէն եւ Իկոնիոնէն Հրեաներ եկան, սկսան վիճիլ անոնց հետ համարձակութեամբ, եւ խաբեցին ժողովուրդը, որպէսզի հեռանայ անոնցմէ. եւ կ'ըսէին անոնց՝ թէ ճշմարտութիւնը չեն խօսիր, այլ կը

ստեն: Քարկոծեցին Պօղոսը եւ քաշեցին զայն քաղաքէն դուրս եւ կը կարծէին թէ մեռած է: **20** Բայց երբ աշակերտները անոր շուրջ հաւաքուեցան, կանգնեցաւ եւ մտաւ քաղաք եւ յաջորդ օրը Բառնաբասի հետ մեկնեցաւ Դերբէ:

21 Աւետարանեցին այս քաղաքը եւ բազմաթիւ աշակերտներ յարուցին եւ յետոյ վերադարձան Լիւստրոս, Իկոնիոն եւ Անտիոք: **22** Աշակերտներուն սրտերը հաստատեցին, քաջալերեցին զանոնք՝ որպէսզի հաւատարիմ մնան հաւատքին, ըսելով անոնց. «Հարկ է որ բազմաթիւ նեղութիւններէ անցնինք, որպէսզի Աստուծոյ Արքայութիւնը մտնենք»: **23** Երէցներ ձեռնադրեցին անոնց՝ իւրաքանչիւր Եկեղեցւոյ համար, աղօթքներ կատարեցին հանդերձ պահքով, յանձնեցին զանոնք Տիրոջ՝ որուն հաւատացած էին: **24** Անցան Պիսիդիայէն եւ եկան Պամփիլիա: **25** Պերգէի մէջ հռչակեցին Տիրոջ խօսքը եւ իջան Ատալիա: **26** Եւ անկէ նաւ առին դէպի Անտիոք, ուսկից մեկնած էին, յանձնարարուելով Աստուծոյ շնորհքին՝ գործին համար զոր կատարեցին:

27 Երբ հոն հասան, հաւաքեցին Եկեղեցին եւ պատմեցին ինչ որ Աստուած ըրած էր իրենց ձեռքով եւ թէ ինչպէս հաւատքի դուռը բացած էր նաեւ հեթանոսներուն առջեւ: **28** Անկէ ետք երկար ժամանակ մնացին աշակերտներուն հետ:

ՎԷՑ ԱՄՈՒՐԻՄԻ մէջ

15 **1** Ոմանք, Հրէաստանէն իջնելով, կ'ուսուցանէին եղբայրներուն. «Եթէ չթլփատուիք ըստ Մովսէսի օրէնքին, չէք կրնար փրկուիլ»: **2** Յետ երկար խռովութեան եւ վիճաբանութեան Պօղոսի եւ Բառնաբասի անոնց հետ, որոշուեցաւ որ Պօղոս եւ Բառնաբաս եւ անոնցմէ ոմանք Երուսաղէմ ելլեն,

Գլ. 15, 6 – Ժողովին կը նախագահէր Եկեղեցւոյ գլուխը՝ Պետրոս, որ Հռոմի Եկեղեցին հիմնելէ ետք, դարձած էր Երուսաղէմ: Խորհրդակցութիւններն ու վիճիւնները ցոյց կու տան թէ ինչպէս առաքեալները տոգորուած էին այն գիտակցութեամբ, թէ Սուրբ Հոգին իրենց հետ է: Վիճիւնները ամէնուն պարտաւորիչ եղող եկեղեցական օրէնքի մը ձեւով կը տրուէին:

առաքեալներու եւ երէցներուն մօտ, այս խնդրին համար: **3** Անոնք հրաժեշտ առին Եկեղեցիէն, անցած Փիւնիկէէն եւ Սամարիայէն, ուր պատմեցին դարձը հեթանոսներուն, մեծ ուրախութիւն պատճառելով եղբայրներուն: **4** Երբ Երուսաղէմ հասան, ընդունուեցան Եկեղեցիէն, առաքեալներէն եւ երէցներէն եւ պատմեցին անոնց ինչ որ Աստուած ըրած էր անոնց ձեռքով:

Երուսաղէմի ժողովը

5 Փարիսեցիներու հերձուածին պատկանող ոմանք, որ հաւատքը ընդունած էին, միջամտեցին եւ ըսին՝ թէ հարկ է թլփատել զանոնք եւ պատուիրել անոնց, որ պահեն Մովսէսի օրէնքը: **6** Այն ատեն առաքեալները եւ երէցները ժողով ըրին, այս հարցը քննելու համար:

Պետրոսի մատը

7 Երկար վիճաբանութենէ ետք, Պետրոս կանգնեցաւ եւ ըսաւ. «Եղբայրներ, դուք լաւ գիտէք՝ թէ առաջին օրերուն իսկ Աստուած ընտրեց զիս ձեր մէջէն, որպէսզի հեթանոսները իմ բերնէս լսեն Աւետարանին խօսքը եւ հաւատան: **8** Սրտագէտն Աստուած վկայեց անոնց ի նպաստ եւ Սուրբ Հոգին տուաւ անոնց, ինչպէս մեզի: **9** Ոչ մէկ խտրութիւն դրաւ անոնց եւ մեր միջեւ եւ հաւատքով սրբեց անոնց սիրտը: **10** Արդ, ինչո՞ւ հիմա դուք զԱստուած կը փորձէք, աշակերտներուն պարանոցին վրայ դնելով լուծը զոր ոչ մեր հայրերը եւ ոչ ալ մենք կրցանք տանիլ: **11** Բայց մենք կը հաւատանք որ մենք, ինչպէս անոնք, Տէր Յիսուսի շնորհքով կը փրկուինք»: **12** Այն ատեն ժողովականները լռեցին եւ մտիկ ըրին Բառնաբասին եւ Պողոսին, որ կը պատմէին անոնց բոլոր նշան-

11 – Պետրոս, մատնանշելով Կոռնելիոսի դէպքը, կը բացատրէ թէ նոյնիմֆն Աստուած վճռած ու սահմանած է ընդունիլ հեթանոսները, առանց նկատի առնելու մովսիսական օրէնքի տրամադրութիւնները: Փրկութիւնը կայացած է Յիսուս Բրիստոսի շնորհքին վրայ միայն:

14 – Շմաւոնը ասորական ձեւն է Սիմոն անունին:

ներն ու հրաշքները զորս ըրած էր Տէրը հեթանոսներուն մէջ, անոնց ձեռքով:

Յակոբին ճառը

13 Երբ անոնք լռեցին, Յակոբ խօսք առաւ եւ ըսաւ. «Եղբայրներ, մտիկ ըրէք ինծի: **14** Շմաւոն պատմեց մեզի թէ ինչպէս, սկիզբէն իսկ, Աստուած տնօրինեց, ժողովուրդը կազմելու համար հեթանոսներէն՝ իր Անունին: **15** Ասիկա համաձայն է մարգարէներուն խօսքերուն, քանի որ գրուած է.

16 Անկէ ետք ես պիտի վերադառնամ,
եւ պիտի վերականգնեմ Դաւիթի անկեալ տաղաւարը.
պիտի վերանորոգեմ անոր ակերակները,
եւ պիտի վերականգնեմ գայն,

17 որպէսզի Տէրը փնտռեն մարդոց մնացորդները եւ բոլոր հեթանոսները,
որոնք իմ անունովս կանչուեցան.

18 Կ'ըսէ Տէրը, եւ այս ամէնը կը յայտնէ դարերէ ի վեր: **19** Ասոր համար ես արդար կը համարիմ չնեղել անոնք որ հեթանոսներէն կը դառնան Աստուծոյ, **20** այլ նամակ ղրկել անոնց՝ որ հեռու մնան կողմերուն զոհուած կերակուրէն, ապօրինի ամուսնութիւններէն, մեռելոտիներէն եւ արիւնէն: **21** Որովհետեւ անցեալի դարերէն ասդին, Մովսէս քարոզիչներ ունի ամէն քաղաքի մէջ, որոնք մասին կը կարդան չաբաթ օրը ժողովարաններուն մէջ»:

Առաքելներուն կոնդակը

22 Այն ատեն հաճելի թուեցաւ առաքեալներուն, երէցներուն եւ ամբողջ Եկեղեցւոյն, Պօղոսի եւ Բառնաբասի հետ Անտիոք ղրկել իրենց մէջէն ընտրուած մարդիկ. Յուդան, որ կոչուած է Բարսաբա եւ Շիղան, որոնք լաւ համարուած էին եղբայրներուն կողմէ, **23** եւ անոնց ձեռքով այս նամակը ղրկուեցաւ

«Անտիոքի, Սուրիոյ եւ Կիլիկիոյ առաքեալները, երէցները եւ

եղբայրները, եղբայրներուն որ եկած են հեթանոսութենէն, ողջոյն: **24** Իմացանք թէ ոմանք, իբրեւ թէ մեզմէ զրկուած, վրդոված են ձեզ իրենց խօսքերով եւ յուզած են ձեր միտքերը, ըսելով թէ հարկ է որ դուք թլփատուիք եւ Օրէնքը պահէք: այդպիսիններուն մենք հրահանգ չենք տուած: **25** Մենք միասնաբար ժողով ընելէ ետք, յարմար դատեցինք զրկել ձեզի ընտրեալ մարդիկ, մեզի սիրելի Բառնաբասի եւ Պօղոսի հետ, **26** որոնք իրենց կեանքը նուիրած են մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունին: **27** Արդ, կը զրկենք ձեզի Յուդան եւ Շիղան, որպէսզի կենդանի խօսքերով նոյնը հաղորդեն: **28** Որովհետեւ հաճելի թուեցաւ Սուրբ Հոգիին եւ մեզի, աւելի բեռ չընել ձեր վրայ, բացի այս կարեւորներէն. **29** հրաժարիլ կուռքերուն զոհուած միսէն, արիւնէն, մեռելոտիներէն եւ ապօրինի ամուսնութիւններէն: Լաւ կ'ընէք, դուք ձեզ գերծ պահելով ասոնցմէ. Ողջոյն»:

Պատգամաւորները Ամտիոքի մէջ

30 Պատգամաւորները հրաժեշտ առին, իջան Անտիոք, համախմբեցին ժողովուրդը եւ նամակը յանձնեցին անոնց: **31** Զայն կարդալէ ետք, անոնք ուրախացան տրուած քաջալերանքին համար: **32** Յուդա եւ Շիղա, որոնք մարգարէ էին, բազմաթիւ ճառերով կը յորդորէին եղբայրները եւ կը քաջալերէին զանոնք: **33** Ժամանակ մը ետք, եղբայրները ուղարկեցին զանոնք, խաղաղութեան մաղթանքներ ընելով անոնց որ զրկեր էին զանոնք: **34** Շիղային հաճելի թուեցաւ հոն մնալ: **35** Պօղոս եւ Բառնաբաս կը շրջէին Անտիոքի մէջ եւ ուրիշ շատերու հետ կ'ուսուցանէին եւ կ'աւետարանէին Աստուծոյ Խօսքը:

Պօղոս կը բաժնուի Բառնաբասէն

36 Մի քանի օր ետք, Պօղոս ըսաւ Բառնաբասին. «Վերադառ-

36 – Պօղոսի առաքելական երկրորդ ուղեւորութիւնը (49–53) Սուրիոյ, Գաղատիոյ եւ Մակեդոնիոյ վրայով կ'ուղղուի դէպի Յունաստան ու յետոյ Նիքսոս, Կեսարիոյ եւ երուսաղէմի վրայով դէպի Ամտիոք:

նանք եւ այցելենք եղբայրներուն, այն ամէն քաղաքներուն մէջ ուր քարոզեցինք Տիրոջ խօսքը, որպէսզի տեսնենք թէ ի՞նչ կացութեան մէջ են: **37** Բառնաբաս կ'ուզէր հետն առնել նաեւ Յովհաննէսը, որ կոչուած էր Մարկոս: **38** Պօղոս կը պնդէր իրենց հետ չառնել մէկը, որ զիրենք թողուցած էր Պամփիլիոյ մէջ եւ մասնակից չէր եղած իրենց գործին: **39** Գժտութիւն ինկաւ անոնց միջեւ եւ ի վերջոյ Բառնաբաս հետն առաւ Մարկոսը եւ մեկնեցաւ դէպի Կիպրոս: **40** Պօղոս ընտրեց Շիղան եւ մեկնեցաւ, Աստուծոյ շնորհքին յանձնարարուելով եղբայրներուն կողմէ: **41** Կը շրջէր Սուրիոյ եւ Կիլիկիոյ կողմերը եւ կ'ամրացնէր Եկեղեցիները:

Պօղոս եւ Տիմոթէոս

16 **1** Պօղոս Դէրբէ անցաւ եւ ապա Լիւստրա: Այնտեղ կար աշակերտ մը՝ Տիմոթէոս անունով, որուն մայրը հրեայ քրիստոնեայ էր, իսկ հայրը՝ հեթանոս: **2** Լիւստրայի եւ Իկոնիոնի եղբայրները լաւ վկայութիւն տուին անոր մասին: **3** Պօղոս ուզեց հետը տանիլ զայն, առաւ եւ թլփատեց, Հրեաներուն պատճառով որ այդ տեղերը կը գտնուէին, որովհետեւ ամէնքը գիտէին թէ անոր հայրը հեթանոս էր: **4** Երբ քաղաքներէն կ'անցնէին, կը հաղորդէին Երուսաղէմի առաքեալներուն եւ երէցներուն պատէրները եւ կը յորդորէին որ պահեն զանոնք: **5** Եւ այսպէս Եկեղեցիները կը հաստատուէին հաւատքի մէջ եւ օրէ օր կ'աճէին թիւով:

Դեպի Փոփր Ասիա

6 Շրջեցան Փռիւզիոյ եւ Գաղատիոյ կողմերը, որովհետեւ

40 – Հռոմէական քաղաքացիի իրաւունքներով (ԺՁ. 37), նախնական եկեղեցւոյ մէջ իր վայելած վարկով (ԺԵ. 22) եւ մարգարէական շնորհով (ԺԵ. 32) օժտուած Սիղան յարմարագոյն ընկերն է Պօղոսի առաքելական ուղեւորութեան:

Գլ. 16,1 – Լիւստրա ծնած եւ իր մօրը՝ Եւնիկէի հետ (Բ. Տիմ. Ա. 5) հաւատացեալ եղած էր Պօղոսի առաքելական ուղեւորութեան միջոցին:

3 – Պօղոս թլփատել կու տայ Տիմոթէոսը, որպէս զի աւելի՛ եւս վստահութիւնը շահի Հրեաներուն:

Սուրբ Հոգին արգելք դրած էր անոնց՝ խօսքը քարոզելու Ասիոյ մէջ: **7** Միւսիայի սահմանները հասնելով, փորձեցին Բիւթանիա մտնել, **8** սակայն Յիսուսի Հոգին համարձակութիւն չտուաւ անոնց: Անցան Միւսիայէն եւ իջան Տրովադա: **9** Պօղոս գիշերը տեսիլ ունեցաւ. Մակեդոնացի մը կանգնած էր դիմացը, կ'աղաչէր եւ կ'ըսէր անոր. «Անցիր Մակեդոնիա եւ օգնէ մեզի»: **10** Այս տեսիլքէն անմիջապէս ետք, փորձեցինք Մակեդոնիա անցնիլ, համոզուած՝ թէ Աստուած մեզ Մակեդոնիա կը կանչէ, որպէսզի Աւետարանը հռչակենք անոնց:

Փիլիպպի առաքելութիւնը

11 Տրովադայէն նաւ առինք եւ գացինք ուղիղ Սամոդրակէ եւ յաջորդ օրը՝ Նէապոլիս: **12** Եւ անկէ իջանք Փիլիպպէ, որ Մակեդոնիոյ վիճակին գլխաւոր քաղաքն է եւ գաղութ: **13** Մի քանի օրուայ դադարէն ետք այս քաղաքին մէջ, շաբաթ օրը իջանք քաղաքի դռներէն դուրս, գետափին վրայ, ուր սովոր էին աղօթքները կատարել, եւ նստելով, կը խօսէինք հաւաքուած կիներուն հետ **14** Թեատիր քաղաքէն կիւն մը, Աստուծոյ երրկիւղած, ծիրանավաճառ, որու անունն էր Լիդիա, մտիկ կ'ընէր: Տէր բացաւ անոր սիրտը, եւ ան անսաց Պօղոսի խօսքերուն: **15** Երբ մկրտուեցաւ, ինքը եւ իր ընտանիքը, կ'աղաչէր եւ կ'ըսէր. «Եթէ զիս կը համարիք Տիրոջ հաւատացեալ մը, մտէք իմ տունս եւ հոն իջեւանեցէք»: Եւ ստիպեց ու տարաւ մեզ:

6 – Ասիա, արեւմտեան ծովագերեայ երկրամասը Փոքր Ասիոյ, Նիքսոս գլխաւոր քաղաքով:

10 – Այս տեղէն սկսելով, Դուկաս ալ, Գործք Առաքելոցի հեղինակը, ուղեկիցը կ'ըլլայ Պօղոսի: Այս կը հասկցուի, այստեղ առաջին անգամ երեւան եկած «մենք» բացատրութենէն:

12 – Փիլիպպոս (Philippi) քաղաքը կը բնակէին բազմաթիւ իտալացի գաղթականներ:

13 – Այն քաղաքներուն մէջ, ուր փոքրաթիւ էին Հրեաները ժողովրդանոց մը ունենալու համար, քաղաքէն դուրս, հեթանոսներու տուներէն հեռու կը համախմբուէին: Այս աղօթավայրերը, որոնք աղօթատեղի կը կոչուէին, ծիսական լուսացումները դիւրացնելու նպատակով՝ ծովագերեքները կամ գետերու եզերքները հաստատուած էին:

Բանտարկուքի մը Պողոսի եւ Շիղայի

16 Օր մը, երբ աղօթքի կ'երթայինք, հանդիպեցանք աղախինի մը, որ հարցուկ ոգի ունէր եւ գուշակութիւններ ընելով, մեծ շահեր կ'ապահովէր իր տէրերուն: 17 Սկսաւ հետեւիլ Պողոսի եւ մեզի եւ կ'աղաղակէր. «Այս մարդիկը ծառաներն են Բարձրեալ Աստուծոյ եւ փրկութեան ճանապարհը կ'աւետեն ձեզի»: 18 Այսպէս ըրաւ օրեր շարունակ: Ի վերջոյ, Պողոս զայրացաւ, ետ դարձաւ եւ ըսաւ ոգիին. «Կը հրամայեմ քեզի Յիսուս Քրիստոսի անունով. ելի՛ր այս կնոջ մէջէն»: Եւ դեւը իսկոյն ելաւ անկէ:

19 Անոր տէրերը սակայն, իրենց շահերուն յոյսը կորած տեսնելով, բռնեցին Պողոսը եւ Շիղան, քաջեցին զանոնք մինչեւ հրապարակ՝ կառավարիչներուն առջեւ, տարին զանոնք զօրագլուխին մօտ եւ ըսին. 20 «Այս մարդիկը մեր քաղաքը կը խռովեն: 21 Իրենք Հրեաներ են, կը քարոզեն օրէնքներ, զորս չենք կրնար ոչ ընդունիլ եւ ոչ ալ գործադրել, որովհետեւ մենք Հռոմայեցի ենք»: 22 Ամբոխը խառնուեցաւ անոնց շուրջը: Կառավարիչները հանել տուին անոնց զգեստները եւ հրամայեցին զանահարել զանոնք, 23 եւ ծանր կերպով վիրաւորելէ ետք զանոնք, բանտարկել տուին եւ բանտապետին հրամայեցին որ զգուշութեամբ պահեն զանոնք: 24 Բանտապետը, խիստ հրահանգներ ստացած ըլլալով, տարաւ զանոնք բանտին ներքին խուցը եւ անոնց ոտքերը շղթայով կապեց կոճղի մը:

Հրաշքով ազատագրում քանտէն

25 Կէս գիշերին, Պողոս եւ Շիղա կ'աղօթէին եւ զԱստուած կ'օրհնաբանէին: 26 Յանկարծ մեծ շարժում մը տեղի ունեցաւ, բանտին հիմերը սասանեցան, բանտին բոլոր դռները բացուեցան, եւ բոլորին կապանքները քակուեցան: 27 Երբ բանտապետը արթնցաւ եւ բանտին դռները բաց տեսաւ, սուրը քաջեց եւ ուզեց ինքզինքը սպաննել, կարծելով թէ բանտարկեալները փախած են: 28 Պողոս բարձր ձայնով աղաղակեց. «Չարիք մի՛ հասցնէր դուն քեզի, մենք ամէնքս հոս ենք»:

29 Բանտապետը լոյս խնդրեց, վազեց դէպի ներս եւ սարսափահար ինկաւ Պօղոսի եւ Շիղայի ոտքերուն առջեւ: **30** Յետոյ դուրս հանեց զանոնք եւ ըսաւ. «Տեսարք, ի՞նչ պէտք է ընեմ որ փրկուիմ»:

31 Անոնք պատասխանեցին. «Հաւատա՛ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի եւ պիտի փրկուիս, դու եւ քու ընտանիքդ»: **32** Անոր եւ անոր բոլոր տնեցիներուն աւետեցին Տիրոջ խօսքը: **33** Բանտապետը գիշերուան նոյն ժամուն առաւ զանոնք, լուաց անոնց վէրքերը եւ ապա անմիջապէս մկրտուեցաւ ինքը եւ իր բոլոր տնեցիները:

34 Տարաւ զանոնք իր տունը, սեղան սարքեց անոնց եւ ուրախացաւ իր ամբողջ ընտանիքով, հաւատացած ըլլալով Աստուծոյ:

35 Երբ առաւօտ եղաւ, զօրագլուխները նուիրակներ զրկեցին բանտապահին, որ ըսեն անոր. «Ազատ արձակէ այդ մարդիկը»:

36 Բանտապետը այս խօսքերը հաղորդեց Պօղոսին, ըսելով թէ զօրագլուխները մարդ զրկեցին, ձեզ ազատ արձակելու համար. ուստի ելէք եւ գացէք խաղաղութեամբ: **37** Պօղոս ըսաւ անոնց. «Հրապարակաւ գանահարելէ ետք մեզ, որ ամենը մարդիկ ենք եւ Հռոմայացիներ, բանտ դնել տուին մեզ, եւ հիմա կ'ոռգեն այդպէս, լռելեայն արձակե՞լ մեզ: Այդպէս չըլլար, թող իրենք գան եւ արձակեն մեզ բանտէն»:

38 Նուիրակները այս բաները պատմեցին զօրագլուխներուն: Վախը ինկաւ անոնց վրայ, երբ իմացան թէ այդ մարդիկը Հռոմայեցի են: **39** Եւ գալով աղաչեցին անոնց. երբ բանտէն հանեցին զանոնք, խնդրեցին որ հեռանան քաղաքէն:

40 Անոնք ելան բանտէն եւ մտան Լիդիայի տունը, տեսան եղբայրները, քաջալերեցին զանոնք եւ ապա մեկնեցան:

Թեսաղոնիկէի մէջ դժուարութիւններ Հրեաներուն հետ

17 **1** Ամփիպոլսէն եւ Ապոլոնիայէն անցնելով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր Հրեաները ժողովարան ունէին: **2** Ըստ սովորութեան, Պօղոս մտաւ անոնց մօտ եւ երեք շաբաթ յաջորդաբար կը վիճէր անոնց հետ, հիմնուելով Գիրքերուն վրայ:

3 Կը բացատրէր անոնց եւ կը փաստէր թէ Քրիստոս պէտք է չար-

չարուէր եւ մեռեալներէն յարութիւն առնէր, եւ կ'աւելցնէր. «Քրիստոսը՝ այս Յիսո՛ւսն է զոր ես կը քարոզեմ ձեզի»: 4 Անոնցմէ ոմանք համոզուեցան եւ անցան Պօղոսի եւ Շիղայի կողմը, ինչպէս նաեւ, անոնցմէ զատ, բազմաթիւ աստուածավախ մարդիկ, հեթանոսներ եւ ազնուական տիկիներ:

5 Հրեաները սակայն, նախանձէ տարուած, գռեհիկ եւ անօրէն մարդիկ հաւաքեցին, ամբոխ կազմեցին եւ քաղաքը խռովեցին: Հաւաքուեցան Յասովնի տան առջեւ եւ կը փնտռէին Պօղոսը եւ Շիղան, զանոնք դատարանին առջեւ հանելու համար: 6 Զանոնք չգտնելով, քաչեցին Յասովնը եւ ուրիշ եղբայրներ եւ տարին քաղաքապետին մօտ, բողոքելով թէ՝ «Այս մարդիկը, ամբողջ աշխարհը խռովելէ ետք, հիմա հոս եկած են. 7 եւ Յասովնը զանոնք հիւրընկալած է: Ասոնք ամէնքը Կայսրին հրամաններուն դէմ կը գործեն, երբ կը հաստատեն թէ ուրիշ թագաւոր մը կայ՝ Յիսուս անունով»: 8 Այսպէս պռռալով, զրգռեցին բազմութիւնը եւ քաղաքապետները, 9 որոնք երաշխաւորութիւն խնդրեցին Յասովնէն եւ միւսներէն եւ ապա ազատ արձակեցին զանոնք:

Նոր հակառակութիւններ՝ Բերիոյ մէջ

10 Եղբայրները իսկոյն Պօղոսը եւ Շիղան գիշերանց ուղարկեցին Բերիա: Երբ հոն հասան, անոնք գացին Հրեաներուն ժողովարանը: 11 Ասոնք հոգիով աւելի ազնիւ էին քան Թեսաղոնիկէի Հրեաները, եւ սիրալոյսով ընդունեցան Աստուծոյ խօսքը: Ամէն օր կը քննէին Գիրքերը, ստուգելու համար թէ ամէն ըստածները ճիշդ են: 12 Ասոնցմէ շատեր հաւատացին, ինչպէս նաեւ Յոյներէն՝ պատուական տիկիներ եւ բազմաթիւ այլ մարդիկ:

13 Թեսաղոնիկէի Հրեաները սակայն, երբ իմացան թէ Պօղոս Բերիոյ մէջ Աստուծոյ խօսքը կ'աւետէ, հոն եկան, որպէսզի բազմութիւնը յուզեն եւ խռովեն: 14 Եղբայրներն անմիջապէս ուղարկեցին Պօղոսը դէպի ծովեզերք, իսկ Շիղա եւ Տիմոթէոս մնացին այնտեղ: 15 Պօղոսին ընկերացողները առաջնորդեցին զայն մինչեւ Աթէնք եւ վերադարձան, հրահանգ բերելով Շիղայի եւ Տիմոթէոսի փութով իրեն միանալու:

Պօղոս Աթենքի մէջ

16 Մինչ Պօղոս անոնց կը սպասէր Աթէնքի մէջ, անոր հոգին կը զայրանար անոր մէջ, երբ կը տեսնէր քաղաքը՝ կուռքերով լեցւած: **17** Ժողովարանին մէջ կը խօսէր Հրեաներուն եւ անոնց՝ որ զԱստուած կը պաշտէին, իսկ ամէն օր, հրապարակին վրայ՝ անցորդներուն: **18** Կային նոյնիսկ Ստոյիկեան եւ Եպիկուրեան փիլիսոփաներ, որոնք հետը կը վիճէին: Ոմանք կ'ըսէին. «Ի՞նչ կ'ուզէ ըսել այս շաղակրատը»: Իսկ ուրիշներ՝ «Կ'երեւայ թէ օտար չաստուածներու քարոզիչ մըն է»: որովհետեւ Պօղոս կը քարոզէր Յիսուսի եւ անոր յարութեան մասին:

19 Առին զինքը եւ Արիսպագոս տարին. եւ կ'ըսէին անոր. «Արդեօք կրնա՞նք իմանալ թէ ի՞նչ է այդ նոր վարդապետութիւնը որու մասին կը խօսիս: **20** Տարօրինակ խօսքեր լսելի կ'ընես մեզի, կ'ուզենք իմանալ թէ՛ ի՞նչ է ասիկա»: **21** Արդարեւ, Աթէնացիները եւ եկուոր օտարները ուրիշ պարապմունք չունէին, եթէ ոչ՝ վերջին նորութիւնները ըսել եւ լսել:

Պօղոսին փառք

22 Այն ատեն Պօղոս կանգնեցաւ Արիսպագոսին մէջտեղ եւ ըսաւ. «Աթէնացիներ, ես կը տեսնեմ որ դուք ամէն տեսակէտով աստուածապաշտ մարդիկ էք: **23** Արդարեւ, շրջելով ձեր քաղաքին մէջ, դիտեցի ձեր պաշտամունքի վայրերը, եւ գտայ բազին մը որուն վրայ գրուած էր՝ Անծանօթ Աստուծոյ: Արդ, ես կը քարոզեմ ձեզի Ան՝ զոր դուք կը պաշտէք առանց ճանչնալու: **24** Աստուած, որ ստեղծեց աշխարհը եւ ինչ որ կայ աշխարհի վրայ, ինքը Տէրն է երկինքի եւ երկրի եւ չի բնակիր ձեռակերտ տաճարներու մէջ **25** եւ ոչ ալ մարդու ձեռքէն պաշտամունք կ'ընդունի, իբրեւ

Գլ. 17, 19 – Արիսպագոս կը կոչուէր Աթենքի վերջին ատեանը, ուր սովոր էր յանգիստ Աթենքի «կրթեալ դասակարգը»: Այն ատեանի անդամները Արիսպագացի կը կոչուէին: Արիսպագոս (Areios pagos) անունը, որ կը նշանակէ Արէսի բլուր, յառաջ եկած է ֆաղափին մօտակայ բլուրէն, որ կը կոչուէր Արէսի բլուր:

Թէ կարօտ ըլլար որեւիցէ բանի, քանի որ ինքը ամէնուն կու տայ՝ կեանք, չունչ եւ ամէն բան: **26** Ան՝ միեւնոյն արիւնէն ստեղծեց մարդկային բոլոր ազգերը եւ բնակեցուց զանոնք երկրին ամբողջ մակերեսին վրայ: Նախապէս հաստատեց ժամանակները, դրաւ սահմանները մարդոց բնակութեան, **27** որպէսզի մարդիկ փնտռեն զԱստուած՝ խարխափելով, եւ թերեւս գտնեն զինք, որովհետեւ ան հեռու չէ մեր իւրաքանչիւրէն: **28** Որովհետեւ մենք անով ունինք կեանք, չարժուում եւ գոյութիւն, ինչպէս որ ձեր հմուտ մարդոցմէ ոմանք ըսած են: Մենք անոր սերունդէն իսկ ենք: **29** Ուստի, եթէ մենք Աստուծոյ սերունդէն ենք, չենք կրնար մտածել թէ աստուածութիւնը նման ըլլայ մարդու ձեռքով եւ մտքի ճարտարութեամբ քանդակուած ոսկիի, արծաթի կամ քարի: **30** Բայց Աստուած, անտեսելով տգիտութեան ժամանակները, կը պատուիրէ մարդուն որ ապաշխարէ, **31** որովհետեւ ան հաստատած է այն օրը՝ երբ աշխարհը պիտի դատէ արդարութեամբ, մարդու մը միջոցաւ՝ զոր անոր սահմանած է, երաշխաւորութիւն տալով ամէնուն, զայն յարուցանելով մեռեալներէն»:

32 Երբ լսեցին մեռեալներու յարութեան մասին ըսուածը, ոմանք կը ծաղրէին եւ ուրիշներ կ'ըսէին. «Այս հարցին մասին ուրիշ անգամ կը լսենք քեզմէ»: **33** Ապա Պօղոս ելաւ եւ մեկնեցաւ անոնց մէջէն: **34** Մի քանի մարդիկ սակայն կապուեցան անոր եւ հաւատացին. ասոնցմէ էր Դիոնիսիոս Արիսպագացին եւ կին մը, որուն անունն էր Դամարիս, եւ ասոնց հետ ուրիշներ:

Հիմնարկութիւնը Կորնթոսի Եկեղեցիին

18 **1** Ասկէ ետք Պօղոս մեկնեցաւ Աթէնքէն եւ եկաւ Կորնթոս: **2** Այնտեղ գտաւ հրեայ մարդ մը, ծագումով Պոնտացի, Ակիլադա անունով, որ իր կնոջ՝ Պրիսկիլայի հետ ժամանած էր Իտալիայէն, Կղաղիոսի հրովարտակէն ետք, որով

28 – Արատոս բանաստեղծէն (Գ. դար Ն. Ք.) առնուած խօսք մը, որ ուղիղ է այնու որ, մենք մեր ծագումը Աստուծոյ կը պարտինք եւ ըստ Աստուծոյ պատկերին եւ նմանութեան ենք ստեղծուած:

ան կը հրամայէր բոլոր Հրեաներուն Հռոմէն հեռանալ: Եւ Պօղոս յարեցաւ անոնց: **3** Եւ որովհետեւ անոնց համարուեստ էր, անոնց մօտ մնաց եւ սկսաւ աշխատիլ, քանի որ արուեստով վրանագործ էին: **4** Ամէն շաբաթ ան կը խօսէր ժողովարանին մէջ եւ կը ջանար համոզել Հրեաները եւ հեթանոսները:

5 Երբ Շիրա եւ Տիմոթէոս Մակեդոնիայէն եկան, Հոգին ստիպեց Պօղոսը որ վկայէ Հրեաներուն՝ թէ Յիսուս Քրիստոսն է: **6** Բայց երբ անոնք ընդդիմացան եւ հայհոյեցին, ան իր զգեստները թօթուեց եւ ըսաւ անոնց. «Ձեր արիւնը ձեր գլխուն վրայ, ես անմեղ եմ եւ այսուհետեւ պիտի երթամ հեթանոսներուն»: **7** Հեռացաւ անկէ եւ գնաց Տիտոս Յուստոս անունով աստուածապաշտ մարդու մը քով, որու տունը մօտ էր ժողովարանին: **8** Կրիսպոս, ժողովարանին պետը, իր ընտանիքով հաւատաց Տիրոջ: Բազմաթիւ Կորնթացիներ, մտիկ ընելով Պօղոսին, իրենք ալ հաւատացին եւ մկրտուեցան: **9** Գիշերը, տեսիլքի մէջ, Տէրը ըսաւ Պօղոսին. «Մի՛ վախնար, խօսէ՛ եւ մի՛ լռեր, **10** ես քեզի հետ եմ եւ ոչ ոք ձեռք պիտի բարձրացնէ քու դէմդ քեզ չարչարելու համար, որովհետեւ ես բազմաթիւ ժողովուրդ ունիմ այս քաղաքին մէջ»: **11** Ան մնաց այնտեղ տարի մը եւ վեց ամիս եւ կ'ուսուցանէր մարդոց Աստուծոյ խօսքը:

Պօղոս դատարանին առջեւ

12 Աքայիոյ փոխ-կուսակալ Գաղիոնի ժամանակ, Հրեաները համաձայնաբար ըմբոստացան Պօղոսին դէմ, տարին զայն դատարան եւ ըսին. **13** «Այս անձը կը փորձէ համոզել մարդիկը որ զԱստուած պաշտեն օրէնքէ դուրս ձեռով»: **14** Պօղոս կը պատրաստուէր բերանը բանալ, երբ Գաղիոն ըսաւ Հրեաներուն. «Հրեաներ, եթէ հարց ըլլար անիրաւութեան եւ նենգ չարութեան, պիտի ընդունէի ձեր իրաւացի գանգատը. **15** սակայն, քանի որ հարցեր են որ կը հային անուններու եւ ձեր օրէնքին, դուք անձամբ տեսէք. եւ չեմ ուզեր դատաւոր ըլլալ այդպիսի հարցերու»: **16** Եւ արձակեց զանոնք դատարանէն: **17** Այն ատեն, ամէնքը բռնեցին Սոսթէնէսը՝ ժողովարանին պետը, եւ սկսան ծեծել զայն

դատարանին առջեւ: Իսկ Գաղիոն այս անցքերուն դիմաց կը մնար անտարբեր:

Դարձ Անտիոք եւ Երրորդ ուղեւորութիւն Պողոսի

18 Պօղոս տակաւին երկար օրեր մնաց այնտեղ, յետոյ հրաժեշտ առաւ եղբայրներէն եւ նաւ առաւ դէպի Սոււրիա: Պրիսկիլա եւ Ակիլազաս կ'ընկերանային անոր: Ան գլուխը խուզել տուած էր Կենքրիոյ մէջ, որովհետեւ ուխտադիր էր:

19 Յամաք իջան Եփեսոս, Պօղոս թողուց իր ընկերները, մտաւ ժողովարան եւ հոն կը խօսէր Հրեաներուն հետ: **20** Ասոնք խնդրեցին անկէ որ երկարէր հոն իր կեցութիւնը, սակայն Պօղոս չհաւանեցաւ: **21** Եւ ըսաւ անոնց. «Աստուծոյ կամքով, ուրիշ անգամ կը վերադառնամ ձեր մօտ»: Եւ մեկնեցաւ Եփեսոսէն:

22 Իջաւ Կեսարիա եւ ելաւ Եկեղեցին ողջունելու եւ ապա իջաւ Անտիոք: **23** Ժամանակ մը անցնելէ ետք այնտեղ, մեկնեցաւ եւ կը շրջէր Գաղատիոյ եւ Փռիւզիոյ կողմերը եւ կը քաջալերէր աշակերտները:

24 Ապօղոս անունով Հրեայ մը, ազգով Աղեքսանդրացի, ժամանէր էր Եփեսոս. ճարտասան մարդ էր եւ շատ հմուտ Գիրքերուն: **25** Ուսեալ էր Տիրոջ Ճանապարհին մասին եւ հոգիով կ'եռար, կը խօսէր եւ ճշմարտութեամբ կ'ուսուցանէր Յիսուսի մասին, թէպէտ տեղեակ էր միայն Յովհաննէսի մկրտութեան: **26** Ան համարձակութեամբ կը խօսէր ժողովարանին մէջ: Պրիսկիլա եւ Ակիլազաս, որ լսած էին զայն, առին զինք իրենց մօտ եւ աւելի ճշգրտութեամբ բացատրեցին անոր Տիրոջ Ճանապարհը:

27 Երբ ան ուզեց մեկնիլ Աքայիա, եղբայրները քաջալերեցին զինքը եւ զրեցին հաւատացեալներուն, որ ընդունին զինք: Երբ հոն

Գլ. 18, 18 – Կեմքրա, Կորնթոսի երկու նաւահանգիստներէն մէկը՝ դէպի արեւելք:

23 – Պօղոսի առաքելական երրորդ նամբորդութիւնը (54–58) կ'ուղեւորուի դէպի Եփեսոս, եւ անկէ դարձեալ դէպի Մակեդոնիա եւ Յունաստան:

Հասաւ, շնորհքի ազդեցութեամբ մեծապէս օգտակար եղաւ Հաւատացեալներուն, **28** որովհետեւ բոլուն կերպով եւ հրապարակաւ կը հերքէր Հրեաները եւ Գիրքերու միջոցաւ կը փաստէր՝ թէ Յիսուս Քրիստոսն է:

Պօղոս Եփեսոսի մէջ

19 **1** Մինչ Ապողոս Կորնթոս էր, Պօղոս լեռնաշխարհի կողմէն իջաւ Եփեսոս: Հոն գտաւ մի քանի աշակերտներ, **2** եւ հարցուց անոնց. «Դուք, երբ հաւատացիք, Սուրբ Հոգին ընդունեցա՞ք»: Անոնք պատասխանեցին. «Ոչ իսկ լսած ենք թէ Սուրբ Հոգի մը կայ»: **3** Պօղոս հարցուց անոնց. «Ի՞նչ մկրտութեամբ մկրտուեցա՞ք»: Անոնք պատասխանեցին. «Յովհաննէսի մկրտութեամբ»: **4** Այն ատեն Պօղոս ըսաւ. «Յովհաննէս ժողովուրդին քարոզեց ապաշխարութեան մկրտութիւնը, եւ կ'ըսէր անոնց՝ որ հաւատան անոր որ իրմէ ետք պիտի գար, այսինքն Յիսուս Քրիստոսի»: **5** Անոնք, երբ լսեցին, մկրտուեցան Տէր Յիսուսի անունով, **6** եւ երբ Պօղոս ձեռքը դրաւ անոնց վրայ, Հոգին Սուրբ իջաւ անոնց վրայ եւ լեզուներ կը խօսէին եւ կը մարգարէանային: **7** Այս մարդիկը թիւով տասներկու հոգին էին:

Հիմնարկութիւն Եփեսոսի Եկեղեցւոյ

8 Պօղոս մտաւ ժողովարան եւ երեք ամիս համարձակութեամբ խօսեցաւ: Կը քարոզէր անոնց Աստուծոյ Արքայութիւնը եւ կը ջանար համոզել զանոնք: **9** Ոմանք սակայն կարծրասիրտ եւ թերահաւատ էին եւ բազմութեան առջեւ կը բամբասէին Ճանապարհը: Պօղոս բաժնուեցաւ անոնցմէ, զատեց աշակերտները եւ ամէն օր մի ոմն Տիւրոսի դպրոցին մէջ կը խօսէր անոնց: **10** Եւ այսպէս շարունակեց երկու տարի, մինչեւ որ Ասիոյ բնակիչները՝ Հրեայ թէ հեթանոս, լսեցին Տիրոջ խօսքը:

Գլ. 19, 6 – Դրոշմի խորհուրդով անոնք ընդունած եղան մաքու զանազան հոգեւոր պարգեւներ:

Պօղոսի հրաշքները

11 Աստուած բազմաթիւ հրաշքներ կը գործէր Պօղոսի ձեռքով, 12 եւ մինչեւ իսկ կը բաւէր որ հիւանդներուն վրայ դնէր թաշկի-նակներ կամ վարչամականեր որոնք հպած էին Պօղոսի մարմինին, որպէսզի հիւանդութիւնները փարատէին եւ դեւերը ելլէին անոնց մէջէն: 13 Մի քանի Հրեայ երդմնեցուցիչներ համարձակեցան Տէր Յիսուսի անունը կանչել դիւահարներու վրայ՝ ըսելով. «Կ'երդմ-նեցուցնեմ ձեզ յանուն այն Յիսուսին, զոր Պօղոս կը քարոզէ»:

14 Սկեւա անունով հրեայ քահանայ մը եօթը որդիներ ունէր, որոնք այս գործը կ'ընէին: 15 Չար ոգին պատասխանեց անոնց. «Յիսուսը գիտեմ եւ Պօղոսը կը ճանչնամ, իսկ դուք ո՞վ էք»: 16 Այ-սահար մարդը խոյացաւ անոնց վրայ, զսպեց անոնցմէ երկուքը եւ այն աստիճան լլկեց զանոնք, որ մերկ եւ վիրաւոր փախան այդ տունէն: 17 Եփեսոսի բոլոր բնակիչները, Հրեայ թէ հեթանոս, իմացան այս դէպքերը: Վախ ինկաւ բոլորին վրայ եւ Յիսուսի անունը կը փառաւորուէր: 18 Հաւատացեալներէն շատեր եկան, սկսան խոստովանիլ եւ պատմել իրենց կախարդական սովորու-թիւնները: 19 Շատեր որ կախարդութեամբ կը զբաղէին, իրենց գիրքերը կը բերէին եւ ամէնուն առջեւ կ'այրէին: Անոնց արժէքը գնահատուեցաւ մօտաւորապէս յիսուն հազար արծաթ դրամի: 20 Եւ այսպէս, Տիրոջ խօսքը կ'աճէր եւ կը զօրանար:

Վերջ Պօղոսի առաքելութիւններուն եւ անոր ծրագիրները

21 Այս դէպքերէն ետք, Պօղոս ծրագրեց չրջիլ Մակեդոնիա եւ Աքայիա եւ ապա անցնիլ Երուսաղէմ: «Այնտեղ երթալէս ետքը, կ'ըսէր ան, հարկ է որ Հռոմն ալ տեսնեմ»: 22 Օգնականներէն երկու հոգի, Տիմոթէոսը եւ Երաստոսը, զրկեց Մակեդոնիա, իսկ ինքը կարճ ժամանակի համար մնաց Ասիա:

Խռովութիւններ Եփեսոսի մէջ

23 Այն օրերուն, ծանրակշիռ խռովութիւն մը պատահեցաւ

Ճանապարհին պատճառով: **24** Դեմետրիոս անուշով մէկը, արծաթագործ, Արտեմիս դիցուհիին արծաթեայ մեհեաններ կը շինէր եւ պատկառելի շահեր կ'ապահովէր արհեստաւորներուն: **25** Ան հաւաքեց զանոնք, ինչպէս նաեւ նոյն արհեստի գործաւորներ, եւ յայտարարեց անոնց. «Բարեկամներ, դուք գիտէք՝ թէ այս գործէն է մեր շահը: **26** Արդ, կը տեսնէք եւ կը լսէք՝ թէ այս Պօղոսը ոչ միայն Եփեսացիներէն, այլ նաեւ ամբողջ Ասիոյ բնակիչներէն բազմաթիւ ժողովուրդ համոզած եւ տարած է իր ետեւէն, ըսելով թէ մարդու ձեռագործները աստուած չեն: **27** Ասիկա ոչ միայն կը կտրէ վարկը մեր արհեստին, այլ նաեւ ոչինչի կը վերածէ մեր մեծ դիցուհիին՝ Արտեմիսի տաճարը եւ պիտի քանդէ հռչակը անոր զոր Ասիան եւ ամբողջ աշխարհը կը պաշտեն»:

28 Այս խօսքերուն վրայ, անոնք բարկութեամբ լեցուեցան եւ սկսան աղաղակել եւ ըսել. «Մե՛ծ է Եփեսացիներուն Արտեմիսը»:

29 Խռովուած ծառայեցաւ քաղաքին մէջ: Ամէնքը միասին գացին թատրոն, յափըշտակեցին Գայիոս եւ Արիստարկոս Մակեդոնացիները, որոնք Պօղոսի ուղեկիցներն էին: **30** Բայց երբ Պօղոս ուզեց ամբողջին մէջ մտնել, աշակերտները չթողուցին զինք: **31** Ասիացի պետերէն ոմանք, որ անոր բարեկամներն էին, մարդ ղրկեցին, զայն աղաչելով որ, թատրոն երթալով, ինքզինքը վտանգի չենթարկէ:

32 Ոմանք բան մը կը պոռային, ուրիշներ ալ ուրիշ բան: Խառնակութիւնը կը տիրէր բազմութեան մէջ, եւ չատեր չէին գիտեր թէ ինչու համար հաւաքուած էին: **33** Ոմանք ամբողջէն դուրս հանեցին Աղեքսանդրոսը. երբ Հրեաները յառաջ կը մղէին, Աղեքսանդրոս ձեռքը շարժեց եւ ուզեց խօսիլ բազմութեան: **34** Երբ

24 – «Արծաթէ մեհեանները» Եփեսոս քաղաքին Արտեմիսի մեհեանին նմանութեամբ եւ դիցուհիին պատկերովը շինուած փոքրիկ մեհեաններ էին, գործնք, իբր յիշատակ կամ իբր կախարդական առարկայ, մեծ քանակութեամբ կը գնէին:

31 – «Ասիացիք» կը կոչուէին Ասիոյ գաւառին գաւառական ժողովի անդամները:

իմացան թէ Հրեայ է, ամէնքը միաձայն, երկու ժամ անդադար պոռացին. «Մե՛ծ է Եփեսացիներու Արտեմիւրը»: **35** Դպրապետը լռեցուց բազմութիւնը եւ ըսաւ. «Եփեսացիներ, աշխարհի վրայ ո՞վ չի գիտեր թէ Եփեսոս պաշտպանն է մեծն Արտեմիսի մեհեանին եւ երկինքէն ինկած անոր արձանին: **36** Ասոր հակառակ ոչ ոք կրնայ առարկել. ուրեմն դուք հանդարտեցէք եւ յանդգնութեամբ մի գործէք: **37** Դուք այս մարդիկը բերիք, որոնք յանցաւոր չեն մեր դիցուհիին դիմաց, ո՛չ սրբապղծութեամբ ո՛չ ալ հայհոյութեամբ:

38 Եթէ Դեմետրիոս եւ արհեստաւորները մէկու մը դէմ գանգատ ունին, թող դիմեն դատարան. դատաւորներ կան եւ հոն զիրար թող ամբաստանեն: **39** Եթէ դուք վիճելիք հարցեր ունիք, անոնք կը լուծուին օրինաւոր իշխանութեան առջեւ: **40** Այս օրւան դէպքերուն հետեւանքով, վտանգ կայ որ մենք ամբաստանուինք իբրեւ խռովարարներ, որովհետեւ այս համախմբումը արդարացնող օրինաւոր պատճառներ չկան»: Եւ այս ըսելով, արձակեց բազմութիւնը:

Պօղոս կը մեկնի Եփեսոսէն

20 **1** Երբ ամբողջը հանդարտեցաւ, Պօղոս կանչեց աշակերտները, քաջալերեց զանոնք, հրաժեշտ առաւ անոնցմէ եւ մեկնեցաւ դէպի Մակեդոնիա: **2** Շրջեցաւ Մակեդոնիայի կողմերը, երկարօրէն յորդորեց հաւատացեալները եւ եկաւ Յունաստան, ուր մնաց երեք ամիս: **3** Մինչ կը պատրաստուէր մեկնիլ դէպի Սուրիա, Հրեաներուն կողմէ նիւթուած դաւադրութեան մը պատճառով ստիպուեցաւ վերադառնալ Մակեդոնիայի ճամբով: **4** Սոսիպատրոս, Բերիացի Պիռուսի որդին, Արիստարկոս եւ Սեկունդոս Թեսաղոնիկեցիները, Գայիոս Դերբացին, Տիմոթէոս եւ Տիւքիկոս Ասիացիները եւ Տրոփիմոս, ընկերացան անոր: **5** Ասոնք մեզ կանխեցին եւ կը սպասէին մեզի Տրովադա: **6** Բաղարջակերքէն ետք, մենք Փիլիպպէէն նաւ առինք եւ հինգ օր ետք հասանք Տրովադա, ուր մնացինք եօթը օր:

Պօղոս յարութիւն կու տայ մեռեալի մը

7 Շաբթուայ առաջին օրը, մենք հաւաքուած էինք հացը բեկանելու համար: Պօղոս, որ յաջորդ օրը պիտի մեկնէր, կը խօսէր անոնց: **8** Երկարեց ճառը մինչեւ կէս գիշեր եւ բազմաթիւ ջահեր վառուած էին վերնատան մէջ ուր հաւաքուած էինք: **9** Երիտասարդ մը, Եւտիքէս անունով, որ կը նստէր պատուհանին եզերքը, խոր քուռի մէջ մտաւ, մինչ Պօղոս կ'երկարէր իր խօսքը: Քուռէն տարուած, երիտասարդը ինկաւ երրորդ յարկէն վար, եւ վերցուցին զինք մեռած: **10** Պօղոս վար իջաւ, ծռեցաւ, առաւ զայն իր թեւերուն վրայ եւ ըսաւ. «Մի՛ վախնաք, որովհետեւ հոգին մէջն է»:
11 Յետոյ վեր ելաւ, բեկանեց հացը, ճաշակեց եւ դեռ երկար խօսեցաւ մինչեւ արշալոյս, եւ ապա մեկնեցաւ:

12 Երիտասարդը տարին կենդանի եւ ասիկա մեծ մխիթարութիւն եղաւ անոնց:

Տրովադայէն դէպի Միլետոն

13 Մենք նաւ առինք եւ մեկնեցանք դէպի Ասոն: Կը յուսայինք Պօղոսը գտնել հոն, որովհետեւ այդպէս պատուիրած էր, քանի որ ինք ցամաքի ճամբով պիտի երթար: **14** Երբ Ասոնի մէջ հանդիպեցաւ մեզի, առինք զայն նաւուն վրայ եւ իջանք Միտիլինէ: **15** Յաջորդ օրը մեկնեցանք անկէ եւ եկանք Քիոս: Մէկ օր ետք ժամանեցինք Սամոս եւ յաջորդ օրը Միլետոն: **16** Արդարեւ Պօղոս որոշած էր Եփեսոսի բացերէն անցնիլ, որպէսզի ուշացում չունենար Ասիոյ մէջ: Կ'աճապարէր, եթէ հնար էր, Պենտեկոստէի օրը Երուսաղէմ ըլլալու համար:

Հրաժեշտ Եփեսոսի երէցներէն

17 Պօղոս Միլետոնէն մարդ ղրկեց Եփեսոս՝ կանչելու համար

Գլ. 20, 7 – Միաշաբթի օրը, այսինքն կիրակին, կը տօնախմբուէր արդէն, իսկ առաջին դարէ սկսեալ, հաւատացեալներու մասնակցութեամբ աստուածային պաշտամանց:

Եկեղեցւոյ երէցները: **18** Երբ անոնք իր մօտ եկան, ըսաւ անոնց. «Դուք գիտէ՞ք՝ թէ ես ինչպիսի վերաբերում ունեցայ ձեզի հանդէպ առաջին օրէն ի վեր, երբ ես ոտք դրի Ասիա: **19** Խոնարհութեամբ ծառայեցի Տիրոջ, արցունքներու եւ նեղութիւններու մէջ զորս պատճառեցին ինծի Հրեաներուն նենգութիւնները: **20** Երբեք չվարանեցայ խօսիլ ձեզի, ինչ որ օգտակար է: Ուսուցի ձեզի հրապարակաւ եւ առանձին: **21** Վկայեցի Հրեաներուն եւ հեթանոսներուն, որպէսզի ապաշխարեն Աստուծոյ առջեւ եւ հաւատան մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի: **22** Ահաւասիկ հիմա ես Հոգիէն շղթայուած կ'ելլեմ Երուսաղէմ եւ չեմ գիտեր թէ այնտեղ ինչ պիտի պատահի ինծի: **23** Քաղաքէ քաղաք Սուրբ Հոգին կը զգացնէ ինծի՝ թէ շղթաներ եւ նեղութիւններ կը սպասեն ինծի: **24** Ես արժէք չեմ տար իմ կեանքիս, կը բաւէ որ ուրախութեամբ պսակեմ ասպարէզս եւ առաքելութիւնը զոր ստացայ Տէր Յիսուսէն՝ վկայելու համար Աստուծոյ շնորհքի Աւետարանին: **25** Արդ, ես գիտեմ թէ այլեւս իմ դէմքս պիտի չտեսնէք, դուք՝ որոնց մէջ ես շրջեցայ եւ քարոզեցի Աստուծոյ Արքայութիւնը: **26** Ասոր համար կը վկայեմ բոլորիդ առջեւ թէ՝ անմեղ եմ բոլորին արիւնէն: **27** Որովհետեւ երբեք չվարանեցայ, երբ հարկ էր, քարոզել ձեզի Աստուծոյ կամբքը:

28 Զգոյշ եղէ՛ք դուք ձեզի եւ հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ տեսուչ կարգեց ձեզ, հովուելու համար Տիրոջ Ժողովուրդը զոր ան փրկեց իր արիւնով:

29 Գիտեմ թէ՝ իմ մեկնումէս ետք յափշտակող գայլեր պիտի սպրդին ձեր մէջ եւ պիտի չխնայեն հօտին, **30** եւ ձեր մէջէն իսկ պիտի ելլեն մարդիկ, որոնք մոլար խօսքերով պիտի փորձեն իրենց ետեւէն տանիլ աշակերտները: **31** Ուրեմն արթուն կեցէ՛ք եւ յիշե՛-

26 – Ազատ եմ ամէն պատասխանատուութենէ, որովհետեւ պարտքս կատարեցի:

28 – Եփեսոսի Եկեղեցւոյն երէցները (հ. 17) Պօղոս հոս «տեսուչ» (եպիսկոպոս) կ'անուանէ: Այս անունը կը տրուէր նոյն ատենները եկեղեցական առաջնորդներուն: «Եպիսկոպոս» բառը աւելի ետքը սկսաւ կիրարկուիլ, եկեղեցական նուիրապետութեան բարձրագոյն աստիճանը նշանակելու համար:

ցէք՝ թէ երեք տարի շարունակ, գիշեր ցերեկ, արցունքով խրատեցի ձեզմէ իւրաքանչիւրը:

32 Հիմա կը յանձնեմ ձեզ Աստուծոյ եւ անոր շնորհքին, որ կարող է կառուցանել եւ ժառանգութիւն տալ ձեզի սուրբերուն հետ:

33 Արծաթ, ոսկի կամ զգեստ՝ ձեզմէ եւ ոչ մէկէն խնդրեցի:
34 Դուք գիտէք՝ թէ կարիքները իմ եւ անոնց որ հետս էին, հոգացին այս ձեռքերը: **35** Յոյց տուի ձեզի թէ՝ այսպէս չարչարուելով հարկ է օգնութեան հասնիլ տկարներուն, յիշելով Տիրոջ խօսքը որ կ'ըսէ. «Աւելի լաւ է տալ, քան առնել»:

36 Այս խօսքերէն ետք, ծունկի գալով, սկսաւ աղօթել բոլորին հետ: **37** Ամէնքն ալ սկսան լալ, Պողոսին վիզը նետուելով, եւ անոնց սրտերը կը մորմոքէին մանաւանդ այն խօսքին համար թէ՝ այլեւս պիտի չտեսնէին անոր երեսը: Յետոյ մինչեւ նաւ ընկերացան անոր:

Երբը դէպի Երուսաղեմ

21 **1** Երբ անոնցմէ բաժնուեցանք, ելանք ծովուն բացերը, նաւարկեցինք ուղիղ եւ եկանք Կով. յաջորդ օրը հասանք Հռոդոն եւ անկէ՝ Պատարա:

2 Այնտեղ գտանք նաւ մը որ Փիւնիկէ կ'երթար. ելանք նաւուն վրայ եւ մեկնեցանք: **3** Երբ Կիպրոս երեւցաւ, թողուցինք զայն ձախին եւ նաւարկեցինք դէպի Սուրիա եւ իջանք Տիւրոս, ուր նաւը իր բեռները պիտի իջեցնէր: **4** Հոն գտանք աշակերտներ եւ անոնց մօտ մնացինք եօթը օր: Անոնք, Հոգիէն մղուած, կ'ըսէին Պողոսին որ Երուսաղէմ չերթայ: **5** Բայց երբ մեր ժամանակը վերջացաւ, մենք մեկնեցանք: Անոնք ամէնքը, կիներով եւ տղաներով հանդերձ, ընկերացան մեզի: Քաղաքէն դուրս, ծովափին վրայ, ծունկի եկանք եւ աղօթեցինք: **6** Յետոյ իրարմէ հրաժեշտ առինք եւ նաւ բարձրացանք. իսկ անոնք, վերադարձան իրենց տունները:

35 – «Աւելի երանելի է տալը քան առնելը» վերջը գոյութիւն չունի մեր չորս Աւետարաններուն մէջ: Պողոս աւանդութեամբ լսած է զայն:

7 Մենք Տիրութեն մեկնեցանք եւ հասանք Պտողեմայիդա, ողջ ունեցինք եղբայրները եւ մնացինք անոնց մօտ մէկ օր, **8** եւ յաջորդ օրը մեկնեցանք եւ եկանք Կեսարիա եւ մտանք Փիլիպպոս աւետարանիչին տունը, որ մէկն էր եօթը սարկաւագներէն, եւ այնտեղ մնացինք: **9** Ան չորս կոյս աղջիկներ ունէր, որոնք մարգարէութիւններ կ'ընէին: **10** Բազմաթիւ օրեր արդէն անցուցեր էինք այնտեղ, երբ Հրէաստանէն Ագաբոս անուկով մարգարէն ժամանեց: **11** Եկաւ մեր մօտ, առաւ Պօղոսին գօտին, ինքն իր ձեռքերն ու ոտքերը կապելով, ըսաւ. «Այսպէս կ'ըսէ Հոգին Սուրբ. մարդը, որուն կը պատկանի այս գօտին, Հրեաները այսպէս պիտի կապեն Երուսաղէմի մէջ եւ պիտի յանձնեն հեթանոսներուն ձեռքը: **12** Այս խօսքերը լսելով, մենք, եւ անոնք որ ներկայ էին, աղաչեցինք Պօղոսին որ Երուսաղէմ չերթայ: **13** Այն ատեն Պօղոս պատասխանեց. «Ի՞նչ կ'ընէք, ինչո՞ւ կու լաք եւ սիրտս կը ճմլէք: Ես պատրաստ եմ Երուսաղէմի մէջ ոչ միայն կապանքի, այլ նաեւ մահուան՝ Տէր Յիսուսի անունին համար»: **14** Քանի որ չկրցանք տարհամոզել զինքը, լռեցինք եւ ըսինք. «Տիրոջ կամքը թող ըլլայ»:

Պօղոս կը հասնի Երուսաղէմ

15 Այս մի քանի օրերէն ետք, երբ վերջացուցինք մեր պատրաստութիւնները, մեկնեցանք դէպի Երուսաղէմ: **16** Կեսարիոյ աշակերտներէն ոմանք ընկերացան մեզի եւ տարին մեզ իջեւանելու տունը Մնասոն անուկով մէկու մը՝ որ առաջին օրերէն իսկ աշակերտ եղած էր:

17 Երբ Երուսաղէմ մտանք, եղբայրները մեծ ուրախութեամբ ընդունեցան մեզ: **18** Յաջորդ օրը, Պօղոս մեզի հետ գնաց Յակոբին տունը, ուր հաւաքուեցան բոլոր երէցները: **19** Ան ողջունեց զանոնք եւ ապա սկսաւ մի առ մի պատմել ամէն ինչ զոր Աստուած ըրած էր հեթանոսներուն մօտ, իր առաքելութեամբ: **20** Ի լուր այս բոլորին, անոնք սկսան զԱստուած փառաւորել: Այն ատեն

Գլ. 21, 8 – Փիլիպպոս աւետարանիչ, այսինքն՝ Աւետարանի քարոզիչ եւ առաքնականներու օգնական: Ան մէկն էր եօթը առաջին սարկաւագներէն:

ըսին անոր. «Կը տեսնե՞ս, եղբայր, քանի հազարաւոր Հրեաներ հաւատացեալ դարձած են, եւ ամէնքն ալ նախանձախնդիր են Օրէնքին: **21** Բայց քու մասիդ լսած են, թէ դուն կ'ուսուցանես հեթանոսներուն մէջ ապրող Հրեաներուն, որ հեռանան Մովսէսէն, չթլփատեն իրենց զաւակները եւ չհետեւին աւանդութիւններուն: **22** Արդ, ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ իմանան թէ դուն եկած ես հոս: **23** Ուրեմն ըրէ ինչ որ պիտի ըսենք քեզի. հոս ունինք չորս մարդեր որ ուխտ ըրած են: **24** Տար զանոնք եւ դուն ալ միացիր անոնց, սրբութեան արարողութեան համար, եւ վրադ առ ծախսերը, որպէսզի անոնք իրենց գլուխը գերծել տան, եւ այսպէս ամէնքը պիտի գիտնան թէ ինչ որ լսեր են քու մասիդ ճիշդ է, այլ թէ դուն ալ համաձայն ես որ օրէնքը պահուի: **25** Գալով հեթանոսներուն որ հաւատքը ընդունած են, մենք արդէն ղրկած ենք անոնց մեր վճիռները. հրաժարիլ կուռքերուն զոհուած միսերէն, արիւնէն եւ մեռելոտիներէն եւ ապօրինի միութիւններէն»:

26 Յաջորդ օրը, Պօղոս տարաւ այս մարդիկը, ընկերացաւ անոնց սրբութեան արարողութեան համար եւ ապա մտաւ տաճար եւ հաղորդեց պայմանաժամը սրբութեան օրերուն, որմէ ետք իւրաքանչիւրին համար զոհեր պիտի մատուցուէին:

Պօղոսին ձերբակալութիւնը

27 Եօթը օրերը աւարտելու վրայ էին, երբ ասիացի Հրեաներ տեսան զինքը տաճարին մէջ, ոտքի հանեցին ամբողջը անոր շուր-

26 – Խնդիրը նագովրեցիական ուխտի մասին է: Այս ուխտը ընդոցները ազատակամ կը հրաժարէին, ժամանակաւորապէս կամ տեւականօրէն, գինիի կամ առհասարակ ոգիւից ըմպելիներու գործածութենէն: Ուխտադիրներու արտաքին նշանն էր՝ չածիլուած գլուխ: Ուխտադրութեան ժամանակը երբ լրանար, ուխտադիրը պարտաւոր էր որոշ գոհեք մատուցանել եւ այդ միջոցին իր գլխուն մագերէնը ռոջակէզի կրակին մէջ այրել: Արդ, Պօղոս պիտի ստանձնէր պաշտպանութիւնն այս չորս ուխտադիրներուն, յանձնառու ըլլալով իր կողմէ վնասելու գոհեքու համար ըլլալի՜ք ծախսերու գումարը: Այսպէս ընելով՝ ամէնքը պիտի համոզուէին, թէ անոր անձին դէմ եղած բոլոր ամբաստանութիւնները անհիմն են, եւ թէ ինք եւս կը յարգէ հրեական օրէնքները:

Ջը, ձեռք դրին անոր վրայ եւ սկսան պոռալ. **28** «Իսրայէլացիներ, օգնուլթիւն. ահա ա՛յս է այն մարդը որ ամէնուն եւ ամէն տեղ կը քարոզէ հակառակ մեր ժողովուրդին, Օրէնքին եւ այս Տեղւոյն, եւ նոյնիսկ հեթանոսներ մտցուցած է տաճար եւ պղծած է այս սրբավայրը»: **29** Որովհետեւ նախապէս, քաղաքին մէջ անոր հետը տեսած էին Եփեսացի Տրոփիմոսը, եւ կը կարծէին թէ Պօղոս տաճար մտցուցած էր զայն:

30 Ամբողջ քաղաքը իրարանցումի մէջ ինկաւ եւ բազմութիւնը ամէն կողմէ հոն կուտակուեցաւ: Պօղոսը բռնեցին եւ տաճարէն դուրս քաշեցին. եւ իսկոյն դռները փակեցան: **31** Կ'ուզէին սպաննել զինքը: Լուր հասաւ պահակադուռի հազարապետին՝ թէ Երուսաղէմը խռովութեան մէջ է: **32** Ան իսկոյն հետը առնելով զինուորականներ եւ հարիւրապետներ, դիմեց խռովարարներուն վրայ: Ասոնք, երբ հազարապետը եւ զինուորները տեսան, դադրեցան Պօղոսը ծեծելէ: **33** Այն ատեն հազարապետը մօտեցաւ, բռնեց Պօղոսը եւ հրամայեց կրկին շղթաներով կապել զայն: Յետոյ հարցուց անոր մասին՝ թէ ո՛վ է եւ ինչ ըրած է: **34** Բազմութեան մէջ ոմանք բան մը կը պոռային, ուրիշներ ալ ուրիշ բան: Ամբոխին իրարանցումին պատճառով չկրցաւ ստոյգ տեղեկութիւններ ունենալ եւ հրամայեց, որ Պօղոսը բանակատեղ տանին: **35** Երբ աստիճաններուն հասաւ, հարկ եղաւ որ զինուորները վերցնեն եւ տանին զինքը ամբոխին կատաղութեան պատճառով: **36** Որովհետեւ ժողովուրդը բազմութեամբ կը հետեւէր եւ կը պոռար. «Վերցո՛ւր զինքը մէջտեղէն»:

37 Երբ զօրանոց կը մտցնէին զինքը, Պօղոս ըսաւ հազարապետին. «Ինծի արտօնուած է հետդ խօսիլ»: Անիկա հարցուց. «Յունարէն գիտե՞ս: **38** Արդեօք դուն չե՞ս այն Եգիպտացին, որ այս վերջին ժամանակները չորս հազար սիկարեաններ ապստամբեցուցիր եւ անապատ տարիր»: **39** Պօղոս պատասխանեց. «Ես Հրեայ եմ, Կիլիկիոյ Տարսոն քաղաքէն, ոչ աննշան քաղաքի քաղաքացի:

40 – «Երբայական բարբառովը» հասկնալու է արամեերէն լեզուն, որ գործածական ու սովորական լեզուն էր ժողովուրդին:

կ'աղաչեմ քեզ, հրաման տուր ինձի ժողովուրդին խօսիլ»։ **40** Հրամանը տրուելով, Պողոս աստիճաններուն վրայ կանգնեցաւ, ձեռքով նշան ըրաւ ժողովուրդին։ Խոր լուսթիւն տիրեց, եւ այն ատեն ան իր խօսքը ուղղեց անոնց երբայական բարբառով։

Պողոս կը խօսի Հրեաներուն

22 **1** «Եղբայրներ եւ հայրեր, լսեցէք ինչ որ պիտի ըսեմ հիմա իմ պաշտպանութեանս համար»։ **2** Երբ լսեցին թէ երապերէն լեզուով կը խօսի, դեռ աւելի հանդարտեցան եւ լռեցին։ Պողոս շարունակեց. **3** «Ես Հրեայ եմ, ծնած եմ Կիրիկիոյ Տարսոն քաղաքը, եւ սակայն սնած եմ հոս, այս քաղաքին մէջ եւ Գամաղիէլի ոտքերուն առջեւ դաստիարակուած եմ, հետեւելով մեր հայրերուն Օրէնքին ճշմարտութեան եւ լեցուած Աստուծոյ եռանդով, ինչպէս դուք էք այսօր»։ **4** Հալածեցի այս Ճանապարհը մինչեւ մահ, շղթայի զարնելով եւ բանտ նետելով մարդիկ եւ կիներ, ինչպէս որ կրնան վկայել ասոր քահանայապետը եւ ծերերու դասը։ **5** Նոյնիսկ նամակներ առած էի անոնցմէ՝ Դամասկոսի եղբայրներուն համար, եւ հոն կ'երթայի զանոնք շղթայակապ Երուսաղէմ բերելու համար, որպէսզի պատժուին։

6 Մինչ ես կ'երթայի եւ մօտեցած էի Դամասկոսի, յանկարծ, կէսօրեայ մօտ, երկինքէն սաստիկ լոյս մը փայլատակեց շուրջս։ **7** Ես գետին ինկայ եւ լսեցի ձայն մը որ կ'ըսէր ինձի. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես զիս»։ **8** Ես պատասխանեցի. «Ո՞վ ես, Տէ՛ր»։ Զայնը ըսաւ ինձի. «Ես Յիսուս Նազովրեցին եմ, զոր դուն կը հալածես»։ **9** Անոնք, որ հետս էին, տեսան լոյսը, սակայն, չլսեցին ձայնը որ կը խօսէր ինձի։ **10** Ես հարցուցի. «Ի՞նչ պէտք է ընեմ, Տէ՛ր»։ Տէրը պատասխանեց ինձի. «Ուտքի ել, զնա՛ Դամասկոս եւ հոն պիտի ըսուի քեզի ինչ որ հրամայուած է քեզի որ ընես»։ **11** Լոյսին զօրութեան պատճառով ես չէի տեսներ, եւ անոնք որ հետս էին, ձեռքերէս բռնած առաջնորդեցին ինձի, եւ այնպէս ես մտայ Դամասկոս։

12 Անանիա անունով մարդը, որ աստուածապաշտ էր Օրէնքին

Համաձայն եւ կը վայելէր բարի վկայութիւնը քաղաքին բոլոր Հրեաներուն, **13** եկաւ եւ ըսաւ ինծի. «Սաւո՛ւղ, եղբայր, թող աչքերդ բացուի՛ն»։ Ես իսկոյն նայեցայ եւ տեսայ զինքը։ **14** Այն ատեն Անանիա ըսաւ ինծի. «Մեր հայրերուն Աստուածը կանխաւ ընտրեց քեզ, որպէսզի ճանչնաս անոր կամքը, տեսնես Արդարը եւ լսես անոր բերանին ձայնը։ **15** Դու եւ պիտի ըլլաս անոր վկան բոլոր մարդոց առջեւ այն ամէն բաներուն համար զորս տեսար եւ լսեցիր։ **16** Ինչո՞ւ ուրեմն կը դանդաղիս, մկրտուէ, մաքրուէ մեղքերէդ՝ Տիրոջ անունը կանչելով։

17 Երբ Երուսաղէմ վերադարձայ, մինչ կ'աղօթէի տաճարին մէջ, տեսիլ մը ունեցայ։ **18** Տեսայ Տէրը, որ կ'ըսէր ինծի. «Շտապէ եւ անմիջապէս ել Երուսաղէմէն, որովհետեւ պիտի չընդունին քու վկայութիւնդ իմ մասիս»։ **19** Ես պատասխանեցի. «Սակայն, Տէ՛ր, անոնք զիտեն թէ ե՛ս էի որ ժողովարանէ ժողովարան բանտ նետել կու տայի անոնք որ քու Անունիդ կը հաւատան։ **20** Երբ քու Վկայիդ՝ Ստեփանոսի արիւնը թափեցին, ես կամակից էի անոնց որ սպաննեցին զինքը եւ անոնց զգեստները կը պահէի»։ **21** Այն ատեն ան ըսաւ ինծի. «Գնա՛, ես դէպի Հեռուները, դէպի Հեթանոսները պիտի ղրկեմ քեզ»։

Հրեաներուն հակադդեցութիւնը

22 Մինչեւ այս խօսքերը, անոնք մտիկ կ'ընէին անոր, բայց յետոյ իրենց ձայնը բարձրացուցին եւ սկսան պոռալ. «Վերցո՛ւր աշխարհէն այս մարդը. այդպիսի մէկը արժանի չէ ապրելու»։ **23** Անոնք կը պոռչտային, իրենց զգեստները կը հանէին եւ օդին մէջ փոշի կը ցանէին։ **24** Հազարապետը զօրանոց մտցնել տուաւ զայն եւ հրամայեց ծեծի տակ հարցաքննել զինք, իմանալու համար թէ ինչու այդպէս կը պոռչտային անոր դէմ։

25 Երբ կապեցին զինքը փոկերով, Պօղոս ըսաւ հերթապահ հարիւրապետին. «Արտօնուա՞ծ է ձեզի գանահարել Հռոմայացի քաղաքացի մը, որ ոչ իսկ դատուած է տակաւին»։ **26** Այս խօսքերուն վրայ, հարիւրապետը հազարապետին մօտ գնաց, իմացուց անոր եւ ըսաւ. «Ի՞նչ պիտի ընես, քանի այս մարդը Հռոմայացի է»։

27 Հազարապետը եկաւ եւ հարցուց Պօղոսին. «Ըսէ ինծի, դուն Հռոմայեցի՞ ես: **28** «Այո՛», պատասխանեց անոր Պօղոս: Հազարապետը ըսաւ. «Ես մեծ գումարով ստացեր եմ քաղաքացիի այդ իրաւունքը»: Պօղոս աւելցուց. «Ես ծնած իսկ եմ Հռոմայեցի»: **29** Անոնք որ ծեծի պիտի ենթարկէին զինքը, անմիջապէս հեռացան, եւ նոյնիսկ հազարապետը վախցաւ, երբ գիտցաւ թէ Հռոմայեցի մը չղթայի զարնել տուած էր: **30** Յաջորդ օրը, ուղեւորով գիտնալ թէ Հրեաները ինչ ամբաստանութիւն ունին անոր դէմ, քակել տուաւ անոր կապանքները, հրամայեց քահանայապետներուն եւ Ատեանին որ հաւաքուին, յետոյ տարաւ Պօղոսը եւ հանեց զայն անոնց առջեւ:

Պօղոս Ատեանիմ առջեւ

23 **1** Աչքերը սեւեռելով Ատեանին վրայ, Պօղոս ըսաւ. «Եղբայրնե՛ր, մինչեւ այսօր ես բարի խղճով ընթացած եմ Աստուծոյ առջեւ»: **2** Անանիա քահանայապետը հրամայեց սպասաւորներուն որ ապտակեն զայն: **3** Այն ատեն Պօղոս ըսաւ անոր. «Թող Աստուած հարուածէ քեզ, բռածոյ պատ: Բազմած ես որպէսզի դատես զիս ըստ Օրէնքին եւ հակառակ Օրէնքին՝ կը հրամայես որ զարնե՞ն ինծի»: **4** Սպասաւորները որ շուրջն էին, ըսին Պօղոսին. «Դուն Աստուծոյ քահանայապե՞տը կը նախատես»: **5** Պօղոս պատասխանեց. «Եղբայրներ, չէի գիտեր թէ քահանայապետն է, որովհետեւ գրուած է. «Պիտի չնախատես քու ժողովուրդիդ իշխանը»:

6 Երբ Պօղոս իմացաւ թէ մէկ կողմը Սաղուկեցիներն են, իսկ միւս կողմը Փարիսեցիները, Ատեանին մէջ աղաղակեց. «Եղբայրնե՛ր, ես Փարիսեցի՛ եմ, Փարիսեցիի զաւակ: Ես մեր յոյսին, մեռեալներուն յարութեան համար կը դատուիմ ահա»: **7** Հազիւ թէ այս խօսքերը ըսած էր, երկպառակութիւնը ծագեցաւ Փարիսեցիներուն եւ Սաղուկեցիներուն միջեւ եւ բազմութիւնը երկու հատւածներու բաժնուեցաւ. **8** որովհետեւ Սաղուկեցիները կ'ըսեն թէ ո՛չ յարութիւն կայ ո՛չ հրեշտակ ո՛չ ալ հօգի, մինչ Փարիսեցիները կը դաւանին թէ՛ մին եւ թէ՛ միւսը: **9** Զայնքերը բարձրացան եւ Փա-

ըխսեցին երու խումբէն մի քանի դպիրներ ոտքի ելան եւ բուռն կերպով բողոքեցին. «Մենք ոչ մէկ չարութիւն կը գտնենք այս մարդուն մէջ եւ թերեւս ալ հոգի մը կամ հրեշտակ մը կը խօսի անոր մէջ»: **10** Հակամարտութիւնը սաստկացած ըլլալով, հազարապետը, վախճալով որ անոնք Պօղոսը բզբտեն, գունդ մը իջեցուց որպէսզի առնեն զայն եւ տանին զօրանոց:

11 Յաջորդ գիշերը, Տէրը երեւցաւ Պօղոսին եւ ըսաւ անոր. «Արիացի՛ր, Պօղոս, որովհետեւ, ինչպէս որ վկայեցիր ինծի Երուսաղէմի մէջ, այնպէս ալ պէտք է որ վկայես Հռոմի մէջ»:

Դաւադրութիւն Պօղոսին դէմ

12 Յաջորդ առաւօտը, Հրեաները ժողով ըրին եւ նգովքով յանձն առին բան չուտել եւ չխմել, մինչեւ որ Պօղոսը սպաննեն: **13** Աւելի քան քառասուն մարդիկ էին անոնք որ իրարու հետ այս երդումը ըրին: **14** Անոնք գացին, գտան քահանայապետերը եւ ծերերը եւ ըսին անոնց. «Մենք նգովքով յանձն առինք բան չուտել եւ չխմել, մինչեւ որ Պօղոսը սպաննենք: **15** Դուք ուրեմն, Ատեանին հետ միասին իմացուցէք հազարապետին, որ հոս բերէ զինքը, իբրեւ թէ կ'ուզէք աւելի ճշգրտօրէն իմանալ անոր մասին: Իսկ մենք պատրաստ ենք սպաննելու զինքը հոս հասնելէն առաջ»:

16 Պօղոսին քեռորդին, իմացած ըլլալով այս դաւադրութիւնը, եկաւ զօրանոց, ներս մտաւ եւ տեղեկացուց Պօղոսին: **17** Պօղոս, հարիւրապետներէն մէկը կանչելով, ըսաւ անոր. «Այս պատանին հազարապետին քով տար, տեղեկութիւն մը ունի հաղորդելիք անոր»: Հարիւրապետը առաւ զայն եւ տարաւ հազարապետին: **18** Եւ ըսաւ անոր. «Կալանաւոր Պօղոսը կանչեց զիս եւ խնդրեց որ այս պատանին քեզի բերեմ, որովհետեւ խօսելիք ունի քեզի»: **19** Հազարապետը պատանիին ձեռքէն բռնեց, մեկուսի գնաց եւ հարցուց անոր. «Ի՞նչ ունիս ինծի հաղորդելիք»: **20** Ան ըսաւ. «Հրեաները իրարու հետ համաձայնած են եւ պիտի խնդրեն քեզմէ որ վաղը Ատեանին առջեւ հանես Պօղոսը, անոր հարցը լաւագոյնս քննելու պատրուակով: **21** Դուն մի հաւատար անոնց, որովհետեւ անոնցմէ աւելի քան քառասուն մարդիկ թակարդ լա-

ըած են անոր դէմ, որոնք նզովքով յանձն առած են բան չուտել եւ չխմել, մինչեւ որ Պօղոսը սպաննեն: Եւ հիմա անոնք պատրաստ են եւ կը սպասեն քու հրամանիդ»: **22** Հազարապետը արձակեց պատանին, պատուիրելով անոր. «Ոչ մէկուն մի՛ պատմեր թէ ասիկա ինծի իմացուցած ես»:

Պօղոս կը փոխադրուի Կեսարիա

23 Յետոյ կանչեց երկու հարիւրապետներ եւ ըսաւ անոնց. «Պատրաստեցէք երկու հարիւր զինուորներ, եօթանասուն հեծեալներ եւ երկու հարիւր տիգաւորներ, Կեսարիա երթալու համար, գիշերուան երրորդ ժամուն: **24** Պատրաստեցէք նաեւ ձիեր, որպէսզի Պօղոսը ողջ առողջ տանին Փելիքս դատաւորին մօտ»:

25 Նամակ մըն ալ գրեց, այս բովանդակութեամբ.

26 «Կղաւղիոս Լիւսիաս, քաջ դատաւոր Փելիքսին՝ ողջո՛յն: **27** Հրեաները այս մարդը բռնած էին, եւ կ'ողգէին սպաննել զայն: Ես վրայ հասայ զինուորներով եւ ազատեցի զայն, որովհետեւ իմացած էի թէ Հռոմայեցի է: **28** Ուզելով գիտնալ յանցանքը որուն համար անոնք կ'ամբաստանէին զինք, հանեցի զայն անոնց Ատեանին առջեւ, **29** եւ տեսայ թէ ամբաստանութիւնը անոնց օրինական հարցերուն հայող խնդիրներու համար է, եւ մահուան կամ կապանքի արժանի յանցանք չկար վրան: **30** Երբ իմացուցին ինծի թէ դաւադրութիւն կը պատրաստուի այս մարդուն դէմ, ես անմիջապէս զայն զրկեցի քեզի, եւ ամբաստանողներուն ալ իմացուցի որ քու առջեւդ ներկայացնեն իրենց գանգատը անոր դէմ. Ողջո՛յն»:

31 Տրուած հրահանգներուն համաձայն, զինուորները առին Պօղոսը եւ գիշերանց տարին Անտիպատրիա: **32** Յաջորդ առաւօտ, հեծեալները ընկերացան Պօղոսին, իսկ զինուորները վերադարձան զօրանոց: **33** Երբ հեծեալները Կեսարիա հասան, յանձնեցին նամակը դատաւորին եւ Պօղոսն ալ հանեցին անոր առջեւ: **34** Նամակը կարդալէն ետք, դատաւորը հարցուց անոր թէ որ նահանգէն է: **35** Երբ իմացաւ թէ Կիլիկիայէն է, ըսաւ անոր. «Քեզ կը լսեմ, երբ ամբաստանողներն ալ հասնին». եւ հրամայեց որ պահեն զայն Հերովդէսի ապարանքին մէջ:

Պօղոսի դատավարութիւնը Փելիքսի առջեւ

24 ¹ Հինգ օր ետք, Անանիա քահանայապետը, մի քանի ծերերու եւ Տերտուղիոս անունով ճարտասանին հետ, իջաւ Կեսարիա, եւ Պօղոսի դէմ ամբաստանագիրը տուին դատաւորին: ² Պօղոս կանչուեցաւ, եւ Տերտուղիոս սկսաւ այսպէս ամբաստանել զինքը, ըսելով. «Կատարեալ խաղաղութիւն կը վայելենք շնորհիւ քեզի, եւ այս ազգը բարենորոգումներ ունեցաւ շնորհիւ քու խնամակալութեանդ, ո՛վ քաջը Փելիքս: ³ Ամէն բանի համար եւ ամէն տեղ շնորհակալ ենք եւ երախտապարտ կը մնանք քեզի:

⁴ Բայց որպէսզի աւելի ճանճրոյթ չտամ քեզի, կը խնդրեմ, որ բարեացակամութեամբ լսես մեզ մէկ վայրկեան: ⁵ Մենք լաւ գիտենք որ այս մարդը կ'ապականէ եւ կը խռովէ աշխարհի վրայ եղող բոլոր Հրեաները, եւ պարագլուխն է Նազովրեցիներու աղանդին: ⁶ Անիկա նոյնիսկ համարձակեցաւ տաճարը պղծել, բայց մենք բռնեցիք զինքը եւ ուզեցինք դատել մեր Օրէնքին համաձայն: ⁷ սակայն Լիւսիաս հազարապետը միջամտեց, բռնի ոյժով խլեց զինքը մեր ձեռքէն: ⁸ Զինքը ամբաստանողներուն ալ հրամայեց որ քեզի ներկայանան. ուստի դուն ինքդ, կրկին դատելով զայն, կրնաս հաստատել մեր ամբաստանութիւնները անոր դէմ»:

⁹ Հրեաները միաբանեցան եւ ըսին. «Այդ այդպէս է»:

Պօղոսի ինքնապաշտպանութիւնը

¹⁰ Այն ատեն, երբ դատաւորը նշան ըրաւ, Պօղոս պատասխանեց: ¹¹ «Գիտեմ թէ բազմաթիւ տարիներէ ի վեր դուն դատաւորն ես այս ազգին եւ ասոր համար ես վստահութեամբ կը պաշտպանեմ իմ դատս: ¹² Կրնաս ստուգել՝ թէ ոչ աւելի քան տասներկու օր առաջ, ես Երուսաղէմ ելայ պաշտամունքս կատարելու համար եւ ոչ տաճարին, ոչ ժողովարաններուն եւ ոչ ալ քաղաքին մէջ տեսան թէ ես մէկու մը հետ կը վիճէի կամ խռովութիւն կը յարուցանէի բազմութեան մէջ: ¹³ Ոչ ալ ասոնք կրնան ապացուցանել

այդ ամէն ամբաստանութիւնները զորս իմ դէմս կը կատարեն: **14** Կը խոստովանիմ սակայն՝ թէ հետեւելով Ճանապարհին, զոր ասոնք աղանդ կը կոչեն, ես կը ծառայեմ հայրերուս Աստուծոյն, կը հաւատամ ամէն բանի որ գրուած է Օրէնքին եւ մարգարէներուն մէջ, **15** եւ ինչպէս ասոնք կ'ակնկալեն, ես ալ յոյսս կը դնեմ Աստուծոյ վրայ, թէ օր մը արդարները եւ մեղաւորները յարութիւն պիտի առնեն: **16** Ասոր համար ես անդադար կը ջանամ խիղճս մաքուր պահել Աստուծոյ եւ մարդոց առջեւ:

17 Շատ տարիներ ետք, ես եկայ օգնութիւն բերելու համար իմ ազգիս եւ ընծաներ մատուցի: **18** Ճիշդ այն ատեն, երբ կը մասնակցէի մաքրութեան արարողութիւններուն, Հրեաները գտան զիս տաճարին մէջ, ուր սակայն չկար ոչ բազմութիւն, ոչ ալ խոսովութիւն ժողովուրդին մէջ: **19** Կային միայն մի քանի Հրեաներ, որ եկած էին Ասիայէն: Ասոնք պէտք է ներկայանային քեզի, զիս ամբաստանելու համար, եթէ մեղադրանք ունին ինծի հակառակ: **20** Կամ ալ ասոնք որ հիմա ներկայ են, թող ըսեն, եթէ իմ վրաս յանցանք գտած են, երբ կանչուեցայ Ատեանին առջեւ, **21** բացի այն խօսքէն միայն զոր բարձր ձայնով աղաղակեցի՝ անոնց դիմաց կանգնելով. «Մեռեալներուն յարութեան համար միայն ես այսօր կը դատուիմ ձեզմէ»:

Պօղոս քանտարկուած կը մնայ

22 Փելիքս, որ ճշգրիտ կերպով տեղեակ էր Ճանապարհին մասին, արձակեց զանոնք եւ ըսաւ. «Երբ Լիսիաոս հազարապետը գայ, կը վճռեմ ձեր դատին մասին»: **23** Ան հրամայեց հարիւրապետին որ պահէ Պօղոսը, դիւրութիւններ տայ անոր եւ արգելք չդնէ որ իրենները զան եւ օգնեն իրեն: **24** Մի քանի օր ետք, Փելիքս եկաւ իր կնոջ՝ Տրուսիլլայի հետ, որ Հրեայ էր: Կանչել տուաւ Պօղոսը եւ մտիկ ըրաւ անոր խօսքին՝ Յիսուս Քրիստոսի հաւատքին մասին: **25** Սակայն, երբ Պօղոս սկսաւ խօսիլ արդարութեան, ժողովալութեան, հանդերձեալ դատաստանին մասին, Փելիքս վախցաւ եւ ըսաւ անոր. **26** «Հիմա գնա, երբ ժամանակ ունենամ, ես կը կանչեմ քեզ»: Ան կ'ակնկալէր որ Պօղոս իրեն դրամ տար, եւ

ասոր համար յաճախ կը կանչէր զինքը եւ հետը կը խօսէր: **27** Երկու տարի ետք, Փելիքսի յաջորդեց Փեստոս Պորկիրոս: Փելիքս, ուզելով Հրեաներուն հաճոյք պատճառել, Պօղոսը բանտի մէջ պահեց:

Պօղոս կը բողոքէ

25 **1** Փեստոս, երբ իշխանութիւնը ստանձնեց, երեք օր ետք Կեսարիայէն Երուսաղէմ ելաւ: **2** Քահանայապետները եւ հրեայ մեծամեծները տեղեկութիւն տուին անոր Պօղոսին մասին: **3** Աղաչեցին անոր, իբրեւ թէ շնորհք մը խնդրելով, որ Պօղոսը Երուսաղէմ կանչուի: Անոնք դաւադրութիւն մը պատրաստած էին, որպէսզի սպաննէին զինքը ճամբուն վրայ: **4** Փեստոս պատասխանեց թէ Պօղոս Կեսարիա կը մնայ, **5** եւ թէ ինքը շուտով հոն պիտի վերադառնայ. եւ աւելցուց. «**Ձեզմէ անոնք որ հանգամանք ունին, թող ինծի հետ իջնեն, եւ եթէ այդ մարդը յանցաւոր է, թող ամբաստանեն զայն**»:

6 Ուրիշ կամ տասը օր մնալէ ետք, Փեստոս իջաւ Կեսարիա **7** եւ յաջորդ օրը ատեան բազմեցաւ, եւ հրամայեց, որ բերեն Պօղոսը: Երբ եկաւ, Հրեաները, որ Երուսաղէմէն իջած էին, չըջապատեցին զինք եւ բազմաթիւ ծանր յանցանքներ սկսան դնել վրան, **8** զորս սակայն անկարող էին փաստել: Պօղոս ինքզինքը կը պաշտպանէր եւ կ'ըսէր. «**Ես ոչ Հրեաներուն Օրէնքին, ոչ տաճարին եւ ոչ ալ Կայսրին դէմ գործուած յանցանք մը ունիմ**»: **9** Բայց Փեստոս, ուզելով Հրեաներուն հաճոյք պատճառել, հարցուց Պօղոսին. «**Կ'ուզե՞ս Երուսաղէմ երթալ եւ հոն իմ ներկայութեանս այս հարցերուն համար դատուիլ**»: **10** Սակայն Պօղոս պատասխանեց. «**Ես կայսե-**

Գլ. 25,10 – Պօղոս կը մերժէ Փեստոսի առաջարկը եւ չ'ընդունի Երուսաղէմ՝ գերագոյն ատեանին առջեւ դատուիլ: Իր քշմամիներուն իրեն դէմ երբեմն նիւթած դաւը տակաւին քարմ էր իր մտքին մէջ: Ուստի, օգտուելով իր՝ իբր հռոմէական ֆաղաֆցի՝ վայելած իրաւունքներէն, կը պահանջէ Հոռոմ՝ կայսերական ատեանի առջեւ հանուիլ: Ասով միանգամայն իրականացած պիտի ըլլար Հոռոմը տեսնելու իր փափաքը (19. 21), ինչպէս նաեւ Քրիստոսի խօսքը, գործած էր իրեն երեսնալով (23, 11):

րական ատեանին առջեւն եմ եւ պէտք է որ հոն դատուիմ: Ես Հրեաներուն ո՛չ մէկ չարիք չեմ ըրած, դուռն ինքդ լաւ գիտես: **11** Եթէ իրապէս յանցաւոր եմ, եթէ մահուան արժանի յանցանք գործած եմ, մահէն չեմ վախնար: Ընդհակառակը, եթէ այս մարդոց ամբաստանութիւնները ինծի դէմ հիմ չունին, ոչ ոք կարող է անոնց յանձնել զիս: Կայսրին կը բողոքեմ»: **12** Այն ատեն Փեստոս խօսեցաւ իր խորհրդականներուն հետ եւ ապա պատասխանեց. «Կայսրին բողոքեցիր, Կայսրին կ'երթաս»:

Պօղոս կը հաճուի Ագրիպպասի դիմաց

13 Մի քանի օր ետք, Ագրիպպաս թագաւորը եւ Բերենիկէ Կեսարիա եկան Փեստոսը ողջունելու: **14** Բազմաթիւ օրեր անցընելէ ետք այնտեղ, Փեստոս խօսեցաւ անոնց Պօղոսին մասին եւ ըսաւ. «Այստեղ մարդ մը կայ, որ բանտ մնացած է Փելլքսի ժամանակէն: **15** Երբ Երուսաղէմ գացի, Հրեաներուն քահանայապետները եւ մեծերը անոր դէմ գանգատեցան եւ խնդրեցին ինձմէ, որ դատապարտեմ զայն: **16** Ես պատասխանեցի՝ թէ Հռոմէական օրէնքին համաձայն, սովորութիւն չկայ մէկը ուրիշին յանձնել, մինչեւ որ դատախազներուն առջեւ չհանուի եւ առիթ չտրուի անոր որ ինքզինքը պաշտպանէ ամբաստանութեան դէմ: **17** Անոնք, երբ հոս եկան, ես, առանց յապաղելու, յաջորդ օրն իսկ ատեան բազմեցայ եւ հրամայեցի կանչել մարդը: **18** Բայց անոր ներկայութեան, ամբաստանողները ոչ մէկ խօսք յարուցին այն յանցանքներուն մասին զոր ես կ'ենթադրէի, **19** այլ անոր հետ խնդիր ունէին միայն իրենց կրօնքին հայող հարցերու շուրջ եւ Յիսուս անունով մէկու մը մասին, որ իբրեւ թէ մեռած է, իսկ Պօղոս կը պնդէ թէ կենդանի է:

20 Նման հարցի մը դիմաց ես չգիտցայ ինչ որոշում առնել:

13 – Ագրիպպաս Բ. որդին էր Ագրիպպաս Ա.ի: Ան Կղադիոս կայսրէն ստացաւ Փիլիպպոսի եւ Լիւսանիասի նախկին պետութիւնը (Ղուկ. 3, 1) թագաւորական տիտղոսով: Ան իլու հպատակն էր Հռոմայեցիներուն եւ առաջին առթիւ այցելութեան եկած՝ Հռոմայեցի նոր կուսակալին:

Հարցուցի անոր, եթէ յօժար է Երուսաղէմ երթալ եւ հոն դատուիլ այս խնդրին համար: **21** Բայց Պօղոս կոչ ըրաւ, որպէսզի իր դատը կատարուի օգոստափառ Կայսրին առջեւ: Ես հրամայեցի պահել զինքը, մինչեւ որ զինքը Կեսարին զրկեմ»: **22** Ագրիպպա ըսաւ. «Պիտի ուզէի ես ալ լսել այդ մարդը»: Փեսոսոս պատասխանեց. «Վաղը կը լսես զայն»:

23 Յաջորդ օրը, Ագրիպպա եւ Բերենիկէ եկան մեծ շուքով, շրջապատուած հազարապետներով եւ քաղաքին երեւելի անձնաւորութիւններով եւ մտան ունկնդրութեան սրահը: **24** Փեսոսի հրահանգին վրայ, բերին Պօղոսը: Այն ատեն Փեսոս ըսաւ. «Արքայ՝ Ագրիպպա, եւ դուք ամէնքդ որ ներկայ էք, կը տեսնէք այս մարդը, զոր Հրեայ բազմութիւնները Երուսաղէմի մէջ եւ հոս ամբաստանեցին եւ բարձրաձայն կը գոչէին՝ թէ արժանի չէ ապրելու: **25** Սակայն ես իրազեկ եղայ՝ թէ ան մահուան արժանի ոչինչ գործած է: Բայց քանի որ ինքն ալ կոչ ըսաւ օգոստափառ Կայսրին, որոշեցի անոր զրկել զինքը: **26** Բայց ես, գրեյիք ոչինչ ունենալով տիրոջ անոր մասին, ասոր համար զայն հանցի ձեռ առջեւ, մանաւանդ քո՛ւ առջեւդ, արքայ Ագրիպպա, որպէսզի գրեյիք բան ունենամ այս հարցաքննութենէն ետք: **27** Որովհետեւ անպատեհ է կալանաւորը զրկել առանց յիշատակելու անոր յանցանքները»:

Պօղոսին մատը

26 **1** Ագրիպպա ըսաւ Պօղոսին. «Արտօնուած է քեզի դատը պաշտպանել»: Այն ատեն Պօղոս ձեռքը տարածեց եւ տուաւ պատասխանը. **2** «Արքայ՝ Ագրիպպա, ես ինքզինքս երջանիկ կը համարիմ այն ամէն ամբաստանութիւններուն համար զորս Հրեաները կ'ընեն իմ դէմս, **3** որովհետեւ քու ներկա-

Գլ. 26, 2-32 – իր այս պատասխանատուութեան մէջ, Պօղոս կը պարզէ իր դիրքը հանդէպ հրէութեան (2-8) եւ հանդէպ ֆրիստոնէութեան (9-18), եւ կը ջատագովէ իր դարձը ֆրիստոնէութեան եւ իր գործունէութիւնը, որուն նպատակն էր լոկ աշխարհի փրկութիւնը (19-23):

յուլթեանդ պիտի պաշտպանեմ ինքզինքս, մանաւանդ որ դուն տեղեակ ես Հրեաներուն կրօնքին եւ աւանդութիւններուն: Ասոր համար, կը խնդրեմ որ համբերութեամբ մտիկ ընես ինծի: **4** Թէ ի՛նչ եղած է իմ կեանքս երիտասարդութենէս ի վեր, թէ սկիզբէն ի վեր ես ինչպէ՛ս ապրած եմ ժողովուրդիս ծոցին մէջ եւ Երուսաղէմ, բոլոր Հրեաները գիտեն զայն: **5** Կը ճանչնան զիս երկար ժամանակէ ի վեր:

Եթէ ուզեն, կրնան վկայել՝ թէ ես, իբրեւ Փարիսեցի, ապրած եմ մեր կրօնքին ամէնէն խիստ օրէնքներուն համաձայն: **6** Հիմա իսկ, եթէ ես կը դատուիմ, իմ յոյսիս համար է, այն խոստումին համար զոր Աստուած տուաւ մեր հայրերուն, **7** եւ մեր տասներկու ցեղերը կը յուսան հասնիլ անոր իրազործումին՝ պաշտամունքով, զոր յարատեւութեամբ եւ գիշեր ցերեկ կ'ընծայեն Աստուծոյ: **8** Այս յոյսին համար է որ, ո՛վ արքայ, Հրեաները կ'ամբաստանեն զիս: Ինչո՞ւ անհաւատալի պիտի թուի ձեզի, որ Աստուած յարու-

9 «Գալով ինծի, ինքզինքս պարտաւոր կը համարէի կիրարկելու ամէն միջոց՝ պայքարելու համար Յիսուս Նազովրեցիի անունին դէմ: **10** Այսպէս ալ ըրի Երուսաղէմի մէջ իշխանութիւն ունէի քահանայապետներէն եւ բազմաթիւ սուրբեր բանտարկել տուի, եւ երբ զանոնք կը սպաննէին, ես ալ համամիտ էի: **11** Յաճախ կը չըջէի ժողովարանները եւ խստութեամբ կը պատժէի զանոնք եւ կը ստիպէի զանոնք որ հայհոյեն, եւ դեռ աւելին, իմ կատաղութեանս մէջ անոնք դէմ, կը հետապնդէի զանոնք մինչեւ իսկ օտար քաղաքներու մէջ:

12 «Այս նպատակով ես Դամասկոս կ'երթայի, քահանայապետներէն ստացած իշխանութեամբ եւ առաքելութեամբ: **13** Ճամբուն վրայ, միջօրէին, ո՛վ արքայ, տեսայ լոյս մը որ կու գար երկինքէն, աւելի պայծառ քան արեգակը, որ չողաց իմ եւ ուղեկիցներուս շուրջը: **14** Ամէնքս ինկանք գետին: Ես լսեցի ձայն մը որ կ'ըսէր ին-

14 – Ինչպէս գրաստի սրածայր խթանի դէմ աճացելը, նմանապէս քեզի՝ իմ լուծիս դէմ ըմբոստանալն անօգուտ է ու վնասաբեր:

ծի եբրայերէն լեզուով. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես զիս: Խիստ է քեզի համար աքացի տալ խթանին դէմ»: 15 Ես պատասխանեցի. «Դուն ո՞վ ես, Տէր»: Եւ Տէրը պատասխանեց ինծի. «Ես եմ Յիսուսը, զոր դուն կը հալածես: 16 Ե՛լ, կանգնէ՛ ոտքերուդ վրայ. ես երեւցայ քեզի, որպէսզի քեզ պաշտօնեայ եւ վկայ դարձնեմ տեսիլքին որով տեսար զիս, եւ ամէն տեսիլքներուն որոնցմով ինքզինքս պիտի յայտնեմ քեզի: 17 Ես պիտի փրկեմ քեզ ժողովուրդին եւ հեթանոսներուն ձեռքէն, որոնց պիտի ղրկեմ քեզ, 18 որպէսզի դուն բանաս անոնց աչքերը, դարձնես զանոնք խաւարէն դէպի լոյս, սատանային իշխանութենէն՝ Աստուծոյ, որպէսզի, ինծի հաւատալով, անոնք ընդունին մեղքերու թողութիւն եւ ժառանգութեան բաժին՝ սուրբերուն հետ»:

19 Այնուհետեւ, արքայ Ագրիպպաս, ես չըմբոստացայ երկնային տեսիլքներուն դէմ: 20 Ընդհակառակն, ես քարոզեցի նախ Դամասկացիներուն, յետոյ Երուսաղէմի եւ Հրէաստանի բնակիչներուն եւ բոլոր հեթանոսներուն, որպէսզի զղջան եւ կենդանի Աստուծոյ դառնան, ճշմարիտ ապաշխարութեան գործերով: 21 Ահաւասիկ թէ ինչո՛ւ Հրեաները բռնեցին զիս տաճարին մէջ եւ ուզեցին սպաննել: 22 Աստուած սակայն օգնեց ինծի, եւ ես մինչեւ այսօր կը շարունակեմ վկայել, թէ՛ մեծին եւ թէ՛ փոքրին առջեւ: Ես կը քարոզեմ միայն այն ինչ որ Մովսէսին Օրէնքին եւ մարգարէներուն մէջ գրուած է գալիքին մասին, 23 թէ Քրիստոս պիտի չարչարուէր եւ առաջին յարութիւն առնողը պիտի ըլլար մեռեալներէն եւ լոյսը պիտի աւետէր ժողովուրդին եւ հեթանոսներուն»:

Ունկնդիրներուն հակազդեցութիւնը

24 Մինչ Պողոս այսպէս կը խօսէր, Փեստոս, բարձր ձայնով ըսաւ. «Կը ցնորիս, Պողոս, քու մեծ գիտութիւնդ կը մոլորեցնէ քեզ»: 25 Պողոս ըսաւ. «Ես չե՛մ մոլորիր, պատուակա՛ն Փեստոս, այլ կը խօսիմ ճշմարտութեան եւ զգաստութեան լեզուն: 26 Որով-

Հետեւ արքան, որուն առջեւ ես կ'արտայայտուիմ այսքան համարձակութեամբ, տեղեակ է այս հարցերուն, եւ յանձն չեմ առնել բան մը ծածկել քեզի այս ամէնէն, որովհետեւ ասիկա չկատարւեցաւ անծանօթ անկիւնի մը մէջ: **27** Արքայ Ագրիպպաս, դուն կը հաւատա՞ս մարգարէներուն. ես գիտեմ թէ դուն կը հաւատաս»: **28** Ագրիպպաս պատասխանեց Պօղոսին. «Քիչ մը եւս եւ դուն պիտի համոզես զիս որ քրիստոնեայ ըլլամ»: **29** Պօղոս ըսաւ անոր. «Քիչ կամ չատ ըլլայ, ես կը խնդրեմ Աստուծոյ որ ոչ միայն դուն, այլ նաեւ ամէն անոնք որ այսօր կը լսեն զիս, ըլլաք ինծի նման, բացի այս կապանքներէն»:

30 Ասոր վրայ թագաւորը ոտքի ելաւ, ինչպէս նաեւ դատաւորը, Բերենիկէ եւ անոնք որ հետն էին: **31** Մինչ անոնք կը հեռանային, իրարու հետ կը խօսէին եւ կ'ըսէին. «Այս մարդը ոչինչ ըրած է որ արժանի ըլլայ մահուան կամ կապանքներուն»: **32** Ագրիպպաս ըսաւ Փեստոսին. «Կարելի էր այս մարդը ազատ արձակել, եթէ Կայսրին բողոքած չըլլար»:

Մեկնում դէպի Հռոմ

27 **1** Երբ մեզի հրամայուեցաւ որ նաւենք դէպի Իտալիա, Պօղոսը եւ ուրիշ մի քանի բանտարկեալները յանձնեցին Սեբաստեան գունդին հարիւրապետին, որուն անունն էր Յուլիոս: **2** Ելանք Անդրամինտեան նաւուն վրայ, որ պիտի երթար դէպի ասիական ծովափը, եւ մեկնեցանք: Մեզի հետ էր Արիստարքոս Մակեդոնացին՝ Թեսաղոնիկէէն: **3** Յաջորդ օրը իջանք Սիդոն: Յուլիոս մարդասիրութիւն ցոյց տուաւ Պօղոսին հանդէպ եւ արտօնեց որ երթայ եւ գտնէ իր բարեկամները եւ անոնցմէ ծառայութիւն ընդունի: **4** Մեկնեցանք անկէ եւ նաւեցինք Կիպրոսի ծովափին երկայնքին, որովհետեւ հովերը հակառակ էին: **5** Անցանք Կիլիկիոյ եւ Պամփիլիոյ ծովերը եւ տասնհինգ օր ետք հասանք Լիկիացիներուն Միւռա քաղաքը: **6** Այնտեղ հարիւրապետը գտաւ Աղեքսանդրացի նաւ մը որ Իտալիա պիտի երթար, եւ հանեց մեզ նաւուն վրայ:

7 Բազմաթիւ օրեր, նաւարկութիւնը շատ դանդաղ եղաւ շա-

րուենակ, եւ մեծ դժուարութեամբ հասանք Կնիդէի բացերը: Հո-
վին պատճառով, չկրցանք ցամաքին մօտենալ, այլ անցանք Կրե-
տէի մերձակայքէն եւ նաւեցիինք դէպի Սաղամիւնայի հրուանդանը:
8 Դժուարութեամբ անոր եզերքէն յառաջանալով, հասանք այն
վայրը որ կը կոչուի Գեղեցիկ Նաւահանգիստ, որուն մօտ էր Ղա-
սիա քաղաքը:

Փոքորիկ եւ նաւաբեկութիւն

9 Բաւական ժամանակ անցած էր, եւ անկէ ետք նաւարկու-
թիւնը վտանգաւոր դարձած էր, որովհետեւ պահքի օրերն ալ ան-
ցեր էին: Պօղոս խորհուրդ տուաւ անոնց եւ ըսաւ. **10** «Բարեկամ-
նէ՛ր, ես կը տեսնեմ որ նաւարկութիւնը վտանգաւոր պիտի ըլլայ
եւ մեծ վնասներ պիտի պատճառէ ոչ միայն նաւուն եւ բեռներուն,
այլ նաեւ մեզի»: **11** Բայց հարիւրապետը վստահեցաւ աւելի նաւա-
վարին եւ նաւապետին քան Պօղոսի խօսքերուն: **12** Նաւահան-
գիստն ալ ձմեռելու յարմարութիւն չէր ընծայեր: Շատեր
համամիտ եղան մեկնելու եւ, եթէ կարելի ըլլայ, հասնելու եւ ձմե-
ռելու Փիւնիկէ քաղաքը՝ Կրետէի մէկ նաւահանգիստը, որ կը հա-
յէր դէպի հարաւ արեւմուտք եւ դէպի ցամաք:

13 Հարաւային մեղմ հով մը սկսած էր փչել, եւ անոնք կարծե-
ցին թէ կրնան իրենց ծրագիրը իրագործել: Վերցուցին խաւիսիւր
եւ սկսան նաւել Կրետէի ծովափին մերձակայքէն: **14** Սակայն շատ
չանցած, կղզիէն սկսաւ փչել ուռուցիկ հով մը որ կը կոչուի Եւ-
րակիկլոն: **15** Նաւը քաշկուտուեցաւ, չկրցաւ կուրծք տալ հովին,
եւ սկսանք ծովուն վրայ տարուբերուիլ: **16** Դիմելով դէպի փոքր
կղզի մը որ կը կոչուի Կլօդա, եւ մեծ դժուարութեամբ, հազիւ
կրցանք մակոյկը վեր քաշել: **17** Մակոյկը վեր քաշելէն ետք ձեռք

Գլ. 27, 9 – Այս «ծովի Քաուրեան» տօնին (Կիպար) ծովապահֆն է, որ
Սեպտեմբերի վերջերը կամ Հոկտեմբերի սկիզբները կ'իյնայ: Այս միջոցներուն
տեղի ունեցող ձմեռնային փոքորիկներու պատճառաւ կը դադրէին նաւարկու-
թիւնները, եւ Մարտին կը վերսկսէին:

14 – Եւրակիկլոն=Հիւսիս-արեւելեան քամի:

առնուեցան նաւը պաշտպանելու միջոցները, կապեցին նաւը եւ վախնալով, որ ըլլայ թէ ան խոր Սիրթայի յորձանուտին մէջ, իջեցուցին ծփացող խարիսխը եւ այսպէս սկսան տարուբերուիլ: **18** Յաջորդ օրը, մինչ այդպէս կը տագնապէինք փոթորիկէն, նաւուն կարասիները ծով թափեցին: **19** Երրորդ օրը նաւաստիները իրենց ձեռքով ծով նետեցին նաւուն գործիքները: **20** Բազմաթիւ օրերէ ի վեր ոչ արեւը եւ ոչ աստղերը չէին երեւեր, եւ փոթորիկը կը շարունակէր մոլեգնիլ եւ այնուհետեւ փրկուելու ամէն յոյս կորսուած էր: **21** Եւ տրուած ըլլալով որ բազմաթիւ օրերէ ի վեր ամէնքը անօթի էին, Պօղոս կանգնեցաւ անոնց մէջ եւ ըսաւ. «Բարեկամներ, պէտք էր մտիկ ընէիք ինծի եւ կրետէէն չմեկնէիք, եւ այս վտանգը եւ վնասները պիտի խնայուէին մեզի: **22** Արդ, կը յորդորեմ ձեզ որ քաջալերուիք, որովհետեւ բացի նաւէն, ձեզմէ եւ ոչ մէկուն կեանքին վնաս պիտի չհասնի: **23** Այս գիշեր հրեշտակը այն Աստուծոյ որուն ես կը պատկանիմ եւ կը ծառայեմ, երեւեցաւ ինծի եւ ըսաւ. **24** «Մի՛ վախնար, Պօղոս, հարկ է որ դուն ելլես Կայսրին դիմաց, ասոր համար Աստուած շնորհեց քեզի կեանքը ամէն անոնց որ հետդ են: **25** Քաջալերուեցէ՛ք ուրեմն, բարեկամներ, ես կը հաւատամ Աստուծոյ եւ պիտի ըլլայ այնպէս ինչպէս որ ըսուեցաւ ինծի: **26** Բայց հարկ է որ հասնինք կղզիի մը ափը»: **27** Տասներորդ գիշերն էր որ մենք կը ծփայինք Ադրիականի անդունդներուն վրայ, երբ կէս գիշերին նաւաստիները կարծեցին թէ կը մօտենայինք ցամաքին:

28 Անոնք, խորութիւնը չափող գործիքը իջեցնելով, քսան գրկաչափ գտան: Քիչ մը աւելի հեռու նետեցին զայն դարձեալ, եւ գտան տասնհինգ գրկաչափ: **29** Անոնք սարսափեցան, որ մի գուցէ ժայռոտ տեղերու վրայ խորտակուին, եւ նաւուն ետեւի կողմէն իջեցուցին չորս խարիսխներ եւ անձկութեամբ կը սպասէին արշալոյսին: **30** Բայց նաւաստիները նաւէն փախչելու միջոցը կը

27 – Ադրիական ծովը Միջերկրական ծովն է, որ Կրետէի արեւմուտէն դէպի Սիկիլիա կը տարածուի: Այս ծովը հասարակօրէն Յոնիական ծով կը կոչուի:

28 – Քսան գրկաչափ = 37 մետր, 15 գրկաչափ = 27,75 մ.:

փնտռէին: Ծովուն մէջ իջեցուցին մակոյկը, իբրեւ թէ նաւուն առջեւի կողմէն խարխախներ պիտի ձգեն: **31** Այն ատեն Պօղոս ըսաւ հարիւրապետին եւ զինուորներուն. «Եթէ նաւաստիները չմնան նաւուն վրայ, դուք չէք կրնար փրկուիլ»: **32** Այն ատեն զինուորները կտրեցին մակոյկին պարանները եւ ծով ձգեցին զայն:

33 Մինչ արեւածագին կը սպասէին, Պօղոս յորդորեց ամէնքը որ կերակուր առնեն: «Ահաւասիկ, ըսաւ անոնց, տասնչորս օրէ ի վեր սպասումի մէջ էք եւ բան չէք կերած: **34** Կը յանձնարարեմ, որ կերակուր ուտէք, որովհետեւ ասիկա ձեր կեանքին փրկութեան համար է: Զեզմէ ո՛չ մէկը, եւ ոչ իսկ մազ մը պիտի կորսնցնէ իր գլուխէն»: **35** Ասիկա ըսելով, հաց առաւ, գոհութիւն մատոյց, բեկանեց եւ սկսաւ ուտել: **36** Ամէնքն ալ քաջալերուեցան եւ կերակուր կերան: **37** Նաւուն վրայ ամէնքս երկու հարիւր եօթանասուն վեց հոգի էինք: **38** Երբ յագեցան, սկսան նաւը թեթեւցնել, եւ ցոյններ ծով թափեցին:

39 Երբ արեւը ծագեցաւ, նաւաստիները չճանչցան ցամաքը, կը նշմարէին միայն ծովածոցը եւ ծովափը եւ կը մտածէին թէ հնա՞ր է արդեօք դէպի հոն մղել նաւը: **40** Քակեցին խարխախները եւ ծով ձգեցին զանոնք, թուլցուցին դէկերուն պարանները, պարգեցին առագաստները եւ հովին տուին զանոնք եւ տարուեցան դէպի ծովափը: **41** Բայց երբ երկու հոսանքներու միջեւ, ոչ խորունկ տեղ մը հասան, հոն խրեցին նաւը: Անոր առջեւի կողմը անշարժ կը մնար, իսկ ետեւի կողմը՝ կը քայքայուէր բուռն ցնցումներէն:

42 Զինուորները որոշեցին բանտարկեալները սպաննել, որպէսզի ոմանք, լողալով, չվախէին: **43** Հարիւրապետը, որ կ'ուզէր ազատել Պօղոսը, հակառակեցաւ անոնց ծրագրին: Հրամայեց լողալ գիտցողներուն որ առաջինները իրենք ծով նետուին եւ լողալով ցամաք ելլեն: **44** Գալով միւսներուն, անոնք ցամաք պիտի հասնէին՝ ոմանք տախտակներու վրայ, ուրիշներ նաւուն բեկորներուն վրայ: Եւ այսպէս ամէնքն ալ ողջ ցամաք ելան:

Գաղար Մալթայի կղզիին վրայ

28 ¹ Երբ արդէն ամէնքս փրկուած էինք, իմացանք թէ Մե-
լիտինէն էր այդ կղզիին անունը: Բարբարոսները շատ մեծ
հիւրասիրութիւն ցոյց տուին մեզի հանդէպ: ² Անոնք ըն-
դունեցան մեզ ամէնքս մեծ կրակի մը շուրջ, զոր վառած էին անձ-
րեւին եւ ցուրտին պատճառով: ³ Մինչ Պօղոս չոր փայտեր կը
հաւաքէր եւ կրակին մէջ կը նետէր, իժ մը, տաքութենէն դուրս
ցայտելով, անոր ձեռքին փաթթուեցաւ:

⁴ Բնիկներ, տեսնելով որ իժը փաթթուած է անոր ձեռքին, ըսին
իրարու. «Այս մարդը իրապէս մարդասպան է, քանի որ, թէպէտ
ազատուեցաւ ծովէն, սակայն արդարութիւնը իրաւունք չտուաւ
անոր որ ապրի»: ⁵ Բայց ինքը թօթափեց իժը կրակին մէջ եւ ոչ մէկ
վնաս կրեց: ⁶ Սակայն բնիկները կը սպասէին որ Պօղոս ուռէր եւ
գետին իյնար անշունչ: Երկար սպասեցին, եւ երբ տեսան թէ ոչ
մէկ վնաս եղաւ անոր, իրենց միտքը դարձեալ փոխեցին եւ ըսին
թէ աստուած մըն է ասիկա:

⁷ Այդ տեղւոյն մօտերը ագարակ մը կար, որ կը պատկանէր
կղզիին մեծին, որուն անունն էր Պոպղիոս: Ասիկա երեք օր մեզ իր
տունը ընդունեցաւ եւ սիրով հիւրընկալեց: ⁸ Պոպղիոսի հայրը
հիւանդ կը պառկէր եւ կը տառապէր ջերմէ եւ աղիքի խանգարու-
մէ: Պօղոս գնաց մինչեւ անոր տունը, աղօթեց, ձեռքը վրան դրաւ եւ
բուժեց զայն: ⁹ Ասոր վրայ ուրիշ հիւանդներ ալ, որ կային կղզիին
վրայ, եկան, եւ ամէնքն ալ բուժուեցան: ¹⁰ Այս պատճառով բնիկ-
ները ամէն տեսակ պատիւներ շուայլեցին մեզի, եւ երբ պիտի մեկ-
նէինք, տուին մեզի ինչ որ անհրաժեշտ էր ճամբորդութեան համար:

Մալթայէն դէպի Հռոմ

11 Երեք ամիս ետք, ելանք Աղեքսանդրեան նաւու մը վրայ, որ

Գլ. 28, 2 – «Բարբարոսները», Մելիտի բնակիչները՝ ծագումով փիւնիկեցի,
ն'չ լատիններէն ո'չ ալ յունարէն կը խօսէին, այլ՝ փիւնիկերէն, ինչ որ կը բաւէր,
հռոմէական պետութեան քաղաքացիի մը տեսակէտէն, այս անունը տալու անոնց:

ձմեռը անցուցած էր կղզիին մէջ, Դիոսկորոսի զինանշանով:
12 Իջանք Սիրակուսա, ուր մնացինք երկու օր: **13** Մեկնեցանք ան-
 կէ եւ եկանք Հոեգիոն: Յաջորդ օրը հարաւային հովը սկսաւ փչել,
 եւ երկու օրէն հասանք Պատիողոս, **14** ուր գտանք եղբայրներ,
 որոնք աղաչեցին մեզի որ իրենց մօտ մնանք եօթը օր: Եւ այսպէս
 մենք հասանք Հռոմ:

15 Քաղաքին եղբայրները լսած էին մեր մասին եւ դիմաւորե-
 ցին մեզի մինչեւ Ապփիայի շուկան եւ Երեք Կրպակները: Եղբայր-
 ները տեսնելով՝ Պօղոս գոհութիւն յայտնեց եւ քաջալերուեցաւ:
16 Երբ Հռոմ մտանք, արտօնութիւն տրուեցաւ Պօղոսին որ բնա-
 կի առանձին, պահակ զինուորին հետ:

Տեսակցութիւն Հռոմի Հրեամեքումն հետ

17 Երեք օր ետք, ան կանչեց հրեայ պարագլուխները: Երբ եկան,
 ան ըսաւ անոնց. «Եղբայրներ, թէպէտ ոչ մէկ չարիք գործած եմ իմ
 ժողովուրդիս եւ հայրենի աւանդութիւններուն հակառակ, սակայն
 ձերբակալուեցայ Երուսաղէմի մէջ եւ յանձնուեցայ Հռոմայեցիներ-
 ոուն: **18** Անոնք դատեցին զիս եւ ուզեցին ազատ արձակել, որովհե-
 տեւ մահուան արժանի յանցանք չէին գտած իմ վրաս: **19** Բայց
 որովհետեւ Հրեաները հակառակեցան, ես հարկադրուեցայ Կայս-
 րին բողոքել, առանց սակայն ուզելու ամբաստանել իմ ժողովուրդս:
20 Ասոր համար ես ուզեցի ձեզ տեսնել եւ խօսիլ ձեզի, որովհետեւ
 Իսրայելի յոյսին համար է որ ես կը կրեմ այս շղթաները»:

21 Անոնք պատասխանեցին. «Մենք քու մասիդ Հրէաստանէն
 նամակ չենք ստացած, եւ այս քաղաքը ժամանող եղբայրներէն ոչ
 մէկը աննպաստ բան չհաղորդեց եւ ոչ ալ պատմեց քու մասիդ:
22 Բայց պիտի ուզէինք քեզմէ լսել՝ թէ դուն ինչ կը խորհիս այդ
 հերձուածին մասին, որ ամէն տեղ հակառակութիւն կը կրէ»:

Հուսկ քան Հրեամեքումն

23 Ժամադրուեցան անոր հետ եւ որոշուած օրը բազմութեամբ
 եկան Պօղոսին տունը: Առաւօտեան ժամէն մինչեւ իրիկուն խօսե-

ցաւ անոնց Աստուծոյ Արքայութեան մասին եւ ջանաց համոզել զանոնք Յիսուսի մասին, հիմնուելով Օրէնքին եւ մարգարէներուն վրայ: **24** Ոմանք համոզուեցան անոր խօսքերով, ուրիշներ սակայն թերահաւատ մնացին: **25** Անոնք բաժնուեցան առանց համաձայնելու իրարու հետ, երբ Պօղոս աւելցուց այս խօսքը. «Ճշմարիտ են խօսքերը զորս Հոգին Սուրբ ըսած է մեր հայրերուն, Եսայի մարգարէին բերանով:

26 Գնա այս ժողովուրդին եւ ըսէ անոր.
դուք ի գուր պիտի լսէք, եւ պիտի չհասկնամ,
ի գուր պիտի նայիք, եւ պիտի չտեսնեմ:

27 Որովհետեւ թանձրացաւ այս ժողովուրդին միտքը.
իրենց ականջները խցեցին եւ իրենց աչքերը գոցեցին, որպէսզի աչքերով չտեսնեն երբեք,
եւ իրենց ականջներով չլսեն,
իրենց մտքով չհասկնան եւ դարձի չգան,
եւ ես չքուծեմ զանոնք:

28 Իմացէ՛ք, ուրեմն. Աստուծոյ փրկութիւնը հեթանոսներուն ղրկուեցաւ, եւ անոնք մտի՛կ պիտի ընեն:

29 Երբ ան այս խօսքերը ըսաւ, դուրս ելան Հրեաները, որովհետեւ անոնք չատ մը վէճեր ունէին իրարու հետ:

Վերջաբան

30 Պօղոս լման երկու տարի մնաց այն բնակարանին մէջ զոր վարձած էր: Ան կ'ընդունէր ամէնքը որ իրեն կու գային: **31** Կը հռչակէր Աստուծոյ Արքայութիւնը, կ'ուսուցանէր մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի մասին անխափան եւ ամենայն համարձակութեամբ:

31 – Ղուկաս հոս կ'ընդհատէ իր պատմութիւնը, որովհետեւ Առաքելին կեանքին անդրագոյն շրջանի պարագաները ծանօթ էին Թէոփիլոսի:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔԵՐՈՒ ՅԱՊԱՌՈՒՄՆԵՐ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ


Ծնդ	Գիրք Ծննդոց
Ելք	Գիրք Ելքի
Ղեւ	Գիրք Ղեւտական
Թիւ	Գիրք Թիւերու
Բ Օր	Գիրք Երկրորդ Օրէնքի
Յես	Գիրք Յեսուի
Դատ	Գիրք Դատաւորներու
Հոթ	Գիրք Հոուքի
Ա. Սամ	Առաջին Գիրք Սամուէլի (Ա. Գիրք Թագաւորներու)
Բ Սամ	Երկրորդ Գիրք Սամուէլի (Բ. Գիրք Թագաւորներու)
Ա. Թագ	Առաջին Գիրք Թագաւորներու (Գ. Գիրք Թագաւորներու)
Դ Թագ	Երկրորդ Գիրք Թագաւորներու (Դ. Գիրք Թագաւորներու)
Ա. Մնց	Առաջին Գիրք Մնացորդաց
Բ Մնց	Երկրորդ Գիրք Մնացորդաց
Եզր	Գիրք Եզրասի
Նէե	Գիրք Նէեմիի
Եսթ	Գիրք Եսթերի
Յդթ	Գիրք Յուդիթի
Տոբ	Գիրք Տոբիթի
Ա. Մակ	Ա. Գիրք Մակաբայեցիներու
Բ Մակ	Բ. Գիրք Մակաբայեցիներու
Սղմ	Գիրք Սաղմոսներու
Առկ	Գիրք Առակներու
Ժող	Գիրք Ժողովողի


Երգ	Երգ Երգերու
Իմտ	Իմաստութիւն Սողոմոնի
Սիր	Գիրք Սիրաբի
Յոբ	Գիրք Յոբի
Ես	Մարգարէութիւն Եսայի
Ովս	Մարգարէութիւն Ովսէի
Ամս	Մարգարէութիւն Ամոսի
Միք	Մարգարէութիւն Միքիայի
Յովլ	Մարգարէութիւն Յովելի
Աբդ	Մարգարէութիւն Աբդիասի
Յովն	Մարգարէութիւն Յովնանի
Նամ	Մարգարէութիւն Նաւումի
Ամբ	Մարգարէութիւն Ամբակումի
Սոփ	Մարգարէութիւն Սոփոնիայի
Անգ	Մարգարէութիւն Անգէի
Զաբ	Մարգարէութիւն Զաբարիայի
Մաղ	Մարգարէութիւն Մաղաքիայի
Երմ	Մարգարէութիւն Երեմիայի
Բար	Գիրք Բարուքի
Ողբ	Ողբեր Երեմիա Մարգարէի
Դան	Մարգարէութիւն Դանիէլի
Եզկ	Մարգարէութիւն Եզեկիէլի

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Մտք	Աւետարան ըստ Մատթէոսի
Մրկ	Աւետարան ըստ Մարկոսի
Ղուկ	Աւետարան ըստ Ղուկասի
Յովհ	Աւետարան ըստ Յովհաննէսի
Գործ	Գործեր Առաքեալներու
Հո	Պօղոս Առաքեալի Թուղթը Հռոմէացիներուն
Ա. Կոր	Պօղոս Առաքեալի Ա. Թուղթը Կորնթացիներուն
Բ. Կոր	Պօղոս Առաքեալի Բ. Թուղթը Կորնթացիներուն
Գաղ	Պօղոս Առաքեալի Թուղթը Գաղատացիներուն
Եփս	Պօղոս Առաքեալի Թուղթը Եփեսացիներուն


Փլպ	Պօղոս Առաքեալի Թուղթը Փիլիպեցիներուն
Կող	Պօղոս Առաքեալի Թուղթը Կողոսացիներուն
Ա. Թես	Պօղոս Առաքեալի Ա. Թուղթը Թեսաղոնիկեցիներուն
Բ. Թես	Պօղոս Առաքեալի Բ. Թուղթը Թեսաղոնիկեցիներուն
Ա. Տիմ	Պօղոս Առաքեալի Ա. Թուղթը Տիմոթէոսին
Բ. Տիմ	Պօղոս Առաքեալի Բ. Թուղթը Տիմոթէոսին
Տիտ	Պօղոս Առաքեալի Թուղթը Տիտոսին
Փլմ	Պօղոս Առաքեալի Թուղթը Փիլիմոնին
Եբր	Թուղթ Եբրայեցիներուն
Յակ	Յակոբոս Առաքեալի Ընդհանրական Թուղթը
Ա. Պետ	Պետրոս Առաքեալի Ա. Թուղթը
Բ. Պետ	Պետրոս Առաքեալի Բ. Թուղթը
Ա. Յովհ	Յովհաննէս Առաքեալի Ա. Թուղթը
Բ. Յովհ	Յովհաննէս Առաքեալի Բ. Թուղթը
Գ. Յովհ	Յովհաննէս Առաքեալի Գ. Թուղթը
Յուդ	Յուդա Առաքեալի Թուղթը
Յայտ	Յովհաննէս Առաքեալի Յայտնութիւնը





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիր Հաճութեան	7
Աղօթք	11
Երկու խօսք	13
Ներածութիւն	17
* Ս. Մատթէոս Աւետարանիչ	21
Ս. Աւետարան ըստ Մատթէոսի	25
* Ս. Մարկոս Աւետարանիչ	117
Ս. Աւետարան ըստ Մարկոսի	121
* Ս. Դուկաս Աւետարանիչ	177
Ս. Աւետարան ըստ Դուկասի	181
* Ս. Յովհաննէս Աւետարանիչ	271
Ս. Աւետարան ըստ Յովհաննէսի	275
Յիսուսի առակները	341
Յիսուսի հրաշքները	344
* Առաքեալներուն գործերը - Ներմուծում	347
Առաքեալներուն գործերը	353
Աստուածաշունչ Գիրքերու Յապատումներ	439



Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւն